9147.925)
Ut-87

JEAN

ՊԱՏՄԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ

Բ

ԿԻՐԱԿՈՍ Վ. ԳԱՆՋԱԿԵՑԻ

1/5 գրաշ


ԿԻՐԱԿՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԳԱՆՁԱԿԵՑԻՈՅ

ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ի ՍՐԲՈՑՆ ԳՐԻԳՈՐԼ ՅԱՒՈՒՐՄ ԻՒՐ

ԼՈՒՍԱՒԱՆԵԱԼ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

1865



5615-2011

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Յետ վարդանայ վարդապետի դասել՝ի տպագիր շարակարգի Պատմչաց մերոց՝ չէք արդարև ճահագոյն ոք քան զԿիրակոս[1], առաջնոյն ըստ բազում գլխոց և դիպաց յարակից և հաւասար, ընտանութեամբ, ուսմամբ, աշակերտութեամբ և կենացն իսկ պարագայութեամբ, այսինքն է Թուականաւ ծննդեանն և մահուան. որպէս և նոյն ինքն Վարդան կոչէ զնա հաւշիրակ իւր, և օժանդակ լինել յանձն նայեի, և այլուր՝ի պատմութեան[2], հարազատն մեր Կիրակոս վարդապետն՝ հօրն հաւանեալ, այսինքն Վանականայ վարդապետի մեծի. և այլ ևս գործական և արգադիր բանք, յորոց և նշանակեցաք՝ի յառաջաբանի պատմութեան Վարդանայ[3]. որոց վերադարձն իմն և Կիրակոս՝ գովութեամբ և մեծարանօք յիշէ զիւրն ուսումնակից և հաւշիրակ « հարազատն մեր Վարդան . . . որոյ բանք արժանի » էին ընդ միմեանս ». և այլուր սքանչելի վարդապետ : Հաւանեալ եմ թէ սա առաւել արդար գտանի՝ի գովելն զՎարդան, քան նա՝ի մեծարելն զԿիրակոս և հանել ձգել՝ի հօրն հաւանութիւն. յոր ոչ միայն ոչ տեսանեմ ժա-

1 Եւ՝ի գրչագիրս գրեալ է միշտ երկոքին սոքա զկոչ գտանին ընդօրինակեալք. որպէս և առ մեզ է օրինակ Կիրակոսի պատմչին մերձ առանց Վարդանայն:

2 Վարդան. էջ 146:

3 Վ. էջ Դ:

մանեալ զնա, այլ և բազում առաքինեօք բացակացեալ
նաև քան զիւր իսկ զհամչիրակն. բայց այս թերևս զի չու-
նիմք ՚ի ձեռին ստացոյց գիտութեան և հանճարոյ Կիւրա-
կոսի՝ բայ ՚ի գրոցս պատմութենէ, որ ոչ նրբութեամբ բա-
նից և ոչ ընտրութեամբ բառից յաստիճան հօրն և եղբայ-
րակիցն զուգադասիլ արժանացի ըստ մեզ։

Թէպէտ և զայլ ինչ գրուածոյ չունիմք զտրա համբաւ,
և ոչ զքաղաքավարութենէ կենացն և զկատարածին, սա-
կայն և ոչ սակաւ ծանօթս ինքնին զանձնէն ընծայէ ՚ի մա-
տենի սատ յայտիկ պատմագրութեան. յորում և հաւաս-
տէ նախ զթիւ ամաց կենացն, քառասնամեայ՝ աւելի կամ
պակաս զինքն ասելով յամի 1241 (ՈՂ), որով յայտնի
ժամանակ ծննդեանն ՚ի սկիզբն ԺԳ դարու, իսկ մահուանն
վկայի լինել զուգաթիւ ընդ վարդանայ՝ յամի 1272 (ՉԻԱ),
անցեալ զեօթանասնամենիւք։ Վկայէ և զհայրենեացն ՚ի
Գանձակայ լինել (66), յորմէ նշանաւոր վարդապետքն ԺԲ
դարուն՝ Սարկաւագ և այլք զորս յիշէն անդ, և որ զկնի
(107) մեծ վարդապետն Մխիթար Գոշ, չինող և առաջնորդ
Գետկայ վանաց. ուր և զառաջինն աշակերտեալ անաւ և
ուսաւ հեղինակս մեր (115) յառաջնորդութեան Մարտիրո-
սի՝ յաջորդին Մխիթարայ, որպէս կարդ բանիցն ցուցանէ.
նա զի և զորս վախճանեալ յամին 1213 (115) ՚ի ձերու-
թեան հասակի, անդէպ երևի Կիրակոսի իբր երեքտա-
սանամենի աշակերտիլ նմա, որպէս կամին ցուցանել քանք
պատմութեան միոյ՝ զոր յետոյ ուրեմն յիշելոց եմք։ Թուի
թէ անդստին ՚ի Գետիկ յարեալ էր Կիրակոս ՚ի վանական
վարդապետ՝ յընտիրն աշակերտաց Մխիթարայ. և զհետ
նորա գնացեալ, և «բազում ժամանակս կացեալ առ նմա
» ՚ի վարժս կրթութեան» ՚ի սահմանս Տաւուշն բերդի, յա-
նապատի անդ՝ զոր ստացաւ իւր բնակութիւն» (113), որ և
չինեալ վաներով միաբանակեցից և եկեղեցեօք՝ խորանա-
շատ կոչեցաւ. և յաւերել տեղւոյն ՚ի ձէլալէտտինայ հինից
(129) փոխադրեցաւ յանապատն և ՚ի քարայրս որ ՚ի հա-
րաւոյ Տաւուշ բերդի. ուրանօր նստեր ընդ վարդապետին
և ՚ի հասանել աստղատակի Թաթարաց, յորոց և գերի վա-
րեցաւ ընդ նմին և զատուցաւ ՚ի վարդապետէն իւրմէ, և
ապա զաղտապղտի փախստեամբ զերծեալ՝ եկն անդրէն յա-
ռաջին վայր աննդեան իւրոյ ՚ի Գետիկ՝ ՚ի կիսաւեր եղեալն ՚ի
Թաթարաց, որպէս պատմէ ինքնին զայտնիկ մի ըստ մի-

ջէ, (129–135)։ Իսկ եթէ որքան ժամանակս եկաց անդէն և կամ ուր յետոյ գնաց և ուր հաստատեաց զբնակութիւն իւր, որմ վանից մխաբան էր կամ հայր, և զինչ ինչ գործեաց կամ գրեաց՝ կամ որպէս եղև վախճան նորա, չեհասաւ մեզ այսր ամենայնի յիշատակ, բայց միայն թուական ժամանակի մահուանն՝ զոր յիշեցաք։ Ա.յլ հռչակ առնուանն՝ իբրու միոյ ի չորից ընտրելագոյն աշակերտաց Վանականի և կոչիլն ի Վարդանայ՝ Բաբուենաց պետ[1], և բանք ինչ իւր վան գրելոյ գիր զգուշութեան ընդդէմ Դաւթի Մոլորեցուցչի, որպէս գրէրն և Վանական, տան կարծել եթէ և ինքն Կիւրակոս առաջնորդ կամ տեսուչ կարգեալ էր ուխտի ուրեք վանաց կամ եկեղեցւոյ, զի իշխանութեամբ ինն գրէր սատիւռ և բանադրանօք (194). նոյն դարձեալ նշմարի և ի բանէ պատասխանատուութեան արևելեան վարդապետաց առ արևմտեայս՝ վան խնդրոյ հատոյ հարցելոյ ի Հռովմայ։ Հաւանագոյն թուի ի միում վանորէից Աղուանից հռչակելոցն անդ յայնմ դարու՝ կեցեալ զվերջին ամս կենացն, մանաւանդ թէ յանապատ տեղիս. և զայս կարծեցուցանէ միւս բան Վարդանայ առ նա ինքն Կիւրակոս գրեալ ի վերջաբանի մեկնութեան Երգոց Երգոյն յամի 1265, կոչելով զուսումնակիցն «մշակ մորենոյ և աղտաղտ անբուսաբեր վայրոյ»։

Միակ ծանօթ և առ մեզ հասեալ գրաւոր երկասիրութիւն Կիւրակոսի է մատեանս այս Պատմութեան, զոր առնուանէ նա կամ ընդօրինակողքն «Համառօտ պատմութիւնք ժամանակաց ի սկզբոյն Գրիգորէ մինչև ի յետին աւուրս թուականս» . այսինքն ժամանակագիր թուականաւ համարեալ. և արդարև սկսեալ զպատմութիւնն ի Ս. Գրիգորէ յետ լուսաւորութեանն Հայոց և երթալոյն ի Հռովմ, համառօտիւ պատմէ զկարգս և զարարս յաջորդաց նորին կաթուղիկոսաց և զթագաւորաց Հայոց և զիշխանաց ըստ ժամանակին կացելոց, և զաշխարհակալաց և զթագաւորաց դրացեաց կամ իշխողաց մերոյ աշխարհիս, մինչև ցիւր ժամանակս կամ ցելս Թաթարաց յարևելից. և յետ այնորիկ ըզգործս նոցին Նեստողաց յաշխարհս մեր՝ յերկարագոյն բանիւք վիպելով հասուցանէ ցամ Տեառն 1265, և լռէ սուղ

1 Ի յաւաջաբանի մեկնութեան Երգոց երգոյն։

ինչ յառաջ քան զվարդան պատմիչ, զոր և վասն այսո-
րիկ չկարէ դասել ի շարս պատմագրաց Հայոց (4). իսկ ինքն
Վարդան թուի իսկ տեսեալ և յակն արկեալ զայս գործ
ընկերակցին, որպէս ասէն. « Ի ՈՁԵ Թուականէն Հայոց
մինչև յՁԺԴ . . . զոր ինչ արարին ազգն Նետողաց . . . .
գրեալ են մանրամասնաբար փառաւորեալ հայրն մեր Վա-
նական վարդապետ և հարազատն մեր Կիրակոս վարդա-
պետ, հօրն համանման, զոր մեք ոչ համարձակեցաք ե-
րեքկնել կամ բազմաբանել . . . պատկառելով ի գրողացն
պատուոյ »:

Պատմութիւն Թաթարաց արշաւանին ի Հայս, կամ լաւ
ևս յարևելեան Հայս՝ որ Աղուանք կոչէին յայնժամ, այս
իսկ է դիտումն նպատակի պատմչին, որպէս և ծանուցա-
նէ (121), գլուխ կարգեալ, « Թէ որպէս եկ Թաթարն ապա-
» կանել զաշխարհս ամենայն: Ամենայն բանք պատմու-
» թեանս մերոյ և նախաշաւիղ որ մինչև ցայսօր (ցամին 1225)
» էր վասն ազգիս այսորիկ, զոր չնորհօքն Քրիստոսի հան-
» դերձեալ եմք ճառել. կարծեմք թէ յոլով ևս զնոյնս պատ-
» մեացեն. և ամենեքեան նուազեալ գտանին յարժանա-
» ւորութենէն. զի յաճախեն քան զպատմութիւնս չարիքն՝ որ
» եկին կալան զաշխարհս ամենայն [1] »: Բայց թէպէտ և
զայս նպատակ ունի պատմիչն, այլ գրեալն զԹաթարաց
չառաւելու քանակաւ քան զկէս բովանդակ գրոց պատմու-
թեանն, որ և ինքնին չէ մեծ. հետևելով և յայսմ յոլովից
ի մերոց պատմչաց, որոց զիւրեանց ժամանակի դէպսն կա-
մելով ճառագրել՝ յամենան ի նախակարգութիւն անցին
յառաջագոյն անցելոց, կամ ի բովանդակութիւն առհմային
պատմութեան, և քան զխոստացեալն իւրեանց և քան զա-
կընկալութիւն մեր՝ կարճառօտս կոտորեն զբուն վէպսն.
այլ գուցէ մերս այս՝ որպէս և իւր ընկերակից՝ պատկառ
կալով ի մեծէ վարդապետէն իւրեանց Վանականայ՝ ոչ իշ-
խեաց երկրորդել զամենայն զնորա պատմեալսն, այլ յա-
ւէտ զթողեալսն առ ի նմանէ հաւաքեաց: Եւ զի գիւրոց
հայրենի սահմանաց զդէպսն գրէր, որպէս կանխեցաք նը-
շանակել, և տեղիքն յայնժամ յանուն Աղուանից աշ-

1 Ա յապիսի ինչ խմաստ խառնէ և Վարդան յետ վերոյհգեալ յի-
շատակութեան գրուածոց Վա-
նականայ և Կիւրակոսի: Տես ի
նորին պատմութեան, յէջ 147:

խարհի կոչէին, զայս մասն պատմութեան զոր երկրորդ Հատած կոչէ (96), սկսանի համառօտութեամբ պատմութեան եկեղեցական և քաղաքական աթոռակալաց Աղուանից. յորմէ և ձև զրոյն հաւաստի յերկուս տրոհիլ Հատածս. բայց զի՝ ի սկզբան ոչ յիշէ զայդ և ոչ՝ ի խորագրին էր նշանակեալ, և մեք ոչ իշխեցաք մեզէն վերակարգել կամ աստանօր տրոհել, այլ որպէս գրչագիրքն ունէին՝ զառաջին մասն անընդհատ առանց գլխակարգութեան չարայարեցաք. և երկրորդին սկիզբն ոչ՝ ի նշանակեալ հատածիդ եդաք, այլ ուստի գլխակարգութիւնքն սկսանէին, և ուր ինքնին իսկ հեղինակն նորով յառաջաբանութեամբ ծանուցանէ՝ զի ոչ ևս զառ յայլոցն նախագրելոց հաւաքածոյս՝ այլ զիւր իսկ ականջալուրս և ականատես պատմել ունի այնուհետև:

Ժամանակ ձեռնարկութեան գործոյս լեալ է յամի 1241, որպէս երկիցս նշանակէ հեղինակն (39 և 151), այլ և զօր սկսանելոյ զգրուածն (5) որ է 19 մայիսի, զի յայնմ աւուր հանդիպի տօն Հոգեգալստեան այնր ամի. և յայսց բանից ստուգի՝ ի նմին իսկ ամի իբր յեօթնամսեայ ժամանակի գրեալ զբովանդակ պատմեալսն և զեղեալսն մինչև ցնոյն ցայն ամ, յորում և առ վայր մի դադարեցուցեալ թուի զգործն, և ապա մի ըստ միոջէ ըստ իրացն յամբոկ ելանելոյ՝ չարայարեալ ժամանակագրաբար զանցս քսան և հնգից վերջնոց ամաց, ի 1241 ամէ ցամն 1265, յորում առարտ պատմութեան կամ գրոցս՝ առանց նշանակի վերջաբանութեան. կամ զի եղեալ էր ի մտի նշանակել և զոր յետ այնր գէպս՝ եթէ յերկարակեաց լիներ՝ և գտանէր պաոեհ ժամանակի և հանգստեան, և կամ թէ և գրեաց ինչ աւարտաբանութիւն և չեհաս առ մեզ[1]:

Ա.յսոքիկ զկենաց և զգործոյ մատենագրին ըստ արտաքին կերպարանաց. յանդիման արտացոյք համառօտիւ և գտեսութիւնս մեր զարժէից և զոճոյ գրուածոյն: Ոչ ինչ

[1] Ոմն յընդօրինակողաց պատմութեանն Թուղթս դատաստարկ Թոխլուվ՝ ի վերջն ազդ առնէ. «Ով եղբայր » բարեք, եօթն Թուղթս պարտապ » Թուխլի, զի օրինակն չկայր. ապա » Թէ զօրինակն գտանես՝ զպա» կան լցուցանես. բայց սակայն » հաշուես զի պարտապարը գայ և » Թուղթ պարտապ չի Թոլուս»: Համարէր ուրեմն իբր եօթն Թղթով պակասել, և Թուղթք նորա ստուգ ինչ փոքր են քան զմեր տպագրիս:

երկքայիմ զի համօրէն բանասիրաց, մանաւանդ որ ժամանակիս բազմախոյզ սրնարն է անցից անցելոց՝ ի հին և՝ ի միջին ժամանակս, ցանկալի և պիտանի լիցէ երկրորդ հատուածն պատմութեան Կիւրակոսի, և այնչափ առաւել, որչափ զի այժմ չունիմք՝ ի ձեռին ոչ զվանականի, ոչ զԳրիգորի ուրուանն երիցու, և ոչ զայլոց մերազնէի կամ զծանօթից մերձաւորաց և ականատեսից առաքելական պատմութիւնն զոր յ՚ԺԳ. դարու երևեցաւ յետ այլոցն՝ կերպարանափոխ առնել զքաղաքական կրօնս պրեաթէ բոլորումն Ասիոյ, յելից արևու՝ ի բացաձիգ ծովէն ձենաց՝ մինչև՝ ի ծովն արևմտից՝ ի Մէջերկրեայ: եւ յայսմ՝ թերևս կանխեցին քան զմեզ յառաջապէմբն յաւիտենական Եւրոպիացի բանասէրք՝ պատուադիր և օգտաշահ լինել, քաղելով՝ ի բանից պատմչիս ըստ իւրեանց պիտոյից և առաջարկեալ երկասիրութեանցն, մինչև պրեաթէ զողջոյն իսկ զերկրորդն Հատած թարգմանել հանդերձ ծանօթութեամբ՝ ի փառն Աստուծոյ և հրատարակել տպագրութեամբ՝ ի Բարիզ՝ հայագիտին և լեզուիս մերոյ անդ այժմ վարժապետի՝ տեառն Եդուարդայ Տիւլորիէ[1], և յաւուրս քան զնա մատուցմամբ Մ. Պրոսէ: Ընդ պատմութեանն նշանաւոր և պատուական է յաչս լեզուաբննաց հատուածն մատղ բառից (էջ 149): Իսկ մեզ ընդ նոցին պիտանի են և որ ինչ այլ զկողմանց արևելից կամ զՄազեաստանէ Հայոց պատմէ ականատես գոլով, զդէպս մեծի կիսոյ ԺԳ. դարու, և զկրօնական ինչ յիշատակս, որպէս խնդիրն բոլման Հոգւոյն Սրբոյ, և որ սակս այնր զեղծիկ դաւանութիւնք Վանականի և այլոց, Թուղթն կանոնական Կոստանդեայ կաթողիկոսի, այլովք հանդերձ. որք ընծայեն մեզ փառս կարևորս՝ ի պիտութիւն և՝ ի հիւսուած եկեղեցականս պատմութեան: Եւ այսպիսի դարձեալ պատուականագոյնք եւս ընծային՝ արժանահաւատ և առաքապատում ցուցանելով զերիչն՝ իւրոյ իսկ բանից և՝ ի վկայութենէ ուսումնականին:

Սակայն ոչ կարեմ զայս այսպէս հաւատալ և ասել զերկարժամանակեայ պատմելոցն յառաջնում հատածին, յորում բազում ուրեք թերացեալ երևի հեղինակս՝ ի քաջատութենէ, և դիւրահաւան, մանաւանդ յիւր հրա-

1 Les Mongols d'après les historiens arméniens. Premier fascicule. Extraits de Guiragos. Paris, Imprimerie imperiale, 1858:

չալեաց՝ որք ուրեք հրէշաւորս անգամ կերպարանին . և ոչ սակաւ ուրեք մատն լինին տարապայման ազգանախանձութեանն , եթէ ներեսցի ինձ ձայնդ , որպէս ի պատմեալսն գՅովհաննէ Գառնեցւոյ ։ Այնու ոչուով և մեծամեծս կորէ ի չատագովութիւն իւրոցն՝ ըստ կարծելոյ չաչդելն նմա բազդին կամ առթին ։ Ապաչառնայ և ես ի վին մտութեամբ գառանցեալ զոյզ ընդ կանխակալ ուսանդութեան՝ բազում ուրեք մարանչի ընդ ճշմարտութեան , մերթ ընդհարկանելով ընդ Ցոյնս (որպէս չէջ 53 , 57 , 70 և այլն) և մերթ ընդ իւրան իսկ յանդգնութիւ . մինչև զբերեալ և զմեծագոյն առն Ներսէսի Լամբրոնացւոյ հաւատալ կեղծաւորութեան բասրելի (76) . և յաճախագոյն ևս ընդ հաւանողս տիեզերական ժողովոյն Քաղկեդոնի , զրեթէ ի սովորականն իւրոցն համախոհից անկեալ չերկբանութիւն , զժողովն երգիծանելով և զհաւատս ժողովոյն այլոյ պանծանօք հաչակելով , որպէս չերկարաբան գառանութեանն (էջ 187–192) թէ իւր իցէ յօրինածն և թէ այլոյ վարդապետի , զի յօժար հաւանութեամբ ընդունի , որպէս և զբղխումն Ս . Հոգւոյն ի Հօրէ և յՈրդւոյ , նաղաբանելով իսկ թէ «ընդունելի է յեկեղեցիս Հայաստանեայց և յոգիս Կիրակոսի » ։

Այսենայնիւ այսոքիւք և քննողական ընտրութեամբն ըստրև գտանի[1] քան զուսումնակիցն իւր Վարդան , և նըւաղեալ ի հետամտութենէ նորին ի գիրս և ի բազդատութիւն բանից պատմչաց . յորոց է գի և զխալ առեալ գրէ , որպէս ի պատմութեան Գրիգորի Վկայասիրի (55) ։ Այլ և յոճ բանից լեզուին և իմաստից նուաստագոյն է . գի ոչ նրբութիւն և ազդուութիւն է չարաբանութեանն , և ոչ իմաստից վեհմութիւն կամ յանկարծական ինչ սլացք և զեղչիկ առած , որպէս է հանդիպել առ մեսրոն ։ Թէպէտ ունել ունի և անպաճոյճ հարթութիւն և պարզութիւն պատմածոյն գիւր յարդ , յատակութեամբն և անկնճիռն բացայայտութեամբն , միանգամայն և հեռի գոլով ի հեռակութենէ յեռանոցն քան զինքն պատմագրաց ։

Արժան է առանձինն յաւելուլ չիրաւունս Կիրակոսի և պհանգամանս գազափարաց գրոց պատմութեանն՝ իմեր ձեռս

[1] Թէ ոչ թեթևամտութեանն այլ և ոչ կարի նրբութեան՝ ի ձահ գրեացի և՝ ի յատաչաբանին գկնտ- տարեալ զանուն իւր յօդել· գուցէ գի անմտաց ձեռացէ այն ՝ ի չժամանակն առ վերչաբանն ։

հասելոց, որք երեք միայն էին, և ոչ մին ի նոցանէ հին կամ զգաստ գրչութիւն, որպիսիք էին առ մեզ օրինակքն Վարդանայ պատմութեանն, այլ սոքա նօտրագիրք ժէ դարու, բազմասխալք և թերաբանք. վասն որոյ հարկ համարեցաք ուրեք թողուլ որպէս և էրն և ուրեք ուղղել զյայտնի վրիպակս՝ որպէս անկն էր լինել, և զթերի բառն յաւելուլ նօտրացի գրոչմելով, կամ ի փակագծի ամփոփելով զթերին՝ զոր առաք ի Դ օրինակէ. և է սա անսեթևեթ տըպագիրն փոքրագիր յՈսկանայ տէր Գրիգորեան Յովհաննիսեանց, ընծայեալ ի լոյս յամի 1858 ի Մոսկուա[1] առանց ինչ բնաւ ծանօթութեան զակզբնագիր գրոցն. որով՝ թէպէտ և բազում ուրեք ընտիր քան զմերսն երևեցաւ նորա օրինակն, այլ ոչ կարացաք համօրէն վստահ լինել, ոչ գիտելով զչափ հաւատարմութեանն կամ զուղղագրութեան զոր արժանն էր համարեալ վարել յիւրում տպագրին. վասն որոյ և ուրեք ի տորև ի լուսանցս գրոցս նշանակեցաք զտարաճայնութիւն սորա ի մերոցս, որպէս և զմերոյ օրինակաց ի նորայոյն, կամ զսխալ սոցա. նշանակելով որպէս ի Վարդանայ պատմութեանն, 00, և իմանալով զաժենայն օրինական, իսկ զմին և զերկուս՝ յանուանէ նշանակելով Ա. կամ Բ կամ Գ. 0։

Իսկ ի բացայայտութիւն կամ յիմացուած և յորոշումն բանիցն պատմելոց կամ յուղղութիւն՝ յաւելաք ծանօթութիւնս՝ ոչ յաճախս և երկարս, այլ և բազում ուրեք հրաւիրեցաք զընթերցօղն ի պատմագիրս Վարդանայ, նշանակելով զէջս նորին գրոց[2], զտպագրեալն առ ի մէնջ երկեմաւ յառաջ (1862). քանզի բազում ինչ զնոյն մի գործ և զդէպ՝ պատմեն երկոքին սոքա, և մեզ ծանր թուեցաւ կըրկնել զնոյն և նման բան՝ յետ առաջնոյն և յերկրորդումն յայսմիկ մատենի պատմութեան. ակն ունելով թէ և ընթերցասէրք գրոցս Կիրակոսի՝ ոչ անսիրտք գտցին և Վարդանայ, նա և՛ կանխաւ զնոյն առ ձեռն ունիցին, գուցէ թէ և՛ ի մի տուի կազմեալ ամփոփիցին երկոքին մատեանքս, որպէս գտանին զուգահաւաք ի գրչագիրս։ Եւ եթէ դէպ

1 Խորագիրը տպագրին Է. Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ. ի լոյս ընծայեաց Ոսկան Տէր-Գրիգորեան Յովհաննիսեանց Ե. լևանցի. ի Մոսկուա, ի տպարանի արևելեան լեզուաց ձեռնարանի տեառն Լազարեանց։

2 Դնելով Վ. (Վարդան) և առ նմին զթիւ իջին։

ևս լինիցի և յետ այսորիկ զայլ պատմիչ մերձաւոր և ընդ
նաբան՝ի լոյս ընծայել՝ համարձակիմք աստուածին ծանուցա-
նել թէ այսու օրինակաւ և՝ի նոսին վարեսցուք, առ՝ի կար-
ճել զյաճախութիւն կամ զերկրորդումն բանից։ Մանա-
ւանդ զի և ոչ օրինակագիր և ճարտարահիւս արանց են
բանք ցանկալիք և ներկուածք, յորս ախորժ է մտաց լինքնա-
բեր դեգերումն և ներումն. իսկ՝ի տոկն, ստիպիմք խոս-
տովանել և զայս, զի բազում անգամ տաղտուկ և զզուանս
զայ մեզ ժամավաճառն իսկ լինել՝ի քննութիւն և յընտ-
րութիւն անոճ և անյաջ բանից և բաղային, որքան և սի-
րոյք լսելիք տոհմային պատմութեան և պատմչի. որոց սի-
րոյացն մեզ նմանեաց՝ ընծայեմք աւադիկ որպիսի ինչ են
առքա. զաւելին կամ զնուազ վարկի Թողեալ՝ի կամս և՝ի
ճաշակ նոցին ընթերցանելեաց, որպէս և զմեր բանքս։

Դարձ առնելով միւսանգամ՝ի հեղինակ մատենիս, զի
չկամիմք լռել որ ինչ զնմանէն, հարկ է համարել զնա, ըստ
իւրոց ինչ բանից, հմուտ կամ գիտակ Թուրք կամ պարսիկ
լեզուի, կամ թէ և նորամուտ Թաթար բարբառոյն, յոր
սակս և փոխանակ գրագրի և Թարգմանի կալեալ պահէին
զնա՝ի գերելն ընդ Վանականայ վարդապետին իւրոյ (132).
քանզի՝ի Գանձակայ գոլով ծննդեամբ և քաղաքին՝ի գա-
րուց հետէ անկեալ ընդ արաբացի և պարսիկ իշխանօք՝ լե-
զու նոցին հասարակեալ էր՝ի նմին։ Իսկ զայլոց հմտու-
թեանց նորին չունիմք հաւաստիս առ ձեռն, չունելով իսկ
զնորա զայլ գրաւոր վաստակ, որպէս կանխեցաքս ասել.
այլ յաւելցուք աստանօր զկարծեցեալն ինչ կամ զոչ հե-
ռիս՝ի կարծեաց. յորս միակ նորուն իսկ անուամբ յիշա-
տակեալ է համառօտ պատմութիւնն այն վարուց կամ տես-
լեան Մխիթարայ Գոշի, որ գտաւ՝ի գիրս մի Յայսմաւուրայ
՝ի Սևան կղզւոջ, և՝ի բանասիրէ ումեմն վարդապետէ[1]
ընդօրինակեալ հասուցաւ մեզ. և որոյ սկիզբն էր ԺԱ.
գլուխ Բ Հատածի պատմագրութեանս (106), ապա Միւռա
այն պատմութիւն սքանչելի վարդապետին Մխիթարայ, զոր և
արարաք Յաւելուած գրոցս. ՝ի վերջաբանին ընթեռնուս ըզ-
պատճառս և զանուն հեղինակիս, որ և զոյգ պատմելեացն
յօդուածոյ Թուի, գէթ ըստ մասին. զի որպէս ցուցաք՝ի

1 Գոլոս վարդապետ Պետրոսեան։

ակզբանն՝ չէր մարթ Կիրակոսի պատանեկի ականատես և ականջալուր լինել այնց իրաց, և ոչ աշակերտել վարդապետի իւրումն վարդապետի. այլ և ծաղրագոյն պատճառ Գոշ կոչման Մխիթարայ անհամաճայն գտանի պատմելոցն՝ ի մերոյս յայսմ իսկ պատմութեան մատենի (114–5). ապա այլոյ ուրուք գրեալ և վերագրեալ է զայդ յանուն Պատմագրիս, խառնելով՝ ի նորա գրածն. զոր մեք՝ ի զբօսանս բանասիրաց և յանկորուստ ճեպուած աւանդական գրուցաց՝ հաճեցաք չտեմարանել յամբարս տպագրութեան, ախորժելով և ընդ տեղագրական ինչ ծանօթս տահմանաց Գետկայ և ճապոտիկն գեղջ, զորմէ տեսցես՝ ի կարգին:

Մխա գրուած մեծ և կարևոր են ցայսմաւուրք Կիւրակոսի Արևելցոյ, որ ոչ լոկով անուամբն և հայրենեացն կոչմամբ մերձաւոր գտանի մերումս, այլ գոզջիր և կենացն ժամանակաւ. զի յօրինեալ է գորա զգիրս ցայսմաւուրացդ յամի 1269 և՝ ի վաթսներորդի վեցերորդի ամի կենաց իւրոց. այլ՝ ի Սիս քաղաքի թագաւորութեան Կիւլիկեցւոց: եւ զի ոչ այլ ոք՝ և ոչ մեք ասեմք Գանձակեցւոյն [1] զգործս զայս. այլ առ հանդիպակցութեան անուանն և ժամանակին և աշխարհին՝ ոչ խղճեցաք յիշումն առնել առ տեղեաւս. մինչև ապագայն ցուցցէ մեզ ստուգիւ զվարս Արևելցոյդ յորոյ անուն գտանին և բանք խրատականք և թուղթք. և յոմանց չիոթմամբ նոյն կարծին ընդ այլոյ և Կիւրակոսի երգնկացւոյ՝ յետնագունի հարուստ ժամանակաւ:

---

1 Մանաւանդ զի ոչ բաղում ամօք յառաջ քան զժամանակ երկասիրութեանն Արևելցոյդ՝ մեծն Վանական՝ վարդապետան Կիրակոսի, շարժեալ՝ ի խնդրոյ Ջալալ-դօլայ իշխանի Խաչենոյ՝ պատուիրեալ էր տեառն Իսրայելի ուղեւոր մեծի, և սորա արարեալ զգիրսն Յայսմաւուրաց. ապա անդէպ էր մերոյս Կիրակոսի Գանձակեցւոյ զնոյն գիրս յօրինել:

ՀԱՄԱՌՕՏ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ ԺԱՄԱՆԱԿԱՑ

Ի ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԷ ՄԻՆՉԵՒ Ի ՅԵՏԻՆ ԱԽՈՒՐՈՒ ԹՈՒԱՅԵԱԼ

---

*Ա*ԼՐՔ՝ որ ՚ի ընութեան մարդկան յայտնի, հատատեալ է խնամօք յարարչէն, քննասէր լինել իրաց ինչ անցելոց կամ հանդերձեալն լինելոց.

Իսկ այսմ ոչ է հնար այլազգ հատու լինել կամ իմանալ, բայց թէ բազում աշխատութեամբ և յերկար ջանիւ,

Ուսուցիլ և մաշիլ տաժանմամբ և յոյժ վաստակօք. զի Թերևս գտցէ ինչ պիտանացու՝ որ կարողն իցէ ընուլ զփափագս ինչ խնդրողին ըղձից.

Պաբունաբար երկօք և ոչ վարկպարագի անցանել[1] ընդ պատմութիւնս ժամանակաց ներքնոց և արտաքնոցն.

Ընդունակել և ազդեցութեան հոգւոյն, որ կարողն է իմաստնացուցանել զտգէտս և բանաւոր առնել զանբանս[2];

Կարող և ձեռնհաս զնա հաւատալ, առանց երկմտութեան և թերութեան.

Որով և ամենայն ինչ ըստ կամաց նորա յօրինի և կազմի, երևոյթքս և աներևոյթքն;

Որբասէս մտօք և անաչառութեամբ մատուցանել զոնկն՝ վերին և ներքին աստուածայնոցն բանից և զրոյ

1 ՕՕ. անցուցանել:

2 Ա. Գ. զբաղս:

պատմութեանց, որք կարող են հասուցանել զխըն-
դրողն լանդրեւլոյն։

Քանզի և այս օրէնք աստուածային են, ցուցանել
հարց որդւոց՝ զի ծանիցեն յաղգ այլ, որպէս մարգա-
րէն Դաւիթ հրամայէ. զի յայս խրատեր մեծն Ի մար-
գարէս Մովսէս զորդիսն Իսրայելի՝ խրատեր և ասէր.
Ստակացիս Ի սուտ Ի տուէ և Ի գիշերի, Ի նատել Ի
տան և Ի գնալ Ի ճանապարհ, Ի ննջել և Ի յառնել։
Եւ յայսոսիկ որք յօժանդակ են և ձեռն տան՝ յոլով
են աստուածայնոց արանց, որք կենդանի արձան Թա-
գին զգիրսն յետ իւրեանց, յամենայն ազգաց։ Որպէս
մեծն Եսեբոս զերկուս գիրսն եւթող, զՔրոնիկոնն
սկսեալ Ի նախնոյն Ադամայ, զիւժական անուանս նա-
հապետացն՝ զոր գրեցին արտաքինքն, համեմատելով
ընդ աստուածայնոց արանց պատմութիւնս. և բերեալ
հասուցանէ մինչև Ի գալուստն Քրիստոսի և այսր ըզ-
յոլովից ազգաց նահապետս և զթագաւորս։ Եւ զն-
կեղեցւոյ պատմութիւնս, սկսեալ Ի ծագմանէ արե-
գականն արդարութեան, զժամանակս Թագաւորաց և
զառաքելոյ սրբոց քարոզութիւն, և Թէ ո՞Ի նոցանէ
զինչ գործեաց, և Թէ յո՞ր կողմն չոգաւ իւրաքանչիւր
ոք, և կամ Թէ որպէս վկայեցին, և զեպիսկոպոսաց
սրբոց և զերևելի արանց զգործ և զքաջութիւն, և բե-
րեալ հասուցանէ մինչև յաւուրս մեծին Կոստանդիա-
նոսի բարեպաշտի, և անդ դադարէ։

Եւ ապա մեծիմաստն Սոկրատէս կորովի բանիւք,
սկսեալ Ի սրբոյն Սեղբեստրոսէ Հռոմայ հայրապետէ
և Ի Կոստանդիանոսէ, և ածէ մինչև յաւուրս Թէո-
դոսի փոքու, զարարածս և զգործս իւրաքանչիւր Թա-
գաւորաց, և զեպիսկոպոսաց՝ զառաքինեաց և զվատ-
Թարաց, և զժողովելոյ[1] բազմաց եղելոց, պիտանեաց
և խոտանեաց, ընդարձակ և յաճախ պատմութեամբ
ասարտէ։

Նոյ Հայոց ազգիս պատմագիրք յոլովք ցուցին աշ-
խատութիւնս, որպէս սքանչելի և կորովամիտն Ագա-
Թանգեղոս, որ Թարգմանի Նարր-Հրեշտակ. զոր եղոյց
Հրամանաւ մեծազօր և քաջ արքային Տրդատայ զհան

1 Ասյսպես յ'ՕՕ։

զամենս իրաց եղելոց առ Նայս ՚ի ձեռն սրբոյն Պետրոսի պարծևի և խոստովանողին Քրիստոսի, զգործման նշանաց և արուեստից և զբանչելագործութեանց և զպատճառ լուսաւորութեան ազգիս Նայոց գեղեցիկ և պայծառ պատմութեամբ աւարտէ։

Եւ զկնի նորա ամենահարուստն գիտութեամբ և մեծն իմաստութեամբ քան զամենայն՝ սուրբ այրն Աստուծոյ Մովսէս Խորենացի, որ զՆայոց պատմութիւն շարադրեաց բազմահանձար և յոգնաշրջուատ բառիւք, և համաուօտ պատմութեամբ և ընդարձակ մտօք ՚ի նախնի մարդոյն սկսեալ զամենից ազանց իրս և զգործս և զարարս՝ բերեալ մինչև յաւուրս Տրդատայ և սրբոյն Գրիգորի, և անտի մինչև յիշատարուածն սրբոյն Ահակայ Նայոց հայրապետին, և զողբս ասացեալ ՚ի վերայ աշխարհին Նայոց՝ անդանօր զդարձուցանէ։

Եւ յետ նորա՝ սուրբն Ղազիէ, որ պատմէ զքաջութիւն Վարդանայ Թոռին սրբոյն Ահակայ և ընկերաց նորին, որք յուսոյն Քրիստոսի զանձինս ՚ի մահ եդին և պահեցան ՚ի Քրիստոսէ, և զարիական մահս սրբոց Յովսեփեանց, և զկամաւ տալ զանձինս ՚ի կապանս արքունի նախարարացն Նայոց վասն յուսոյն որ ՚ի Քրիստոս. և զհամբերող նահատակութիւն սրբոյն Խորենայ և Ալբրահամու, զոր ստուգութեամբ ցուցանէ այրն Աստուծոյ աքանչելի։

Եւ ապա Ղ ազար Փարպեցի Ձարտասան, սկսեալ յաւուրցն սրբոյն Ահակայ, և զնոյն ոճ պատմէ։ Եւ զկնի նորա Փաւստոս Բիւզանդ, որ զեղեալ իրս պատմէ Նայոց աշխարհիս ընդ Պարսիկս և ՚ի նոցանէ ՚ի մերս. և Ներսէհ ՚ի Սեբէոսէ եպիսկոպոսէ ասացեալ[1]. և պատմութիւն առն աքանչելի Կորեան. և Խոսրով, և Ղևոնդ Երիցու պատմութիւնն՝ որ զոր ինչ գործեցին Մահմէտ և աթոռակալք նորա ընդ աշխարհս ամենայն, և առաւել ևս ընդ ազգս Նայոց. և Մամայ վարդապետ տանն Ամծրունեաց. և Շ ապուհ Բագրատունի. և տէր Յովհաննէս կաթուղիկոսն Նայոց. և Մովսէս

1 Այսինքն է պատմութիւն արշաւանաց Հերակլի կայսեր ՚ի Պարս, զոր գրեաց Սեբէոս եպիսկոպոս։

Կաղկանդուսայի Աղուանից պատմագիր [1]. և Ալխատանէս եպիսկոպոս Ուտհայի, որ գրեաց զբաժանումն Վրաց և Հայոց ի ձեռն Կիւրոնի. և Մատթանոս մականուն Ծ՚ոսղիկ վարդապետ. և Ղազարէս վարդապետ կոչեցեալն Ղ աստիվերցի. և Մ՚ատթէոս վանաց երէց Ուտհայի. և Մամուէլ անուն քահանայ կաթուղիկէին Աղուանց. և ապա մեծ և հանճարեղ վարդապետ անուանեալն Վ՚ահրնաման։

Որոց վայթ եղև սոցա իւրաքանչիւր սրբոցն՝ գրով Թողուլ յիշատակ բարւոյ զկնի եկելոց, յօգուտ լսողացն և ի վարձատրութիւն նոցին սրբոց, անջինջ լինել յիշատակ մինչև ի յօրն Քրիստոսի։ Ուստ մեք ձեռնարկութիւն մի ումեք յանդգնութիւն համարեցաք, այլ առաւել բարեացն նախանձոյ գործ. զի հարկանեն զմեզ միտք մեր ոչ տալ լռութեան այսպիսի առիթս զերծ տարակուսանացն, զոր լուաք ականջօք մերովք, և տեսաք զի ի գլուխ ելին ամենայն սրբոց մարգարէու Թիւնք՝ որ յառաջագոյն գուշակեցին վասն նեղու Թեանցն, որ հանդերձեալ էր լինել, և առ մեզ գործովք կատարեցաւ. զոր և ասաց փրկիչն մեր և Ք՚ս տուած տէր Յիսուս Քրիստոս, եթէ Յարիցէ ազգ յազգի վերայ, և Թագաւորութիւն ի Թագաւորու Թեան վերայ. և այն ասէ սկիզբն է ելիկանց. յայտնու Թիւն որդւոյն կորստեան։ Զոր երկնչիմք՝ մի գուցէ երևեսցի նա ի մերում ժամանակիս, զի գործք ամենայն որ գործին այժմ՝ զնոյն նշանակեն. սէր ցամաքեալ, անգթութիւն տիրեալ, աստուածպաշտութիւն նուազեալ, և անհաւատութիւնք բարձրացեալ, սեղանք և պատարագք լռեալք, քահանայք անողորմ ի սուր արկեալք, կանայք և մանկունք գերեալք, և արք դառնամահք լեալ։ Ո՚ի զոր գուշակեաց այրն Ք՚ստուծոյ սուրբն Ներսէս վասն ազգին Աղետողաց[2] և աւերման աշխարհիս Հայոց, այժմ կատարեցաւ յազգէն որ Վահաթարն կոչի. զի բազում ազգ և ազինս ջնջեաց սա. զոր և յիւրում տեղւոջն պատմեցաք, եթէ տէր կամեցի։

1 Մովսէս Կաղանկատուացի (զի Կաղանկատուք կոչի հայրենի նոր տա աւանն) հաւանօրէն յ՚է դարու եկեաց։ Բայց զպատմութիւն Աղուանից շարակարգեցին այլք յետ նորա։

2 Որ են այժմու Թաղթալք։

Բայց իբրաքանչիւր ոք յառաջին աշխատասիրացն է՝ գիտ տեղի ինչ բուռն հարկանելոյ, կամ թագաւոր է՝ լևելի, կամ նահապետութիւնք ազգացն յայտնի. իսկ մերս յայսմ ամենայնէ թափուր եղեալ. զի թագաւորութիւնն վաղ ուրեմն բարձեալ, Ասորւոցն և Պարսից, և իշխանք ոչ ուրեք երևեալ հայկազնի. բայց թէ ուրեք ուրեք զօրեալք յօտար աշխարհի: Բայց միայն մերոյս եղեալ առաջի զաւուրս ընդհ, և զխորհրդոյս զօրութիւն, զի յայսմ աւուրս յորում ձեռնարկեցաք՝ի սմայ՝ տօն էր գալստեան ամենասուրբ Յուսոյն՝ի վերնատունն՝ի դասս առաքելոց հրեղէն լեզուօք, հրաշազարդեալ զնոսա ընդ տիեզերս առաքեաց՝ կոչել զամենեսեան ուռկանաւ աւետարանին՝ի կեանս անմահականս: Եւ մեք՝ի նոյն Յոգին վստահ եղեալ արկաք զանձինս յաշխատութիւնս՝ որ՝ի վեր է քան զկար մեր: Այլ ոյժ աղաչեմք զկնի եկեալսդ, ոչ աղարտել զաշխատութիւնս մեր որպէս անուսմունք, և լնլել քթօք և յունօք պռատել. այլ զինջանել եղբայրաբար, և ձեզ՝ թողուլ յիշատակ ապագայից. զի Պրիստոսի աշակերտացն ամենայն ինչ հաւանութեամբ է, որպէս ուսանիմք՝ի գրոց: Այլ մեք բուռն հարցուք զիրս զոր սկսաք և ցուցաք. նախ զանուանս աթոռակալացն սրբոյն Գրիգորի,՝ի նմանէ սկսեալ մինչև առ մեզ սուղ ինչ համառօտիւք. զի լիցի սա մեզ արձան գերեզմանի, ոչ ըստ նմանութեան Աբիսողոմ արքայի [1], այլ կենդանի, զի յիշեսցի՝ի սմա անուն Կիրակոսի:

Ձանն՝ զոր կանգնեաց Աբեսաղոմ յիւր անուն՝ի հովիտս Թագաւորաց: Բ Թագ. ԺԸ. 18:

1 Ա. Գ. Աբիսողոման արփին: Տըպագիրն աբիսողոմեան փորին: — Հեղինակն ակնարկէ յանձահս յարութեան Աբեսաղոմի՝ որ անուն կոչեաց զսիւնն՝ զոր կանգնեաց Աբեսաղոմ յիւր անուն՝ի հովիտս Թագաւորաց: Բ Թագ. ԺԸ. 18:

ՀԱՄԱՌՕՏ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԵՒ ՅՈՅՑՔ ԱՆՈՒԱՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ

ԵՒ

ՈՐՔ ՅԵՏ ՆՈՐԱ ՅԱՋՈՐԴԵՑԻՆ [1]

Ամենայն գուշեւտից արժանի և յիշատակաւ բաւական հռչակեալն հայրն մեր հոգեւոր և լոյս աւետարանին ճնօղ սուրբն Գրիգորիոս՝ յետ լուսաւորելոյ նա զՅայաստան աշխարհս աստուածգիտութեամբ, և ձեռնադրելոյ եպիսկոպոս աւելի քան զչորեքհարիւր և երեսուն, գնալ եղև նմա ընդ մեծի արքային Տրդատայ՝ ի Հռոմ՝ ի տեսութիւն նշխարաց սրբոց առաքելոյն Պետրոսի և Պօղոսի, և մեծ Թագաւորին Կոստանդիանոսի և սուրբ հայրապետին Սեղբեստրոսի, գնել ուխտս և դաշինս՝ ի մէջ նոցա։ Եւ ընկալեալ մեծաւ պատուով Կոստանդիանոս և մեծ հայրապետն աշխարհամուտ զնա՝ մեծարանս արարեալ սրբոյն Գրիգորի, որպէս խոստովանողի և առաքելաշնորհ վկայի Քրիստոսի, տան նմա ամենայն հայրապետութեան որպէս աթոռակալի Պետրոսի [2]. տան և մասն ինչ՝ ի նշխարաց առաքելոցն, և զահեակ ձեռն Աստուծոյ առաքելոցն, և այլ ընծայս բազումս, և յանդուրժեմ զտեղի խաչելու-

1 Ա. Գ. առաջնորդին։

2 Աթոռակալ Բարդուղիմէոս առաքելակցին Պետրոսի։

թեան Աբրահամ զՅովսէփ, և զաւրբ Յակոբն, և աւել մի պատարագն՝ ի ծնարս աւրբ Յարութեան. և ասեն կախեաց կանթեղ մի աւրբ Դրիգոր՝ ի վերայ գերեզմանին Աբրահամ. և խնդրեաց Աստուծոյ ա-ղօթիւք, առանց պղալի լուսոյ լուցանել՝ ի աւրբ Պաւելի տօնին, որ լինի մինչև ցայսօր նշանն [1]: Նոյնպէս և զմեծն Տրդատ մեծարեալ պէս վայել էր նորա քա-ջութեան, արեամբն Աբրահամ [2] և հաւատովն որ՝ ի նա՝ պաշինա կռեալ անքակ ունել զսէրն՝ ի մէջ երկուց ազգաց յետ նոցա: Նոյն Պատանդիանոս զմեծն Դրիգոր. Ոչքան ուրախութիւն է առաջի հրեշտակաց՝ ի գնալ այնքան մոլորեալ ոչխարացն: Եւ պատասխա-նի ետ, Այժ. բայց մի ոչխար հանալին ապականքս առ վերնոց բազմութիւնս: Եւ կայսրն ասէ. Եւ վըր-կեալքս մի վերջացուք հանդիսանալ ընդ նոսա յեկա-ւորիլդ ձեր: Եւ հրամայեաց ամենայն քաղաքին խրա-խանալ զենամբք խաչանց. և հրեայք և հեթանոսք ոչք ճայեալ էին յանհաւատութեան՝ լուանային յօրհ-նութեան աղէն. աւրբն Դրիգոր և Պեղեսարա աղ օրհնեցին: Եւ ասէ աւրբն Դրիգոր ցհրեայն. Գնա ղթիւթաւթիւնն անթիւթատ արարիք հակառակ օրի-նացն. և ասէ, անաանոյն՝ ոչք մատչին պատարագ Ա-ստուծոյ, և կամ նաւէր արբոյ կամ յիշատակ ննջեցե-լոց՝ առանց օրհնութեան աղի իբրև զմոհ հեթանո-սաց է:

Եւ ապա եկեալ յաշխարհս մեր հոգևոր ցնծա-թեամբ և մեծաւ ուրախութեամբ յոգնապէս զարդա-րեին զաշխարհս մեր ամենայն քրիստոնէական կարգօք: Եւ՝ ի կենդանութեան իւրում ձեռնադրեաց զորդի իւր զաւրբն Աբրահամ եպիսկոպոսապետ Հայոց և Վրաց և Աղուանից. և ինքն քաւն հարեալ զվիայնա-կեցութեան, զի ամենայնիւ սպակեսցի առաքելակա-նաւ՝ հայրապետականաւ և միաբնաւորականաւ, առա-ւել ընտանեցուցանէր զմարդն Աստուծոյ անդադա-պես: Եւ յորժամ եկն Աբրահամ՝ ի ժողովն Ան-

1 Եւ զայս իբրև անշուշտ ասէն ոչք առ առեն:

2 Որպէս թէ՝ ի բաժակ աւրբ խորհրդոյն Թաթաւեալ և դրեալ նկեն դաշինքն, ըստ աւանդելոյ այլոց և մեծաբանից, որպիսի և հետևեալ բանքդ են:

կնայ, այնուհետև սուրբն Գրիգոր այլ ոչ ումեք երևեցաւ. կեցեալ ժամանակս յոլովս՝ հանգեաւ ի Քրիստոս, կալեալ զհայրապետութիւնն ամս երեսուն։ Եւ զտեալ զնա հովուացն վաղձանեալ՝ կարկառ քարի կուտեցին ի վերայ նորա. և յետոյ ազգեցութեամբ սուրբ Հոգւոյն ումն Գառնիկ այր ձգնաւոր և սուրբ տարեալ հանգուցին ի Թորթան։ Եւ յաւուրս Օշենանի կայսեր մեռանցն ի Կոստանդինուպոլիս [1]. և արարեալ տապան այծաթի՝ եդին ի նմա զնշխարս սրբոյն. գրեալ զնուրբ աթաղաւորին՝ եդին ի նմա զնշխարս սրբոյն. գրեալ զնուրբ աթաղաւորին՝ եդին ի վերայ, և եդին ի վերայ մարմարեայ տապանի, և կնքեցին մատանեաւ, և եկաց ժամանակս յոլովս անյայտս՝ ոչ գիտելով այր ումեք է. քայց զայս միայն՝ Թէ սրբոց է։ Իսկ յաւուրս Վասլի կայսեր և Ներսէսի Հայոց Թագաւորի յայտնի եղև այսպէս։ Պատանի մի ըմբռնեալ յոգւոյ չարէ մինչդեռ յաղօթս էր ի նմին եկեղեցւոջ՝ ուր կային նշխարք սրբոց, վերացուցեալ դիւին զպատանին ընկէց ի վերայ սրբոցն, աղաղակէր և ասէր. Սուրբդ Գրիգոր լուսաւորիչ Հայոց՝ մի տանջեր զիս. և դու տիկին Հռիփսիմէ եկիր տանջել զիս. և դու Գայիանէ տանջես զիս։ Եւ զայս աղաղակէր ի բազումժամն. և լուեալ զայս բազմութեանն ազդեցին Թագաւորին. և հրամայեաց բանալ զտապանն. և իբրև բացին, լցաւ սաստիկ փայլատակեաց ի նշխարաց սրբոց։ Եւ հրամայեաց կայսրն զմարմարիոնեայ տապանն ոսկւով պատել և գրել զանուանս սրբոցն ի վերայ, զի ամենայն ոք գիտասցէ Թէ ոյր է տապանն։ Այս ամենայն եկեալ նեղքինի մի պատմեաց Թագաւորին Վասլի. և նորա լուեալ ետ փառս Աստուծոյ, և կարգեցին զօրն զայն տօն սրբոյն Գրիգորի, որ ի վեցերորդ շաբաթու աղուհացին շաբաթ օրն կատարի, մինչև ցայսօր [2]։

Իսկ սուրբն Աբրահամ բարիոք հովուեր զհօտն որ հաւատացաւ նմա. և յանդիմաներ անաչառութեամբ զոչ եկեալսն յուղղութիւն։ Ման որոյ Աբգեղայոս անուն որ էր վերակացու կարգեալ Հորդորդն կոչեցեալ Հայոց, յանդիմանեալ ի նմանէ վասն չար գործոց իւ-

1 Վ. 41։ 2 Վ. 85։

րոց՝ պատահեալ նմա ի նոցանէ գաւառին սպան զնա. և ինքն երկուցեալ ի Տրդատայ արքայէ՝ գնաց փախըստական ի Տարսոն Կիլիկեցւոց։ Ջ եօթն ամ կալեալ զեպիսկոպոսութիւնն՝ մարտիրոսական մահուամբ փոխեցաւ ի Քրիստոս։ Եւ կացոյց փոխանակ ի հայրապետութեան աթոռ Տրդատ արքայն զերէց որդին սրբոյն Գրիգորի՝ զՄեծն Ա ՀրեԹանէս, զեղբայր սրբոյն Ներսիսի։

Եւ ինքն սիրեաց զվարս միայնակեացութեան որպէս զնքն Գրիգոր. այնուհետեւ ընդ ժամանակս ժամանակս անյայտս լինէր ի զօրաց իւրոց, քառասնօրեայ ժամանակս ձգեալ պահօք և աղօթիւք. և երթեալ զօրաց նորա ունել զնախագահութիւն աղաչէին զնա։ Իսկ նա ոչ հաւանէր ասելով տիրանենգ զնոսա, և առ աչս մարդկան ունել զաստուածպաշտութիւն։ Եւ նոքա երդմանն արարեալ և մուրհակս կնքեալ սրբութեամբ ունել զքրիստոնէութիւն և միամտութեամբ ծառայել նմա, և նորա հաւանեալ կամաց նոցա զատնայ յաթոռն իւր, և ամենայն կարգաց և առաքինութեան ինքն լինէր օրինակ։ Իսկ նոքա տաղտկացեալք ի բարեպաշտութենէ նորա խորհեցան նենգութեամբ սպանանել զնա յորս՝ զբօսանացս աղագաւ. հարեալ նետիւ խոցեն զնա իբրև անպիտութեամբ. և տեսեալ թէ ոչ մեռանի յայնմանէ, տանն նմա զեղ մահու. և այսպէս լուծին զնա ի կենցաղոյս, զայն ոլ Թշնամիքն ոչ կարացին սպանանել զնա։ Ոլ հսկայաբար յաղԹէր ամենայն Թշնամեաց, որ անհնարին համարեալ ուժով, որ համբաւ քաջութեան նորա ելեալ էր ընդ ամենայն տիեզերս, զնա սպանին նենգութեամբ, և անձանց իւրեանց շինուցին զբազմացոյս զահն. այսպէս հանգեաւ բարեպաշտ և աստուածասէրն Տրդատիոս կալեալ զԹագաւորութիւնն ամս չիսուն և վեց։

Իսկ մեծն Ա ՀրեԹանէս երԹեալ առ Կոստանդին կայսրն՝ Թագաւորեցուցանել զՀոսրով զորդի քաջին և աւաքինւոյն Տրդատայ, զոր և արար իսկ. զօրս բազում տուեալ յօգնականութիւն նմա, ընդդէմ կալ պատերազմաց Պարսից արքային Շ ապհոյ։ Ոայց Ագնատրուկ որ[1] Ընդուանից վերակացու կարգեալ էր ի

1 ՕՕ. յաւելուն «որ Պարսից արքային Ընդուանից»։

Տղաքաց, իբրև լուաք զմահ նորա, ասացանէ զաւրքն Պետիդարայ զորդին Պղնձոյ թագաւորէն Յուդայ եկեալ Յուսկան կապեալ զնա ընդ ագի ամեհի ձիոյ՝ ի գաշտի Պաւանեան, և ինքն երթայ առ Տ ապուհ արքայն Պարսից։ Ի ընդառնալն Թագաւորելոյ Յուսկան, հաստատէ զաշխարհն Խորենացի. և Խորենոյ բաւական համարեալ զմնացեալ աշխարհն իւր, ոչինչ փոյթ զպատերազմացս արարեալ, այլ խաղաղական կենօք կացեալ հնազանդեալ մեծին Պղնձոյ թագաւորի՝ փոխ ի Խոսրովայ քաղաքն ի Պարվին, և անկէ անտուս կարնեցի՝ տեղի զբօսանաց, և Թագաւորեալ ամս լինն՝ վաղճանի բարեպաշտութեամբ։ Ի Թագաւորել փոխանակնորա որդինորա

Խոկ տուրքն Պ ղնձոյ բարեաւ կարգաւորութեամբ վարեաց զժամանակս կենաց իւրոց. Թէպէտ բազում անգամ կամեցան սպանանել զնա նախարարքն, այլ Աստուած ոչ ետ Թոյլ այնպես լինել, այլ խաղաղական մահուամբ փոխեցաւ առ Քրիստոս յոյժ ամենեցուն։ Ի Թագաւորն Տիրան կացոյց փոխանորդ նորա զորդին զտուրքն Յուսիկ զեղբայր Պետիդարայ Պղնձոյ Պզուանից կաթուղիկոսի։ Բայց Տիրան ոչ ըստ իրաւանցն Աստուծոյ վարէր զԹագաւորութիւնն՝ այլ չար գործովք. զոր յանդիմանէր տուրքն Յուսիկ անդադարութեամբ. խոկ Տիրան առէր զնա, զոր և սպան զնա յետոյ այսպիսի պատճառաւ։

Եղև յետ մահուան Պատանդնի որդւոյ մեծի Պատանդիանոսի, Թագաւորէ Դամբեցւոց ուրացողն Յուլիանոս, և առաքէ տեսուակ մի որոյ վերայ նկարեալ էր զպատկերն սատանայի և մերձ առ նմա Յուլիանոսի և դնել զայն յեկեղեցին Հայոց, և Տիրան առ երկիւղն նորին առնէր զհրամայեալն։ Խոկ տուրքն Յուսիկ դիմադարձ եղեալ ոչ տայր Թոյլ մուծանել յեկեղեցին, այլ առեալ ի ձեռաց նորա ընկէց յերկիր, և կոխան արարեալ ոտից իւրոց մանրեաց զնա. և բարկացեալ Տիրան հրամայեաց ջալոտիւք հարկանել զնա այնչափ մինչև մեռոյլ։ Ոչ կալաւ զանձառելիսպատուհասն զանց վէց։ Խոկ Տիրան կոչէ զմեծ քրմապետն Պատնել աղգաւ սասնոյ՝ զոր կացուցեալ էր տրդոյն Պղնձոյ տեսչ զաւառաց, այլ տուրք և սպանիլ։ և նորա եւ հեալ յանդիմանել զնա սաստիկ անիծիւք վասն սպան-

ման տուրք քահանայապետին Յուսկան: Եւ քարկաւեալ Թագաւորն հրամայէ խեղդել զնա, և կատարեցաւ տուրքն մարտիրոսական մահուամբ: Եւ յետ այնորիկ կացոյց Տիրան յաթոռ հայրապետութեան զՓառնեբատեհ ոմն, ոչ յազգէ տրդոյն Արշակունի, այլ՝ի Տարօնոյ՝ի գեղջէն Աշտիշատայ, որ կալաւ զաթոռն ամս հինգ: Եւ Ե ամուն տրքայն Պարսից կոչէ զՏիրան առ ինքն խաբէութեամբ, և՝ի Ձանասարհին կուրացուցանեն զաչսն երա ածղալ, վասն ժլատութեան Աստուծոյ եկեալ անիրաւ մահուանցն, զոր արար նա ընդ Յուսիկ և ընդ Վանիէլ. յետոյ խեղդեաց զնա որդին իւր Արշակ. որ Թագաւորեաց ամս երեքտասան: Եւ առնու զաթոռ Թագաւորութեան հօր իւրոյ Արշակ, հրամանաւ Ե ամոյ. և եկին առ նա ամենայն նախարարքն իւր, և ամենայն եպիսկոպոսունքն աշխարհին Հայոց, և խնդրէին՝ի նմանէ հայրապետ արժանաւորի՝ի ցեղէ տրդոյն Արշակունւոյ, և գտին մանուկ մի գեղեցիկ հասակաւ և բարիոք տեսանելով տեառն, որում՝ անուն էր՝ Ներսէս, որդի Վթանագինի որդւոյ Յուսկանն. զի էին նորա երկու որդիք, անուն միոյն Պապ և միւսոյն Վթանագինէ, և մինչ կենդանի էր Յուսիկ ոչ ձեռնադրեաց զնոսա՝ի գործ ինչ եկեղեցւոյ, քանզի չէին արժանիք, և յետ մահուան նորա ձեռնադրեն զնոսա՝ի սարկաւագութիւն բռնութեամբ: Ուստի նոքա Թողեալ զգործ եկեղեցւոյ, ուտելով և ըմպելով պարապեալք և փոխանակ տաղմանց և երգոյ հոգևորաց, գուսանօք և վարձանօք[1] և բոզիւք շատանային. և յաւուր միում նստեալ եկեղեցւոյն ուտել և ըմպել կանանօքք և մանկտիւք՝ հուր անկաւ յերկնից և այրեաց զերկաւեանն, նորանշան մահուամբ խայտառակելոյ, և զաւուրս քառս՝՝ի նեղութս եկեղեցւոյն մնացեալք, ոչ զի իշխեալ մատանել և հանել արտաքս զդիս նոցա:

Նայց աքանչելին Ներսէս արժանի էր կոչմանն որ կոչեցաւ, զի էր նա արդար և տուրք. և էր նա զինուցեալ ատքայն Աշակայ, որ զսուսերն պղտվատիկ նորա բարձեալ ունէր՝՝ի տպատու, որ և զանձն անարժան համարէր այնմհատոյ պատուոյ: Իսկ Աշակ ատքայն

1 Այսպես յ'ՕՕ:

հրաման եւ ծերունի եպիսկոպոսին Փաստոսի ձեռնադրել զնա սարկաւագ. և ապա զօր բազում գումարեալ առաքէ զնա ՚ի Կեսարիա ձեռնադրել զնա Հայրապետ: Եւ եկեալ անտի լուսաւորել զաշխարհս Հայոց զանազան կարգաւ՝ շիներ վանորայս և աղքատանոցս շիներ, և ժողովեր զուրուկս և զհալածս, և կարգեր դարմանս և ռոճիկս նոցա: Բայց Ա.րշակ ոչ ըստ իրաւանցն Աստուծոյ վարեր զթագաւորութիւն, զի սպան նա զեղբօրորդին իւր զՎնել, և էառ զկինն նորա զՓառանձնեմ. անէծ զնա սուրբն Գրիգոր, այլ և Թշնամի եղև նմա: Ապուհ արքայն Պարսից, և Վաղէս կայսրն Յունաց, որ յետ Ողբիանոսի[1] բարեպաշտի. և ազաչէ Ա.րշակ զՆերսէս գնալ դեսպանութեան առ Վաղէս կայսրն. և գնաց սուրբն Ներսէս խաղաղութիւն առնել ՚ի մէջ երկուց թագաւորաց: Բայց Վաղէս քանզի մոլորեալ էր յաղանդն Ա.րիանոսի և Մ՚ակեդոնի, և հալածիչ էր ուղղափառաց, իբրև ետես զսուրբն Ներսէս և լուաւ Թէ աբանչելագործ այր է, ասէ ցնա. Ընդ ժըշկեա զորդի իմ. քանզի հիւանդ էր մերձ ՚ի մահ: Ասէ սուրբն Ներսէս. Նթէ ՚ի բաց կացցես յանհաւատութեան աղանդոյդ, ես բժշկեցից զնա. և յանձն առ ՚ի բաց կալ, և աղօթեալ յարեաւ մանուկն յախտէն, և Վաղէս դարձեալ ՚ի նոյն հերձուածս դարձաւ, և իսկոյն մեռաւ մանուկն. և հրամայեաց աքսորել զսուրբն ՚ի տեղի մի անբնակ, յորում ոչ գոյր բոյս դալարոյ, բայց միայն աւազ. և աղօթել սրբոյն բղխեաց աղբիւր քաղցրահամ, և ծառիկ ընկենոյր ձուկն և փայտս. և փայտն առանց հրոյ ինքնին լուցանիւր, և այնպէս կերակրեալ լինէին զնովն ամիս:

Իսկ Ա.րշակ իբրև ետես եթէ աքսորեցաւ սուրբն Ներսէս, սկսաւ գործել մեծամեծ չարիս. շինեաց քաղաք մի և անդ ժողովեաց զամենայն չարագործս, և ասաց ոչ լինել իրաւանց՝ որ ոք գործեսցէ զչարիս և անկցի անդ, և լցաւ քաղաքն անիրաւութեամբ, և անուանեաց Ա.րշակաւան: Իսկ Վաղէս կայսրն չարաչար սատակեցաւ, զյաւիտենական զհնոյն աստէն բերելով զօրինակն, հրակէզ եղեալ. և առնու զթագն մեծն

1 Այսինքն է Ցովիանոս կամ Յովհաննես:

Ովհաննես հրամանաւ Պետրոսի. և ածեալ զսուրբն Ներսէս յաքսորանացն առ իւր պահէր մեծաւ պատուով մինչև ի հաւաքումն ժողովոյն հարիւր յիսանից՝ որ ի Կոստանդինուպոլիս[1] վասն հոգեմարտին Նաակեդոնի. յորում էր Պետրոս աստուածաբանն, և Պետրոս Գնիացին եղբայր սրբոյն Բարսեղի, և այլ բազում սուրբք հարք. և ապա առաքէ զսուրբն Ներսէս յաթոռն իւր: Եւ տեսեալ զանիրաւ գործս Արշակայ անէծ վՆրշակաւանն. և անդէն սատակեցան բնակիչք նորա չարամահ, և անբնակ եղև քաղաքն բազմամարդ: Եւ վՆրշակ կոչեաց Շապուհ, և եդ զնա ի բանդի առնել. և ինքն ձեռօք իւրովք սպան զինքն, որ Թագաւորեաց զամս երեսուն: Իսկ սուրբն Ներսէս աղաչեաց զմեծն Ովհաննես, և Թագաւորեցոյց ի վերայ Հայոց զՊապ զորդի Նրշակայ: Իսկ Պապ քանզի զազրագործ էր և յանդիմանէր զնա սուրբն Ներսէս, ետ նմա դեղ մահու, և եբարձ զարդարն ի կենցաղոյս. և սուրբն ի մեռանելն իւրում կոչեաց զՀօտ իւր և օրհնեաց զնա. և բազում ինչ մարգարէացաւ վասն ազգին Վետունի և աւերման Հայոց աշխարհիս, և վասն նեռին և նեղութեանցն՝ որ ի նմանէ ընդ ամենայն աշխարհս. և ապա հանգեաւ մարտիրոսական մահուամբ, արտօսր բազում Թողեալ Հօտին իւրոյ, կալեալ զՀայրապետութիւնն ամս երեսուն և չորս[2]: Եւ յաջորդէ զաթոռն Շահակ ոմն, ոչ ի նոյն ազգէ՝ այլ ի զաւակէ Նվիխանոյշ ի Հարքայ ի Մանազկերտոյ, ամս չորիս:

Իսկ բարեպաշտն Ովհաննես՝ իբրև լուաւ զչարիսն զոր գործեաց Պապ, կորոյս զնա ըստ անզգամութեանն. որ Թագաւորեաց ամս եօթն: Եւ կացոյց մեծն Ովհաննես Թագաւոր Հայոց զՎաղարշապատոմն, յազգէն Նրշակունեաց՝ զայր զօրաւոր և ուժեղ: Եւ յետ Շահակայ առնու զկաթուղիկոսութիւնն Ովաւէն եղբայր նորա զամս չորիս: Իսկ Վաղարշապատ խորհեցաւ ապստամբել ի Յովհաննէսէ և ձեռն տալ ի Պարսիկս. և հալածեաց զնա Մանուէլ և Մամիկոն եղբայր նորա՝[3] Մուշեղայ քաջի, սպարապետին Հայոց, զոր սպան Վաղարշապատ

1 Ամօք յառաջ քան զգուսմա- լուսն ժողովոյն վախճանեալ էր Ս. Ներսէս:

2 Վ. 48:

3 Այսպէս յ'ՕՕ:

ներգուեցաւ. երթեալ յաշխարհն Յունաց անդ վաղվաղեցաւ կալեալ զթագաւորութիւնն ամս չորս: Եւ յետ Օաւենայ առնու զկաթողիկոսութիւն Ը. պուրակիս եղբայր նոցա, Շ ահակայ և Օաւենայ, ամս հինգ: Եւ կացուցանէ Ա՛անուէլ յաթոռ թագաւորութեան զերկու որդիսն Պապայ, զԸ.րշակ և զԱ աղարշակ, զոր փեսայացոյց ինքեան. որ թագաւորեցին ամս չորս:

Եւ ապա թագաւորքն Յունաց և Պարսից զաշխարհն Հայոց յերկու բաժանեցին. բաժնին Յունաց տիրեր Ը.րշակ՝ հրամանաւ Ը.րկադեայ և Ո՛նորեայ որդւոց մեծին Թէոդոսի. իսկ արքայն Պարսից Շ ապուհ կացոյց բաժնին իւրոյ թագաւոր՝ զԽոսրով ա՛ն՝ի նոյն ազգէ: Եւ էր մարտ՛ի մէջ Ը.րշակայ և Խոսրովայ. քանզի իշխանքն որ էին ընդ Ը.րշակայ՝ առեալ զգանձս նորա գնացին առ Խոսրով: Իսկ Խոսրով յետ Ա ասպուրակիսի նստուցանէ զսուրբն Ա՛ահակ յաթոռ Հայրապետութեան, զորդի մեծին Ներսէսի: Եւ յաւուրս յայսոսիկ էր Հայրապետ Կոստանդինուպոլսի զարմանալի և պայծառ լոյն եկեղեցւոյ սուրբն Յոհան Ո՛սկեբերան, որ լուսաւորէր զընդհանուր զեկեղեցիս Ք՛րիստոսի վարդապետութեամբ բանին կենաց: Ա՛ա զառաջինն յոմանց արհամարհեալ լինէր վասն ոչ խօսելոյ՛ի բարբառն Յունաց. զի՛ի հօրէ կողմանէ ասորի էր: Ա՛ա յորմէ հետէ մկրտեցաւ՝ գինի ոչ էարբև և ոչ ծխծաղեցաւ, և ոչ երդուաւ, և ոչ երդմնեցոյց զոք, և ոչ նզովեաց զոք. և յորժամ աքսորէին զնա՝ եհար զձեռն յեկեղեցին և ասաց. Ողջ ՚ծնա սուրբ եկեղեցի քնակարան փառաց տեառն, և մի՛ մոռանար զաշխատութիւնս իմ. քանզի՛ի պարգևացն՝ զոր առի Ա՛ստուծոյ՝ յաւելի՛ի գանձս քո գիրք ուղիղ հարիւր, և ձառք երկոտասան հազար[1]: Ա՛ա եկաց հայրապետ հնգետասան ամ, և երեք ամ յաքսորանս, և մեռաւ՛ի Կոմանա՝ յիսուն ամաց: Եւ թագաւորեալ Խոսրով ամս հինգ, հանէ զնա արքայն Պարսից՛ի թագաւորութենէ, և թագաւորեցուցանէ զԱ ռամշապուհ: Իսկ սուրբն Ա՛ահակ պայծառացոյց զեկեղեցին Ք՛րիստոսի առաւել քան զամենեսեան զանա-

1 Ա՛յլպէս գրի և՛ի Յայսմաւուրս:

զան կարգօք առաքինութեան կանոնական օրինադրու-
թեամբք. և՝ի ժամանակս սորա ծագեաց լոյս մեծ յաշ-
խարհս Հայոց աստուածգիտութեան. քանզի երանե-
լին Մեսրոբ եկեալ առ սուրբն Սահակ եթէ հնար ինչ
իցէ ստեղծանել նշանագիր Հայերէն լեզուի, և եգիտ
զնա առաւել ևս այնմ փափաքող, քանզի ցայնժայր ոչ
ունէին գիր Հայք, այլ յոյն և ասորի գրով վարէին և
նշանագրաւ: Եւ ծանուցանեն զկարծիսն Սահակայ
պատուական Թագաւորին, և նա առաց թէ Մինչ ես եա՛ւ
կոչմանս Աբգարու, առաց ինձ ոմն եպիսկոպոս ասորի՝
Դանիէլ անուն, թէ ունիմ ես նշանագիրս Հայերէն լե-
զուի. և ես անփոյթ արարի առժամայն:

Եւ առաքեն զնախարար զոմն՝ Սյրախայ[1] անուն,
առ Դանիէլն խնդրել՛ի նմանէ զնշանագիրսն. և նա
առաքէ՛ի ձեռն Հաբէլի երիցու: Եւ իբրև տեսին՝ ու-
րախ եղեն, և սկսան՛ի Հայ լեզու փոխել զամենայն
գիրս աստուածաշունչս. բայց Հայեցեալ տեսին զի ոչ
էր բաւական զամենայն սիղոբեան ողջ ածել և զշաղ-
կապս և զկապս և զբառս, և սկսան դարձեալ՛ի Հոգ
մտանել վասն այնորիկ. և իբրև Թափեցան յամենայն
հնարից մարդկային, ապաւինեցան յայն որ ամենայն
ինչ հնարաւոր է նմա, աղօթիւք խնդրել՛ի տեառնէ,
յանձն առեալ զպահոց պնդութիւնն և զաղօթս: Սակ
այն որ զկամս երկիւղածաց իւրոց առնէ տէր և աղօթից
նոցա լսէ, ոչ անտես արարեալ զբարի խնդրուածս, ե-
րևեալ Մեսրոպայ Թաթ ձեռին Հզօրին, գրելով՛ի վե-
րայ վիմի, և ծանուցաւ ամենայն Հայոց աշխարհի:
Յարուցեալ ստեղծ զգիրսն: Եւ ժողովեն այնուհետև
մանկունս բազում, և ուսուցանեն զբովանդակ աշ-
խարհս, և բաժանեն զմանկունս մատաղս և քաջուս-
մունս, փափկաձայնս և երկարոգիս, և կարգեն զըպ-
րոցս երկուս[2] ասորերէն և յունարէն: Եւ ուսեալ ման-
կանցն այնոցիկ զամենայն իմաստութիւնս ներքինս և
արտաքինս, եղեն Թարգմանիչք Հնմարտութեան, և
Թարգմանեցին զամենայն գիրս Հին և նոր կտակարա-
նացն, սկսեալ առաջին Մովսէսի բովանդակեցին զա-

[1] Ան՛ն է Վահրիճ ըստ հնոց պատմչաց:

[2] 200 · · էրիտրագիս է և հարգէն ասորերէն:

մենայն։ Սոքա ոչ միայն թարգմանիչք, այլ և վարդապետք և ուսուցիչք և մարգարէք պատմողք ապագայիցն։ Սոքա լցեալք Հոգւով սրբով, խօսողք լեզուաց ազգաց, թարգմանողք և յայտածողք զբանս խրթինս, և խորհրդային խօսից պարզ մեկնիչք։ Սոքա ամուր պարիսպք և սիւնք եկեղեցւոյ, աշտանակ լուսատուք, և ջահք բորբոքեալք ընդհանուր ծաւալելով ընդ ոլորտս տիեզերաց։ Սոքա աստուածաբանք բանին կենաց և արբուցիչք պաքեալ անձանց, զովացուցիչք տապոյ ջերմութեան բանսարկուին և ջեռացուցիչք ցրտոյն՝ի հաւատս։ Սոքա երգեցողք ծիծառունք, տատրակք քաղցրախօսք և ողջախոհք, սրբութեան սիրիչք և աղտեղութեան անարգիչք։ Սոքա մանկանց դաստիարակք, և երիտասարդացն բարւոյ օրինակ, կուսանաց զարդք, ամուսնացեալոց օրէն, ծերոց սփոփիչք, տկարաց մխիթարիչք, զլրելոց կանգնիչք, մեղաւորաց դարձուցիչք, հեղգացելոց խթան յարուցիչք, և ժրացելոց՝ի նոյն յօժարեցուցիչք, ուսման սիրիչք և ատեցողացն յանդիմանիչք։ Որոց վարդապետ և ուսուցիչ սուրբն Սահակ և Մեսրոբ. և գլխաւոր աշակերտացն սուրբն Յովսէփ, Յովհան [1] և Ղևոնդ, Սահակ, և Մովսէս քերթողն, և Մամբրէ վերծանողն՝ նորին եղբայր, Եղնակ և Կորիւն, սուրբն Եղիշէ, Դաւիթ անյաղթ փիլիսոփայ, և Յովհաննէս, տէր Ա.բրահամ, Ա.բգան, Մուշէ, Ա.բգան [2], Խոսրով, Դ ազար, և յետոյ Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոս, և որ զգիրսն յարմարէր գեղեցիկ Հռոմայնոս սամոստացի և այլք բազումք, որոց ոմանք յեպիսկոպոսութեան աստիճանս հասին, և այլք առաջնորդք ժողովրդոցն կարգեալք, և՝ի սոցանէ ոմանք՝ի վերայ թարգմանութեան և գիրս յինքեանց շարադրեցին, որպէս աբանչելին Մովսէս՝ զհայոց պատմութիւնն՝ի խնդրոյ Սահակայ Բագրատունւոյ, և զպատմութիւն սրբուհւոյ Ա.ստուածածնին և զպատկերին նորա՝ի խընդրոյ իշխանացն Ա.ծրունեաց, և զՊետքն՝ի խնդրոյ Թէոդոսի ումեմն [3], և զնեղբօղեան սրբոց Հռիփսիմեայ

1 Յովհանէ Եկեղեցացին է. իսկ որ՝ի տոմարն Յովհաննէսն՝ Թուի Մանդակունին։

2 Երկուց գրի Ա.բգան, Թէրևս մին փոխանակ Աղանայ։

3 Պետքն գիրքն որպէս այժմ ասի, և՝ի վերջաբանին ուղղի առ Թէոդորոս ումն աշակերտ։

Մեանցն և զմի արդավառին, և այլ Հառս և խօսս լման-
տասիրականս։ Եւ Կորնէլիոս զպատմութիւն սրբոյն Պե-
տրոսի և այլ ժամանակաց։ Եւ Եղիշէ զպատմութիւն
սրբոց Իւ արդանանց, և զգիրս կանոնացն, և այլ մեկ-
նութիւնս գրոց, և զջարչարանացն փրկչին. և Իւ ազար՝
զգիրն. և Եզնիկ խօսս յոլովս եթող յօգուտ լս-
ղաց։ Եւ Դաւիթ փիլիսոփայ զգիրն սահմանայ և
զեակաց և զմեկնութիւնն Արիստոտելի և ներածու-
թեանց Պորփիւրի, և այլ հարցմունս և պատասխանիս,
և ներբողեանս սրբոյ խաչին, և զծննդեան տեառն մե-
րոյ Յիսուսի Քրիստոսի։ Նմանպէս և Ստեփ վեր-
ծանող ասաց ներբողեան յօրն արմաւենեայ, ՚ի գա-
լուստն Քրիստոսի Երուսաղէմ յաւանակաւ։ Եւ կե-
տոյ մեծն Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոս բաղում
մեկնութիւնս եթող սուրբ գրոց՝ Յօբայ և աւետարա-
նացն, այլ և Դանիէլի և Եզեկիէլի, և զպատասխա-
նիս Թղթոյն Դերմանոսի պատրիարգին Կոստանդինու-
պօլսի[1]։ Ընդարին և երգս շարականաց քաղցր և գե-
ղիկ եղանակաւ և մեծ խորհրդով, ծննդեանն Քրիս-
տոսի և քառասնօրեայ գալստեան ՚ի տաճարն, մկրտու-
թեանն և եկաւորութեան ՚ի Դեղեանիա և Երուսա-
ղէմ, մեծի շաբաթու չարչարանացն, յարութեանն և
համբարձման և Հոգւոյ գալստեան, խաչի, և եկեղե-
ցւոյ, և այլ տօնից տէրունականաց, և ամենայն սրբոց,
ապաշխարութեան և ամենայն ննջեցելոց. պէսպէս զա-
նազանս և անթիւս, զոր մինչև ցայսօր պաշտի յեկեղե-
ցիս Հայաստանեայց։ Իսկ սուրբ վարդապետն Ներ-
սէս իբրև եկաց զերկիրս Հայոց ուսմամբ և թարգման-
նութեամբ՝ յանձն առնէ զամենայն կաթողիկոսին Սա-
հակայ, և ինքն գնացեալ Երուսաղէմ առնէ և նոցա նը-
շանագիրս, ըստ տուելոյ նմա ընդհացն ՚ի վերուստ։ Եւ
այսպէս զուարճացեալ զաշխարհս ամենայն անպայման
խնդութեամբ Թողեալ նոցա վարդապետս յիւրոց ա-
շակերտաց, և անտի գնաց ՚ի Կիլիս. առնէ և նոցա գիրս,
և Թողեալ և նոցա վարդապետս, դառնայ ինքն ՚ի Հայս,
և գտեալ զմեծն Սահակ Թարգմանութեան պարա-
պեալ։ Իսկ Թագաւորն Կ ռամշապուհ կալաւ զԹագա-
ւորութիւնն ամն քսան և մի. և վաղճանի բարիոք։

1 Ստեփաննոսդ այդ 300 ամաւ կրսեր է քան զԹարգմանիչդ։

5615 – 2014

Նա դարձեալ Թագաւորէ եղբայր նորա Խոսրով ամ
մի. և ապա Արտաշիր, և Արտաշէս Թագաւորէ յետ
նորա[1]: Ընդ այն ժամանակս Թագաւորեաց Յունաց
բարեպաշտն փոքր Թէոդոս, որդի Արկադեայ. և ա
ռաքէ սուրբն Սահակ զՄեսրոպ վարդապետն և զԹոռն
իւր Թզթով առ Թէոդոս կայսր, զի հրաման տացէ
այնոցիկ՝ որ ընդ իշխանութեամբ նորա իցեն, ուսանել
զգիրս հայերէնս, և վերակացուք նոցա ետային Թոյլ
ուսանել զգիրս Հայոցն վասն նախանձու: Իսկ հեզ
Թէոդոս մեղադրեաց զառաջինն, Թէ Ընդէր յասորւոց
և ոչ՝ ի յունաց իմաստասիրաց որ՝ ի մերում քաղա
քին՝ խնդրեիք զգիրս. և պատմեաց Մեսրոպ եթէ կա
տարումն արուեստին՝ ի հնոցէ Հոգւոյն եղև: Յայն
ժամ գոհացեալ զԱստուծոյ բարեպաշտ Թագաւոր
հրամայեաց պատուել զսուրբն Մեսրոպ իբրև զձեռն
րիտ և զիմաստուն վարդապետ: Նա և պատրիարգ
Ատտիկոս և ամենայն ուխտ եկեղեցւոյն՝ հանդերձ Թա
գաւորաւն գրեցին զՄեսրոպ ընդ առաջին վարդապետս
եկեղեցւոյ[2], ընդ Աթանասի և Կիրիղոսեանս, ընդ
Բասեղի և ընդ Յովհաննու Ոսկեբերանի. և զի ար
դեան արար ստրատելատ բարեպաշտն Թէոդոս. գրեցին
և Թուղթս առ մեծն Սահակ՝ տալով նմա զպատիւ վե
հագոյն. այլ և հրամանն ետ յիշխանութեան իւրում ժո
ղովել մանկունս մատաւարժս ուսանել զգիրս, և դար
մանք և ծախք յարքունուստ կարգեաց: Նա հրամանն
և յաշխարհին Հայոց շինել քաղաք՝ ի Կարին գաւա
ռի, և անուանել զնա Թէոդուպոլիս, որ այժմ կոչի
Կարնոյ քաղաք: Նա եկեալ Մեսրոպայ՝ ուսոյց և զկէս
ազգին որ ընդ իշխանութեամբ Թէոդոսի:—Իսկ Թագա
ւորն Հայոց՝ մանուկն Արտաշիր, եր զաղքատագոյծ և գի
ճասէր, որ ոչ միայն՝ ի գիշերի, այլ և՝ ի տունջեան գոր
ծէր զգործս անարժանս, և խրատու սրբոյն Սահակայ
ոչ լսէր. վասն որոյ տաղտկացան նախարարքն, և եկին
առ սուրբն Սահակ, զի նովաւ ամբաստ լինեին Պարսից

1 Արտաշիր և Արտաշէս մի անձն է, որդին Վռամշապհոյ. բայց յառաջ քան զնա Շապուհ արքայորդի Պարսից անուանեցաւ փոխանակ Հայոց Թագաւորի:

2 Վարդան՝ կոչէ Վարդապետս Վարդապետ. հնագոյն պատմիչք և աշակերտք սուրբ վարդապետին չափաւորագոյնս վարին:

ազքային, և ընկենուլ զնա յաթոռոյն։ Իսկ սուրբն Ա-
հակ ոչ աւր յանձն ընկենուլ զգառն գայլոց. և նոքա եր-
թեալ առ ազքայն Պարսից Ա՛ռամ՝ ընկեցին զնա յաթո-
ռոյն, և զսուրբն Ահակ ևս որ ոչ հաւանեցաւ նոցա կա-
մայն։

Յայսմ հետէ բարձաւ թագաւորութիւնն Ա.րշա-
կունեաց յետ Ա.րտաշիրի, որ թագաւորեաց ամս վե-
ց. և տևեաց թագաւորութիւնն Ա.րշակունեաց ՚ի Նայ՝
ամս հինգհարիւր վաթսուն և ութ։ Պատարեաց և
քահանայապետութիւնն յարժանաւոր ցեղէն սրբոյն
Գրիգորի. զի թէպետ եւ[1] եկաց սուրբն Ահակ և
յետ այնորիկ ամս վեշտասան և լուսաւոր վարդա-
պետութեամբն իւրով պայծառացոյց զաշխարհս, սա-
կայն անարժան վերակացուաւք և պարսիկ մարզպա-
նաւ որպէս զի եհմիհրշապուհ փոխանակ Ա.րտաշիրի
թագաւորին, և զտոխասերն Սուրմակ փոխանակ սըր-
բոյն Ահակայ. որ եկաց ամ մի։ Եւ յետ Սուրմա-
կայ Ա՛ղքիշու ամսոյ վաթսար քան զնա, ամս երեք. և
յետ նորա Շ մուէլ ամս հինգ, ևս անպիտան։ Իսկ
սուրբն Ահակ աղօթից և վարդապետութեան պա-
րապեալ. և ապա եկեալ ամենայն նախարարքն Հայոց,
անկանէին առաջի սրբոյն Ահակայ, զմեզանս յանձն
առեալ խնդրէին Թողութիւն ՚ի նմանէ, և աղաչէին
զնա դառնալ և ունել զաթոռ իւր. իսկ նա ոչ հաւա-
ներ։ Իբրև կարի ստիպէին՝ յայնժամ պատմեաց նոցա
զտեսիլն զոր ետես եթէ ՚ի տեառնէ եղև այդ, դարձ-
րել քահանայութեան ՚ի ցեղէն սրբոյն Գրիգորի, և
թագաւորութեան ՚ի տանէն Ա.րշակունեաց. և թէ
մերձ յերևումն նեռին դարձեալ կանգնելոց է Ա.ս-
տուածծ զթագաւորութիւն Հայոց և քահանայապետու-
թիւն։ Ա՛պա թոյլ ետուն նմա կալ ըստ իւրոց կամաց.
և աղքայն Պարսից զվարդան մարզպան արարեալ Հայոց
տայ զաշխարհս ՚ի ձեռս նորա։ Եւ սուրբն Ահակ կա-
լեալ զհայրապետութիւնն ամս յիսուն և մի, և փոխի
խաղաղական մահուամբ ՚ի կարգս հրեշտակաց։ Տուեալ
զաթոռն ցսուրբն Ա՛ետրոս. յոր և նա ՚ի նոյն ամի էլից
զկենցաղս յիշատակ քարի թողեալ ապագայից, ՚ի սկըզ-

[1] OO. ՚ի ինչ եւս։

բան [1] առաջին Յակոբատին Պարսից արքային, որպէսզի Վրաստան Երկրորդի. և առնու զաթոռն սուրբն Յովսէփ աշակերտ նոցա: Իսկ Յակոբատ արքայ բռնադատեր զանձինս քրիստոնեայս ուրանալ զՔրիստոս, և դառնալ յօրէնս Մազդեզանց, որում ոչ հաւանեալ զօրացն Յայոց, դառնան ընդդէմ հրամանին, սպանանեն զմոգս և զմոգպետան: Իսկ Յակոբատ երբեւ լուաւ զայն ամենայն, առաքէ զօրս բազումս պատերազմել ընդ զօրացն Յայոց, որոց գլխաւոր էր սուրբն Վարդան և ընկերք իւր. և Պարսից աւերեալ զաշխարհն խաղացուցանեն 'ի գերութիւն իւրատու ուրացելոյն Վահակայ զմնացեալ նախարարան, և զսուրբն Յովսէփ, զՎահակ և զվեց եղբարս նոցա, և տան 'ի կապանս արքունի: Եւ յետ այնորիկ սպանանեն զսուրբն Յովսէփ և զընկերս նորին, և զնախարարան արգելուն 'ի բանդ, մինչև յաւուրս Պերոզի արքայի, և առաքէ Յովհան Մանդակունի զամն երիտասան. սա բազում կարպատութիւնս եմոյծ յեկեղեցի, կարգեաց զքարոզս աղուհացն և զաղօթս նոցա, զերրորդ ժամին, և զվեցերորդ և զիններորդ ժամին, և զեկեղեցւոյ հիմնարկէքն, և ժամահարի, սկիհ և մաղզմայի, զիրք և կնունք [2], խաչ օրհնէք և պսակ [3]: Զայս ամենայն նորա կարգեալ է. այլ և առաջի Պերոզի արքայի հանդարձակութեամբ խոստովանեցաւ զՔրիստոս և ոչ երկեաւ 'ի սպառնալեաց նորա, որ հրապուրէր 'ի բաց կալ 'ի Քրիստոսէ և 'ի հաղորդութենէ Յունաց, և կատարեալ զամենայն առաքինութեամբ՝ փոխի 'ի Քրիստոս:

1 Այսինքն 'ի սկզբան կամ յաւաջնութեան ամի Թագաւորութեան:

2 յ'ՕՕ· կնունք, կնոտք, կնոտնք:

3 յ'ՕՕ· պսակ:

Եւ յետ Մարկիանոսի Թագաւորեաց Յունաց Լեւոն մեծն, և Պերոզ Պարսից արքայն վիանգնոս[1] մարզպան Հայոց արար ամ քսան։ Յայսոսիկ[2] Մովսէս Խորենացին։ Յնոմին[3] ժամանակի պայծառացեալ յերկրի սքանչելի վարուք միայնաւորութեամբ սուրբ հայրն Գրիգոր Հանդերձ Վ արուխ եղբարբն իւրով, և Գրիգորիսու աշակերտիւ։ Յր յետ Յովհաննու Մանդակունւոյ առնու զկաթուղիկոսութիւնն տէր Բաբկէն, ամս հինգ, յաւուրս Հ Օ Ենոնի կայսեր։ Եւ յայ Հ Օ Ենոնս նզովեաց զԺողովն Քաղկեդոնի[4], և երկոտասան գլուխ նզովից կարգեաց ընդդէմ նոցա։ Հ Օ սմանէ ասեն Թէ յաձախ ուտէր միս, և յաւուր միում յանչափ ուտելոյն քացախեալ յորովայնի նորա կերակուրն, յայնմանէ տաղտկացեալ Հրէից և յերկու շաբաթս բարեկեն դանին ոչ ուտել միս, այլ պանիր։ զոր պանիր–ուտան անուանեն մինչև ցայսօր։ Ասեն Թէ Յուլիանոս եկեալ ի Կոստանդինուպոլիս Հրամայեաց յամենայն կերակուր վաձառոցն խառնել յարէնէ զոհից։ և սուրբն Հ Օ դորս իմացեալ քրիստոնէից։ և նոքա ասացին Թէ մեզ չէ օրէն յայս երկու շաբաթս միս ուտել, այլ միայն պանիր։ Եւ յաւուրս սորա երանելին Գառնիկ եգիտ զնշխարս սրբոյն Գրիգորի ի Մանեայ այրն, և հանեալ ի Մորեան։ Եւ յետ Բաբգենայ առնու զկաթուղիկոսութիւնն տէր Սամուէլ, ամս հինգ։ Յայսոսիկ աւուրս պայծառանայր եկեղեցին սուրբն Սիմէոնի սիւնակեցւոյն Կղեմայնդրիա։ Եւ Տիմոթէոս երէց ուղղի Հաւատով[5] և իմաստասէր, որ զամէն արուեստի գիրսն գրեաց Հաւաքեալ զամենայն բանս աստուածայնոց արանց ընդդէմ աւերման Հերձուածողաց։ Յայսմ Պերոզ արքայն Պարսից կարի անմարդի բարս ունէր, վանս որոց սպանանէ ի Հեփթաղաց։ և Թագաւորէ Վաղարշ եղբայր նորա։ Սա զվահան Մամիկոնեան զորդին Հմայեկայ մարզպան կարգէ։ այս Վահանս պատկեաց զեկեղեցի զանազան իրօք։ այս Վահան զԼանա արգելական արար։ Ի սորա աւուրս էր Ի ազար Փարպեցի։

1 Իմա զՄեծն Վահան Մամիկոնեան։

2 Իմա Յայսոսիկ աւուրս։

3 ՅՕՕ։ Նոյն Թամանակի։

4 Զգուշապոյնս առ Վարդան, 83։

5 Տիմոթէոս Կուզն մականուն և ոչ ուղղապոյն մոլար։

պեցի Հարտասան և պատմագիր։ Եւ յետ Սամուէլի առնու զկանոնակոսութիւն տէր Պուշէ, ամն ութ։ Եւ յետ Ջենանի կայսեր առնու զթագաւորութիւնն Կոստաս, որ և սա ընդ Ջենանի յուղղափառս գրեցաւ (!), զի կամեցաւ ժողովս առնել ընդդէմ...ժողովոյն Քաղկեդոնի, հաստատելոյ ուղղափառութիւն (!) և դեղակուր եղեալ մեռաւ։ Եւ թագաւորէ յետ նորա Յուստինոս այր տգէտ և անաստուած, որ ելից զերկիր արեամբ ուղղափառաց, զի եդ յաշտանակի ըզՔաղկեդոնին, և կոտորեալ հալածեաց զաստղն մի քնութիւն մարմնացելոյ Բանին։ Յետ Ա՛ղարշու Պարսից արքային առնու զթագն Կաւատ, և ապա Ջ՛ամասպ, և ապա Կաւատ։ Եւ յետ Պուշէի առնու զկաթուղիկոսութիւնն տէր Սահակ ամն եօթն. և ապա տէր Քրիստափոր, ամն հինգ. և յետ նորա տէր Ղևոնդ ամն երկու։ Ընդ սմին նուաղեցաւ յաւուրս սորա, և սով սաստիկ եղև։ Եւ ապա տէր Ներսէս, ամն ինն. յաւուրս սորա ելեալ Ընդեղացի աշակերտ Մովսէսի եպիսկոպոսի՛ն Խոզրևանդայ բազմացոյց զդասս Հարցասացս։ Գառնայ և Մամբրէ եղբայրն Մովսէսի՛ն Յայս՝ զորմէ ասեն երկրորդ եղեալ փիլիսոփոս։

Յետ Յուստինոսի առնու զթագաւորութիւնն միւս Յուստինոս քուերորդի նորա։ Սորա էր կին Թէոդորա ուղղափառ, և աղաչէր զայրն իւր հաստատել զուղղափառութիւնն (!). և նա թէպէտ կամէր՝ ոչ իշխեաց յահէ երկաբնակացն, որք սպառնային նմա մահու։ Եւ առ սա եկեալ չարախօսէ հրեայ մի ասաց, Թէ պարտ է զտեառնընդառաջն առնել ընդ Ծննդեանն՝ զոր առնեն Յոյնքն, և ոչ ըստ յայտնութեան որ՛ի վեցն յունվարի, զի մինչև ցայն՝ առաքելական դրութեամբ[1] առնէին ամենայն քրիստոնեայք՛ի փետրվարի չորեքտասան. և կայսրն հաւանեալ բանից անօրինին և առաքէ յԵրուսաղէմ այնպէս առնել։ Ուստ Երուսաղէմացիքն ոչ առին յանձն փոխել զաւանդութիւնս սուրբ հարցն, որ մինչև ցայն օրն պահեալ էին. և հրամայէ կայսրն զօրավարին բռնութեամբ առնել, և Թէ ոք ընդդիմանայ՝ սպանանել. և ամենեքեան՛ի մահ դիմեցին յա-

1 Հին աւանդութեան, բայց ոչ ստուգ առաքելադիր լինել։

պատս Ձնմարտութեան: Իսկ մարդասէրն Աստուած ոչ
եթող ընդ վայր զյուսահատել նոր, այլ ահեղ սքանչե-
լեօք զարհուրեցոյց զանդգնեալսն. զի աչն աստուա-
ծային երևեցաւ ի տուրբ մատրանն, այլ և նշան ահեղ
և հրաշափայլ յերկինս՝ արիւնատեսակ, և զարհու-
րեալ յայնմանէ դադարեցին ի խնդրոյն: Եւ ի գալ
միւսում ամին նոյն խռովութիւնն յուզէր. զի հրամանն
ետ սաստիկ կորուսանել զընդդիմացողսն, և նոքա առ
հասարակ պնդեցան ի մահ քան ի կեանս խղճիւ: Եւ
տեսեալ քարերարին Աստուծոյ զհաւատս մանկանն՝ այց
արար հօտին իւրում. երևեալ ամենասրբուհւոյ Աս-
տուածածնին ի ծիրանի սեանն, ունելով ի գիրկս իւր
զմանուկն Յիսուս, և ջուր բղխեալ ի սիւնէ անտի, և
որք օծանէին ի ջրոյն յայն՝ բժշկէին յիւրեանց ցաւոցն.
և այսպէս դադարեցին յունայն ի խնդրոյն: Եւ ի ժա-
մանակս Յուստինոսի խաւարեցաւ արեգակն ուղիղ-
տասն ամիս. երեք ժամ լոյս տայր օրն, և զայլն ոչ տիւ
և ոչ գիշեր. և պտուղք տարւոյն այնորիկ ոչ հասան,
և եղև ամենայն երկիր իբրև զբազմօրեայ հիւանդ. և
եղև մարդամահ տարաժամ, որ բնաւ ոչ էր լեալ. առա-
ջին օրն հինգ հազար[1], երկրորդ օրն տասն հազար, և եր-
րորդ օրն եօթնևտասան հազար, և չորրորդ օրն ուղիղ-
տասն հազար. և Թուեցին մինչև երեքհարիւր հազար,
որք մեռանէին ի յօրն. ի մէջ ձեռացն բուշտ ելանէր
և առ ժամայն մեռանէր. մտանէր մարդ ի տունն և տե-
սանէր զամենեսեան մեռեալ. և նեխեցաւ քաղաքն, զի
ոչ կարէին Թաղել զմեռեալս, և տարածեցաւ ընդ
ամենայն տիեզերս: Եւ բազում քաղաք անմարդ մը-
նաց. բայց միայն Նման ապրեցան, զի ապաւինեցան ի
գլուխն Յովհաննու Աքրտչի, որ կայր անդ: Նշաւե-
ցան ընդ միմեանս Յուստինոս և Խոսրով արքայն
Պարսից, և ծաղկեր ուխտ քրիստոնէութեան ընդ ամե-
նայն տիեզերս: Իսկ Վահան Մամիկոնեան վաղձանե-
ցաւ բարւոք. յետ նորա եկաց Արդ եղբայր նորա ամ
երիս: Եւ յետ նորա պարսիկք՝ մարզպանք ամ չորս.
և ապա Ժեժ Պնդունի ամ երեսուն և չորս: Իսկ
յետ Ներսէսի առնու զկաթուղիկոսութիւնն տէր Յով-

[1] ՕՕ. ոմն էր լեալ սահմանք նորա. երիտասարդ օրն, և այլն:

հաննէս ամն հնգետասան. յաւուրս սորա մանկամա
սատիկ եղև. սկսեալ յարևմտից և մատան հայոց
նշան սքանչելի եղև, զի հուր բոլոքեալ այրեր զապա
րանս համակարին պարսկի որ վերակացու էր յաշխար
հիս: Իբրև ոչ կարէին շնջուցանել՝ ապաւինէին՝ի խաչն
Քրիստոսի, և աղաչէին զպաշտօնեայն փութալ և տա
նել զխաչն. և իբրև մօտ եղև նշանն փրկական՝ առժա
մայն շնջաւ բոցն, և տեսեալ ամենայնի փառաւորէին
զփրկիչն Քրիստոս, և դողէին զհատատս քրիստո
նէից. որ և հատատաց երանելին Աթոռ և վկայու
թեամբ կատարեցաւ՝ի Քրիստոս: Եւ յետ Յովհան
նիսի առնու զկաթուղիկոսութիւնն տէր Մովսէս. յա
ռաջին ամին սորա՝ տուրքն Մանաձիհր որ անուանեցաւ
Վրիպոր՝ ազգաւ տաճիկ[1], մարտիրոսութեամբ կատա
րեցաւ:

Եւ յերրորդ ամին սորա լցեալ լինի՝ի ծննդենէն
Քրիստոսի ամք հինգ հարիւր յիսուն և երեք, և քո
վանդակեցաւ կանոնք երկերիւրեկին, զոր կարգեաց
իմաստասէրն Ընդրէաս եղբայր Մանդնոսի եպիսկոպո
սի, հրամանաւ Կոստանդիանոսի կայսեր, վասն լըմանց
զատկաց և այլ ծանից. զի իբրև լցաւ երկերիւր ամն,
լուսին զատկին մարտի քսանևհինգ էր. և սկզբանն՝
ապրիլի չորս. և զի ոչ՝ի սկիզբն կարացին գնալ, զի յետ
քսանևհնգին՝ երեքտասան էր ապրիլն, և ինն լըմունք
՝ի մէջ կային, և այնր աղագաւ սկսան շրջոթել տօնք և
ամենայն արհեստք տօնարականք: Ընդ հայրապետն
Յովհաննէս ժողովեաց զիմաստունսն՝ որ էին՝ի ժամա
նակին, յոր էր և Ընթանս՝ի վանայ Մուրբ Կարա
պետին, և կարգեցին Թուականն հայոց՝ որով ուղղեցին
զզատիկն հայոց, և այլովք հանդերձ. բայց ոչ կարա
ցեալ կալ՝ի ձշմարտութեան անսխալ զամն լինն: Ուս
՝ի տասներորդ Թուականին՝ Նաս ոմն անուն ազգ
անդրացի, այր կորովի և իմաստուն, իբրև եհաս
զայնպիսի շրջոթումն՝ որ յամենայն եկեղեցիս, ձայն ար
կեալ հաւաքեաց զամենայն իմաստունսն՝ որ յամենայն
ազգաց. զՍտեփ՝ի Գամրեաց[2], զՊետրոս՝ի Հրեաստա

1 Այլք Ուածիկ ասեն:

2 Տպ. զԳիգիան Աղուանից, զՆերսէս՝ի Յունաց:

նէ, զՅոհան Ա.րաքելոյ, և այլ արս երեսուն և վեց
իւր նմանիս, և այլ բազմութեամբ. և յառաջ վարեալ
զարուեստն Ընդրէասի, հինգ հարիւր երեսուն և եր-
կու այլ, ՚ի նոյն գարձաւ. ապա կարգեցին զանտարա-
կուսելն զօրինական, որ հինգհարիւրեակ անուանի, բա-
զում իմաստ և անախալ գլուխ եդեալ բոլորին զչորս
ապրիլն, զի իբրև աւարտի հինգ հարիւր երեսուն և եր-
կու ամն՝ գարձեալ ՚ի նոյն գառնայ: Եւ սկսան ուղղիլ
տօնք և արուեստք իրողութեան. բայց Իրան ամն ՚ի գրան
Յուստիանոսի (զոր) ոչ կոչեցին ՚ի ժողովն, քամահանս
վարկաւ անձին իւրում: Իբրև տարաւ Լոգս իմաստա-
սէրն զօրինակն առ Թագաւորն, սկսաւ Իրան քննել զգ-
մասունս հնգեակի և վեցեակի, որ ոչ երբեք լեալ էր. զի
հնգեակ և վեցեակ՝ մասունքն են, մինն արեգական և
միւսն լուսնի. այլ նա զհակառակն արար, փոխեաց զա-
պրիլն եօթնևատասն՝ վեշտասան, և գվեցն՝ ՚ի հինգ. այն
վեշտասանն չբերէ ինչ սխալ. այն վեց եղեալ՝ իննսուն և
հինգ՝ կիրակի աճէ մեզ. և այն հինգ՝ նոցա շաբաթ,
ըստ Իրանի գործելեացն. և ըստ Հրեայն առնեն զգա-
տիկն, և ՚ի սուրբ ժողովոյն Ալիկիայ անկանին նզովքն,
որք օրինադրեցին ոչ առնել զատիկ ընդ խաչահանուն-
սըն: Եւ ակ մեք ՚ի միւս կիրակէն տամք և զերծանիմք ՚ի
նզովից. զի Հայք ոչ ընկալան զթիւր օրինակն, որպէս
և ոչ[1] զժողովն Քաղկեդոնի, ընդ իշխանութեամբ
Պարսից գոլով. զի յետ ութ ամի երևեցաւ եղծումն
իրացն:

Եւ յետ Աեժեժայ մարզպանք պարսիկք Հայոց
տիրեն ամս երեսուն և վեց: Ընդ ժամանակս ընդ այն
վաղճանի եպիսկոպոսն Ալբաց, և եկեալ առ տէր Ա՛ով-
սէս, զի տացէ նոցա եպիսկոպոս, և նա ձեռնադրեալ
զոմն փակակալ իւրոյ եկեղեցւոյն Ալիրան անուն՝ տայ
նոցա, հաւատացեալ ՚ի նա՝ եթէ պահեսցէ զսէր և զմի-
աբանութիւն առ աթոռ սրբոյն Լուսաւորչի. զի մինչև
ցայնմայր ՚ի Հայոց առնուին Ալ իրք ձեռնադրութիւն:
Եւ յա Ալիրան յետ վաղճանելոյն Ա՛ովսէսի՝ ՚ի բաց քե-
ցեալ ՚ի դաւանութենէ ուղղափառ հաւատոյ (!) Քրիս-
տոսի, և զՔաղկեդոնի դաւանութիւն խոստովանե-
ալ էր:

[1] Ոչ ամենևին այդպէս ծանեան գլխովր և գուռվիզ:

ցաւ. զի՛ի մանկութենէ խմորեալ էր յաշխարհին Յունաց՝ յաղանդն (!), և՛ի ծածուկ ունէր զչարութիւնն որպէս հուր ընդ յարդիւ թագուցեալ, բայց ոչ իշխէր յայտնել՛ի կենդանութեան Մովսէսի։ Օ երեսուն ամ կալեալ զհայրապետութիւնն տէր Մովսէս՝ վաղձանի, և տայ զտեղապահութիւնն աթոռոյն՛ի Վրթանէս քերթողն։ Իբրև ետես զթերութիւնն Կիւրիոնի Մովսէս Յուրտաւայ[1] եպիսկոպոսն, աղդառնէ Վրթանիսի, զի թերևս կարասցէ օգնել ինչ մոլորեալ մտացն Կիւրոնի. առ որ բազում անգամ գրեաց աղաչանօք՛ի բայց կալ յանհանձար աղանդէն. իսկ ոչ միայն թէ ոչ հաւանեցաւ գրելոյն, այլ և հալածեաց զՄովսէս եպիսկոպոսն։ Իբրև յաջորդեաց յետ Մովսէսի տէր Աբրահամ՛ի կաթուղիկոսութեան աթոռ, նոյնպէս և նա գրեաց երկիցս և երիցս թուղթ յիշեցուցանելով նմա զթիւրութիւնն. իսկ Կիւրոն պատճառէր ոչ այլ ինչ խորհել բայց զոր նոքայն խորհին, և ասէր զՄովսէս զրպարտող նորին։ Իսկ իբրև ասացաւ ժողովք քննութեան լինել և տեսանել վասն այնր, յայտնապէս խոստովանեցաւ Կիւրիոն զգաւանութիւն Վաղկեդոնի։ Յայնժամ իբրև ետես Աբրահամ թէ ոչինչ օգտեցաւ այլ առաւել յանամօթութիւն եկն, յայնժամ գրեաց թուղթ շրջաբերական առ վիճակեալսն իւր, զի մի՛ ամենևին հաղորդեսցին ընդ Կիւրս եկեղեցեաւ կամ ուխտիւ կամ ամուսնութեամբ կամ այլ ինչ հոգևորական իրօք, բայց՛ի վաճառէ իմեքէ որպէս՛ի հեթանոսաց. զի մի՛ մարմնաւոր ծանօթութեամբ՛ի հոգևոր ընտանս ընկղմեսցին. և յայնմհետէ բարձաւ ձեռնադրութիւն Վրաց որ՛ի Հայոց, զի սկսան նոքա ըզՅունօք թևակոխել։ Օայս ամենայն ստուգութեամբ ուսուցանէ քեզ Ուխտանէս եպիսկոպոսն. զի նա զամենայն լիով գրեաց զթուղթն և զպատասխանիսն և զքաջախօսութիւնն Պետրոսի եպիսկոպոսին, որ պատգամաւոր էր տեառն Աբրահամու առ Կիւրիոն. զոր Վրթ վան համարձակութեան նորա՝ Վայլ կոչեցին զնա։

Յետ Յուստինոսի, այր չար և պիղծ որ զբազում

ապան յուղղափառացն, որ և ինքն և պատրիարգն Յո-
հան այսահարեալք մոլեգնէին, և այնպէս սատակեցան[1].
և ապա Թագաւորեաց Տիբեր, և յետնորա Ներուիկ.
զսա ասեն՝ի Հայոց յՕջական գեղջէ, և այլք թէ՝ի
Տարօնոյ. աղքատութեամբ աղագաւ երթեալ՝ի Կոս-
տանդինուպօլիս, և անդ՝ի դիպուածէ իմեքէ բարեբախ-
տիկ եղեալ Թագաւորեաց այսպիսի պատճառաւ. Նո
եղև մեռանել Տիբերի կայսեր, և մեծամեծք ընդ մի-
մեանս հակառակեալք ոչ հնազանդելով միմեանց, և
էր մարտ անհնարին՝ի մէջ նոցա, որպէս թէ՞ յաղ-
թիցէ և Թագաւորեսցէ. և պատրիարգն՝ի մէջ ան-
ցեալ համոզեաց զնոսա արկանել վիճակս, և ում հա-
սանիցէ՝նմա ունել զԹագաւորութիւնն, և այլոցն հնա-
զանդել, և զայս երդմամբ ամենեցուն մուրհակաւ. և
էր վիճակն այսպիսի. Ընդ լուսանալն բանալ զաւազ
դուռն քաղաքին, և զայր որ պատահեսցի անդ, թէ-
պէտ և կարի յանարգացն իցէ, ածել՝ի պալատն ար-
քունի, և իշխանացն նստիլ՝ի միասին, և յոյր[2]՝ի գլու-
խըն դնիցէ զԹագն՝նմա լինել Թագաւոր. հաւանեցան
ամենեքեան և դադարեցին՝ի խռովութենէ. Նո իբրև
եհաս ժամն ժամադրեալ, բացեալ զքաղաքին դուռն,
և տեսեալ զՆերուիկ առ դրան, ցօղուն ինչ առ՝ի վա-
ճառել և ընուլ զպէտս իւր. և յափշտակեալ զնա զօրա-
կանաց տարան՝ի բաղանիս, և լուացեալ զնա զգեցու-
ցին նմա հանդերձս ազնիւս, և տարան զնա յարքու-
նիս: Նա իբրև ասացին նմա վասն որոյ կոչեցաւ, և նա
պահանջեաց՝ի նոցանէ գիրս և երդմունս, զի մի սպան-
ցեն զնա ճնացեալքն՝ի Թագէն, և նոքա երդուան նմա
սաստիկ, զի անհոգ լիցի յայնմանէ. բազմեալ էին ա-
մենեքեան մնոտի յուսով, և իւրաքանչիւր ոք անձին
իւրում ասէր՝ Թէ լիցի. կայր աԹոռն և Թագ՝ի վե-
րայ նորա, և կօչիկքն հուպ առ նմին: Նոց Ներուիկն՝ի
մէջ և առ զԹագն՝ի ձեռն իւր, և սկսաւ շրջել ընդ
բազմեալսն. իբրև եկն առաջինն՝ուրախացաւ նա, բայց
տրտմեցաւ երկրորդն. և իբրև եԹող զնա՝կալաւ տըրտ-
մութիւն զնա, և զընկերս նորա ուրախութիւն, և այս-

1 Ըստ կարծեաց հակառակո-
ղաց իւրեանց:

2 Ա Օ. ի՞ր. բ. գ. ո՞ր:

պէս ըստ կարգի երկիցս և երիցս շրջեցաւնա, տրտմեցոյց զնոսա և ուրախացոյց։ Ընդ նստաւնա՝ի վերայ աԹոռոյն և եդ զԹագն՝ի գլուխ իւր, և տեսեալ ամենեցուն՝ սխրացան[1]։ Այլ զի երդուեալ էին նմա Թէյոր և դիցես գլխին՝ մեք հնազանդիմք նմա, Թոլ ետուն նմա։ Ա՛ատուցեալ պատրիարքն ադոյց զևօշիկս յոտս նորա, և երկիր եպագ. նոյնպէս և ամենայն մեծամեծքն երկրպագին նմա և ասեն. Կեցցէ արքայ Ա՛օրիկ։ Ա՛ա արար ժողով Ռաղկեդոնին վասն գաւանուԹեան. կոչեաց և զվարդապետս Հայոց, և չոգան Ա՛ը. Թանէս և Ա՛րիգոր, և այլ վարդապետք, և ոչ ինչ օգտեցեալ զՅոյնան՝ դարձան նզովեալ։ Ո՛ւ սա ապատանեալ նախարարաց Հայոց՝ փախուցեալք՝ի տէրուԹենէն Պարսից. իսկ սա անմարդի բարս ցուցեալ, ոչ եԹէ ընդարձակեաց նոցա, այլ և զկարգեալ ռոճկին յաւաջին Թագաւորացն արգել՝ի նոցանէ։ Ո՛ւստի զըմանէ ԹԷ առաքեաց առ Հայրն իւր Թողուլ զպանդխտուԹիւնն և դալ վայելել զփառս նորա, և ԹԷ ոչ՝ խրատ առաքել նմա, որով կարասցէ վարել զԹագաւորուԹիւնն. և երԹեալ սպասաւորացն՝ գտին զնա զի դարմանէր զպարտէզն, և ասացին նմա զհրաման Թագաւորին։ Ո՛ւստի պատասխանի ետ և ասէ. Ա՛ագաւորի Հայր ես ոչ վայելեմ. և ինքն սկսաւ զմեծամեծ կաղամբեան՝ որ՝ի պարտիզի անդ՝ արմատախիլ առնել, կտրել զգլուխս և ծածկել ընդ հողով, և զմանուսն փայփայել և յօրինել. և արանց տեսեալ զայն Համարեցան զնա բախած, Թողեալ զնա՝ի բաց գնացին, իսկ զոր ինչ ասէր նա՝ զայն ոչ գիտացին։ Եւ գնայեալ առ Թագաւորն պատմեցին զամենայն, և զյիմարուԹիւնն զոր գործեաց՝ի պարտիզին։ Իսկ Ա՛օրիկ իբրև լուաւ ծիծաղեցաւ, և ոչ ինչ յայտնեաց, և կալեալ զմեծամեծս՝ զոր կարծէր ԹԷ սատան են ԹագաւորուԹեան իւրոյ, եբարձ զամենեսեան, զի մի դաւ ինչ լինիցի, և զփոքունն՝ի տեղիս նոցա կարգեաց. և կոչեցեալ զարան զայնոսիկ զոր առաքեաց առ Հայրն, ասէ ցնոսա. Ա՛յս է խրատ Հօրս իմոյ՝ զոր արար՝ի պարտիզին, և գուք ոչ իմանայիք։ Ահա ասեն զսա Ա՛երփաուս գեղջկա-

1 Բ Օ. փխ. այն։

պատվիրեցաց, զոր յետոյ քաղաք չինեաց զօրավար Տի-
բերի։ Բայց Մօրիկ վասն խստութեան բարուց իւրոց
ազգաւ և որդւովք ողբմատեաւ մահուամբ կոմնչի՝ յիւ-
րոց զօրաց, քանզի յարեան ՚ի վերայ նորա զօրքն իւր՝
որոց առաջնորդեր Փոկաս, որ Թարգմանի Հուր [1], և
սպան զնա, և ինքն Թագաւորեաց ընդ նորա։—Ընդ յետ
Արմզդի Պարսից արքայի՝ Թագաւորէ Խոսրով Ձեռըն-
տուութեամբ Մօրկայ։

Ընդհանօր Սմբատ Բագրատունի բազում մարտս յա-
րուցանէր առաւել քաջութեամբ առ Թշնամին Խոս-
րովայ. վասն որոյ պատուեալ զՍմբատ՝ նմա տայ զմարզ-
պանութիւն Վրկան աշխարհին. և նա երթեալ գտա-
նէ ազգս գերեալս ՚ի Հայոց՝ անդ, որ Սպատատանն կոչի,
մռացեալ զլեզուն. զոր նորոգեալ Սմբատայ, և զՀա-
բէլ զոմն եպիսկոպոս տայ ձեռնադրել կաթողիկոսին
Հայոց, և կացոյց վիճակս յաթոռ արքոյն Դրիգորի ՚ի
տաներորդ ամի տեառն Ընդրահամու, և յերեսներորդ
եօթներորդ Թուականին Հայոց եկին ՚ի Հայս ասորիք
արք քաջաբան, և կամէին սերմանել զաղանդն Նես-
տորի. և նզովեալ հալածեցին։ Բայց ոմանք ընկալան,
և նոքա Թարգմանեցին զնոցա սուտ գիրս [2], զՊորտո-
սակ, զԱիրակոսակ, զՊօղոսի տեսիլն, զԸդամայ ապաշ-
խարութիւնն, զՏիադեկ մանկութիւն տեառն, և զՆ-
բիա և զՆինէն օրհնութեան, և զանթաքչելի մա-
տեանս, և աւետարանի մեկնութիւն զԱնեայ. և որ
հաւատայ նոցա՝ նզովի յուղղափառացն։

Եւ յետ տեառն Ընդրահամու առնու զկաթողիկո-
սութիւնն տէր Յովհաննէս ՚ի Կոգովտէ, ՚ի գեղջէ Բա-
գարանէ, ամս քսան և վեց։ Ումանք ՚ի պատմագրաց
վերկոսեան ՚ի միում աւուր ասեն վաղճանեալ, զԸդր-
համ և զՅովհաննէս, և կէսք ոչ։—Յոկ Խոսրով Պարսից
արքայն իբրև լուաւ զմահն Մօրկայ՝ վրէժխնդիր եղև
Մօրկայ, զի դաշնադիրք էին միմեանց, և բազում գա-
ւառս աւերեաց Յունաց։ Ընդաքէ և զՍտռհան զօրա-
վարն իւր ՚ի Պաղեստինէ, որ երթեալ պաշարեաց զՔ-
սուրբ քաղաքն Երուսաղէմ, ա՛ռ զնա և կոտորեաց զՔ-
բնակիչս նորա։ Դերեաց և զխաչն Քրիստոսի, և տա-

1 Ըստ լատին լեզուի Focus. 2 Որք անծանօթ են առ ՚ի մեզ։

րաւ զնա ՚ի Պարս. և գնաց բազում զօրօք ՚ի վերայ Թագաւորին Հերակլայ և ՚ի նեղ արկ զԹագաւորանիստ քաղաքն՝ Կոստանդինուպոլիս: Իսկ Հերակլ կայսրն ձեռնտուութեամբ Աստուածոյ Աստըծոյ Թագաւորի զբնաց յաշխարհն Պարսից, սպան զԱսորով. դարձոյց և զսուրբ խաչն և առաքեաց Երուսաղէմ: Այս Խոսրով քանս ծաղը արարին բնակիչք Տփխեաց, և առեալ զդուռն ի նկարեցին զպատկերն Աստուածայ ՚ի վերայ նորա՝ կայր, որպէս թէ աչք նոցա նեղ են և փոքր. եղեալ զդուռն ՚ի վերայ պարսպին հանդէպ նորա, սկսան նետաձիգ առնել. իսկ նորա տեսեալ զայն՝ բարկացաւ յոյժ, բայց զի ժամանակն ձմեռնային էր, ոչինչ կարաց հատուցանել. բայց ՚ի գալ գարնան եկեալ պաշարեաց զնա. և առեալ զքաղաքն հրամայեաց կոտորել զարս և զկանայս նաև զմանկտի, և առեալ զուսար ՚ի քաղաքն և զինչն, գնաց յաշխարհն իւր: Իսկ յետ սպանման մարզպանացն Ներ–Խոզենայ, Ներ–Վ ընասպ Սուհենայ, Ներ–Վ ղոմն Միհրանայ[1], և այլ տաճկատանաց, Դաւիթ Սահառունի մարզպան լեալ ամս երեսուն, յաւուրս սորա ՚ի վաթսուն և երկու Թուականին՝ եղև շինուած կաթուղիկէին Արեվոյ:

Յետ տէր Յովհաննիսի՝ առնու զկաթողիկոսութիւնն տէր Կոմիտաս ամս ութ: Սա շինեաց զսուրբ տիկնոջն Հռիփսիմեայ զվկայարանն պայծառ և հրաշալի, զի խրթին էր առաջին շինուածն. գտանէ ՚ի նմա զնշխարս սրբոց, կնքեալ մատանեաւ սրբոյն Գրիգորի և սրբոյն Սահակայ, և ոչ իշխեաց բանալ, այլ իւրով մատանեաւ կնքեալ ամփոփէ անդէն, արարեալ զերգս շարականաց հայերէն այբբենիւք, որոյ սկիզբն է այս. Ինչինչ նուիրեալդ սերոյն Հրեշտակաց: — Յետ Խոսրովու Պարսից արքայի՝ առնու զԹագաւորութիւնն Կաւատ. սա արձակեաց ՚ի գերութենէ զԱյրոյ կաթուղիկոսն Աղուանից, զոր ՚ի բանդի եղեալ էր հայր նորա. և յետ Կաւատայ Զրտաշիր, և ապա Խոռեամ հրամանաւ Հերակլի, և ապա Խոսրով, և յետ նորա Բորն և Օ՚ար-

1 Ոչ միայն յայլոց ազգաց ի բաց ի մերոց երեք ձիւր, այլ Բուրզան ևս յաւուրս սորա ամաւ յառաջ քան զձիւր Վչնասպ Սուրէն, և Միհրան ձիւր Վզեն ևս տասն ամաւ յետոյ քան զսա:

մանդուխտ[1]. ոչքա ամենեքեան սակաւակեացք. և ապա Յակկերտ:

Իսկ յետ տեառն Կոմիտասայ առնու զկաթուղիկոսութիւնն տէր Ղրիատաիոր, ամս երկու. և ապա նորա՝ ամն տասն: Իսկ Հերակլ կայսեր եկեալ՚ի Կարնոյ քաղաքն՝ ժողով արարեալ կոչէ և զնորա կաթուղիկոս Հայոց. իսկ նա ոչ տարաւ ընդ իւր զարս իմաստուն, մանաւանդ զՅովհաննէս վարդապետն Մայրավանեցի, որ յոյժ տեղեակ էր աստուածային գրոց. երթեալ հանի աղանդոյն (!) Քաղկեդոնի. և տայ նմա պարգևս կայսրն զերիր մանԿողբայ և զաղահանն[2] բովանդակ. և եկեալ՚ի Հայս փոխեաց զամենայն ուղղափառ կարգաւորութիւնս եկեղեցւոյ և զընթերցուածս Յակոբայ և Ակուրղի. փոխանակ այնորիկ զԱրտեմոնին եդեալ, զոր յանդիմանեաց տուրբ վարդապետն Յոհան, եթէ Ընդդէմ տգիտաբար հաւանեալ եղեր և լուծեր զբարիոք կարգաւորութիւնս՝ որ՚ի սրբոյն Գրիգորէ մինչև ցայսօր պահեալ էր յազգիս Հայոց: Իսկ նորա փոխանակ զլոլանալոյ հալածեաց զտուրբն անարգանօք Մայրագոմեցի կոչեալ զնա: Իսկ մի ոմն յաշակերտացն Յոհաննու՝ Արգիս անուն՝ հերձուածս յարոյց. և նորա համբաւեաց թէ Յոհաննու է հերձուածս, և զիրս շարագրեաց, և ընդ այլ հերձուածողաց բանս եդեալ, զբանս աշակերտի նորա Յոհաննու վերագրելով. զոր մի՛ ոք իշխեցի բամբասել զտուրբն: Եւ երթեալ Յովհաննու ընտրեաց իւր տեղի լուծանելոյ Գետաբակս Ներոյ, և անդ դադարեալ՝ հանապազ ընդ Ստուծոյ խօսելով, եցոյց Ստուած[3] մեծամեծ սքանչելիս՝ վկայ լինել սրբութեան նորա. զի էր նորա էշ մի՝ որ սպասաւորէր զպէտս նոցա, պատահեաց նմա արջ մի և եկեր զնա. և իբրև առացին Յոհաննու՝ երթեալ ասէ ցարջն. Որովհետև սպաներ զսպասաւորն մեր, արդ փոխանակ նորա դու սպասաւորեա մեզ: Եւ երթեալ արջուն սպասաւորէր ամենայն հնազանդութեամբ՚ի բեռնակրութիւնս և յամենայն ինչ, ամն բազումս: Եւ յետ ժամ-

1 Վ. 62:
2 ՕՕ. պաղանդան:
3 Թերևս վայելուչք էին Մայրագոմեցւոյդ սպասաւորութիւնն կամ ընկերութիւնն իշոյ և արջոյ, բայց յոյժ անվայել հրաշիցդ կարծիս և պատճառ:

մանակաց պատահեալ որսորդաց սպանին զարջն, կար-
ծելով զնա վայրենի. և իբրև տեսին եղբարք վանից՝
ընկեցին զնա ի խորափիտ մի, և մինչև ցայսօր բնակիչք
վայրացն երթան և առնուն հող ի տեղւոջէն յորում
թաղեցաւ արջն, և լինի դեղ ամենայն ցաւոց անաս-
նոց, աղօթիւքն Յովհաննու. նոյնպէս և գերեզմանն արջ-
ջոյն դեղ է ամենայն ցաւոց ոչք հատանող ապաւինին
յաղօթս սրբոյն:

Յետ Դաւթի Ասհատունեաց լինի մարզպան Հայոց
Ներսէհ Աշտունի, ամս քսան և հինգ. և յետ Հե-
րակլի կայսեր Թագաւորէ որդի նորա Կոստանդին: Ասէ
իբրև լցաւ ի ծննդենէն Քրիստոսի ամք վեց հարիւր
և ութևտասան, և Հայոց Թուականին վաթսուն և
եօթն, յայտնեցաւ ամն.... մարգարէ հեթանոսաց,
աղանդեալ ի Կերինթոսէ և յարիանոսաց, Մահմէտ
անուն, իսմայելացի ազգաւ, յորդւոցն Հագարու. սա
մինչդեռ վաճառականութեան աղագաւ երթայր Ա-
գիպտոս, հանդիպեցաւ միայնակեցի մի՝ որում ա-
նուն էր Սարգիս Բխիրա, արիանոս աղանդով, յանա-
պատին Սինեայ: Սա ուսոյց Մահմետի զ.... աստուա-
ծաճանաչութիւն, գովեաց նմա զհին օրէնս, զտուեալն
ի Մովսէսէ, և ասաց. Թէ լուիցես բանից իմոց՝ լինիս
առաջնորդ և օրէնսդիր ի վերայ ազգին քո. և գնա-
ցեալ Մահմէտ զձանապարհս իւր, յանկարծակի ե-
մուտ ի նա ոգի...., և անկեալ փրփրեցաւ, և ընկե-
ցոյց նորա տեսեալ զայն՝ կացին առ նմա մինչև սակաւ
մի ուշաբերեցաւ, և ապա յարուցին զնա. հարցեալ ըղ-
պատճառս այնպիսւոյ....., ասէր ի հրեշտա-
կէ սրբոյ լինել զայն, և յղել զնա պատգամաւոր յազգն
իւր: Եւ երթեալ ի քաղաքն իւր սկսաւ քարոզել զոր
ուսոյց նմա սուտ քրիստոնեայն. էին նմա հօրեղբարք
գլխաւորք, նոքա հալածեցին զնա սպառնացեալ նմա մա-
հուամբ, եթէ այլ այնպիսի ինչ բան լսիցեն ի նմանէ.
և նա երթեալ՝ ի տան իւր նստէր տրտում. և մտեալ
Կնի՝ որ էր նորա հօրեղբօր որդի և փեսայ, և հարցեալ
զպատճառս տրտմութեան, և նա ասաց. Ման զի զ-
տուած քարոզեցի նոցա, սպառնացան մահու ինձ. և
ասէ Կնի. Ոչ երթիցուք և դարձեալ քարոզեսցուք,
և թէ ընդդէմ դառնան մեզ՝ սպանցուք զնոսա սրով.

՚ի այր ջրաւոր էր Ա՛լի, և ամք ջրաւորք ընդ նմա ։ Եւ
իբրև սկսան քարոզել եղև խռովութիւն յոյժ և պա-
տերազմ, և պարտեցաւ կողմն Ա՛ահմետի, և փախըս-
տեայ գնացին ՚ի փոքր Ա՛ադիամ [1], ուր էին ժողովեալ
իւրեանք երկոտասան հազար, զոր հալածեալ էր Կոս-
տանդին կայսեր. և առեալ զնոսա Ա՛ահմետայ՝ գայ ՚ի
վերայ նոցա՝ որք հալածեցին զնա, և կոտորէ զնոսա ։
Իբրև տեսին իւրեանք զյաջողուած գործոցն, կացուցին
զնա իւրեանց առաջնորդ. յարեցան ՚ի նոսա և այլ Ա՛ա-
գիանացիք, և եղեն բանակ մեծ. չոգան ՚ի վերայ Պա-
ղեստինի, հարին զզօրս Հռոմոց՝ որք յափշտակեցին
զինչս վաճառականաց նոցա ։ Իբրև տեսին զյաղթու-
թիւնն՝ չոգան ՚ի վերայ տէրութեան Պարսից, և սպա-
նին զՅազկերտ Թագաւորն, և դադարեաց Պարսից
Թագաւորութիւնն ։ — Ո՛յսու ժամանակաւ խաւարե-
ցաւ կէս արեգակն, յարեգ աշնան ամին, մինչև ՚ի քա-
ղց ամիան ։ — Ա՛պա արձակեցին զզօրս յերիս կողմանս,
մի ՚ի Հռոմ՝ Յազ [2] անուն, և խրատատու Յովել ա-
նուն, որք կոտորեցին ՚ի Հռոմոյ եօթանասուն հա-
զար. և ՚ի Պարսից կողմն արձակեցին զ( )Թմանն ամի-
րայ և զԱ՛աւիւ զօրավար. նոքա հարին զԱ՛իհրդատ [3]
քան հազարաւ, և զԱ՛ուշեղ սպարապետն Հայոց, և
տիրեցին բոլոր աշխարհին Հայոց, Պարսից և Յունաց,
Եգիպտացւոց, Ա՛արաբ և Պարթևաց. և սկսան շրջել
զՀաւատս նոցա, և նոքա ոչ հաւանեցան ։

Իսկ Ա՛ադիանացիք և հաւանեալք նոցա՝ խնդրեցին
օրէնս ՚ի Ա՛ահմետէ, և նա եւ նոցա օրէնս . . . . . ։
Ա՛ա եղև օրէնսդիր պատգամաբեր ամն եօթն . . . . [4] ։
Եւ կոտորեցին զԱ՛զնուն իս, զԱ՛զիովիտ և զՏարօն. և
Ա՛ահմետ այս արգել զսուրն, և բանիւ խրատու նորա
զմեծ մասն տիեզերաց հնազանդեցուցին. և անմոռաց
երդմամբ կնքեաց մեւրհակ Հայոց աշխարհին՝ համար-
ձակութեամբ ունել զքրիստոնէութիւն, և վաճառեաց
նոցա զՀաւատս նոցա յամենայն տանէ առեալ չորս

1 Ջմէսինէ ասէ ։

2 Որ ե Եսաս կամ Իշաս Իսն-
ղանէմ, և կամ Եզիտ որդի Է-
պու Սոֆիանայ ։

3 Թուէ պարսիկ կուսականն ՚ի
Ռագաւ ։

4 Ամենայն ՕՕ· օրպէս և ապա-
գին Մոսկուայ Թուին պակասել
յայսմ տեղւոջ ։

պրամ, և երեք մոմ խորբալ՝ որ է ցորեան, և ձիատ-
պրակ մի, և պարան մի մալէ, և ձեռնարար մի: Ասկ՛ի
քահանայից և յազատաց և՛ ի հեծելոց ոչ հրամայեաց
առնուլ պհարկն. և՛ ի տերեն աշխարհաց կոչեցան Ս-
միրմանիք: Եւ յետ քան ամին Ա՛ահմետայ՝ կա-
լան զիշխանութիւնն Իսմայէլի Ա՛պու-Պաքր, ( )թ ման,
և Ա՛մր, ամս երեսուն և ութ:

Յետ նորին առնու զկանթուղխութիւնն տէր՝ նե-
ախս ամն քսան: Այս չինեաց զվկայարան սրբոյն Սարգ-
սի՝ որ՛ի Դաւին, ՛ի կոտորելն Իսմայէլի զքաղաքն Դը-
ւին, երկոտասան հազար, և արեամբ կոտորելոյն ծած-
կեցաւ սուրբ սեղանն և աւազանն, և զայլն գերեցին
աւելի քան զերեսուն և հինգ հազար. և զոսկերան
սպանելոցն ամփոփեաց սուրբ Հայրապետն՛ի նոյն վը-
կայարանի. և զվիրաւոն սրբոյն Գրիգորի չինեաց. և
չինեաց զսուրբն Գրիգոր զարմացուցչէն տեառղաց, որ
յետոյ աւերեցաւ՛ի Տաճկացն: Ա՛ւ սա եկեալ Ա՛սորւոց
ուղղափառաց՝ խնդրէին՛ի սմանէ եպիսկոպոս. և նա
պահանջեաց՛ի նոցանէ գրով խոստովանութիւն հա-
ւատոյ՝ որ՛ի Հայր և Որդի և սուրբ Հոգին. ՛ի Հայր՝
որոյ հայրութիւնն անհասանելի է, և Որդի՝ որոյ ծնե-
լութիւնն անքաժանելի է, և՛ի սուրբ Հոգին՝ որ՛ի
Հօրէ ելանէ և ընդ Հօր և ընդ Որդւոյ երկրպագի և
փառաւորի. զոր և կցորդ արարեալ մինչև ցայսօր պաշ-
տի յեկեղեցիս Հայոց՝ յաւուր Հրապարակի յայտնու-
թեան տեառն. և ապա ձեռնադրեցին զԱ՛ղիայ ե-
պիսկոպոսն: Դարձեալ սմա աշխարհաժողով քաղմութիւ
՛ի տօնի Ա՛ղուարդավառի լինել՛ի Դադուան. և քաղմացեալ
էր երջ շարականաց յեկեղեցիս Հայոց, մինչև ոչ գի-
տել միոյ զաւառի զերգս միւսոյն. և ասաց մի զան
շարական՛ի Ա՛ղուարդավառի հարցն, և միւս զան ոչ կա-
րաց փոխել զնա, և փոխեցին քաղում շարականս, և
զայն ևս ոչ գիտէին: Ա՛պա Հայրապետն Ներսէս հա-
ւանութեամբ ժողովոյն ընտրեաց[2] զպիտանին և զօր-
տակարն, զի յամենայն եկեղեցիս ամենայն օր մի պաշ-
տօն լեցի ըստ աւուրն խորհրդոյ. և ընտրեցին զարս ի-
մաստունս զի շրջեսցին ընդ ամենայն աշխարհս Հայոց,

1 Ձեռք յ'ՕՕ. մի զան: 2 ՕՕ. ընտրեցին զհայրապետն:

և զնոյն կարգաւորութիւն հաստատեցեն, որ է մինչև
ցայսօր:

Յետ Յովհաննու եկաց մարզպան Հայոց՝ Համազասպ, ամս եօթն. և յետ Ներսէսի՝ առնու զկաթողիկոսութիւնն տէր Ներսէս, ամս վեց: Սա կոչեաց առ ինքն զմեծ վարդապետն Ներսէհ՚ի Շիրակ գաւառէ, այր բանիբուն և հանճարեղ, գիտող յոյժ առաքինական տօմարական արուեստից. զի կարգեսցեն անշարժ տօմար Հայոց, ոտպէս և այլոց ազգաց, զոր արարեալ մեծաւ ջանիւ, և մինչ կամէին ժողով հաստատել՝ վաղձանի տուրքն Ներսէսի. անփոյթ եղեալ իրն զկնի եկելոց, այլ առաջինն կարգաւ վարէին: Ի հինգերորդ ամին Ներսէսեայ եղև շինուած կաթուղիկէին Հայոց Երուժ, զոր շինեաց Գրիգոր պատրիկն, յորում մկրտի նահատակն Քրիստոսի Գաւիթ ազգաւ պարսիկ, որ յառաջն Սուրհան կոչէր, և վանն վկայութեանն Քրիստոսի կախեցաւ զփայտէ՚ի Գաւին: Յետ հանգերձեալ մարզպան Հայոց Գրիգոր Մամիկոնեան ամս տասն. զոր սպանին Խազիւք: Ընդ Ներսեհ զկրակացի եկաց իշխան ամս երիս: Օգնի Ներսէսեայ եկաց կաթուղիկոս տէր Իսրայէլ, ամս վեց. և ապա տէր Սահակ, ամս քսան և վեց: Սա չորաւ դեսպանութեան աղաչաւ առ Մահմետ զօրավարն Իսմայէլի, որ գայր՚ի կոտորել զազգս Հայոց վասն ապստամբութեան՚ի Տաճկաց, և հասեալ՚ի Խառան հիւանդացաւ յոյժ, որ և մեռաւ խակ. և դեռ չև ևս էր եկեալ Մահմետ՚ի Խառան, գրեաց գիր պաղատանաց եթէ Նկի ես ընդ առաջ քո աղաչել զքեզ վասն ապգին իմոյ, և ոչ ժամանեցի տեսութեան քո. որ ամենեցուն շտեմարանապետն է՝ կոչեաց զնա: Ընդ երդումն տամ քեզ յուխտադրութիւնն Աստուծոյ՝ որ առ Ընդրահամ, և առ Իսմայէլ հայրն ձեր, զի մի՛ ինչ չար ապրեսցես ազգին իմոյ, և հարկեսցեն ձեզ. եթէ լուիցես աղաչանաց իմոց՝ եկեսցեն՚ի վերայ քո օրհնութիւնք իմ. խակ եթէ ոչ լուիցես՝ անէծք ժամանեսցեն քեզ, և դարձուսցէ Աստուած զսիրտ զօրացդ քոց՝ ոչ առնել զկամ քո. յայս երկուսցս զմինն ընկալ: Եւ իբրև եկն Մահմետ՚ի Խառան՝ ասացին նմա զամենայն և էտուն նմա զթուղթն. և իբրև ընթերցաւ, եհարց թէ ո՞ր իցէ

գերեզման նորա, և ցուցին նմա զտեղին, զի առ ժամ
ման էր վաղձանեալ. և երթեալ վաղվաղակի ըստ դէ
նին իւրեանց՝ ողջոյն ետ մեռելոյն իբրև կենդանւոյ. և
ասէն եթէ մեռեալ մարմինն պատասխանի ետ և ըն
կալաւ զողջոյնն իբրև զկենդանի. և ասէ Ա՛ահմէտ.
զրոյ քումմէ ծանեայ զքեզ, ով այրդ Ա՛ստուծոյ. արդ
արարից և կատարեցից զամենայն կամս քո: Եւ վաղ
վաղակի եղեալ զերթնամուխսն, և ոտիկանս առաքեաց
Հայոց, հարկ եղեալ՝ի վերայ նոցա. և ինքն դարձաւ
յաշխարհն իւր:

Եւ յետ Սահակայ առնու զկաթուղիկոսութիւնն
տէր Եղիա: Իսկ յետ Հերակլայ առնու զթագն որդի
նորա Կոստանդին: Ի սորա աւուրս եղև յարձակումն
Իսմայելի ընդ ամենայն աշխարհս: Եւ յետ նորա որ
դին իւր Համանուն հօրն: Իսկ զինչհանութիւնն Իս
մայելի յետ Ա՛ստու–Պաքրայ, Ո՛թմանայ և Ո՛մարայ
առնու Մաւիէ: Իսկ զմարզպանութիւնն Հայոց յետ
Ներսեհի առնու Ա՛շոտ ամս երիս, և սպանաւ՝ի Տաճ
կաց. և յետ նորա Ներսեհ Կամսարական ամս երիս
և յետնորա Սմբատ Բագրատունի Խուրասեան[1] ամ
քսան: Ա՛ս պատերազմեցաւ ընդ զօրս այլազգեաց՝ի
Ա արդանակերտն ասանի, և յաղթեաց քաջութեամբ
՝ի Նադրևանդ զաւառի: Յերեքտասան ամի սորա Մահ
մէտ զծոռն Ո՛ղամայ արձակեաց, և առ զԱևան. և՝ի
վերջոյ ամին սորա կաամ[2] ամիրայ զինչհանն Ա՛ռա
պուրականի կոտորեաց: Եւ յետ Կոստանդի թագա
ւորեաց Յուստինոս՝ի վերայ սորա յարեան նախա
րարք իւր և հատին զքինթս նորա, և փախեաւ՝ի Կա
զիրս. և առեալ անտի իւր կին և զօրս բազումս, և գայ
դարձեալ թագաւորէ: Եւ յետ նորա առնու զթագն
Լևոն, և յետ նորա Ա՛փխիմերոս, և յետ նորա Յուս
տինոս, և յետնորա Լևոն: Եւ զինչհանութիւնն Իս
մայելի՝ յետ Մաւեայ առնու Ա՛զիտ, և յետոյ Ա՛բուան
և յետ նորա Ա՛բդելմելիք. սա է[3] որ այրեաց զինչհանն
Հայոց՝ի Նախջուանի եկեղեցւոջ. և ապա որդի նորա
Ա՛լիթ. և ապա Մուհէման. սա զԱրբանատ էառ, և

1 ՕՕ. Բէ–էքպան:
2 ՕՕ. Կայ համ կամ:
3 Յաւուրս սորա հրամանա
Մահմէտի ոտիկանն եղև այրուժի

հրամայեաց քակել զպարիսպն. և մինչդեռ քակէին գտին քար մի՝ յորում գրեալ էր. Ես Մ՝անկոն[1] կայսր շինեցի զքաղաքս զայս յիմոյ գանձուց. ՚ի վերջին ա֊ւուրս քակեացն սա յորդւոցն Իսմայէլի, և յիւրոց գան֊ձուց շինեցին։ Եւ իբրև տեսին զքարն դադարեցին, և շինելոյ սկիզբն արարին։ Եւ զկնի Մուլեմանայ առնու զիշխանութիւնն Ջ֊մառ. սա գրեաց առ Մ֊ւան կայսր տեղեկանալ վասն քրիստոնէութեան և նոցին ուսմանց. և կայսրն գրէ պատասխանի ի իմաստութեամբ, կարի ձալելով զօրէնս նոցա. և իբրև կարդաց Ջ֊մառ՝ ամա֊չեաց զամօթն մեծ, և սկսաւ զգարշելիսն ՚ի բաց հա֊նել յօրինաց իւրեանց. Թէպէտ ոչ համարձակեցաւ եղծանել զամենայն, սակայն բազում ինչ ուղղեաց յանկարգից, և այնուհետև բարեմտութեամբ կայր առ ամենայն քրիստոնեայս, և առաւել առ ազգս Հայ֊ոց. և հրամայեաց գերելոցն դարձ առնել յաշխարհն իւրեանց։ Յորում ժամանակի նահատակեցաւ Ս֊ա֊հան Պողեան տէրն ՚ի Շ֊ամ Հէշմայ[2]. քանզի յետ Ջ֊մառայ առ զիշխանութիւնն Սղիտ, և ապա Շ֊ամ, և ապա Ս֊ղթ, և ապա յետ նորա Մրվան։

Սակ զկնի տէր Սղիայն առնու զաթոռն տէր Յոհան֊նէս Ջ֊ննեցին. սա էր իմաստասէր և տուրբ և վայե֊լուչ հասակաւ մարմնոյն, և հոգւովն եւս առաւել գե֊ղեցիկ։ Ջ֊սա կոչեաց Հէշմ ՚ի դուռն իւր, և վասն վայելչութեան երեսաց նորա մեծապէս պատուեաց զնա. քանզի խարտեաշ ոսկի և արկեալ զմօրուքն իւր՝ եմուտ առ նա. և տեսեալ Հէշմայ զարմացաւ ընդ գե֊ղեցկութիւնն, և ասէ ցնա հեզութեամբ. Ս֊ան Մրիս֊տոսին ձերոյ ասեն թէ կարի հեզ էր և խոնարհ, և զաղքատութիւնն առաւել սիրէր. զայս յայտ առնեն և կարգք քրիստոնէիցն. զի որ նոցա առաջնորդք են՝ զաղքատութիւն և զդձնութիւն առաւել մեծարեն քան զմեծութիւն և զփարթամութիւն. իսկ դու ընդէր այդպէս զարդարեալ ես։ Ո՞ւր ցնա տուրբն. Պոդու քան զծառայն քո աւելի ինչ ոչ ունիս, բայց միայն զԹագն և զնանդերձդ թագաւորական. վասն այդորիկ երկնչին ՚ի

1 Ինագոյն պատմիչք Մ֊ուհ֊մետ ասեն. զի և չհանաչի ուրեք Մանկան կայսր. Թէպէտ և Մար֊կեան ուսանու իսկ գործդ անատոյգ։

2 Հէշամ ամիրապետ, զորոյ ա֊նուն երկայն պրկ։

քէն և պատուէն զքեզ։ Առաջին հարքն մեր նշանա-
գործք էին և աքանչելի վարուք, վասն այդորիկ երկըն-
չէին հնազանդեալքն և կատարէին զհրամանս նոցա դո-
ղութեամբ. իսկ մեք այսպիսիք ոչ եմք. վասն այնորիկ
մեք զարդարիմք ՚ի հանդերձս և ՚ի ձև, զի մի արհա-
մարհեսցին հրամանք մեր։ Եւ մերկացուցեալ զկուրծս
իւր՝ եցոյց նմա զմազեղէնն զոր զգեցեալ էր ՚ի ներքոյ
հանդերձին երևելոյ, և ասէ. Այս է իմ հանդերձս։
Եւ զարմացաւ արքայն, և գովեաց զհաւատս քրիստո-
նէից։ Եւ ասէ ցսուրբն. Խնդրեա զինչ և կամիս, զի
արարից քեզ։ Ասէ հայրապետն. Երիս իրս խնդրեմ
՚ի քէն, որ քեզ դիւրին է տալ. առաջինն այս, ՚ի քրիս-
տոնէից զոք մի բռնադատեսցես ծողուլ զհաւատս իւր,
այլ յիւրաքանչիւր ծողցես զկամն։ Եւ երկրորդ, զա-
զատութիւնս եկեղեցւոյ ընդ հարկաւ մի դնիցես, և մի
ինչ առնուցուս յերիցանց և ՚ի սարկաւագաց։ Եւ եր-
րորդ ժուր և իցեն քրիստոնեայք համարձակութեամբ
պաշտեսցեն զկրօնս իւրեանց. զայս՝ գրով տուր մեզ,
և ամենայն ազգ իմ ծառայեսցեն քեզ։ Եւ վաղվա-
ղակի հրամայեաց գրել գիր ըստ խնդրոյ նորա, և կըն-
քեաց մատանեաւ իւրով, և ետ նմա պարգևս բազումս,
և գումարեաց զօրս բազումս ընդ նմա և առաքեաց մե-
ծաւ պատուով յաշխարհս Հայոց։ Եւ նորա եկեալ
հալածեաց զամենայն Յոյնս որք էին յաշխարհիս Հայ-
ոց, եթէ վերակացուք և թէ զինուորք. և նոցա փա-
խուցեալ այնքան շտապով, մինչ զի զգանձս և ան-
գամ ոչ ժամանեն տանել ընդ իւրեանս. այլ աստէն
յաշխարհիս թաղեալք, և զհանգամանս տեղւոյն ընդ
իւրեանս տարեալ, և զաշխարհս Հայոց ընդ իշխանու-
թեամբ Համայելի նուաճեալ։ Ինքն ժողով առնէ [1] ՚ի
Մանազկերտ. կոչէ և զՔաղաս պատրիարգն Աղո-
ւոյ, և նա առաքէ վեց եպիսկոպոս. և նզովէ զՅու-
լիանէսն և զապականացու աստղն՝ ՚ի Քրիստոս, և ըզ-
Նարեշապուհ և զԱբբիւր՝ բանսարկուս Հայոց և Աղ-
ուանից. և կանոնական օրինադրութեամբ պայծառա-
ցոյց զեկեղեցի, ՚ի բաց ընկեցեալ զդաւանութիւնն

1 Զայդոսիկ ոչ առնէ Խոստոսաէրն, այլ յանուն նորա յօդեն ատեանք Ցունաց։ Տ. և Վ. 73։

Վաղկեդոնի, որ յաւուրցն Հերակլի կայսեր և Նչլի կաթողիկոսի ուներ անկարգութիւն(!) աշխարհս Հայոց. կարգեալ զընծերեցուածս սրբոյն Կիւրղի, և զամենայն ծանս որպէս կարգեալ էր սրբոյն Դիոդորի. և ծանեցին ի քանևհինգ դեկտեմբեր աճոյ Դաւթի մարգարէին և Յակոբայ առաքելոյն, զոր այլազգիք ծնրդեան ծանեն. և երգեաց շարական և զհարսն Աեղաք ամենայնի, որ մինչև ցայսօր պաշտի յեկեղեցիս Հայոց[1], սկսեալ ի Տարիւր յիսուն և հինգ Թուականէն մինչև ի վեց Տարիւր ինսաուն, որ այժմ մեր աւուրս է. և այսպէս կարգաւորեալ զամենայն աշխարհ ուղղափառութեամբ, և ինքն աղօթից և վարդապետութեան պարապեալ, և շինէ եկեղեցի մի մեծ յիւր պիւղն Ուձուն, որ Հուպէ է առ քաղաքն Նօռէ. և իւր ընտրեալ տեղի բնակութեան սակաւ մի ի քացեայ ի գեղէն, և անդ դադարէր: Եւ եղև օր մի զի յաղօթս էր սուրբն, երկու վիշապք ահագինք յարձակեցան ի տեղիքն՝ ուր կայանքն էին առաքինւոյն, և տեսեալ պաշտօնէի նորա աղաղակեաց առ սուրբն օգնել. իսկ սուրբն կնքեաց ընդդէմ նոցա, և առժամայն քարացան, և են մինչև ցայսօր, և զուր բզկեաց ի պորտոյ վիշապին, և բժշկութիւն է ամենայն օճահարի, որք հաւատով ապաւինին յաղօթս սրբոյն: Եւ կալեալ զհայրապետութիւնն ամս մետասան, հանգեաւ ի Տէր իբրեւ պարկեշտ վարուք:

Եւ յետ նորա առնու զկաթողիկոսութիւնն տէր Դաւիթ, ամս երեքտասան. սա էր ի Գրամունեայց՝ ի Կոտայս գաւառէ. սա փոխեաց զաթոռն ի Դունայ Գրամունս, շինեալ եկեղեցի և տուն բնակութեան հայրապետական. զի նեղեցաւ նա յոճրագործ ազգէն ..... Եւ յետ նորա եկաց կաթողիկոս տէր Տրդատ, ամս քսանևերեք. և սա էր յ( )Թմոյ գեղջէ, այր պարկեշտ և սուրբ և փայլեալ ամենայն առաքինութեամբ. և յաւուրս սորա դադարեցին հէնքն Նամայէլի. և յետ նորա կաթողիկոս միւս տէր Տրդատ, ամս երիս. և ապա տէր Սիոն ամս ութ. տէր Տրդատ՝ի Դասնաւորից և՝ի Բուոյնից[2]. և տէր Սիոն՝ի Բագուանէ.

1 Որպէս նախասացեալ գործքդ և այդ չարութիւնք՝ էին վայելք Նմանասիրին:

2 Երկու են Տրդատք մի վինի մոյ գահակալեալք, և զայդ յայտնեն երկին հայրենեացդ անուանք:

սա առ ոտամբն Սիմն կոչեցեալ լերինն զցամաքեալ աղբիւրն՝ հակմամբ աղօթից դարձեալ բղխեցոյց։ — Նակ Լևանի կայսերն զկնի Թագաւորէ որդի նորա Կոստանդին. սա կոչեցաւ Կաւաղինաս, այսինքն Թրքաժողով. զի զօրն Տաճկաց բնակեալ էին առ Ա.լիւս գետոյ, հրամայեաց Թրիք ժողովել և արկանել ՚ի գետն. և նոյա տեսեալ ահաբեկ եղեն, և կարծեցեալք անթիւ լինել զօրացն՝ և փախեան ՚ի նմանէ։ Պատմի Թէ ՚ի միում աւուր՝ զկնի միմեանց հինգ առիւծ սպան սա. և էառ զնարնոյ քաղաքն. և յետ երկու ամի շինեաց զնա Ա. զիտ ամիրա։ Յետ Մրվանայ առնու զիշխանութիւնն Նամայելի Ա.բդլա. և յետ նորա միւս Ա.բդլա[1], այր ժանտ և արծաթասէր, զոր կոչէին զնա ազգն իւր Ա.բդլդանկի, այսինքն ծառայ դանկի կամ հայր դանկի, զի ըստ լեզուին Նագարացւոց՝ այսպէս կոչէր, զի զդանկ առաւել սիրէր քան զԱստուած։ Սա շինեաց զՊաղտատ և արար քաղաք մեծ չարաչար և ընդ աշխարհս Նայոց հարկապահանջութեամբ և յափշտակութեամբ. և այնքան նեղեաց՝ մինչ զի մեռեալոյն հարկս ՚ի կենդանեացն էառ, և հատաւ պիտ արծաթոյ յաշխարհէս Նայոց. և կոտորումն եղև Քաղկեդնոյ, Յարեթնոյ, Մալնոյ, ուր սպանան ոգիք եօթնհարիւր, և գերեցան ոգիք հազար երկերիւր. և Մուշեղ Մամիկոնեան և Սամուէլ այլոք ազատօքն Նայոց կոտորեցան յաւուրս զատկին Նամայելացւոց։

Յայսմ ժամանակի Թուականիս երկերիւր քսանևերկու էր, Սահփանոս գրան երէց՝ որ բանիբուն Հանաքիւր, հաս ամենայն իմաստասիրական և գրամատիկոս արուեստից հանդերձ հոգևորական առաքինութեամբ։ Նին և վարդապետք աշխարհիս Նայոց ընտրեալք տէր Եփրեմ, Ընատտաս, Խաչիկ և Դաւիթ Նոռայեցին, և մեծն Սահփանոս Սիւնեաց մեծ իմաստասէրն աշակերտ Մովսէսի, զոր վերագոյն յիշեցաք, որ Թարգմանիչ եղև ՚ի յունէն ՚ի հայ լեզու. և ՚ի վերայ Թարգմանութեան արար և երգս հոգևոր՝ քաղցր եղանակաւ շարականս, կտորդս և այլ երգս արար, և մեկնութիւն աւետարանացն, քերականին, և Յոբայ, և Տէր

1 Որ և Էպոս ճեաֆար Ալմանսուր։

եթէ շրթանց գիշերոյ։ Ոչ վասն սրբոյն Պետրոսի թէ ի մանկութենէ վարժ և կիրթ էր տուրբ գրոց. հանդիպին նմա հակաճառաբան Պրքատ այր երկաբնակ. և թողեալ զնա յանհաւանութեան՝ գնայ ի Հռոմ [1], և գտեալ անդ միայնակեաց մի ուղղափառ դաստրեաց առնմա և ուսաւ ի նմանէ. և լուեալ Պրքատայ գրէ առ թագաւորն Հռոմոյ թէ Պետրոս հերձուածօղ՝ որ հայհոյէ զդաւանութիւնս ձեր, այդր դադրեալ է առ այս անուն միայնակեցի. և յոյժ ցասուցեալ թագաւորն խնդրէ զնա ի դուռն. և ետ նմա խրատ միայնակեացն ասել զինքեանէ, թէ մուրացիկ եմ թափառական. և լուեալ զայն կայսեր՝ շինչաւ ցասումն բարկութեանն։ Եւ գտեալ համարձակութիւն Պետրոսի՝ աղաչեաց զկայսրն բանալ զարկեղս գրոց սրբոց. և գտին մատեան մի ոսկետիպ սակս հաւատոյ. մատոյց զայն առաջի կայսերն, և ընթերցեալ զնա՝ ի Հռոմ յղէ, բերել անտի երիս գիրս համաբարբառս այնմ գրոց՝ յալագս Հնմարիտ հաւատոյ, զի զաշխարհն յայն ի կրօնս դարձուսցեն։ Իսկ զկրեանս ի Հռոմայ առեալ, անփոյթ արար զհրամանս ինքնակալին. գայ ի Պուին քաղաքն, զիւր աշխարհն նոքօք լուսաւորել. և ձեռնադրէ զնա տէր Պաւլէ՝ Պիւնեաց եպիսկոպոս, ի խնդրոյ Պուրդքոյ և Պաբգինի իշխանաց Պիւնեաց։ Եւ մի ամ կալեալ զաթոռն՝ սպանեալ եղև ի պոռնիկ կանանց ի Պոզն գաւառի. զորոյ զմարմին առեալ բերին ի Պազեան գաւառին [2], և անտի ի Պանատեաց վանս փոխեցին ի Տանգիատ. և ի բերելն երանելոյն զգրեանս ի Հռոմայ՝ եպիսկոպոսութիւն Պիւնեաց յերբեակ դասս Հայոց եպիսկոպոսաց կարգեցաւ։ Իսկ միայնակեացն ոմն Պոյ անուն տեսանէր ի տեսլեան, զի Պետիսանոս լի արեամբ զդոգն առաջի Պրկէին ունէր և ասէր. Տես տէր զայս, զի քո են դատաստանքդ արդար. և ազդեալ միայնակեացն ի գաւառն զգալ բարկութեան, և բողոքէ կալ յաղօթս. և ահա խաւար կալաւ զՊոզան սահման, և զաւուրս քառասուն շարժեցաւ տեղն, և խորասոյզ եղեալ ընկղմեցան ոգիք երկուց

1 Ի Կոստանդնուպօլիս աշակերտի կամ բնակէ առ Յոյն միայնակեացն, և յետոյ գնայ ի Հռոմ։

Պղաւալ է պատմութիւնդ։

2 Արիազեան գեօղ և ոչ գաւառ։

տան հազար. վասն այն Այսպէս ձոր անուանեցաւ մինչև ցայսօր ժամանակի. և բազում բժշկութիւնք լինին ի նշխարաց նորա, որք հաւատով ապաւինին ի բարեխօսութիւն սրբոյն՝ ախտացելոց ի պէսպէս ցաւոց և ի հիւանդութեանց. զի Աստուած զփառաւորիչս իւր փառաւորէ աստ, և ի հանդերձելումն տայ զպատրաստեալ բարիսն, զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ:

Եւ ապա տէր Նասայ Այղապատրօշ գեղջէ կոչի ընտրօքն Աստուծոյ ի պետս ժողովրդեան ի քահանայութիւն, եպիսկոպոսութիւն և հայրապետութիւն, ամն երեքտասան. և յետ վաղձանի նորա՝ Այնթօկն կողմտէ զեկեղեցին: Եւ բազում կաշառօք յաջորդէ տէր Ասեփանոս ամ մի. սա էր ի Դունայ. և յետ նորա՝ տէր Յովաբ ամ մի. սա էր ի յոստանէն ի կուրապաղատին տանէն [1]. և զկնի նորա տէր Սողոմոն ամ մի. սա էր ի Ճաբենոցաց վանից ծերացեալ յոյժ. և յետ նորա տէր Դէորգ, ամն երիս, որ Խուլ-սրբուն [2] կոչէր. սա էր Արագածոտանէ. և յետ նորա տէր Յովսէփ, ամն մետասան. սա էր ի քնակչաց սրբոյն Գրիգորի [3]: Ոսկ յետ Կոստանդի կայսեր առնու զթագն Լևոն, և յետ նորա Կոստանդին և Հռիփսիմայր իւր: Ի սորա աւուրս կանգնուին եղև պատկերացն ի Հռոմ: Եւ եղև սոցա տեսանել տապան մի մեծ մարմարեայ. զարմացան, և հրամայեցին բանալ զտապանն. և գտին զրեալ ի նմա, թէ Օ՞րինչ օգուտ է ծածկել զիս, զի յաւուրս Կոստանդեայ և Հռիփսիմեայ մօր նորա՝ տեսցէ զիս արեգակն: Եւ յետ տասն ամի ի միասին թագաւորելոյ՝ ընկէց զմայրն Կոստանդին և զինքն թագաւորեաց ամս եօթն. և ապա ըմբռնեաց մայրն զորդին, բրեաց զաչս նորա, և ինքն թագաւորեաց ամս հինգ: Եւ յետ նոցա [4] թագաւորեաց Նիկիփոր: Ի սորա աւուրս երկու եղբարք Սահակ և Յովսէփ համայեալքն [5] կատարեցան վկայութեամբ ի Քրիստոս՝ ի Կարնոյ քաղաքին, յորոց հնդետասան:

1 ՕՕ. ի կուրապաղատէն:
2 Այլք գրեն Խոյսրէոսի կամ Խոյսրէոսի:
3 Այսինքն վանաց Ս. Գրիգորի:
4 Ոմանք նորա:
5 Ա. Գ. յհամայելացոյց:

յետ նորա Թագաւորեաց Ակքայէլ. յաւուրս որում սով
սաստիկ եղև ընդհանուր, և յաւուր միում գտին մե-
ռեալս երեքհազար: Եւ յետ նորա Լևն. սա զպատ-
կերան ընկէց, և ընտրեաց զԽուզու և զԱրկադուպոլիս:
Իսկ յետ այրելոյ զիշխանս՝ ի Նախջաւանի՝ յետ յի-
սունևչորս ամի՝ Նայոց մարզպան[1] եղև Ատհոտ Ռա-
տունի, ամս եօթնևտասան. և յետ նորա Սմբատ որդի
Աշոտոյ որ Ողլաբան կոչեր, ամս երեսուն և հինգ.
սա շինէ զքաւարանն մեծապայծառ զարդու Անրապետ-
ւոր, որ արդ Երակաւանն կոչի: Իսկ զիշխանութիւնն
Նամայելի յետ Ողլայ առնու Ահարդի, և ապա Ռու-
սէ, և յետ նորա Հարոն, և յետ նորա Ահամատ,
և ապա Ահմուտ, և ապա Պուսահակ Ահմէտ, և
յետ նորա Հարոն[2]: Իսկ յետ Յովսեփայ եղև կա-
թուղիկոս տէր Դաւիթ, ամս քսանևհինգ. սա էր ի
Ահազազայ ի գեղջէ Կակազայ[3]. և յետ նորա Յոհան-
նէս ամս քսանևերկու. սա էր ի գաւառէ Կոտայից ի
գեղջէ Ովայից: ՅուԹերորդ ամի սորա չարախօսք ո-
մանք ի նմին տանէ բանս հայհոյութեան խօսէին ըզ-
սրբոյն, ոլք չարամահք սատակեցան, նանրալեզուք,
որպէս այնոքիկ որ առ Արկեսոսիւ էին Երուսաղեմայ
եպիսկոպոսիւ: Եւ յետ նորա տէր Օ՞աքարիա. սա էր
ի Կոտայս գաւառէ՝ ի գեղջէն Ձագայ, ի մուտաւուր
ամենայնին արժանաւորեալ, սարկաւագութեան և քա-
հանայութեան և կաթուղիկոսութեան. այր սուրբ և
առաքինի, ամս քսանևերկու: Ի սորա աւուրս եկաց
գլուխ Նամայելի այր ոմն անօրէն և աստուածատեաց,
Օ՞աբր անուն. սա յոյժ մախայր ընդ անուն Քրիս-
տոսի, և զբաղումս հրապուրէր յուրացութիւն, եւ
զեւս բազումս որք ոչ հաւանէին նմա՝ սպանանէր գառն
տանջանօք, և բազում չարիս գործեաց նա ընդ աշ-
խարհն՝ որ ընդ իշխանութեամբ էին. և սա առաւել ընդ
աշխարհս Նայոց սպանմամբ և գերութեամբ: Ունգի
առաքեաց ոստիկան մի Պուսէթ անուն, որոյ եկեալ
կալաւ զիշխանն Տարօնոյ զԱդարատ, և զայլս բա-

1 Մարզպան կոչումն ոչ լսէր յայնժամ. և Թուականքդ և կարգ իշխանացդ Թերուղնդք են:

2 Անուանք ամիրապետացդ զանազանին յայլոց և մանաւանդ ի բուն արաբիկ պատմչաց, որպէս և յզինին:

3 ՈՈ. Կաղկաղայ:

զուան. զոր իմացեալ բնակիչք լերինն Խօթայ[1] որ Սահ-
ատունքն անուանին, եկեալ սպանին զՅուսէփն. զոր
լուեալ Ս. աբրն՝ բարկացաւ յոյժ, և առաքեաց զօրա-
գլուխ մի Ռուզայ անուն, Թուրք ազգաւ, այր խոր-
մանկ և անօրէն. որ եկեալ աւերեաց զաշխարհս Հայոց,
զոր խաբէութեամբ և զոր պատերազմաւ, և խաղացոյց
զգերութիւնն ի Սամաւա. որ և զՍմբատ սպարապետ
Հայոց՝ խաբէութեամբ տարաւ առ Ս. աբր, և նա եղ
զնա ի բանդի զի ուրացցի զՔրիստոս, որ ոչ հաւա-
նեաւ հրամանի անօրինին, այլ համարձակութեամբ
զՔրիստոս խոստովանեցաւ և պահեցաւ ի նմին բան-
դի, մինչև անդէն մեռաւ, և զխոստովանական անուն
ժառանգեաց. և այլք բազումք վկայեցին վասն Քրիս-
տոսի, և մեռան յանօրինէն. և զարհաւագ ոմն սարի
անուն՝ Ղանան՝ վասն համբաւոյ վարդապետութեան
ըմբռնեալ ածին առաջի Ս. աբրին, և նա խոստովանե-
ցաւ համարձակութեամբ զՔրիստոս. և տանջեալ զնա
և ի բանդն արգելեալ յոլով ժամանակս, յետոյ ար-
ձակեցաւ խնամօքն Աստուծոյ. որ և գրեաց զմեկնու-
թիւն աւետարանին Յովհաննու լուսաւոր բանիւք:
Նոյնպէս և յիշխանացն Հայոց մի ոմն Ստեփաննոս ա-
նուն որ Կոնն կոչէր, նահատակեցաւ ի Քրիստոս. և
բազումք ուրացան զՔրիստոս ձչմարիտն Աստուած՝
վասն երկիւղի մահուն. այլ և յոլովակի չարիս անցոյց
ընդ աշխարհս. զոր գտցես ի գլուխ Պատմչի և Ճ ա-
պուհի և այլոց պատմագրաց: Ի Թուականիս Հայոց
Տարւոյ իննսունևչորս և Աստուծոյ՝ հազար եօթանասուն-
ևչորս, վերադարձաւ Ս. աբր զպաղատաց ի վերայ Տիգրիս գե-
տոյ, չորս աւուր ձանապարհաւ հեռի ի Բաբելոնէ: Ն-
ճնաւ կին մի, երեսուն տարի ապրեցաւ՝ ոչ ինչ կերաւ:

Նոյն ժամանակս զինի խոստովանողին Սմբատայ առնու զիշխա-
նութիւնն Աշոտ որդի նորա. սա ամենայն նախնեացն
վեհագոյն գտաւ, զի զինի սպարապետութեան՝ իշխա-
նաց իշխան եղև, և ապա Թագաւորեաց յերկոցունց
Թագաւորաց յիսմայելէն և յունականէն: Զանգի յետ
Ս. աբրի առնու զթագն Աբասիդ, և ապա Ահմատ,
ապա Մուզէմ, և ապա Հարուն. սա իշխանացաց

[1] Խոյի կամ խոյէ:

իշխան կացցէ զՅ.ոտ, և ապա Թագ ետ նմա։ Ուստ յետ Լևանի կայսեր՝ առնու զԹագն Մնքայել. և յետ նորա Ալասիլ. զսա ասեն՝ի Տարօնոյ՝ի գեղջէն Թվայ. սա շինեաց զՕ օրսավարն[1]. սա դարձեալ Թագ առաքեաց Յ.ոտայ՝ի վերայ Իսմայելականին[2]. և առ Յ.ոտ գրեաց Թուղթ պատրիարգն Կոստանդինուպօլսի Փոտ, և առաքեաց մանն՝ի տէրունական խաչէն. որոյ պատասխանի գրեաց հրամանաւ Յ.ոտայ վարդապետն Նահակ գեղեցիկ և իմաստասիրական[3]։ Յդ՝ի քառասնալոյ Թագաւորութեան Յ.ոտայ մինչև ցԹագաւորութիւնն Յ.ապրատունեաց լինին ամք չորեքհարիւր երեսունևչորս[4]. որ չորեքհարիւր երեսունևչորս Թուին Հայոց Թագաւորեաց Յ.ոտ, այր երկիւղած Ա.ստուծոյ և բարեպաշտօն, զարդարիչ եկեղեցւոյ, և սիրող պաշտօնէից Ա.ստուծոյ, որ զարդարեաց զեկեղեցիս Հայոց մեծաւ զարդիւք և պայծառութեամբ։ Օ ամս երեսուն և երկու իշխանայ իշխան կացեալ, և Հինգ ամ Թագաւորեալ՝ փոխեցաւ՝ի Քրիստոս բարի գաւանութեամբ և ճշմարիտ հաւատով։ Ն. յետ նորա Թագաւորեաց որդին Ամբատ, ամս քսան և չորս։ Սա վկայութեամբ կատարեցաւ՝ի Քրիստոս՝ի Պաուին՝ի Յուսփայ որդւոյն Գագկայ։ — Նակ յետ Օ աքարեայն առնու զաթոռն տէր Պետրոս՝ի գեղջէն Պառնոյ. սա գերեցաւ Իսմայելացւոցն, և իշխանքն Գողանից գնեցին և արձակեցին. և յետ նորա եկաց կաթուղիկոս տէր Ա.ստուծոյ ամ մի. սա էր տուրբ և առաքինի, լեալ հանճարով և իմաստութեամբ, և բնակէր՝ի կղզւոջն Աղան մեծաւ Ճգնութեամբ. զամ քառասուն հաց ոչ եկեր և ջուր ոչ արբ, միահանդերձ և բոկոտն։ Սա կարգեաց զկնիրն որ ըստ իւր անուանն Ա.ստուծոյ կոչի, ժողովեալ զամենայն կարգեալ աղօթս և զընթերցուածս՝ի միասին յարմարեալ յաւելուածով յիւրմէ, որ ունի հինգեան զամենայն կարգս հաւատոյ քրիստոնէութեան. և հասեալ՝ի ծերութիւն պարարտութեան հանդեաւ՝ի Քրիստոս փառաւորապէս, և եղաւ՝ի գե-

1 Իմա զեկեղեցին։
2 Յառաջ քան զԹագաւորելն Աշոտոյ մեռեալ էր Ալասիլ։
3 Ըստ ախորժակաց Կիրակոսի։
4 Զբարձումն Թագաւորութեն կզուցանէ ցնահատակութիւնՎարդանայ. այլ՝ի մերժելոյ Արտաշրի վերջնոյ ցԱշոտ՝ լինին ամք 458։

ըեզմանի ՚ի Պատնի, հուպ առ զարմանալի Թաղտն Տրդատայ. և չինեցին ՚ի վերայ նորա վայելուչ եկեղեցի. և յետ նորա յաջորդէ զաթոռն տէր Յովհաննէս աշակերտ նորին և ազգային՝ ամն քսանևուրթ։ Այս էր այր իմաստուն և բանաւոր ՚ի քաղաքագիտէն Պատնոյ, ուստի սուրբ Հայրապետն Պէտրոս էր. սա գրեաց պատմութիւնս գեղեցկայարմարս, զոր ինչ գործեցին անօրէն ազգն Ասպարացւոց ընդ աշխարհս ամենայն մեծամեծ չարիս։

Ընդ յայսմ վայրի կամ ե ինձ երկրորդել վանս պատմանն... ազգին Իսմայելի, զի հրամայէ փրկիչն մեր և Ստուած Յիսուս Քրիստոս, եթէ Ումեքն թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ աւերի, որպէս և ոտքայս, զի ՚ի բաղում բաժանեալ աերութիւնն. զի Սոփարն[1] տիրեր աշխարհին Ատրպատանու, և Ընկալեալ Ընդ թագաւորացւոց[2] քաղաքին, Յիսէ Շ եխայ[3] որդին ՚ի Պաղեստինէ, և որդին[4] Ընկլտից ՚ի Պոլմայ[5] աշխարհի, և այլք ոմանք ՚ի տեղիս տեղիս խռովութիւնս յարուցեալ՝ զանային բռնութեամբ տիրել իրերաց, վանն որոյ դժուարապիտ եղև անուանք ամբարշտացն։ Ասայ յորոց և ե ոստիկանք չարք և անմարդիք արճակեալք լինէին յաշխարհս մեր, որպէս գազանաբարոյն Ռուզա, և անօրինապոյն Ընկին որդի աոռաջապոյն չարին Ընպոստիթայ, և կամ և այս չարագունին ապականչին Յուսիին եղբօր Ընկինոյ՝ որ սպան զՄամբատ թագաւորն ՚ի Պարսն, և թագաւորեցոյց զՊապիկ ոմն ՚ի տանէն Ընրծրունեաց զորդի Պերանկանն, այր բարի և աստուածասէր, որդի քեռ թագաւորին Սմբատայ Ասպրատունեաց. սա չինեաց զկղզին Ընղթամարայ, որ ՚ի ծովեզն Ասնունեաց, քաղաք թագաւորական և եկեղեցի հրաշազան և պայծառ յօրինուածով։ Ընդ սոքիկ ամենեքեան չար վերակացուք՝ որ գայթն յաշխարհս

1 Սոփարենի տոհմն, այսպէս կոչեցեալ ՚ի Սոփքա արքայն Ճայնէ, որ է կատարագործ, զի զայս արուեստ ունէր հայր նշխանացելոյն՝ Եաղուպայ։

2 Պարխառեան տոհմն բռնացաւ կողմանց Պասրայի ՚ի կէս ժ. դարու։

3 Որ յետոյ և ՚ի Միջագետս հաստակ կարգեցաւ, և եբեր Աշոտոյ զթագն։

4 Հասան-պէն-Զէիտ, Դեղմը. կաց բռնաւորն, որ նուաճեցաւ ՚ի Սոփքարենից։

5 Վ. 95։

ՙՒել աւերել և եղծանել, մինչև բարձաւ Թագաւորու-
Թիւնն Ասորեստանեայն, և փոխանորդեցին Ակիւթա-
ցիքն ոչ ելանախոհք[1] այլ բարբարոսք. քանզի բազում
ազգս հարեալ հնազանդեցուցին և ինքեանք իշխեցին,
ընդ որս և զիշխանուԹիւնս Տաճկաց հնազանդեցու-
ցին. բայց զի զանուանս նոցա ոչ ուրեք գտաք գրեալ,
վասն այնորիկ և ոչ մեք կարացաք դրոշմել. Թուի Թէ
և ոչ ՚ի դպրուԹեան կենաց, այլ յարձանս ամբարըշ-
տաց. վասն այնորիկ լքեալ Թողուք զնոսա իբրև զա-
րանց յուսացեալց ՚ի զօրուԹիւնս իւրեանց, որք խլեցան
յարկայն Ասորեստանեայ:

Սակ ՚ի սկսանել ԹագաւորուԹեանն Ասորեստա-
կիսուն Նայ ազգաւ նեղեալք ՚ի նոցունց՝ եկին յանա-
պատն սպառազինեալք, և եկին ՚ի Պարաշ: Դատին այր
մի քաջ Փիլարտոս անուն հայ, եդին զնա գլխաւոր, և
մտեալ ՚ի Ասիկիա՝ առին զբովանդակ աշխարհն. յոր
էին և Ասուբինեանք սերեալ Թագաւորազունքն: Ոչ ՚ի
մինչև յայս Աէլիքշահ սուլԹանն՝ գրեալ էր զպատ-
ճառ տիրելոյ նոցա մեծիմաստ վարդապետն՝ որ Սար-
կաւագ կոչիւր, և երկրորդեալ էր Սամուէլ քահանայ,
այլ և զՀօր նորա զարիւնախանձին Ալփասլանայ, և զը-
նորին Հօր և Հաւուց, և զոր Տուղրու-պէկ և Ջահմուտ
և Սալջուկ անուանք են նոցա: Այլ մեք զարձցուք անդ-
րէն յոճն կարգի ուստի ելաք. Հանցուք արտաքս զը-
մինն[2], և ասացուք խրախուսուԹեամբ. Նոքա ՚ի ձեռա-
նէ քումմէ մերժեցան. մեք ժողովուրդք և խաչն արո-
տի քո: Զանգի յետ մահուան Ամբատայ Բագրատու-
նւոյ Թագաւորէ Հայոց Աշոտ որդի նորա, Հրամանաւ
Ռոմանոսի կայսեր, յետ եօԹն ամի սպանման Հօրն,
ան ուԹ. իսկ յետ Ալփ Արսլան՝ որդի Թագաւորեաց
Լևոն, և ապա Աէլէքսան, և զկնի նորա Ռոմանոս: Ա-
Հալածեաց զամենայն կրօնաւորս և զքահանայս Հայոց
որք էին յաշխարհս Հոռոմոց, զի ոչ հաւանեցան դա-

մանակագրի են բանքդ, զոր ան-
ճահս ՚ի ներս մուծանէ Կիրակոս.
և դինն է գաւազան մի Թագաւո-
րուԹեան՝ զոր ՚ի կարգէ չարեցն ՚ի
քաց Թողու գաւազանագիրն:

1 Ի Սարկաւագ վարդապետի սպատ-
մուԹենէն առեալ իմաստակէ, հե-
ղինակս, կիրԹս Ցունաց պէս՝ կա-
մելով ասել, և ակնարկէ ՚ի Սկե-
ղուգեանս:

2 Նորին յիշելոյ Սամուէլի ժա-

ամուԹեան Վրաստանի. և եկեալ յաշխարհս Հայոց՝ յաւուրս Ներսէսի որդւոյ Սմբատայ, հաստատեցին վանորայս զկարմիջաձոր, և զԱպուտքար ի գաւառին Երշարունեաց Հռչականուն, և զՀոռոմոսին կոչեցեալ վանք և զԿարէվանք ի Շիրակ գաւառին. շինեցին եկեղեցի մի յանուն սուրբ Աստուածածնի ի վանքն՝ որ կոչի Անանահին ի սահմանս Լօռէ քաղաքին. և զի կոչէին զբերիցսունս Հոռոմոյ՝ երէց, անուանեցին զմի վանքն որ ի Շիրակ՝ Հոռոմոց վանք. (որ ցարդ ևս Հոռոմցի վանք ասի[1]): Ն. յետ Նոմանոսի Թագաւորէ Կոստանդին որդի Լևոնի, և ապա Նոմանոս. և զկնի նորա՝ Անիկիտոր, և զկնի նորա Կիր-Յովան:

Նոյն յետ Յովաննիսի առնու զկաթուղիկոսութիւնն տէր Ստեփաննոս ամ մի, և ապա տէր Թէոդորոսն՝ ամս մեռատան. և ապա տէր Նղիսէ, ամս եօթն. և ապա տէր Ներսէս Մոկացին, ամս քսան և երկու: Յաւուրս սորա էր եպիսկոպոս մի կողմանցն Սիւնեաց՝ Յակոբ անուն, որ սկսաւ նորաձևութիւնս առնել խօսիլ և կարգաց. և այլ միւս եպիսկոպոսն Խոսրով անուն, որ ասէր. Չէ պարտ կիւրակէ ասել զօրն տէրունի՝ այլ կիւտակէ, զի Հռոմերէն է. նոյնպէս և Հաստրակաց Թուղուլ ասէր զգեաս և ոչ Հատանել, մինչև երկայնասցի և պատ առցէ. զի վասն այն կոչի պատանի, և ապա կտրել Հրամայէր, զի վասն այնորիկ կոչի ասէ կտրիճ. և ասէր. Չէ և պարտ եպիսկոպոսապետի՝ այսինքն կաթուղիկոսի՝ Հլու լինել, զի աւելի ոչ ինչ ունի, բայց միայն զանուանակոչութիւն: Ն. այլ այսպէս անխոհատ բանիւք լցոյց զաշխարհս, և խռովութիւն յարոյց ամենայն ուրեք վասն նորաձևութեան: Ն. որ գրէ Թուղթս իրատականս տէր Ներսէս ի քաց կալ յանհանճար և յանընդունակ բանից. իսկ նա փոխանակ զղջանալոյ՝ առաւել ևս անամօթանայր, զանձն իմաստուն կարծէր և զնոսա տգէտ. առ որ հարկաւորի գարձեալ գրել երկից և երից. գրեն և այլ իմաստունքն վարդապետք, և յիշեցուցանեն նմա ի գրոց Հանգամանս կարգաց: Իսկ նա ի նոյն միտս ամբարշտութեան կացեալ՝ քամահէր զամենեքումբք, և ինքն ապստամբեալ ի կաթուղիկոսէն

1 Փակագծեալն չկայ ԱՆ և ի Գ: — Վ. 88:

ամրանայր ՚ի բերդն Սիւնեաց, զոր ընդ բանիւ արա-
բեալ կաթողիկոսն, գրէ առ տիկինն Սիւնեաց՝ տալ
զնա ՚ի ձեռս խրատել զնա, զի թերևս գայցէ յուղղու-
թիւն. և նոքա ոչ ետուն զնա ՚ի ձեռս նորա. և զնոսա
և զարար ընդ բանիւ կապանաց, և ՚ի նոյն միտս եկաց
մինչև մեռաւ։ Եւ ապա զնաց տէր Ներսէհ յաշխարհն
Սիւնեաց հնազանդել զապստամբս. և իբրև լուան իշ-
խանքն Սիւնեաց զգալուստ հայրապետին՝ ելին ընդ ա-
ռաջ նորա, և մեզադրէին անձանց իւրեանց, և ետուն
նմա ձեռագիրս երդմամբ, զի այլ ոչ ապստամբեսցեն յա-
թոռոյն սրբոյն Գրիգորի յազգէ մինչև յազգս. և ա-
պա ձեռնադրեաց յազգէ նոցա զմի ոմն արքեպիսկոպոս,
որ յառաջն էր Սիւնեաց եպիսկոպոս. զայն ՚ի պատիւ
արարեալ իշխանացն Սիւնեաց՝ հրամայեաց խաչ տա-
նել առաջի արքեպիսկոպոսին Սիւնեաց ուր և երթիցէ։

Յետ մահուան տեառն Ներսիսի եկաց յաթոռ նո-
րա տէր Վահան ՚ի Բաղաց աւր մի։ Ա՛ա գաշնադիրս
եղև ընդ Վ՛իրս միաբան գաւանութեամբ. վասն որոյ ժո-
ղովեալ յամուրն Լ՛ոռի, ՚ի թագաւորութեան Ներ-
սեհ[1] որդւոյն Ներսեհայ, բազում եպիսկոպոսաց և խըս-
տակրօն վանականաց, որք ծանուցեալ հաւաստեաւ ըզ-
հերձուածդ կորստեան մտաց նորա, զոր ետ բերել պատ-
կեր վանն Նորոգման աղանդոյն (!) Բաղկեդոնի, և
որոշեալ զնա՝ հալածական արարին։ Եւ միաբանեալ
նստուցին յաթոռ սուրբ Լուսաւորչին զՎ՛ահեվանոս հա-
րազատ արեան սուրբ առն՝ Վ՛աշտոցի՝ որ ՚ի Վահան կըղ-
զօջ. և էր սա հետևեալ վարուց նորա, որ եկաց յա-
թոռն՝ ամս երկու։ Բայց քանզի Վ՛ահանիկն դեռ ևս
կենդանի էր ՚ի Վ՛ասպուրական, հաւանեցոյց զոմանս
՚ի պարզամտաց սուտ զնմանէ կարծել զհամբաւ հեր-
ձուածոյ. և վասն այնորիկ զմիջոց աշխարհիս Հայոց
լցին նզովիւք։ Իսկ ՚ի հրամանէն Լ՛ստուծոյ ՚ի միում
աւուր[2] մեռան երկոքին. և ամ մի անվերակացու լեալ՝
ապա հրամանաւ Թագաւորին՝ որ Ոլորմածն կոչիւր՝
ժողովեալ ընտրելոց արանց, և եպիսկոպոսաց սրբոց
կացուցանեն յաթոռ Հայրապետական զերանելի այրն

1 Ոլորմածն Աշոտ։

2 Ի միում ամի ըստ այլ պատմե-
ցաց։

Ընտուծոյ զտեր Իսաչիկ՝ հարազատ տեառն Ընանիայի մեծի հայրապետին, որ բանիւ վարդապետութեան սանձեաց զբերանս հերձուածողաց, որբասեր և քրիստոսասէր, որ կալաւ զաթոռն՝ ամս իննևետասն։ Եւ զկնի նորա տէր Սարգիս ամս քսաներկուս։ Իսկ զկնի Ընտոյ Թագաւորէ որդի նորա Ամբատ, որ և Տ՚ահնշահ կոչիւր. սա՛ի Թագաւորեն՝ լեր արկեալ պարսպին Ընդոյ բարձրաբերձ բրգամբք և լայնատարած տեղօք, Ախուրեան գետոյն մինչև՛ի Օտաղկոցաձորն կոչեցեալ վայր. հիմնարկեաց և զկաթուղիկէն պայծառ՛ի նմին քաղաքի, և ոչ կարաց աւարտել, զի եհաս նմա մահ. Թագաւորեալ ամս երեքտասան։ Յաւուրս սորա սկիզբն եղև շինուածոյ հռչակաւոր ուխտին Արմաշենի[1] կոչեցեալ, ՛ի քրիստոսասէր իշխանէն Ահրամայ։ Եւ յետ նորա Թագաւորէ Գագիկ եղբայր նորա, ամս իննևետասն. սա շինեաց զսուրբն Գրիգոր գերահռչակ՛ի վերայ Օտաղկոցաձորոյն, գաղափար առեալ զհոյակապ սուրբ Գրիգորն, զոր շինեաց հայրապետն Եղիազար. և կատարեցաւ՛ի հազար ամի մարմնանալոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և՛ի չորեքհարիւր քառասուն և եօթն[2] Թուին Հայոց. և կին նորա կատրամիտէ Թագուհի աւարտեաց զկաթուղիկէն սուրբ, զոր ոչ կարաց կատարել Ամբատ Թագաւորն։ Տ՚էր և Ամբատ մագիստրոսն զփափագատես վանքն՝ որ Բագնայրն[3] կոչի։ Իսկ յետ Կիւրո–Յանայ կայսեր՝ առնու զԹագն Ասիոն՝ ամս չիսուն Թագաւորեալ. սա էր այր բարեմիտ յաւէտ առ աղգս Հայոց, որ և Թողեալ զդաւանութիւնս Քաղկեդոնի՝ մերում Ճշմարտութեանս հետևեաց, և եկեալ յաշխարհն Կիլիկեցւոց մկրտեցաւ՛ի Հայոց՛ի վանքն որ կոչի Պաղակձիակ. և ետ վանացն գիւղս և ագարակս և այլ ինչս բազումս[4]։

Եւ յետ տեառն Սարգսի առնու զկաթուղիկոսութիւնն Հայոց տէր Պետրոս, ամս երեսուն և ինն։ Եւ յետ Գագկայ Տ՚ահնշահի Թագաւորեաց որդի նորա Յովհաննէս՝ ամս քսան։ Յաւուրս սորա մեծապատիւ Կաթուղիկոսն Սարգիս զկնի բազում շինուածոյ բերդից և

1 Ուղիղն Մարմաշէն, ՛ի Ճերակ։
2 Ինն ըստ սովորական հաշուի։
3 Բագնայրն արդ կոչի Ղօշունք, ՛ի Ճերակ։
4 Ուստի ուսաւ Կիրակոս զայսպիսի հետեւեալս։

եկեղեցեաց՝ շինեաց և զփառաւոր վանք զՍոկուննա[1] և զեկեղեցի յանուն սրբոյն Սարգսի, և զՕտառաքար[2] վանքն բերդ արարեալ պարսպեաց ամրագոյն, և եկեղեցիս շինեաց փառաւորս՝ ի նմա։ Բայց Թագաւորն Յովհաննէս գժտութեամբ լեալ ընդ Հայրապետին Պետրոսի՝ գնէ զնա՝ ի բանտի, և զԳեոսկորոս ոմն առաջնորդ սուրբ ուխտին՝ որ կոչի Սանահին՝ բերեալ ձեռնադրէ զնա կաթուղիկոս փոխանակ Պետրոսի։ Ապա եկեալ Յովսէփ կաթուղիկոսն Աղուանից՝ հաշտութիւն արարեալ՝ ի մէջ Թագաւորին և Հայրապետին՝ հանէ զկաթուղիկոսն՝ ի բանտէ. իբրև տեսին ռամիկք բազմութիւն քաղաքին Անւոյ եթէ արձակեցաւ կաթուղիկոսն՝ ի բանտէն, ընթացեալ յանդգնութեամբ՝ ի վերայ Գեոսկորոսի՝ պատառեցին զքօղն երեսաց նորա յաւուր յայտնութեան տեառն, մինչ դեռ օրհնէին զնա՝ ի բանտի, և հանին զնա անարգանօք՝ ի քաղաքէն, և կացուցին զՊետրոս յաթոռ իւր։ Եւ գնաց Գեոսկորոս տրտմութեամբ՝ ի Սանահին՝ ի տուն իւր, և անդ եղև վախճան կենաց նորա. և եղաւ հուպ յեկեղեցին։ Եւ յաւուրս իշխանութեան Օթաքարիայի և առաջնորդութեան Սանահնին Գրիգոր վարդապետին՝ որդւոյն Տուտայ, որ էր այր երևելի, առաքեցին զնակիչք քաղաքին Անւոյ այր մի քարկոփ՝ ի Սանահին՝ ի նոյն քաղաքէ, զի յայտնի կամ գաղտնի առցէ մանր ինչ՝ ի նշխարաց Գեոսկորոսի, և տարցէ՝ ի քաղաքն. զի վասն նորա են ասեն այս կոտորուածք որ լինի՝ ի քաղաքիս հանապազ յայլազգեաց. զի Թերևս Թողութիւն առցէ քաղաքիս վասն յանդգնութեանն՝ զոր գործեցին ընդ նա հարքն մեր։ Եւ այն երթեալ՝ ի գիշերի կամեցաւ բանալ զգերեզմանն և առնուլ՝ ինչ մանր ինչ, և ահաբեկեալ ահիւ մեծաւ՝ ոչ կարաց բանալ զգերեզմանն. և երթեալ պատմեաց Գրիգոր վարդապետին. և նա ասաց. Ես ոչ կարեմ գործել զայդ իրս, մինչև ժողով բազմութեան քաղաքին Անւոյ այսր գայցեն, և մեք ընդ նոսա պաղատեսցուք խնդրել զԹողութիւն՝ ի նշխարաց նորա։ Եւ ասացեալն յապաղէր. զի ոչ ոք արար փոյթ զնմանէ։

1 Իմա՝ ի գիւղն Խնձկոնս։ 2 Վ. 131։

Եւ յետ Յովհաննէսի առնու զթագաւորութիւն
Դաւիթ որդի Ալոտայ՝ ամս երկու։ Եւ յետ մահուան
Յովհաննէսի՝ որ և Ամբատ, միաբանեալ իշխանաց և
զօրացն յաւէտ և պատրիարգն Պետրոս, ժողովեցան
առ դրունս մեծափառ կաթուղիկէին Ընտոյ, և կացու-
ցանեն զԴաւիթ թագաւոր, զեղբօրորդին Յովհաննէ-
սի, և երդմունս արարեալ ուխտից միամտութեամբ
ծառայել նմա։ Ապա նա պատերազմական արիութեան
ոչ ինչ վոյթ արարեալ, որով աշխարհ վարի, մանա-
ւանդ զի առ այնու ժամանակաւ աւերն էին՝ ի դեպ կ
քաջանալ. քանզի իշխանութիւնն Իսմայէլի շփոթեալ
էր, քանզի Սկևթացիք յարեան՝ ի վերայ նորա, ո
պէս ցուցաք յառաջագոյն. և Յունացն ևս վըդովեալ
էր։ Այլ սա զի՝ ի մանկութենէ դպրութեամբ զբո
վարժեալ էր՝ ի նոսին ևս և զբօսնոյր. զոր իմացեալ
ազգին Յունաց՝ առ իւրեանս կոչեցին խաբանօք, յա
ւէտ ևս՝ ի սաղրելոյ իշխանացն, որք նենգեցին զուխտ
զոր եդին ընդ նմա, անենգ պահել զտէրութիւնն նո
րա՝ ի վերայ ինքեանց, և ոչ կացին յուխտին. և կա
տարած գործոյն կորուստ եղև անձանց և աշխարհի
զի և Յոյնք զինացեալն՝ ի կղզւոջ արգելին, և՝ ի տե
նորա վերակայուս արձակեալ սմ մի։ Նոքա զինակից
աշխարհիս զմիմեամբք ելանելով անձնուն՝ յուխտա
նօք, և՝ ի միմեանս արձակեալ խորամանկութեամբ,
ստաբանութեամբ խորհէին զխորհուրդս նենգութե
մանելով զմիմեանս կայսեր, բաղբաղեալ զձեռն տալ
առ Յունարացին. որք և իշխանացն անգամ՝ զհայրա
պետն, և նորա զնոսա. զոր յոչ կամայս առեալ տա
նէին՝ ի բնակութենէ իւրեանց։ Նոքա միաբերանեալքն ի
զանտերունչս անգուշեալ կնոց ընկենուին։ Տիրեալ
Յունաց ամս քսանևմի. և յետ որոյ հնար հարաւային
բքեալ՝ եբեր զգազանն մարդախանձ, որ հրդեհեալ
բնաջինջ արար զազգս մեր, և առաւել զքաղաքն Նիւ
զի պաշարեաց զնա աւուրս քսանևհինգ. և ապա ա
ռեալ զքաղաքն կոտորեաց զբնակիչս նորա, ոչ ումեք
ողորմելով, սրեանաւրեալ զազգն՝ որ Ասիական կո
չէր։

Ընդ մեր դադարեաց գաւազան Թագաւորական[1], ոպես Ակերիկէն որ ’ի Հօրէ քաղաք և որ շուրջ գնացաւ. զի և սա յաղթէ Հպրատուհեաց էր. և միւս ևս Դադիկ Վանանդեայ և Կարուց, որ գնաց առ Յոյնս. սակայն զլխաւորն դադարեաց յաւուրս Դադիկայ, և այլքն անձնատուրք եղեն ընդ ձեռամբ վիշապին. և կէսք փախստականք գնային առ կայսրն Յունաց, և նոքա տիրեցին աշխարհիս ամենայն։ Իսկ Յոյնքն՝ գնայելոցն ետուն երկիրս և քաղաքս կալուածոյ, զկողմանս Կեսարու և Սեբաստու՝ զոր ետ Դադիկայն երկուցն Թագաւորաց։ Իսկ զկաթուղիկոսն Պետրոս մեծապատիւ պատուեաց կայսրն, և եդ նմա աթոռ ոսկի. և իբրև յարեաւ յաթոռոյն և կամէր արտաքս ելանել, եպիսկոպոս մի անուն Նղիսէ՝ առ զսայլեան[2] ոսկի՝ յորոյ վերայ նստաւ կաթուղիկոսն. իսկ սպասաւորքն արքունի ոչ տային նմա թոյլ առնուլ. և ետուր կայսրն եպիսկոպոսին, եթէ ընդէր զայդ առնէր. և ասէ ցնա եպիսկոպոսն. Որպէս է մեր, զի յաթոռն յորում նստի կաթուղիկոսն՝ ոչ այլ ումեք նստիլ բայց ’ի կաթուղիկոսէն. և զարմացաւ կայսրն ընդ պատիւն զոր եդ եպիսկոպոսն կաթուղիկոսին, և հրամայեաց սպասաւորացն թոյլ տալ զնա առնել եպիսկոպոսն. և ասէ ցնա. Նօթն հազար դահեկանի է այդ, տար պահեա զայդ ’ի պատիւ կաթուղիկոսին քո։ Եւ եղև երբեմն ժամանակ, զի յաւուր յայտնութեանն տեառն ժողովեալ էին ամենայն քրիստոնեայք և այլ ամբոխ բազում ’ի Տրապիզոն քաղաք օրհնել զջուրն ըստ սովորութեան. և ըստ նախանձուն զոր ունէին Յոյնք ընդ Հայք՝ կացուցին զՀայրապետն իւրեանք ժողովրդովք ’ի վերոյ և ինքեանք ’ի ներքոյ կողմանէ գետոյն. այսպիսի մտօք, զի Թերակատար հաստատեսցեն զօրհնութիւնս Հայոց. զի ’ի ներքոյ կալով՝ զօրհնեսցէն ’ի Հայոց կրկին օրհնեսցեն. սովորեցուցեալ էին և ազատն մի սպիտակ որ գայր և խառնէր ընդ ջուրս և վերանայր, որով խաբէին զանընտեսան եթէ Հոգին տուրբ էջ ’ի նմանութիւն աղաւնոյ։ Եւ յաջողեալ Թէն տուրբ Հայրապետին Պետրոսի՝ դարձաւ ջուրն ’ի յորմէ և սկիզբն առ Մատթէոս Ուռհայեցի և հնագոյնք քան զնա։

1 Ըստ տպագրին յաւելի. ՚ի Ռէպէբ գոյր ոսրոտ պէրուՒիան։

2 Գահ. ըստ յունին σέλλα.

վեր և լոյս սաստիկ ծագեաց, որ նուաղեցուցանէր ըզ-
Ձառաջայթս արեգական. և իբրև եկն աղաւնին նոցա
խառնիլ ընդ ջուրն որպէս սովոր էր, յանկարծակի լոյս
ցեալ արծիւ մի՝ եհառ զնա և գնաց, և զամօթի մեծի
հարան Յոյնքն ամենայն, և ակամայ գովէին զՀաւատս
Հայոյն։ Եւ հրամայեաց կայսրն Հայրապետին գնել
զաթոռ իւր ՚ի Սեբաստիա և անդ հովուել զհօտ իւր.
և եկաց անդ մինչև ցմահ իւր. և եղաւ անդէն ՚ի Սե-
բաստիա, կացեալ կաթուղիկոս ամս երեսուն և ինն։

Եւ յետ նորա տէր Խոսէկ սակաւ ժամանակս։ Պա-
շխարհս Հայոց ժողովեալ ՚ի մի վայր՝ կացուցին Հայ-
րապետ զտէր Սիսակ արհամ զոր անուանեցին Գրիգորիս.
զորդին Գրիգորի Մագիստրոսի ՚ի քաղաքէն Ընջոյ,
զթոռն Սիսակայ մարտիրոսի, զայր իմաստուն և ա-
ռաքինի։ Այս ինդրեաց[2] յիւրմէ մեկնել զարուեստն
քերականի, զի էր նա իմաստասէր. և մեկնեաց զնա
արուեստաւոր բանիւ։ Այս աքանչելի Հայրապետս
Թարգմանեաց բազում Ձառս վկայից Քրիստոջ, և Ձառս
ներբողականս ՚ի Յունաց և Ասորւոց։ Եղ սա ՚ի մեր
իրում յետ ժամանակաց երթալ ՚ի Հռոմ քաղաք,
յերկրպագութիւն նշխարաց սրբոց առաքելոցն Պետ-
րոսի և Պօղոսի, խորհրդակից իւր առեալ զոմն վար-
դապետ Գէորգ անուն[3]. և կոչեալ զՀօտս իւր զեպիս-
կոպոսս և զերիցուսն և զդիւրհանս, ասաց նոցա զմտա-
ծումն իւր. և նոցա յարտասուս հարեալ լային զդա-
նապէս, և աղաչէին զնա մի՛ թողուլ զնոսա որբս և ան-
հովիւս։ Իսկ նա ասէ ցնոսա. Ուխտ է իմ եղեալ և
անհնար է ինձ ատել. տեսէ՛ք ձեզ այր մի, զի ձեռնա-
դրեցից զնա փոխանակ իմ. և էր պատրաստուոր վար-
դապետն այն Գէորգ՝ զոր վերագոյն յիշեցաք։ Իբրև
ոչ հաւանէին ժողովուրդքն՝ այլ ՚ի նոյն աղաչանս պըն-
դեալ կային, և ոչ ումք դատանէին փոխանորդ նորա,
յայնժամ ասէ ցնոսա Գէորգ. Ինդէր այնչափ աղա-
չէք զնա, որ նա ուխտեալ է երթալ, և ես տեղեակ
եմ խորհրդոյ նորա, զի ոչ փոխի յայնմ. ես ահաւա-
սիկ, թող զիս ձեռնադրեսցէ փոխանորդ իւր։ Իբրև

1 Ոչ պակաս քան զաղաւնին՝ խաբուսիկ է և արծուիդ։

2 Գրիգորիս՝ ՚ի հօրէն իւրմէ։

3 Գէորգ Լօռեցի։ — Վ. 102։

լաւ կաթուղիկոսն զարմացաւ, և լի եղև ցասմամբ, զի երդուեալ էր Դէորգ ընդ նմա երթալ, սակայն յաւելում էր ձեռնադրէ զնա, և ինքն Յանապարհորդ լինէր, և Դէորգ նստաւ յաթոռ նորա։ Եւ երթեալ սուրբ Հայրապետն՝ի Հռոմ, մեծապէս պատուեցին զնա ազգն Ֆռանգաց[1]։ Եւ կատարեալ զուխտն գալ՝ի Կոստանդնուպոլիս նաւով՝ թարգմանութեան ա-ղաչեաց, և յարուցեալ բռնութեամբ Հողմոյ ծովուն, և տարեալ զնաւն ընդ այլ Յանապարհս՝ Հանէ զնոսա Աղեքսիոս։ Իսկ որք ընդ նմա էին սպասաւորքն երկեան, զի սովորութիւն էր բնակչաց աշխարհին զալէ-կոծեալ նաւսն կողոպտել և սպանանել։ Եւ կացեալ սրբոյն Դիոնիսի յաղօթս, եղև անձրև սաստիկ Աղեքսիոս, որ երբեք չէր լեալ. իբրև տեսին զայն բնակիչքն՝ զարհուրեցան։ Նայեց Յագարացին որ թագաւորէր նոցա, այր իմաստուն էր, կոչեաց զզօրսն իւր և ասէ ցնոսա. Դուք ինքնին գիտէք զի Աղեքսիոս անձրև բնաւ չէ եկեալ՝ի սկզբանց անտի մինչև ցայժմ. բայց միայն կարկուտ յաւուրս Յովսէփ, և անձրև մի յորժամ Յիսուս էր եկեալ. ոյնպէս և այս նշան է գալստեան աքանչելագործ մարդոյն. տեսէ՛ք ինդրեցէք զնա թէ ո՞ւր է։ Եւ շրջեալ զօրացն ընդ աշխարհն գտին զԴիոգորիս իւրովք պաշտօնեաքն, զի կային յաղօթս առ եզր ծովուն. և ածին զնա առ սուլտանն։ Նմանց զնոսա և ասէ. Ո՞ւմ ձեր եկն այս անձրևս. և նոքա ասեն. Ո՛չ։ Եւ՝ասէ ցնոսա. Ո՞ւմն ինչ պատճառէ ինդրեցէք զայս։ Նոքա ասեն, թէ Նրկեաք վանն սուրբ Թեան աշխարհիս՝ի սպանմանէ, զի նաւաբեկ եղաք՝ի ծովու. և զամենայն իրս ասացին ստուգութեամբ։ Յայնժամ զարմացաւ սուլտանն, և գովեաց զՀաւատս նոցա. և ասէ ցՀայրապետն. Գնա դու Աղեքսանդրիա յաթոռն Մարկոսի, և ամենայն քրիստոնեայք որ են ընդ իշխանութեամբս իմով՝ քեզ լինցին Հնազանդ։ Եւ ետ նմա պարգևս մեծամեծս, և սիրեաց զնա իբրև զՀայր. և եղև յայնմ օրէ Հնազանդ յաթոռն[2] սրբոյն Դիոգորի. և անդ կացեալ վախճանեցաւ սուրբն՝ի փառս Յաստծոյ[3]։

1 Տես՝ի Պատմ. Հայ. Բ. 1000։
2 ՕՕ. աՊետն։
3 Ասա և զկնի (57) չփոթեալ ի համարի զԴիոգորիս Վկայասէր

Իբրև ետես Կիւրիկէ արքայ Յագրատունեաց որդի Դաւթի որդւոյ Դերենկան, որ հիմնարկեաց զՀռէչաքաղաք ուխտն զՅաղբատ և զՍանահին, եթէ եթող տէր Դրիգորիս զաթոռ իւր և գնաց՝ի Յռոմ, կոչեաց առ ինքն զտէր Յովսէփ կաթուղիկոսն Աղուանից, և ետ ձեռնադրել զտէր Յարսեղ՝ կաթուղիկոս Յայոց. և զՍարգիս ոմն ղրան երէց Կիւրիկէի՝ ձեռնադրեն եպիսկոպոս Յաղբատայ, և յայնմհետէ եղև աթոռ եպիսկոպոսի. և յետ Սարգսի՝ Դէորգ, և յետ նորա Յարսեղն: Սա էր գեղեցիկ տեսլեամբ. զսա տեսեալ Թագուհին Մրոց Ցամամբ՝ մեծապէս պատուեաց զնա վասն վայելչութեան գեղոյ նորա, զի եղբարք նորա գոլ. ծակալք էին տանն արքունի: Եւ յետ Յարսեղի եղև եպիսկոպոս Դրիգորիս. սա ազգական էր Օ՛աքարեայի և Ներսէի, սա որ յաւուրս մեր եղև. և յետ նորա Յովհաննէս այր հեզ և առաքինի՝ ազգական իշխանաց Խաչենոյ: Սա զգաւիթն փոքրագոյն քակեաց որ՛ի դուռն կաթուղիկէին Յաղբատայ, և շինեաց մեծ և գեղեցիկ շինուածս, որ զարմացուցանէ զտեսողն հիացմամբ: Եւ յետ նորա միւս Յովհաննէս քուերորդի իշխանաց Օ՛աքարեայի և Ներսէի, և եղբօրորդի առաջնոյ Յովհաննիսին. սա շինեաց բերդ մի ամրագոյն պարսպօք՝ի մէջ Յաղբատայ և Սանահնին. վասն որոյ գժտութիւն ընդ երկուս մեծամեծ վանորայս եղև, որպէս թէ՝ի հողոյ Սանահնին լցէ, և վրէժխնդիրը եղև իշխանն Շ՛ահնշահ՝ որդին Օ՛աքարէի՝ Սանահնին. զի հայր նորա անդ թաղեալ էր, և իբրեանց սեփական հանարէին. զի Յաղբատ՝ի Մրոց Թագաւորին էր յայնմ ժամանակին, Իբրև մեռաւ եպիսկոպոսն Յովհաննէս՝ քակեցին և զպարիսպն քերդին հրամանաւ Զաքարէին. և յետ մահու եպիսկոպոսին Յովհաննիսի՝ եկաց՝ի տեղի նորա Յովհաննէս որդի Զաքարեայ՝՝ի Մածնաբերդէ Յագրատունեացն՝ ամս երկու, որ չև էր ձեռնադրեալ եպիսկոպոս վանն շինման ժամանակին, որ յետոյ ձեռնադրեցաւ՝ի կաթուղիկոսէն Աղուանից՝ Ներսեհ՝ կոչմանցն Մածնա-

Մեծ և զԳրիգոր քեռորդի նորա, պիսպոսեն, և ինքն դարձաւ՝ի Հայք
զոր ձեռնադրեաց եպիսկոպոս Ե- և մեռաւ՝ի Կարմիր վանս Գեղոյ

բերդին. և յետ նորա համարձակ ի քաղաքն Ուրհայ։ Ա՝ա զինեաց եկեղեցի ի տեղին հրաշալի և զանկասա-
տուն և ժամատուն մեծ և պանծելի։ Ա՚յլ գարձցուք
ի կարգն բանին, անդի ուստի ելաք։ Ա՚նդր ի բա-
զում բաժանեցաւ կաթուղիկոսութիւնն Հայոց. տէր
Պետրոսն որ և Ա՚ահրանն՝ Աղեքսիոս. և Պետրոս
ի կողմանս արևմտից. և միւս ոմն ի Ա՚ասպուրականն՝
ի կղզւոջն Ա՚ղթամարայ. և տէր Յակոբ եպիսկոպոս
Հայոց. այսպէս ի յոլովս բաժանեալ էր։

Եւ Յայց Պապիկ Թագաւորն Կարուց[1] գնաց տեսանել
զկայսրն Յունաց, քանզի ընդ իշխանութեամբ նորա
էր. և ի գառնալն եկն ի Կեսարիա. և լուաւ թէ ոմն
Ա՚արկաս՝ մետրապոլիտն Կեսարու՝ ունի շուն մի, և
վասն ատելութեան որ առ ազգս Հայոց ունին Հոռոմք՝
զանուն շանն Ա՚րմէն կոչեն. և այսպէս ձայնէին զնա,
զի զՀայքս՝ ամենայն ազգ Ա՚րմէն կոչեն վասն քաջու-
թեան Ա՚րմանայ[2] Հայկազնոյ։ Եկաց Թագաւորն մի-
ջևանս լինելաւ մետրապոլիտն, և նա ուրախութեամբ
ընկալաւ զնա, և իբրև ընդ գինիս մտին ասէ Թագա-
ւորն. Ա՚ուեալ է իմ եթէ դու շուն մի ունիս ազնիւ, ցոյց
ինձ զի տեսից զնա։ Ա՚սէ մետրապոլիտն. Ա՚հանիկ առ
դուրս է հանդէպ մեր. և ասէ Թագաւորն. Ձայնեա
զնա զի գայցէ այսր. և նա ձայնէր նմա զայլ շան անուն
և ոչ զնոր. իսկ շունն ոչ ընդոստնայր և ոչ գայր առնա։
Եւ իբրև ձայնեաց Ա՚րմէն Ա՚րմէն, վազվազակի ի վեր
յարեաւ և եկն։ Ա՚սէ Թագաւորն. Ո՞յդ անուանդ
ընդէր ես դու կոչեալ նմա։ Ա՚սէ մետրապոլիտն. Ո՞չ
մանուկ է և նորահասակ. և Հրամայեաց եւս Թագաւորն
ծառայից իւրոց և ասէ. Ա՚ներէք քուրձ մի մեծ, և ար-
կէք անդր զշունն. և Հազիւ կարացին արկանել։ Ա՚պա
ասէ Թագաւորն. Ա՚րկէք և զեպիսկոպոսդ անդ առնա.
Թո՛ղ տեսից ես թէ մանո՞ւկ է շունդ, որպէս ասացն
դա։ Իսկ նա լայր և աղաչէր զԹագաւորն Թողուլ նմա
զյանցանան։ Իսկ Թագաւորն բարկութեամբ ասէ.
Ա՚րդ խնդանաւ խնդեցէք զշունդ, զի կերիցեն զմի-
մեանս. և խնդէին զշունն, և նա առ կսկծի ցաւոյն ժա-

1 Ոչ Կարուց՝ այլ Բագրատու- ծընդ եպերելի։
նեաց Թագաւորին Գագկայ է դոր- 2 Այսպէս ՕՕ։

նեօք և մագլօք պատառ պատառ առնէր զնա մինչև մե-
ռաւ. և ասէ. Ա՛րդ գիտայիր թէ մանուկ է Ա՛րմէն.
և ինքն կողոպտեաց զեպիսկոպոսարանն, և այլ ոչ ևս
ետես զկայսրն:

Ի սկիզբն[1] Գագիկն Թագաւորեալ՝ յաւուր միում
էլ յորս, և էր արբեալ. և ի տօթ ժամու էջ յերիվա-
րէն հանգչել ընդ հովանեաւ ծառոյ, և այլ ոչ ոք գոյր
ընդ նմա, բայց միայն մանուկ մի փոքրիկ. զի այլ զօրքն
ամենայն ցրուեալ էին զհետ որսոյ. և պատահեալ նմա
արանց Յունաց՝ ծանեան զնա, և կապեալ առեալ տա-
րան զնա ի բերդ մի. և իբրև սկսաւ ի գինւոյ
անտի, ասէ. Ո՞ւր եմ ես. և Հոռոմքն ասեն. Ո՞ւր է
մետրապօլիտն մեր Մարկոս. և ընկեցին զնա անարգա-
նօք ընդ պարիսպն բերդին, և նա ջարդեալ մեռաւ:
Եւ զմանուկն այն որ էր ընդ նմա՝ գնեաց ոմն վաճառա-
կան Հայ, և արար իւր փեսայ: Եւ եղև յետ աւուրց
իբրև զարգացաւ մանուկն[2] և եղև այր, գնաց ի սահ-
մանս Կիլիկիոյ արամբ միով որսալ կաքաւս. և էր անդ
բերդ մի՝ զոր Խարձրբերդ կոչեն. և էր անդ եպիսկո-
պոս մի Հոռոմ. և եղև ծանօթութիւն առն և եպիս-
կոպոսին, և եղեն միմեանց սիրելիք, և զբազում ա-
ւուրս ուտէին և ըմպէին ի միասին. և այրն ոչ հանէր
ի մտաց զիրսն զոր գործեցին Հոռոմք ընդ Թագաւորն
Գագիկ ընդ ազգական նորա: Եւ եղև օր մի, զի առե-
նայն պաշտօնեայք եպիսկոպոսին ելեալ էին արտաքս ի
բերդէն ի պէտս ինչ գործոյ իւրեանց. և էր եպիսկո-
պոսն միայն և մանուկ մի ընդ նմա. եկն այրն որոյզ
հուպ առ բերդն որսալ կաքաւս. և տեսեալ զնա եպիս-
կոպոսին ձայնեաց ի պարսպէն գալ առ նա, և ի միա-
սին Ճաշակել, և նա ոչ հաւանէր. և էջ առ նա եպիս-
կոպոսն առանց պաշտօնէի: Իբրև ետես այրն թէ միայն
գայ եպիսկոպոսն և ծանեաւ թէ ոչ ոք կայ ի բերդն,
ասէ ցայրն որ ընդ նմա էր. Ա՛յսօր ի դեպ է առնուլ զը-
վրէժ արեան սպանման Թագաւորին մերոյ՝ զոր գործե-
ցին Հոռոմք. տե՛ս գուցէ առաքեսցէ զքեզ եպիսկոպոսն

1 Նոյն Գագիկ է զորմէ յառաջն ասացաւ:

2 Վասն Ռուբենի հեղինակի Կիլիկեցւոց Թագաւորութեանն ասէ, զոր այլ պատմիչք ցուցանեն այր չափահաս և ազգական լինել Գագկայ. և ամ պատմածդ Կիլիկոսի՝ առասպելեաց ունի ցոյցս:

'ի բերդն, ջանասջիր առնուլ զնա և ինձ իմացուսցես 'ի ձեռն նշանի ինչ, զի ես սպանից զեպիսկոպոսն։ Եւ իբրև եկն եպիսկոպոսն՝ մոին 'ի ձաշել, և 'ի պակասել գինւոյն՝ ասէ եպիսկոպոսն ցսպասաւորն. Երթ 'ի բերդ անդր, և բեր մեզ անտի գինի, զի ուրախասցուք 'ի միասին. և գնաց այրն և ասաց զհրամանն եպիսկոպոսին՝ սպասաւորի նորա. և իբրև նա խոնարհեցաւ 'ի կարասն անդր զի հանցէ գինի, նա կալեալ զոտից նորա ընկէց զնա 'ի կարասն գլխիվայր, և խեղդեցաւ 'ի գինւոյն. և ելեալ 'ի պարիսպն նշանակեաց տեառն իւրում, եթէ առի զբերդս. և սա աստէն 'ի ներքոյ խեղդեաց զեպիսկոպոսն, և ինքն մտեալ 'ի բերդ անդր բռնացաւ. և առ սակաւ սակաւ աձեցոյց զկալուածս իւր, զմի բռնութեամբ և զմի պատրանօք. մինչև տիրեցին նա և որդիքն իւր և թոռունքն աշխարհին Արիւկեցւոց, քաղաքաց և գաւառաց։ Ա՚ա է նախնի թագաւորին Լեռնի որ ընդարձակեաց զսահմանս իւր քաջութեամբ, զոր յիւրում տեղւոջն ասասցուք։—Դայց զկնի Այեայ կային սեր թագաւորեաց Կոստանդին, և յետ նորա Ոսմանոս ծերն, և զկնի նորա Միխայէլն, և ապա Կիւրիոն[1], և յետ նորա Յոհաննէսն. առ սովաւ ասեն զերծեն Դադկայ 'ի Հոյնս. և յետ նորա Կիւռ Թոռտորն, և ապա Դուկիծն, և յետ նորա Դիւժէնն։ Յառաջին ամին տորա մեռաւ Ա՚ ասնդրոս Ա՚ անանդայ[2], և յումեքումդ ամի իշխանութեան իւրոյ՝ եկ Դիւժէնն բազում զօրօք 'ի Պարսս 'ի պատերազմ, և եկն 'ի Մանազկերտ և առ զնա. զոր լուեալ բռնաւորին Ալփասլանայ՝ եկն ընդ առաջ. և եղև սուվ աստիկ և պատերազմ. և պարտեցաւ Դիւժէնն և ըմբռնեցաւ 'ի նմանէ. և հարկ եդեալ 'ի վերայ եթող զնա. իսկ ազգ նորա ոչ հնազանդեցան նմա, այլ թագաւորեցուցին զՄիքայէլ որդի Դուկիծին։ Դարձեալ պատերազմեալ Միխայէլն՝ եհար զԴիւժէնն, և զօրացաւ քուրձ ագուցեալ նմա՝ ածին առ թագաւորն Մանանդայ[2], և յումեքումդ ամի իշխանութեան իւրոյ՝ եւ

կայնամտին և արդարադատին Աստուծոյ յուզեցան՝ ի վերայ խրոխտ և անգառագիւղ գազանին Ասիասանայ. մինչդեռ մրմռայր զայրագնութեամբ տիրել տիեզերաց, և զմղձկեալ սրտին դառնութիւն թափել և յայնոսիկ՝ զոր ոչ էր ածեալ զբռամբ, յեղակարծ ժամանակի սրախողխողեալ բարձաւ ամբարիշտն յերկրէ, և ոչ ետես զփառս Աստուծոյ։ Այլ յետ նորա բարեբախտ որդի նորա՝ որ Մելքիշահն կոչիւր. սա ոչ նմանեաց չար հօր իւրոյ, այլ զբարի ածեալ զմտաւ՝ զնոյն և աբար առ ամենայն հնազանդեալս իւր, յաւէտ առ ազգս Հայոց. զի մտահաս եղեալ բասրէր հօր իւրոյ զնմացուածս, իբր թէ հակառակ եղեալ կենաց մարդկան արեամբ և զրկմամբ խնդացեալ. իսկ ինքն խմաստաբար քաղցրավարութեամբ կարեօք հանդերձէր զամենայն։ Եդեալ արին այն և խոհեմ քան զյոլովս՝ ի թագաւորաց, հոգ տարեալ յամենայնի զի արդարութեամբ վարեսցի և մի ոք լինցի տրտում՝ ի զրկելոց, և հպարտ՝ ի գոռոզից, որ և ապատաբարոյ և մեծախորհուրդ. այլ և տեսիլ մարմնոյն արժանի թագաւորութեան։ Ա՛ ի դոյզն ժամանակի զբոլորն հնազանդեր զտիեզերս, ոչ պատերազմաւ և բռնութեամբ, այլ սիրով և խաղաղութեամբ. և այսպէս բարի անուամբ կալեալ զիշխանութիւնն ամն քսան, վախճաներ՝ ի կնոջէն գեղակուր եղեալ. և անպատմելի խռովութիւն լեալ զամս չորս. զի եղբայր նորա Եղդուշն և որդի նորա Ահքիարուքն՝ զայսոսիկ մարտիւ պատերազմի՝ զբարեյարմարութիւն աշխարհի՝ ի բաց կտրեցին. վասն ոչ ընդ փոյթ միոյ՝ ի նոցանէն տիրելոյ՝ հոսմունս արեանցն իբրև զուխից լիներ, ոչ միայն զինակիր նահատակաց, այլ և առհասարակ քաղաքաց և գաւառաց. և այսպէս բարիքն՝ ի բաց վճարեցան՝ ընդ խզման կենաց թագաւորին. և ապա Ահքիարուքն սպանեալ զԵղդուշն, և յետ նորա ըզԱսզըն, որ թարգմանի կարմիր։ Ա՛ էառ զ[1] օրէ քաղաք, և զուխտն սուրբ զԱնահիտն և զՀաղբատ[2]։

Իսկ յետ Միքայելի կայսեր առնու զթագն Լեքսն։ Յեօթն և տասն ամի սորա Հռոմայեցիք ելին ընդ Ասրակ՝ ի կողմանս Պարսից, խնդրել զքէն վրիժուց տառա-

1 Զորս և այրեաց։ 2 Որ Թէրակ։

պանաց քրիստոնէից՝ ի Սկիւթացւոց և՝ ի Պարսից, հանդերձ Տաճկաստանաւ. և բազումք կրեցին նեղութիւն յորդւոյն բեւլարայ՝ Ալէքս կոչեցեալ, որ էր թագաւոր՝ ի Կոստանդինուպոլիս, գաղտնի և յայտնի նենգութեամբ. քանզի հրամայէ անօրէնն խառնել՝ ի կերակուրն դեղ մահացու և այնպէս տալ նոցա, նոյնպէս և յըմպելիսն, որք ուտէին և մեռանէին. և՝ ի ծուլս ևս նենդեաց զնոսա, որ վտահանային՝ ի նա իբրև՝ ի հաւատակից իւրեանց. իսկ[1] բարբարոսացն խորամանկութեամբ օգնէր, որում հատուսցէ տէր. քանզի և էր իսկ քրիստոնեայ, որպէս և ոչ մայր նորա. զի բազումք մեռան՝ ի Ֆռանկաց. և միայեալքն ունայն դարձան Ընտաք, և առին զնա և զՅերուսաղէմ, երկուքն թագաւորազունք Պայուն և Տօնղրիլն[2], և եօթն կոմսունք. և թագաւորեաց Յերուսաղէմ Կոնտուիրի, և ապա Պաղտոյն, ամս եօթնեւտասան. և Ընդարի ամս իննեւտասան. և այս եղև՝ ի հինգ հարիւր քառասուն և վեց թուին Հայոց: Ցեռաւ սկիւթացի բռնաւորն Իզլ՝ ի յառման քաղաքին Կոստանդնուպաւլ՝ ի զօրացն Պարսից. և ապա՝ ի բազում բաժանի տէրութիւն նոցա. ոմն բռնացեալ՝ ի Խորասան, և ոմն Ընտոլեստանի, և այլ ոմն՝ ի կողմն Կապադովկացւոց և Հայոց[3], և ոմն Անտիպատոս, և այլք յայլ տեղիս. որոց անուանքն անծանօթ են մեզ:

Ի հինգ հարիւր վաթսուն և երկու թուին փոխեցաւ տէր Ռարսեղ, կալեալ զաթոռն ամս երեսուն և երիս. և յաջորդէ տէր Գրիգորիս եղբայր Ներսեհ մեծաշուք պատուով. ոչքա էին յազգէ սուրբ Լուսաւորչին. վասն որոյ և ընդ նատելն իսկ յաթոռն աքանչելի սուրբ հայրապետն Գրիգորիս՝ պայծառացոյց զեկեղեցի զանազան կարգօք և օրինադրութեամբ կանոնական, և ամենայնիւ ջանայր ըստ իւր նախնեացն վարել: Այս փոխեաց զաթոռ հայրապետական՝ ի բերդն որ կոչի Հոռոմկլայ. քանզի իբրև տանէին Յոյնք զԹաւորն և զտէր Պետրոս առ իւրեանս, այնուհետև ոչ

1 ՕՕ. ՚ի Բարբարոսացն:
2 Պեմոնդ և Դանգլեա կամի ասէ: ասել: — Վ. 110:
3 Վասն սուլտանաց Իկոնիոնի

եղեւ յարձակել աթոռ Հայրապետական, այլ ընդ իշխանութիւնն Յունաց, երբեմն ի Աեբաստիա և երբեմն ի Նովք վայրն կոչեցեալ. իսկ սա փոխեաց ի Կլայն Հռովմէական: Եւ պատճառ փոխելոյն այս էր. զի նեղացաւ ի Ակիւթականաց և ի Տաճկաց այսր անդր աճելով, և ապա ետես զբերդն ամուր. բարձեալ զսրբութիւնն իւր և զսպասաք եկեղեցւոյ՝ տարաւ եդ անդ ի պահեստի առ բարեմիտ կին մի իշխանի ազգաւ Ֆռանկ: Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ վաղձանել իշխանին՝ որ էր (տէր) բերդին, և մնաց կինն նորա այրի. զոր աղաչեաց սրբազան Հայրապետն զկինն բարեպաշտօն՝ տալ զբերդն ՚ի Հայրապետն զի լինի նա աթոռ Հայրապետութեան Հայոց, և կինն ետ յօժարութեամբ. և յուղարկեալ սուրբն զկինն յաշխարհն Ակիլկեցւոց առ մեծ իշխանն իշխանաց Հայոց Լեւոն, և նա ետ նմա գիւղս և ագարակս և զայլ կալուածս և ուրախ արար զկինն յոյժ. և ապա յուղարկեաց զնա յաշխարհն իւր:

Ի սմա Լեւոն իշխանս և եղբայրն Ստեփաննէ որդիք էին Լևոնի, որդւոյ Կոստանդեայ, որդւոյ Ռուբէնի, Թոռունք յառաջագոյն ասացելոց առն, որ յազգականութենէ և ի զօրացն Գագկայ՝ Ընծրունեաց. սոքա ընդարձակեցին զսահմանս իւրեանց քաջութեամբ տիրելով բազում քաղաքաց և գաւառաց, և այլոց բազմաց. և առին զանուանի քաղաքս աշխարհին՝ զՏարսոն, զԱիս, զԸնտանա, զԱելևկիա, և որ շուրջ զնոքօք գաւառք և գիւղք և քաղաքք: Եւ լուեալ կայսրն Յունաց որ Ընկեքս կոչիւր, առաքէ ՚ի վերայ Հայոց բազում զօրօք, և ըմբռնէ խաբէութեամբ զԱտեփաննէ, և ետ սպանանել: Իսկ Լեւոնի առեալ զեղբօրորդիս իւր՝ զՌուբէն և զԼևոն, եդ զնոսա ՚ի բերդ մի ամուր, և ապա էառ Լեւոնն զքէն վրիժու արեան եղբօրն ՚ի Հռոմոց անտի՝ որ բնակեալ էին յաշխարհին, զի զբռնացեալսն կոտորէր, և զայլսն փախստական առնէր յաշխարհէն, և ինքն տիրեր ամենայն գաւառաց մեծաւ զօրութեամբ: Իսկ ՚ի հինգ հարիւր վաթսունևերկու Թուականին՝ յորում վաղձանեցաւ Յասեղ, փոխեցաւ առ Քրիստոս մեծ և հռչակաւոր վարդապետն Գէորգ՝ որ ըստ քաղցրութեան բարուցն իսկ՝ Մեղրիկ կոչէին:

Ա՝ կարգաւորէ զՀռչակաւոր ուխտն որ կոչի Արտազարկ. անդադար լինէր ի պաշտօնն զցայգ և զցերեկ, և հանապազ պահօք կատարել, և առանձին ումեք ոչ ինչ լինել՝ բայց ի հասարակաց տանէն։ Ի սոյն ամի և արքին Հռոմայեցւոց Տանղլի իշխող քաղաքին Կոնտոքայ՝ վախճանէր զեղակուր լեալ ի պատրիարգէն Իւրեանց։

Եւ առնու զկաթուղիկոսութիւն Հայոց յետ տէր Յարսեղի՝ ամս չիսուն և երեք՝ Արիպորիս։ Ա.յս ըստ քանչելիս Արիպորիս ձեռն ի գործ արկեալ շինեաց զեկեղեցի հրաշազան գմբէթարդ ի նոյն բերդն[1]. և սկսաւ թարգմանութիւն առնել աստուածային գրոց, և բազում գիրս ետ թարգմանել ի հայ լեզու զմի՛ր ինքեամբ, և զմի՛ր այլոց ձեռամբ։ Յաւուրս սորա էին վարդապետք անուանիք և իմաստունք, Ներսէս սքանչելի հարազատ նորին կաթուղիկոսի, և միւս Ներսէս եպիսկոպոս[2], և Ներսէս Ամբրոնացի՝ եղբայր Հեթմոյ, որ թարգմանեաց զմեկնութիւն տեսլեան Յովհաննու աւետարանչի, և զպատմութիւն Արիպորի պաւն Հռոմայ, և զօրինադրութիւն սրբոյն Բենեդիքտոսի. արար և մեկնութիւնս յինքենէ սաղմոսացն Դաւթի, առակացն Սողոմոնի, և սուրբ պատարագամատուցին, և աղօթից Յովհաննու աւետարանչին, որոյ սկիզբն է այս, Ի սկզբանէ էր բանն։ Շ՝ինեաց եկեղեցի հրաշազան ի վանքն որ կոչի Սկևռա, Հուպ ի բերդն անտառ Ամբրոն. և կարգեաց զպաշտօն վանիցն ըստ օրինակի այլոց ազգաց՝ սարկաւագաւ և դպրաւ և անծածկոյթ գլխաւ, զոր յոլովք դարուվեն ի Հայոց։ Եւ միւս ևս եպիսկոպոս անուն Ագնատիոս, որում հրամայեաց կաթուղիկոսն մեկնութիւն առնել աւետարանին Ղուկասու, և նա ոչ առ յանձն. մինչև տեսանէր ի տեսլեան տուն մի լուսաւոր զարդարեալ ամենայն վայելչութեամբ, և զամենայն վարդապետս եկեղեցւոյ անդ խրախացեալս. կամեցաւ և ինքն մտանել ի ներքս, արգելուին զնա և ասէին, եթէ Ոչ ան զի ոչ աշխատեցար ի մեկնել զաւետարանն՝ ոչ մտցես այսր. և զարթուցեալ սկսաւ մեկնել խորհրդական և մտաւոր բա-

1 Իմա՛ ի Հռոմկլայ։ Ներսէս եպիսկոպոս, և Թուխ սը-
2 Անծանօթ է երկրորդս այս խալ կրկնեալ։

նիւ։ Եւ այլ ոմն վարդապետ Սարգիս անուն աքան-
չելի՛ ի վանքն՝ որ կոչի ասորերէն Քարաշիթաւ, որար
մեկնութիւնս եօթանեցունց թղթոց կաթուղիկէից,
նախերգանօք և յորդորակօք և ընդարձակ և առատ
Ճառիւք։ Եւ միւս ևս եպիսկոպոս Յովսէփ անուն, այր
երևելի՛ ի կողմանս Կոտիոքու։ Ունակ յարևելս արք ա-
նուանիք և գիտնականք լուսաւորչաց եկեղեցւոյ՝ յա-
ւուրս Նէոսկորոսի, այր մեաւոր և հանճարեղ, գիտող
տօմարական արհեստից և աստուածայնոց գրոց մեկնող՝
Կնանիա վարդապետ. սորա ասեն՛ ի մի հաւաքեալ՛ ի
մեկնութիւնն առաքելոյ զբանն Կիւրեմի և Յովհան-
նու Սակեբերանի, և Կիւրղի և այլ սրբոցն, արարեալ
համառօտ վասն դիւրահասութեան ընթերցողաց. ա-
րար խորհրդական և մեաւոր տեսութիւն և համեմա-
տութիւն աւետարանացն օրինակս, գրեաց և լուսաւոր
իմացուածս վասն խորհրդական սրբասացութեանն՝ որ
յեկեղեցիս ուղղափառաց խաչեցարիւ ասի, և զներքո-
ղեան շողակաթին։ Այնպէս և մեծիմաստն գիտու-
թեամբ քան զյոլիս և հանճարեղն ամենայնի, մտա-
հարուստն Յովհաննէս՝ Սարկաւագն կոչեցեալ՛ ի Դաղ-
բատ. սա բազում ինչ աշխատասիրեաց՛ ի գիրս՝ յիշա-
տակ բարի թողեալ. սա զբազմաց փափաքելին և ոչ
ձեռնհաս՝ զհաստատ և զանշարժ տօմարն կարգեաց
Հայոց, փոխանակ շարժականին և անհաստատնոյն. ա-
րար և զմիաբանութիւն ամենայն աղգաց տուժարին
ընդ Հայոց. վասն զի յոյժ իմաստուն էր այրն, և աս-
տուածային ընորհօք զարդարեալ. սորա բանքն ամենայն
իմաստասիրական ոճով է՝ որպէս զԴիոդորի Կոստուա-
ծաբանի և ոչ պեղծուկ։ Սա գրեաց Ճառս ներբողա-
կան՛ ի մեծաւոր արքայն Հայոց Տրդատ, և՛ ի սուրբ
հայրապետն Կերսէս, և՛ ի սքանչելին Սահակ և Մես-
րոպ. արար և շարականս Ա Լանդեանց քաղցր եղանա-
կաւ և յարմար բանիւ, որոց սկիզբն է այս. Պայծառա-
ցան այսօր սուրբ եկեղեցիք։ Գրեաց և Ճառս ներբո-
ղականս նոցունց. գրեաց սա և գիրս աղօթից. գրեաց
և օրինակս ստոյգ գրոց։ Եւ կարի յոյժ սիրէր զսա Թա-
գաւորն Ա ըստ Գաւիթ, Հայրն Գեմետրէայ, պահն
Գէորգայ և Գաւթի. այնքան զի մինչ լսէր զգալուստ
նորա՝ յոտն յառնէր և ելանէր ընդ առաջ նորա և խո-

եարհեղուցեալ զգլուխն խնդրէր՝ ինամանէ օրհնութիւն. և նա եղեալ զձեռն՝ ի վերայ գլխոյ նորա զայս սաղմոսս ասէր. «Որ զիրաւութիւն ծառայ իմ, իւղով սրբով օծի զնա. ձեռն իմ ընկալցի զնա և բազուկ իմ զօրացուսցէ։ Ոչ մեղեսցէ նմա թշնամի և որդի անօրէնութեան մի չարչարեսցէ զնա»։ Եւ՝ ի պատճառս սորա սիրէր Թագաւորն զազգս Հայոց։ Որեք եղև սմա վասն անապատակ գնացին որոշել զոմն՝ ի խորհրդական պատարագէն Օմզոմա անուն. և նա փոխանակ զղջանալոյ և ապաշխարելոյ՝ խորհէր սպանանել զաքանչելին. և օր մի պատահեալ նմա միջոցեւս գայր նա յայրէ անտի՝ որ՝ ի ներքոյ կայ վանիցն՝ հայելով՝ ի վերայ գետոյն, ըմբռնեալ անաւձիւն ընկէց յերկիր և հարաւ՝ ի վերայ նորա։ Իսկ սուրբն զի խմաստուն էր, ասէ ցնա. Որդեակ Ստեփաննոս, մի սպանաներ զիս. և ասէ ցնա յանդուգն. Մինչև ցայժմ Օմզոմա էի, իսկ այժմ փոխանակ միոյ Նո-ի բազում յաւելուս Ստեփաննոս. քանզի աւելի անուն նորա Օմզոմա էր. դու ընդէր սպաներ զիս, զի հաներ յեկեղեցւոյն։ Իսկ ցնա խմաստասէրն. Եւ զարձեալ մուծից զքեզ յեկեղեցի։ Եւ եկեալ՝ ի վանս ասէ ցեղբարսն. Որ ինչ ասէին զերկնօրէս զայսմանէ կարծեմ թէ սուտ է. ահաւասիկ մուծանեմ զսա յեկեղեցի։ Եւ հրամայեաց եկեղեցապանին առնել զնա աւազ երէց. բազում քրթմնջլուն էր վանն այնորիկ, որպէս թէ անարժան էր. և նա կաշառս էառ և եմոյծ զնա յեկեղեցին։ Իբրև եհաս ժամ խորհրդականի պատարագին, եւ Թշուառականն՝ ի բեմն անդր զի մատուսցէ պատարագ. և եկն վարդապետն՝ ի գաւիթ անդր՝ ի մէջ առեալն հանդէպ սրբոյ սեղանոյն, եբաց զգլուխն իւր և սկսաւ աղօթել. և վաղվաղակի ոչի էար եմուտ յայրն աներկիւղ, և ընկէց զնա՝ ի բեմ անտի յատակս տաճարին, և սկսաւ լակել զնա յոյժ. և հանին զնա արտաքս՝ ի տաճարէ անտի, որպէս զմոզիա. և երկիւղ մեծ անկաւ՝ ի վերայ տեսողացն։ Եւ այսպիսի բարի քաղաքավարութեամբ կէցեալ յաշխարհին, եւ Թագաւորն զնա յարևելից կուսէ եկեղեցւոյն մեծի առ դուռն փոքրագոյն եկեղեցւոյն, զոր յետոյ քակեաց եպիսկոպոսն Հառաջաստ և շինեաց հրաշալի շինուած,

ուր զանկան կախէին, յարմարեալ ՚ի նմին և եկեղեցիս. և եղև վաղձան սրբոյն ՚ի հինգ հարիւր եօթանասուն և ՚ութ թուականին։ Եւ զկնի ամի միոյ վաղձանեցաւ սուրբ լուսաւորիչն Գրիգոր վարդապետ Պարսկայ որդի, որ գրեաց զկանոնական օրինադրութիւնս պատկերակարման և սիրտանացու ՚ի խնդրոյ քահանայի միոջ որում՝ անուն էր Պերգայութիւն, ՚ի քաղաքէն Գանձակայ։ Եւ միւս ևս աքանչելի վարդապետն՝ զոր Յոհաննէս որդի կոչէին՝ Գրիգոր անուն. սոքա երեքին յաշխարհէն Գանձակայ էին, ուստի և ես։ Գնեցի եղև զի յաւուր միում նստէին երեք այս արքս աքանչելի. եկն անդ այր մի չինական, և ասէ ցնոսա. Արդեօք որ գիտէ ՚ի ձէնջ Թէ որդի իմաստնագոյն էցէ. զայս իբրև ծաղրական ասաց։ Պատասխանի ետ Յոհաննէսի որդին, և ասէ. Ես ասեմ քեզ. մինչդեռ էաք ՚ի մերում աշխարհին՝ ես կտրող էի և կարօղ. իսկ Պարկաւագս կարել միայն գիտէր. իսկ այժմ սա կտրէ և կարէ, և քաղում նկարս յաւելու ՚ի վերայ. զայս առակաբար վասն յիմարութեան[1] նորա ասաց։ Ո՞ ՚ի այնպէս փոյթ էր այրն յոտսուճն, մինչ պատահեաց յաւուր միում գնալ յայրն յորում էին գրեանքն, և այլք ընդ նմա. իբրև եկին որ ընդ նմա էին և փակեցին զդուռն, նա Թաքոյց զանձն ՚ի ներքս. այսպէս գիտեալ նոցա՝ եթէ նախ էլ նա։ Իբրև անցին քաղում աւուրք ՚ի վերայ՝ գայձեալ գնացին յայրն ՚ի պէտս ինչ, և տեսին զնա անդ և աքանչացան, և հարցանէին Թէ՝ Որպէս սպրեցար առանց կերակրոյ և ըմպելոյ. և նա եղոյց նոցա զգրեանն զոր ընթերցեալ էր, և ասէ. Այդ է իմ կերակուր և ըմպելի, զոր կերայ և արբի զաւուրս զայսոսիկ։

Իսկ ՚ի հինգ հարիւր ութսուն և ութ Թուին եղև չարժ սաստիկ և կործանեցաւ քաղաքն Գանձակ, և տապալեցան շինուածքն որ ՚ի նմա ՚ի վերայ բնակչաց իւրոց. և եկն Թագաւորն Պարսից Գեմետրէ՝ հայրն ԳաւԹի և Գէորգայ, և տարաւ զգերուանն յաշխարհն իւր։ Վասն և լեառն Մհարայ ՚ի չարժմանէն, և արգել զձորակն որ անցանէր ընդ մէջ նորա, և եղև ծո-

1 Իմաս վասն միամտութեան շինականին, իսկ տպագիրն Մոսկուայ դնէ Էմաստութեան՝ ՚ի Սարկաւագ ձգելով զբանն։

վակ, որ է մինչև ցայսօր, և լինին ի նմա ձկունք ապ-
նիւք:

Իսկ աքանչելի Հայրապետն Գրիգորիս օր ըստ օրէ
յաւելոյր ի բարեգործութիւն և ի պայծառութիւն ե-
կեղեցւոյ. և էր սիրեցեալ նա յամենայն ազգս. և եղև
նմա գնալ ի տուրբ քաղաքն Երուսաղէմ, զի երկրը-
պագեսցէ տուրբ տեղեացն տնօրինականաց. և իբրև
եհաս նա ի քաղաքն Ընտիոք՝ եւ ամենայն քաղաքն
ընդ առաջ նորա ջահիւք և լապտերօք, և մեծաւ պա-
տուով տարեալ նստուցին զնա յաթոռն Պետրոսի ա-
ռաքելոյն[1]: Եւ իբրև եհաս նա Երուսաղէմ, ազգն
Յունկաց՝ որ էշխէին քաղաքին և պատրիարգն նոցա
առաւել սէր հաստատեցին ընդ ազգիս մերոյ վասն նո-
ա. զի էր նա բարի տեսլեամբ և գիտութեամբ տուրբ
գրոց ջարդարեալ. զհին դաշինս սրբոյն Գրիգորի և
Տրդատայ և Կոստանդիանոսի կայսեր և Սեղբեստրոսի
վերստին նորոգեցին առ սովաւ: Եւ այսպէս քաղաքա-
վարութեամբ կեցեալ փոխեցաւ առ Քրիստոս լի ա-
տուրբք և կատարեալ առաքինութեամբ. և փոխանոր-
դէ զաթոռ նորա եղբայր նորին՝ Ներսէս, զեօթն ամ:
Այս Ներսէս առաւելեալ էր իմաստութեամբ քան
զյոլով ի ժամանակի անդ. ոչ միայն քան զայոց
վարդապետս, այլ քան զՅունաց և զՍորուոցն. այն-
քան մինչ զի համբաւ իմաստութեան նորա տարածե-
ցաւ ընդ ամենայն ազգս. և իմաստասէր ոմն Կոստանդ-
նուպօլսեցի՝ անուն Լօտրա[2], լուեալ զհամբաւ նորա բար-
ձեալ զգրեանն իւր ի վերայ գլուատուց, եկն փորձել
զնա և լսել զիմաստութիւնն նորա. և եկեալ աւուրս
բազումս խօսեցաւ ընդ նմա և եգիտ զնա անփորձ ա-
մենայնիւ, այլ և լցեալ Հոգւով սրբով: Իբրև գնաց
նա ի քաղաքն Կոստանդնուպօլիս, հարցանէին զնա թէ
որպէս էր համբաւն՝ նոյնպէս է թէ ոչ. և նա ասէր.
Որպէս լուաք նոյնպէս և տեսաք. զի նոր ոմն Գրիգոր
աստուածաբան յարուցեալ է. և զարմացուցանէր զա-
մենեսեան վասն նորա: Եւ զի էր նա այր բանաւոր, նա՝
բազում ինչ կարգեաց յեկեղեցիս քաղցր եղանակաւ,

1 Յաթոռն Եպիսկոպոսական՝ Պետրոսի:
2 Անն է Թէոփիլոս:

խոսրովային ոձով շարականս, մեղեդիս, տաղս և ոտա
նաւորս. քանզի նորա է յարութեան օրհնութիւնն
երրորդ կողմն, և Յստուածածնին փոխման երկու ա
ւուրցն, և Պօղոսի Պետրոսի օրհնութիւնն և մանկունք
և համբարձին, և Որդւոյն որոտմանցն օրհնութիւն
Որ էնն յէութեան որդին, և Ընտանի շարական, և եր
կու Ծնեղոսի, և մի քառասանիցն, և մի առաքելոցն,
աւագ շաբաթուն օրհնութիւն երկուշաբաթուն, երեք
շաբաթուն և չորեքշաբաթին, և երկու շարական յա
րութեանն, և Ընծայից, և հրեշտակապետացն,
և սրբոցն Վարդանանցն, և այլ բազում շարականս։ Ը
րարս զքարոզուրբ պատարագին քաղցր եղանակաւ, և
տունս շարականաց նմին խորհրդաբար, և երկու գանձ
ըստ պրոց անուան իւրոց, մի Վարդավառին և մի Փոխ
ման Յստուածածնին, որպէս Նարեկացին զՅոզուոյն
գալստեան և զեկեղեցւոյ և զսուրբ Խաչին. որ գրեաց
զիրս աղօթից յոդնազան քառիւք և լմաստասէրական
ոձով. և զներբողական սուրբ Յակոբայ Ծբնայ, և
զառաքելոց։ Նոյնպէս և սա կարգեաց զհամառօտն
Պատթէոսի աւետարանին լուսաւոր և աւատ մտօք,
մինչև յայն տեղին որ ասաց տէրն. Պ՚ի համարիք եթէ
եկի լուծանել զօրէնս. և այլն ոչ գիտեմ թէ վասն
ինչ պատճառի խափան եղև։ Գրեաց նա և ձառս
հրեշտակապետաց ըստ ոձոյն Դիոնէսեայ Ընդհատ
ցոյց. Թարգմանեաց և բազում ձառս վկայից Ընտր
ծոյ։ Նա այսպէս բարւոք կարգաւորութեամբ փոխե
ցաւ առ Քրիստոս յոյն ամենեցուն ցանկալի և երա
նելի մահուամբ։ Ո՚վ այնպիսի էին կամք սրբոյն. զի
թէ հնար եւէ՝ ոչ ոք խօսէին խօսա աշխարհական՝
քայց՚ի գրոց, ոչ՚ի գինարբուս, ոչ յայլ ուրախութիւնս.
վասն այնորիկ և արար նա երգս և ուսոյց այնոցիկ որ
պահէին զբերդն, զի փոխանակ վայրապար ձայնից զայն
ասասցեն. որոյ սկիզբն է սաղմոսն Դաւթի, “Յիշե
ցի՚ն գիշերի զանուն քո տէր”. և այսպէս խորհրդա
բար ըստ կարգի. Ո՚արթնք փառք իմ. որ այժմ ասի
յեկեղեցի՚ն ժամ գիշերային պաշտամանն։ Կոչեցաւ
երբեմն՚ի մեծէն Ընդ՚քան՝ որ էր փեսայ ինքնակալ Թա
գաւորին Հռոմայեց Անտիոքին, և եկեալ էր՚ի Պամե
տիա քաղաք Անտիոքացւոց, և հարցեալ ցնա զան խո

ընկեր և դժուարիմացս գրոց, և յամենայնի կատարեալ
եւտես գնա, և մեծարեաց յոյժ։ Դարձեալ գրեաց առ
նա գրով տալ նմա գնոստովանութիւն Հայոց, և ըզ-
խորհուրդս տօնից և զառաջաւոր պահոց, և զխորհուրդ
ամ քնութեանն՝ զոր ասեմք ի Յիսուս Քրիստոս յետ
միաւորութեանն, և այլ կարգաց եկեղեցւոյ՝ որ ոչ է
միաբան այլոց աղգաց. իսկ (նա) համաուօտ և յայտնի
բանիւք ետ նմա զնդրեցին, զոր ասէ եկեղեցի Հայ-
աստանեայց ուղղափառութեամբ*..... Օ այս իբրև
ընթերցան, գովեցին զհաւատս Հայոց ամենայն իմաս-
տունքն Յունաց. և զի յամենայնի հանձարեղ էր՝ նե-
սէս, արար և առաք խորհրդաբարս ի գրոց և հանե-
լուկս, զի փոխանակ առասպելեաց զայն ասացեն ի գի-
նարքուս և ի հարսանիս. և էր ինքն հեզ ամենայնիւ
և պարկեշտ, արժանաւոր այրն Աստուծոյ։ Եւ յետնո-
ւա յաջորդէ զաթոռն՝ Գրիգոր ամն քսան։ Սա ընդ-
նեաց զգեղապատճոյճ եկեղեցին ի Վլայն, և զարդարեաց
զնա մեծապէս։ Եւ ապա Գրիգորիս տղայն մի ամ,
քուերորդի նոցունց. և էր նա հասակաւ գեղեցիկ և
բարիւք տեսանելով. բայց զի մանուղք բազում էին նո-
ա՝ արկանէին բարուրս ինչ ի վերայ նորա եպիսկո-
պոսունքն նախանձոտ, և մատնեցին զնա ստութեամբ
Լանի Թագաւորի, և նա հրամայեաց արգելուլ զնա
ի բերդ մի, մինչև քննութիւն լոյծ ձշմարտութեամբ
ման նորա, և ինքն գրեաց Թուղթս առ վարդապետս
և եպիսկոպոսունս Հայոց աշխարհին, եթէ զինչ կամք
իցեն նոցա վասն այսր. և մինչդեռ պատասխանի ընկա-
լեալ՝ վաղճանեցաւ կաթողիկոսն այսպիսի մահուամբ.
յաւուր միում տեսին զնա անկեալ ընդ սարխապ բեր-
դին ունելով կտաւ զմիջաւ իւրով. և զայս ամանք ա-
սէին եթէ մախաղք նորա ընկեցին զնա, որք ակն ու-

* Քանզի բազում անգամ տը-
պաղութեամբ հրատարակեալ է՝
և ծանօթ է՝ զանց առնեմք ասաս-
նօր զգլուխ դաւանութեանս, որ և
արտաքոյ կարգի պատմութեանն.
և ունի վերնագիրը զայս.

Գիր հաւատոյ դաւանութեան Հայ-
ոց պանեայց եկեղեցւոյ. գրեալ ի ներ-
սին եպիսկոպոսէ, յերիցուէ կաթողիկո-
սին Հայոց Գրիգորէ. ի խնդրոյ գերա-
պատիւ ֆեսայեն ենփնակալ Ռագաւորին
Հոռոմոց ռեձի Պրոպոսպոսապորին Աւգե-
սէ, յորժամ էլ յարևելս և էր ի Մաղե-
սէ, յորժամ էլ յարևելս և էր ի Մաղե-
պէս մայրապաղատն կիլիկեցւոց, առ-
նօր հեպեելով, և նմին կոլմամբ էրէ նո-
րին կաթողիկոսի. ի Ռուին ՈԺԴ։

Բանիւ պուղնատէ ֆոն խօսելով. և
այլն։

նէին ժառանգել զաթոռն, յորոց զմինն առէին զՅով-
հաննէս, որ յետ նորա կալաւ զաթոռն, և զՅնանի՝ որ
եղև հակառակաթոռ ՚ի Սևաստ՝ յիշխանութեանն
սուլտանին Հոռոմոց, և այլք եպիսկոպոսաց անտի
վեց. և կէսք առէին եթէ ՚ի գիշերի կամեցաւ փախչել
՚ի բերդէն, և հնարեցաւ ինջանել կտաւով, և կտրեալ
կտաւոյն անկաւ և մեռաւ. զոր զՀիմարիտն միայն ծած-
կագէտն Յստուած գիտէ: Եւ ապա տէր Դրիգոր Ա-
պիրատն՝ եօթն աւր: Եւ այնուհետև սկսան մախոռքն
Դրիգորիսի զմիմեանսք ելանել, թէ ո՞նստցի յաթոռ
հայրապետական. և Յովհաննէսն զի ընտանի էր թա-
գաւորին Լևոնի՝ բռնացաւ և կալաւ: Իբրև ետես զայս
մուս եպիսկոպոսն Ընանիա, չոգաւ նա առ սուլտանն
զոր Հոռոմոց կոչեն, ետ նմա կաշառս և նստաւ կաթո-
ղիկոս ՚ի Սևաստ, զի առեր զինքն յաղգէն կաթուղի-
կոսին Պետրոսի, որ կայ Թաղեսլ անդր: Եւ այսպէս
բաժանեցաւ աթոռ սրբոյն Դրիգորի յերիս. մի՝ բուն
զոր էառն Յովհաննէս, որ էր ՚ի Հոռոմկլայն, և միւսն
՚ի Սևաստ, զոր ապստամբեցաւ Ընանիա, և միւսն ևս
՚ի կղզւոջն Աղթամարայ Դաւիթ անուն:

Նոքա յետ Աղէքսի կայսեր թագաւորէ Կալօժանն,
և յետ նորա Մանուէլն: Ընդ ՚ի հինգ Տարիս երկրի-
դի և ինքնասնանութեերորդի Թուականութեանն Հայոց՝
ազգն Հոռոմայեցւոցն զօրաժողով լեալ բիւրք բիւ-
րուց, պիտեցին յայսկոյս Ովկիանոսի ընդ Արեւելս, ըստ
առաջին անցից զոր նշանակեցաք ՚ի հինգ Տարիս քա-
ռասնևվեց Թուականին, և մոռացան զանհնարինն ե-
րևելիանս զոր եցոյց որդին բեելիարայ Աղէքս՝ անդա-
նօր այնօրիկ, ոչք ոչ իմացան զիարդ խաբէութիւն
նորա, համարելով զինա հաւատակից և պաշտօնեայ
Դրիստոսի. վասն այնորիկ և տքա աստանօր զի չէի-
շեցին զանցս աղէտից՝ ինքեանք առաւել խաբեալք և
պատրեալք ՚ի նորին Թուականէն, որոյ անուանն ըստ նե-
գեաքրիստոս կոչի, սոյնպէս և տորայս տարտորշ և հե-
ռի ամենայնիւ ՚ի գործս և ՚ի կրօնս Աստուածային, Ա-
նիլ անուն որ դրժեաց զՀոռոմայեցին մահարար կե-
րակրօք և ըմպելեօք[1]: Բայց յաւուրս հաւուն որ

1 Խիստ են բանքդ և դառաստանքդ:

Ղեքսի կամ ոմն եկն Երուսաղեմ Ինտիոք, և իբ-
րև եմուտ ի տաճարն սրբոյն Պետրոսի առաքելոյ և հա-
ղորդ եղև պաշտամանն, երևեցաւ նմա տուրբ առաքեալն
Պետրոս և ասէ. Ի պատուհանին եկեղեցւոյդ Թաղեալ
կայ գեղարդն՝ որով խոցեցին զՔրիստիչն մեր, առեալ
տարցես յաշխարհն քո. և նորա առեալ խնդութեամբ
եկն ի Պատանդինուպոլիս. և լուեալ Ղեքսի կայսեր՝
մեծարանս արար նմա, և ետ նմա գանձս բազումս, և
խնդրեաց ինամանէ զգեղարդն, և եթող առ նմա կոմն,
և գնաց զճանապարհս իւր:

Իսկ ի վեցհարիւր երեսունևվեց Թուին յարեաւ
բռնակալ ոմն Քրդուդ ազգաւ Սալահատին անուն, ի
Սասեացն-յոտնէ[1], ծառայ լեալ տուլտանին Երտի-
նայ: Սա զօրս կազմեալ բազում. յոյժ, ջոգաւ ի վե-
րայ քաղաքին Երուսաղեմի, և էլ Թագաւորն Երու-
սաղեմի Ֆուանկ ազգաւ ընդդէմ նորա զօրու ծանուս,
և նենգ գործեցին նմա զօրքն իւր ծուլերերեայ. զի տէրն
Տրապօլու բարեկամ լեալ ընդ Թշնամիսն՝ մատնէ զնա ի
ձեռս նորա, այսպիսի յեղանակաւ: Էր տօթ յոյժ ժա-
մանակն, և տեղին անջրդի. և խորհրդակից լեալ կոմ-
սին ընդ Թագաւորին՝ առնուլ իւրեանց կայանս զապա-
ռաժն անջրդի. իսկ Թշնամիքն կալան զեզրն Յորդա-
նանու. իբրև խմեցաւ պատերազմին միջօրէին, երիվարք
զօրուն քրխատանէից, քանզի պաղեալք էին ի ծարա-
ւոյ՝ իբրև տեսին զջուրն, քարշեալ զկեծեալսն ընկե-
ցին ի ծովն ի մէջ Թշնամեաց, և նոցա տուր եղեալ
յանխնայ կոտորեցին: Իսկ Թագաւորն Երուսաղեմի
զի այր քաջ էր, զբազում կոտորեաց ի Թշնամեացն
անձամբ իւրով. իբրև տես եթէ անհնար է զերծա-
նել նմա, զի սպանին և զերիվար նորա՝ կամաւ ետ զինքն
ի ձեռս նոցա. և նոքա երդուեցին պահանջեալ ի նմանէ
զի մի այլ տուր հանցէ նոցա, Թողին զնա. և գնաց յաշ-
խարհն իւր. և ինքեանք չոգան ի վերայ Երուսաղեմի
և առին զնա և որ շուրջ զնովաւ քաղաքք. կոտորեցին
զամենեսեան, և խաւարեցաւ արեգակն զլոլով ժամս:
Եւ տիրեցին Սալահատնեանք Պաղեստինի և Եգիպ-
տոսի և Մինջազետաց. և մեծ մասին աշխարհիս Հայ-

[1] Ըստ կարծելոյ ոմանց ի Մերայոյ:

ոց, ինքեանք և Թոռունք իւրեանց, որ կոչին Արլեանք, յորոց կին Մելիք Քէլմ, և Մելիք Աշրաֆին[1], և այլ սուլդանք, որ տիրեցին բաղում աշխարհաց։

Իսկ Կիւրիկէ Բագրատունի որ ի Լօռէ քաղաքէ, զամենայն ժամանակս իւր կացեալ ընդդէմ Վրաց՝ ի հաստատութեան պահէր զհայրենիս իւր. և յետ մահուան նորա դաւեալք ի Վրաց որդիք նորա՝ ելեալ ի տանէ հայրենեաց գնացին ի Պարսիկս, Դաւիթ և Աբաս. և առնուն ի նոցանէ ի ժառանգութիւն զՏաւուշ և զՄաճնաբերդ և զայլ տեղիս. և ապա յետ առնուլոյ առնուն զարձեալ Պարսիկք ի նոցանէ զՏաւուշ. և նոքա բնակեն ի Մաճնաբերդ, և փոխին մահուամբ յաշխարհէ։ Եւ յաջորդէ զտեղի հօրն՝ Դաւթի՝ որդի նորա Կիւրիկէ, այր բարեբարոյ և կատարեալ ի գործս առաքինութեան քան զհարս իւր. և բարիոք փոխեալ յաշխարհէս Թոռու ժառանգակալ զօրդին իւր զմանուկն Աբաս երկոտասանամեայ. սա առնու իւր կին զդուստրն Սարգսի բարեպաշտ իշխանի, որդւոյ Օթաքարիայի, որդւոյ Ահրամայ, զբոյր մեծամեծ իշխանաց՝ Օպաքարէ և Իւանէի՝ Լանա անուն. սոցա գործքն յոլովք են, զոր իւրում տեղւոջն ասասցուք։ Եւ կեցեալ Աբաս ամս երկուս ընդ ամուսնոյն իւրոյ, վաղճանի ինն եւ տասնամեայ. սորա զաւակ ոչ եղև։ Իբրև եաես քոյր նորա Խաւրինեա անուն՝ եթէ բնաջինջ լինին յազգէն, անհնարին սգով վարանէր. և ապա ասացին նմա. Լ կին մի որ ունի մանուկ մի ստնդիայ յեղբօրէն քումմէ. ապա զուարթացեալ կնոջն առնու զտղայն և մնուցանէ, և անուանեաց զանուն նորա Աղսարթան, որ եղև ժառանգակալ Մաճնաբերդին, այր աստուածապաշտ և քահանայասէր։ Սա որ եհաս յաւուրս մեր. սորա ի ծերութեան ցաւեցին ոտք. ընդ սա խաբէութեամբ վարեցաւ Դաւիթ իշխան Կոռբերդին. զի էր և նա յազգէն Բագրատունեաց, հայրն Վաասակայ իշխանին, որ շինեաց զեկեղեցին հրաշալեան ի վանքն որ Ընձոյեան կոչի հուպ ի Կոռ-բերդն, առաջնորդութեամբ և ձեռնտուութեամբ արքեպիսկո-

1 Մալէք էլ-Քամէլ, որ սիրեր Աշրաֆ, 1250–1254. բայց են և յամս 1218–1238. Մալէք էլ- այլք միջակարգեալք սոցին։

պոսին Յովհաննիսի Տուեցւոյ [1], քաղաքին Շաւքորոյ և Պարզմանայ, և Արզէվանիցն և Տէրունականին և Տաշրայ և այլ կողմանց: Յիշխանութեան Վահրամ իշխանին եղև աւարտուճն եկեղեցւոյն, որ օծաւ և կընքեցաւ յանուն սրբոյ Աստուածածնին:

Ի վեց հարիւր ութսունևինն Թուին Հայոց մեռաւ այր սուրբ և առաքինի եպիսկոպոսն Յովհաննէս [2], որ յոլով քառասունս անստուաղութեամբ անցուցանէր: Իսկ Պաւթի իշխան՝ նոր-բերդին խաբեայ զմանուկն Աղասրթան և վեցասայոյց զնա՝ի դուստրն իւր, և ինքն տիրեաց Վանանբերդոյ. և ապա եհան զդուստրն՝ի նմանէ: Իսկ Աղասրթանայ իւր արարեալ զբնակիչս բերդին, և յանկարծակի յեղակարծ ժամու ըմբռնեալ զՊաւթի ամենայն ընտանեօք՝ հանին արտաքս՝ի բերդէն, և ետուն զբերդն Աղասրթան. և նա յետ ժամանակայ՝ի կենդանութեան իւրում ետ զիշխանութիւնն յորդին իւր Վիւրիկէ, և ինքն կրօնաւորեցաւ՝ի վանքն որ կոչի Պետակիցք. և Վիւրիկէի եղեն որդիք, և անուանք նոցա միում՝ [3] Փալհաւան, և միւսոյն՝ Վահաղնաթին, և երրորդին՝ Աղասրթան:

1 ՕՕ. Ո–ենց–ոյ կամ Օյնէց–ոյ:
2 Վերոյիշեալ Տուեցին:
3 Ա. Գ. Փոյ Փահլաւան:

Ը.

ՎԱՍՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԼԵՒՈՆԻ՝ ՈՐ Ի ԿՈՂՄԱՆՆ ԱՐԵՒՄՏԻՑ, ԹԷ ՈՐՊԷՍ ՅԱՌԱՋԵԱՑ ԵՒ ԲՌՆԱՑԱՒ ՑՈՑԹ

Մինչև ցայս վայր էր պատմութիւնս երկօք աշխատութեամբ հաւաքեալ՝ ի նախագրելոց. իսկ որ առաջի կայս մեզ ասպարէզ պատմութեան՝ է որ ականջալուր, և է որ ականատես:

Յորժամ իբրև մեռաւ մեծ իշխանն Լեւոն, որդին Լևոնի, որդւոյն Յոստանդեայ, որդւոյ Թագաւորացունն Ռուբենայ յաշխարհին Կիլիկեցւոց, էառ զիշխանութիւն նորա Ռուբէն անուն՝ որդի Ստեփանեայ, զոր սպան Ընդրոնիկոս նենդիւ զօրավարն Յունաց. և յետ սակաւ ժամանակաց վաղճանեցաւ և նա. և էառ զիշխանութիւնն[1] այր քաջ և պատերազմող՝ անուն նորա Լեւոն:

Այս ընդ տիրելն՝ իսկ և իսկ ընդարձակեաց զսահմանս տէրութեան իւրոյ. զի եւ պատերազմ ընդ շրջակայ ազգան, և յաղթեաց քաջութեամբ բատ անուանն ա-ռիւծաբար, զի Լեւոն առիւծ կոչի: Իբրև տեսին զքաջութիւն նորա բռնակալքն Ռուբիք և Տաճկաց՝ որ սուրտանքն անուանին, ժողովեցաւ՝ ի վերայ նորա սուլտանն՝ որ իշխեր Իսպահ և Կոռմանիոյն անթիւ զօրաբոլ և վինաւ. և լսեալ Լեւոն իշխանաց իշխանի զդիմաւճն՝ ի վերայ նորա այլազգւոյն, ածապարեալ զքօրութիւն և յանկարծակի եհաս՝ ի վերայ նոցա իբրև զար-

1 Թուի պակասել Էջբայր նորա:

ծիւ սլացմամբ յերան հասուց, և եհաս զնոսա ՚ի հա-
րուածս մեծամեծս, և սուլտանն փախստական լեալ
մազապուր զերծաւ ՚ի նմանէ, այն որ խրոխտանօք գայր
՚ի վերայ նորա։ Իսկ Լևոն հարկս եդեալ ՚ի վերայ նո-
րա ծառայեցուցանէր զնա. և զայն գործ քաջութեան
նորա տեսեալ շուրջակայ ազգացն Տաճկաց, դողային
՚ի նմանէ, և հարկէին ՚ի նմանէ. և այնպէս բռնացաւ
՚ի վերայ ամենեցուն։ Եւ իբրև ետես եթէ յաջողե-
ցաւ նմա տէրութիւնն առաւել քան զնախնիսն իւր,
խորհեցաւ այնուհետև ընդ իշխանն իւր և ընդ մե-
ծամեծս Թագաւորել, և առաքեաց ՚ի տիեզերահռո-
չակ քաղաքն Հռովմայեցւոց առ ինքնակալ կայսրն[1],
և առ պապն, զի տացէ նմա հրաման և Թագ Թագա-
ւորական. զի ոչ կամեցաւ նա այլում հնազանդել վասն
Թագի՝ բայց Թէ ազգին Ֆռանկաց. միանգամայն և
պարծանս իւր վարկաւ զտուրբ առաքեալս Պետրոս և
Պօղոս, որ կան ՚ի Հռոմ քաղաքն, որպէս Թէ ՚ի նո-
ցունց առեալ զօրհնութիւն պահկին։ Եւ առաքեն նմա
կայսրն և պապն Հռովմայեցւոց Թագ ազնիւ, զառա-
ջին Թագաւորացն[2], և արծուէս մի պատուական՝ այս-
ինքն արքեպիսկոպոս մի, դնել զԹագն ՚ի գլուխ նորա.
երիս նրա պահանջել ՚ի նմանէ, տօնել զտօն տեառն և
ամենայն սրբոց յորում աւուր և հանդիպի, և միշտ
յեկեղեցւոջն կատարել զաղօթս տուընջեան և գիշե-
րոյ, զոր ՚ի վաղուց հետէ ոչ առնէին հայք ՚ի հինա-
հարութեանցն Յունաց, բայց միայն ՚ի ժամ խորհըր-
դածութեան պատարագին. և ոչ լուծանել զՔրածա-
լոյն Յունդեան և զՅարութեան, բայց միայն ձկամբք
և ձիթով. և յորժամ զայդ առնիցէք, ասէ, ոչ ինչ
փոյթ առնիցէք որոց և ընծայիցեն կայսերն և պապին
վասն Թագին. ապա Թէ ոչ առնիցէք՝ հրաման ունիմ,
ասէ, այնչափ գանձս առնուլ ՚ի ձէնջ ոսկւոյ և արծա-
թոյ և ականց պատուականաց։ Իսկ Լևոն կոչեալ
զկաթուղիկոսն և զեպիսկոպոսսն՝ հարցանէր Թէ զինչ
պատասխանի տացէ պատգամին, և նոքա ոչ հաւանե-

1 Առ կայսրն Ալամանաց կամ Գերմանիոյ, որ ոչ էր ՚ի տիեզերահռոչակ քաղաքին Հռովմայեցւոց, այլ կոչէր երբեմն ըստ նահապետին Խորդացն՝ կայսր կամ Թագաւոր Հռովմայ կամ արևմտից։

2 Ըստ օրինի կամ պահկի առաջին Թագաւորաց։

ցան առնել զխնդիրն. և ասէ ցնոսա Լևոն. Պատուք մի ինչ հոգայք՝ վասն այդորիկ, ես հաձեցից զիմս նոցա առ անգամ՝ մի կեղծաւորութեամբ։ Եւ պատասխանի արարեալ Լևոնի ասէ ցեպիսկոպոսն Հռոմայ. Ո՞ր ինչ հրամայէ ինքնակալ կայսրն և պատն մեծ, անյապաղ առնեմք զամենայն։ Եւ նորա երդուաւ պահանջեալ՝ ի նոցանէ երկոտասան եպիսկոպոսաց. և հաւանեցեալ Լևոն զեպիսկոպոսն յանձն առնուլ զերդուան. և արարին եպիսկոպոսք զբանս երդմանն [1], յորոց մի էր եպիսկոպոսն Տարսոնի՝ Եւերտես Լամբրոնացի, զոր վերագոյն յիշեցաք, և Յովսէփ կողմանցն Ընտիոքու, առաջնորդ վանացն՝ որ կոչի Յեսուանց, և Յովհաննէս՝ որ եղև կաթուղիկոս, և Ընանիա՝ որ եղև հակաոսկաթոռ՝ ի Վաստ, և այլք ընդ նոսա։ Ապա եղև ժողով բազմութեան յոյժ՝ զօրապետաց և զօրաց և աշխարհաց և աղանց. պատրիարգն Յունաց որ նստէր՝ ի Տարսոն, և կաթուղիկոսն Ընտրուց որ նստէր՝ ի վանս սրբոյն Պարսումայ՝ ի սահմանս Միջագետաց, և կաթուղիկոսն Այոց ամենայն եպիսկոպոսօք։ Եւ թագաւորեցոյցին զԼևոն, և եղեն ընծաբերք նորոգ թագաւորին կացեալ՝ շուրջակայ ազգքն։

Եւ լուեալ կայսրն Յունաց եթէ Փռանկք ետուն զթագն Լևոնի, առաքեաց և նա ընծայս և թագս գեղեցիկս ոսկւով և ականբք պատուականօք ընդ եպիսկոպոսսն և ասէ. Զթագն Հռոմայեցւոց մի դնեսջիր՝ ի գլուխ քո, այլ զմերն. զի առ մեզ հասեալ ես քան զեկ՝ ի Հռոմ։ Նոքա թագաւորն Լևոն քանզի իմաստուն էր՝ ոչ խոտեաց և ոչ զմի ոք յերկոցունց թագաւորաց. այլ ըստ կամաց նորա արար պատասխանի, և սիրով ընկալեալ զեկեալսն, և ետ տուրս մեծամեծս բերողաց թագին. և եղև պատկեալ յերկոցունց։ Եւ էր նա քարի քնութեամբ, ողորմած առ աղքատս և կարօտեալս, սիրող եկեղեցեաց և պաշտօնէից Աստուծոյ։ Կարգեր վանորայս ընդ ամենայն կողմանս տէրութեան իւրոյ և բազմացուցանէր զմիտսն նոցա, զի մի ումեք իւիք կարօտեսին ըստ մարմնոյ բաւականին. այլ միայն աղօթից

1 Ոչ այնքան Լևոնի կեղծաւորութեան որքան հեղինակիւք կանգնելոյ զկարծութեան երևի՝ ի բանքդ, որ Թուի անծանօթ գոլ և Թղթոյ և ոչ յայտ Ս. Ամբրոնացւոյն առ Լևոն։

և պաշտաման պարապետին. յորոց մի է՛ի վանորէիցն զոր կարգեաց նա՝ հռչակաւոն Կ.իներ կոչեցեալ վանք. որ մինչև ցարդ և աս վարին՝ նովին կարգադրութեամբ զոր նայն կարգեաց, զամենայն աւուրս պահոցն պահօք կատարել, այլ միայն լուծանել ձկամբ զշաբաթ և զկիրակէն: Եւ այսպէս կարգաւորութեամբ հաստատեր զնոսա թագաւորութիւնն բարեպաշտն Լևոն: Եւ էր նա ամենայն իրօք բարեգոյն, բայց միայն միով մասամբ, զի էր նա իգասէր. և եթող նա զկինն իւր զառաջին՝ զոր ունէր յիշխանութեան, և առ նա՛ի կնութիւն զդուստրն արքային՛ի Կիպրոս կղզւոյ՝ Փռանկ ազգաւ[1], զի լոյս նմա թիկունք և օգնական: Զոր եղև զի ջոգաւ նա՛ի Կիպրոս կղզին՛ի տեսութիւն աներացն իւրոց. և լուեալ զայն Թշնամեաց նորա որք՛ի ցամաքի ոչ ինչ կարէին առնել նմա՝ պատրաստեցին նաւս բազումս, զի՛ի ծովու նենգեսցեն զնա: Եւ լուեալ զայն արքային Լևոն, դարձաւ անդրէն յետս՛ի Կիպրոս, զի էր՛ի Ճանապարհի՛ի վերայ ծովու. և առ իւր նաւս պատերազմականս, և եկեալ՛ի դարսանն որ գործեալ էր նմա՝ նաւաց բազմաց, և զի այր իմաստուն էր՝ ծանեաւ Թէ յորում նաւուցն իցէ գլխաւորն, եհար զնա արագաթև նաւով, և ջրասոյզ արար զամենեսեան, և մնացեալ նաւքն փախեան. և անկաւ ահ նորա՛ի վերայ ամենեցուն հեռաւորաց և մերձաւորաց: Եղև երբեմն զի սուլտանն որ տիրէր կողմանցն Իսպահանու, զօրաժողով եղև՛ի վերայ նորա յաւուրս զատկաց, և յղեաց առ Լևոն պատգամս այսպէս. Եթէ ոչ հարկեսցես զինձ ծառայութեամբ, բազմութեամբ զօրաց իմոց՛ի սուր սուսերի մաշեցից զձեզ և զամենայն բնակիչս երկրի քո, մայր առ մանկանդ. և զտօնդ ձեր՝ յորում ուրախանայք քրիստոնեայք պատուելով զդա, որպէս Թէ յարութիւն Քրիստոսին ձերոյ նոցա է, դարձուցից զդա՛ի սուգ ձեզ, և արարից զի զպատրաստեալ կերակուրն ձեր վանն տօնիդ՝ ուտիցէք զայդ՛ի վերայ ձիոց, Եւ իբրև առաքեաց զայս, ինքն առեալ զբազմութիւն զինուց. այլ չասէ առ կենդանեաւ նոցին առեալ զերկրորդն, որ և չէ հաւանելի:

1 Սիպիլէ, դուստր Ամաւրեայ Լիւսինեան: Սմբատ պատմիչ մերձաւոր՝ առ մեծի յանցանաց առաջին կնոջն առէ յարգելանի եղեալ

մուԹիւն զօրաց իւրոց բանակեցաւ առ սահմանօք նո-
րա. և ինքն գալստեան պատգամին։ Իբրև գիտաց ար-
քայ Լևոն զգալ պատգամին և զօրաժողով լինել պա-
լազգեաց, հրամայեաց զդեսպանսն յայլ կողմն շրջեցու-
ցանել աչխարհին՝ պատճառանօք ԸԹէ այդր իցէ ար-
քայն. և ինքն անձապարեալ ժողովեաց զզօրս իւր, և
ընդ այլ կողմն ել՝ի վերայ նոցա. և յեղակարծ ժա-
մու անկան՝ի վերայ նոցա. եՀար զնոսա Հարուածս մե-
ծամեծս։ Ա՛ազապուր փախեաւ սուլտանն. և Լևոնի
արքայի առեալ զաւար բանակին պալազգեաց՝ Հանդերձ
վրանօք նոցա, և զգերիսն ամենայն, եկին բանակեցաւ
յաչխարհին իւրում առ ափն գետոյն, և հրամայեաց
զօրաց իւրոց կանգնել խորան պալազգեաց, և զիւրա-
քանչիւր զդրօշս կանգնել՝ի դուռն խորանին իւրոյ. և
հրամայեաց կոչել զդեսպանսն, և իբրև եկին տեսին
զխորանս և զվրանս զօրաց իւրեանց և նշանակ դրօշից
իւրաքանչիւր գնդից, և զարմացան Հիացմամբ մեծաւ,
զի ոչ գիտէին զեղեալսն. ապա իբրև իմացան՝ դիմե-
ցին յոտս Թագաւորին, և զապրիլ անձանց խնդրէին։
Իսկ արքայն մարդասիրեալ առ նոսա շնորՀեաց նոցա
կեանս, առաքելով զնոսա առ տէրն իւրեանց. և զայն
Հարկն զոր պահանջէր սուլտանն յարքայէն, զնոյն և
նա յաւելեալ եդ՝ի վերայ նորա, և ծառայեցոյց զպա-
լազգիսն. և եղև Թագաւորեն նորա՝ի վեց Հարիւր քա-
ռասունևվեց Թուականին Հայոց։

Բ

ՎԱՍՆ ԻՇԽԱՆԱՅՆ ՈՐ ՅԱՐԵԻԵԼՍ ՀՈՑԱՍՏԱՆԵԱՑՑ, ՋԱՒԱՐԻԱՑ ԵԻ ԻԻԱՆՏԻ ԵՂԲՕՐ ՆՈՐԻՆ

Յաւուրս ժամանակաց Թագաւորութեանն Հայոց
Լևոնի արքայի՝ էին յարեւելս երկու եղբարք, որոնք
Մարգսի բարեպաշտ իշխանի, որդւոյ Ա՛ահրամայ, որ-
դւոյ Օ՛աքարիայ, որ Հատուածեալ՝ի Բրդաց, ՚ի բա-
բիրական խելէն[1]. անուն առաջնոյն Օ՛աքարէ, և երկ-

1 Բաբիլական կոզմանս ասիցէ Թէ այլ ինչ, կամ Թէ սխալ, ոչ գիտեմ։

ըորդին Լւանէ, ալք քալ.ք և Հոխք, իշխանութեամբ պատուեալք ՚ի Թագուհւոյն Վ.ըայ, որ Ովաամարն կո- չէր, դուստր Վ.էորգայ քալի, որդւոյ Վ.եմեսրի: Եւ Օ՞աքարէ էր զօրավար Վ.ըայ և Հայոց զօրուն, որ ընդ ձեռամբ Թագաւորին Վ.ըայ. իսկ Լւանէ ամենաքու- թեան[1] պատուոյ. սոքա բազում մարտս քաջութեան ցուցին. քանզի զբազում աշխարհս Հայոց՝ զոր ունէին Պարսիկք և Տաճկունք՝ առին ՚ի նոցանէ յինքեանս. զգաւառն՝ որ շուրջ զԾովակն[2] Վ.եղարքունւոյ, զՏաշիր և զ՞Այրարատ, զՈՂնի քաղաք և զ՞Ուն և զ՞Նբեռդ և զՎնի և զՎարս և զՎայոց ձորն, և զաշխարհս Սիւ- նեաց, և որ շուրջ զնովաւք են բերդք և քաղաք և գաւառք. հարկատուս արարին և զսուլտանն Կարնոյ քաղաքին: Վ.երեցին և զբազում քաղաքս Պարսից և զ՞տրապատականաու, և ընդարձակեցին զսահմանս իւրեանց յամենայն կողմանց: Վ.յսպէս և միւս իշխանն Օ՞աքարէ անուն և եղբայրն իւր Սարգիս, և միւս Վար- զին հայրն Շ՞ալուէի և Լւանէի, ազգականքն մեծ իշ- խանացն, ձեռնտուութեամբ նոցին՝ առին և նոքա բա- զում գաւառս ՚ի Պարսից և բերդս ամուրս, զՎարդ- ման, զԱրտհերձ և զՎրդեվանք, զՏաւուշ, զՎաճա- րէթ, զՏերունականն և զՎագ. և զՇ՞ամքոր քաղաք ՚ի նեղ կարկ, զոր յետոյ էառ որդի նորա Վ.ահրամ, հայրն Վ.ղբուղին, պապն Վ.ահրամայ, Օ՞աքարէի և Լւանէ: Եւ այսպէս աջողեցաւ նոցա ՚ի վերուստ յաղ- թութիւն նոցա. զի համբաւ քաջութեան նոցա էլ ընդ ամենայն տիեզերս, և բազում ազգք հարկ տային նոցա, ՚ր սիրոյ աղագաւ և ՚ր յերկիւղէ: Շ՞ինեցան և բազում վանորայք՝ որ ՚ի վաղուց ժամանակէ անտի աւերեալ էին ՚ի հինէն Լսմայելի. վերստին նորոգե- ցան եկեղեցիք, և պայծառացան դասք պաշտօնէից. շինեցան և նոր վանորայք և եկեղեցիք՝ որ ՚ի հնոց էին լեալք. ընդ որս և հռչակաւոր վանքն՝ որ Վ.ետիկն կոչի, ՚ի գաւառին Կայենի. զոր շինեաց սուրբ վարդապետն Ո՞ստիկաւ՝ զոր Վ.ոչն կոչէին[3], շինեալ հրաշալեաց ե- կեղեցի, գմբեթայարկ երկնանման, և կնքեալ զեկե-

1 Որ է վերակացութիւն տան Թագաւորի, կամ հազարապետու- թիւն:

2 Օո. ղՓէղէ:

3 Վանն որոյ և Գոշոյ վանք կո- չեցաւ:

ղեցին և օծեալ յանուն սուրբ Աստուածածնին, տա-
ճար փառաց տեառն և բնակարան բանաւոր հօտին
Քրիստոսի: Եւ իբրև այսպէս յաջողեցաւ նոցա իշ-
խանութիւնն, հարին զսուլտանն՝ որ Ճահ-Աբմէնն
կոչիւր: Ապա կամեցան առնուլ և զհոյակապ քաղաքն
Ռզինունեաց, որ կոչի Խլաթ [1]. և զօրս գումարեալ պա-
շարեցին զնա, և մերձ էին առնուլ. ապա ելեալ ին-
խանն Խանէ՝ եղբայր զօրավարին զԹօսանայ ինչ ապա-
պաւ ՚ի զնին պարսպին, և յանխնայ շրջելն գԹեւոց
ոտք երիվարին ՚ի խոլխորատն՝ որ Թապուցեալ էր, և
ընկէց զնա յերկիր. և տեսեալ զայնց քաղաքին՝ յա-
րեան ՚ի վերայ նորա, և ձերբակալ արարեալ տարան
զնա ՚ի քաղաքն. և եղև քաղաքին ուրախութիւն մեծ,
և խոյն ազդեցուցին զըմբռնումն նորա. ընդ որ կարի
յոյժ ուրախացեալ՝ հրամայեաց առ ինքն ածել: Եւ
լսեալ զօրավարին Ջաքարիայ, յղեաց առ քաղաքա-
ցիս բանս սպառնալեաց և ասէ. Եթէ հանէք զեղբայրն
իմ ՚ի քաղաքէդ յայդմանէ կամ կոտւսանէք, զհոդւ
երկրիդ ՚ի կողմանս Վրաց տանիմ և անմարդ արարից
զձեզ ՚ի մարդկանէ: Եւ երկուցեալ նոցա ոչ ետուն
տանիլ առ սուլտանն՝ [2] որք էին ՚ի կողմանս Դամասկո-
սի և Եգիպտոսի, որոց անուանք էին Կուզ [3], և Մ՚ելիք
Ռէմ, և Ա՚շրաֆ՝ յազգէն Սալահատինին որ առ զԵ-
րուսաղէմ:

Ապա արարեալ սէր ընդ միմեանս խնդրեցին զդուստր
Խանէի ՚ի կնութիւն, և եղև որպէս խնդրեցին. ա-
ռին պատանդս, և արձակեցին զԽանէ. և նորա եր-
թեալ ՚ի տուն իւր առաքէ զդուստրն իւր, որ եղև կին
Վըզին, և յետ նորա Ա՚շրաֆին. բայց զուտ եղև
գալ կնոջն ՚ի տունս սուլտանայ, զի դիւրեցին քրիստո-
նէիցն՝ որ ընդ իշխանութեամբ իւրեանց էին. և ա-
ռաւել երկրին Տարօնոյ, զի վանորայքն որ անդ էին՝

1 OO· Խըլխաթ· ուր նախէր հը-
զօր ամիրայ նշխոյլ կողմանցդ ան-
դրսաին յ՚Թ դարէ:

2 OO· սուլթանն:

3 Կուզդ Թուի Քէյքաուս սուլ-
տան Իկոնիոնի· Քէմըն՝ Եգիպտո-
սի, միւսն Դամասկոսի: Բայց Աշ-
րաֆ Սալահատինին որ և
էառն զդուստր Խանէի՝ տիրա-
ցաւ Խլաթայ՝ յետ մահու եղբօրն
Ադհատայ՝ որում նախ խօսեցաւ
դուստրն Խանէի՝ ԹամԹա: —
Վ· 138:

ընդ Նարկաւ էին. Թէ Թէ Հաւատացին զսակ Հարկին, և կի-
սոց զամէնն իսկ Թողին. և Հրամայեցին այնոցիկ որ ընդ
իշխանութեամբ իւրեանց էին՝ ոչ զրկել կամ նեղել
զՀանապարհորդս, որք աղօթից աղաւթս երԹային Հա-
րատաղէմ։ Նաև առաւել ընդարձակեցին ազգին Վրաց.
զի Հանէն խոտորեցաւ յաղանդն (!) Քաղկեդոնի, յոր
կոչեցեալ էին Վրք. զի սիրեաց նա զփառս մարդկան
առաւել քան զփառս Աստուծոյ (!). Հրապուրեալ նա
Ի Թագուհւոյն որ Վանայրն կոչեր, Ի գաւառէն Կոգո-
պայ։ Վան այնորիկ առաւել մեծարէին զՎրս, զի
անՀարկ էին նոքա յամենայն քաղաքս նոցա, և Հա-
րատաղէմ ևս. և էր անուն կնոջն ՎամԹա։ Նա այս-
պէս եղև սէր և միաբանութիւն ընդ Թագաւորին Վ ընդ-
րաց, և ընդ իշխանութիւնն աուլտանաց։

Գ

ՎԱՍՆ ԺՈՂՈՎՈՑՆ ԶՈՐ ԱՐԱՐ ՁԱՓԱՐԻԱ ՎԱՍՆ ԽՆԴՐՈՑ ԻՆՁ ԻՐԱՑ

Յետ այսորիկ իբրև խաղաղացուցին զաշխարհս ընդ
իշխանութեամբն իւրեանց յամենայն հինից, և բազ-
մացան վանորայք և պայծառացան պաշտամունք եկե-
ղեցւոյ, այլ ինչ էած զմտաւ իշխանն Օ՞աքարէ. զի տե-
սանէր զգօրս Վրաց որ ընդ Թագաւորին իւրում, զի
իւրաքանչիւր ոք Ի նոցանէ ունէր ընդ իւր քահանայս,
և յամենայն տեղիս մատուցանէին պատարագ, և ինքն
ոչ ունէր եկեղեցի Ի Ձանապարհին. զի չէր սովորու-
Թիւն Նոցա Ի բազում ժամանակաց, յորմէ հետէ
բարձան իշխանքն Նոցա մեծամեծք Ի Պարսից և Յոս-
մայելացւոց բռնութեննէն. և նախատէին Վ իւրք զՆոյք՝
ոչ ունել եկեղեցի Ի Ձանապարհի, և անհաղորդ ծնալ
նոցա, և ոչ տօնել զտօն վկայիցն Աստուծոյ Իւրաքան-
չիւր աւուր կատարման. վասն այնորիկ կարի յոյժ ցա-
ւէր նմա։ Այս Հարցանէր զմեծ վարդապետն Ա՛խի-
Թար, զՀինող վանիցն [1] Գ՛ետկայ՝ որ էր Հայր խոստովա-
նութեան նորա. և ասէր՝ եԹէ Վ՚չ երբէք եղեալ է
Թագաւորաց մերոց կամ իշխանաց Ի պէտս Ձանապար-

[1] Գ՛ետկայ։

հաց եկեղեցի՝ տեղի պաշտամանն և պատարագի. հար-
ցանէր և զայլ վարդապետս, և նոքա ասացին նմա զայն,
որ առ մեծազօր արքային Տրդատայ՝ վրանն և սե-
ղանն զոր շրջեցուցանէին յարքունական բանակին. և
որ առ սուրբ Կ արդանամբք, որ զմկրտութիւնն և ըզ-
հաղորդութիւնն կատարէին ՚ի մէջ բանակին. և զայն
զոր գրեցին սուրբ վկայքն Հռիփսիմէ և Գայիանէ և Փիլոտոս առ
Յակոբոս երէց, եթէ Ընդ քեզ զսպաս պատա-
րագիս և զեղջիւր իւղոյդ՝ եկեսցես առ մեզ. և այլ
բազումք որ նման են սմին: Այս ասէ ցնոսա մեծ զո-
րավարն. Տուք և ինձ հրամայեն, զի և ես շրջեցուցից
զհետ իմ քահանայս և վրան պատարագի: Նէ ցնա
վարդապետն մեծ. Եկք չունիմք հրամայեն առնել զայդ
առանց կաթուղիկոսին Հայոց և Թագաւորին Լ ևանի:
Այս գրէ Թուղթ և առաքէ զեսպանս առ կաթուղի-
կոսն Հայոց Յովհաննէս անուն, որ ընդ այն ժամանակս
ապստամբէր ՚ի Թագաւորէն Լ ևանէ ՚ի Հռոմկլայն վան
իրիք պատճառաց. նմանապէս գրէ և առ Թագաւորն
Լ ևան, և ծանուցանէ նմա զլինդիրն: Եւ նա նստու-
ցեալ էր զտէր Դաւիթ կաթուղիկոս փոխանակ Յով-
հաննիսի որ ապստամբեալ էր, յաշխարհէն Աղձկե-
տւոց ՚ի վանքն՝ որ կոչի Ընդքակաղին: Այս արքայն Լ ևան
ժողովեալ զվարդապետս և եպիսկոպոսունս իւրոյ ի-
շխանութեանն, հարցանէր վասն խնդրոյն Օ աքարեի-
և նոքա յանձն առին, զի մի՛ եւս արտաքոյ ուղղափառ
հաւատոյն՝ որպէս զեղբայր իւր, և գրեն Թուղթ յա-
րևելս այսպէս.

Մեծ սպարապետ և Տ ահնշահ արևելեան կողմանց
Օ աքարիա. ՚ի խնդիր ելեալ եղծեալ և աղաւաղեալ
կարգաց քրիստոնէից՝ որ ՚ի տկարութենէ այլասեռից,
ժողով արարեալ վարդապետաց և եպիսկոպոսաց, հարց
և երիցանց, որք քննեալ զտին զլինդիրս նորա համա-
ձայն աստուածային գրոց: Այս առաքեաց առ քրիս-
տոսասիրակ արքայն Հայոց Լ ևան, որ ՚ի կողմանս արև-
մտից աշխարհին Աղձկեցւոց. և նորա ժողով արարեալ

1 Ա. Գ. Հէպէրէպաս. որ են Ս. Հիպերիքոս և Փիլոթէոս, և այլ
քնիկերքն, վկայք Սամոսատացիք:

'ի մայրաքաղաքն Աին զկաթուղիկոսն Գաւիթ իւրովք վարդապետօք և եպիսկոպոսօք և Ճգնաւոր միանձամբք, գոհն զկնդիրս նորա Համաձայն առաքելական կանոնաց, և ոչ արտաքոյ. վասն որոյ 'ի գլուխս կանոնացդրոշմեալ առաքեցին Թուով ուԹ՝ որ են այսոքիկ։

Ա. Ատուցանել զտուրբ պատարագն գալրաւ և սարկաւագաւ, որպէս օրէնն է։

Բ. Տօնել զտօն աւետեաց Ըստուածածնի 'ի վեցն ապրիլի ամոյ, յորում աւուր և հանդիպի, և զտօնն փոխման նորին 'ի հնգետասան օգոստոսի, յորում աւուր և հանդիպի, և զտօն ստուրբ խաչին 'ի չորեքտասան սեպտեմբերի յորում և հանդիպի։

Գ. Պահել զՔրատպալոյս Յայտնութեան և Ծատկին, մինչև ցերեկոյն պահօք, և ոչ այլ իւիք լուծանել բայց միայն Ձկամբ և ՁիԹով։

Դ. Ընդունել զնկարագրութիւն պատկերի Փրկչին և ամենայն սրբոց, և մի խոտել զնոսա իբրև զպատկերս հեԹանոսաց։

Ե. Պատարագս մատուցանել և կենդանեաց։

Զ. Կրօնաւորաց միս ոչ ուտել։

Է. Ձեռնադրել զքուր, և ապա յետ աւուրց սարկաւագ, և 'ի կատարեալ Հասակի՝ ապա քահանայ։

Ը. Ամիաքան կալ 'ի վանս, և առանձին իրս ոչ ստանալ։

Ծայսոսիկ և որ նման սմին գրեցին 'ի ժողովն յարևմտից, և առաքեցին յարևելս առ Ծաքարիա։

Ասկ կաթուղիկոսն Յովհաննէս որ 'ի Ծորոմկլայն, վասն ընդ միտ մտանելոյ իշխանացն արևելից առաքեաց վրան մի գմբեԹարդ եկեղեցաձև, և կազմոյս և յօրինոյս նմին, և սեղան մարմարեայ, և այլ սպասք պատարագայ. և եպիսկոպոս մի Ամինաս անուն, և սարկաւագս և գպիրս և քահանայս, և գեղեցկաձայն ասողս պատարագին. որք եկեալ եղեն յանդիման սպասալրին 'ի քաղաքն Ծօռէ, և առաջի կացուցին նմա զՀրամանս կաթուղիկոսին, և զԹուղԹ նորին և զընծայս։ Նոյնպէս և յարքայէն Ծևոնէ և 'ի կաթուղիկոսէն ԳաւԹ եկին դեսպանք և հրամանաբերք։ Ընդ որ յոյժ ուրախացեալ Ծաքարիայ՝ ժողով Հրամայեաց առնել 'ի Ծօռէ քաղաք զեպիսկոպոսն Ծաղբատայ

զՈրիպորին՝ զիւրեանց ազգականն, և զեպիսկոպոսն Ընեայ, և զեպիսկոպոսն Ընջնայ, զՈւռնայ, զՎարուց, և զայլս ոլք դիպեցան. նոյնպէս և զվարդապետս և զառաջնորդս վանաց Հանդերձ քահանայիւք և աշխարհական ամբոխիւ. կամէր կանգնել զվրանն և պատրաստ մատուցանել: Եւ էին ՚ի ժամանակին յայնմիկ վարդապետք երևելիք, Մխիթար որ Ոշն կոչիւր, այր իմաստուն և հեզ և վարդապետական ուսմամբ հռչակեալ. Իգնատիոս, Վարդան, Պաւլոս Վրկայրեցին ՚ի Հաղբատայ, Յովհաննէս հայր Սանահնին, որ էր ծնուցող նոցին իշխանացն, Որիորդ զոր Մանմանիկն կոչէին՝ ՚ի Կեչառուաց, Տուրքիկն ՚ի Ծեղէնեաց, որ բոլոր կարգաւորեաց զվանքն՝ զամենայն ինչ հասարակաց լինել, և առանձին ոչ ինչ ստանալ. Եղիա ՚ի Հաւուց-Ծառէ, այն որ գեղեցիկ կարգաւորեաց զկարգ վանաց իւրոց, որպէս թէ ամենեցուն ընդ մի բերան հնչել՝ եթէ ցած և կամ բարձր, և ոչ հարստահարել ընկեր զընկեր. Որիորդ Ոշնեցին, Սարգիս միայնակեացն ՚ի Սևանայ: Ամբոխիկ ոլք երևելիք, և այլք բազումք. Որիորէս եպիսկոպոս Հաղբատայ, Վ ըր. Թանէս Ընջնայ և Ոշնայ, Սարգիս աթոռակալ Ընոյ, Յովհաննէս Կարուց. և այլք յոլովք աստի և անտի, հանդերձ երևելի քահանայիւքն վանաց, քաղաքաց և գիւղից: Նոքա իբրև լուան և գիտացին զհրաման կաթուղիկոսին և Թագաւորին, ամենք հաւանեցան և ակն ոչ. և այսպէս անմիաբան լեալք քակտեցան ՚ի միմեանց. ոմանք ՚ի գիշերի փախչելով գնացին, և զկէան[1] արկեալ բռնութեամբ, մինչ մատուցեն զպատրաստն. և այսպէս անմիաբան լեալք գնացին միմեանց մեղադրելով:

Նոքա իշխանն Օ աքարէ առաքեաց ՚ի վանորայս որ ընդ իշխանութեամբ իւրեանց էին, և տայր բռնութեամբ առնել զտօն փոխման Ա տուածածնի և տուրբ խաչին՝ ոչ ՚ի կիրակէ՝ որպէս սովորն էին, այլ զպատրաստեալն զինչ օր որ գայր: Ընդդէմ անմիաբանութիւնք, կռիւք, փոխանակ սիրոյ՝ ատելութիւն ընդ միմեանս, և փոխանակ ուրախութեան՝ տրտմութիւն, ատելութիւն,

1 ՕՕ. կէան կամ կէսէն:

մինչեւ ի տուր եւս մտաբերել միմեանց։ Ապա առաքեալ Յ աքարիա զեպիսկոպոսն Ա՛ինաս՝ որ եկեալ էր ի կա՜ թուղիկոսէն ի Հաղբատ՝ պաշտօնէիւք իւրովք, զի և անդ զնոյն արասցեն. և մինչ գայր նա հուպ ի վանքն՝ առաքեաց Գրիգորէս եպիսկոպոս Հաղբատայ ասր՝ որք սաստիւ Ղարին զնա բռնօք և զպաշտօնեայսն նորա, և վերա ի վերայ եղեալ թողին կիսամահ, և զջորիսն որք էին ընդ նմա բեռնակիրսք՝ գահավէժ արարեալ սատակե՜ ցին. և բարձեալ զեպիսկոպոսն մահճօք տարան առ Յ աքարէ. և նորա բարկացեալ յոյժ ի վերայ եպիս՜ կոպոսին, և հրամայեաց ըմբռնել զնա, մահուչափ ըս՜ պառնացեալ ի վերայ նորա, և նա փախստական գնաց յաշխարհն Կայենոյ ի վանքն Գետիկ առ մեծ վար՜ դապետն Ա՛խիաբ, ապաւինութեան աղաչաւ. զի գիտեր թէ մեծ համարձակութիւն ունէր նա առ Յ ա՜ քարէ, և ձօղապրեցաւ այն անգամ ի ձեռաց նորա. և յետոյ ըմբռնեաց զնա ի Կեչառուս, եւ զնա ի բան՜ դի, և զՅովհաննէս կացոյց եպիսկոպոս Հաղբատայ փոխանակ նորա. այն որ յառաջն եւթող զաթոռն և գնաց ի Խաչէն։ Եւ էր այս Յովհաննէս այր առաքի՜ նի, և բազում գործս յիշատակի արժանիս գործեաց նա ի Հաղբատ[1]. ընդ որս և զՀոչակաւոր գաւիթս շի՜ նեաց եկեղեցւոյն՝ որ հիւսուցանէ զտեսողն։ Եւ այն՜ պէս չփոթուն ունէր զեկեղեցիս արևելից. քանզի ի բազում ժամանակաց հետէ չէին սովոր առնել զոր ինդրէրն նա, և ոչ զտօնսն յիւրաքանչիւր աւուր, զի մի պատճառաւ լուծցին պահքն. և զպատարագն սուրբ ոչ մատուցանէին սարկաւագաւ և դպրաւ, այլ միմեանց քահանայքն սպասաւորէին. և կարծեմ թէ զայս տո՜ ւղութիւն էին կալեալ ի բռնութենէն Տաճկաց, որ ոչ տային համարձակ պաշտել զպաշտօնս իւրեանց քրիս՜ տոնէից, այլ և ոչ զդրունս եկեղեցեաց թողուլ ի բաց ի ժամ սոսկալի խորհրդոյն, զի մի ոձիրս ինչ գործեսջեն այլազգիքն. և ոչ զայլն՝ զոր նա ախորժէր։

Գարձեալ հրամայէր ժողով առնել ի մայրաքաղաքն Անի, որ ի Երակ գաւառի, և ժողովեցան վերա՜ պրեալ եպիսկոպոսունք և վարդապետք, և ևս յոլով.

[1] Որ և գարդ ակն յայնմ վկայի յարձանաց տեղւոյն։

գրեաց Ո՛աքարիա առ վարդապետն Ա՛խիաւար, զի և նա գայցէ՛ ի Ժողովն։ Իսկ նա պատճառեաց զհիւանդութիւնն և զանկարութիւն, և գրեաց պատասխանի այսպէս. Զի՞ զոր ինչ առնեն դոքա և կամին՝ համաձայն եմ ես այնմ. և աղաչեմ զքեզ մի՛ ինչ աւելի աշխատ առներ զիս, զի չեմ կարօղ։ Իսկ Ո՛աքարէ կոչեաց զԺողովն և խնդրեր՛ ի նոցանէ ձեռագիրն, զի ապրասցեն զոր խնդրէ նա. և նոքա ասեն. Ընդհնար է մեզ առանց Ա՛ծած վարդապետին առնել զայդ. զի այսպէս կոչէին զնա սակս պատուոյ. իսկ նա ցուցեալ զԹուղթն ասէ. Ո՛ասիկ նա, զի այս ձեռագիրս նորա. սա նա է և նա սա. և զԹուղթն ոչ ետ նոցա՝ զի՞ զինչ էր գրեալ՛ ի նմա։ Իսկ Ժողովն խնդրէր՛ ի նմանէ ներումն, մինչև ինքեանք առաքեսցեն առ նա՝ գալ նմա՛ ի Ժողովն. և առաքեցին առ վարդապետն Ա՛խիաւար և աղաչէին զնա գալ՛ ի Ժողովն, զի միաբան պատասխանի տացեն զօրավարին. և գրեցին Թէ զանկարութիւն մարմնոյ մի՛ ինչ պատճառեր. եթէ՛ ի ձանապարհին հասանէ քեզ վաղձան, ընդ առաջին սուրբ վարդապետաց եկեղեցւոյ կարգեսցուք զյիշատակս քո։ Նա իբրև ընթերցաւ զԹուղթն Ժողովոյն՝ վազվազակի գնաց զկնի կոչնակացն. և էր աւուրքն ձմեռնային և տօն ծննդեան և յայտնութեան Յիսուսի Քրիստոսի մերձեալ։ Իբրև գիտաց զօրավարն Թէ գայ նա, առաքեաց իշխան մի արտաքս քան զգուռն քաղաքին, զի յորժամ գայցէ մի՛ Թողացուսցեն նմա երթալ՛ ի Ժողովն, այլ առ ինքն տարցեն։ Նախ քան զգալն նորա կէսք հաւանեալ էին առնել զնդրին, այնոքիկ որ եպիսկոպոսքն էին իշխանութեան, զի մի՛ անկցին յանԹուոյն. և կէսք ոչ։ Իբրև եկն վարդապետն և առեալ իշխանն զերասանակս երիվարի նորա՝ տարաւ զնա առ զօրավարն. իբրև գիտաց Ժողովն՝ եթէ ոչ Թողին զնա առ մեզ, առաքեցին զվարդապետն՝ Եղիսէս, զայր առաքինի և ողջախոհ, որ յետոյ առաջնորդ եկաց Կեչառուացն՝ զկնի մահուան Գրիգորի վարդապետին՝ որ Ո՛ռոնիկն կոչիւր. զի երԹիցէ ասիցէ նմա՝ նախ՛ ի Ժողովն գալ, զի խորհեսցին՛ ի միասին Թէ զինչ պարտ իցէ առնել. զի՛ ի դիպող պահոջ էին, և հանդերձեալ էր զօրավարն աքսորել զնոսա յօտարութիւն։ Նա երԹեալ հանդիպի նմա

յայնմ տեղւոջ՝ զի հանդերձեալ էր նա մտանել յա-
պարանս զօրավարին. և արտաքուստ ձայնեաց առ նա,
և ասաց զպատգամն Ժողովոյն. իսկ իշխանն ստիպով
տարեալ եմոյծ զնա՝ ի նեղքս. և զօրավարն եկեալ ընդ
առաջ նորա ողջոյն ետ նմա և ասէ. Արդեօք եկիր
դու աստ, ինձ ոչ ինչ փոյթ է զնոցանէ: Եւ լուեալ
զբանս զայս Ժողովոյն[1], նախանձաբեկ եղեն և յաչքա-
լուլ[2] ասէին. Այս ամենայն զոր գործէ զօրավարն ընդ
մեզ, խրատով նորա գործէ. մեք իբրև զանասունս հա-
մարեալ եմք յաչս նորա. և այլ բազում բանիւք բամ-
բասէին զնա: Իսկ նա իբրև խնայեաց զնոսին որ եղեալ
էին առ Ժողովն, մեզադիր եղև զօրավարին՝ Ած իշխա-
նաբար ոչ պարտ էր զայդպիսի իրս առնել. և առաքեաց
առ Ժողովն և ասէ. Դուք վասն ազգիս մեր՝ զի մի այդ-
պիսի սովորութեամբ խաւնեսցին ընդ Ռոմս իրս, և ես հա-
մամ վասն զօրավարիս, զի մի լցի սա վրայի իբրև
զեղբայրն, որում սպասեն Ռոմք: Եւ զի Ած այսպէս
է, զի՛ մեզադրէք ինձ. զի հրաման ունի՛ ի կաթուղի-
կոսէն և՛ ի թագաւորէն Ռոմանէ՝ առնել զայս. և մեք
Ած կամիմք և Ած ոչ՝ սա ոչ դադարէ առնելոյ զայս:
Եւ դուք զարձլիք յիւրաքանչիւր քնակութիւնս, և
մեք աղաչեսցուք ոչ հանել զձեզ յեկեղեցեաց ձերոց
և՛ ի տեղեաց. և մեք զպաշտօն որ մինչև ցայսօր պաշ-
տեալ եմք՝ զնոյն պաշտեսցուք: Իսկ Եմիր սպարապն Ած
քարէ հրաման ետ գաղանի առանց գիտելոյ վարդապե-
տին՝ մերժել զնոսա յօտարութիւն. զոր գիտացեալ
վարդապետին՝ զբազում՛ ի նոցանէ Ած փեթաց գառնալ
՛ի տեղիս իւրեանց. և զայլսն յետ սակաւ ինչ աւուրց
Ուանէ եղբայր զօրավարին՝ հրաման ետ գառնալ ՛ի տե-
ղիս իւրեանց: Իսկ Ած աքարիա զժամանակս կենաց իւ-
րոց ործափ եկաց, նոյնպէս վարեցաւ՝ որպէս կամէր.
բայց եկեղեցիքն ամենայն առաջին պաշտամամբն վա-
րեցան:

Ած զօրավարդակ իրս, և զբան և զգործ այս Ժողովոյ
զրեաց մեծիմաստ և առատասիրտն վարդապետ Ռոմ-
նական յիւրում՝ պատմութեանն. զի ականատես էր նա
իրացն եղելոց և ականջալուր, յոշակերտի կարդի գոլով

1 Ած. ժողովրդեան:

2 Ած. սպանման:

յայնժամ առ Մեծ վարդապետան ։ Ա.յս և այլ յոլով իրք պատանին ՚ի դիրս նորա , որք կամին մատադիւրաւ ձեռամբ ուսանիլ ։

Դ.

ՎԱՍՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ԱՂՈՒԱՆԻՑ ԳԱՂՈՑ ԱՌ ՄԵԾ ԻՇԽԱՆՍՆ, ՆԵՂԵԱԼ Ի ՅԱՑԼԱՋԳԵԱՑՆ

Ի բազում վշտաց և ՚ի նեղութեանց զոր կրեաց առ հասարակ ամենայն աշխարհս յազգացն Հարուսայնոյ, յորդւոցն Իսմայելի, և առաւել ազգս Հայոց և Ա.ղուանից, զի բնակչինք եղաք ՚ի Թագաւորաց և յիշխանաց. կաթուղիկոսքն Ա.ղուանից այսր անդր յածելով վանն ոչ ունելոյ տեղի հաստատուն աթոռոյ, զեպ եղև նոցա գալ ՚ի քարայր մի ՚ի սահմանս բերդին՝ որ կոչի Ձարեք [1], և անդ դադարել և անդուստ հովուել զհօտ իւրեանց [2]. և մի ոմն ՚ի նոցունց կաթուղիկոսաց, Ներսէհ անուն՝ եթող զկարգ իւր և էառ կին, և ստացաւ որդիս. և մերժեն զնա յաթոռոյն, և ձեռնադրեն փոխանակ նորա զտէր Ստեփաննոս ։ Որս (էր) քորեպիսկոպոս մի Սարկաւագ անուն. զեպ եղև գնալ նմա ՚ի Դանձակ քաղաք, ժողովել զմուտս յերկրացանց և ՚ի քրիստոնէից որ անդ. զնա տեսեալ ամիրային քաղաքին, որում անուն էր Դուրջի Նազրատին, եհարց զնա թէ Ո՞ր ես, և իբրև ասաց թէ կաթուղիկոսին, ասէ [3]. Լսեալ է իմ թէ քրիստոնեայք մեծապէս խնդուն Թիւն առնեն՝ յորժամ օրհնեն զջուրն. արդ ահաւասիկ տօնն ձեր մերձեալ է, կոչեա զկաթուղիկոսն ձեր հանդերձ պաշտօնէիւք որպէս սովորութիւն է ձեր, և օրհնեցէք զջուր ՚ի քաղաքիս. զի և մեք բերկրեսցուք ընդ ձեզ ։ Նա քորեպիսկոպոսն երթեալ պատմեաց կաթուղիկոսին զհրաման ամիրային. և նա ուրախացեալ յոյժ, զի ոչ երբէք իշխեր կաթուղիկոս կամ երևելի ոք յայտնապէս մտանել ՚ի քաղաքն կամ շրջել անդ. զի Պարսիկք ունէին զայն քաղաքն, արք ծարաւիք ա-

1 Կ. 138։
2 ՕՕ. Խ–Ը։
3 Յ'ՕՕ. Հինք ասէ։

ըեան քրիստոնէից. քանզի բազում վիշտս կրեալ էին
նոքա՝ի բնակչացն Իսաչենոյ ասազակաբար կելով, զաս-
զուսն սպանանէին՝ի Պարսից, և կոլոպտէին զքրիս-
տոնեայս՝ի ձեռաց նոցա. նոյնպէս և Թագաւորն Պ ը-
րաց, և զօրք նորա. և վասն այն պատճառին Թշնամի
էին ամենայն քրիստոնէից: Իսկ կաթուղիկոսն ժողո-
վեալ զեպիսկոպոսունս և զվարդապետս իւրոյ վիճա-
կին, գնաց նոքօք՝ի կոչ ամիրային. և տեսեալ զնա ա-
միրայն՝ յոյժ ուրախացաւ, և հրամայեաց մեծաւ հան-
դիսիւ և Հոխութեամբ երթալ վառեալ մոմովք և
ժամհարովք և մեծաձայն պաշտամամբք՝ օրհնել ըզ-
ջուրն. և ինքն հեծեալ յերիվարն զօրօք բազմօք՝ գնաց
՝ի տես զբօսանաց աղագաւ. դղրդեցաւ և քաղաքն ա-
մենայն բնակչօք հեթանոսօք, գնացին և նոքա՝ի տես:
Իբրև արկին զխուղն սուրբ՝ի ջուրն, ասեն Պարսիկք.
Հաւատիկ զամենեսեան քրիստոնեայ արար ամիրայն.
զի զինչ աւելի առնեն քրիստոնեայք, բայց Թէ մկըր-
տեն և օծանեն. և մեք ամենեքեան ըմպեմք՝ի ջրոյս
յայսմանէ, և լուանամք՝ի սմանէ. յայսմհետէ մեք
անհաւատ եմք և դենակորոյսք. արդ եկայք հնարես-
ցուք ինչ: Յայնժամ ամբոխ յոյժ արարեալ և եդին
զկաթուղիկոսն՝ի բանտ, և դրդեցին զկնի ամիրային
և եդին զնա՝ի բերդն. և ինքեանք գրեցին առ Ա թա-
պակն՝ որ նստեր՝ի Պարսս, Թէ այս ամիրայս զմեզ
զամենեսեան եհան՝ի հաւատոց մերոց. զի զխուղն խո-
զի՝ եւ արկանել՝ի ջուրն գլխաւորին քրիստոնէից. արդ
՝ի պահոջ են[1] երկոքեանս, կաթուղիկոսն և ամիրայն.
արդ զինչ կամք քո հրամայեն՝ այն եղիցի: Եւ հրամանն
եւ զամիրայն լուծանել յիշխանութենէն և առ ինքն ա-
ծել: Իսկ՝ի կաթուղիկոսէն բազում զանձս առեալ
ոսկւոյ և արծաթոյ՝ Թողին գնալ ուր և կամեսցին. և
նա զերծեալ՝ի վտանգէն՝ հոգաւ՝ի կողմանս Իսաչենոյ,
և այլ ոչ իշխեր մտանել՝ի սահմանս Դանձակայ: Իսկ
վանորայքն որ՝ի կողմանս քաղաքին էին և երիցունք
գաւառաց, իբրև տեսին Թէ ոչ իշխէ գալ տէր Պ տե-
փաննոս յայն կողմն՝ և նոքա ոչ իշխէին երթալ առնո-
սա, առեալ զԱեժգէնն զայն կարգընկէց՝ տան՝ի նա

1 Թերևս՝ ի դէպ հոգոյ:

զձև և զկարգ քահանայութեան։ Որ լուեալ տէր Պատեփանոս՝ ընդ բանիւ կապանաց արկ զնա, և զգոլ ծոցս իրացն, և ինքն այսր անդր կացեալ, մինչև մեռաւ ի Յերգ[1] գաւառի։ Իբրև տեսին վարդապետք և եպիսկոպոսք կողմանցն Աղուանից՝ եթէ քարձաւ կաթուղիկոսութիւնն ի նոցանէ, և ոչ կայ յազգէն յայնմանէ եպիսկոպոս կամ քահանայ, բայց միայն մանուկ մի տարեկաւագ, առեալ զնա տարան ի Գնջի առ եպիսկոպոսն Արթանէս, և տան ձեռնադրել զնա քահանայ, և առեալ բերեն զնա ի քաղաքն Գանձակ առ իշխօղ քաղաքին՝ որում անուն էր Ամիր Ջ[illegible]մար. և աղաչէին զնա զի հրաման տացէ ձեռնադրել զնա կաթուղիկոս. և նա ասէ. Կարի մանուկ է տիոլք. դուք որ կատարեալ էք հասակաւ՝ ընդէր ոչ լինիք կաթուղիկոս. և նոքա ասեն. Ան զի սա է յազգէ կաթուղիկոսաց, և սմա անկ է աթոռն։ Եւ հրաման տայ ձեռնադրել զնա. և էին անդ եպիսկոպոսք սակաւ. և իբրև ձեռնադրեցաւ, հեծոյց զնա ամիրայն յաձնիւ երիվար, և արկ ի վերայ կտաւ աղնիւ ի պատիւ նմա, և փողահարս յառաջ և զկնի, և հրամայեաց շրջեցուցանել զնա ընդ փողոց քաղաքին։

Եւ այսպէս կալաւ զաթոռն Աղուանից տէր Յովհաննէս զամս բազումս. սա հաստատեաց զաթոռն իւր ի սահմանս Գարեքին, ի քարի անդ զոր ասացաք վերագոյն։ Ա[illegible] նեղեալ յոյլազգեացն՝ գիմեաց գալ յերկիրս Հայոց առ մեծամեծ իշխանս Հայոց աբարէ և Ուանէ. և նոքա մեծաւ պատուով ընկալան զնա, և բնակեցոյց զնա Ուանէ ի քաղաքն Ա[illegible]իսփոր՝ ի վանքն որ կոչի Ստամէն։ Ա[illegible] սկսաւ շինել անդ եկեղեցի մեծ և հրաշալի, և մինչ չև էր աւարտեալ խափանումն եղև. զի էին սուլտանն Խորասանայ Ջ[illegible]ալալդինն կոչեցեալ և եհար զթագաւորութիւնն Ա[illegible]ղուանց, և խոստացաւ մի զկնի միոյ գալ զօրաց այլազգեաց և աւերել զաշխարհս Հայոց, Աղուանից և Ա[illegible]ղուանից։

1 Գուցէ Հերեթ յաշխարհին Ժինն Հերոսի Եղբօր Հայկայ, և Աղուանից, կոչմն Սղնախայ, բա- Հետ գրելի։

Ե

ՎԱՄՆ ՎԱՐԴԱՊԵՏԱՑՆ ԵՐԵԻԵԼԵԱՑ ՈՐՔ ԷԻՆ Ի ԿՈՂՄԱՆԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ, Ո՛ՐՊԷՍ ԵՂԵՆ ԿԱՄ ՋԻ՛ՆՁ ԱՐԱՐԻՆ

Ընդ այնոսիկ աւուրս ժամանակաց էին վարդապետք առաքինիք և լուսաւորք, որք փայլէին յաշխարհի իբրև լուսաւորք. Սահփանոս որդի Յուսկան[1], այր սքանչելագործ և սուրբ, որ և պերեզման նորա յետ մահուան բժիշկ էր ամենայն ախտացելոց. և Գործն Կապրենացի[2], այր իմաստուն և գիտաւոր. և միւս ևս այլ Տիրացու նորա անունն, որ և զաստիճան եպիսկոպոսութեան ընկալաւ. և Պետուճատուր՝ զոր Պզեայրկայ որդի կոչէին՝ ի Մարգէշ քաղաքէ. զսմանէ բազում ինչ առաքինութիւն պատմեցին որք տեսողք լեալ էին. Էր սա որդի մեծատան, յոյժ ողորմած և աղքատասէր. իբրև ասացին նմա թէ մեռաւ մայրն քո ըստ մարմնոյ, գոհացաւ զԱստուծոյ. և գնացեալ ի թաղումն նորա՝ առեալ ոսկի և արծաթ արկանէր ի ձեռս մօր իւրոյ, և կոչէր զաղքատս առնուլ ի ձեռաց մօր իւրոյ, որպէս թէ ինքն իսկ ձեռօք իւրովք է տուեալ։ Եւ իբրև հայրն վաղճանեցաւ, առեալ զամենայն ինչսն բաշխեաց աղքատաց. և կուպղայք էին նորա բազումք, և զայն ետ ի վարձու, և յամենայն ամի առեալ զգինսն՝ գնէր նոքօք մրթս ոչխարաց, և կարէր ձեռօք իւրովք հանդերձս և տայր աղքատաց. և տեսեալ զբարեգործութիւնն նորա բազումք ի Տաճկաց՝ գային առ նա, և մկրտեալ ի նմանէ լինէին քրիստոնեայ։ Եւ տեսեալ անհաւատիցն եթէ նա է պատճառ ամենայնի, կամէին սպանանել զնա, և յայտնի ոչ իշխէին վասն բազմութեան ժողովրդոցն, խորհեցան դնել նմա գաղտնի որոգայթ. և կալեալ մի ի ծառայից նորա խեղդեցին, և բերեալ ի գիշերի ընկեցին առ դրունս վանիցն, և վաղվաղակի ընդ առաւօտն եկեալ պաշարեցին զնա զի սպանցեն զնոսա, որպէս թէ նոքա գործեցին զայն։

1 Ի կողմանց Վանայ, ուր և մանն, մերձ ի ծայր ծովուն։
Արգելանի վանք նորա և գերեզ- 2 Բ. Կաբէնեցի։

Եւ լսեալ քրիստոնէիցն ժողովելոցան անթիւ բազմութիւնք, մեռանել ամենեցուն և ապա տալ զնա ՚ի ձեռս։ Նակ տուրբ այրն Աստուծոյ տեսեալ զգաղտնի որոգայթս թշնամւոյն՝ թէ ՚ի պատճառս նորա զբազումս կամին սպանանել, զի Պարսիկք ունէին զնշխարաւորութիւնն քաղքին, ասէ ցնոսա. Երեկք մեզ զմի գնշխարս, և ՚ի վաղիւն որպէս կամք լեսջիք ձեզ, այնպէս արարեք դուք մեզ։ Եւ հրամայեաց գնշխարաւորն առնել, և խընդրել Աստուծոյ զնզերծին ՚ի պարտութենէն. և ինքն առանձնացուցեալ գինքն և մեծաւ հառաչանօք խընդրեր Աստուծոյ զայցելութիւն։ Եւ վաղիւն բացեալ զդրունս վանիցն, կոչեաց զամենեսեան ՚ի ներս զհատատացեալս և զանհաւատս, և ինքն առեալ զնշանն տէրունական, ասէ բարձր ձայնիւ ՚ի լուր ամենեցուն. Պետ ասեմ այր դու յանուն Յիսուսի Քրիստոսի, որ հաստատեաց զարարածս յոչնչէ, ասա առաջի ամենեցուն թէ ոմն սպան զքեզ։ Եւ նա յարեաւ վաղվաղակի և նայեցեալ յամբոխն՝ ետես զսպանողն իւր, և ասէ. Այս այս սպան զիս։ Յայնժամ ասէ ցնա տուրբն Աստուծոյ. Պարձեալ դիր զգլուխ քո և ննջեա մինչև ՚ի հասարակաց յարութիւնն. և իսկոյն մեռաւ պարձեալ. և այսպէս զերծեալք ՚ի մահուանէ՝ փառաւորեցաւ անունն Քրիստոսի [1]։

2

ՎԱՍՆ ՄԱՀՈՒԱՆՆ ՋԱՔՈԲԻՆ ՋՕՐԱՎԱՐԻՆ

Յետ բազում քաջութեանց և յաղթութեանց՝ զոր արարին մեծամեծ իշխանքն Յակոբ և Յուանէ, ջոպան զօրօք բազմօք ՚ի քաղաքն ՚ի Պարանդ, և առին զնա և աւերեցին զբազում գաւառս որ շուրջ զնոքօք. և ապա գնացին Յակոբ քաղաքն, նմանապէս առին և զնա։ Եւ բազումք ՚ի նոցանէ աղօթակոչք լեալ յանց, զոր Տէր ողորմեսցի՝ ապաստանեալք էին յաղօթարանն իւրեանց. Հրամայեաց Յակոբ քեր-

1 Ասանդի այսպէս և ՚ի Յայսմաւուրս ոմանս, և յայսմանէ Մեռեալոյց կոչի վարդապետն։

խոտ և ցօղունս և արկեալ զնովաւ նաւթ և ձէթ և բորբոքել հրով, և այնպէս այրեաց զնոսա, և առէ ցիշխանս և աշխարհականս [1], փոխանակ իշխանացդ Հայոց՝ զոր այրեցին Տաճիկք ի Ալխջուանի. և կուրայքն՝ փոխանակ քահանայիցն Նագուանայ՝ զոր մորթեցին, և զարիւնն արկին զպարսպովն եկեղեցւոյն, որ մինչև ցայսօր սևացեալ երևի տեղին: Եւ ինքն դարձաւ յաշխարհն իւր, և ի Ձանապարհին հիւանդացաւ. զի ելլին վերք անբժշկելիք յանդամն նորա, և յողջանալ միոյն միսն բուսանէր. և այսպէս վտանգեալ զնա, և յետ սակաւ աւուրց վաղձանեցաւ. և եղև սուգ ամենայն քրիստոնէից. և տարեալ Թաղեցին զնա ի Ա-նահինն ի մեծ եկեղեցւոջն, առաջի դրան խորանին, ներքոյ՝ յահեակ կողմանէ: Եւ սուգ մեծ զգեցաւ Թագաւորն մեծ Ա[ղ]բաց Գէորգի, մականուն Լաչա, որդի Սօսլանայ և Ճամարին, Թոռն Գէորգայ մեծի Թագաւորի, և եղբայր իւր Լուանէ ամենայն զօրօք Ա[ղ]բաց: Եւ ինքս որդի մի Օ[ր]աքարէի մանուկ տիօք Շ ամսեաց անուն նորա, զոր անցոյց Լուանէ ընդ որդւոյ՝ իւրում Սարգսի՝ զոր Ջագն կոչէին, մինչև եհաս յարբունս հասակի, և ապա տիրեաց հայրենի իշխանութեանն:

Ի

ՎԱՍՆ ԼԵՒՈՆԻ ԱՐՔԱՅԻ ԵՒ ՎԱՂՁԱՆԻ ՆՈՐԱ

Իսկ բարեպաշտ և հզօր արքայն Հայոց Լեւո[ն] ի վերայ բազում քաջութեանց զոր արար՝ հնազանդեցոյց զշուրջակայ զազգսն. եկն և ապստամբ կաթուղիկոսն Հայոց Յովհաննէս՝ որ ի Կլայն Հռոմէական, և հաշտեցան ընդ միմեանս, իբրև վաղձանեցաւ տէր Գրիգորիս՝ որ Ա[ղ]բակաղնին: Ապա հիւանդացաւ և արքայն Լեւոն հիւանդութիւն՝ որ և մեռաւ իսկ. և կոչեալ առ ինքն զկաթուղիկոսն Յովհաննէս, և զամենայն զօրագլուխս զօրաց իւրեանց, և զի որդի ոչ ունէր՝ բայց միայն դուստր մի, զոր յանձնեաց ի կաթուղիկոսն և յամենայն իշխանսն՝ թագաւորեցուցանել զնա

1 Առէլ է իշխանս և աշխարհականս. տ. վ. 140:

փոխանակ իւր, և կեալ նմա հնազանդ, և ամուսնացուցանել զնա զուգաստիւ առն. և եդ զնա ՚ի ձեռս կաթուղիկոսին և երկու մեծամեծ իշխանացն, Կոստանդնի՝ ազգականին իւրոյ, և Արիստանայ՝ որ էր հռոմ զաւանութեամբ. և ինքն հանգեաւ խաղաղական մահուամբ ՚ի վեց հարիւր վաթսուն և ութ թուին Յայոց, կալեալ զթագաւորութիւնն ամս քսան և չորս, յաղթութեամբ և բարի անուամբ. և յայժ սպային ամենայն աշխարհն իւր և ամենայն զօրքն առ հասարակ. զի յայժ սիրելի էր ամենեցուն քրիստոսասէր արքայն. և յետ օրինաւոր սգոյն՝ կազմեցան առ ՚ի թագրել, և եղև հակառակութիւն. զի կէսքն ասէին թագրել զնա ՚ի թագաւորանիստ քաղաքն ՚ի Կիս, և այլք ՚ի վանքն որ կոչի Կնեը, զի յայժ սիրէր նա զայն վանքն՝ վասն բարիոք կարգաւորութեան նոցա, և հաճոյական աղօթից. իսկ ոմանք ոչ համարեցան պատշաճ, զի եզը էր տեղին այն, և թշնամիք բազում էին նորա յայլազգեացն. զուցէ ասեն եկեալ հանցեն զդա և այրեսցեն հրով, վասն բազում քինուն[1] զոր ունէին ընդ նմա. ապա միաբանեալ ամենեցուն տարեալ զմարմին նորա թաղեցին ՚ի Կիս. զսիրտն և զփորն տարան ՚ի վանքն Կնեը: Այսպէս հանգեաւ բարեպաշտութեամբ քաջ և յաղթող ամենայնի արքայն Լեւոն:

Եւ կաթուղիկոսն և իշխանք բերին զորդի տեառն Նիստրոքայ՝ զոր բրինձն անուանէին, և եւտուն զդուստրն արքային Լեւոն ՚ի կնութիւն նմա, և թագաւորեցուցին զնա. և էր անուն պատանւոյն Փիլիպպոս, և անուն թագուհւոյն Մարիա: Նմին իբրև եկաց ՚ի թագաւորութեան ամն չորս, խաբեաց զնա հայրն և առ ՚ի նմանէ զթագն Լեւոն արքային, և զպաղատն արքունական[2], զոր յերանելի աւուրս կանգնէին, և այլ զանձս ոսկոյ և արծաթոյ: Իբրև տեսին եթէ ոչ է միամիտ յարքայութեան անդ, ըմբռնեալ զնա արարին արգելս, մինչև բերոյ զթագն և զզանձն զոր տարաւ: Նա հայրն ոչ ետ և ոչ զմին, այլ և ոչ օգնել կարաց որդւոյ իւրում, և թողին զնա անդ մինչև ՚ի նմին մեռաւ: Եւ

1 Ա. Գ. Սխալտըրէանն:

2 Թուի վրան կամ գահաւորակ:

իշխանն մեծ Կոստանդին հաւանեցոյց զկաթուղիկոսն և զայլս ոմանս ի մեծամեծացն՝ թագաւորեցուցանել զորդին իւր զՅեթում՝ մանուկ տիօք, առոյգ մարմնով և գեղեցիկ տեսանելով. իսկ Թագուհին ոչ հաւաներ լինել կին մանկան. այլ ջոգաւ ապաստանեցաւ[1] ի Սեվկիա աւ Ֆռանկս որ անդ, զի մայր նորա Ֆռանկ էր ազգաւ ի Կիպրոս կղզւոյ. և առեալ Կոստանդնի զզօրսն ամենայն պաշարեաց զքաղաքն, մինչև ոչ կամաւ ետուն զԹագուհին ի ձեռս նորա. և տարեալ առաւնացոյց զնա որդւոյ իւրում, և եղեն ի նմանէ որդիք: Եւ յայժ բարեպաշտ էր կինն այն և ողջախոհ, սիրող ամենայն երկիւղածացն Աստուծոյ, և աղքատասէր, պահօք և աղօթիւք հանապազ ձգնէր: Իսկ մեծ իշխանն Կոստանդին իբրև աւ զԹագաւորութիւնն որդւոյ իւրում Յեթմոյ, զամենայն հոգս ալքայութեան յանձն առեալ՝ իմաստաբար կարգաւորէր. զկէսն հնազանդէր սիրով, և զոչ հնազանդսն՝ բառնայր ի միջոյ, զոմանս փախստական առնելով, և զայլս մահուամբ: Բարր սէր և միաբանութիւն ընդ սուլտանին Յուռոմոց, որոմ անուն էր Բլադին[2]: Բայսէս առնէր և ընդ ամենայն շուրջակայ ազգսն, և յամենայն կողմանց խաղաղացոյց զաշխարհս. և կարգեաց զանդրանիկ որդին զԱմբատ՝ զօրավար, և զմիւսն[3] իշխան Թագաւորութեան. և զամենայն վանորայս երկրին անհոգ առնէր յամենայն մարմնական պիտոյից. զի ինքն տայր նոյա զմարմնաւոր պէտս նոցա, զի նոքա միայն աղօթից և պաշտման պարապեսցին: Ացաւ և երկիրն բազմութեամբ մարդկան՝ անարուեստից և արուեստաւորաց, որք ժողովեցան յամենայն կողմանց, փախուցեալք յաւերմանէ Հաւթարին զբազում աշխարհս, որք եկեալ յարևելից հիւսիսոյ՝ տապալեցին զամենայն տիեզերս:

Յետ այսորիկ մեռաւ և կաթուղիկոսն Յովհաննէս կալեալ զաթոռն ամս ութ և տասն: Եւ նստուցանէ մեծ իշխանն հանդերձ Թագաւորաւն զտէր Կոստանդին յաթոռ սրբոյն Գրիգորի, այր առաքինի և հեզ, սուրբ վարուք կեցեալ, և անձին իւրում բարիոք ա-

1 ՕՕ. ապաստանեցաւ:
2 Ալպ-Արսլան-Քէլբապատ:
3 Որ կոչեր Լևոն:

ռաջնորդեալ, որպէս զարդարեաց զկարգ եկեղեցւոյ ուղղափառութեամբ. զսա պատուէին ամենայն ազգք, ոչ միայն՝ քրիստոնեայք՝ այլ և ազգն Տաճկաց: Դեպ եղև երկոյ սուլտանացն գալ՚ի սահմանս Հռոմկլայն կոչեցեալ քաղաքն, ուր էր աթոռ կաթուղիկոսութեան, ՚ի վերայ Եփրատ գետոյն. գնաց կաթուղիկոսն ՚ի տես սուլտանացդ. իբրև գիտացին զգալուստ նորա՝ ինքեանք իսկ ընդառաջ նորա, և բերեալ զնա ՚ի բանակն մեծաւ պատուով, կանգնեցին խորան ազնիւ ՚ի մէջ խորանաց իւրեանց. ՚ի մի կողմանէ խորան Ա՛ելիք ՎԱմլին՝ որ իշխէր կողմանցն Եգիպտոսի, և ՚ի միւս կողմանէ խորանն Ա՛ելիք Ա՚ղրափին՝[1] որ իշխէր մեծ մասին Հայոց աշխարհին և Ա՛ինջազետացդ, նոյնպէս և խորանն եղբօրորդւոյ նորա. և այսպէս մեծապատիւ արարեալ զնա յոլով աւուրս՝ և արձակեցին զնա մեծաւ պարգեւօք, գեղօք և դասակերտօք. զի Ա՛ստուածդ զիարուարչէս իւր փառաւորէ աստ և ՚ի հանդերձեալն:

Եւ եղև սկիզբն Թագաւորութեանն Հեթմոյ ՚ի վեց հարիւր եօթանասունն և երեք Թուին Հայոց:

Ը

ՀԱՄԱՌՕՏ ՀԻՒՍՈՒԱԾՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ ԿՈՂՄԱՆՑՆ ԱՂՕՒԱՆԻՑ ԸՆԴ ՆԵՐՔՈՒՑ ԶՐՈՒՑՑԱՏՐԱՒՔ

Սկիզբն առաջնոյ պատմութեանն եդաք զսուրբ Լուսաւորչէն Հայոց, զառաքեալ և զմարտիրոս և զաթուական երից սուրբ ազգացն՝ Թադէոսի և Բարդողիմէոսի և Յուդայի Յակոբեան, զսուրբ Գրիգորիոս, և աղօթիւք նորա հասաք մինչև ցայսվայր: Իսկ երկրորդ հատածիս դիցուք զԼուսաւորչէս կողմանցն Ա՚ղուանից, որպէս զազգային և զհաւատակցացն մերոց, մանաւանդ զի և առաջնորդք նոցա հայեալեզուք և հայախօսք յոլովք էին, թագաւորք՝ հնազանդ թագաւորաց Հայոց, ընդ ձեռամբ նոցա լեալք, և եպիսկոպոսք՝ ձեռնադրեալք ՚ի սրբոյն Գրիգորէ և ազգացն[2] նորա. և ազգն ուղղափառութեամբ ընդ մեզ

1 Սուլտան Դամասկոսի:

2 Ա. պետութիւն:

կացեալ ՚ի կրօնս. վասն այնորիկ արժան է ՚ի միասին լինել երկուց ազգաց: Եւ մեք համառօտիւք սկսցուք առնել զառաջնորդս նոցա, մինչև ցայսվայր որ Թողաւս:

Ընդ առաջին կողմանցն արևելից առնն զսուրբն Ներսիսի՝ զաշակերտ մեծին Լուսաւորչի առաքելոյն, որ յետ մահուան սուրբ առաքելոյն՝ գնացեալ Հռոմայ առ Յակոբոս եղբայր տեառն, և ՚ի նմանէ ձեռնադրեալ եպիսկոպոս՝ գայ ընդ աշխարհս Պարսից, և հասանէ յաշխարհն Աղուանից. գայ ՚ի տեղի մի անուանեալ Պխիս, և անդ չինէ եկեղեցի. և ինքն կատարի անդէն նահատակութեամբ, անյայտ թէ յումի եղև. և ընկեցեալ զնա ՚ի ջրոյր մի ընդ այլ բազում դիւականց. և անդ եկաց մինչև յաւուրս բարեպաշտ արքային Վաչագանայ վերջնոյ:

Եւ այս են Թագաւորք Աղուանից ՚ի զարմից Հայկայ, յազգականութենէն Հառնայ, զոր կարգեաց Վաղարշակ Պարթև՝ վերակացու և իշխան կողմանցն այնոցիկ. առաջին Վաչագան, Վաչէ, Ուռնայր. սա եկեալ առ մեծ արքայն Տրդատ և առ սուրբն Գրիգոր՝ մկրտի ՚ի նմանէ, և ձեռնադրէ սուրբն Գրիգոր զայր մի ՚ի սպասաւորաց նորա եպիսկոպոս, որ եկեալ էր ՚ի Հռոմայ ընդ նմա, և տայ զնա Ուռնայրի արքայի:— Յաւէսեան, Ներհաւան, Սատոյ, Աբա[1], Նռվաղեն. յաւուրս սորա արար գիր Մեսրոբ երանելի՝ Հայոց, Վրաց և Աղուանից. Վաչէ, զսա բռնութեամբ մոգ արար Յապկերտ Պարսից արքայ, (որ կոտորեաց զսուրբ Վարդանանքն. և յետոյ Թողեալ զմոգութիւնն[2]) ընդ նմին և զԹագաւորութիւնն՝ կրօնաւորեալ խստակրօն վարուք հաշտեցոյց զԱստուած՝ որում և մեղաւն: Եւ ապա Վաչագան բարեպաշտ, զոր յիշատակեցաք ՚ի վերոյ: Սա՝ լուաւ եթէ զսուրբն Գրիգոր ընկեցին ՚ի գուբն, հրամայեաց հանել զամենայն ոսկերս որ ՚ի գբի անդ, և հանեալ կուտեցին զնա շերմ շերմ. և յաղօթս կացեալ բարեպաշտ արքայն զի յայտնեսցէ զոսկերս սուրբ Գրիգորի. և ել հողմն ուժգնակի և ցանեալ զըմբուեաց զամենայն ոսկերսն ընդ երեսս դաշտին, բայց յոսկերաց սրբոյն Գրիգորի. և բարձեալ արքայն մեծաւ

1 ՕՕ. Սոփրաս:

2 Կամ տպաւորին:

պատուով գոհանալով զԱստուծոյ՝ բաշխեաց ամենայն երկրին իւրոյ։

Ապա սուրբն Հռիփսաղիշոյ եկաց եպիսկոպոս. բայց վասն առնս այսորիկ յառաջ կարգելոյ՝ երկմտութիւն գոյ մեզ. զի որ գրեաց զպատմութիւնն Ագաթանգեղոսի՝ զայս անուն կարգէ յաւուրս Ա աչագանայ բարեպաշտի լեալ. և այսմ վկայ օրինքն՝ զոր եդ Ա աչագան արքայ՝ ամենայն եպիսկոպոսիւք Ագաթանգեղոսի, և գրէ այսպէս. Ես Ա աչագան Ագաթանգեղոսի արքայ, և Հռիփսաղիշոյ Ագաթանգեղոսի արքեպիսկոպոս Պարտաւայ. և յետ այսորիկ այլ անուն ոչ գտանի ՚ի կարգ համարոյ եպիսկոպոսաց. այլ մեք որպէս գտաք և եդաք։ Եւ ապա տէր Մատթէ, տէր Սահակ, հինգ. տէր Մովսէս, վեց. տէր Պանտ, եօթն. տէր Ղազար, ութ։ Եւ ապա սուրբ մանուկն՝ Ա րթանայ մեծի որդի Դրիգորիս, եղբայր Յուսկանն, Թոռն սրբոյն Դրիգորի. զոր առաքեաց մեծ արքայն Տրդատ, և սպանեալ եղև ՚ի դաշտին Ա ատնայ՝ վասն վկայութեանն Աստուծոյ. և բերեալ թաղեցաւ Մարաս, և յետոյ նշխարքն գտեալ եղև յաւուրս Ա աչագանայ. ընդ որս և նշխարք սրբոցն գտեալ եղեն՝ Օաքարիայի հօրն Յովհաննու Մկրտչի, և Պանտալեռնի մեծի բժշկի, որ վկայեաց ՚ի Նիկոմիդիայ քաղաքի յաւուրս Մաքսիմիանոսի, զոր տարեալ էր սուրբն Դրիգորիս ընդ իւր։ Եւ ապա տէր Օաքարիա, տանտէր Դաւիթ, մետասան. տէր Յովհաննէս, որ և Հոնացն եղև եպիսկոպոս, երկոտասան։ Տէր Նրեմիա, եբեքտասան. յաւուրս սորա արար երանելին Մեսրոպ զիրս Աստուածոյ մեծաւ ջանիւ։ Տէր Աբաս, չորեքտասան. առ սա և գրեցին ՚ի ժողովոյն Դունայ՝ զսուրբ Աստուածն անմահ և խաչեցար, և ասել մի քննութիւն աստուածութեան և մարդկութեան։ Տէր Ա իրոյ, ամ երեսուն և երեք. սա բազում ամ ՚ի դիպահոլ լեալ ՚ի դրան Խոսրովու Պարսից արքայի, և յետ մահուան նորա ազատեալ եկն յերկիր իւր. սա Թաւիեաց զգեբեալ Հայոց, Ա րայ և Ագուանից՝ ՚ի Ծ աթայ Խազբկ, յորդւոյն Ջաբու-Խաքանեայ, որ գերեաց զաշխարհս[1]. սա շինեաց քաղաքս հինգ[2] յանուն Ծ աթայ,

1 Յերկարագոյնս ոճով պատմէ զայսոսիկ պատմիչն Ագուանից Մովսէս Կաղանկատուացի։

2 Ա յսպէս ՕՕ. Թէպէտ վեց քաղաք համարին, գուցէ առաջինն վերպակաս մնացեալ, զի և ՀՀ մեզ ծանօթ։

ՀՇ տեմար, ՀՇ ասքոր, ՀՇ աբի, ՀՇ իրուան, ՀՇ ամանի, ՀՇ ապրան։ Տէր Յ՛ովաքիմ ամն Հնգետասան. սա ազօթիւք իւրովք ապրեցոյց զմեծ քաղաքն Պարտաւ՝ ի գերութենէ. տէր Յովհաննէս, ամն քսան և հինգ։ Տէր Աւետաւան, ամն երկոտասան. սա անէծ զնախարարս Աղուանից վասն ազգաշատակ խառնակութեանն, և սատակեալք եղեն ամենեքեան։ Տէր Աղիսաբար, ամն վեց. տէր Ներսէս, ամն հօթնեւտասան. սա մինչ եպիսկոպոս էր Պարզմանայ [1] հասանեցոյց զկին ոմն Սպրամ անուն՝ կին իշխանին Աղուանից, զի թէ տացէ զնա ձեռնադրել կաթուղիկոս Աղուանից՝ զամենայն ինչ ըստ կամաց նորա գործեսցէ. և էր կինն աղանդոշն (!) Քաղկեդոնի, և աղաչեալ զեպիսկոպոսունս՝ ետ ձեռնադրել զՆերսէս–Պակուր ՚ի կաթուղիկոսութիւն Աղուանից։ Իբրև անցին աւուրք ինչ եւրեսցեայ զաղանդն՝ զոր յղացեալ ունէր. իբրև յանդիմանեցաւ յեպիսկոպոսաց և յերիցանց՝ հալածական արար զբաժուման, և ժողովեալ առաջնորդաց Աղուանից՝ նզովեցին զնա, և գրեցին առ կաթուղիկոսն Հայոց (Նղիա) օգնել նոցա. և գնխաւորն Տաճկաց Ա.ղամելիք լուաւ թէ առաջնորդն Աղուանից և կին մի՝ կամին ապստամբեցուցանել զաշխարհս ՚ի քէն, զի զՅունօք Թևակոխեն. և հրամայէ Նղիայի գնալ յաշխարհն Աղուանից, և ընկենուլ զնա յաթոռոյն, և զնա և զկինն կապել ՚ի միասին զոտան՝ և արկանել զուղտով որպէս զբեեան. և տանել զնոսա ՚ի դուռն արքունի, զի նշաւակ լիցի ամենայն զօրուն։ Եւ գնացեալ Նղիայի և ներքինւոյն արքայի ՚ի քաղաքն Պարտաւ, և արարին զհրաման արքունի [2]. և մինչ այնպէս անարգանօք ձաղէին զնա՝ ՚ի նեղասրտութիւն անկեալ Ներսէս յեթուէն աւուրց վաղձանեցաւ դառնապէս. և մուրհակ ետուն ամենայն նախարարքն Աղուանից և ամենայն եպիսկոպոսք առաջի ներքինւոյն՝ հրամանաւ և մատնեաւ արքունի, զի առանց կաթուղիկոսին Հայոց հրամանի ոչ ձեռնադրեն կաթուղիկոս Աղուանից։ Եւ ձեռնադրեաց Նղիա յաթոռն Աղուանից զտէր Աբիմեան՝

1 ՕՕ. Գարգամայ։
2 Վասն այնորիկ և ունի ՚ի մեջ զայս պատմէսցայ խափգրծուիւն. տեսան Եղիայի կոչէ զգործն։

որ զպղտորումն Ներսէսի եբարձ, կացեալամ մի և կէս. և եդ կանոնս եօթն տուն։ Տէր Մխայէլ, ամս երեսուն և հինգ. սա կոչեաց զՄաքենոցացն հայրն՝ Սողոմոն, անէծ ղտեարսն Ղազանից, զերից աղգայ ծնունդս ամուսնացեալս, որք բարձան ի միջոյ առ հասարակ. նզովեցին և զնացելսն Պրայ առաջնորդն, զի հրաման տայր անօրէն ամուսնութեան։ Տէր Յնանիա, ամս չորս. տէր Յովսէփ, ամս հնգետասան. ի սորա հինգ ամին լցաւ երկերիւր ամ Նայոց Թուին։ Տէր Դաւիթ, ամս չորս. սա Թափեաց զՀող և զսպաս սրբութեանց, և դեղակուր լեալ մեռաւ։ Տէր Դաւիթ, ամս իննն. սա վաճառեաց անօրինացն զԴաստակերտն և զԱհմանախաչ։ Տէր Մատթէոս, ամ մի և կէս. տէր Յհարոն, ամս երկուս. տէր Սողոմոն, ամս երիս. տէր Գործոս, ամս չորս. տէր Սողոմոն, ամս մետասան և կէս. տէր Յովհաննէս, ամս քսանևհինգ. սա փոխեաց զկաթուղիկոսարանն ի Գերդակոր՝ (որ էր) իւրեանց հովոցայ տեղի, յորժամ հանաւ ի Պարտաւայ։ Տէր Մովսէս, կէս ամ. տէր Դաւիթ, ամս քսան և ութ։ Սա օրհնեաց զանօրէն ամուսնութիւնն Շ աքոյ տեառն. և նորին իշխանին եղբայր աշխարհական՝ հարցեալ ասէ ցնա. Ուստի գաս տէր. և նա ասէ. Ի տանէ եղբօր քո. և ասէ իշխանն՝ Դաւթի. Ել զուրդ որ օրհնեաց՝ մի խոսեսցի, և աջդ չորասցի. և առժամայն եղև այնպէս, և ոչ բժշկեցաւ մինչև ի մահ։ Տէր Յովսէփ, ամս քսան և հինգ. ի սորա երեք ամին՝ լցաւ Թուիս Նայոց երեքհարիւր։ Տէր Սամուէլ, ամս եօթն և տասն. անձամբ առեալ սորա զպատիւն, և յետոյ լուծեալ ի Գէորգ կաթուղիկոսէ Նայոց, ի հարկէ առնու զերկրորդ ձեռնադրութիւնն ի Գուին։ Տէր Յունան, ամս ութ և կէս. սա էր գրան եպիսկոպոս Նայոց. և մինչդեռ ի գերութեան էր Գէորգ՝ սա գայ ՚Ղազանս, և անդրէն ձեռնադրի առանց կամաց տեառն Գէորգայ. և իբրև գնեցին զտէր Գէորգ իշխանքն Ղազանից՝ լուծանէ զնա ի պատուոյն. բայց աղաչեալ զնա իշխանաց Ղազանից՝ վասն երախտեացն որ առ նա, կրկին ձեռնադրէ զնա և ս։ Տէր Սիմէոն, ամս քսան և հինգ. տէր Դաւիթ, ամս հինգ. տէր Սահակ, ամս ութ և տասն։ Տէր Գաբրիէլ, ամս չորեքտասան. ի սորա չորրորդ ամին լցաւ թը-

ական Հայոց ջրերքհարիւր։ Տէր Դաւիթ, ամն վեց. սա առ ձեռնադրութիւն Յովհաննիսէ Հայոց կաթուղիկոսի, առաջնորդ ոչ գոյր տանն Աղուանից զամս քսանևհինգ. ապա մանուկ մի էր յազգէ կաթուղիկոսացդ Դաւիթ անուն, որդի Դէորգայ, թոռն Կարապետի, զոր անուշին և ուստուշին. և իբրև՝ ի չափ հասաւ մանուկն, ապա գրեն թուղթ մաղթանաց Դրիգոր վարդապետն որդի Գոռքակերի, և Դաւիթ որդի Աղաւկայ, և այլ աշխարհն Ողկայ[2] և Աղուանից, առ մեծ հայրապետն Հայոց Դրիգորիա, զոր ընդ այն ժամանակս էր նա՝ ի կողմանս արևմտից. այր մի ընդ թզթոյն առաքեցին, զի ձեռնադրես զնա եպիսկոպոս, և առաքեսցէ և ինքն եպիսկոպոս զմի յիւրոցն, և տացէ ձեռնադրել զմանուկն Դաւիթ յաթոռն Աղուանից. զի մի կորիցէ առաջնորդ յաշխարհն։ Նակ սուրբ հայրապետն ձեռնադրեաց զառաքեալն, հրաման ետ և եպիսկոպոսին կարնայ՝ գնալ յաշխարհն Աղուանից, ձեռնադրել նոցա կաթուղիկոս։ Ապա եկեալ եպիսկոպոսին կարնայ՝ Սահակայ, և միւսն ևս, ձեռնադրեն այլ ևս եպիսկոպոս երկոտասան, ըստ օրինի հրամանաց գրոյ, և ապա ձեռնադրեցին զԴաւիթ կաթուղիկոս, և անուանեցին Դրիգորէս, ըստ անուան կաթուղիկոսին Հայոց։

Ընդ աւուրսն այնոսիկ եղև յանկարծակի մեգ և մառախուղ, և լցաւ առ հասարակ լեառն և դաշտ, և եղև շարժ ահագին, և կործանեցաւ մայրաքաղաքն Դանձակ. և ընտրհօքն Աստուծոյ ապրեալ եղև նորընծայ կաթուղիկոսն. բայց մեռաւ՝ ի շարժմանէն մեծ վարդապետն Դրիգոր, հանդերձ այլ բազմութեամբ արանց

1 Գրիգորիս Փոքր Վկայասէրն, 2 Օ՛. Ալբ։
Էլբայր Ն. Ընտրհալից։

և կանանց և մանկտւոյն, որոց ոչ գոյ Թիւ, զոր ապա-
նին չինտւածքն՝ անկեալ ՚ի վերայ։ Եւ եկն Թագաւորն
Վրաց Դաւիթ և աւար էառ զամենայն ինչան, և
տարաւ զդրունս քաղաքին յիւր յաշխարհն. վասն և
լեառն Ա՛ղտարակ, և կապեաց զձորակ՝ որ անցանէր ընդ
մէջ նորա, և եղև ծուլ՝ որ է մինչև ցայսօր ժամանակի,
Եւ յետ ումեք ամի երևեցաւ աստղ մի գիսաւոր ի
սահմանս հիւսիսոյ, որ ունէր ճառագայթս ի կողմն
արևելից։ Եւ ապա տէր Դեժ-
դէն, որ եթող զկարգն և էառ կին. և յետ նորա
տէր Աստեփանոս, ամս քառասուն. և զկնի նորա տէր
Յովհաննէս, ամս քառասուն, որ շինեաց եկեղեցի մի
հրաշալի ՚ի գաւառն Ա՛խալցո, ՚ի վանքն՝ որ կոչի Խոտա-
ջի. սա որ եհաս յաւուրս մեր։ Եւ ապա տէր Գերասէ
եղբայր նորին, այր հեզ և բարի բնութեամբ, որ ձեռ-
նադրեալ եղև ՚ի վեց հարիւր ութսուն և չորս Թուին
Հայոց։

Թ

ՎԱՍՆ ԵԼՍՆԵԼՈՑ ԹԱԹԱՐ ԱԶԳԻՆ ՋՕՐՈՒՆ, ԵՒ ՓԱԽՍՏԱԿԱՆ
ԱՌՆԵԼՈՑ ՋԹԱԳԱՒՈՐՆ ՎՐՅԱ

Ի վեց հարիւր վաթսուն և ինն Թուին՝ մինչդեռ
հպատակեալ էին Վրք յորք յաղթութեամբն զոր յաղթե-
ցին Տաճկաց, յինքեանս կորզելով բազում գաւառս
Հայոց ՚ի նոցանէ, յանկարծակի յեղակարծումն ժա-
մու յոլով զունդք զօրու ծանուն՝ ամենայն կազմութեամբ
ելեալ ընդ դուռն Դարբանդայ և եկեալ յաշխարհն
Ա՛ղուանից, գալ անցանել յաշխարհս Հայոց և Վրաց,
և զոր ինչ գտանէր ՚ի Հանապարհին՝ զամենեսեան սրոյ
Ճարակ տայր, զմարդ և զանասուն՝ մինչև ՚ի շունս ան-
գամ. և մեծապէն հանդերձից և ընչից փոյթ ոչ առ-
նէին, բայց ՚ի ձիոց։ Եւ փոյթ ընդ փոյթ գոգան մինչև
՚ի քաղաքն Տփղիս, և գարձեալ եկին յաշխարհս Ա-
ղուանից ՚ի սահմանս Ճ ամբոր քաղաքի. և համբաւ

ատուածեան գայր զնոցանէ, թէ մոլք են և քրիստոնեայ հաւատով և նշանապարծ, և եկեալ են՝ ի վերէ խընդրուածին քրիստոնէից՝ որ՝ ի բռնութենէն Տաճկաց. և ասէին թէ ունին եկեղեցի վանեալ և խաչ սքանչելապարծ, և բերեալ կապիճ մի գարի՝ արկանեն առաջի խաչին, և ամենայն զօրքն առեալ տանին տան երիվարաց իւրեանց, և ոչ պակասի. այլ իբրև եկին[1] ամենեքեան և տպառեն՝ ի տանելոյ՝ նոյն չափ կապճին անդէն ինայ, նոյնպէս և զիերակուրս մարդկան. և այսպիսի հանճար ատուածեան լցաւ յաշխարհս Պ՚ան այնորիկ ոչ ամրացան բնակիլք աշխարհին, մինչև երէց մի աշխարհական առեալ զժողովուրդ իւր, և խաչիւք վառելովք ընթացաւ առաջի նոցա. և նոցա սուր՝ ի վերայ եղեալ կոտորեցին զնոսա առ հասարակ. և այսպէս յանհոգս տեսեալ զբազումս՝ կոտորեցին, և աւերեցին զյոլով տեղիս. և ինքեանք ամրացուցին զանխոս իւրեանց (՝ի մօր և՝ ի տղմուտ տեղիս) որ կայ՝ ի մէջ երկուց քաղաքացն՝ Պարտաւայ և Ռեղուկուսայ[2], յամայատեղի[3] տեղիս, զոր Ռեղամէջն կոչեն. և ինքեանք յանդուգն յարձակմամբ աւերէին զբազում գաւառս Պ՚ան գալ զօրաժողով լեալ Թագաւորն Պ՚ոյ Պ՚աշայն, և մեծ հազարապետն Ռշանէ, եկաց ընդդէմ նոցա մարտիւ պատերազմի. և ինքեալ՝ ի գաշտավայր տեղիս՝ զոր Խոնանն[4] անուանեն, քանզի անդ պատահէր Թշնամեաց, և մարտուցեալք ընդ միմեանս՝ զառաջինն՝ ի փախուստ դարձուցին զԹշնամին. բայց քանզի գարան դրծեալ էր Թշնամեաց՝ յարեան յետուստ կոտորել և սկսան կոտորել զզօրսն Պ՚ոյ. դարձան ընդդէմ և փախուցեալքն, ատեն և անտի՝ ի մէջ առեալ մեծ հարուածս հասուցին՝ ի վերայ զօրսն քրիստոնէից. և փախեաւ Թագաւորն և իշխանքն ամենայն. և ժողովեալ Թշնամեացն զաւար զօրսն՝ տարան՝ ի բանակս իւրեանց: Դարձեալ միւսանգամ զօր ժողովեալ Թագաւորին Պ՚ոյ և բազում քան զառաջինն, կամեալ թափարք յոյս արշաւանս:

1 Ա յատկս ՕՕ:

2 Պայլիզան ըստ արևելեայց՝ ի դաշտին մեծի Ասէացւոց՝ ուր Կուր և Երասխ խառնին յիրար. զքաղաքն համանուն աւերեցին

3 ՕՕ. յամագայն:

4 Ի հարուածակոխմն Տփղեայ, ՚ի սահմանակցութեան Վրաց, Ասղուանից և Հայոց:

ցեալ տալ պատերազմ ընդ Թշնամիսն. իսկ նոցա առեալ զկին և զորդիս և զամենայն աին՝ կամեցան անցուցանել ընդ դուռն Դարբանդայ յաշխարհն Իբերաց. իսկ զօրն Տաճկաց որ՝ի Դարբանդ՝ ոչ ետուն նոցա մուտ անցից. և նոցա հատեալ զլեառն Կովկաս ընդ անանց՝ ՚ի վինն ընդուել զփայտ և զքար նաև զախք Իբերաց և զերիվարս և զկազմած պատերազմական, անցին գնացին յաշխարհն Իբերաց։ Եր անուն գլխաւորին Աբբատա Բահատուր [1]։

Ժ

ՎԱՍՆ ՈՐ Ի ՍԱՀՄԱՆՍ ԳԱՆՁԱԿԱՑ ԱՆԿՈՒՄՆ ԵՂԵՒ ԶՕՐԱՑՆ

Զկնի այսորիկ իբրև ժամանակք լինչ անցին՝ի վերայ, այլ զօր եւ՚ի Հոնաց, զոր Խուչանն [2] անուանէին, և եկեալ ընդ աշխարհն Վրաց առ Թագաւորն Աշա, և առ Հազարապետն Ուանէ, զի տացէ նոցա տեղի բնակութեան, և նոքա ծառայեսցեն նմա միամտութեամբ. իսկ նոքա ոչ առին յանձն լինել նոցա ասպնջական. և նոքա դէմ եղեալ գնացին առ բնակիչսն քաղաքին, և նոքա յօժարութեամբ ընկալան. քանզի էին՝ի մեծ նեղութեան՝ի զօրացն Վրաց, որք աւերէին զաշխարհս նոցա, և գերէին զմարդ և զանասուն, ետուն նոցա տեղի բնակութեան՝ի սահմանս քաղաքին, և օգնէին նոցա կերակրովք և ըմպելեօք. զի նոքօք կայցեն ընդդէմ Թագաւորութեանն Վրաց։ Իսկ զօրքն Հոնաց դադարեալ անդ և զետեղեալ, զօրաժողով եղեալ ասպա Ուանէ և զիմեաց Տպարտութեամբ՝ի վերայ նոցա, մեծամեծս փքայր բնաջինջ առնել զնոսա և զքաղաքն. ՚ի բազմութիւն զօրացն յուսացեալ և ոչ յԱստուած, որ տայ զյաղթութիւնն ումմ և կամի։ Եւ իբրև հարան ընդ միմեանս՝ եղին խուժքն հանպատրաստից յորջից իբրեանց, և զվաստակեալ և զքեալ զօրսն [3] Վրաց՝ի բե-

1 Ա. Գ. Սաբա Սաբահապուր։ Ըստ պատմութեան Թաթարաց երկու զօրավարք էին առաջնորդք, Սուպուդաի և Չեպէ։

2 Ղփչաքք կամ Քափչաքք տոհմակից են Թուրքաց, և ոչ քնիկ Հոնք. և կալեալ էին զերկիր Խազրաց։ — Տես և վ. 142։

3 ՕՕ. զարուն։

ран սրոյ արկեալ, և զբաղումն ձերբակալ արարեալ և
զինացորդան փախուցեալ. և մեծ բեկումն եղև յաւուրն
յայնմիկ զօրուն քրիստոնէից. և այնքան թողան՛ի ձե-
ռանէ Պատուճոյ՝ մինչ զի մի վատ այր զբաղում քաջաց
արս և անուանիս եղեալ՛ի պատերազմունս՝ իբրև հո-
վիւ զհօտս առաջի անցուցեալ էին՝ բերէին[1]. զի ե-
բարձ տէր զօգնութիւն՛ի սրոյ նոցա, և ոչ ընկալաւ
զնոսա՛ի պատերազմի. բերէին զարս պատուականս և
վաճառէին ընդ դոյզն հանդերձից և կամ ընդ կերա-
կրոց. և Պարսիցն գնեալ զնոսա՝ յանհնարին նեղու-
թիւնս կեղէին զկեանս նոցա. և այնքան պահանջէին
՛ի նոցանէ կշիռս ոսկւոյ և արծաթոյ՝ մինչև անհնարին
լինել հատուցանել. և բազումք մեռան՛ի բանտի անդ:
Ընդ ըմբռնեցաւ ընդ այլն և Կրիկոր որդի Հաղբա-
կայ[2], եղբայր քաջին Վասակայ, և Պապաք նորուն
եղբօրորդի. զի երեք որդիք էին Վասակայ՝ Պապաքն,
Արդեմ և Հասան, արք քաջք և անուանիք, որ յահէ
նոցա դողայր ամենայն զօրն Տաճկաց. զՊապաքն սպա-
նին՛ի պատերազմի, իսկ զԿրիկոր ձերբակալ արա-
րեալ՝նեղեցին բազում խոշտանգանօք, զի ուրասցի ըզ-
Քրիստոս, և նա ոչ առ յանձն. այլ առաւել անար-
դէր ..... զ՚օրէնսդիրն նոցա .... և ..... զ՚օրէնս
նոցա. և նոցա բարկացեալ քարշեցին զնա մերկ՛ի վե-
րայ երկրի, և փշով քանցեցին զամենայն մարմինս նո-
ցա. և այնքան տանջեցին զնա՝ մինչև՛ի գանելն նոցա
աւանդեաց զհոգին, և ընկալաւ՛ի Քրիստոսէ զվկայա-
կան պսակն: Ապա գաւառօք խաչենեցիք էին՝ յերևե-
լի ազգէ, հաւատով քրիստոնեայք ուղղափառք և ազ-
գաւ Հայք. և զայլ բազումս՛ի գերելոցն՝ անօրէնն Պար-
սիկք զանազան տանջանօք նեղէին, քաղցիւ, ծարաւով
և մերկութեամբ: Իսկ քրիստոնեայքն՝ որ էին՛ի քա-
ղաքին Վանձակայ՝ բազում բարեգործութիւնս ցու-
ցին առ գերեալսն. զոմանս գնելով և ազատելով, և
զկեսս կերակրելով, և կիսոցն հանդերձս զգեցուցանե-
լով, և զվախճանեալսն թաղելով. և այսպէս յամե-
նայն կողմանց բարերարութիւնս ցուցանելով: Հայց
յետ աւուրց ինչ անցանելոյ՝ դարձեալ զօր ժողովեաց

1 Ա յատկս OO:

2 Խաչենոյ իշխան: Տես Վ. 143:

մեծ հաշարապետն Իւանէ, երթալ առնուլ զվրէժս յայնցանէ՝ որք կոտորեցին զքօրս նորա. և դիմեալ ՚ի վերայ նոցա յեղակարծ ժամու՝ հար սատակեաց զնոսա. ժադուժան ՚ի բերանոյ սրոյ, և զաւար նոցա և զմանկունս գերի վարեալ ած յաշխարհն իւր։

ԺՍ.

ՎԱՍՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՄԽԻԹԱՐԱՅ՝ ԹԷ ՈՒՍՏԻ՛ ԷՐ, ԵՒ ԿԱՄ ՈՐՊԻՍԻ ՈՉ ԷՐ

Հռչակաւորն այն և մեծիմաստն գիտութեամբ՝ էր ՚ի քաղաքէն Իանձակայ, քրիստոնեայ ծնողաց զաւակ, որք ետուն զնա յուսումն գրոց սրբոց. և իբրև եհաս նա յարբունս հասակին՝ ձեռնադրեցին զնա քահանայ կուսակրօն. և պաշտեալ զքահանայութիւնն յոլով ամս՝ ցանկացաւ նա հմուտ լինել գրոց սրբոց և առակայ խորհրդոց՝ որ կան ՚ի նոսա. և հանդիպեցաւ նա Յովհաննէսի վարդապետի Տաւուշեցւոյ անուանեալ, որ ՚ի ժամանակին յայնմիկ երևելի էր գիտութեամբ. զառաջինն յաշխարհականաց կեանս կացեալ սակաւ ինչ, և ծնացեալ յամուսնոյն, կրօնաւորութեան հետևեալ և հասու եղեալ աստուածայնոց գրոց պարապեալ. և[1] էր վարդապետն Յովհաննէս շրջագայ տեղւոջէ ՚ի տեղի շրջելով, քարոզելով զբանն Աստուծոյ և ուսուցանելով զբարի վարս մարդկան։ Ա՛ա բազում իրս կարգաւորեաց կարգաց և կրօնից քրիստոնէից. զի դեռ ցայն ժամանակն ՚ի տեղիս տեղիս լուծանէին զշաբաթ և զկիրակէն սուրբ քառասնորդաց աղուհացին. սա եղ օրէնս պահօք վճարել, որպէս զայլ աւուրս շաբաթուն. բայց միայն զի տօնեսցեն ՚ի շաբաթուն՝ վկայիցն Աստուծոյ, և ՚ի կիրակէն՝ խորհուրդ յարութեանն Քրիստոսի, և մատուսցեն պատարագ. և այսպէս հաստատութիւն կալաւ յամենայն տեղիս, զի մինեւրեակ՝ պահօք վճարել, որ յառաջն կէսք պահօք վճարէին և կէսք ոչ։ Ա՛ացեալ առ սմա Մխիթարայ, և առ այլս ոմանս[2] էառ սա զանուն վարդապետական. և այնու ոչ չատացաւ,

1 ՕՕ. Ե ՚ի էր։ 2 ՕՕ. Ե այլս ոմանս։

այլ ջոջաւ յարևմուտս կոյս յաշխարհն՝ որ կոչի Աեաւ
լեառն[1] առ վարդապետան՝ որք էին ուսուցիչք անդ. և
զայն ինչ՝ ի վեր ոչ հանեալ, թէ էին նորա առեալ
զայն պատիւ, այլ բազում ինչ օգտեալ՝ ի նոցանէ՝ եկն
նա՝ ի Կարնոյ քաղաք. և անդ գտանէ նա զեպարեպաշտ
իշխանն մեծ՝ զանուանեալն Վրդուդ և հաւատոյն քրիս-
տոնեայ, որ ընդ այն ժամանակս անդ լինէր, սարտու-
ցեալ՝ ի թագաւորէն Պրաց. և եղեալ նորա ծանօթ՝
սիրեցաւ՝ ի նմանէ իբրև զհայր: Եւ յետ այսորիկ
դարձաւ նա յաշխարհն իւր. և ել համբաւ իմաստու-
թեան նորա յաշխարհս, և բազումք աշակերտէին նմա
յուսումն վարդապետութեան, և ապա նեղեալ նա՝ ի
Տաճկաց՝ ի սպրելոյ կաթուղիկոսին Վրկանէ Սահե-
փանոսի, և եկեալ նա յաշխարհն Կաչենոյ առ Պ-
թանկ իշխանն Հաղբերդոյ[2] և առ եղբարս նորա, որք
բազում պատուով պատուեցին զնա, և անդ դադա-
րեալ աման ինչ. ապա դարձեալ իշխանին Վրդի՝ ի հայ-
րենիս իւր, գալ յաշխարհն Կաչենոյ և Տահկանա-
բերդոյ, և բազում մեծարանս եդ նմա Թագուհին
Պրաց՝ որ Քոամարն կոչէր, դարձուցանելով զնա՝ ի հայ-
րենի տեղին, և յայլս յորվա. սա է հայր Սադունին:
Նակ իբրև լուաւ վարդապետն Սիւնեաց թէ դարձաւ
Վրդուդն[3] ի հայրենիսն իւր, եկն նա առ նա վասն ա-
ռաջին սիրոյ և միաբանութեանն որ առ միմեանս, և
բնակեցաւ նա՝ ի վանքն որ կոչի Գետիկ, ի գաւառին
Կաչենոյ, որ ի վերայ գետոյն մեծագունէ զոր անուա-
նեն Ջտևոյ գետ, յաջմէ կողմանէ գետոյն. և էր ա-
ռաջնորդ վանիցն վարդապետն՝ որ Կարկաւագ անուա-
նիւր՝ աշակերտ նորին. որ բազում ուրախութեամբ
ընկալաւ զնա և ինքն սպասաւորէր նմա, և անդ դադա-
րեալ յոլով ժամանակս: Ապա եղև շարժ սաստիկ՝ որ
զբազում՝ տեղիս կործանեաց և տապալեաց զբարձրա-
բերձ շինուածս. ընդ որս և խախտեցաւ եկեղեցին Գետ-
կայ սաստիկ յոյժ, մինչ զի ոչ լինել հնար վերստին նո-
րոգելոյ: Ապա երկմտեալ բնակչացն կամէին ցրուիլ
այսր և անդր, ոչ միայն վասն խախտելոյ եկեղեցւոյն՝

1 Ի Կիւլիկիա:
2 Վ. 140:
3 Որ. վարդապետ:

այլ և զի նեղեալ էին ի մերձակայից. քանզի ոմն յիշխանացն Սարգիս անուն՝ փոխեաց զդիւղն իւր ի տեղւոջէն իւրմէ, և բերեալ չինեաց մերձ ի վանս այլ գեղ, և այնուհետև բազում գժտութեամբ կային ընդ միմեանս, քանզի պարսաւադէտք էին հանապազօր։ Իսկ վարդապետն սուրբ արգել զնոսա անդ ի խորհրդոյն յայնմանէ՝ ոչ թողուլ զմիմեանս և ցրուիլ այլ ի միասին կեալ և խնդրել իւրեանց բնակութիւն։ Ապա ջոգան միաբան առ մեծ իշխանն Լանկ եղբայր զօրավարին Պատայ Օաքալէի, որդիք քեռ բարեպաշտի իշխանին Վրդին, որ ընդ այն ժամանակս իշխէր բերդին Կայենայ և գաւառին, և ցուցին նմա զխնդիրս զի տացէ նոցա տեղի ուր զվանքն իւրեանց փոխեսցեն. և նա հրամայեաց տեսանել, թէ ո՞ր տեղի պատշաճ իցէ. և նոցա շրջեալ գտին տեղի վայելուչ և գոգաձև առ ստորոտս երկուց լերանց՝ որ կայ ի գլխոյ նորա, զոր անուանեն զտեղին Տանձուկաձոր[1]. և էր ի նմա գիւղ, և ձորակ մի փոքրագոյն անցանէր ընդ մէջ նորա, և միւս ևս յորդագոյն յաջմէ կողմանէ, տեղի փայտաւէտ և ջրաւէտ. անդր համարեցան թէ պատշաճ իցէ զետեղիլ։

ԺԲ

ՎԱՍՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՎԱՆԱՑ ՆՈՐՆ ԳԵՏԿԱՑ

Ակսաւ այնուհետև վարդապետն աքանչելի հանդերձ միաբանօք իւրովք ձեռն ի գործ արկանել շինուԹեան վանից և եկեղեցւոյ՝ ի վերաստացեալ ձորն Տանձուտայ, հրամանաւ մեծ իշխանին Լանկի. և շինեցին եկեղեցի մի գեղեցկաչէն փայտակերտ, և օծեալ կնքեցաւ յանուն սուրբ Առաւօտչին Գրիգորի։ Եր ի տօնախմբուԹեան սուրբ եկեղեցւոյն և սուրբ վարդապետն Յակոբ Տարօնացի, առաջնորդ սուրբ ուխտին՝ որ կոչի Հաղարծին, այր սուրբ և առաքինի և գիտուԹեամբ հռչակեալ, մանաւանդ երաժշտական արուեստիւ։ Սա պայծառացոյց զսուրբ ուխտն՝ յորում առաջնորդ էր ինքն, որ յառաջ քան զգալ նորա ամայի

1 Տանձուտայ—ձոր, որպէս և ստորև ասէ։

էր և խամրացեալ։ Օ սա պատուէր մեծապէս Թագաւորն Պարսից Դարդէ Հայր ծանարին. և ետ եկեղեցոյն ձեռնադրաւ իւրով զերկու գիւղան՝ զԱբասաձոր[1] և զՅանձաւան, և այգի մի՛ ի Պինջնաշխնին. և էգ նըզուկս ամենայն սրբովք՝ զի մի՛ ոք իշխեսցէ հանել զնոսա՛ի վանացն։ Սա եբեր զխաչն[2] ՛ի կողմանս արևելից[3], զանմարմին եղանակս՛ի մարմին ածել, զարարեալսն ի՛ մաստնոց առաջնոց, որ ցայն ժամանակս չէր ցրուեալ ընդ աշխարհս. սա եկեալ գրեաց և ուսոյց բազմաց. և ինքն անդ հանգեաւ՛ի Քրիստոս, և կայ Թաղեալ յարևմտից կուսէ եկեղեցւոյն։ Ընդ ինեցին՛ի նորն Պետիկ՝ փոքրագոյն եկեղեցի մի յանուն սուրբ կարապետին Յովհաննու, ՛ի ծնունդս կանանց մեծի և Քրիստոսի ձեռնադրողի, ՛ի գլուխ վանիցն. և ապա սկսան հինն արկանել մեծափառ եկեղեցւոյն կոփածոյ վիմօք և գեղեցկաշէն արուեստիւ գմբեթայարդ երկնանման, սրբալի տեառդաց, սկսեալ՛ի վեց հարիւր քառասուն Թուին Հայոց, զկնի ջրից ամաց առնլոյ զԱրուսաղէմ Սալահադնին, և կատարի յամս հինգ՛ի խանգար զատկին Յունաց։ Ապա զատկի բազում հակառակութեամբն և վէճ՛եր ամենայն ազգաց ընդ Հայոց[4], և առաւել Պարսից ազգին. զի լըբեալ ասէին զԹիւրն ուղիղ. զոր եղծ և ապականեաց Լրոն անիծեալ, որ՛ի դրան ամբարշտին Յուստիանոսի. որ վասն ոչ կոչելոյ զնա՛ի ժողովն որ եղև Նղեքսանդրիա, վասն լրմանոյ զատկաց և այլ ծանից. յետ վճարելոյ երկերիւրեկին Նղրեասայ, զինն ամ խանգար եկաց[5] տօնքն ամենայն. զի ոչ կարացին վարել ուղղապէս զարուեստն նոյա՝ յետ վճարելոյն։ Ապա իմաստասէր ոմն Լատ անուն՝ ձայն արկեալ առ ինքն կոչել զիմաստուն ամենայն ազգաց. զՊեննեհէզ հրեայ, զՊոլիգան Յունաց, զՆեզե՛ի Պամրաց, զԼոքս՛ի Յունաց, և զայլ յոլով. և սկսեալ՛ի ներքուստ՛ի վեր Թուել զամն, և գտեալ հաստատուԹեամբ՝ կարգեցին զհինգ հա-

1 Ի կայէն գաւառի, ՛ի հիւսիսոյ արևելից Ծովըն Սևանայ։
2 Ընչանս եղանակաց երգոց։
3 Բ. ՛ի կողմանէն յարևելից։
4 Զոր ՛ի զուր ջատագովէ հե-
ղինակդ նովին հակառակութեամբ կամ կանխակալ ագիտութեամբ և դիւրահաւանութեամբ։
5 Ա. Գ. խանգարեաց։

բիւրեակ բոլորն՝ անտարակուսելի օրինակ յաւիտեան. զոր տարեալ առ Յուստինոս կայսրն, նա հրամայեալ Իրանի, և նա նախանձաբեկ եղեալ վասն արուեստին մեծանձնութեան և իւրն ոչ կոչելոյ [1], կամեցաւ եղծուածն ինչ առնել իրացն. փոխեաց զապրիլն եօթնեւտասանն՝ի վեշտասան և զվեցն՝ի հինգ. բաղայս եդեալ [2] թէ այլն ամենայն Հիմարիտ է քայց յայնմանէ. այն վեշտասան ոչ ինչ սխալէ, իսկ այն հինգն յինանուն և հինգ [3] ամի հանապազ սխալէ զնոսա, ընդ Իրէայս առնելով զզատիկն,՝ի ներքոյ լրմանն. քանզի շաբաթ ածէ նոցա հինգն, իսկ վեցն՝ մեզ կիրակէ, որպէս դիտեցաւ և աստ: Եւ վասն այսպիսի վիճման Իայոց և Պրոց՝ առաքէ Թագուհին Պատմար և սպարապետն Օ՝աքսրիա զմի ոմն՝ի մեծ իշխանացն Պրոց, նոյնպէս և՝ի Իայոց՝ Աերուսաղէմ, յառաջ քան զզատիկն, տեսանել զՀիմարիտն. և այսոցիկ զատաւճիռ՝ լուծումն կանԹեղին որ՝ի տուրբ զերեզմանին Քրիստոսի. զոր ասեն խնդրուածովք սրբոյն Գրիգորի լուսաւորչին, առանց ձեռաց մարդոյ և զգալի հրոյ՝ լուցանիլ հրամանաւն Աստուծոյ յամենայն զատիկ. որ լինի մինչև ցայսօր ժամանակ: Բայց զվերակացուԹիւն քաղաքին Տաճկաց ունէին, հարցին ցքրիստոնեայս, Թէ Ե՞րբ իցէ զատիկն ձեր. պատասխանեցին որք՝ի Յունաց և այլոց ազգաց՝ Թէ Յայսմ կիրակէ. իսկ ազգն Իայոց ասեն, Ոչ յայսմ այլ միւս կիրակէն: Իսկ վերակացու Տաճկին այր իմաստուն էր, հրամայեաց հինգշաբԹին զամենայն կանԹեղս որ էին՝ի տաճարի անդ և փակել զդուրսն, և կնքեաց մատանեաւ իւրով. և ումեք հրամայեաց մտանել՝ի ներքս և տեսանել Թէ ո՞ր ազգն իցէ Հիմարիտ. և իբրև անց օրն այն և եղև երեկոյ, և սպասէին լուցման կանԹեղին, և իբրև ոչ լուցաւ՝ հրամայեաց իշխանն անարգանօք հանել զամենեսեան, և զանիւ մեծաւ իբրև զտգէտս և զտուտս, քայց՝ի Իայոց: Եւ իբրև անց շաբաթն և եկն միւս կիրակէն՝ զոր ասէին Իայք զատիկ, մինչդեռ՝ի պաշտաման և յաղօԹան էին՝ի տաներորդ ժամու՝ ազդումն եղև ամենեցուն և

1 ՕՕ· կէտս:
2 ՕՕ· խոխեաւԼ:
3 ՕՕ· ՅԵ:

վաղվաղակի լուցաւ կանթեղն առանց ձեռաց, և եղև ուրախութիւն մեծ ի յայոց, և զան Հարին [1] այլոց ազգաց, և գովէին զաղգս ի յայոց և զհաւատս նոցա. և առաւել ազգն Տաճկաց, և անարգէին ձաղէին զՅոյնս յաւուրն քաղաքս որ ընդ իշխանութեամբ Տաճկաց։ Տեսին զայն և արքն առաքեալք ի Թագաւորէն Վրաց և ի զօրավարէն, և եկեալ պատմեցին զոր տեսանն, և խնդաց մեծ զօրավարն։ Օ աքարէ, և առնոյն ի յայեաւարն՝ որ էին ի զօրուն։ և առաւել ևս հաստատէին յուզիլ հաւատս ի յայոց։

Յայսմ ամի եղև աւարտ հռչակաւոր և խնդատես եկեղեցւոյն Գեղարդայ, զոր շինեաց վարդապետն՝ իւր միաբանօք, ձեռնտուութեամբ Վ. ախթանկայ Իսաչենեցւոյ՝ տեառն ի յաղթերքոյ, և եղբարց իւրոց՝ Գրիգորայ և Գրիգորիսի և Իոդանայ և Վ. սահակայ, և այլոց իշխանաց բարեպաշտաց, ոյդեսոյ Վրդին՝ Գաւթի և Սադունին. նա և քոյր սոցա՝ որում անուն էր Վ.րզու-խաթուն՝ կին Վ. աղթանկայ ի յաղթերքոյ. սա բազում ինչ յօժանդակ եղև, արար և վարագոյր գեղեցիկ՝ դատերովք իւրովք՝ ծաձկոյթ սուրբ խորանին, զարմանալի տեսողաց, ի մազոյ այծէյն կակղագունից, ներկեալ պեսպէս և զանազան գործ գնդակերպ [2], և նկարեալ պատկերօք Ջիզրտագոյն հանուածովք տնօրինականօք Գրկչին և այլ սրբոց, որ հիացուցանէր զտեսողն, և որք տեսանէին՝ օրհնութիւն տային Վ.ստուծոյ, որ ետ կանանց իմաստութիւն ոստայնանկութեան և հանճար նկարակերտութեան, որպէս առ Յոբն ասացաւ. ոչ ինչ ընդհատ էր ի կազմուածոյ խորանին՝ զոր արարին Գեսեղիւկ և Նղիաբ, թէ ոչ յանդգնութիւն է ասել՝ թէ նոյն Յոգւովն և զսոսա։ Եւ ոչ միայն այս եկեղեցւոյս արար ծաձկոյթ, այլ և այլոց եկեղեցեաց, Յաղբատայ՝ և Վ.ակարայ վանից, և Գադի վանից. քանզի յոյժ սիրող էր եկեղեցեաց բարեպաշտ տիկինն. և արարին նաւակատիս եկեղեցւոյն մեծապէս խմբիւք. անդ էր և եպիսկոպոսն Յաղբատայ Յովհաննէս, առաքինի և սուրբ այր, և այլ բազմութիւն քահանայից և պաշտօ-

1 Ա. գ. յաւելուն կՅոյնան։ 2 ՕՕ. գանգաւէրպ. Թերևս և խանգաւէրպ։

նէից. և ածեալ կնքեցաւ եկեղեցին յանուն սրբոյ Աս-
տուածածնին: Շ ինեցաւ և գաւիթն եկեղեցւոյն գե-
ղեցկազարդ և կոնաձոյ վիմօք, և յոլովք ձեռնտու ե-
ղեն, մեծ զօրավարն Օ աքարէ և եղբայր իւր Ուանէ.
քանզի նոքա ունէին զիշխանութիւնն գաւառին, և յոյժ
սիրէին զվարդապետն. քանզի Օ աքարէ խոստովանու-
թեամբ նորա հոգևոյ որդի էր. և ընծայեցին եկեղե-
ցւոյն սահմանն ջրապարճիւք՝ լեռնէ ի լեառն. և բուլ մի
Ա.բաստաճոր, և զՇ որաձորն[1] ի նահանգին Ուջնոյ,
և զՈչավա ի գլուխն վանացն. և շինեցին ինքեանք
գիւղ մի մերձ ի ծովակն փոքրագոյն՝ անհնարին խո-
րութեամբ, և անուանեցին զգիւղն յանուն ծովակին՝
Տզրկածով, քանզի բազում մօրասեր և տղմասէր սո-
ղունք կային. և այլ միւս ևս փոքրագոյն գիւղ ի ներ-
քոյ վանիցն՝ զոր Ուրելանէջ[2] անուանեցին. շինեցին և
այլ մատրունս յանուն սրբոց առաքելոց և սրբոյն Գրի-
գորի: Եւ ինքն քանզի սիրեր զանապատ և զամայու-
թիւն[3], արար իւր տուն բնակութեան բացագոյն ի վա-
նացն. շինեաց և անդ փոքրագոյն եկեղեցի մի փայտա-
կերտ յանուն սուրբ Գրիգորի. և ի ժամանակի ծե-
րութեանն՝ ի գլուխ վանիցն յաջմէ կողմանէ շինեաց
եկեղեցի մի՝ շուրիմ գերեզմանի իւրոյ, կրով և վիմօք
մածուցեալ սրբագործ, յանուն Գրիգորի Լուսա-
ւորչի:

ԺԳ

ԹԷ ՈՑՓ ԷԻՆ ՈՐՓ ԵՐԵԻԵԼԻՓ ԷԻՆ ՑԱՇԱԿԵՐՏՍ ՆՈՐԱ

Բազումք էին ոլք աշակերտեցան ի նմանէ վարդա-
պետական բանին. քանզի Համբաւ իմաստութեանն նո-
ա Հռչակեցաւ ընդ ամենայն տեղիս, և գային առ նա
յամենայն կողմանց. քանզի ըստ անուան իւրոյ մխի-
թարէր զամենեսեան. քանզի էր նա մխիթարական
որպէս Նաւնաբաս, և նշանաւոր ի մէջ ժողովրդեան՝
որպէս Նոան. և բանք նորա արդիւնաւորքանք և լի ընդ-

1 ՕՕ. Ղուդոյ. տպագիրն Զո-
ղոյ:

2 Ա. Գ. Ո-ուելանէջ գրեն. տպա-
գիրն Ո-ուելանջ:

3 ՕՕ. զանաւայութիւն:

հօք, և ամենայն ոք փափագէր տեսանել զնա և լսել
'ի նմանէ: Ա՚ան այսպիսի համբաւոյ բազումք որ էին
'ի կարգի վարդապետաց՝ ճանճկէին զինքեանս, և զայ-
ին 'ի կարգի աշակերտաց կալով՝ ուսանէին 'ի նմանէ,
և առնուին վերատին հրաման. և բազումք յաշակեր-
տաց նորա հասին 'ի պատիւ վարդապետական: Նայց
երկուք ոմանք 'ի նոցանէ որք իմաստնագոյնք էին քան
զայլսն՝ որք կարօղ էին և զայլս օգտեցուցանել, առաջ-
նոյն Ա՚որա անուն՝ 'ի սահմանացն Ա՚ելտինոյ Նայոց,
հայր նորա հոյկական, և մայրն ասորի, այր հեզ և
խոնարհ, առաքինի և աղքատասէր յոյժ, ասպնջական
օտարաց և առատ 'ի տուրս, որ զժամանակս կենաց իւ-
րոց բարեգործապէս վարեալ և 'ի ծերութիւն պարարտու-
թեան յաւելեալ առ Տարսն իւր, և կայ Թաղեալ 'ի հրա-
կականուն վանքն Նաղբատ, 'ի գլուխ վանացն, 'ի գե-
րեզմանս եպիսկոպոսացն և վարդապետացն, որոյ յի-
շատակն օրհնութեամբ եղիցի, և աղօթք նորա պա-
րիսպ Տաւատացելոց: Եւ երկրորդին՝ Ա՚անական ա-
նուն, այր սուրբ և պարկեշտ և յամենայն գործս բա-
րիս յառաջադէմ, ողջախոհ և զգաստ յամենայնի, և
վարդապետական քանիս քան զամենայն որ 'ի ժամա-
նակն էին՝ գերազանցեալ, ծննդական մօք և յարմար
բանիւք. վասն որոյ բազումք գեգերէին առ նա ուսման
աղագաւ՝ ոչ միայն վարդապետական բանի, այլ ամե-
նայն կեանք նորա և շարժուածն՝ անգիր օրէնք էին տե-
սողացն. և զայս ոչ եթէ ականջալուր միայն ասեմ, այլ
և ականատես. զի բազում ժամանակս կացաք առնմա
'ի վարժս կրթութեան, 'ի սահմանս Տաւուշ բերդոյ,
յանապատի անդ՝ զոր ստացաւ իւր բնակութիւն, և
աղերսագիր արքունեացն ամենեցուն զբան վարդա-
պետական:

ԺԴ

ՎԱՍՆ ՎԱԽՃԱՆԻ ՄԵԾ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՄԽԻԹԱՐԱՑ՝ ՈՐ ԴՈՇՆ ԿՈՉԻ

Սա երանելիս զոր վերագոյն ասացաք՝ զընթացսն կատարեալ և զհաւատսն պահեալ, եհաս ի խորին ծերութիւն. և իբրև ետես նա լեռ տկարացաւ յամենայն զօրութենէ մարմնոյն, և հանդերձեալ է այնուհետև յաւելուլ առ հարս իւր, կոչեաց նա զընակիչս ուխտին վանացն՝ որ Դետակայ, որք ընդ նմա ժուժկալեալ էին յամենայն աշխատութիւնս վանից և եկեղեցւոյն. օրհնեաց զնոսա, և զաշակերտս իւրեանց՝ յանուն Տեառն. և զմի ոմն ի նոցանէ ընտրեալ Մարտիրոս անուն, որ աշակերտեալ էր նմա և ընտանի էր նմա, կացոյց զնա առաջնորդ նոցա, մանուկ տիոմք բայց կատարեալ իմաստութեամբ, այր քաղցրաձայն յերգս պաշտամանն, և առատաձիտ յընթերցման, և արագ ի գրչութիւն. նմա հրամայեաց իշխել նոցա. և գրեաց կտակ առ մեծ հազարապետն Յովհաննէս, եղբայր Օ՞աքարէի, և յանձնեաց ի նա զվանս և զառաջնորդն. և ինքն փոխեցաւ յաստեացս առ Քրիստոս՝ ալեւորեալ և լի աւուրբք: Եւ վերակացու վանացն Մարտիրոս՝ հանդերձ միաբանօք գեղեցկապէս յարմարեաց զպատշաճս Թաղման նորա, հոգեկան և մարմնական պիտոյիւք. և տարեալ հանգուցին զնա առաջի գրան եկեղեցւոյն փոքրագունի, որ կայ ի գլուխ վանացն յարեւմտից կողմանէ վանացն, և մինչև ցայսօր գերեզման նորա օգնէ ցաւագնելոցն՝ որք հաւատով ապաւինին յաղօթս նորա. և զհող տեղւոյն հանապազ տանին ի պետս հիւանդացն մարդոյ և անասնոյ. զի Աստուած զփառաւորիչս իւր փառաւորէ կենդանութեամբ և մահուամբ:

Դեպ եղև երբեմն զի պաշտօնեայք նորա գային պրաստիւք բարձեալ գինի ի պետս վանացն. վրայ ոմն Բասիլիա անուն՝ եկեալ բռնութեամբ կամէր առնուլ ի նոցանէ ի գինւոյ անտի. զի գործակալ էր նա Յովհաննէսի, ի վերայ մայրոյն, որ պահէր զտեղի իջևանին նորա. և պաշտօնեայքն ասէին մի՛ նեղեր զմեզ, քանզի Դոշին եմք. զի այսպէս կոչէին զնա մականունամբ,

ալ հեղգագոյն եկին ալիք նորա։ Իսկ Թշուառականն հայհոյեաց վնասա և զԱրոչն. և իբրև եկին յայն տեղի որ յիշէր զանուն նորա անարգանօք, անդէն վաղվաղակի համրացաւ. և կապեցաւ լեզու նորա, և Թիւրեցան շրթունք նորա. և այնպէս եկաց բազում ամս, մինչև հառաչանօք խնդրեաց զթողութիւն, և ամենայն որ տեսանէր զայրն՝ գովէին զծառայն Աստուծոյ։

Եւ եթող նա յարձան և յիշատակ գերեզմանի իւր իմաստախոհն՝ յօգուտ իմաստասիրաց, համառօտ մարգարէութեանն Երեմիայի՝ գեղեցկադիր կարգօք, և սուղ ինչ կանոնս վանն սպասաւորելոյ մարմնոյ և արեան Տեառն, Թէ ո՛րպէս պատշաճ լիցի, կամ որպիսի կարգօք. և գիրք մի Ողբ՝ի վերայ քնութեանն՝ի զմայ Աստուածածնայ առ որդիս նորա, և՝ի զիմաց Յուդայի՝ առ դստերս նորա. և գիրք մի Յայտարարութիւն ուղղափառ հաւատոյ՝ ընդդէմ ամենայն հերձուածոց,՝ի խորհրդոյ մեծ զօրավարին Քրիստոսի և եղբօր իւրոյ[1]. և այլ Թուղթս խրատականս։ Եւ եղև վախճան նորա՝ի վեցհարիւր վաթսուն և երկու Թուին։

ԺԵ

ՎԱՍՆ ՈՐՔ ՑԵՏ ՆՈՐԱ ԿԱՑԱՆ ՋԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՎԱՆԱՑՆ

Փառաւորեցաւ վանքն և հռչակաւոր եղև անուամբ սուրբ վարդապետին, և իմաստութեամբ Պարտիրոսի առաջնորդի, քանզի այր չինարար էր՝ չինեաց այլ ժամատուն անտաշ վիմօք, մածուցեալ կրովք, հաստահեղոյս ոսմօք և փայտակերտ վերնայարկօք, որ յետ ժամանակաց փլաւ վերնայարկն. չինեաց և վերնատուն մի գեղեցկաշէն յարկօք, արուեստաւոր ունելով զՏիւսն Պխիթար, որ՝ի բազում իրս աշխատ եղև եկեղեցեաց և վանից. և բազում եղբարք ժողովեցան վասն հռչականուն տեղւոյն. և բազմաց եղև տեղի մնդեան և ուսման. որ և մեք իսկ մնեալ և ուսեալ եղաք՝ի նոյն վանս։ Սկսան չինել և եկեղեցի մի եօթն խորանօք, կոփածոյ և տաշած վիմօք, գմբեթաւոր և գեղեցիկ շի-

[1] Այս երկու յետին գիրք՝ի մեր ձեռս հասեալ չեն։

նուաճմամբ. և երբև ընդմիջեցաւ եկեղեցին խափանումն եղև յոլով ժամանակս. քանզի եկն սուլթանն Կոստանդնու Սալահատինն կոչեցեալ, և եհար զքրիստոնեայսն և զերկրացի, և աւերեաց զբազում գաւառս. վանս այսորիկ և այլ յոլովից ինաց անաւարտ: Յետոյ այլ ոմն Պորիզոր Կապալեցի, որ յառաջն արդիւնաւոր էր ի շինուածս եկեղեցւոյն՝ վերստին ձեռն արկեալ աւարտեաց զնա ի վեց հարիւր ինննասուն թուին:

Ա աղձանեցաւ և Ուանէ եղբայր Օ աքարէի, և թաղեցաւ ի Պղնձահանքն, ի դուռն եկեղեցւոյն՝ զոր շինեաց ինքն, առեալ ի Նայոց՝ վրացի վանս հաստատեաց. և մինչև մեռանէր նա՝ յանձնեաց զորդին իւր յիշեան ոմն իւր մնուցած և փառաւորած, Պորիզոր անուն, զոր Տղայն կոչէին: Ա՝ա ինդրեաց յորդւոյն Ուանէի Ա՝ազգէ զվանքն Պետիկ՝ ի տեղի իւր գերեզմանի, և վան յոյժ սիրելոյն զնա՝ ետ նմա. գնեաց և զիւղ մի ի նմանէ Ա՝աշխէ անուն, մերձ Ա՝զատեւ, ետ զայն ի վանքն. և այլ բազում արդիւնս արար, պրեանս, խաչս, և անաստունս. շինեաց հրաշազան եկեղեցի մի երէքխորանի մերձ ի գաւիթս եկեղեցւոյն՝ զարմանակերտ, և անուանեցին յանուն սրբոյն Պորիզորի. նա և այլ յոլով շինուածք եղեն ի նմա, և բազմացան քահանայք և պաշտօնեայք և մանկունք ուսուցիանականք: Եւ կալեալ Ա՝արտիրոսն զառաջնորդութիւնն ամս քսան՝ եթող կամաւորաբար. և կալաւ յետ նորա Ա՝խիթար ոմն, այլ և սա և նա՝ Յովաաաին, և այլք՝ սակաւօրեայ. Ա՝բրահամ վարդապետն, և ապա տէր Յովհաննէս Ա՝րմանեցին, որ և Նաղարծնին էր առաջնորդ, և ձեռնադրեցաւ եպիսկոպոս յեօթնհարիւր և հինգ թուին: Ա՝ա շինեաց ի Նաղարծինն սեղանատուն երևելի սրբատաշ վիմօք. և ապա գնաց ի մեծ ամրոն ի Նաղբատ. և յեօթնհարիւր և երեք թուին Ստեփաննոս վարդապետն և եղբայրն իւր Պարսեղ շինեցին եկեղեցի մի երէքխորանի՝ հանդէպ վանից գմբեթաւոր՝ յանուն սրբոյն Գէորգեայ:

ԺԲ

ՎԱՍՆ ՍՈՒԼՏԱՆԻՆ ՋԱԼԱԼԱՏՆԻՆ[1] ԵՒ ԿՈՏՈՐԵԼՈՑՆ ՋՋՕՐՍՆ ՎՐԱՑ, Ի ՎԵՑ ՀԱՐԻՒՐ ԵՕԹԱՆԱՍՈՒՆ ԵՒ ՁՈՐՍ ԹՈՒԻՆ

Յառաջասացեալ ազգն Հիւսիսոյ արևելից, որ Թաթարն անուանիւր՝ ի նեղ արկ զսուլտանն Խորասանայ զՋալալատին, և եհար զզօրս նորա և տապալեաց զաշխարհս նորա. և հանին զնա փախստական յաշխարհն Ղզլուանից. եկն նա ի քաղաքն Գանձակ և առ զնա, և կուտեաց իւր զօրս անթիւս. և զօրքն էր ի Պարսից, ի Տաճկաց, և ի Քրդաց. և եկն յաշխարհս Հայոց. (զայն տեսեալ Լանկի՝ ազգ առնէ Թաթարքին Վրաց՝ և ժողովէ զօրս բազումս կալ ընդդէմ սուլտանին.)[2] և հպարտութեամբ մեծամեծս փքային, և դաշինս եդեալ էին, եթէ յաղթեսցեն նմա՝ զամենայն Հայ ի կրօնս Վրաց դարձուսցեն, որք ընդ իշխանութեամբ նոցա, և զընդդիմացեալսն սրով բարձցեն. զայս խորհուրդս խորհեցան ոչ Աստուծով, և դաշինս կռեցին՝ և ոչ նորա Հոգւով. զայս խորհեցան՝ և գՏէր ոչ հարցին, որ տուէր և յաղթութեան ուժ և կամի:

Եկն ապա սուլտանն ի գաւառն Կոտայից. գնաց Լանէ զօրօքն Վրաց, և կայր հանդէպ նոցա ի վերոյ. և տեսեալ զնոսա զեռեղեաց ի տեղւոջն և զանպատեաց: Նակ սուլտանն յառաջ վարեալ զզօրս իւր՝ գայր հանդէպ նոցա. իբրև զայն եռես իշխան մի յաւագացն Վրաց՝ Շալէ անուն, և եղբայր իւր Լանէ, որք քաջք և անուանիք և յաղթողք ի պատերազմի, ասեն ցայլ զօրս. Դուք կայեք մնացեք վայր մի, և մեք երթեալ խառնեացուք ի նոսա. եթէ զաւձուսցուք զմանս ի նոցանէ յետս՝ մեր է յաղթութիւնն, եկայք և դուք ապրեցուցեք զանձինս ձեր: Իբրև խառնեցան նոքա սկսան կոտորել զզօրս սուլտանին. իսկ զօրն Յունաց[3] այնմ ոչ ուշ եդին. այլ փախեան ի տեղւոջէ անտի, մինչև այր զընկերն ի փախուստն ոչ դիտէր, եր-

1 ՕՕ. Սալահափնին: — Վ. 143. 3 Վասն Վրաց ասէ իբր յունադաւանք:
ծան. 3:

2 Քան ասպագրին:

Թեալ առանց ուրուք հալածելոյ, ամենեքեան ի վախճին ի վայր միաբանք՝ ի ձորն անդր ընուին, ի գլուխս քարափիւղին[1] Պառնոյ: Իբրև տեսին զայն զօրքն սուրբքն զհետ մտին, զբազումս կոտորեցին և զայլս գերեհավիժ արարին. (և եկեալ սուլտանին) ի գլուխ ձորոյն՝ հետես զայն ոգորմ տեսիլ, զի իբրև զդերբուկս քարանց կուտեալ կային անդ բազմութիւնք մարդկան և երիվարացն. շարժեաց զգլուխ իւր և ասէ. Այս գործս ոչ մարդոյ է՝ այլ միայն Աստուծոյ, որ կարօղն է ամենայնի: Եւ դարձաւ դիակապուտ առնել զանկեալսն. և աւերեալ զբազում քաղաքս գնաց ի Տրփխիս, և ձեռնտու եղեն Պարսիկք՝ որ ի նմա. և առնէա և զբազումս կոտորեաց, և զևս բազում բռնադատեր Թողուլ զքրիստոնէութիւնն, և հաւանիլ..... ..... ուսման Տաճկաց. բազումք այնուհետև յերկիւղէ մահուանն զանգիտեալ՝ փոխանակէին զճշմարտութիւնն ընդ ստութեան. և այլքն յանձն առեալ զմահ քաջութեամբ քան զկեանս խղճին, զվկայական անունն ժառանգեալ՝ ելին յաշխարհէս բարի մահուամբ. և ապա հրաման ետ՝ որք հաւանին և որք ոչ՝ ոչ հարցաքննութիւն առնել, այլ բռնութեամբ զամենեսին թլփատել. և այսպէս բռնաբար յերկուց կողմանց կալեալ զձեռանէ մարդկան ի հրապարակի անդ, և միւսոմն առեալ սուր՝ հատանէր զմշակ առնացն անդամոյն: Եւ ընդ կանայսն խառնակէին զաղբալի պղծութեամբ. և ընդ ամենայն տեղիս ուր և գտանէին խաչ կամ եկեղեցի՝ կործանէին և քակէին. և զայս ոչ միայն ի Տրխիս, այլև ի Պանձակ և ի Կախեթուան և յայլ տեղիս գործէին: Եւ մի ոմն յատազացն, որ և մայր սուլտանին կին էր նորա՝ Օրղան անուն, սա բազում չարչարանօք նեղէր զքաղաքն Պանձակ. ոչ միայն զքրիստոնեայս, այլ և զՊարսիկս, հարկապահանջութեամբ բազմաւ, և սպանաւ ի նմին քաղաքին ի Ալէդաց[2], որք սովոր էին սպանանել զմարդիկ. և մատեան առնաումանք՝ մինչդեռ գայր ընդ փողոցն քաղաքին, իբր թէ զրկանս կալեալ իցէ նա յումեքէ. և առ նա մատեան տալ իրաւունս. ցուցին նմա Թուղթ ի ձեռին ունելով՝

1 Տպ. քաղաքիւղին: 2 Վ. 97:

ազազակեցին և ասեն. Դատ դատ. և իբրև զտեղի առ նա, և կամէր հարցանել, թէ ոյր էին ընծայեալ զնոսա, նոքա աստի և անտի յարեան ի վերայ նորա, և սրովք զոր ունէին ի ծածուկ՝ խոցոտեալ սպանին զնա. և այսպէս բարձաւ չարն չարեաւ ի միջոյ, և զսպանողս նորա՝ հազիւ կարացին սպանանել նետիւք. զի զբազումս խոցոտեալ փախեան ընդ մէջ քաղաքին։ Ո՛ի այսպէս սովոր են առնել ազգն այն՝ որ բռնացեալ են յամուր տեղիս, զոր Ամուն-Ամանջահ կոչեն, այլ և՝ ի մայրին Իբանանու. առնուն զգինս արեան յիւրեանց իշխանէն, զոր պաշտէին փոխանակ Աստուծոյ. և տան յորդիս և՝ ի կանայս իւրեանց, և ինքեանք երթեալ ուր և առաքէ իշխան նոցա՝ բազում ժամանակս դեգերին՝ և կերպս կերպս եղեալ, մինչև պատեհ ժամանակ գտցեն սպանման. և ապա սպանանեն զորս կամին. վասն այնորիկ երկնչին՝ և նոցանէ առնուն իշխանք և Թագաւորք, և տան հարկս նոցա. և սաստիկ կատարօղք են հրամանաց իշխանին իւրեանց, զոր ինչ և ասէ՝ մինչև՝ ի մահ անձանց իւրեանց, ոչ խնայեն. և այսպէս բազում ևեծամեծս սպանանեն նոքա՝ որք ոչ հարկին նոցա, որպէս և զայս ամբարիշտս։

ԺԻ

ՎԱՕՆ ԿՈՐՍՏԵԱՆ ՍՈՒԼՏԱՆԻՆ ՋԱԼԱԼԱՏՆԻՆ ԵՒ ԲԱՌՆԱԼՈՑՆ ՆՈՐԱ ՅԵՐԿՐԻ

Յետ գոլոծելոյ նորա զայս չարիս, գնաց նա՝ ի քաղաքն՝ որ է Ղալաթ, յաշխարհին Ղզնունեաց, և էր նա ընդ իշխանութեամբ Ազրատի իշխանին. և ետ պատերազմին ընդ նմա, և էառ զնա. էր անդ կին սուլտանին՝ դստեր Ղանէի, Ղամլիա անուն, զոր վերագոյն յիշեցաք, առ զնա իւր կնութեան. չոգաւ և աւերեաց ըզբազում գաւառս յիշխանութենէն սուլտանին Ղուտմայ, զոր Ալադին կոչէին։ Այս միաբանեալք սուլտանքն՝ Ազրատին և Ռէմնն եղբայր նորա, որ նշխար կոչմանցն Նպհրատոսի, և Ալադին[1], կոչեցին իբրեանց

1 OO · ՎԱՐԱՊԻՆ։

օգնական ՚ի զօրացն Հայոց, որ յաշխարհին Ասղկե-
ցւոց, և՚ի Ֆռանկաց ծովեզերեաց. և եկին տալ պա-
տերազմ ընդ խորազմացւոյն Ղ՝ալալադնի. և իբրև ե-
կին մօտ առ միմեանս՝ զանգիտեցին երկոքին կողմանքն,
և ոչ իշխէին խառնիլ ընդ իրեարս։ Պատ քրիստոնեայ-
քըն որք ՚ի Հայոց և՚ի Ֆռանկաց՝ խրախուսեալք յԱս-
տուածէ, գիմեցին ՚ի վերայ նոցա. և էին թուով սա-
կաւք, նուազք քան զՀազար[1], և զօրութեամբ Քրիս-
տոսի հարին զզօրան, և՚ի փախուստ դարձուցին. և զայն
տեսեալ զօրացն Տաճկաց՝ յարձակեցան և նոքա, և Հա-
րին կոտորեցին զբազումս մինչև՚ի մուտս արևու։ Պատ
Հրամանն ետուն սուլտանքն՝ ոչ պնդել զհետ փախըս-
տէից, իբրև այն Թէ Հաւատակիցք նոցա էցեն, և դա-
դարեցին ՚ի պնդելոյ զհետ նոցա։ Իսկ սուլտանքն գի-
տէր քրիստոնէից, գի գիտացին Թէ ՚ի ձեռս նոցա եթ տէր
զյաղթութիւնն։ Պատ դարձան մեծաւ ուրախութեամբ
յաշխարհն իւրեանց. և ընդ որ անցանէին՝ ընդ քա-
ղաքս և ընդ գաւառս՝ ելանէին ընդ առաջ նոցա պա-
րիւք և ծնծղայիւք, և գովաստութեամբ ընդունէին։
Իսկ Ղալադին իբրև եկն՚ի Կեսարիա Կապադովկե-
ցւոց՝ ամենայն բազմութիւն քաղաքին Հանդերձ քրիս-
տոնէիւք և քահանայիւք իւրեանց, խաչիւք և ժամա-
Հարիւք՝ իբրև աւուր միոյ Հանապարհ ելին ընդ առաջ
նմա. և իբրև մօտ եղև սուլտանն՝ բազմութիւն Տաճ-
կացն ոչ տային Թոյլ քրիստոնէիցն խառն ինքեանց
Տպիլ յերկրպագութիւնն սուլտանին, այլ յետս կոյս
մղեցին զնոսա. և նոքա ելին՚ի բլուր մի Հանդէպ բա-
նակին. իբրև եՀարց սուլտանն Թէ ո՞ք են նոքա, և պի-
տաց Թէ քրիստոնեայք են, ինքնին իսկ մեկնեցաւ՚ի
զօրուէն միայն, և գնաց՚ի մէջ նոցա. և Հրամայեաց
Հարկանել զժամահարսն, և պաշտել բարձրաձայն. և
նոքօք եմուտ այնպէս՚ի քաղաքն. եթ նոցա պարտէս,
և արձակեաց յիւրաքանչիւր տեղիս։ Իսկ Ղալադ-
ին սուլտանն գարձաւ մեծաւ ամօթով յաշխարհն
Ղուանից, ՚ի բերդն յարդաւանդ գաշտին՝ որ կոչի

[1] ՈՕ։ Ըստ մարդկան է ընդհանուր գիրն որոշակի գրէ պակաս քան զՀա-
զար ոչ։

Ա՝ուշան. և անդ վետեղեալ կամէր զօր ժողովել՝ Ա-
պա Ծաղթարն՝ որ եհան զնա վախստական յերկրէն
իւրմէ, զհետ մտեալ նորա՝ տարաւ վարեալ զնոսա մին-
չև Ա՛միթ քաղաք. և անդ եհար զզօրս նորա սաստ-
կապէս. կոտեաւ և անօրէն իշխանն՝ի նմին պատերազ-
մի. և թէ որպէս ոմանք ասեն, երթայր հետիոտս փա-
խստական. դիպեալ նմա առն միոջ՝ և գիտացեալ թէ
նա է՝ եսպան զնա, փոխանակ մերձաւորի իւրոյ՝ որ ըս-
պանեալ էր զնա յայլումն աւուր. և այսպէս բարձաւ
չարն՝ի միջայ։

ԺԸ.

ԹԷ Ո՛ՐՊԷՍ ԵԼ ԹԱԹԱՐՆ ԱՊԱԿԱՆԵԼ ՋԱՇԹԱՐՀՍ ԱՄԵՆԱՑՆ

Ամենայն բանք պատմութեանս մերոյ և նախաշա-
ւիղ որ մինչև ցայսօր՝ էր վասն ազգիս այսորիկ, զոր
ընտրօքն Քրիստոսի հանդերձեալ եմք ձառել. կար-
ծեմք թէ յոլով և զնոյնս պատմեցեն. և ամենեքեան
նուազեալ գտանին յարժանաւորութենէն. զի յաճա-
խեն քան զպատմութիւնս՝ չարիքս, որ եկին կալան զաշ-
խարհս ամենայն. զի ժամանակս՝ի վերջ հասեալ է,
և կարապետք Աւետին գուշակեն զգալուստ որդւոյն
կորստեան։ Արկեցուցանեն և զմեզ յայտնութիւնք
սրբոց արանց և աստուածազգեացից, զոր սուրբ Հոգին
եցոյց նոցա՝ի զգուշութիւն ապագայիցն. և մանաւանդ
անաւուտ հրաման փրկչին մերոյ և Աստուծոյ՝ որ ասէ.
Յարիցէ ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն՝ի
թագաւորութեան վերայ. և այն, ասէ, սկիզբն է ե-
կանց։ Այլև սրբոյն Աերսեսի հայրապետին մերոյ, զոր
մարգարէաբար ազգեաց վասն կոծանման աշխարհիս
Հայոց՝ յազգէն Աեթողաց. զոր աչօք մերովք տեսաք
զաւեր և զտառապանս, զոր անցուցին ընդ աշխարհս
ամենայն. և եղև պատճառ ելից նոցա այսպէս։

Քանզի աշխարհն հեռաւոր հիւսիսոյ արևելից՝ զոր
կոչեն՝ի խաժական լեզուն՝ Ոգ յարաղրում[1],՝ի սահմանս
հովիւն Օրգոն գետոյ որ՝ի Գարա-
պօրում լերանց կէաւ Թաւիւն՝ի
լիճն պաղաւ։

1 Գարագօրում, ուր և համա-
նուն քաղաքն մեծ, որոյ գիւղք էին
քաջայայտ. բայց միայն զի էր՝ի

Ղ ատիայ[1], բարբարոս ազգացն բազմութիւնք որ անտ
են՝ անգիտելիք և անթուելիք բազմաց. զորս թագա-
ւորացն ունելով՝ ազգն որ կոչի Ղանթարք, որում ա-
նուն էր Ղանկզղան, զէպ եղև մեռանել նմա: Եւ յա-
ռաջ քան զվաղճանն կոչեաց զզօրսն ամենայն և զերիս
զորդիս՝ զոր ունէր, և ասէ ցզօրսն. Ահա աւանիկ մեռա-
նիմ. զի յորդւոց[2] ասաի իմոց զոր կամիք ընտրեցէք
ձեզ թագաւոր փոխանակ իմ: Եւ նոքա պատասխանի
ետուն. Զոր միանգամ կամք քո ընտրեացեն, նա լիցի
մեր թագաւոր, և նմա ծառայեացուք միամտութեամբ:
Յայնժամ ասէ ցնոսա. Ահա ասեմ ձեզ զբարս և զդր-
ծըս երեցունց յորդւոցս: Զայս անդրանիկ որդիս իմ Ղա-
զատա, սա այր պատերազմող է և զօրասէր, բայց հը-
պարտ է բնութեամբ, և մեծ քան զպատահեալ բախ-
տըն: Ասէ երկրորդ որդիս իմ, նոյնպէս յաղթող է՝ ի
պատերազմունս, բայց ռիժտ է բնութեամբն: Ասէ
կրտսեր որդիս իմ ընորհաւոր է՝ ի մանկութենէ իւրմէ,
և առատ բարոյիւք, և մեծատուր՝ ի ձիրս. և յորմէ
հետէ ծնաւ սա ինձ՝ օր ըստ օրէ յաւելաւ փառք իմ և
մեծութիւն: Զորդ ահա ասացի ձեզ զամենայն սաու-
թեամբ, և ում կամիք պագէք երկիր յերեցունց
աստի: Եւ նոքա մատուցեալ երկիր պագին կրտսերոյն,
որում անուն էր Նոքլատա-խան զան[3]. և հայրն եղ
զթագն՝ ի գլուխ նորա, և մեռաւ: Ասէ նա իբրև առ
զիշխանութիւն թագաւորութեանն, զոր գումարեաց
անթիւ բազմութեամբ իբրև զաւազ ծովու անհամար
՝ի բազմութենէ, զիւր սեփական ազգն, զոր Մուղալ
Ղատիարն անուանէին, և զԱզգրաց և զՇոնաց և զՂ-
ատիացիս և զՆկիտանս[4], և զայլ բազում ազգս
բարբարոսաց, ախիւք և բանակօք, կանամբք և որդւովք
իւրեանց և խորանօք: Ընաժանեաց զնոսա յերիս ա-
ռաջս, զմինն ընդ կողմն հարաւոյ առաքեաց, զԱսաւոր
վերակացու կարգեաց յիւրոց հաւատարմաց և՝ ի սերե-

1 Գարա-Խիդա աշխարհ յարև- յայնժամ, այլ Քափչաք· իսկ
մտից Չինաց և՝ ի հիւսիսոյ Դնպե- Ղատիացիք Թուին Գարա-Խիդա-
Թայ:
2 ՕՕ· որէէ:
3 Ա· Գ· Խանաղան· — Օկո-
դայի կամ Էօկադա Խաքան:
4 Խազիրք և Հոնք ոչ ևս լսէին
յնք՝ ի միջնաշխարհին Թուրքաս-
տանի· և Անկիտանքն՝ Անկուստք
յարևելս Թաղիարաց և մեծի Քո-
սոլի անապատին:

լեաց. և զմիւսն ընդ արևմուտս, և զորդիս իւր ընդ նո-
սա, և՝ի կողմանս Հիւսիսոյ. և զերրորդն ընդ արևել
Հիւսիսի, վերակարգեալ զայրն որում անուն էր Ղար-
մաղան[1], այր խորագէտ և իմաստուն և յաջողած՝ի
գործս պատերազմի: Պատուէր տուեալ նոցա աւերել
քանդել զամենայն աշխարհս և զթագաւորութիւնս
տիեզերաց, և ոչ ևս դառնալ առ նա, մինչև բովան-
դակեսցեն զամենայն աշխարհս նուաճեալ ընդ տէրու-
թեամբ նոցա. և ինքն անդէն զեռեղեալ յաշխարհին՝
ուտելոյ և ըմպելոյ և զբօսանաց և շինութեան պարա-
պեալ՝ յանհոգ յամենայն կողմանց: Նակ զօրացն եր-
թեալք ընդ կողմանս կողմանս աշխարհին՝ աւերէին
զաշխարհս և զգաւառս, և բառնային զնշխանութիւնս
ազգաց, առնուին զինչս և զստացուածս, զկանայս նո-
րահասակս, և զմանկունս նոցա գերի առեալ՝ի ծա-
ռայութիւն ստրկութեան. Եր զոր առաքէին Հեռու
յաշխարհս իւրեանց՝ առ իշխանն Թագաւոր իւրեանց[2],
և Եր զոր առ իւրեանս կալեալ՝ի պէտս ծառայութեան
ախիւ[3] իւրեանց: Նակ այս զօր որ եւ ընդ արևել, ո-
րոց գլխաւոր Եր Ղարմա-նուէնն, հզաւ սա՝ի վերայ
Ղալալադին սուլտանին, որ իշխէր Խորասանայ և գա-
ւառացն որ շուրջ զնովաւ. և եհար վանեայ զնա, և
զզօրս նորա, և արար փախստական, որպէս ցուցաք վե-
րագոյն. և ինքեանք կարդ առեալ աւերեցին զամենայն
աշխարհն Պարսից և զԱտրապատականու և զԱլմայ,
կարգաւ սրբեցին զամենայն. որպէս զի մի ճնասցէ խոչ
ընդ ոտն գայթակղութիւն նոցա. առին և զմեծամեծ
քաղաքսն և զհռչակաւոր ամենայնիւ լցեալ զԱրկ և
զԱպահան, և յիւրեանց անուն վերստին շինեցին.
այսպէս առնէին ամենայն երկրի ընդ որ անցանէին: Ն-
ապա եկին հասին յաշխարհն Ադրբջանից՝ ամենայն ա-
խիւք և բազմութեամբ իւրեանց, և՝ի քեզրի յար-
գաւանդ դաշտին՝ որ կոչի Ա՛ուղան, և լի ամենայն բա-
րութեամբ՝ ջրով, փայտիւ, և մրգով. անդ զեռեղ ա-
ռեալ հարին զԽորասան իւրեանց: Այսպէս առնէին զա-

1 Զօրավարն:
2 Տալ. առաւէին անդէն՝ի հեռա-
ւոր յօթարութիւն յաշխարհն իւրեանց
3 Ա. ախթից:

Ենայն աւուրս ձմերային, և ՚ի ժամանակս գարնանայնում սփռէին ընդ կողմանս, ասպատակաւ և աւերմամբ, և գերձեալ գառնային անդրէն և բանակէին։

ԺԹ

ՎԱՍՆ ԱԽԵՐՄԱՆ ՄԵԾԻ ԵՒ ՊԱՏՈՒԱԿԱՆ ՔԱՂԱՔԻՆ ԳԱՆՁԱԿԱՑ

Ի ՊԵՂՔ ԹԱԹԱՐԱՑ

*Այս քաղաքս բազմամբոխ լեալ պարսկօք, այլ սակաւ և քրիստոնէիւք, յոյժ Թշնամի էր սա Քրիստոսի և երկրպագուաց նորա, անարգիչ և հայհոյիչ խաչի և եկեղեցւոյ, և այպանիչ և նախատիչ քահանայից և պաշտօնէից. վասն որոյ իբրև լցաւ չափ մեղաց նոցա և էլ աղաղակ չարութեան նոցա առ Տէր, երևեցան նշանք աւերման նորա[1] յառաջագոյն, որպէս ՚ի վերայ Երուսաղէմի յառաջ քան զաւերն նորա, նոյնպէս և այսմ քաղաքի. քանզի յանկարծ պատառեալ երկրի՝ արտաքս ելեալ ջուր սեաւ. և ծառ սօսի զոր Ձանդար կոչէին՝ մերձ յոյժ առ քաղաքն մեծ, տեսին զնա յանկարծակի շրջեալ իւրովի. և ՚ի տեսանել նորա դղրդեցաւ ամենայն քաղաքն, և զարձեալ տեսին զնա կանգնեալ որպէս յառաջն. այս եղեալ երկիցս և երիցս, և ապա անկաւ և այլ ոչ ևս կանգնեցաւ։ Եւ սկսան ի մաստունք նոցա քննել վասն նշանին Թէ զինչ իցէ. և իմացեալ Թէ պատճառ աւերման քաղաքին է, սկսան այնուհետև զխաչ՝ որ բևեռեալ էին ՚ի վերայ ներքին սեմոյ դրանց քաղաքին՝ հանել յանարգանայն. քանզի վասն այսպիսեալ կացուցեալ էին, զի կոխեցեն ամենայն անցաւորք։ Եւ յանկարծակի հասին զօրքն Թաթար, և պատեցին զքաղաքն յամենայն կողմանց, և մարտ եդեալ մարտնչէին ընդ նմա բազում մեքենայիւք. և հարին զայգեստանն՝ որ շուրջ զքաղաքան էին։ Ապա փլուցին և զպարիսպ քաղաքին փխլուսանօք յամենայն կողմանց, և ոչ ոք եմուտ ՚ի քաղաքն ՚ի Թշնամեացն, վասնզի զինու պահեցին զքաղաքն շաբաթ մի։ Իսկ բնակիչք քաղաքին իբրև տեսին

[1] 100. Նոցա։

թէ առաւ քաղաքն ՚ի Թշնամեաց՝ մտեալ իւրաքանչիւր ոք ՚ի տուն իւր, այրեաց ՚ի վերայ իւր զչինուածն, զի մ՚ անկցին ՚ի ձեռս Թշնամեաց. և այլք այրեցին զամրոնայն որ ինչ ծախիւր ՚ի հրոյ, և ինքեանք միայն մնացին. և զայն տեսեալ Թշնամեացն առաւել ևս ՚ի բարկութիւն բրդեցան, և սուր ՚ի դործ արկեալ զամենեսեան Ձարակ սրոյ ետուն, զարս և զկանայս և զմանկունս. և ոչ ոք զերծաւ ՚ի նոցանէ, բայց միայն սակաւ մի զօրք վառեալք կինու և ամենայն պատրաստութեամբ՝ պատառեցին զմի կողմն պարսպին ՚ի գիշերի և գնային փախստական, և այլ սակաւ ինչ սինլքորք, զորս պահեցին և խոշտանկեցին ցուցանել զգանձս՝ ուր պահեալ էին. և ապա զոմանս սպանին, և զկէսն գերի վարեցին. և ինքեանք բրեցին զայրեալ տունս և հանին զոր գտին Թաղուցեալ. և զայս արարեալ զաւուրս բազումս ՚ի բաց գնացին: Ապա յամենայն գաւառաց շրջեցան ՚ի վերայ նորա՝ առ ՚ի բրել և որոնել զինչն և զանօթան. և գտանէին բազում ինչս ոսկւոյ և արծաթոյ ՚ի նմա, պղինձ և երկաթ, և այլ պէսպէս հանդերձից, որ Թաղուցեալ էին ՚ի գարանս և ՚ի տունս գետնափորս. և այսպէս ամայի եկաց քաղաքն չորս ամ. և ապա հրաման ետուն շինուԹեան քաղաքին, և եկին ժողովեցան առ սակաւ սակաւ, և սկսան շինել զնա՝ բայց ՚ի պարսպէն:

Ի

ՎԱՍՆ ԱԻԵՐՄԱՆ ՔԱՂԱՔԱՑ ԵՒ ԳԱԻԱՌԱՑ Ի ԹԱԹԱՐԷՆ

Զկնի ամաց ինչ անցանելոյ աւերման քաղաքինդ՝ան ձակայ, այս զօրս մոլեկան և խորամանկ իբրև վիճակաւ բաժանեալ զաշխարհս Ասորոց և Պարսից և Հնդուանից, իւրաքանչիւր գլխաւորի ըստ մեծութեան, զքաղաքս և զպաւառս, զաշխարհս և զբերդս, առնուլ քանդել և աւերել. և չոքան իւրաքանչիւր ման բաժանեալ[1], կանաչեք և որդւովք, և ամենայն ախուր բանակին իբրեանց, ուղտիւք և անասնովք իւրեանց: Ընդ այն ժա-

1 ՕՕ. Բաժանել. Տպ. Տան Բաժնի:

մանակս թագաւորութիւնն Ա֊ղթայ նուաղեալ էր. զի էր ընդ ձեռամբ կնոջ մի՝ որում անուն էր Ասուզուդան, դուստր Թամարայ, քոյր Լաշային, Թուռն Դէորգայ, վաւաշ և կաթոտ որպէս զՀ ամիրային. որ անհաւան եղեալ արանցն՝ զոր ածէին նմա, ընդ բազմօք անկեալ և այրի մնացեալ, վարէր զիշխանութիւն թագաւորութեանն ՚ի ձեռն զօրագլխացն Լանկի, և որդւոյ իւրոյ Ա֊հագին, և Հ ահնշահի՝ որդւոյ Օ֊աքարէի, և Ա֊ահրամայ, և այլոցն. և զի յառաջ քան (զսակաւ) ժամանակս մեռեալ էր Լանկ, և տարեալ Թաղեցին զնա ՚ի Պղնձահանքն [1], զոր իւր շինեալ էր վանն Ա֊ղթայ, առեալ ՚ի Հայոց, և զիշխանութիւն նորա վարէր որդի նորա, և ոչ էին կարօղ զդէմ ունել անհնարին փքոյն եկելոյ. վանն այսորիկ անձնապահք եղեն ամենեքեան՝ գաղթեալ [2] յամրոցս ուր և կարացին: Եւ նոքա սըփռեալք առ հասարակ ընդ երեսս դաշտացդ, լերանց և ձորոց, իբրև զմարախս բազմութեամբ, և կամ իբրև զանձրևս յորդութեամբ տեղեալ ՚ի վերայ երկրի. և անդ էր տեսանել այնուհետև աղէտք տրտմագինք, և աշխար արժանի ողբոյ. զի ոչ երկիր թագուցանէր զմեռեալս, և ոչ վէմք և անտառք պահէին զապաստանեալս, ոչ ամրագոյն շինուածք բերդից, և ոչ խոխոմք ձորոց, այլ ամենեքեան արտաքս վարէին զղօղեալքս. լքանէր անձն արի արանց, և լուծանէին ձեռք կօրովի աղեղնաւորաց, թագուցանէին զսուրն՝ որք ունէին զնոսա, զի մի տեսեալ թշնամեացն՝ անողորմ սատակեսցեն զնոսա. ձայնք թշնամեացն հալէին զնոսա, դողփինք կապարձայ նոցա ահաբեկ առնէին զամենեսեան. աչք իւրաքանչիւր զօրհասն իւր տեսանէր եկեալ, և սիրտք իւրեանց մեռանէին ՚ի ներքուստ. մանկունք խուսափէին առ ծնօղս յահէ սրոյն, և ծնօղք յահէ նոցա անկանէին հանդերձ նոքօք, նախ քան զընկենուլ թըշնամեացն: Ընդ էր տեսանել զսուրս յանխնայ կոտորելոցն զարս և զկանայս, զերիտասարդս և զմանկունս, զծերս և զպառաւունս, զեպիսկոպոսունս և զքահանայս, զսարկաւագունս և զդպիրս. մանկունք ստնդեայք զքարի հարեալք, և կուսանք գեղեցիկք խայտառա-

1 Վ. 148:

2 ՕՕ. գայլհաղեալ:

կեալք և գերեալք։ Ընդ այն էր տեսիլ կերպարանացն նոցա, և անգութ սիրք որովայնի նոցա. մի և միոյ մօր արտասուաց՝ ոչ ողորմէին, և յալիս երբեք ոչ գթային. ի սպանուլթիւնս խրախուլթեամբ ընթանային, իբր ի հարսանիս կամ ի գինարբուս. լցաւ երկիրն ամենայն դիակամբք մեռելոց, և ոչ ոք էր որ թաղէր զնոսա. հաւտեալ էր արտօսր յաչաց սիրելեաց, և ոչ ոք իշխէր լալ զանկեալն յահէ անօրինաց։ Սուգ զգեցաւ եկեղեցի, և բարձաւ պայծառուլթիւն գեղեցկուլթեան նորա. խափանեցան պաշտամունք նորա, և վերացան պատարագք ի սեղանոյն. լռեցին պաշտամունք նորա, և ոչ ևս լսէր ի նմա ձայն երգոց։ Իբրև խաւարտաւ մանճեալ էր ամենայն աշխարհս. և սիրէին մարդիկ առաւել զգիշեր քան զտիւն, և երկիր թափուր ճնաց ի բնակչաց իւրոց, և չըջէին ի նմա օտարաց որդիք. յափշտակեցան ինչք և ստացուածք նոցա, և ժլատուլթիւն բարուց նոցա ոչ երբէք յապեցաւ. խուզեցան տունք և սենեակք ամենայն. ոչ ինչ ճնաց զոր ոչ առին. չըջէին այսր և անդր անդադար արագուլթեամբ իբրև զայծեամունս, և կեղեքէին պատառէին իբրև զպայլս. երիվարք նոցա ոչ վաստակէին յընթացս, և ոչ ինքեանք ձանձրանային ի ժողվել զաւարս։ Եւ այսպէս առ հասարակ գառնուլթիւն հասուցին բազում ազգաց և լեզուաց. զի բաժակ բարկուլթեան տեառն էր հեղեալ յերկիր ի վրէժխնդրուլթիւն գործոց մերոց չարաց՝ զոր արարաք. զի մեղաք առաջի նորա, և զարդար զգաստուն նորա չարժեցաք, վասն այն եղև դիւրամուտ[1] յաշխարհս ամենայն։ Եւ իբրև առին ժողովեցին զաշխարհս ամենայն, և զանաստուն՝ որ ի գաղթի և որ ոչ, և զինչս և զստացուածս, և զգերիս բազմուլթեամբ՝ որ յարձակ վայրս, սկսան այնուհետև մարտնչել ընդ ամրոցս ամենայն, և ընդ քաղաքս բազում (կանգնեալ մեռելեանս բազում) և ազգի ազգիս. զի յոյժ խորամանկ և հնարաւորք էին, և առին քանդեցին զբազում ամրոցս և զբերդս. և զի աւուրքս ամառնային էր և խորշակ յոյժ, և ամպարիշտ[2] էջ հարաքեալք, զի յեղակարծում ժամու եկին ի վերայ, վասն այնորիկ պատքեալ ի ծարաւոտ՝ մարդ և ա-

1 Տպ. դիւրաւ մուտ։ 2 Շտեմարանք (Ղևոյ)։

նատուն՝ կամաւ և ակամայ անկանէին ՚ի ձեռս թշնա-
մեաց առ վտանգի նեղութեանն. և նոքա էր զոր սպա-
նանէին և էր զոր պահէին ՚ի պէտս իւրեանց՝ ստրկու-
թեամբ ծառայութեան. զնոյն անցս անցուցանէին և
ընդ քաղաքս բազմամարտս, շուրջ նստեալ պատեալ
պաշարէին զնոսա։

ԻԱ.

ՎԱՍՆ ԱՌՄԱՆ ՓԱՂԱՔԻՆ ՇԱՄՓՈՐՈՑ [1]

Մի ոմն յաւագացն որոմ անուն էր Ա՛ղար–նաւին, որոյ հասեալ էր բաժին կողմանքն այնոքիկ, մինչդեռ շարժէին ՚ի տեղւոջէ իւրեանց՝ որ բնակեալ էին ՚ի դաշ-
տին որ կոչի Ա՛ուղան, առաքեաց սակաւ զօր իւրև արս
հարիւր, որ եկեալ հասին առ գրունս քաղաքին Շ՛ամ-
քորոյ, և արգելին զելող և զմտողն առ նա. իսկ քա-
ղաքն այն էր յայնժամ ընդ իշխանութեամբ Ա՛հրա-
մայ և որդւոյ իւրոյ Ա՛ղբուղային, զոր առեալ էին յա-
ռաջագոյն ՚ի Պարսկաց. և առաքեցին բնակիչք քաղա-
քին Շ՛ամքորոյ առ Ա՛հրամ [2] և առ որդի նորա՝ զի
օգնեսցէ նոցա, և ասացին Թէ սակաւք են. իսկ նա ոչ
օգնեաց, այլ և զորդին՝ որ կամեցաւ գնալ՝ ոչ եթող,
այլ խափանեաց, քանս ՚ի բերան գնելով եկելոցն, ա-
սել Թէ քազումք են. այլ և ոչ քաղաքացեացն հրա-
մայեաց մարտնչել ընդ նոսա։ Իսկ զօրք այլազգեացն
օր ըստ օրէ յաւելուին ՚ի Թիւն, մինչև եկն գլխաւորն
իւրեանց, զոր Ա՛ղարն կոչէին, և ետ պատերազմ ընդ
քաղաքին, և զիտան որ շուրջ զպարսպովն էր քաղաքին՝
ելից փայտիւ և ցօղնով, զի դիւրաւ ելցեն ընդ պա-
րիսպն. և նոքա ՚ի ներքուստ հուր ընկեցեալ ՚ի գիշերի
այրեցին զնա. իսկ ՚ի վաղիւն իբրև ետես զայն Ա՛ղար
նուէնն, հրամայեաց զօրացն բառնալ բեռն մի հող
իւրաքանչիւրոցն և արկանել ՚ի փոսն. և իբրև արկին՝
լցաւ հաւասար պարսպին, և դիմեաց զօրն իւրաքան-
չիւր հանդէպ երեսաց իւրոց ՚ի քաղաքն, և առին զնա,
և կոտորեցին զամենեսեան բերանով սրոյ, և այրեցին

[1] Ա՛ղ. 100։ [2] Ա՛ղ. 144։

ղէինուաճն որ ՚ի նմա, և առին զոր ինչ պտան. և ապա յարձակեցան ՚ի վերայ այլ բերդիցն՝ որ ընդ իշխանու-թեամբ Պ աւրամայ, ՚ի Տէրունականն, և Այրպէ-վանքն, և ՚ի Պաճնաբերդն, զոր ունէր Ախբիկէ Դապ-բատունի որդի Ընդսարթանայ. և ՚ի Գարզման և յայլ կողմանս, ՚ի Ջարեքն և ՚ի Գետաբակս՝ այլ ոմն զվնա-ւոր ջոգաւ, որում անուն էր Գ ատաղան–նուին: Իսկ Պ աւրամ՝ որ էր յայնժամ ՚ի Գարզման, գաղտնա-գնաց եղեալ ՚ի գիշերի փախեաւ՝ ուր և կարաց վերծա-նել. իսկ զօրքն այլազգեաց, մարտ եղեալ ընդ բեր-դիցն, որք ՚ի ներքս էին՝ ակամայ ետուն զձիս և զանա-ստունս, և զայլ զինչ խնդրեցին. Հարկ եղեալ ՚ի վերայ նոցա՝ Թողին զնաս յիւրեանց անուն: Նայց այնոքիկ որ առին զՇ ամքոր՝ եկին ամենայն ախուն իւրեանց ՚ի Տաւուշ[1] և ՚ինկաճարեթ, և ՚ի Նոր բերդն, և ՚ի Գաթ, և որ շուրջ զնոքօք, և ՚ի նեղ արկեալ պաշարեցին զնոսա:

ԻԲ

ՎԱՍՆ ԳԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՎԱՆԱԿԱՆԱՑ՝ ԵՒ ՈՐՔ ԸՆԴ ՆՈՍԱ

Ընդ ժամանակս ընդ այնոսիկ մեծ վարդապետն՝ որ կոչէր Վ անական՝ իւրովք աշխատութեամբք փորեալ էր քարայրս ՚ի կատարս բարձրագոյն քարի միոյ, որ կայ հանդէպ գեղջն՝ որ Պ ուրան կոչի, ՚ի հարաւոյ կողմանէ Տաւուշ բերդի. և շինեալ էր յայրն անդ եկեղեցի մի փոքրիկ, և անդ դադարէր գաղտութեամբ. իբրև ա-ւերեցաւ առաջին վանք նորա, որ կայ հանդէպ բերդին Ներգեվանից, ՚ի Ջ ալալատին սուլդանին հինից, և անդ կայր զետեղեալ, ժողովեալ բազում գրեանս. զի յոյժ ուսումնասէր էր այրն այն, մանաւանդ թէ աստուածա-սէր. և բազումք գային առ նա և ուսանէին բան վար-դապետական ՚ի նմանէ: Եւ իբրև շատացան մարդիկն՝ հարկ եղև նմա իջանել յայրէ անտի, և առ ստորոտս քարին շինեաց եկեղեցի և սենեակս, և անդ դադա-րեալ էր: Իբրև եղև այս կործանումն ՚ի Գաղթարէն,

1 Տե՛ս գտեղեացս ՚ի Վ. 145:

և եկն Պօղոս–նուէրն յայն սահմանս, քնակիչք գեղջն այնորիկ՝ անդր դիմեցին, և լցաւ արամբք և կանամբք, և մանկտով այրն. և եկեալ Պաղթարն պաշարեաց զնա յայրն անդ. և նոքա ոչ ամպարս ունէին և ոչ ջուր. և էր եղանակն ամառնային և տօթ յոյժ. և սկսան տալ պիւ յայրն անդ իբր ՚ի քսան. և մանկունքն պատպակէին ՚ի ծարաւոյ, և մերձ էին ՚ի մեռանել. և Թշնամիքն ձայնէին արտաքուստ, Թէ ընդէր մեռանիք, ելէք առ մեզ, և տացուք ձեզ վերակացուս, և Թողցուք ըզձեզ ՚ի տեղւոջ ձերում. և կրկնէին երիցս երդմամբ: Այսպա որք էին յայրն անդ՝ անկանէին առ ոտս վարդապետին, աղաչէին և ասէին. Գնեա զարիւն մեր ամենեցուն, և էջ առնոսա և արա սէր ընդ նոսա: Դակ նա ասէ ցնոսա. Եա զանձն իմ ոչ ինձանէից վասն ձեր, Թէ պոյ հնար փրկուԹեան, զի և Արիստոս զանձն իւր ՚ի մահ ետ վասն մեր և փրկեաց զմեզ ՚ի բռնուԹենէ սատանայէ. ապա պարտիմք և մեք ՚ի վերայ եղբարց մերոց զնոյն սէր ցուցանել: Այսպա առեալ վարդապետին երկուս քահանայս ընդ իւր, անուն միոյն Մարկոս, և երկրորդին Յոսէննէս, որք ապա յետ այնորիկ առին զպատիւ վարդապետական ՚ի նմանէ. զի անդ էաք մեք ՚ի վարժս կրԹուԹեան գրոց սրբոց ընդ աւուրն ընդ այնոսիկ, և էջ առնոսա: Եւ գլխաւորն կայր հանդէպ այրին՝ ՚ի վերայ բլրակի միոջ. և հովանի ունէին ՚ի վերայ գլխոյ նորա վասն տօթոյն, զի ՚ի տօնի վարդավառին արգելին զմեզ. իբրև մօտ եղեն ՚ի զօրապլուխն՝ որք տանէին զնոսա՝ երիցս անգամ հրամայեցին երկիր պագանել ՚ի վերայ ծնկաց իւրոց՝ իբրև ուղտուց՝ ՚ի ժամ դՀելոյն. զի այնպէս էր սովորուԹիւն նոցա: Իբրև եկին առաջի նորա հրամայեաց յարևելս կոյս երկիր պագել Կատանին՝ ալքային իւրեանց. և ապա մեզդիր եղև Թէ Եմ լուեալ է զքէն՝ Թէ այր իմաստուն և երևելի ես, և կերպարանք քո յայտ իսկ առնեն զքէն. զի այր բարի ես տեսլեամբ, հանդարտ օրինակաւ, փառաւոր մօրուօք, ծաղկեալ աչօք. դու իբրև լուար զհամբաւ պալղ մերոյ՝ ՚ի սահման ես եր, ընդէր ոչ եկիր ընդ առաջ մեր սիրով և խաղաղուԹեամբ, և ես հրամայեալ էի զամենայն որ ինչ քո է անձնաս պահել ՚ի մեծէ մինչև ցփոքր: Պատասխանի ետ վարդա-

պետն և ասէ. Մեք զբարեմտութիւնն ձեր ոչ գիտեաք, այլ երկիւղիւ և դողմամբ պաշարեալ էաք յահէն ձերմէ, և լեզուիդ անտեղեակ գոլով, և՛ի ձէնջ ոչ ոք եկն առ մեզ կոչել զմեզ առ ձեզ. վասն այսր էր դանդաղումն մեր. և արդ իբրև կոչեցիք՝ եկաք առաջի ձեր. մեք ոչ զինուորք եմք և ոչ ընչից տեարք. այլ աղք պանդուխտք և օտարականք, ժողովեալք յայլ և յայլ աշխարհաց՝ վասն ուսման ինչ մերոյ պաշտամանս. արդ ահաւասիկ առաջի ձեր եմք, զոր ինչ կամ է ձեր արարէք ընդ մեզ, թէ կենօք և թէ մահու։

Յայնժամ ասէ ցնա իշխանն. Մի երկնչիր. և հրամայեաց նոցա նստել առաջի իւր, և բազում ինչ հարցեալ՝ի նա վասն բերդիցն, և իշխանին Աւահրամայ, թէ ո՞ւր իցէ, զի կարծէր զնա թէ մարմնական ինչ իշխան էր՝ի վերայ երկրի։ Իբրև ասաց զոր ինչ գիտէրն, և զայն ևս թէ ոչ է մարմնական ինչ գործակալ, ապա հրամայեաց նմա զի իջուսցէ զմարդիկն յամրոցէ անտի յաներկիւղս, և խոստացաւ իւրաքանչիւր յիւրում[1] տեղւոջ կալ՝ իւրովք վերակացուօք, և յանուն նորա շինել զգիւղն և զագարակն։ Ապա ձայնեցին առ մեզ երիցունքն՝ որք էին զհետ վարդապետին, եթէ Իջէք վաղվաղակի, և զոր ինչ ձեր է բերէք ընդ ձեզ. և մեր իջեալ դողութեամբ առ նոսա՝ որպէս գառինս՝ի մէջ գայլոց, երկուցեալք և զարհուրեալք, ակն ունելով մահու. իւրաքանչիւր՝ի մեր իւրում ասելով զհաւատս խոստովանութեան՝ որ՝ի սուրբ Երրորդութիւն. զի յաւաղ քան զինչ ասէին մեր յայրէ անտի՝ հաղորդեալ էաք պատուական մարմնոյ և արեան Որդւոյն Աստուծոյ։ Եւ տարան զմեզ՝ի փոքրագոյն աղբիւր մի որ կայր՝ի մէջ վանիցն, և եռուն մեզ ջուր. զի յոյժ ծարաւի էաք ցաւուրս երիս. և ապա տարան զմեզ՝ի տեղի ինչ արգելանի, և զաշխարհականան՝ի գաւիթս եկեղեցւոյն. և ինքեանք շուրջ զմեօք պահէին զմեզ զգիշերն, զի ընդ երեկս էր օրն։ Եւ՝ի վաղիւ անդր հանին զմեզ՝ի գլուխ վանիցն՝ի բարձրաւանդակ տեղի ինչ, և խուզեալ առին որ ինչ կայր առ ումեք՝ որ պիտոյ էր նոցա.

[1] ՕՕ. Իւրաքանչիւրում տեղ ոչ (կամ ոչ)։

և որ ինչ յայրն անդ էր, և որ ինչ սպասք էր եկեղեցւոյն, կամ շուրջառ կամ այլ անօթ ինչ կամ խաչ արծաթի, և երկուս աւետարանս ընդելուզեալ արծաթով, զայն եւտուն վարդապետին. զոր յետոյ առին՝ի ձեռն. և ընտրեալ՝ի ձենջ զարս՝ որ կարող էին շրջել ընդ նոսա, և զայլն հրաման եւտուն տանել՝ի վանն, և՝ի կիւղ անդր, և վերակացուս Թողին յինքեանց, զի մի այլք խուեսցեն զնոսա: Հրամայեաց և վարդապետին՝ի վանս կալ. և եղբօրդի մի էր նորա քահանայ Պօղոս անուն, հրամայեաց պալ ընդ մեզ զինի նորա: Նոքա վարդապետն տուրբ խնայեաց յեղբօրդին իւր, զի մանուկ տիօք էր. ինքն եկն զինի նորա յուսացեալ թէ գնար լոցէ և զմեզ վերծուցանել. և շրջեցուցանէր զմեզ զինի իւր աւուրս բազումս՝ նեղութեամբ և տագնապանօք, հետի և բոկոտն: Եւ որ կարգեալ էին պահել զմեզ՝ արք Պարսիկք էին, ծարաւիք արեան քրիստոնէից. նոքա առաւել նեղէին զմեզ ամենայն տառապանօք, ուղեգնացութեամբ այնքան ստիպով տանէին զմեզ, որպէս երիվարս յաստատակի. և թէ դէպ լինէր ումեք վանն տկարութեան մարմնոյ կամ խեղութեան ոտից մի կասել՝ի գնացից՝ անխնայ ջարդէին զվառատիսն, և ծեծէին զմարմինն գանալից, մինչ զի ըզփուշս անգամ ոչ կարէին հանել յոտից, թէ ելանէր ընդ նա. և ոչ ջուր ըմպել ոք կարէր յստիպողացն: Եւ երբեմն իջանէին տանէին ընդուին զմեզ՝ի տունս նեղս, և ինքեանք շուրջ նստեալ պահէին զմեզ. և ոչ տային ուրեք ելանել արտաքս՝ի պետս կարեաց մարմնոյ, այլ՝ի նոյն տունն անցուցանէին զպէտսն. և՝ի նմին ազատնէին զյոլով աւուրս. վասն որոյ ոչ կարեմ ընդ գրով արկանել զամենայն նեղութիւնս՝ որ անցին ընդ մեզ. և զվարդապետն ոչ Թողին աւ մեզ, այլ ուրոյն հեռի՝ի միջի՝ յայլ ումանս յանձնեցին զգուշութեամբ պահել: Այս աւուրն և զնա յերկրորդ իմոց զինի իւրեանց՝ի պետս գալոյ Թուղթ և ընդհեռանուլ. զոր զինի իւրեանց շրջեցուցանէին, և յերեկոյն տանէին զմեզ աւ վարդապետն՝ երաշխաւորութեամբ, և դարձեալ գային առնուին հետի, կամ մերկ՝ի վերայ կրճատ գրաստու. և այսպէս առնէին զաւուրս բազումս: Նոքա իբրև անցին աւուրքն սահմանեալք, և եկն եղանակ

աչնանային, և հեռացեալ էին նոքա ի ծանրօդ[1] յաշխարհէ մերմէ յօտարութիւն, ապա զանձինս ի մահ եղին ամենեքեան, և սկսան առ սակաւ սակաւ փախչել ի գիշերի, ուր և կարացեն ջերծանել. և այսպէս եղև ընտրօքն Քրիստոսի ամենեցուն ջերծանիլ. բայց յերկուց երիցանց ոչք ի տունջեան կամեցան գաղթել և ոչ կարացին. զոր ըմբռնեալ ածին ի բանակն, և սպանին առաջի մեր յերկիւղ և ի զարմացումն. զի այսպէս առնէին ամենայն փախստեղոց:

Ապա յաւուր միում ասէ ցիս վարդապետն սքանչելի. Կիրակոս. և ասեմ. Ո՞ւր կհրամայես վարդապետ. ասէ ցիս. Որդեակ, պրեալ է թէ յոյժ ի նեղութիւն անկանիցիք համբերեցէք. արդ պարտ է մեզ զբան գրոյն ցուցանել յանձինս. զի ոչ լաւ եմք մեք քան զառաջինսուրբն՝ Պանիէլ և զՆանիանս, զԱզարիէլ և զԱրեմիա, որք ի գերութեանն էրեսից ջնջեցան ի գրոյ կենդանեացն՝ զոր ոչ արարեալ փառաւորեաց զնոսա ի գերութեանն: Արդ և մեք կացցուք և ճնասցուք խնամոյն Ստուծոյ, մինչև ինքն այց արասցէ մեզ, որպէս և կամի: Եւ ասեմ. Սուրբ հայր, որպէս հրամայես՝ այնպէս արասցուք:

Ապա եղև ապա յաւուր միում գալ իշխանին այնմիկ որ գերեացն զմեզ՝ ի տեղին, ուր էաք մեք ի պահեստի. և տեսեալ զմեզ խոտորեցաւ առ մեզ. և մեր ընթացեալ ընդ առաջ նորա, ասէ ցմեզ. Ո՞ւր պիտոյ է ձեզ, մինչ քաղցեալ էք, տայ ձեզ միս ձիոյ. զի ինքեանք անխտիր ուտէին զամենայն անսուրբ ազնասունս, այլ և զմուկն և զամենայն սողունս: Ասէ ցնա վարդապետն. Ասէք ձիոյ միս ոչ ուտեմք, և ոչ զայլ կերակուրս ձեր. թէ կամիս ընտրել առնել մեզ, արձակեա զմեզ ի տեղիս մեր, որպէս խոստացար. զի այր ծեր և հիւանդոտ եմ ես, և ոչ եմ քեզ պիտանի ի գործս ինչ զինուորութեան և հովանութեան կամ այլ ինչ ի պէտս ձեր: Ասէ ցնա զօրապետն. Յորժամ եկեսցէ Ղուչու ղան՝ հոգայից զձեզ վանն այդորիկ. և էր Ղուչու ղանն այն վերակացու տան նորա. և երթեալ ընդ զօրս նորա յաւար: Ասպէս կացաք առա-

1 Բ. Գ. Յահնօքի:

ջև նորա երկիցս և երիցս, և նա զնոյն պատասխանէր, և նա ասա՝ եկն այրն ՚ի Հանապարհէն, և կոչեցին զմեզ ՚ի դուռն իշխանին, և յղեաց զնոյն այրն առ մեզ Թարգմանաւ, և ասէ. Ո՞չ ապաքէն ասէք դուք Թէ ինչ տալ մեռելոյն՝ օգուտ է Հոգւոյ նորա. արդ եԹէ մեռելոյն օգնէ, զկենդանիս ընդէր ոչ փրկէ. տուր զոր ինչ ունիս և գնեա զՀոգի քո. և երԹ նմա՛ ՚ի տան քո: Պատասխանի ետ վարդապետն և ասէ. Որ ինչք այն էին զոր դուք առիք, խաչքն և աւետարանքն, բայց յայնմանէ մեր այլ ինչ ոչ գոյ: Ասէ ցնա այրն. Եթէ ոչ ունիս ինչ՝ անհնար է քեզ երԹալ աստի: Ասէ վարդապետն. Հնարտութեամբ ասեմ քեզ, մեր ոչ ինչ կայ, ոչ գին աւուր միոյ կերակրոյ. բայց եԹէ կամք կայեն ձեր, առաքեցէք զմեզ ՚ի մի ՚ի բերդից յայսցանէ, որ շուրջ կան զմեօք, և քրիստոնեայքն որ կան ՚ի նոսա՝ գնեն զմեզ: Ասէ նոցա Հատեալ գինս ծանուսն ՚ի վեբայ նոցա, և դարձեալ ԹեԹևացուցին յայնմանէ, և առաքեցին զնա՛ ՚ի բերդն՝ որ կոչի Պատ[1]. իսկ նա խընդրեաց զմեզ գնոյ, զի ընդ նմա էրն և զմերն տացէ, և ոչ ետուն: Ասէ. Ա՛ ՚ի պէտ են մեզ ԹուղԹ դրելոյ և ընԹերցման, Թէպէտ բաղում գինս տայք ոչ տամք զսա: Եւ բաժանեցաք ՚ի միմեանց արտասուօք. և ասէ ցնա. Որդեակ, ես երԹամ անկանիմ առ ատս աստըծ նշանին՝ որ յանուն աստըծ Արգսի, խնդրել նովաւ ՚ի տեառնէ վասն քո, և այլ եղբարցն՝ որք կան ՚ի ձեռս անօրինին, զի Թերևս զերծուսցէ և զձեզ Ա՛ստուածդ ԹուԹեամբ իւրով: Զի էր ՚ի Պատն խաչ մի աքանչելագործ առ ամենայն նեղեալս, մանաւանդ առ գերիս. զի որք ատաւինէին ՚ի նա բոլորով սրտիւ՝ ինքն իսկ Աստուած դիս բանայր զկապուն բանտից, և արձակէր լուծանէր զերկաԹս, և առաջնորդէր մարմնաւոր տեսլեամբ ՚ի տեղիս իւրեանց. և Հաճեաւ աքանչելեացն տարածեալ էր ընդ ամենայն ազգս. զոր կանգնեալ ասէն զնա սրբոյն Աստուծոյ վարդապետին մերոյ: Եւ եղև որպէս ասաց վարդապետն. գնեցին զնա ուԹսուն դահեկանի. և իբրև տարան զնա՝ ՚ի նմին աւուր ասէ ցմեզ Աստուած տրամիր ընդ գնալ մեծ երկուսն, զքեզ վասն այնորիկ

ոչ թողաք ընդ նմա, զի պիտանի է ա մեզ. մեծացուցից զքեզ ՚ի մեծամեծաց իմոց, և թէ կայ քո կին՝ բերից զնա առ քեզ, և թէ ոչ՝ տայ քեզ կին ՚ի մէնջ. և առ ժամայն էառ մեզ վրան մի, և երկուս պատանիս տպաւորս մեզ. և ասէ. Ի վաղիւն տայ քեզ ձի, և ուրախ ալարից զքեզ, միամիտ կայջիր. և դնաց ՚ի մէնջ։ Ոստ մօքն Ա՛ստուծոյ պատահեաց մեզ ՚ի նմին գիշերի գաղտագնաց լինել ՚ի նոցանէ և գերծանել. և եկաք ՚ի տեղի անդէան մերոյ՝ ՚ի վանքն որ կոչի Գետիկ, և նա աւելեալ էր ՚ի նոցանէ, և այրեալ զշինուածս որ ՚ի նմա, և անդ դադարեցաք։

ԻԳ.

ՎԱՍՆ ԱԽԵՐՄԱՆ ՓԱՂԱՒԻՆ ԼՕՌԻ, ԹԷ Ո՛ՐՊԷՍ ԱՌԻՆ ՁՆԱ

Զօրավարն աւերնայն գնդին Հեթանոսաց՝ որում՝ անուն էր Ջաղապա, լուաւ վասն ամրութեան քաղաքին Լօռւոյ, և յոլովութեան գանձուցն որ ՚ի նմա. զի ՚ի նմա էր տուն իշխանին Շ ահնշահի[1] և գանձ նորա. առեալ ընդ իւր ընտիր ապառաժէնս յոլով մեքենայիւք և աւերնայն պատրաստութեամբ, գոգաւ անդ և նստեալ շուրջ գնաւաւ պաշարեաց զնա։ Ոսկ իշխանն Շ ահնշահ, առեալ զկինն իւր և զմանկունն՝ էլ գաղտագողի ՚ի ձորն անդ, և ամրացաւ յայրս ուրեք, և զվերակացութեան քաղաքին տայ ՚ի ձեռս աներաց իւրոց. էսկ նոքա քանզի արք կանացիք էին՝ ուտելոյ և ըմպելոյ և արբեցութեան պարապեալ, յուսալով յամրութենն պարսպացն և ոչ Ա՛ստուած. և եկեալ Թշնամեացն փոթելոյն ՚ի նեղջոյ պարսպացն և փլուցին. և ինքեանք շուրջ նստեալ պահէին, զի մի ոք փախիցէ։ Ոսկ քանզի կինք քաղաքին իբրև տեսին Թէ առաւ քաղաքն, սկզբան մտնել ՚ի վախից, և ՚ի ձոր անդր ընուին. և զայն տեսեալ Թշնամեացն՝ սկսան մտանել ՚ի քաղաքն, և կոտորել անխնայ զարս և զկանայս և զմանկունս, և աւար առեալ զինչս և զստացուածս նոցա՝ գոհն և զգանձս իշխանին Շ ահնշահի, որ զկեալ կողոպտեալ էր զիւր

1 Որդի Ամծին Ջաքարեայ ատաբակալին։

հնազանդեալն, և անդ կազմեալ տուն զանձուց ամ
բարձին, զոր ոչ էր հնար ումեք տեսանել. զի նեղ ա
բարեալ էր զբերան գբին, որ միայն արկանելոյն էր
բաւական, իսկ հանելոյ ոչ ևս։ Ապանին և զանբերան
Շ՝ աճնչահին, և ինքեանք խոյզ արկեալ ամենայն ամ
բոյոյ քաղաքին և գաւառին, զոր պատրանօք և զոր
բռնութեամբ՝ առին զբազումս. զի տէր մատնէր զնոսա
՚ի ձեռս նոցա։

Ա.յսպէս արարեալ և ընդ այլ քաղաքս, և ընդ Դու
մանիս և Շ աճղոլտէ, և ընդ մայրաքաղաքն Տփխիս,
առեալ զամենայն առ յաւար, ՚ի կոտորումն և ՚ի գե
րութիւն, աստիճան սփռեալ ընդ ամենայն կողմանս
անխնայ յարձակմամբ և յափշտակութեամբ և կոտոր
մամբ. զի ոչ ոք էր որ ընդդէմ կայր նոցա, կամ պա
տերազմէր ընդ նոսա. վասն այնորիկ աներկիւղ էին
յամենայն կողմանց, զի փախստեամբ փախեաւ Թա
գուհին Վրաց, որ Ռուզուդանն կոչէր, ուր և կարաց
զերծանիլ. այսպէս և ամենայն իշխանքն անձնապահք
եղեն ՚ի նոցանէն։

ԻԴ.

ՎԱՍՆ ԱՆԿԱՆԵԼՈՑ Ի ՁԵՌՍ ՆՈՑԱ ԻՇԽԱՆԻՆ ԱԽԱՓԻ

Իսկ իշխանն մեծ՝ որդին Լուանէի՝ որ Ջաքն կո
չէին, իբրև եառ զայն ամենայն բազմութիւնս Թշնա
մեացն՝ որք լցին զաշխարհս ամենայն, ամրացաւ և նա
՚ի բերդն ամուր՝ որ կոչի Կայեան. եկին և ամենայն
բնակիչքն գաւառին, ամրացան և նոքա շուրջ զբերդովքն։
Իբրև գիտացին զօրքն այլազգեաց թէ անդ ամրացաւ
իշխանն, մի ամն ՚ի գլխաւորացն՝ որոյ անուն էր Լ
տուղատայ, առեալ զօրս բազումս եկին և պաշարեցաւ
զբերդն, և առհասարակ լցաւ աշխարհն ՚ի զօրաց այ
լազգեացն. զի ՚ի նմա գաղթեալ էին յամենայն կող
մանց վասն ամրութեան վայրացն. և ածին շուրջ զբեր
տորատալ բերդին որպէս յամենայն կողմանց. յղէին պատ
գամս առ Ջաքն գալ ՚ի հնազանդութիւն ծառայու
թեան նոցա, և մի երկնչել. և բազում անգամ յղէին
և զնոյն բանս ասէին։ Իսկ նորա կամեցեալ շահել զբ

միտս նոցա՝ տայ զդուստր իւր նոցա և ինչս բազում, զի Թերևս Թուլասցին՝ ի պաշարմանէն. իսկ նոցա առեալ զայն՝ և այնպուԹեամբ խնդրէին զնա։

Իսկ որք շուրջ զբերդովն և որք՝ ի ներքս՝ սկսան նեղել՝ ի ծարաւոյ. ապա տարան զձի և զամենայն անասունս իւրեանց՝ ի ձեռս Թաղաւորին, զի Թողացուսցեն ամանց՝ ի նոցանէ երԹալ քերել ջուր ախի իւրեանց. և նոցա յանձն առեալ՝ զիմեցին բազմուԹիւն մարդկան՝ ի ջուր անդր. և նոցա արգելեալ զերԹայն՝ ի ջրէ, և ոչ սպանին զոք. այլ ասէին նոցա ի ջուցանել զընտանիս իւրեանց, և կեալ՝ ի մէջ նոցա. և նոցա առ վշտին ածեալ զամայ ի ջուցեալ զնոսա. և նոցա արբուցեալ ջուր՝ արգելին՝ ի մէջ իւրեանց, և առին զկանայսն որոյ ցանկացան, և սպանին զարս նոցա. և զկէս Թողին առ արս իւրեանց։ Իսկ Ղազդն իբրև եաԹս Թէ ոչ Թուլանան նոքա՝ ի պաշարմանէ և՝ ի կոտորելոյն, կամեցաւ զանձն իւր տալ՝ ի ձեռս նոցա, զի Թերևս տակաւիկ մի դիւր լիցի մարդկան. և առաքեաց զՂրիպոն՝ զոր Տըղայն կոչէին գգուանօք, յազատացն Խաչենոյ, զվերակացու տան իւրոյ, յառաջ քան զինքն երԹալ հանդիպել գլխաւորին նոցա՝ որ Ղարմաղանն կոչէին, որ հաբեալ էր զխորանն առ աին ծովուն Ղեղարքունոյ։ Որ իբրև լուաւ մեծ Նուէնն՝ ուրախացաւ յոյժ, և առաքեաց վաղվաղակի առ Տուղատան՝ որ պաշարեալ էր զնա, փութով առ ինքն հասուցանել, և այլ մի նեղել զբնակիչս բերդին և գաւառացն. և նորա առեալ զՂազդն վաղվաղակի հանդիպեցին նմա։ Նա իբրև եաԹս զնա, ասէ ցնա. Դու ես Ղազդն. նա պատասխանի ետ Թէ Նա եմ. ասէ ցնա զօրապետն. Նա ընդէր ոչ եկիր վաղվաղակի առ իս՝ իբրև եկի ես՝ի սահմանս ձեր։ Պատասխանի ետ իշխանն, և ասէ. Ընդէ՞ր հեռի էիր և կենդանի էր հայր իմ, նա ծառայեաց քեզ բազում պարգևօք. իբրև մեռաւ հայրն իմ, և ես ծառայեցի քեզ ըստ իմում կարողուԹեանս. և այժմ իբրև եկիր յաշխարհս իմ, ահաւադիկ կամ առաջի քո, որպէս հաճոյ է քեզ արա ընդ իս։ Ղազդն զօրապետն. Ղազդն՝ ի խօսս առակաց, Թէ յերկն եկի՝ չեկիր, ՚ի գետն եկի՝ ապա եկիր։

Եւ հրամայեաց նմա նստել ՚ի ստորև քան զնա մեծա-
մեծս՝ որք նստէին առաջինորա. և հրամայեաց Ջաշ մեծ
առնել ՚ի պատիւ նմա. և բերին յոլովութիւն մսոյ ՚ի տուրբ
և յանտուրբ անասնոց, անդամ անդամ յօշեալ և է-
փեալ. և խլմըզս[1] ՚ի կաթանէ ձիոց, ըստ սովորութեան
իւրեանց բազում տիկս. և արկին առաջի և սկսան ու-
տել և ըմպել. իսկ Ղազն և որք ընդ նմա՝ ոչ ուտէին
և ոչ ըմպէին. եհարց զօրապետն Թէ Ընդէր ոչ ուտէք.
ասէ Ղազն ցնա. Վրիստոնէից ոչ է սովորութիւն ու-
տել զայս կերակուր, և ըմպել զայս ըմպելի. այլ միա
՚ի տուրբ կենդանեացն զենել, և գինի առ ՚ի ըմպել. և
հրամայեաց զայն տալ նոցա զոր և խնդրեաց: Եւ ՚ի
վաղիւն նստոյց զնա ՚ի վերոյ յոլովից մեծամեծացն. և
այսպէս օր ըստ օրէ յաւել ՚ի պատիւ նմա. մինչև ՚ի մե-
ծամեծացն կարգի նստուցանել զնա. և հրամայեաց ա-
մենայն զօրուն ոչ մարտնչել ընդ բերդն և ընդ քա-
ղաքն՝ որ ընդ իշխանութեամբ նորա էին, և բազում
դիւրութիւն ածէ աշխարհի նորա. և բազում դերիս
ազատս արձակեցին վանն նորա. և զամենայն աշխարհն
նորա ետ նմա, և այլ ևս աւելի. և անքակ սէր հաս-
տատեաց ընդ նմա: Եւ առեալ զնա և զամենայն զօրն
ջոգաւ ՚ի վերայ քաղաքին Կնեայ:

Իե

ՎԱՍՆ ՓԱՂԱՔԻՆ ԱՆԻՈՑ՝ ԹԷ Ո՛ՐՊԷՍ ՄԱՏՆԵՑԱ ՏԷՐ Ի ՁԵՌՍ ՆՈՐԱ

Քաղաքս այս Կնի լեալ էր բազմութեամբ մարդ-
կան և անասնոյ, և պարսպեալ ամրագոյն պարսպօք. և
եկեղեցի բազում կայր ՚ի նմա. մինչ ՚ի կարգ ժոսից
երդման այսպէս երդնուին, Կնեայ հազար և մի եկեղե-
ցին. և յոյժ փարթամ էր քաղաքն ամենայն իւրօք.
վասն որոյ յղփութիւնն յամբարտաւանութիւն ած
զնոսա, և ամբարտաւանութիւնն ՚ի կորուստ, որպէս
սովոր է առնել յիսկզբանցն և այսր: Քաղաքեաց Ջար-
մաղանն զեսպանս առ նոսա զալ նմա ՚ի հնազանդու-

1 Մինչև ցարդ այսպէս կոչեն թաթարք զչինաուկ կամ զբմռելին ՚ի ձիոյ կաթանէ:

Թիւն. և որ գլխաւորքն էին ՚ի քաղաքին՝ ոչ իշխեցին պատասխանի առնել պատգամին, առանց հարցանելոյ զիշխանն Շ ահնշահ. քանզի ընդ իշխանութեամբ նորա էր քաղաքն: Նոյնպէս քաղաքին և ռամիկքն սպանին զպատգամաւորսն: Եւ զայն տեսեալ զօրքն այլազեաց՝ ՚ի բարկութիւն բրդեցան. և պաշարեալ զքաղաքն յամենայն կողմանց, կանգնեցուցին փիլկուսանս[1] քարուձմ՝ արուեստագիտութեամբ, և մարտուցեալ ընդ քաղաքին զօրեղապէս՝ առին զնա:

Եւ ամանք յիշխանացն քաղաքին ձեռնտու եղեն առ Թշնամին, զապրուստ անձանց իւրեանց չահելով. և նոցա կոչեցեալ արտաքս ՚ի քաղաքէն զբազմութիւնն՝ խոստացան ոչ ինչ առնել նոցա չար: Եւ իբրև ելին արտաքս առ նոսա ամենայն բազմութիւնն՝ բաժանեցին զնոսա յինքեանս, և սուր ՚ի վերայ եղեալ կոտորեցին զամենեսեան առ հասարակ անողորմաբար. սակաւ[2] կանայս և մանկունս թողեալ, և արս արուեստապետս, զոր վարեցին ՚ի գերութիւն: Եւ ապա ինքեանք մտեալ ՚ի քաղաքն՝ առին զինչս և զստացուածսն ամենայն. կողոպտեցին և զամենայն եկեղեցիսն, և աւերեցին քանդեցին զամենայն քաղաքն. եղծին և պականեցին զիարս վայելչութեանն նորա: Ումեք էր տեսանել տեսիլ ողորմագին. առհասարակ կոտորեալք ծնօղքն և ծնունդք ընդ նոսին, դիզեալք ՚ի վերայ միմեանց իբրև զդեղբուկս քարանց կուտեալք, քահանայք և սարկաւագունք և պաշտօնեայք եկեղեցիանք, ծերք և տղայք և հասակաւ մանկունք և երիտասարդք և կուսանք շատք. ըստ աւետարանին սրբոյ, եթէ մանիկըն՚ի սով և ՚ի գերութիւն. նոյն հրաման եհաս ՚ի վերայ սոցա, զի ցիր և ցան անկեալք ընդ երեսս գաշտացն, արբեալ երկիրն յարենէ և ՚ի Ճարպոյ վիրաւորացն. փափուկ մարմինքն և ածառովք լուացեալք[3], սևացեալք և այտուցեալք, և այնպիսի որ ոչ[4]

1 Փէլտոն ըստ Տաճկաց, որոց Թուխ առեալ և զգործին և զանունն ՚ի Հռոմայց, առ որս՝ և ՚ի մեզ ծանօթ է բաղնատն, Թէպէտ և ոչ ամենայնիւ. նոյնպիսի կամ քարաձիգ կամ էնէնկն՝ նետաձիգ կամ քարաձիգ՝ նոյն Թուխ կոչեցեալն գանաբէնտէս ՚ի Յունաց, καταπέλτης. գոպտ. բուլտա catapulta ՚ի Լատինաց, որք և վեճամեճ նետան կոչէին բիլում pilum.

2 ՕՕ. սակաւ:

3 ՕՕ. լուացեալ:

4 ՕՕ. որոց:

եւեալ էին արտաքս քան զղուռն քաղաքին, զոկ և հետոտիոս ընծացեալք ՚ի գերեզմանն. և ոչք հաղորդէին ՚ի պատուական մարմնոյ և յարենէ որդւոյն Աստուծոյ, ուտէին զմիս անասուրբ և հեղձուցիկ[1]. և ըմպէին ՚ի կաթանէ ձիոց պղծոց. կանայք պարկեշտք և ողջախոհք՝ մատնեալք ՚ի խայտառականս չարաչար մարդկան. կուսանք սուրբք ոչք ուխտեալ էին Աստուծոյ (սրբութեամբ) պահել զմարմինս և անախտ զհոգիս, պղծեալք պիղծս (պոռնկութեամբք) և ապականեալք անկարգութեամբ. և այսպէս եղև զրաւ գործոյն։

ԻԶ

ՎԱՍՆ ԱԽԵՐԱՅԻ ԿԱՐՈՒՑՆ

Այս քաղաքս իբրև եւս որ ինչ գործեաց Աստուած ընդ բնակիչս Նինուէ, փութացան և աճապարեալ տարան զանանալն քաղաքին ընդ առաջ նոցա, զի թերևս խնայեսցեն ՚ի նոսա. իսկ նոքա քանզի խանձեալ էին աւարաւ, և ոչ յումեքէ ունէին երկիւղ, զնոյն անցս և ընդ նոսա անցուցին, որպէս ընտանի, յափշտակութեամբ ընչից և ստացուածոց և կոտորմամբ բնակչաց, և աւերմամբ քաղաքաց անզարդացուցեալ զվայելչութիւն նորա, և զերի վարեալ զբնակիչս, և սակաւ սինլքորս թողեալ գնացին ՚ի բաց.. զոր յետոյ եկեալ զօրք[2] սուլթանին Խոռոմայ՝ զերծեալսն ՚ի Ասորեստան գնեցին ՚ի գերութիւն և ՚ի սուր անողորմաբար. ըստ գրեցելումն, Թէ ահ, գուբ և որոգայթ ՚ի վերայ ձեր՝ բնակիչք երկրի. և որ փախիցէ յահէն անկցի ՚ի գուբն. և որ ելանիցէ ՚ի գբէն՝ անկցի յորոգայթ. և որ փախիցէ յայնմանէ՝ հարցէ զնա օձն. այսպէս եղև տառապեալ բնակչացն Նարուց։ Նոյն զօրքն առին և զքաղաքն Սուրբ–Պարի[3], զոր սակաւ ամօք յառաջ առեալ էր գնա ՚ի Տաճկաց Շ ահնշահն և Պարսին, և գեռ ևս կարկատեալ էին. Յանկարծակի եհաս ՚ի վերայ նոցա մի ոմն յառապացն զօրօք բազմօք, որում անուն էր

1 ՕՕ. հեղձուցիկ։ Սիրմելն, գեօղ ՚ի հարաւոյ արևմտից Էջմիածնոյ առ Երասխաձորով, ՚ի հին ճանապարհ գառառի։
2 ՕՕ. զօրք։
3 Սուրմառի կամ յայլոց և այժմ

Պարսից Բահատուր. և վաղվաղակի առ զնա, և զոր
ինչ եգիտ ի նմա՝ յափշտակեաց։ Եւ ելեւ այսպէս
այս գործեցաւ ընդ աշխարհս ամենայն, ապա հրաման
ետուն ծնացուղացն՝ որ ապրեալ էին ի սրոյ անտի և
ի գերութենէ՝ գնալ յիւրաքանչիւր տեղիս, ի գիւղս
և յագարակս, և շինել իւրեանց տուն [1] և ծառայել
նոցա. և սկսաւ երկիրն սակաւ սակաւ շինիլ և շինու-
թիւն առնուլ։ Բայց Աստուած որպէս սովոր է՝ ի ժա-
մանակի բարկութեան զողորմութիւն յիշել, զոր և աստ
արար. զի ոչ ըստ մեղաց մերոց արար Տէր, և ոչ ըստ
անօրէնութեան մերում հատոյց մեզ. զի ժամանակն
ամառնային էր՝ յորում ասպատակեցին նոքա ի մեզ,
վաստակն չև ևս էր հնձեալ կամ ժողովեալ ի շտեմա-
րանս. և նոքա եկեալ ուղտիւք և անասնովք կերան և
կոխեցին զամենայն։ Նակ մերձ յեղանակն ձմեռնային,
իբրև գնացին նոքա ի դաշտն որ կոչի Ասուրան, յաշ-
խարհն Ասղուանից. քանզի անդ կային զձմեռնային ժա-
մանակն, և ապա ընդ գարունն սիրէին ընդ կողմանս
կողմանս. մարդիկն՝ որ ծնացին ի սրոյ անտի՝ մերկք էին
և առանց կերակրոյ. ի հասկից անտի անկեալոյ և կո-
խելոյ՝ ընուին զպէտս իւրեանց. և ձմեռն ոչ ցուրտ եղև
սաստիկ, որպէս յայլ ժամանակս, այլ կակուղ և ըստ
միտս. և զի ոչ ունէին եզինս՝ որ գործէին զերկիր, և
ոչ սերմանք՝ զոր եթէ ցանէին, ի գալ գարնան՝ հրա-
մանաւ Աստուծոյ, երկիրն բուսոյց իննեակս [2], որ քա-
նական էր ընուլ զպէտս մարդկան. այլ և ընդ ամենայն
կողմանս լսութիւն եղև հացի, որով ապրէին փախու-
ցեալքն ի տեղիս. այլ և անողորմ ազգն Ասղոց քա-
ղաքաւ գուժ և խնամս ցուցանէին երթելոյն առնոսա
պանդխտանալ. և այսպէս ողորմածն Աստուած միխի-
թարեաց զվշտացնեալքն։

1 ՕՕ. անուն։ 2 Տպ. ինփնէկս։

Իլ

ՎԱՍՆ ԾՈՒՂԱՐԿԵԼՈՅ ՋԻՇԽԱՆՆ ԱՒԱԴ ԱՌ ՂՇՆՆ ՅԱՐԵԻԵԼՍ

Իբրև սակաւ ինչ ժամանակք անցին՝ ի վերայ՝ ա-
ռաքելին զՅ:ատն առ արքայն Իբեռանց, զոր Պ ան կո-
չէին, ընդ հեռաւոր Հանապարհս, յարևելս հիւսիսոյ.
քանզի այսպէս առնէին, զառեղային մեծամեծս զոր կա-
մէին պատուել՝ առ նա յուղարկէին, և հրամանաւ նո-
ցա առնէին զոր ինչ և գործէին. քանզի սաստիկ հրա-
մանատարք էին արքային Իբեռանց: Ա.յլ և ինքն
իշխանն յօժարեաց գնալ, զի Թերևս ինչ պիւր լինի
իւր և երկրին. և առեղային զի աղօթս մատուցանէր
վանն նորա առ Ա:ստուած՝ խաղաղութեամբ դարձուցա-
նել զնա այսրէն. զի ինքն բարի էր բնութեամբ, և ա-
ռաւել ևս զի յուսային եթէ գալստեամբ նորա շահես-
ցին ինչ: Ոսկ նորա երթեալ յանդիման լինէր մեծի
արքային, և ցուցանէր նմա զգիրս զօրապլխաց իւրոց,
և յիշէցուցանէր զպատճառս գալոյն առ նա, թէ՝ ի
ծառայութիւն եկեալ է նմա: Իբրև լսէր զայն մեծ
արքայն՝ սիրով ընդունէր զնա և տայր նմա կին՝ ի Ա-
Թար ազգէ, և յուղարկէր զնա յիւր աշխարհն. և գրէր
առ զօրավարն՝ տալ զնա՝ ի ձեռս նորա, և նովաւ նուա-
ճել զառեղային ապստամբեան, որ և եղև իսկ: Ո՞ի իբրև
եկն նա յաշխարհն իւր, և արարին զօրապլուխք գհրա-
մանս արքային Իբեռանց. եկին՝ ի հնազանդութիւն ծա-
ռայութեան՝Շ ահնշահ որդի Ո՞աքարէի, և Ա՝ահրանն
իշխանն, և որդին իւր Ա:զատուշայն, և Ի՞ատան՝ որ Ո՞ա-
լան կոչէին՝ իշխան կողմանցն Ոտաչենայ, և այլք բա-
զումք. և գնացաքանչիւր երկիր տային նոցա, և առ ժա-
մանակ մի նեռուին: Ա՛ւ ապա սկսան հարկապահան-
ջութեամբ և երթևեկութեամբ և գինուորութեամբ
նեղել զնոսա. սակայն Թէպէտ այսու ամենայնիւ և որ
առաւել քան զայս էր՝ նեղէին զնոսա, բայց զոք ոչ
սպանանէին: Ա՛ւ իբրև անցին ամք ինչ՝ նեղեցաւ՝ ի նո-
ցանէ իշխանն Ա:ազ. զի կարի ժլատք էին, և ոչ կա-
րէր զամենեսեան ըստ միտս նոցա հաճել. զի ոչ միայն ոչ
բաւականային ուտելով կամ ըմպելով, այլ և պահան-

ջէին երիվարս և հանդերձս մեծագինս. զի կարի յոյժ ձիասէրք էին. վասն այսորիկ և քաղեցին զձի յամենայն երկրէ, և ոչ ոք իշխէր Նաամարձակ պահել զձիս և զջորիս, բայց Թէ՛ ի ծածուկ ուրեք վասն հարկին զնուագութեան. զի ուր և գտանէին յափշտակէին. և աւելի ևս՝ յորում գտանէին զնշանն իւրեանց. և զոր առնուին՝ իւրաքանչիւր զօրագլուխ իւրով նշանով կընքէր, խարեալ՛ ի մի անդամանէ. և Թէպէտ գնէին՛ ի նոցունց՝ և այլ ոք հանդիպէր յայլմէ գնդէ, առնուին՛ ի նոցանէ, և պատժէին զնոսա իբրև զգողս, և զայս ոչ միայն մեծամեծ մարդիկն առնէին, այլ և փոքունքն ևս. և մանաւանդ աւելի ևս առնէին զայս յորժամ մեռաւ զօրավարն զօրուն, որում անուն էր Ղաղատա. քանզի սպանին զնա՛ ի գիշերի՝ որ Մուլհէթքն անուանէին. և վասն այսորիկ կոտորած սաստիկ եղև գերւոյն՝ որ էր՛ ի զօրան[1]. և այրս այս բարեկամ էր Ուչային. իբրև մեռաւ նա՝ Թշնամիք բազումք յարեան՛ ի վերայ նորա:

Յաւուր միում՛ ի տան Ուչային մի ոմն՛ ի նոցունց եկն՛ ի խորանն ուր նստէր Ուչան. և իբրև ոչ վաղվաղակի եւ ընդ առաջ նորա, վարոյիւք երիվարին՝ որ՛ ի ձեռննորա՝ ծեծեաց զգլուխ նորա. զայն տեսեալ սպասաւորաց իշխանին՝ բարկացան ընդ անարդանս տեառն իւրեանց, յարեան հարկանել զայրն, և իշխանն արգել զնոսա՝ Թէպէտ զայրացեալ էր. և երթեալ առն այնմիկ՝ որում անուն էր Ջ ոջքուզա, առեալ ընդ իւր և այլ ընկերս՝ կամեցաւ՛ ի գիշերի սպանանել զիշխանն. և նորա գնացեալ փախեաւ առ Թագուհին Ա քրայ, զի դեռ ևս ապստամբ էր նա՝ գալեալ յամրապոյն ամրոցս յաշխարհին Ա ՛ քրայ. և առաւել ևս այսպիսի անկարգութիւնս վասն այնորիկ գործէին, զի մեծ զօրավարն՝ որ գլուխ էր ամենեցուն, զոր Ղարանդանն կոչէին, հանգեալ էր՛ ի գիւղ և՛ ի ցաւոց. բայց զիշխանութիւնն ոչ էին բարձեալ՛ ի տանէ նորա. զի կին նորա և որդիք հանդերձ գործակալօք տանն նորա վարէին զիշխանութիւնն. զի Խաղանն այսպէս հրամայեաց, Թէ և մեռանի զաւակեաց ևս շնորհացանել ընդ զօրուն, զի

կարի յոյժ աջողած է այրդ և ընտհաւոր։ Եւ իբրև փախեաւ Ուլիսէն՝ արտաքեցան մեծամեծք, և մեղադիր եղեն առն այնմիկ, և յղեցին դեսպանս զկնի նորա, մի ապստամբիլ՝ ինոցանէ. և երդնուին ոչ ինչ առնելնամա ջար. և եառն զաշխարհս նորա՝ ի ձեռն Ը ամենայնի, իբր թէ եղբայր նորա էր. և զայս առնէին վասն ա ռաւել հաւատարմութեան։ Իսկ Ուլիսէն գրեաց թուղթ և առաքեաց առ Կայան, թէ Ի ծառայութենէ քումմէ ոչ եմ ելեալ, այլ ի սպանանէ փախուցեալ եմ, և անաւամ քումմ հրամանիդ։ Եւ մինչ նա յամէր ձգման և միայր պատասխանւոյ մեծի թագաւորին, սոքա ըզդանձ նորա որ թագուցեալ կայր ի բերդորայ՝ զամենայն հանին ի խոյզ արկեալ. և դարձեալ պատգամ յղէին մի զկնի միոյ առ Ուլիսէն՝ զալ առ նոսա, զի երկընչէին յարքայէն իւրեանց։ Եւ իբրև եկն Ուլիսէն ի զօրն՝ իսկոյն եկն հրաման յարքայէն առ զօրսն, զի մի ոք իշխեսցէ չար ինչ առնել Ուլիսէին. և թուղթս առ Ուլիսէն, և պարգևս նմա՝ զալ հանդարձակ և մի երկընչել։ Ապա մեծարանս արարեալ հանին արտաքս ի զօրէն զարան՝ որք կամէին սպանանել զնա, և առաքեցին զնա. և զոմն մի գլխաւոր Տօնղուզ–ազա անուն՝ որ եկեալ էր ընդ նմա՝ հարկս պահանջել յամենեցունց, հրամանաւ Կանին՝ առ թագուհին Կրաց Հունգրուդան, զալ ի հնազանդութիւն մեծի արքային. որոյ երթեալ առ նա յորդորեցին զնա կալ ի հնազանդութեան, և մի երկնչել. և առեալ ի նմանէ զօրս, եկին առ առաքիչն պայմանաւ և սիրով խաղաղութեան՝ թագուհին կալ ի հնազանդութիւն, հանդերձ որդւովն՝ Կաւթաւ մանկամբ, զոր նորընծայ թագաւորեցուցեալ էր. և նոցա ոչ ստել ուխտին։

ԻԸ

ՎԱՍՆ ԿՈՏՈՐԱԾԻՆ ՈՐ Ի ԿՈՂՄԱՆՆ ԽԱՉԵՆՈՑ, ԵՒ ՎԱՍՆ ԲԱՐԵՊԱՇՏ ԻՇԽԱՆԻՆ ՋՆԱՆԱԴՕՂԱՑ

Յուցաք սակաւիկ մի համառօտիւք որ ինչ գործեցաւ ընդ աշխարհս ի մահուանէ Թամարայ, որ Կոտոր անուն՝ որդի նորա եղև. ասացուք արդ և վասն կողմանցն Խաչենոյ, և որ

ինչ անդ գործեցաւ. քանզի ընդ ամենայն կողմանս ախռեալ էին զաստիատակս իւրեանց, այլ և վիճակաւ ևս բաժանեալ՝ հասին անդ ոմանք ի գլխաւորացն զօրու ծանուս և գինուս, և ամենայն ախիւ բանակին. գերեցին, և զբազումս սպանին որ յարձակ վայրան։ Այսպա մարտիւք մարտեան և ընդ գաղթականան և որ յամուր վայրան, զոմանս խաբէութեամբ և զկէսս բռնութեամբ իջուցին. էր զոր սպանին և էր որ գերեցին. բայց յո՞ւղիքն այն էին՝ որ ամրացեալ կային յանկասկած վայրան՝ զոր վասն գժուարութեան տեղւոյն չատախտակս կո՞չէին, որք ապաստանեալ յամուրան անկասկած կային. բայց քանզի ի Տեառնէ էր բեկուին՝ յեղակարծումժա՞մու գաղտագողի ելեալ մտին յամուրան, և որոյ Ճարակ ետուն զբազմութիւնն, և զկէսն գահավէժ արարին. և ի բազմութենէ անկելոցն ծածկէր երկիրն, և ա՞րիւնն առու եղեալ՝ իբրև զջուր երթայր. և յոչ ոք խնայեցին. և ոսկերքն ևս յետ բազում ժամանակաց իբրև զդերբուկս քարանց կուտեալ երևէին։

Ոգան և ի վերայ բարեպաշտ իշխանին չասանայ՝ զոր Ջալալն կոչէին. քուերորդի էր սա մեծամեծ իշխանացն՝ Օաքարէ և Խանէ, այր բարեպաշտ և աստուածասէր, հեզ և հանդարտ, ողորմած և աղքատասէր, Ճգնող յաղօթս և ի խնդրուածս, իբր զայնս՝ որ յանապատս կային. զպաշտօն տունջեան և գիշերոյ անխափան կատարէր՝ ուր և լինէր, իբրև զվանորայն, և յիշատակ յարութեան փրկչին յաւուր միաշաբաթի՝ յոտանաւոր տքնութեամբ անցուցանէր անքուն. և էր յոյժ քահանայասէր և ուսուցնասէր, և ընթերցող աստուածային կտակարանացն։ Այլ և բարեպաշտուհի մայր սորա յետ մահուան առն իւր Պ՞աղանկայ, զոր Տօնկիկն կոչէին, կարգաւորեաց զերիս որդիսն իւր՝ զՋ՞ալալն, զՕ՞աքարէ և զԽ՞անէ. չոգաւ նա ի սուրբ քաղաքն Երուսաղէմ և զամն բազում անդ կացեալ մեծաւ Ճգնութեամբ, զարմացուցանէր զամենայն տեսողս. քանզի ծախեալ զամենայն գոյս իւր զոր ունէր՝ յաղքատս և ի կարօտեալս, նման եղինէի կնոջն Պ՞եգարու, և ինքն ձեռագործով իւրով կերակրէր, և անդ

մեռաւ. և Աստուած փառաւորեաց զփառաւորիչս իւր, լաս կամարաձև կացեալ ի վերայ գերեզմանին իւրոյ, առ ի յորդորել զայլս ի նոյն բարեգործութիւնս։ Այս իմաստուն այրս իբրև ետես զարձակուճն անօրինաց, առ բացոյց զբնակիչն իւրոյ աչխարհին ի բերդն՝ որ կոչի Խօխանա–բերդ, ըստ բարբառոյն Պարսից. իբրև եկին պաշարել զնա՝ տեսին զի ոչ էր հնար առնուլ զամուրսն, կոչեն զնա սիրով խաղաղութեան առ իւրեանս, և նա իմաստաբար հաձեաց զմիտս նոցա. յետոյ ջոգաւ և ինքն առ նոսա՝ բազում ընծայիւք, և մեծարանս արարեալ նմա՝ տան զաչխարհս իւր ի ձեռս նորա, այլ և յաւելուածով. և հրամայեն նմա ամի ամի երթալ զինի նոցա ի գործ պատերազմի, և միամտութեամբ կալ ի հնազանդութիւն նոցա. իսկ նա խոհեմաբար կարգաւորեաց զաչխարհս իւր, որ ինչ մնրթ էր առնուլ ի պէտս երթևեկացն՝ որ գային առ նոսա, թէ կերակուր և թէ այլ ինչ, ինքն առնոյր և պահէր և յիւրմէն յաւելուածով տայր նոցա՝ յորժամ որ գային առ նա, և ոչ նեղէին զչխարհս, բայց թէ առ նա գային. իսկ յայլ աչխարհս՝ զայս ոչ առնէին, այլ և ուր հասանէին՝ առնային ուրեք նեղէին զնոսա։

ԻԹ

ՎԱՄՆ ԵԿԵՂԵՑԻՈՑՆ ՋՈՐ ՇԻՆԵԱՑ

Ենեաց եկեղեցի մի գեղեցկազարդ յօրինուածովք, գմբեթազարդ և երկնանման, տաճար փառաց Աստուծոյ, ուր հանապազ պատարագի գառն Աստուծոյ՝ որ բառնայ զմեղս աչխարհի, ի վանքն՝ որ կոչի Դանձասար, հանդէպ Խօխանա–բերդին, ի տեղի շէրմի իբեանց. և յոլով ամս աշխատ եղեն ի նմա. և իբրև առ զլաւարտուածն, արար նաւակատիս մեծահանդէս առ ի օրհնել զեկեղեցին. անդ էր կաթուղիկոսն Աղուանից տէր Ներսէս բազում եպիսկոպոսօք, այլ և մեծ վարդապետն Անանիան յոլով բաբունիւք. անդ էին և տուրբ վարդապետքն Տաչենոյ Դրիգորիս և տէր Ներսէս Հարազատք միմեանց. զորս [1] զարդարեալ էր Աս-

1 OO· ը··· էին։

տուած երկու մարդով, և փոխեցան յաստեացս առ Պրիստոս, և կան՝ ի պահեստ՝ ի տանն աստուածափառ Խաղայի. առաջնոյն՝ ի Թուին վեցհարիւր ուԹսուն և հինգ, և Նղնայի՝ ի վեցհարիւր ինսուն և ուԹ. և բազում քահանայիւք որ ասէին զԹիւ երիցանց եօԹն հարիւր: Իբրև կնքեցաւ օծմամբ, Ճաշ մեծ յօրինեալ ինքնին իսկ ձեռօք իւրովք պաշտէր զբազմեալսն. և տուրս տուեալ ըստ իւրաքանչիւր պատուոյ առատուԹեամբ՝ արձակէր զամբոխն [1]. որ եղև այս՝ ի վեցհարիւր ուԹսուն և ինն Թուին Հայոց, յաւուր մեծի տոնի վարդավառին: Ը ինեաց և կին նորա Պ՝ամքան՝ զբաւիղն հրաշալի՝ ի դուռն եկեղեցւոյն. և ինքն զանձն ամենայն առաքինուԹեան տուեալ, Ճգնէր հանապազ պահօք և աղօԹիւք, և ընԹերցասիրուԹեամբ խոկայր զպատուիրանս տեառն՝ ի տուէ և՝ ի գիշերի, ըստ գրե-
ցեալսն:

Լ

ՎԱՕՆ ՅՈՒՑՄԱՆ ԿԵՐՊԱՐԱՆԱՑՆ ԹԱԹԱՐԻՆ ԲԱՑԱՑԱՑՏՈՒԹԻՒՆ ՍԱԿԱՒ

Վասն զի յօժարեցաք մեք յիշատակ Թողուլ յազգս՝ որ գալոց են, քանզի ակն ունիմք մեք յուսով փրկուԹեան՝ ինեղուԹենէ աստի որ պաշարեալս է զմեզ, սակաւիկ մի ցուցցուք քննասիրացդ՝ զկերպարանս և զևստանոցս: Նին տեսլեամբ կերպարանաց դժոխատես և ահագնալուր. մերուս ոչ ունելով բայց սակաւուց ոմանց կամ՝ ի կլաին կամ՝ ի շուրթն. ակն ներ և արագատես, ձայնն նուրբ և տուր, բազմակեացք և տևողք. յորժամ անկանէր՝ յաձախ ուտէին և ըմպէին անյագ, և յորժամ ոչ անկանէր՝ ժուժկալք էին. ուտէին զամենայն կենդանիս, զսուրբս և զանսուրբս, և զմիան ձիոյն առաւել մեծարէին, անդամ անդամ յօշեալ և կամ եփեալ և խորովեալ առանց աղի, և ապա մանր կտրատեալ և Թացեալ յաղաջուրն, այնպէս ուտէին. ոմանք՝ ի գուձ ըստ նմանուԹեան ուղտուց. կէսք

նատելավ ուտէին, և յուտելն հասարակ բաշխէին տե-
ղանց և ծառայից. և յրմպելն ղ'ղմուզ[1] կամ ղգինի՝
առեալ մի ոմն մեծ ամանով ի ձեռն իւր, և փոքր բա-
ժակաւ առեալ ի նմանէ՝ ցանէին ընդ երկինս, և ա-
պա յարևելս, յարևմուտս, ի հիւսիս և ի հարաւ. և
ապա իւր նակ ցրօղին զայն՝ սակաւ մի ըմպել ի նը-
մանէ, մատուցանէր աւագագունին. և թէ ոք բերէր
նոցա կերակուրս կամ ըմպելիս՝ նախ բերօղին տային
ուտել և ըմպել, և ապա ինքեանք ուտէին և ըմպէին,
զի մի ի մահացու դեղոց ինչ դրժէին[2]: Ոչխար և կա-
մէին կանայս առնէին. բայց զպոռնիկս ամենևին ոչ
ասրեցուցանէին ընդ իւրեանց կանայս. բայց ինքեանք
ուր և հանդիպէին այլազգեաց՝ անխտիր խառնակէին,
և գողութեան ատելիք էին, մինչ զի չարաչար մահուամբ
սատակէին. և պաշտօն ինչ ոչ գոյր առ նոսա կամ ե-
կեղեցապետութիւն, բայց ստէպ զանունն Աստուծոյ յի-
շէին յամենայն իրս. զայս թէ զինչն Աստուծոյ գոհա-
նային, և կամ թէ զայլ ոմն Աստուած կոչէին, մեք ոչ
գիտեմք և ոչ ինքեանք ևս:

Բայց սովորաբար զայս ասէին, և զարքայն իւրեանց՝
ազգային Աստուծոյ, զերկինս առեալ իւր բաժին, և
զերկիրս տուեալ Խաղանին. զի ասէին զՀանկզխանն՝
զհայր Խաղանին, ոչ ծնեալ ի սերմանէ առն, այլ ըստ
ինն եկեալ յաներևութից և մտեալ ընդ երդս տանն,
և ասացեալ մօրն՝ թէ յղասջիր և ծնցես որդի ինքնա-
կալ երկրի. և յայնմանէ ասէին ծնեալ զնա: Ոչ այս
պատմեաց մեզ Պրիգոր իշխանն՝ որդի մարզպանին,
եղբայր Աչան-պէկին, Արզսի և Աթրային, յազգէ
Մամիկոնէից, զոր իւր իսկ լուեալ եր յառնէ միջէ
մեծէ և ի կարի աւագացն, որում անուն եր Պա-
թուն-նուէն, յաւուր միում յուսուցանել նորա զման-
կապոյս: Ընդ յորժամ ոք մեռանէր ի նոցանէ՝ կամ
սպանանէին, եր որ բազում աւուրս շրջեցուցանէին ընդ
իւրեանս, քանզի մտեալ դիւի խօսէր անդուստ բա-
զում բարբաջմունս, և եր զոր այրէին, և զկէտն թա-
ղէին յերկրի խորախոսիւք, և ընդ նմին դնէին զզէնս

1 Տես ի ծանօթ. էջ 138: 2 OO. Ոչ տահացու դեղոց ինչ
դրժէր:

իւր, և զՀանդերձն և զսակին և զարծաթն, որ ինչ բաժին իւր էր. և թէ ի մեծայ ոք լինէր՝ ի ծառայից և յաղախնեաց և դնէին ընդ նմա ի գերեզմանի, զի սպաս կալցի առաքին նմա. այլ և զձի և զ, զի առաքին անդ պատերազմ սաստիկ լինել. զոր յիշատակ կամէին առնել մեռելոց՝ Ձեղքէին զիւր ձիոյն, և քարշէին ընդ այն զամենայն միանառանց ոսկեր, և ապա զփորոտին և զոսկերս այրէին հրով. և կարեալ զմորթն ձիոյն՝ իբր թէ զամենայն մարմինն ունելն, սրեալ փայտ ի մէջ՝ հարեալ ընդ որովայնն, և հանեալ ընդ բերանն՝ այնպէս վերացուցանէին ի ծառ կամ ի բարձրաւանդակ տեղի ինչ: Այլ և կանայք նոցա կախարդք էին, և զամենայն ինչ Համայէին, և առանց հրամանի կախարդաց և դիւթից ոչ երթային ի Հանապարհ ուրեք. բայց նոքա հրամայէին:

Այլ և խօսք նոցա խժականք անճանօթք ի մէնջ[1]. քանզի կոչէին զանուն Աստուծոյ Նանկէ. և զմարդն՝ էրէ[2]. և զկին՝ եմէ ափճէ[3]. և զանուն Հօր՝ էչա[4]. և զմօրն՝ ափա. և զեղբայրն՝ աղա. և զքոյր՝ ափաճէ. և զգլուխ՝ ըէրօն. և զաչս՝ նէփօն. և զականջս՝ չէրէն[5]. և զմօրուս՝ սախալ. և զերեսս՝ յէ-չնէու-ր[6]. և զբերանն՝ աման. և զատամն՝ ոէրօն-ախու-ր[7]. զՀացն՝ օղմափ. և զեզն՝ օփար[8]. և զկով՝ ուանէն. զոչխար՝ ղօյնա. և զգառն՝ ղու-ղչան. և զայծ՝ էման. և զձի՝ Նօրէ. զջոր՝ լու-սա. զուղտ՝ նաման. և զշուն՝ նօխա. և զգայլ չէնա. և զարջն այնփու-. և զաղուէս՝ հոնփան. և զնապաստակն՝ նօբչղա-նու-լա[9]. և զՀաւ՝ նախէա. և զաղաւնին՝ փօփու-չէն. և զարծիւ՝ էու-բփու-է-ղու-չ. և զջուրն՝ ու-սու-ն. զգինի՝ փարսու-. և զծով՝ նաու-ր փանղչ[10]. և զգետ՝ Նօրան ու-լանսու-. և զթուր՝ խօլփու-. և զաղեղն՝ նՀու-[11]. և զնետն՝ ամու-. և զթափաւորն՝ ճչլէփ. և զպարոն՝ նու-էն. և զմեծ պարոն՝ էփա-նու-էն. և

1 Մեծաւ մասամբ Մուշալ բարբառոյ թաւթարաց են բառքդ, այլ պատանին և Թուրքք և արաբիկ ձայնք:

2 Տպագ. հարէրէան:

3 Տպ. միայն ափչէ:

4 ՕՕ. էչափա: Տպ. էչիա:

5 ՕՕ. չէր:

6 Տպ. յէօչ:

7 Ա. Գ. ոխու-րոէրօու-ն: Տպ. ոէրօու-ն:

8 Տպ. ափար:

9 Թուին երկու անուանք հոմանիչք, զի յայլ ՕՕ. կամ մին կամ միւսն դրի:

10 Տպ. միայն փանկըչ, որ է Թուրքերէն ձայն փէնկիչ. ՃԿԱ:

11 ՕՕ. ՆՀա:

վերկիր՝ եւ երկան [1]. և վերկինք՝ գօգ [2]. զարեգաւին՝ նաբան. և՝ զլուսին՝ ամիս. զաստեղս՝ հոտոտ–ամպոյ [3]. ընդլայն՝ օդոտ. և զգիշեր՝ ամին. և զգրագիր՝ էնդէ*էնէ. և զատանայ՝ բաւահոտ էնէպ [4]: Եւ զայլ այսպիսի խաժանիան անուանս, զոր ՚ի բազում ամաց մեզ անծանօթ՝ իսկ այժմ ականջ ծանուցեալ: Եւ գլխատուրք երեւելք, որք յառաջադէմք էին՝ այսոքիկ են. առաջին մեծ՝ որ գլուխ և հրամանատուն էր ամենայն զօրուն՝ Ջարմանդան–նուէնն, այր իրաւարար և դատաւոր. և որ աթոռակիցք էինն նորա, Խորար–նուէն, Պ ուլթուն–նուէն, Տուլթուն–նուէն և Ջաղատայն՝ որ զօրագլուխն էր զօրուն, զոր ապանին Մուլհեզքն. և այլ բազում գլխատուրք էին և անթիւ զօրք:

ԼՍ.

ՎԱՍՆ ՈՒԱԲԱՆԻՆ ԱՍՈՐԻՈՑ

Նախանձամոլն Ջաղատայ՝ որ զամենեցուն կեանքն կամի՝ նա մարդասիրութեամբ իւրով երևեցոյց այր մի ՚ի մէջ նոցա երկիւղած և աստուածապաշտ, առն ազգաւ, որ Հայր անուանեալ ալքային նոցա՝ որ Խաղանն [5] կոչէին. (անուն նորա Աբէմէն, զոր Նաբան–աթա կոչէին.) առէն, առընէրէն՝ վարդապետ, և ընտն՝ Թաթարերէն Հայր. (իբրև լուաւ զանխնայ կոտորումն քրիստոնէից՝ որ ՚ի զօրսդ Նաթարին), մատուցեալ առ Պ ան խնդրեաց ՚ի նմանէ Թուղթ առ զօրսն իւր, զի մի այնպէս առ հասարակ կոտորեսցեն զանմեղ մարդիկ, որք ոչ պատերազմին ընդ նոսա. այլ Թողուլ զնոսա զի ծառայեսցեն նմա: Իսկ նա զնոյն ինքն առաքեաց մեծ և երևելի շքով, գրեալ հրովարտակ առ զօրագլուխն իւր, զի ամենեքեան անսայցեն հրամանի նորա. և նա եկեալ բազում ինչ նպաստ եղև քրիստոնէից, Թափելոյ ՚ի մահուանէ և ՚ի գերութենէ, շինեաց և եկեղեցիս ՚ի քաղաքս Տաճկաց, որ ոչ իշխէին զՔրիստոս ա-

1 Տպ. էև:
2 Տպ. գօգայ:
3 Ա. Գ. ամրպա–հոտոտ: Տպ. ամպրա:
4 Ա. Գ. պբաոտէևէպահոտ: Տպ. բաոտահոտոտէ:
5 Ողևին Խափան, յորմէ համառօտեալ է Խան կամ Ղան:

նուանել. և առաւել ՚ի Յարկէ և ՚ի Նախձաւան, ուր առաւել Թշնամիք էին քրիստոնէից, զի ոչ իշխէին յայտնի երևիլ կամ ջոջել քրիստոնեայք, Թող Թէ եկեղեցիս շինել կամ խաչ կանգնել. իսկ նորա կանգնեալ խաչ և եկեղեցիս, և ժամահար հնչէցուցանել ՚ի տուէ և ՚ի գիշերի, և յայտնապէս տանել զմեռեալս ՚ի Թաղումն՝ խաչիւք, աւետարանաւ և մոմեղինօք և պաշտամամբ, որպէս օրէնն է քրիստոնէից. և զընդդիմացեալն՝ մահու վախճանել, և ոչ ոք իշխէր հակառակ կալ հրամանին նորա. այլ և ամենայն զօրք Յարքային պատուէրն զնա որպէս զարքայն իւրեանց, և առանց նորա ոչ ինչ խորհէին կամ առնէին. և մարդիկ նորա վաճառականք՝ որք ունէին զտամղա նորա, այսինքն զնշան և զգիր՝ համարձակ շրջէին ընդ ամենայն աշխարհս. և ոչ ոք իշխէր մերձենալ առ նոսա, որք առնէին զանուանն Յաբաքանին. այլ և ամենայն զօրագլուխք Յաղթարին ընծայ մատուցանէին նմա յաւարէ իւրեանց: Եւ ինքն էր այր պարկեշտ վարուք, նոյնպէս ՚ի կերակուրս և յըմպելիս. յաւուրն միանգամ ճաշակէր ընդ երեկս սակաւ ինչ կերակուր: Յայսպէս այց արար Յստուած ժողովրդեան իւրում ՚ի նշդեհուԹեան անդ՝ ՚ի ձեռն առնս այսորիկ, և զբազում մկրտեաց նա ՚ի Յաղթարէ անտի. և ամենայն ոք վան սքանչելի վարուց նորա և մեծաշուք պատուոյն՝ զարհուրէր և դողայր ՚ի նմանէ:

Եւ յորժամ եղև այս գծագրուԹիւն՝ որ յայսմ վայրի, ՚ի վեցհարիւր ինանասն Թուականին Հայոց, ՚ի ԹագաւորուԹեանն Հայոց որ ՚ի կողմանս Արևելից՝ Հեթմոյ բարեպաշտի, և ՚ի զօրապետուԹեան եղբօր իւրոյ Սմպատայ քաջի, և իշխանայ իշխանի Կոստանդնի հօր նորա, և ՚ի կաթուղիկոսուԹեան տուրբ աԹոռոյն Գրիգորի՝ Կոստանդեայ ծերունւոյ և առաքինւոյ, որ նստեր ՚ի Արշարունեաց, և յարքեպիսկոպոսուԹեան տեառն Յարտղի եղբօր Թագաւորին Հեթմոյ, զոր պահէին փոխանորդ տուրբ աԹոռոյն կաթուղիկոսուԹեան. և Յ՚ղուանից կաթուղիկոսուԹեան տեառն Եղիսէի Հեզոյ և մարդասիրի, որ յայս աւուրս նստեր ՚ի վանքն՝ որ կոչի ԽաՉէն, ՚ի գաւառն Ա՛խափորի, և յարքեպիսկոպոսուԹեանն եղբօրորդւոյ նորա՝ տէր Յո-

650
551
1241

վանիսի՝ նոր ձեռնադրեցեալ, և ՚ի քոնականութեան Հանուրց՝ Թաղարին. և ՚ի ժամանակի կենաց մերոց՝ ամն քառասուն պակաս կամ աւելի։

ԼԲ

ՎԱՍՆ ԱԻԵՐՄԱՆ ԹԷՈԴՈՒՊՕԼԵԱՑՒ

Ադդ ՚ի սկսանել վեցհարիւրերորդի իննսներորդի և առաջներորդի Թուին Հայոց, գայր Հասանէր Հրովարտակն ՚ի Խաղանէն՝ առ զօրս և զօրագլուխս յաբևելս, զօրավար և առաջնորդ կացուցանել փոխանակ Ջարմաղուին՝ որ Համրացեալ էր, զոմն Մի ՚ի զօրացն՝ Բաչու-Խուրչի անուն[1]. նմա անկեալ վիճակ առաջնորդութեան, քանզի հմայիւք վարէին։ Ադդ իբրև առ նա գիշխանութիւնն, իսկոյն զօր գումարեաց յամենայն ազգաց՝ որ ընդ ձեռամբ նորա, և գնաց յաշխարհն Հայոց, որ ընդ իշխանութեամբ սուլդանին Հռոմոց. և Հասեալ ՚ի Կարին գաւառ՝ պաշարեաց զնա, որ այժմ կոչի Թէոդուպօլիս[2]. և նստեալ շուրջ զնովաւ, առաքեաց զդեսպանս առ նոսա գալ ՚ի հնազանդութիւն. և նոքա ոչ կամեցան գնալ. այլ անարգանօք դարձուցին զդեսպանն, և ինքեանք ելեալ ՚ի պարիսպն նախատէին զնոսա։ Իսկ նոքա իբրև տեսին Թէ ոչ ողջունեցին զխաղաղութիւն, յամենայն կողմանց բաժանեալ զպարիսպ քաղաքին գլխաւորացն՝ զի փլուսցեն առ Հասարակ. և նոցա փոքր յանձին կալեալ՝ կանգնեցին փիլիկուանս բազում և կործանեցին զպարիսպն, և մտեալ ՚ի ներքս սրոյ Հարակ տուեալ զամենեսեան անողորմաբար. և յափշտակեալ զինչն և զստացուածն՝ Հրով այրեցին զքաղաքն. և զի յոյժ բազմամբոխ էր քաղաքն ՚ի ժամանակին յայնմիկ՝ լցեալ քրիստոնէիւք և տաճկօք, և այլ ամենայն գաւառն անդր Հաւաքեալ էր, անթիւ գոյին կտակարանք աստուածային զրոց մեծամեծաց և փոքունց. զայն առեալ այլազգեացն ծախէին քրիստոնէից՝ որ ՚ի զօրուն էին, զյաձախագինն

1 Պայծու՝ յ՚Ելիսուգ տոհմէ Թաղթարաց։

2 Տպ. պալբէաց «Թէոդոպօլիս», որ այժմ կոչի Կարնոյ փաղաք։

ընդ դոյզն գնոց. և նոյա խնդութեամբ առեալ սրտ-
ակին յիւրաքանչիւր գառառս՝ բաշխելով յեկեղեցիս
և՛ի վանորայս. այլ և՛ի գերելոց անտի զբազումս գնե-
ցին զոր և զկանայս և զմանկտի, և զեպիսկոպոսունս
և զքահանայս և զսարկաւագունս՝ որքան հնար էր
գնեցին իշխանքն քրիստոնեայք, Լատն և Հ ահնշահն
և Լզլուղային՝ որդին Ա ահրամայ, և Լրիգ՚որ խաչե-
նեցի՝ Ռուփին որդին, որ էր այր երկիւղած՚ի տեառնէ,
և զօրք նոցին. որոց վարձահատոյց նոցա Քրիստոս ե-
ղիցի. և զամենեսեան ազատ արձակեցին, Թողլով՚ի
կամ անձանց ուր և կայցեն: Եւ ոչ միայն թէ զքա-
ղաքն Կարնայ աւերեցին, այլ և զբազում գառառս՝ յիշ-
խանութենէ սուլտանին. և սուլտանն ոչ ինչ կարաց
օգնել. քանզի զօրեալ թագուցեալ էր յերկիւղէ նո-
ցա, այլ և վաղձանեալ ևս աւուրն ընա: Նոկ զօրն Ա-
թար իբրև գործեաց նա զայս իր, դարձաւ բազում ա-
ւարաւ և խնդութեամբ յաշխարհն Լզուանից՚՚՚ի կայս
ձմերոց[1] իւրոց, յարգաւանդ և՛ի բերրի դաշտն՝ որ
կոչի Ա ուղան, և անդ ձմերեաց:

ԼԳ

ՎԱՍՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՈՐ ԵՂԵՒ ԸՆԴ ՍՈՒԼԴԱՆՆ ԵՒ ԸՆԴ ԹԱԹԱՐՆ

Մ ինչդեռ զետեղեալ յապահովս նստեալ կայր զօրն
Ա թաբայ՝ ընդ դաշտս ամենայն Հայոց և Լզուանից,
գայր դեսպան՚ի Ա խաթատին[2] սուլտանէն՝ խրոխտ և
սպառնական բանիւք, որպէս սովորութիւն է Տաճկացն.
Թէ Լյասպէս հաւանութեամբ դուք աւերմամբ քաղաքի
միոյ՝ եթէ յաղթեցաք նմա, և զօրութեան նորա. քա-
ղաք իմ անթիւք են՚ի բազմութենէ, և զօրաց իմոց
չիք համան. արդ կաց ինձ դու ուր ես. և ես ինքնին
եկեալ տեսից զձեզ մարտիւ պատերազմաց: Եւ այլ
բազում բանիւք որ նման է սոցին՝ մեծամեծս փքայր.
և զայս ասէր պատգամաւորն, Թէ հանդերձեալ է սուլ-
տանն զձմեռն որ գալոց է ղկնի ամարանս՚՚՚ի դաշտն աստ
Ա ուղան ձմերել, կանամբք և զօրօք: Նոկ նորա լուեալ

1 ՕՕ. ձմերոց:

2 ՕՕ. Զխաթատին:

ոչ ինչ ըմբռաստանայր կամ խրոխտս ինչ խօսեցաւ ընդդէմ նոցա. այլ միայն զայս պատասխանի ետ գլխաւորն նոցա Խաչու–նուինն, եթէ Արեծամեծս բարբառեցայք. սակայն ուր Աւետաւած տացէ զյաղթութիւնն՝ նմա լիցի: Եւ այսպէս մի զմոլ կնի գային[1] դեսպանք՝ փութացանել զնոսա ի մարտ: Իսկ նոցա ոչ ինչ շտապէ՝ այլ մեղմով գումարեալ զզօրսն իւրեանց, և որք ընդ ձեռամբ նոցա եկեալ յաշխարհս Հայոց, ի խոտաւէտ վայրս՝ ամենայն ախիւ, գիրացուցեալ զերիվարս. և ապա մեղմով ժօտ հասեալ՝ ուր էր բանակ սուլտանին. քանզի և նա ի վեր էր եկեալ ի տեղւոջէ իւրմէ յաշխարհն Հայոց, որ ընդ իւրով իշխանութեամբ՝ հուպ ի քաղաքապետն մի՝ զոր Ումանկատուկն[2] անուանեն, անթիւ բազմութեամբ, կանամբք և հարճիւք, ոսկւով և արծաթով. և որ ինչ սպասք էին նորա մեծութեան՝ զամենայն ընդ իւր բարձեալ բերեալ էր. այլ և զբօսանաց աղագաւ՝ անուցեալ երէկ վայրի, և յայլոց տողնոց բազումս, մինչև ի մկունս և կատուս. զի այնպէս աներկիւղ կամէր ցուցանել զինքն զօրացն: Իսկ զօրավարն Խաչու ըստ խորագէտ իմաստութեան իւրոյ բաժանեալ զզօրս իւր ի բազում աոաջս, ի ձեռն գլխաւորաց քաջաց, և զեկամուտ զօրսն՝ որ յաղգաց աղգաց եկեալս՝ ցրուեաց, զի մի նենգ ինչ գործեսցեն, և ընտրեալ յամենեցունց զարիան և զքաջս՝ յառաջապահս կարգեալ ինքեանց, որք երթեալք հանդիպեցան զօրացն սուլտանին, և մարտուցեալք ի փախուստ դարձուցին զնոսա. փախեալ և սուլտանն մազապուր, թողեալ զկին և զկարասի անդէն ի տեղւոջն. և սոցա զկնի մտեալ կոտորեցին զզօրսն անխնայ սրոյ Ճարակ տուեալ, և ապա դարձան ի կապուտ անկեղցն: Իսկ իբրև եկն ի բանակն՝ ետես զի փախուցեալ էր սուլտանն և հարեալ զօրք նորա. ապա սկսան ասպատակ սիրել ընդ կողմանս կողմանս յաւարի առ-

1 ՕՕ· գայր:

2 Անծանօթ է քաղաքապետս, այլ Թուխ յանուն լերին միոյ կոչեցեալ ըստ Թուրք ձայնի Ումկենկեփ (մարգաւէտ լեռնանցք)· և սահմանքն են յարևմտից հիւսիսոյ Երզնկայ Աշխարհս կամ Ագիհրօվա, ըստ պատմութեանն Թաթարաց, որ և Ալաքուհ կամ Քհօսէտաւլ կոչէ զլեառնն: Ի նոր Հայաստան (էջ 105) յիշի Ումկին տալ ի Գալքիւթ (Գայլ–գետ) վիճակի:

նուլ, և քանդել զպատսում գաւառս, և ժողովել զոս-
կի և զարծաթ և զհանդերձս մեծագինս, ուղտս, ձիս,
և ջորիս և անթիւ անասունս. և եկին պատերին զքա-
ղաքն Կեսարիա Կապադովկացւոց, և պաշարեցին զնա.
և վի՛ոչ եղեն ձեռնտու քնակիչքն, առեալ բռնութեամբ
՚ի սուր սուսերի մաշեցին զբնակեալսն, և յափշտակեալ
որ ինչ ՚ի նմա՝ և թողեալ ամայի զքաղաքն՝ եկին ՚ի
Սեբաստիա. և զի (յառաջագոյն ձեռնտու էին լեալ
բնակիչք քաղաքին առ նոսա, և ընդ) առաջ երթեալ
ընծայիւք և պատարագօք՝ մատուցոյ ինչ ոչ մեղան, այլ
յափշտակեալ մասն ինչ յաւարէ քաղաքին՝ հիւրեանց
անուանն գրաւեալ զքաղաքն, վերակացուս կացուցեալ
գարձան: Եւ եկին պաշարեցին զՆզնկայն, և մարտիւք
բազում մարտեան ընդ նմա, և բնակիչք քաղաքին
բազում հարուածս հասուցեալ ՚ի վերայ զօրաց Ա-
թաբայ, ապա սկսան խաբէութեամբ արտաքս կոչել
սիրոյ ալաքաւ, և նոցա հաւանեալ եկին, քանզի ոչ
ունէին ուստեք օգնական. յորոց սուր ՚ի վերայ եդեալ
կոտորեցին առհասարակ զարս և զկանայս, և սակաւ
մանկունս և աղջկունս ապրեցուցեալ՝ վարեցին ՚ի գե-
րութիւն և ստրկութիւն: Եւ այսպէս բազում գա-
ւառս և աշխարհս աւերեալ և գերեալ եկին ՚ի քա-
ղաքն՝ որ կոչի Տիւրիկէ. իբրև գիտացին բնակիչքն ե-
թէ անհնար է զդէմ ունել նոցա պատերազմաւ, կա-
մաւ ձեռնտու եղեն նմա. որոց առեալ ինչս բազումս՝
թողին զքաղաքն առանց մնասու, և գարձան բազում
աւարաւ և մեծաւ խնդութեամբ ՚ի կայս ձմերոց իւ-
րեանց՝ որ ՚ի Նայս և որ ՚ի Ամղուանս, ողջանդամ և ա-
ռանց մնասու. զի ՚ի տեառնէ էր խորտակումն ամենայն
ազգայս և կործանումն նոցա: Նայց քրիստոնեայքն որ
էին ընդ նոսա զինուորեալք՝ զբազում ազատեցին ՚ի
գերելոցն, որ յայտնի և որ ՚ի ծածուկ, զքահանայս և
զկրօնաւորս. մանաւանդ մեծամեծ իշխանքն Ամատ և
Շահնշահ, Ամաւրամ և որդի իւր Ամղուղայն, և Ասա-
ղենեցիքն Գալէն և Նասանն և զօրք իւր և ազգա-
կանք, և Գրիգոր Գոմիկն՝ որդի մօրքուեր Գալէնի.
և այլ իշխանք և զօրք նոցին, ըստ կարի իւրեանց. և
այս եղև ՚ի Թուին Նայոց վեցհարիւր ինհնասուն և երկու:

ԳԶՀ
3-51
124

ԼԴ

ՎԱՄՆ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՀԱՑՈՑ ՀԵԹՄՈՑ, ԵՒ ԶՈՐ ԻՆՉ ԳՈՐԾԵԱՑ[1] ԱՆԴ

*Իբրև այս ամենայն գործեցաւ՝ Յեղիւմ արքայն որ Կիլիկեցւոց և այնոցիկ նահանգացն էր, յորժամ ետես թէ պարտեցաւ սուլդանն առաջի նոցա, առաքեաց դեսպանս առ նոսա, և պատարագս արժանաւորս, դնել նոցա ուխտ ընդ նմա խաղաղութեան, և նմա կալ նոցա՛ի հնազանդութիւն. որ եկեալ՛ի մեծ Դուռն[2] յանդիման եղեն Դաչու-նուիրին և Ընդհինայ խաթունին կնոջ Ղարամաղունին[3] մեծամեծաւապանոյն, միջնորդութեամբ էրչանին Ղալլին: Իբրև լուան զպատգամն արքային, տեսին և զընծայն, խնդրեցին՛ի նմանէ տալ՛ի ձեռս նոցա զմայրն սուլտանին և զկինն և զդուստր, որ գաղտականութեան աղտգաւ անդ փախուցեալ էին. և իբրև լուաւ արքայն Յեղիւմ, յոյժ տրտմեցաւ, և ասէ. Ահա էր ինձ եթէ զորդին իմ ընդհանն խնդրէին կինէն՝ քան թէ զնոսա: Այլ քանզի երկնչէր՛ի նոցանէ, զի մի՛ մեծ չարեաց պատճառ լիցի այն, ակամայ կամաւ ետ՛ի ձեռս նոցա, այլ և ընծայս բազումս այնոցիկ՝ որ եկեալ էին տանել զնոսա. որք բերեալ ցուցին Դաչուին և այլոց գլխաւորացն. որք իբրև տեսին ուրախ եղեն, և մեծարանօք յարգեցին զդեսպանս արքային, և կարգեցին նոցա ռամիկս և երիվարաց նոցա՝ զժամանակս ձմեռնանն. զի՛ի լինել գարնանայնոյն ընդ նոսին երթիցեն յաշխարհն իւրեանց. հատատաեցին և սէր ընդ արքային, եւտուն և գիր ըստ դեսպանին իւրեանց, զոր Ալ-տամղային[4] կոչէին. և այսպէս սպասէին ճնալով յեղանակին գարնան, յորում միւսանգամ երթիցեն՛ի վերայ սուլտանին և աշխարհն նորա:

1 ՕՕ. գործեաց:

2 Ի զօրանիստ բանակին. ըստ արևելեայց Դուռն կոչելով զնիստ նանիստան:

3 Ջարմուղին:

4 Այսինքն հրովարտակ կընքեալ նշանաւ մեծի իշխանին:

ԼԵ

ՎԱՍՆ ԿՈՍՏԱՆԴԵԱՑ ԻՇԽԱՆԻՆ ԼԱՄԲՐՈՆՈՑ, ԵՒ ՋՈՐ ԻՆՁ ԳՈՐԾԵԱՑ ՆԱ ԸՆԴ ԱՇԽԱՐՀՍ ԿԻԼԻԿԵՑԻՈՑ

Աւրքայն Լևոն մինչ կենդանի էր՝ էր բերդ մի՛ ի նորա աշխարհին, յոյժ անառիկ, որում անուն էր Լամբրոն բրօն, և իշխանն որ տիրէր բերդին՝ ապստամբեաց՛ ի նմանէ, որում անուն էր Հեթում. և նա բազում անգամ ջանացեալ՝ ոչ կարէր նուաճել զապստամբն. ապա յետոյ խորամանկութեամբ խաբեալ զնա խնամութեան աղագաւ, որպէս թէ տացէ զդուստր եղբօր իւրոյ՝ որդւոյ նորա (...)նի կնութեան, ըմբռնեալ զնա և զորդիս նորա չարչարեալ, ետուն՛ ի նա զամրոցն. և նորա առեալ եդ՛ ի նմա զմայրն իւր զտիկնանց տիկին. և գրեաց նզովս ոչ ևս այլ տալ զնա իշխանի ումեք, բայց միայն աղքունի լեցի, զի հանապազ, ասէ, տեարք նորա ապստամբք են լեալ վասն ամրութեանն։ Իբրև վաղճանեցաւ Լևոն և թագաւորութեան նորա իշխէր դուստրն Օ՛ապէլ, Կոստանդին իշխանաց իշխանն ընդ իւր միաբանեալ զկաթուղիկոսն և զայլ իշխանսն՝ թագաւորեցոյց զորդին իւր զՀեթում մանուկ տիոմք. աՃեալ զնա այր դստերն Լևոնի, փոխանակ որդւոյ բըլինձին[1], զոր ըմբռնեալ եդին՛ ի բանտի. կամեցաւ թէ կուն՝ օգնականութեան իւր առնել զորդին Հեթմոյ զԿոստանդին համանուն իւր, զորդին Հեթմոյ՝ զաներն իւր. և տայ՛ ի նա զԱմբրօնն՝ զսեփականն իւրեանց, և եդ զնա թագաւորն որդւոյ իւրոյ։ Իսկ նա յետ աւուրց ինչ ըստ հայրենի սովորութեան իւրեանց ապըստամբեաց՛ ի քուերորդւոյ իւրոյ յարքայէ Հեթմոյ, և թէպետ շատ ջանաց Կոստանդին հայր արքային, և ինքն իսկ արքայ՝ ոչ կարաց ածել զնա՛ ի հաւանութիւն հնազանդութեան. զի ձեռն ետ նա՛ ի սուլտանն Հոռոմոց, և այսպէս կայր նա ապստամբ։

Իբրև փախեաւ սուլտանն Հոռոմոց՛ ի Կաթարէն, արքայն զամենայն գիւղս և զանդաստանս Ամբրոնին

1 Իշխանին Անտիոքու։

արար ՚ի ներքոյ հրամանաց իւրոց, և միայն ինաց նմա քերդն՝ որ ապստամբեալ էր. ապա յղեաց Կոստանդին զեսպանս առ արքայն՝ խնդրել զհաշտութիւն և տալ զորդիս իւր արքայի ՚ի ծառայութիւն, և ինքն ինալ ՚ի քերդին, և արքայն ոչ կամեցաւ. երկիցս և երիցս յղեաց, իսկ արքայն և հայրն ոչ կամեցան: Ապա գնաց Կոստանդնի ՚ի Կօնն, և առեալ զօրս սուլտանին Հռոմոց, որք յայնժամ թշնամիք էին արքային, զի ետ զմայր սուլտանին ՚ի Կոնիարն, գայ յեղակարծում ժամու մինչ դեռ ցրուեալ էին զօրքն արքունի յիւրաքանչիւր տեղիս, և մտեալ յաշխարհն աւերեաց զբաւմամ աւանս և զագարակս այրմամբ և սպանմամբ և գերութեամբ, զբազում քրիստոնեայս կոտորեալ. և այսպէս բազում չարիս անյուսեալ ընդ աշխարհն քինահանութեամբ: Իսկ արքայն իբրև ետես զայն չարիս՝ ժողովեալ զզօրս իւր՝ արիութեամբ հասեալ ՚ի վերայ բազմութեանն, սրոյ Ճարակ ետ զամենեսեան. և փախեաւ միայն ապստամբ իշխանն և սակաւք ընդ նմա. այսպէս եօթն անգամ հարաւ ՚ի նմանէ, ապա եմուտ յամրոցն իւր և ոչ իշխեր հանդրձակիլ յաջ կամ յահեակ:

ԼԶ

ՎԱՍՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ԴԱՒԻԹ

Բազմահնար և խորամանկ ազգն Նետողաց՝ յոլով անգամ յղեցին առ Թագաւորին Կրաց Կուզուպան՝ պալ առ ինքեանս, կամ տալ զորդի նուր զՀաւիթ մանուկ՝ զօրօք՝ առ նոսա: Իսկ նա զայս ոչ արարեալ՝ տայ սակաւ զօրս, և ՚ի ձեռն Ղազին որդւոյ Ուանէի՝ որ էր ընդ Կաղաթար զօրուն, յղէ առ նոսա ասելով. Ո՛ինչդև է եկեալ դեսպանն իմ՝ զոր յղեցի առ Խաղանն արքայ ձեր, ոչ կարեմ պալ առ ձեզ. իսկ նոքա իբրև հարին զսուլտանն Հռոմոց՝ զվեցսայ նորին, և առին զյոլովս ՚ի քաղաքայ նորա, առաքեցին առ նա պատգամաւորս՝ զիշխանն Կ ահրամ, պալ նոցա ՚ի հնազանդութիւն. և նա ՚ի գան իւր եբեր ընդ իւր զորդին Կոտրգայ Լա-

ընդ աղքային Վրաց, զեղեաւր [1] Ուռւզուդանայ Թագուհուին, զոր յղեալ էր զհետ դստերն իւրոյ առ սուլտանն Խոռոմոյ գաւով, զի կորուսցէ զնա, զի մի՛ նեղիցէ զՔաղաւորութեանն. և էր առ սուլտանին յարգելս։ Եւ բերեալ Վահրամայ ծանոյց զԹագաւորն զհարցեալսն, թէ որդի աղքայի՝ մերոյ է, և տարապարտ զկնի է՝ի տերութենէ իւրմէ. իսկ նոքա հակառակք հօրաքեայ իւրոյ Թագաւորեցուցեալ զնա՝ հրամայեցին ըստ օրինի քրիստոնէից՝ օծանել զնա, և կալ ամենայն իշխանաց հօր նորա նմա՛ի հնազանդութեան, և նրբտել՛ի Տփխիս քաղաքի։ Եւ առեալ զնա մեծամեծ իշխանաց՝ որք էին հնազանդ Թագաւորին, Վէրապին՝ որ զօրավարն էր, և Շ ահնշահի որդւոյ Օ աքարէ, և Վ ահրամայ և որդւոյ իւրոյ Վզպուղին, տարեալ՛ի Վ՛ծխիձա՝ կոչեցին և զկաթուղիկոսն Վրաց, և օծին զնա Թագաւոր. և էր անուն նորա Գաւիթ։ Իսկ հօրաքոյր նորա Ուռւզուդան՝ իբրև լուաւ զայն փախեաւ յՎ՛փխազէթ, և՛ի Սանէթ [2] որդւովն իւրով միւս Գաւթիւ. և յղեաց դեսպանս առ միւս զօրագլուխ Թաղարին՝ որում անուն էր Խաղոս [3], ազգական զանին, որ իշխէր՛ի վերայ այնց զօրացն՝ որք էին Ուռւզք, և՛ի Գարբանդ, և Օ աէթք [4]. քանզի նա էր յետ զանին, կալ նմա հնազանդ. և նա հրամայեաց նմա նստել՛ի Տփխիս. և սոքա ոչ ընդդիմացան, քանզի ընդ աւուրս ընդ այս մեռեալ էր զանն։

ԼԻ

ՎԱՄՆ ԿՈՉԵԼՈՑՆ Ի ՄԵԾ ԴՈՒՌՆ ՋԿԱԹՈՒՂԻԿՈՍՆ ԱՂՈՒԱՆԻՑ ՋՏԷՐ ՆԵՐՍԷՍ

Եւ մինչդեռ զետեղեալ նստեալ կայր զօրն Թաղաւորն՛ի ձմերոցս՛ի գաշտն Հայոց և Վզուանից, Ուսաբանն աստրն՝ զոր վերագոյն յիշեցաք՝ լուաւ վասն կաթուղիկոսին Վզուանից, և ծանոյց Եղբինայ խաղաղ-

1 Տպ. վեղբօրորդի։ Նստէր՛ի սահմանս Դարբանտայ
2 Վ. 119։ և իշխէր կովկասեան և հիւսիսակա-
3 Վ. 149։ կան կողմանց, յորս գասէ և զՐուս։
4 Օաէթք են Աղանք։ Պատուի

նին՝ կնոջն Յարմուզանին, որ վարէր զիշխանութիւնն նորա՝ յետ Համրանալոյն, եթէ զկաւուրն քրիստոնէից կողմանցս այսոցիկ՝ գաղտուծեամբ նստեալ կայ, և ոչ տեսանէ զմեզ. յղեցին առ նա, թէ ընդէր դու միայն ոչ տեսանես զմեզ. Եկ վաղվաղակի առ մեզ. և թէ կամաւ զայդ ոչ առնես՝ ակամայ ածցուք զքեզ նախատանօք: Իսկ նա քանզի նստէր ի գաւառն Ալիափորոյ, ի վանքն որ կոչի Ստամէն, և էր ընդ իշխանութեամբ Ներսէհին, առանց զնա հարցանելոյ՝ ոչ իշխեաց երթալ, զի մի ծանր թուեսցի երթ նորա. Թագեաւ ի նոցանէ, և ասաց պաշտօնէիցն պատճառել՝ թէ ոչ է ի տան, այլ երթեալ է առ Ներսէհն. և նոքա երկիցս և երիցս յղեցին՝ սպառնալեօք գալ առ նոսա:

Ապա հրաման առեալ Ներսէհն չոգաւ առ նոսա ի դաշտն Ալուղան, ընծայիւք ըստ կարի իւր. բայց ոչ հանդիպեցաւ անդ Նաբանն, զի գնացեալ էր նա ի Յարվէժ. և գնացեալ ի մեծ դուռն յանդիման լինի Ներսեհին Թինայ խաթունին. և նորա սիրով ընկալեալ զնա, և մեծաւ մեծարանօք պատուեաց՝ ի վեր նստուցեալ ամենայն մեծամեծացն, որք հաւաքեալ էին առ նա յաղագս հարսանեաց որդւոյ նորա Նօրա-նուէինի, քանզի առեալ էր զդուստր ուրումն մեծի Ուղթուն-նուէին կոչեցեալ, կին որդւոյ իւրոյ, և զդուստր իւր տուեալ էր կին միւս աւագագունի՝ Ասուռ-նուէին կոչեցեալ. և տօն մեծ էին առ նոսա աւուրքն այնոքիկ ուրախութեան հարսանեացն. վասն որոյ ասէ ցկաթուղիկոսն. Ի ընա-

հաւոր աւուր եկիր. և նա իմաստաբար պատասխանեաց, Թէ Նա ես իսկ ընտրեցի զաւուրս զայսոսիկ ուրախութեան ձեր, և ապա եկի. իսկ նա յանձնեաց զնա և զպաշտօնեայս նորա յեղբարն իւր, ի Վաղեղաղայն և ի Վորգոյն, որք էին քրիստոնեայք հաւատով, նորոգ եկեալ յաշխարհէն իւրեանց, մինչ ինքն հոգայցէ ըզհոգս հարսանեաց իւրոց, զաւուրս ուրախութեանն. որք առեալ մեծաւ պատուով պատուէին զնա: Նա իբրև տակաւ մի պարապեցաւ ի հոգոյն, ետուն նման պարգևս և էլ-տամղայս, զի մի ոք նեղեսցէ զնա. և ետուն նման Վողալ-Ղաթար[1] առաջնորդ, որ տարեալ ընդ-

1 OO · Մովսէս:

ցոյց ինա յաշխարհն Ասղուանից՝ ի վիճակն իւր, զի յո-
լով ժամանակք էին՝ որ ոչ նա և ոչ այլ ոք յառաջ քան
զնա՝ ոչ իշխէին շրջել՝ ի վիճակս իւրեանց, յաղագս
արեանարբուս և գազանաբարոյ ազգին . . . Նակ նորա
շրջեալ ընդ վիճակեալսն՝ դարձաւ անդրէն խաղաղու-
թեամբ՝ ի տեղի իւր՝ ի վանսն Սիսական։

ԼԸ

ՎԱՍՆ ԱՍՊԱՏԱԿԵԼՈՑ ՆՈՑԱ ԸՆԴ ԿՈՂՄԱՆՍ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Ի ՎԵՐԱՑ ԲԱԶՈՒՄ ԳԱՒԱՌԱՑ

Դարձեալ՝ ի մտանել ամին երկրորդի փախուցանե-
լոյ զի՞ իպատին սուլտանն, իսաղացին գնացին ընդ կող-
մանս Հնդուստեաց՝ ի քաղաքն Խլաթ. և առեալ զնա
տան՝ ի ձեռս Ախասթայ՝ քուեր Ադին, որ էր յա-
ռաջ տէր լեալ քաղաքին այն, մինչ կին էր նա Ադրաթ
Ախլիքին, և գերեցաւ՝ ի Խորազմեն սուլտանէն Ջա-
լալադնէ, և՝ ի նոյնց դարձեալ առաւ պերի, և առա-
քեցաւ՝ առ ղանն, և եկաց անդ զյոլով ամս. և իբրև
առաքեաց Թագուհին Վրաց Ռուզուդան զիշխանն
Ջամաղօլա՝ դեսպանութեամբ առ ղանն, ՚ի դարձին
իւրում Ջամաղօլան խնդրեաց՝ ի ղանէն զԱամթի. և
եբեր ընդ իւր հրովարտակօք՝ ի ղանէն, զի զոր մինչ
լեալ էին նորա՝ մինչ կին էր Ախլիք Ադրաթին՝ տացեն
նմա. և նոքա արարին զՀրամանս արքային իւրեանց.
տան՝ ի ձեռս նորա զԽլաթ և զգաւառսն որ շուրջ ըզ-
նովաւ. և ինքեանք ասպատակ սփռեալ ընդ կողմանս
կողմանս, ՚ի Արջագետս Ասորոց, յԱմիթ և յԱւդհա
և՝ ի Արծբին և՝ ի Հ ամբին երկիրն[2], և յայլ բազում
գաւառս, և գարձան ունայն. զի Թէպէտ ոչ ոք էլ ընդ-
դէմ նոցա պատերազմաւ, սակայն վանն տօթոյն ամա-
րայնոյ բազումք՝ ի նոցանէ խորշակահարք եղեալ մե-
ռան, մարդ և երիվար. և եկեալ՝ ի տեղի ինչևանի իւ-
րեանց՝ դադարեցին զաւուրս ձմերան. և տան Հրաման
վանն շինութեան քաղաքին Կարնոյ. և ժողովեցան

1 OO. ոգէցոյ։

2 Ջամ՛, Դամասկոս։

ցրուեալքն ղօղեալք և զերծեալքն ՚ի գերութենէ. կո-
չեցին և զեպիսկոպոսն քաղաքին՝ զտէր Վարգիս, զոր
եբեր իշխանն Շ՚ահնշահ՝ որդին Օ՚աքարէ. չոգաւ և
վերստին չինեաց զաւերեալ և զկործանեալ քաղաքն։

ԼԹ

ՎԱՍՆ ԿԱՆՈՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ՀԱՅՈՑ

Իսկ առաքինի կաթուղիկոսն Հայոց Կոստանդին,
իբրև ետես զաւերն աշխարհին Հայոց և զտառապանս՝
զոր կրէին ՚ի հարկահանացն և ՚ի զօրաց Վաղարշին,
և մտախոհ եղեալ իմացաւ թէ մեղքն են այսմ ամե-
նայնի պատճառ, զի ամենայն մարդ խնամով խոկայր ՚ի
գործել զհաճոյս կամաց իւրոց։ Օ՚ր ի կարգ ամուսնու-
թեան սուրբ օրինացն բարձաւ, և հեթանոսօրէն ա-
րիւն ընդ արեան խառնէին, զազգականս առնելով, և
զորս կամէին թողուին, և զորս կամէին առնուին. և
պարկեշտութեան պահոց փոյթ ինչ ոչ ունէին, և ընդ
հեթանոս խառնակէին անխտիր. նաև որ մեծն է քան
զամենայն չարիս՝ եպիսկոպոսք արծաթով առնէին ձեռ-
նադրութիւն, զպարզևս Ո՚գտուծոյ անարժանիցն տա-
լով. և զմանկունս և զտգէտս՝ որ ոչ մարթէին ուղղա-
կի խօսել առաջի մարդկան, միջնորդ ընդ Ո՚գտուած և
ընդ մարդիկ կացուցանէին, և անարժան քահանայք և
պոռնկեալք, և յայտնի գողս նատուցեալ՝ առնէին քա-
հանայութիւն. և այլ բազում չարիս՝ զոր գործէին ՚ի
մեծամեծաց մինչև ցփոքունս. (ըստ այնմ՝ թէ քահա-
նայք) և ժողովուրդք ՚ի միասին յիմարեցան, և կշտամ-
բիչ ոչ ոք։ Վ՚ասն այսր պատճառաց փութացաւ գրել
Թուղթս շրջաբերականս, և կանոնս համաշխարհա-
կանս։ Ո՚ղարքեաց ընդ Թղթոյն զիմաստուն և զհանճա-
րեղ վարդապետն[1], որ աղօթականութեան աղագաւ
երթեալ էր Յ՚ուստաղէմ երկրպագել սուրբ տեղեացն
անօրէնութեան. և շրջեալ ընդ սրբոց տեղիս, և եկեալ
յաշխարհս Վիրկեացւոց՝ առ քրիստոսապատակ արքայն

1 Պահաէր ՅՕՕ. անուն վար- դնէ և տպագիրն, պատմիչն և ու-
դապետի՝ որ է Վարդան, որպէս սումնասիրէց Կիւրեղեան։

ՀԵԹՈՒՄ և առ նորին եղբայրս, ջոգաւ և առ սուրբ կաթուղիկոսն. զոր տեսեալ ուրախացաւ յոյժ, և առ իւր պահեր յոլով ժամանակս, սիրով կապեալ ընդ նմա. և զի ոչ կամեր երթեալ մեկնիլ ի նմանէ, վանն այսօրիկ արձակեաց զնա և յիւրոց սպասաւորաց ընդ նմա, գըրեալ յամենայն քաղաքս, յաւանս և ի վանորայս ե-
րևելից, (և առ) իշխանս փառաւորս, զի մի անփոյթ առնիցեն զսահմանացն եդելոց, որ վանն Հոգւոց նոցա փրկութեան. և զի ծերացեալ էր նա՝ զվարդապետն փոխանակ նորա ընդունիցին. և գրեալքն առ ի նմանէ են այսոքիկ։

Խ

ԹՈՒՂԹ ՏԵԱՌՆ ԿՈՍՏԱՆԴԵԱՅ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Սազմամբ խնամոյն ամենակալ Հոգւոյն սրբոյ, այս գիր ձեռին իմոյ Կոստանդեայ ծառայի Քրիստոսի և ընտրօք նորին կաթուղիկոսի ամենայն Հայոց, զոր գրեցի յուսով Հոգւոյ իմոյ առ Հայաստանեայսդ՝ ընդհանուր լրման կողմանցդ արևելից. նախ առ սրբազան եպիսկոպոսունսդ, և ապա առ երկնագումար վանորայսդ, և առ մենաստանս Ձգնաւորաց քրիստոսազգեցից, առ քանին սպասաւորսդ և միայոր եղբայրութիւնսդ, այլ և առ քրիստոսասէր իշխանսդ՝ և ոլք ընդ ձեռամբ ձեր են, պատուական քահանայք և քրիստոսասէր ժողովուրդք, արս և կանայս, ծերս և տղայս, և առ ամենայն Հօտդ Ն.ստուծոյ. որ էք ընդ իշխանութեամբ գահազանի սրբոյ առաքելոյն Թադէոսի և Նարդողիմէոսի, և մեծավաստակ նահատակին մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, զորս ետ ինձ ողորմութիւնն Ն.ստուծոյ յորդեգրութիւն հոգևոր և պարգևական զաւակս. զորս և ողջունեմ երկնաւոր պարգևօք եռափափագ կամօքիւք և ծնողական սիրով, ի հովանիս խնամոյամբարապահ սրբոյ Նորոգութեան, և զօրութեամբ առաքելական աձուցս. այլ և ընդ իս առեալ զամենայն սուրբս ի բարեխօսութիւն՝ աղօթեմ առ Ն.ստուած՝ արտաքոյ

լինել ձեզ, ամենայն անախտաժեալ[1] պատահարաց կըր-
կին տեսանկօքն։

Գիտութիւն լիցի ձեզ, զի պարտական գթովք հո-
գամք զձեզ զտիւ և զգիշեր, և հաղորդիմք կրից ձե-
րոց, խնդականաց՝ ըստ հայրենի օրինաց և հրամանաց
սրբոց պատուիրանաց. որ և ըստ յաձախելոյ յանցա-
նաց մերոց՝ ի վաղ ժամանակաց յաձախեաց և տրտմա-
կանն մատ. ՝ի հարուածս գաւազանի հարմանն Ա-
տուծոյ, և արբոյց մեզ Տէր մրուր ուշաբարձ և արտա-
սուս չափով, ՝ի վիշտն զոր կրեաց աշխարհդ այդ. կո-
տորումն և կողոպուտ եկեղեցեաց՝ հոգևոր գանձուց,
մարմնական տանց և գոյից, մանաւանդ ՝ի գերութիւն
գառանցն Քրիստոսի, մերոց աղեաց և անդամոց, կո-
րոց վերայ՝ կարօտացաք գետաբուխ արտասուաց, և խա-
ւարատան սենեկացն, թաւիել զդառն կսկիծ վիրին մեր
՝ի խորոջ ժողովեալ։ Եւ քանզի ՝ի տեառնէ էր պա-
տուհաս, որոյ բազում են գթութիւնք[2] նորա. ոչ ըստ
մեղաց մերոց արար մեզ և ոչ ըստ անօրէնութեան մե-
րում վձարեաց մեզ, այլ պահեաց մեզ գթութիւն
նորա ճնացորդ նշխար յիշատակի, և սերմն զաւակի աձ-
ման հայկական[3] զարմից. և ձիւռ օրհնութեան ողկու-
զաց հայրատունկ որթոյն քրիստոսարկու ուռոյն. որոյ
համբաւ աձմանն և զարգացման որդեկաց մեր ճնա-
ցեալոց, կարկատման և վերստին շինուածոյ աւերեալ
տեղեացդ, առ սակաւ սակաւ թափէ զտրտմութիւնն
մեր, և փարատէ զմութ սգոյն ՝ի մտաց մերոց, և կաղ-
դուրեալ մխիթարիմք, և կանգնեալ գոհանամ զԱ-
տուծոյ, հարկանողն և բժշկողն ձեռին նորա՝ տալով
օրհնութիւն յաւիտեանս։ Քայց և երկիւղ կասկա-
ծանաց առաջիկայ ժամանակին ոչ թողու զիս. քանզի
նոյն նիւթ բարկութեանն Աստուծոյ մեղքն մեր՝՝ ի մեզ
հաստատեալ է յեկամուտ չարեաց որոմանցն ցանողի՝
գտանելով առ մեզ յեկեղեցիս, և առ իշխանս և իշխե-
ցեալս, գտանիմք արտաքոյ կանոնաց սահմանաց հարցն
մերոց՝ առաքելոց և հայրապետաց. և վասն այսորիկ
հարկի մեծապատն ցանկացայ խնդրել ձանապարհ, և

1 ՕՕ. ախորժելի։
2 ՕՕ. որոյ բազմութիւնք նորա։
3 ՕՕ. հայրական։

անձամբ գալ և զգուշութիւն առնել հօտիս իմոյ Քրիս-
տոսի Աստուծոյ յին վտահացեալ ժողովրդեանդ, ա-
զաչանօք և բանադրութեամբ և սպառնալեօք, և առե-
նայն հնարիւք հանել ՚ի ձէնջ զտեսակ ատելի գիմաց
չարին որ են մեզք, և երկնել զձեզ վերստին յաւուրք՝
մինչև նկարեսցի Քրիստոս ՚ի ձեզ։

Ունէի և այլ պատճառ հարկաւոր գալստեան իմոյ,
զի այր ծեր եմ ես, և հասեալ ՚ի դրունս գերեզմանի,
և կարօտիմ ՚ի կատարածի կենաց իմոց տեսանել զոր-
դեակս իմ ՚ի Տէր. տալ ձեզ զյետին օրհնութիւն, և
պահանջել ՚ի ձէնջ աղօթս և պատարագս Թոշակի Ա-
նապարհի իմոյ առ Քրիստոս, և լինել ձեզ ինձ յիշա-
տակ բարի անուանի վարուք և անսղալ կրօնիւք առա-
ջի Աստուծոյ։ Եւ քանզի ժամանակս այս կասկածոտ
և սխալական՝ այսմ ինձ ոչ ներեաց անձամբ գալ և կա-
տարել զբաղձանս իմ, այլ այլօք հնարիւք հաստատեաց
Աստուած զսիրտս իմ զարհուրեալ. և առաքեցի առ
ձեզ զարդիւնական վարդապետն զԱրդան փոխանակ
անձին իմոյ, զոր ետ ինձ նախախնամութիւնն Աստու-
ծոյ, ձգեալ առ իս ՚ի կողմանց ձերոց ՚ի հինգ ամաց
հետէ. զոր իբրև տեսի՝ ձանաչեցի ըստ կարի, կապեցի
զդա միջնորդութեամբն Աստուծոյ ընդ անձին իմոյ կե-
նօք և մահուամբ, մեծաւ հարկիւ և սիրով բևեռեալ
ընդ իս յաւիտեան։

Ունակ վասն մեծ և հարկևոր կարեաց երկոցունց՝ զոր
գրեցի վերագոյնն, առաքեցի զդա առ ձեզ յուսոմն Աս-
տուծոյ ընդուել զաեղի իմ, ոչ ՚ի դորա կամաց և ՚ի խընդ-
րոյ, այլ յիմմէ սրտէ և յօժար կամաց և ՚ի հրամանէ
հարկեալ. և որպէս անդամ ՚ի կենդանի մարմնոյն՝ յա-
ւօք հատեալ է, որ ունի (զիմ) սիրտ և զբան՝ յամե-
նայն իրս ՚ի պատեհս պատուիրանացն Աստուծոյ. և
գայ բերէ առ ձեզ սահմանն չափաւոր և դիւրագործ քա-
ղեալ ՚ի կանոնաց և ՚ի հրամանաց հարցն սրբոց, ՚ի պետս
եկեղեցականաց և աշխարհականաց։ Զոր աղաչեմ
բարեխօսութեամբ սրբոցն, և փոխան առեմ զանձն
իմ, զի ընդունիցէք զդա սիրով, և զհրամայեալս գրովք
սրբովք. և կատարեցէք ՚ի փրկութիւն ձեզ և յանդա-
տապարտութիւն յատենին Աստուծոյ։ Ունակ եթէ ստուն-
գանիցէ ոք և ոչ ընկալցի և կատարեսցէ, մեզս առցէ

անհերելիս, և արիւնն իւր և կործանումն աշխարհի՝ պահանջեսցի՝ ինձանէ առաջի ատենին ահաւորի և մեծին։ Բայց մեծ յուսով եմ Աստուած ընդդիմանալ ումեք իւրում կենաց և փրկութեան. և՝ ի հաւանել լսոյդ պահանջեմ աղաչանօք՝ փոխել իւրաքանչիւր ումեք զթուղթս կանոնական. և պահել զգուշութեամբ յաւիտեան, և ամենայն ումեք դիտելի առնել, և զիմ առաքեալ թուղթս ձեռնադրել ամենայն եպիսկոպոսաց, և առ իս առաքել ձեռօք իմոյ վարդապետիս։ Այլ և ամենայն պաշտելի և երկրպագելի սրբութիւնդ՝ իմոյս երեսօք ընկալցի երկրպագութիւն և աղօթս, զի՝ մօք Աստուածդ վարդապետիդ իմ, և ձերով։

Այսպէս ընկալարուք և դուք որպէս Քրիստոս սրտէ և՝ ի հաւատոյ, բերանով դորա զհայցուածս աղօթից և պատարագաց՝ զոր մաղթեմ յուսով՝ ի մեծէ և փոքուէ, քաւութիւն պարտեաց յանցանաց իմոց. քանզի որպէս հարք պարտին որդւոց գութ և օրհնութիւն, նոյնպէս և որդիք օրէնս ունին՝ զպարտս հարց վճարել. և ես ի հաւատով տարածմամբ ձեռաց իմոց խնդրեմ Աստուծոյ միջնորդիս կենսակիր սրբոցս, և յաղօթս երանուհոյ Աստուածածնի, զի ամենայն աստուածաշարժ պարգեւք և օրհնութիւնք և շնորհք, զոր ետ Այրն երկնաւոր Որդւովն և սուրբ Հոգւովն աշխարհի և եկեղեցւոյ, և եկն՝ ի հարց յորդիս, այն ամենայն եկեսցէ և հանգիցէ յոգիս ձեր, յեկեղեցիս և յաշխարհս ձեր և յիշխանութիւնդ, և՝ ի հոգիս ննջեցելոց ձերոց, և՝ ի հանգիստ նոցա, և կենդանեաց՝ ի փրկութիւն հոգւոց և մարմնոյ. յաձուճն և՝ ի բազմանալ նորոյս Սրբեալն՝ քրիստոսական հօտիդ, առաւել քան զբազմութիւն և զպայծառութիւն աստեղացն. օրհնեսցին երկնաւոր շնորհօք ամենայն գոյք ձեր՝ կայուն և անկայուն. պարարտասցին և պտղաբերեսցեն անդաստանք և այգեստանք ձեր. և ամենայն պտղաբերք երկնաւոր ցօղովն և շնորհօք Աստուծոյ լցեալք, երկնաւորք և երկրաւորք. եղիցի եղիցի։ Ողջ լերուք, և անյարմար գրոյս անմեղադիր լինիք, զի փափագեցի իմովս ձեռամբ գրել առ ձեզ։

Վրեաց և միւս Թուղթս կանոնական եկեղեցական-
աց, և առաքեաց ընդ հրէական Թղթին՝ ի ձեռս
տօնունց այսպէս։

ԽԱ.

ՍԱՀՄԱՆՔ[1] ԿԱՆՈՆԱԿԱՆՔ ՏԵԱՌՆ ԿՈՍՏԱՆԴԵԱՅ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ՀԱՅՈՑ

Կոստանդին ծառայ Յիսուսի Քրիստոսի և ընտրեալ նորին կաթուղիկոս ամենայն Հայոց, օրհնութեամբ ողջունիւ և սիրովն Աստուծոյ՝ ծանուցանեմ լսման եկեղեցւոյդ Հայաստանեայց, վիճակելոց ընդ իշխանութեամբ գաւազանի սրբոց առաքելոց Թադէոսի և Բարդողիմէոսի, և մեծաւաստակ նահատակին Քրիստոսի Գրիգորի, և մերում կրսերութեանս։

Յրաման է այս առաքելադիր, որ՝ ի տարւոջն երեք անգամ առաջնորդք եկեղեցւոյ ժողովով տեսանեն զկարգս եկեղեցւոյ, Թէ որպէս ունիցին զսահմանս յաւիտենական՝ զոր Յոգին սուրբ հաստատեաց, զպահման ընուլ, և զեկամուտ որոմն խլել. և այս պատուիրան՝ ի բազում ժամանակաց խափանեալ եղև, յաղագս ազգիս ցիր և ճապաղ լինելոյն, և հեռաւորութեան և մուխադրայ[2] Հանապարհացս։ Այլ զի իրաւունք արդար գատաստանին Աստուծոյ յիշատակ արար անկարգութեան և անիրաւութեան աշխարհի, յետ բազում երկայնմտութեան և ներողութեան՝ արդոյ զբաժակ բարկութեան իւրոյ յոլովից ազգաց և ժողովրդոց, ընդ որս և մեք գտաք դատապարտք, և տուաք տոկոսս ազգակցօք մերովք, և հոգևոր ուստերօք և դստերօք. քանզի աշխարհ՝ որ լի էր մեղօք և անիրաւութեամբք՝ լցան արեամբ և արտասուօք և դիակօք ոսկերօք կոտորուածովք զազանակուր եղելոց. և ճնացեալքն՝ ի սրոյ՝ անընտել Հանապարհաւ վաՀառակուր եղեն յազգս հեռաւորս, և փախուկքն մեր և ազգատոհմք որդիք Աւետեան և գաւիթք Քրիստոսի, զուգա-

1 ՕՕ. Սէրմանդ։

2 Մուխամնադրէ՝ արաբերէն լսի վտանգ, վտանգաւոր։

կշիռքն ոսկւոյ և ականցն պատուականաց, իբրև զաղջ անպիտան և ընկեցիկք և արհամարհք և անծանօթք եղեն. այլ և երկրպագելի և պատկառելի նշանք և ըսպասք սրբութեան՝ անարգեցան, և անարժանից ձեռօք յանարժան[1] պէտս վարեալք, հանդերձ տապալմամբ քաղաքաց, և ամայութեամբ գաւառաց, զորս ոչ ոք կարէ զբովանդակն պատմել և արժանապէս ողբալ։ Այլ քանզի ողորմութիւնն Աստուծոյ եթող սակաւ սերմն կենաց, և զաւակ յուսոյ՝ յաշխարհդ արևելից, յիշատակ առ մեզ երախտեացն Աստուծոյ, որ[2] վանս աղօթից նախնեաց մերոց սրբոց՝ մխիթարութիւն մեզ վանս քաղում գթութեան իւրոյ. և էք դուք ժողովեցեալք այսօր և ժողովուրդք, վանորայք, քաղաք և գաւառք. յետ բազմադիմի վշտացն զոր կրեցէք, և գոյ ի ձեզ օրհնութիւն և յոյս ածման և վերացման ի փառան առաջին. և էք Քրիստոսի և մեր սեփհական ժառանգութիւն և պարծանաց զաւակք, և յանձնեալք մեզ ի պէտս հոգևորս. վասն որոյ ի վերայ քաղում արտասուացն՝ զոր հեղաք վասն ձեր ի բեկման աւուրս և յաւերման և կոտորման մեզսաբեր սրոյն, և այսօր մխիթարիմք ձեօք միացեալվք, և գոհանամք զԱստուծոյ. այլ միշտ զարհուրիմք և դողամք յերկիւղ կասկածանաց նոյն անցիցն՝ զոր կրեցաք. քանզի և նոյն պատճառք բարկութեանն Աստուծոյ գտանին և այսօր առ քաղումն, որ է կեանք և վարք արտաքոյ կամացն Աստուծոյ և կանոնաց հրամանաց։ Վասն որոյ յառաջ քան զելիս ամս գնացաք մեր դրան սպասաւորաց լսմամբ, հանդերձ ամենայն մերձակայ գաւառաց եպիսկոպոսօք, յաշխարհն Սիւնեաց, առ քրիստոսասպասակ Թագաւորն մեր Հեթում. և նորին հրամանաւ և ձեռնտուութեամբ ժողովեցաք զեպիսկոպոսունս, զվարդապետս, զմիանձունս և զվանից առաջնորդս, զիշխանս և զիշխեցուցեալս՝ արս երևելիս. և արարաք հանդէս մեծ, քննեցաք զպատուէր և զհրամանս Աստուծոյ, և զԱստուծոյ մերձակայից՝ առաքելոց և հայրապետաց, և զտաք զմեզ քաղում մատամբք մոլորեալք և դատապարտեալք և անպատասխանիք. և ոչքան կա-

1 Ա. անարժանապէս։ 2 ՕՕ. այլ։

րացաք աւաղեցաք զմեզ և ողբացաք. և վկնի յոլով քննութեան՝ ամենեցուն կամակցութեամբ և ձեռնադրով՝ գրեցաք սահման և կանոն չափաւոր և դիւրընթաց, և կարելի գործելոյ, ի զօրութենէ գրոց հաւաքեալ, և ուխտեցաք առաջի Ս. ստուծոյ և հրեշտակաց և մարդկան. յանձն առնուլ ամենայն կարողութեամբ. զեղեալ սահմանս, և եղաք զյոյս մեր յօգնութիւնն[1] Ս. ստուծոյ. և ինացաք ժամանակի թէ հնար գոյ գալ անձամբ և այդր, ընուլ զփափաք կարօտութեան իմոյ առ ձեզ, և պահանջել ի ձէնջ ձեռագիր սահմանիդ եղելոյ, որպէս և մեք. և զի չեղև հնար՝ առաքեցաք զսահմանեալ կանոնսդ, չափաւոր քարտիսիւ, և պահանջեմ ի ձէնջ վկայութեամբն Ս. ստուծոյ, և ընդհիւ և զօրութեամբ առաքելական աթոռոյս և աստուածընկալ սրբութեանցս, և առաջի առաքելոց սրբոց, և տուրբ Ա. ուսաւորչին մերոյ, զոր առնիցէք անթերի: Եւ եղեալ սահմանն այս է.

Ա. Ս. մենայն ձեռնադրութիւն յեկեղեցիս՝ որ է պարգևք Հոգւոյն սրբոյ, զոր տայ արժանաւորաց, առանց արծաթոյ լնոյն, ըստ կանոնաց. զի այն ախտ Յուդայի և Սիմոնի կախարդի է, որ խոտեցան և ոչ միաբանեցաւ ընդ նոսա ընդհք, որ ի տեղիս տեղիս վանն աղքատութեան լուծեալ է և տկարութեան[2]:

Բ. Ս. յուհետև արժանաւորքն միայն և գիտունքն առցեն զաստիճան եպիսկոպոսութեան, մեծաւ քննութեամբ և վկայութեամբ և թեմին կամակցութեամբ. առանց կաշառու. և հասակաւ մի պակաս քան վերեսուն ամն:

Գ. Իսկ առաջին գործ եպիսկոպոսին՝ որ զուսուցիչս և զուսումնական ուսման եկեղեցւոյ՝ ինքն սահմանեցէ մեծաւ հոգաբարձութեամբ, անգայթակղ, և գիտունք և ուսումնականք ուսուցիչք լինիցին տղայոցն:

Դ. Ս. պա զեկեալն ի չափ հասակի՝ եւ ուսմամբ եւ սրբութեամբ՝ ածցէ յաստիճան, վկայութեամբ անձանց իւրեանց և մնուցողացն, առանց արծաթոյ՝ տիօք մի պակաս քան զքսանհինգ ամն երէցն, և սարկաւագն քսան ամ:

1 ՕՕ. օգնութեամբն:

2 Տպ. պգիպութեան:

ե. Իսկ քահանայքն զպատակն և զկնունքն նօթա-
թեամբ արանցեն յեկեղեցիս և հաղորդեսցեն. քայց
թէ մահու երկիւղ իցէ երեխային՝ յորժամ և իցէ ա-
րասցէ, առանց զրամի:

Զ. Ումեանն քահանայապօրծուԹիւն, կնունք, պը-
ատակ և Թաղումն, երկիւղիս լիցի, առանց զրուցի և ծա-
ղու, մեծաւ յուսով, և աղօԹիւք մերձակայիցն:

է. Ուազանն հաստատուն լիցի և անշարժ, և վա-
րագուրաւ ծածկած, զի մեծ է խորհուրդն:

ը. Պսակն ընտրուԹեամբ արասցեն, վեց ծննդովք
հեռացեալք յազգակցուԹենէ արեան. և փեսայն մի՛
պակաս քան զչորեքտասան ամն, և հարսն զերկոտասան:

Թ. Հօտար[1] աշխարհէ եպիսկոպոս, վարդապետ,
կամ երէց, կամ պերոյ տէր, առանց Թեմի եպիսկո-
պոսին մի՛ շրջեսցեն կամ շինեսցեն, այլ նորա հրամա-
նաւ՝ ըստ պատշաճի. քայց ձիմարտացն մի՛ հակառակեսց-
ցեն և ընդդիմացին. և եԹէ յանդգնի ոք՝ նզովեալ
եղիցին:

Ժ. Պրոց[2] դասատացք բազմաց վկայուԹեամբ լիցի,
որ լինին գիտունք և ամենայն գրոց վարժք և տեղեակք
և փորձ ամենայնիւ. նոյնպէս և գրոց աշակերտքն ընտ-
րուԹեամբ նորին և առաւել փորձիւ, և վկայուԹեամբ
կատարելոց:

ԺԱ. Ոչ հրամայեսցէ եպիսկոպոսն զսուրբ գիրս ե-
կեղեցւոյ գրել արուեստաւորաց, և գիտնոց և ուղղա-
փառաց:

ԺԲ. Երկիցս անգամ շրջեսցի եպիսկոպոսն ՚ի տա-
րւոջն յիւր Թեմն, և հանդէս արասցէ իւր հօտին, և
սուրբ և գիտուն քորեպիսկոպոս դիցէ, որ զեկեղեցւոյ
պատաստան ըստ կանոնաց առնել մարԹասցի, երկիւ-
ղած և անագահ:

ԺԳ. Ծներ և գիտուն խոստովանահարս կարգեսցեն,
որ յամէն կիւրակէի առանց զրամի խոստովանուԹիւն
կոչեսցէ վանն շաբաԹուն յանցանացն, և քահանայքն՝
խոստովանահարցն հրամանաւ զիւրեանց ժողովրդեան
զարժանաւորն հաղորդեսցեն՝ առանց զրամի, նոյնպէս
և զհիւանդս առանց զրամի:

ԺԴ. Ո՝Հաղորդն առանց բուրվառի և մոմեղինի մի՛ տարցեն աւ հիւանդն, այլ մեծաւ երկիւղիւ. իսկ ժողովրդեան չեն իւրեանց հրամանքն ումմէ և կամին ծուխ լինել, այլ որպէս եպիսկոպոսն հրամայեսցէ:

ԺԵ. Ա՛ռաւել ջան տարցին եպիսկոպոսք և քորեպիսկոպոսք՝ զպոռնիկս, զընացողս և զմայս, և զամենայն յանցաւորսն՝ երկիւղիւ գեհենին՝ ի դարձ ածել. իսկ զանդարձն՝ մարմնաւոր պատուհասիւ և հոգևորաւ խրատել և տուգանել, մանաւանդ զայնպիսին՝ որ այր և կնոջ մէջ մտցեն, կամ բոզ ունիցին կին, կամ ըզկինն Թողուցուն զօրինաւոր և աւ բոզս երթան, կամ ատելութեան պատճառաւ Թողուն զկանայս առանց բանի պոռնկութեան. զայնպիսիս առանց խղճի անողորմ խրատեսցեն տուգանօք. և Թէ պատուաւոր է մարդն, և ընդդէմ ասէ եկեղեցւոյն օրինաց լըքուԹեամբ, Թագաւորն խրատեսցէ զանձի[1] մեղքն, և իշխանքն զմեղադրանքն. եԹէ ոչ առնեն զայս և նզովք[2]. և Թէ կինն լըքի և մարդ խաբէ, կամ ազատ կամ կանամբի՝ խրատեսցէ երէցն:

ԺԶ. Ա՛մենայն պահք՝ ըստ կանոնաց առանց ձկան և ձիթոյ և գինւոյ եղիցի, բայց ի հարկէ հիւանդուԹեան, առաւել աղուհացիւն և ուրբաԹ և չորեքշաբաԹին, որ Քրիստոսի չարչարանաց աւուրք են. որ զայս լուծանէ՝ տուգանեսցեն և յաղքատս տացեն, և պահօք վճարեսցեն Ա՛ստուծոյ:

ԺԷ. Ա՛խ քան զամենայն և յառաջ քան զամենքդ, զայս եմք հոգացեալ առաջի ալքային Հ՚ԵԹմոյ և հօր իւրոյ Կոստանդեայ, և ամենայն իշխանօք, և բանադրանօք բանադրեալ՝ որ յամենայն տեղի մեծ և փոքր՝ յիշոցաւապ[3] դնեն, ի դարպաս, ի գիւղ, ի քաղաք, ի բերդ, զԱ՛ստուծոյ բարկուԹիւն շարժողն և զաննեբելն անօրէնս՝ որ անարգեն զհաւատս, զատեղծողս, զկնունք, հրեշտակք, քահանայ, բերան, երես, գերեզման, և այլ այսպիսի. զնոր բուսեալ չարիսդ, զայնպիսեացն զլեզուն հատցեն, և կամ ծակեսցեն և լար

1 Ա՛յսինքն՝ զայսանէ:
2 Ա՛յսպէս ՕՕ. յորս պակաս կամ աղաւաղուԹիւն:
3 Եթէ ատոյգ իցէ ընԹերցուածդ՝ Թուի զքննիչս կամ դատաւորս առնել յիշոցաւորաց:

'ի ներա ածցեն, և ծեծելով 'ի շուրջ ածցեն օր մի, և ըստ գոյին տուգանս առցեն և յաղքատան տացեն։

ԺԸ. Եթե քահանայ գտանի 'ի վերոյ գրեալ մեղս՝ կրկին պատուհասիւ պատժեսցի, հանդերձ կարգիւն։

ԺԹ. Քահանայ որ զատ եկեղեցւոյ գործոյ՝ այլ գործս առնէ, նօտարութիւն կամ որսորդութիւն, զժողովուրդն 'ի բաց առցեն, նոյնպէս զանուսումն երկցանց, մինչ աղէկ ուսցին, առցեն և յանարժանիցն։

Ի. Քահանայն 'ի տարուջ ժողովեսցէ եկեղեցւոջն զարս և զկանայս՝ առանձինս, և որիշ զկուսան աղջկունս, և որիշ զմանր տղայն. և ըստ իւրաքանչիւր պատշաճի խրատեսցէ՝ աղաչանօք և սաստիւ, և իմացի զիւրաքանչիւրոցն վարքն, և դիտեսցէ հանապազ. և թէ ինքն չկարէ բաւական՝ 'ի ձեռն այլ կատարելոց առնել, որպէս ասէ տուրքն Աստուծոյ կիւր կանոնքն։

ԻԱ. Ժողովրդականք յօժարութեամբ և աղաչանօք տացեն զհաս քահանային, յամ արմտեաց պտուղս, և զկարգեալ բաժին մատաղին և պսակին ընծայիւք, և թաղման հանդերձ, և ժամու գրամ. ոչ զին պատարագին, այլ երկցուն հանդերձ և կերակուր, որ աղօթից և պատարագի և եկեղեցւոյն պարապէ։

ԻԲ. Երկցունք ընդ ժողովրդեանն ծառայեսցեն զեպիսկոպոսն, սահմանեալ հասիւն և ընծայիւ ըստ պատշաճին։

ԻԳ. Եպիսկոպոսքն ծառայեսցեն զհայրապետական աթոռն, կարգեալ հասիւն և ընծայիւք արժանաւորք, ըստ կանոնաց. զի տուրք Աստուծոյ լինի գրեալ է, որ քահանայն զժողովուրդն տասանորդէ, և եպիսկոպոսն զքահանայն, և հայրապետն զեպիսկոպոսունս. արդ թէ և զայն չառնէք՝ զչափաւորն արարէք. և ըզպակասն զոր գրեցաք՝ խնդութեամբ տուք իբրև զօրհնութիւն և մի իբրև զպահանջութիւն. որ աթոռքն հաստատ և անկար[1] ճնան, և եկեղեցիքն պայծառ, և Աստուծոյ օրհնութիւն խառնի յարդիւնս արդարութեան ձերոյ. զի Աստուծոյ տայք և ոչ մարդոյ, և մարդոյ մի երախտիք։

ԻԴ. Այն երկու աղօթիքն՝ յորոց վերայ տուրքս Աս-

1 Այսպէս յՕՕ. Թուի անկարօք կամ անկարիւ։

աուաճ առեմք, զվիսաւքն ՚ի ձայր և յԱՀուդն և ՚ի տուրբ ձոգին աւարտեք, զի մի Եպերդութեանն վերայ Թըւեսցի խաչն. զկատարած՝ ըստ ձայնիցն՝ առել պիտի. ,,զոր դշտ ՚է բարձուանս առաքելոյս տնօրէնս փերուընեանդ, այնմ և դշտ,,: ՚Ո՞ գոհանամտին վերջքն. ,,լեցին պատճառ և բնաձարան աստուածային շնորհացդ, և գոհութեամբ ձառաբերեալ պէտս ընծայ ձինչ ընդ ձօր,,. և այլն:

ԻԵ. Ի ֆռանկաց գրեալ են առ մեզ, Թէ զՏեառն եղբօրն հրաման ընդՀր ոչ առնէք, զհւանդն՝ ժամուն օրհնել, ձիլթով օծանել[1], որ Թէ մեռանի՝ օծումն լինի Թաղմանն. և Թէ ապրի՝ լինի քաւութիւն մեղաց, և պատճառ առողջութեան. և գիտէք որ ()ձնեցին Յովհան, որ զատեալ է զմեզ յազգացդ[2], գրեալ է որ առնենք, և պարտ է առնելն, և արարէք ստուգիւ: Ինչն զգուշացի քահանայն, և սակաւ օրհնեսցէ՝ որ աւելի չգայ, և նզովք առցէ Յստուծոյ և ՚ի մէնջ, և լինի պատճառ գայթագղութեան. զայս պատեհ տեսաք և գրեցաք յետոյ և հարկաւոր: Ա՛ղջ լեցէք տեսրամբ:

Ար զայս չափաւոր բանքս գրէ և պահէ, հասկացնէ և գործովք կատարէ՝ պահեսցէ նմա տէր Աստուած զգուշութիւն և զողորմութիւնն իւր. և որ կորուսանէ և արհամարհէ՝ յանցաւոր լեցի առ մեզ, և առ ալքայն. և Աստուծոյ ատենին տացէ պատասխանի ամենին:

Նա եկեալ Ա արդան վարդապետն, և ողբ ընդ նմա առաքեալք ՚ի կաթողիկոսէն՝ յարևելս, և շրջեալ ընդ գաւառս Այոց, ՚ի յեպիսկոպոսս և վանորայս և յիշխանս, և տուեալ ամենեցուն զկանոնական հրամանս, և պահանջեալ յամենայնէ ձեռագիր հաւանութեան սահմանին եդելոյ: Նա զի ամենայն ոք խոստուեալ էր ՚ի չշմարտութենէն և ըմբռնեալք ախտիւ ագահութեան և արծաթասիրութեան, ծանր Թուեցաւ հրամանն. բայց սակայն ոչ իշխեցին արհամարհել, այլ ՚ի վերին երեսս մեծարեցին. և ետուն ձեռագիր երդմամբ և նզովիւք առնել զհրամանն. եպիսկոպոսն Կարնոյ քաղաքի Սարգիս. կածոյ են բանքդ զՅովհաննէ Իմաստասիրէ:

1 Ցակ. Ռոմ. կո. Ե. 14:
2 Ըստ յոլովից անաստոյգ վար.

և եպիսկոպոսն Ընծոյ միւս Արգիս. եպիսկոպոսն Կարուց Յակոբ. եպիսկոպոսն Ընջնայ Անանիան և Դրիգոր. և եպիսկոպոսն Յանբեերդայ Ակրտիչ. և եպիսկոպոսն Խաղբատայ Յամազասպ. և այլ եպիսկոպոսունքն որ ի կողմանս կողմանս. և գլխաւոր վանորայքն՝ Անահիտն և Դեսիկ և Խաւարծին [1], և Կեչառուս, և Խաւուց Ձոր, և Ոստն վանք, և Յովհաննու վանք, և Աղբոտայ վանք և Խոռոմոսի վանք, և որ շուրջ գնոքօք. Նա և կաթուղիկոսն Ընդունից տէր Ներսէս, և եպիսկոպոսն Յովհաննէս՝ զոր Տուեցին կոչէին, և մեծ հրամայական վարդապետն Անանիա, և իշխանաց իշխան Ընդգն, և այլ իշխանք. Նա առեալ զայս գիր հաւատոյ թուղթեան իմաստնոյն Արդանայ՝ (առաքէ) առ կաթուղիկոսն Աստանդին, ի Վայն Հռոմէական. և ինքն եկեալ ի ձորն Այանոյ ի միաբանին իւր, զոր տուրք Ընդրէն կոչէին՝ հանդէպ անառիկ բերդին Այանոյ, և անդ դադարեալ ուսուցանել զբաղումս, որք աշակերտէին նմա վարդապետական քանին.

Նա ի գալ երկրորդ ամին՝ յորժամ վեցհարիւր լինաւն և վեց էր Թուականն Հայոց, առաքինի կաթուղիկոսն Աստանդին առաքէ յարևելս եկեղեցեացն ընծայ՝ մետաքսաւէնս ի կերպասուց պեսպէս գունոց, և մեծագինն նափորտս ի սպաս պատարագին սրբոյ, ի ձեռն Յովհաննու սպասաւորի իւրոյ՝ ի պատուաւոր վանորայս, և շրջաբերական նամակ շնորհի առաքելոյն Յադէոսի [2], տալ նմա վիճակ զշրջակայ գաւառն և զքաղաքս, և ոսկի յոլով ի շինուԹիւն գաւԹին՝ զոր շինէր վարդապետն Յովհէփ, յետ աւերածոյն որ ի Յունքացն, և ի հինին Պարսից, քանզի յոլով ժամանակս անբնակ էր ի մարդոյ, և ամայի: Նա Յովհեփայ երԹեալ առ զօրագլուխն ՅաԹարին, որում անուն էր Ընգուն-նուէին [3], որոյ իշխանքն իւր յաւուրսն ամարայնոյ հուպ էր ի գեղեցկին առաքելոյն Յադէոսի, և նորա հրամանաւ սրբեալ զեկեղեցին և նաւակատիս կատարեալ՝ շինեաց զվանս, և ժողովեաց ի նա կրօնաւորս բազումս. և այրն ՅաԹար ընդարձակեաց զձմանապարհս յաւետեան կող-

1 Որ յաճախ հաղարծին գրի:
2 Որ յԱրտազ գաւառի:
3 Տպ. Անագուբակ նուէին:

մանց, աներկիւղ գալ ուխտաւորաց՝ որ ընդ միջ զօրացն նորա. պատուէր հրամանի տուեալ՝ մեծաւ սաստկութեամբ՝ մի զոք զզուել և նեղել որ կամիցին գալ. և ինքն սիրով խոնարհէր առ նոսա. և բազումք՝ ի նոցունց գային և միրտէին զուստերս և զդստերս իւրեանց, և բազում այսահարք և հիւանդք բժշկէին, և փառաւորէր անուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Ա.յլ և աւուրն զօրքն Յոհաթար ոչ էին Թշնամի խաչի և եկեղեցւոյ, այլ յոյժ պատուէին, և ընծայս մատուցանէին, քանզի նախանձ հակառակութեան առ նոսա ոչ գտանէր։

Խ Բ

ՎԱՍՆ ՀԱՐԿԱՀԱՆԱՑՆ՝ ՈՐՔ ԵԿԻՆ Ի ՂԱՆՃԷՆ

Իբրև առ զմեծ Թագաւորութիւնն Յոհաթար զօրուն՝ որ յաշխարհն իւրեանց՝ ղանն Քհուգ, իսկոյն առաքեաց զարս հարկապահանջս ի զօրս իւր՝ որ ի կողմանս և յաշխարհս՝ որ հնազանդեցան նոցա, առնուլ տասանորդս ամենայն ստացուածոց զօրուն, և հարկս ի գաւառացն և ի Թագաւորութեանց, որք նուաճեալ էին նոցա, ի Պարսից, ի Տաճկաց, ի Յունաց, ի Վրաց և Ա.ղուանից. և հարկահանք՝ որք խնամք և յաւիշտակողք, անուն միոյն Ա.րղուն, որ ամենին իշխէր, և երկրորդին Քհուղա, որ չարագոյն էր քան զայն Քհուղայն՝ որ յաւուրս Ղ.ափրին խամայելականին՝ եւ ի Յայս և աւերեաց զբազում աշխարհս. նմանապէս և այս Քհուղայս եկեալ ի զօրսն Թաղիար, մտանէր ի տունս աւազանոյն, և զոր ինչ ախորժ թըւէր՝ առնոյր անխնայ, և ոչ ոք իշխէր ասել ինչ նմա. զի ժողովեալ էր առ իւր արս սրինկայս ի Պարսից և ի Տաճկաց, որք անխնայ գործէին զգործս խակութեան, և Թշնամիք էին առաւել քրիստոնէից. վասն որոյ չարացուցին զնա ի վերայ բարեպաշտ իշխանին Ղ.ալաՅասանին [2]. որ ըմբռնեաց զնա ի մեծ պրանն առաջի ամենայն աւազանոյն, և ընդ բազում պատժօք զնա

1 ՕՕ. տե՛ս։ 2 Որ էր իշխող Խաչենոյ։

արկեալ՝ քակեաց զանմարտանչելի բերդս նորա, զոր Խոյ-
ախանայ բերդ[1] կոչէին՝ ըստ Պարսից լեզուին, և զբ-
դեղ և զնշիրանաքարն, և զայլ ամրոցս նորուն. և
այնպէս յատակեաց զնոսա՝ մինչև հետք անգամ ոչ ե-
րևէին, թէ բնաւ չէն լեալ իցէ. և բազում ոսկի և
արծաթ առեալ ի նմանէ՝ հազիւ զերծաւ ի նմանէ. և
մեծամեծ աւագանին ոչ կարացին օգնել նմա. այսպէս
ահարկու ամենայն տեսողացն էր։ Կամեցաւ և զիշխա-
նաց իշխանն զՀաց՝ նոյնպէս ըմբռնել ի տանջանս և ի
ձաղանս. և ազդեցուցին նմա մեծամեծ աւագանին,
թէ մի երկնչիր, այլ զամենայն զօրս քո ժողովեա, և
այնպէս երթ ի տեսութիւն նմա. և թէ դէպ լինի ըմ-
բռնել զքեզ՝ կալջիր և դու զնա. և այնպէս արարեալ
չոգաւ առ նա բազում զօրօք. զոր տեսեալ Հուլայն՝
երկեաւ, և ասէ ցնա. Ո՞րչափ է այդ բազմութիւն զօ-
րաց, մինթէ ապստամբ իցես ի ղանէն, և եկիր սպա-
նանել զմեզ. և ասէ ցնա Հաց. Նա դու ընդէր ժողո-
վեցեր զբազմութիւն արանց չարագործաց Պարսից, և
եկիր նենգիւ ըմբռնել զմեզ։ Նա իբրև գիտաց Հու-
ղայն թէ յայտնի է նմա նենգութիւն նորա, խօսեցաւ
ընդ նմա ի խաղաղութիւն. բայց հանապազ խորհէր
ի մտի իւրում չարութիւն, գտանել դիպող ժամանակ
և կատարել զկամս չարութեանն։ Նա մինչդեռ զայս-
պիսի չարիս խորհէր՝ ժամանեցին նմա արդար դատաս-
տանքն Աստուծոյ. եւ վերք ի փող նորա յանկարծակի,
և հեղձամուղձ սատակեցաւ չարն չարաւ, և այսպէս
բարձաւ ամբարիշտն յերկրէ, և մի տեսցէ զփառս Աս-
տուծոյ։

ԽԳ.

ՎԱՍՆ ԹԱԳԱՒՈՐԱՑՆ ՎՐԱՑ ԵՐԹԱԼՈՑՆ ԱՒՐ ՂԱՆՆ

Թագաւորութիւնն Վրաց յայսմ ժամանակի նը-
ւազեալ էր, որ յառաջն ձոխ էր, եմուտ ընդ ծառայու-
թեամբ թաթար ղանին՝ որ յարևելս, որոց գլխաւոր

[1] Որ և Խօխան բերդ, այժմ աւերակ, մերձ ի Գանձասար. յորմէ
ոչ հեռի Թուխն և միւս երկուքն։

էր Նաչու-նուին, յետ մահու Ղարմաղուին. էր յայնժամ Թագաւոր Վրաց կին մի Ուզուդան անուն, որ ղօղեալ ամրացաւ յանառիկ ամրոցս Ոուանեթայ, և գային առ նա դեսպանք երկուց կողմանց՝ ի զօրաց Ծաթարին, ի մեծ զօրավարէն՝ որ ի կողմանս Հիւսիսոյ, որում անուն էր Նաթու, մօտաւոր ազգական ղանին՝ որ ամենից իշխէր, այլ և ղանն առանց Հրամանի նորա ոչ նստէր յաթոռն. և ի միւս զօրավարէն՝ որ ի կողմանն Հայոց, որ Նաչուն կոչէր. գալ առ նոսա սիրով խաղաղութեամբ, և իշխել տերութեան իւրոյ նոցին Հրամանաւն: Յակ նա քանզի կին պեղեցիկ էր, ոչ իշխեաց առ մի ոք ի նոցանէ երթալ, զի մի խայտառակեսցի ի նոցունց, այլ զորդի իւր մանուկ տիւրք Թագաւորել՝ որում անուն էր Գաւրեաթ, առաքեաց առ Նաթու զօրավարն: Յակ այս գլխաւորքս որ ընդ Նաչու-նուինին էին՝ ի կողմանս արևելից, որք ըմբռնեալ էին զամենայն աշխարհս Հայոց, և Վրաց իշխանութեան իշխանք առ նոսա կային, իբրև տեսին թէ ոչ եկն նա առ նոսա, (այլ) առ զորդին իւր (և) առաքեաց առ Նաթուն, դժկամակ եղեալ ընդ իրան, առաքեն առ Գ Լանթատին սուլտանն Հռոմոց, և բերեն անտի զեղբօրորդին Լաշա Գևորգայ Վրաց Թագաւորին, զոր նոյն Ուզուդան առաքեաց զՀետ զստերն իւրոյ, որ էր կին Գ Լանթատին սուլտանին, և եդ զնա յարպելա, զի մի դաւ լինի զոքանչին իւրոյ վանն Թագաւորութեան. և սոյա աճեալ զնա անտուստ՝ տան զիշխանութիւն Հօր նորա, և առաքեն զնա առ ալբայն[1] ղանն Հաստատել զնա յիշխանութեան. և ինքեանք դեսպանն առաքեն ստիպով մի զկնի միոյ առ Թագուհին Ուզուդան՝ գալ առ նոսա կամաւ և ակամայ. նոյնպէս և Նաթուն առաքեաց զորդի նորա առ ղանն, և ինքն կոչէր զՈւզուդան երթալ առ նա. և նորա նեղեալ յերկուց կողմանց՝ իւրովի դեղ մահու էառ և վճարեցաւ ի կենացս. և գրեաց գիր կտակի առ իշխանն Վրաց և յանձնեաց ի նա զորդին իւր, եթէ դարձցի ի ղանէն: Յակ նոցա երթեալ առ ղանն Գևորգ, և նա սիրով ընկալաւ զնոսա, և սահմանեաց նոցա ըստ կարգի

1 Գևորգ մեծ խաքանն:

ունել զթագաւորութիւն. նախ որ աւագն էր՝ ինոյումնց Դաւիթ, որդի Յեսսէին Աւետեայ, և յետ վաղճանի նորա՝ թէ կենդանի էր՝ միւս Դաւիթ, որդին Ռոզոմզանայ, նորին Հօրաքեւորդի: Եւ զգանձ թագաւորութեանն յերիս բաժանել. զտախտն պատուական և զանգին, և զթագն հրաշալի՝ զոր ոչ ունէին այլ թագաւորքն, զոր Խոսրովու լեալ մեծի՝ Հօրն Տրդատայ արքային Հայոց, և անդ մնացեալ գաղտականութեամբ վանն ամրութեան տեղւոյն, և՝ի թագաւորն Պրոց անկեալ և մնացեալ մինչև ցայսօր, զայն և զայլ պատուականս՝ի գանձուցն առաքել զանին, և զայլսն բաժանել՝ի վերայ ինքեանց: Որ եկեալ արարին այնպէս, միջնորդութեամբ Գագկին, որդւոյն Խանէի. և նստեր Դաւիթ որդի Յեսսէին՝ի Տփխիս քաղաքին և միւս Դաւիթն՝ի Սուանէթ:

ԽԴ.

ՎԱՍՆ ԵՐԹԱԼՈՑ ԱՒՐ ՂԱՆՆ՝ ՍՄՊԱՏԱՑ ԶՕՐԱՎԱՐԻՆ ՀԱՑՈՑ, ԵՒ ՈՐԴԻՈՑ ՂԻՆԹԱՏԻՆ ՍՈՒԼԴԱՆԻՆ

Արքայն Հայոց Հեթում որ՝ի Կիլիկիա, առաքեաց զեղբայր իւր Սմպատ զօրավարն առ ղանն՝ երևելի պատարագօք. և նորա երթեալ խաղաղութեամբ զերկայնութիւն Ճանապարհին, և յոյժ մեծարեալ՝ի նմանէ՝ դարձաւ երևելի փառօք և հաւատարիմ հրովարտակօք; տուեալ նմա գաւառս բազումս և բերդս յոլովս, զոր յառաջ լեալ էր Լևոնի արքային, և զկնի մահուանն առ՝ի նոցունց Ալայատինն սուլտան Հռոմոց: Ետուն Ղաթաթին[1] սուլտանն. և մնացին նորա որդիք երկու մանուկ տիովք, և ընդ հակառակ լեալ նոցա՝ չոգաւ մինն՝ի ղանն, և առ՝ի նմանէ զիշխանութիւն հօր իւրոյ, և դարձաւ ընդ Սմբատայ զօրավարին Հայոց. և եկին առ Դաչու-նուէնն և առ այլ աւազանին. և նոցա հաստատեալ զհրամանս արքային իւրեանց՝ տան զօրս զկնի նոցա, տանել զնոսա յերկիրն իշխանութեան իւրեանց: Եւ իբրև հասին՝ի

1 Եւ առաւ Ղիւաթատին գրէ:

քաղաքն՝ որ կոչի Անգնկայ, լուան եթէ եղբայրն Պ լիա-
թատին սուլտանին փեսայացեալ Հզքարեայ [1] Նոռո-
մոց Թագաւորին որ Անփեսոս, և նորին օգնականու-
թեամբ սուլտանացաւ Հկոնն. և եղբայր նորին տը-
ղայն [2] Ալէյիայ [3]. ի լուն յաթոռն երկեաւ երթալ,
անդրէն դադարեաց Անգնկայն, տեսանել թէ զինչ լի-
նիցի վաղձան գործոյն:

Խե

ՎԱՍՆ ԿՈՏՈՐԱԾԻՆ ՋՈՐ ԱՐԱՐ ԹԱԹԱՐՆ ՑԱՇԽԱՐՀՆ ՎՐԱՑ

Եւ մինչդեռ սակաւ մի կազդուրեալ էր երկիրս ի հինից և յասպատակէ բորբոքեալ աշխարհակուլ հըրոյս, և մարդիկ ի սոսա ապաստանեալ էին առաւել քան Հնարաւած, և իշխանքն կողոպտէին և զրկէին զաղքատս, և ի զրկանաց անտի գնէին հանդերձս մեծագինս և ագանէին, ուտէին և ըմպէին և մեծամեծս փքային, որպէս սովորութիւն է ամբարտաւանութեան Պրաց. Թոյլ ետ Հնարաւած խոնարհիլ ի բարձրութենէն և ձանձրել զչափ տկարութեանց, որք առաջնոցին ոչ խրատեցան: Յարոյց նոցա սատանայ զնոսա՝ յորս նոքա յուսային. յանկարծակի խորհուրդ արարեալ ագանէին Նաթար զօրուն՝ և վառեցան զինու, և կազմեցան առ հասարակ կոտորել զաշխարհս Հայոց և Պրաց և զհնազանդեալս իւրեանց, վասն այսպիսի պատճառի. Թէ ապստամբել կամի Թագաւորն Պրաց ամենայն զօրօք, և զօրաժողով (լինի) գալ կոտորել զնոսա. քանզի երևէր իսկ՝ զի զօրաժողով եղեն ամենայն իշխանքն առ Թագաւորն Պրաց Դաւիթ ի Տփխիս. և մինչ ըմպէին գինի՝ բարձրացան սիրտք իւրեանց, և ասացին ի նոցանէ այլք խակք. Ընդէր ծառայեմք մեք սոցա ունելով զայսքան բազմութիւն զօրաց, այլ եկայք յանկարծակի անկցուք ի վերայ նոցա և կոտորեալ ջնջեսցուք զնոսա, և մեք ընկալցուք զաշխարհս մեր: Եւ խաւխանեաց զայս խորհուրդս մեծ իշխանն

1 ՕՕ. Էէչայ, այսինքն Հ Լասդարիա Հայոց Յունաց ի Նիկիա:
2 Տպ. Եղբայր նորին փղայն:
3 Յարևմտահոլմանա Գարատմանու:

Ա՛հագ. և զնաթար զօրուն պատահեալ՝ ի տեղւոջն
այն[1], և ազդեցուցին գլխաւորացն։ Եւ իբրև ցրուե-
ցան զօրք իշխանացն յիւրաքանչիւր տեղիս, ապա նոցա
այսպէս զինեալ՝ կամէին առ Հասարակ կոտորել զամե-
նեսեան. և յիշխանացն զորս գտան առ իւրեանս՝ ի
կտրանս արարին, և որք ոչ էին անդ՝ հրաւիրակս առա-
քեցին փութով առ իւրեանս կոչելով։ Իսկ ոզորմածն
Աստուած ոչ ետ Թոյլ իսպառ լինել իրին, խափանեաց
այսպիսի պատճառաւ։ Ի մի յաւազ գլխաւորացն՝ որ
զօրավար էր ամենայն զօրուն, Ղազատա անուն նորա,
որ բարեկամ էր Ա՛հագին, եկայ՝ ի մէջ վառեալ զօ-
րացն, և ասէ ցնոսա. Ա՛ձք ոչ ունիմք հրաման՝ ի զա-
նէն կոտորել զայնոսիկ՝ որ հնազանդ են մեզ, և կան
մեզ՝ ի ծառայութեան և հարկատուք են զանին, և
իբք ապստամբութեան նոցա ոչ է ձգտեալ. արդ ե-
Թէ կոտորէք զնոսա առանց պատճառի, դուք տայք պա-
տասխանի զանին։ Եւ լուեալ զայս դադարեցին՝ ըս-
տուգել զիրն։ Եւ գնացեալ առ նոսա մայրն Ա՛հագին,
որում անուն էր Խօշաք, երաշխաւոր լինէր վասն որ-
դւոյն իւրոյ միամտութեան առ նոսա, և Թէ ինքն հասել
էսկ գալոց է առ նոսա, որ եղեւն իսկ. զի եկն վաղվա-
ղակի իշխանն Ա՛հագն, և եցոյց նոցա զիւր մտերմու-
Թիւնն առ նոսա՝ բազում վկայիւք։

Նկն և Թագաւորն Դաւիթ և այլ իշխանքն. և կա-
պեալ զամենեսեան ուժգին ըստ օրինի իւրեանց զձեռս
և զոտս բարակ չուանօք. և Թողեալ այնպէս կապեալ
զերիս աւուրս՝ ձաղէին և անարգէին զնոսա, վասն հը-
պարտութե և ապստամբ խորհրդոյն. և ապա առեալ
զերիվարս և զգինս գլխոց նոցա՝ Թողին զնոսա. և ին-
քեանք յարձակեցան՝ ի կողմանս Ղրաց՝ ի վերայ բազում
գաւառաց՝ որք ապստամբք և որք ոչ, և զբազումս կո-
տորեցին, և զևս բազմագոյնս գերի վարեցին զարս և
զկանայս, և զմանկունս գետամոյն առնէին անթիւ՝ ի
բազմութենէ. և այս գործեցաւ՝ ի վեցհարիւր ինանաւն
և ութ Թուին Հայոց։ Յետ այսորիկ մեռաւ իշխանայ
իշխան Ա՛հագն, և Թագեցաւ՝ ի Պղնձահանքն՝ ի գե-
րեզմանի հօր իւրոյ Խանդէ. և ետուն զիշխանութիւն

[1] Տպ. ըստ ասին նմա։

նորա Ո՞ւաքարէ որդւոյն Շ՞ամնհարի հօրեղբօրորդւոյ Լւանէ, զի Լւազն որդի ոչ ունէր, բայց մի դուստր եւ րախայ, և՛ պոռնկութենէ որդի մի երախայ. զոր յետ մահու նորա առային Թէ՛ի նմանէ է, զոր առեալ քոյր նորա մնուցանէր. և ապա հանեալ՛ի Ո՞ւաքարէէ՝ եւ տուն կնոջ Լւազին՝ որում անուն էր Գ՞ոնցա։

Խ Զ

ՎԱՍՆ ԴԱՒԹԻ ՄՈԼՈՐԵՑՈՒՅՑԻ

Կատարած աշխարհիս մօտեալ է, և վասն այնորիկ կարապետք Լեռին բազմացան, որպէս յառաջագոյն ասաց կենարարն, Թէ մերձ՛ի կատարածն յարիցեն սուտ քրիստոսք և սուտ մարգարէք, տալ նշանս և առնեստս դիւականս, մինչև մոլորեցուցանել Թէ հնար ինչ լոկ և ընտրեալն։ Մերձ՛ի վեցհարիւր իննսուն և ինն Թուականիս Հայոց եղև այսպիսի ինչ. զի համբաւ հանին Թէ՛ի սահմանս Խաչենոյ կարկուտ եկն և խառն ընդ կարկտին ձկունք բազումք անկան յերկիր, չափ Թզոյ միոյ. մեք աչօք ոչ տեսաք, բայց բազումք էին որ հաւատարմացուցանէին Թէ ականատես լեալ եմք։ Ընդ այսոսիկ և միւս ևս յոդուածք բանի հանգոյն առասպելեաց, ասէին. Թէ յերզր ծովուն Գեղամայ աւան մի է Կոթ անուն. ՛ի սահմանս այնր գեղջն հուպ՛ի լեառն՝ գտին մարդ մի հսկայաձև մեռեալ և կիսաթաղ, նոր հանդերձ ունելով և կօշիկս նորս, և հանդէպ սրտին ծակ, որպէս Թէ խոցած է աշտէիւ, և՛ի վերայ սակաւ մի բանալակ. և յոյժամ առին զբամպակն՝ սաստիկ վիժէր արիւնն, և իբրև դնէին՛ի վերայ՝ դարձեալ արգելոյր արիւնն, և Թէ այլ նոր բամպակ դնէին և ոչ զիւրն՝ նոյնպէս հոսէր՝ արիւնն, մինչև դնէին զառաջինն. զայսոսիկ յոլովք շաղակրատէին, Թէ ճշմարիտ և Թէ սուտ մեք ոչ գիտեմք։ Այլ այս եղև ստուգութեամբ. զի՛ի սոյն ամի յարեաւ մոլոր ոմն Դաւիթ անուն, դիւական հոգւով շարժեցեալ՝ հանպոյ Յուդայի և Մահդայ մոլորեցուցչին։

Պետք մի է՝ ի սահմանս Վերջաբունից ծովուն՝ ի կողմն Խաչենոյ, հուպ՝ի բերդն Հանդաբերդ, ուր ջերմուկն է Ծար[1] անուն. ի նմա էր այրս այս՝ ի ջքաւորաց և ի տնանկաց. պահեր զջրաղաց նոցա, և յայնմանէ կերակրեր ինքն և կին և որդիք նւր. և՝ի գիշերի միում երևեալ նմա սատանայ՝ ի կերպս լուսոյ և իշխեաց ասել, Թէ ես եմ Վրիատոս, և եկի առնել զքեզ ինձ քարոզ, և ածից առ քեզ յամենայն կողմանց զմարդիկ. և ոչք գան առ քեզ՝ ի պետս բժշկութեան՝ հանարձակ դիր զձեռն քո՝ ի վերայ նոցա, և առ զպերան ձիաձահանայ գեղջկ և արա խաչ, և կանգնեա՝ ի դուրս եկեղեցւոյն. և զայլ ամենայն հնարս խորամանկութեան ասացն նմա: Եւ նա սկսաւ քարոզել, Թէ Վրիատոս երևեցաւ ինձ և ասաց, Թէ զարձո զաշխարհս, և բժշկութիւնս կատարեա: Եւ յարեցան՝ ի նա այլք. և նոքա սկան հաւաքել զնա, և կոչէին զնա Վասիլիթ միայնակեաց և աքանչելագործ. և առեալ բռնութեամբ զպերան ձիաձահանայ՝ ի տանէ իւրմէ՝ արարին խաչ բարձրաբերձ, և կանգնեցին զնա՝ ի դուռն եկեղեցւոյն, և վենին նմա զուարակս, և տային՝ ի մոյն և յոսկեայսն զուարակին, և՝ ի տաշեղէ խաչին և՝ ի հատէ կոկեկին՝ որ՝ ի ջաղացքն՝ որպէս նշխարս օրհնութեան ամենայն ուխտաւորաց, որք գային յամենայն կողմանց: Վանդէ նոյն քանաարկուն՝ որ յորդորեացն զնա գային՝ դրդեաց և զամենայն գաւառս երթալ՝ ի հաւքսան այն, արք և կանայք և մանկտի, նա և երկոունք ևս, և ազատմարդիկ, և ախտացեալք և ամենայն ցաւագնեալք. և նա զառաջինն կեղծաւորեալ ոչ ինչ առնոյր յուժեքէ, ըստ նմանութեան դերաքրիստոսին. այսպէս քարոզէր, Աւ՛ վ եմ ես, ապքատ մեղաւոր. բայց Վրիատոս հրամայեալ է ինձ քարոզել, զերկուշաբաթի օրն պահեցէք. յիշեցք մի տայք. և եկայք համբուրեցէք զիս, և Թողեալ լինին մեղք ձեր և ապրին ձեր, մինչև յեօթն ապր: Եւ յորժամ դիւահարք գային՝ առնոյր բերը մի հատ հարկանէր անխնայաբար, և կոխէր ոտիւք ըզվողն և ասէր. Ա՛ւ հրն, ել հրն. Վասիլիթ միայնա-

1 ՑԵլս սահմանաց Սոթից գաւառի Սիւնեաց, և՝ի գլուխ Արցախոյ նահանգի:

կեացն հրամայէ քեզ. և ասէր յայրն այսակիր. Ահա այլ մի երկնչիր, բժշկեցար. և նա երթայր զնոյն չար ունելով ևս բազմապոյն ի նմա. և ոչք հարցանէին՝ ոչ իշխէր ասել թէ ոչ բժշկեցայ. քանզի պատուէր տայր՝ թէ յորժամ ասես ոչ բժշկեցայ, առ ժամայն լկիս ի դևէն, և նա թէպէտ ոչ իշխէր ասել, արդիւնքն իսկ յայտ առնէին, որ հանապազ լկէին. որ յառաջն ամսով և շաբաթով կրէին զնեղութիւնն, յետ գնալոյն առ նա՝ յամենայն աւուր չարչարէին: Եւ լեկրոտք [1], որ երթային առ նա՝ ասէր, թէ խաղացէք առաջի իմ, և պարեցէք. և նոքա առնէին զայս յօժարութեամբ. քանզի այս ապգ դևաց [2] ախորժեն զխաղ և զպար. և ասէր. Արկայք համբուրեցէք զիս և զկին իմ, և երթայք, և այլ մի երկնչիք: Եւ զօդեացն ասէր. Ցաւդ չկայ հրամանս Յստուծոյ բժշկելոյ, բայց զմեզս քո թողում, զի եկիր առ իս: Եւ զկարկամեալս և զկըզացեալ՝ հրամայէր արանց չորեցունց՝ առնել երկուցն զգլուխն, երկուցն զոտն. և ասէր, ձգեցէք և պարզեցէք. և նոցա ձգեալ ուժգնակի՝ ձարձատէին ամենայն յօդուածք մարմնոյն. և այրն վայէր ուժգնակի առ վըտանգի ցաւոյն. և նա ելեալ կոխէր զթիկունս և զմկանունս, և ցաւագնեալն անշնչանայր իբրև զմեռեալ և կամ մեռանէր իսկ. և նա ասէր վանն այնոցիկ՝ որ մեռանն, եթէ չափ ժամանակի դորա լցեալ էր և չէր մարթ կեալ դմա, բարւոք է զի մեռաւ, և հանգչի ի վշտացն. և ոչք ապրէին՝ կիսամահ ճնացեալք ոչ բըժշկեալ, ասէր վանն նոցա, թէ Ոչ ունիմ կատարեալ հաւատ առ մեզ, վասն այն ոչ բժշկին: Ապստահարացն զորոց զփոզան կոխէր, և նոքա մեռանէին, վասն նոցա ասէր. Ա՛ա վաղուց էր մեռեալ, և այն որ շրջեցուցանէր զնա՝ դևն էր, զոր հանէ այժմ: Եւ կուրացն ասէր. Ո՞ր կամիս, բանամ զաչսդ թէ թողում զմեղսդ. և գիտեմ որ ժամանակդ մերձ է, և վաղվաղակի մեռանիս. և նա ասէր, թէ այդպէս է՝ լաւ է ինձ որ թողուս զմեղս իմ. և նա ասէր, թողեալ եմ զմեղս քո: Եւ այսպէս ամենեցուն զմիտս լինքն ձգէր. մինչև այնքան

1 Ա. Գ. Ջէկոբ. Թուխն ուռնա- ռնալք կամ պռոտպլուտք:

2 Կաւ ևս ասել՝ դիւահարաց:

լինէր առնա ժողով բազմութեան, զի տեղիք վայրացն
ոչ բաւէին տանել զմարդիկ: Եւ զի ամառնային էր
ժամանակն, ՚ի մարգս և ՚ի սարս ելեալ՝ անդ դադա-
րէին զգիշերն, և գործէին զամենայն չարիս. զի կա-
նայք ոչք իշխէին չնալ՝ յարանց կամ ՚ի ծնողացն՝
՚ի տան իւրեանց, ելանէին ուխտիւ պատճառաւ, և
ընային համարձակ ընդ որս և կամէին. նոյնպէս և արքն
չարք զնոյն առնէին՝ որոց ցանկային: Եւ գնային բա-
զում պատարագօք, ոսկով և արծաթով, զուարակաւ
և ոչխարաւ. և որք երթային և գային՝ զոչ գնացեալսն
կշտամբէին, և գարշէին ՚ի նոցունց՝ որպէս ՚ի մեղաւո-
րաց և յանարժանից նորա տեսութենէն: Ել և երի-
տունք եկին և յարեցան ՚ի նա, ընչից և զօշտութեան
աղագաւ, և կային նմա ՚ի սպասու, լուանալով զոտս
նորա, և զջուրն ցանէին ՚ի վերայ ինքեանց և ժողո-
վըրդոցն բազմութեան. և ինքն կեղծաւորեալ ոչ ինչ
առնոյր յումեքէ. այլ ՚ի ձեռն քահանայից և արբանե-
կաց իւրոց առնոյր: Եւ տէր գեղջն քանզի Պարսիկ էր,
առնոյր զբաժին իւր ընչիցն. քանզի յոյժ տանէին բա-
զումք և յօժարութեամբ տային: Եթէ ոք ՚ի վարդա-
պետաց կամ երիցանց արգելոյր կամ խափանէր զնոսա
յերթալ՝ հայհոյէին և բամբասէին իբրև զնախանձոտս և զյաչախոտս, թէ ինքեանք ոչ կարեն գործել
զգործս նորա, և ոչ զսրբոյն բարեգործութիւնս կա-
լին: Այսպա գրեաց գիր սաստից և մեղադրանաց մեծ
վարդապետն Պաղտան՝ որ բնակէր ՚ի վանս Խորանա-
շատոյ, հանդէպ Նրդեվանից բերդին, թէ ընդէր զե-
րեւումն գիւրին Քրիստոսի համարիք՝ ոմն քրիստոնեայք,
զի և սատանայ սովոր է կերպարանիլ ՚ի հրեշտակ լու-
սոյ. և բանագրեաց զայնոսիկ, որ ՚ի պեղծ մոլ անտի
կերեալ էին, և կամ ունէին նշխար ՚ի տաշեղէն և ՚ի
կոբեկոյն, և մի քառասուն պահք, հինգհարիւր ծունր
եդ ՚ի վերայ նոցա, և ապա արժանի լինել սուրբ խոր-
հրդոյն: Գրեցաք և մեք նմանապէս նովին սաստիւ և
բանագրանօք, և առաքեցաք յոլով տեղիս. նոյնպէս և
եպիսկոպոսն Խաղբատայ գրեաց տէր Խամազասպ. եկն
և Գադի վանից եպիսկոպոսն տէր Գրիգորիս, և վար-
դապետն Պաղտան, զոր Յօժար-որդիք կոչէին, բա-
զում քահանայիւք ՚ի գիւղն այն, քանզի նոցա վիճա-

կին էր, խաչիւ և աւետարանօք, և արարեալ զիշերա-
պաշտօն, և կանգնեցուցին զայրն խաբեալ՝ ի միջի, զի
թերևս ելցէ՝ ի նմանէ ոգին պիղծ. և յորժամ հար-
ցանէին թէ զինչ տեսանես, ասէր. Թէ \,տրք անկանիմ
՝ի վերայ երկրի բերանախվայր՝ յերկրէ աստի երևի ինձ
և խօսի ընդ իս:

Պատ ձեռն արկեալ եպիսկոպոսին և երիցանց կա-
մէին կործանել զնաւն՝ զոր կանգնեաց մոլարն. յարեաւ
ամենայն ամբոխ բազմութեանն սրովք և բրօք, կամէին
սպանանել զնոսա, և նոքա արտաքս ելեալ յամբոխէն,
անիծուք սաստիկ նզովէին զյանդգնողսն: Պատ ոմանք
՝ի նոցանէ զղջացեալք չոգան աղաչեցին զեպիսկոպոսն
և զերիցուն՝ արձակել զնոսա՝ ի կապանաց անիծից, և
զայրն ետուն՝ ի ձեռս նոցա. և մինչ տանէին զնա՝ հան-
դիպեցան արք Գառնեցիք, որ գային՝ ի մեծ դրանէն.
աղաչեաց այրն զնոսա, զի խնդրեսցեն զնա յեպիսկո-
պոսէն. քանզի ասէր զինքն ազգակից նոցա և՝ ի Գառ-
նոյ. զի այսպէս ասէր նա յառաջն ժողովրդեան, Թէ
Արշակունեաց ազգէն եմ ես, և պարտ է որդւոց ի-
մոց՝ միոյն լինել Թագաւոր և միւսոյն կաթուղիկոս, և
սրբոյն Սահակայ տեսիլն [1] ՝ի վերայ նոցա կատարել:
Պատ ետ զնա եպիսկոպոսն ցնոսա, երդուեալ պահան-
ջեալ, զի մի այլ մոլութեամբ զմարդիկ. և այսպէս հա-
զիւ ընդ միջաւ չարն:

Խէ

ՎԱՍՆ ԴԻՒԻՆ՝ ՈՐ Ի ԿԵՐՊԱՐԱՆՍ ԿՆՈՋ ԼԵԱԼ՝ ԽՕՒՆԱԿԵՐ ԸՆԴ ՄԱՐԴԻԿ

Պատմեաց մեզ վարդապետն Հովսէփ [2], որ ընկեաց
զվանս զերեզմանն Գադէոսի առաքելոյն Արտաւազդ
գաւառի, յետ աւերածոյն և ամայի լինելոյն, Թէ չո-
գայ ես՝ ի գաւառն Գողթան, ՝ի պետս ինչ իրաց. ա-
սացին ինձ՝ ի գիւղ մի, Թէ է աստ այր մի՝ որ ունի կին
դև, և մեր անհաւան լեալ ասացելոցն՝ չոգաք՝ ի տուն

1 Տպ. փեսէանն Տարն է՝ ի վերայ նոցան:

2 Աշակերտակից հեղինակին:

առն և ոչ տեսաք զդևն. և իբրև հարցաք զայրն՝ նա ասաց զպատճառն. Թէ՝կին ունէի ես և մեռաւ, և Թող ինձ մանկունս մանուն, և ես նստեալ լայի Թէ ո՞նու֊ցանէ զսոսա ինձ: Եւ ահա երևեցաւ կին մի յանկար֊ծակի և ասէ. Մի լար, ես եղէց քեզ կին, և անուշիկ զմանկունսն. և յայնմհետէ հանապազ էր ՚ի տան ի֊մում, և առնէր մեզ կերակուր, և զամենայն պէտս մեր ընու, և սաստիկ սիրով հարեալ եմ ՚ի սէր նորա, և հանապազ խառնակի ընդ իս. և զշաբաթ ամենայն անզործ կայ և յաւուր հինգշաբաթի առնէ մանած ե֊րեք լիտր: Եւ իբրև հարցի Թէ ո՞ւր է այժմ. և նա մատամբն եցոյց Թէ աւանիկ է, երևի ինձ և մանկանց իմոց, և ոչ այլ ումեք. և յոլով ժամանակք են՝ զի քնա֊կեմք ՚ի միասին: Եւ ես յարեայ աղօթել և աւետա֊րան ընթեռնուլ, զի Թերևս հալածեսցի ոգին մեղսա֊սէր և պեղծ. իսկ նորա ոչ ինչ փոյթ արարեալ զայն֊մանէ, այլ նստեալ ծիծաղէր, որպէս այրն պատմեաց: Եւ մեր ոչ տեսեալ զնա՝ ելեալ գնացաք:

ԽԸ

ՎԱՍՆ ԽՆԴՐՈՑՆ ՈՐ ԵՂԵԻ Ի ՄԷՋ ՔՐԻՍՏՈՆԷԻՑ ՎԱՍՆ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՑՆ ԱՍՏՈՒԾՈՑ, ԹԷ Ի ՀՕՐԷ՞ ՄԻԱՅՆ ՊԱՐՏ Է ԱՍԵԼ ԹԷ Ի ՀՕՐԷ ԵԻ ՅՈՐԴԻՈՑ

Ի Յուվմայեցւոց ազգաց շարժեցաւ այս խնդիր ՚ի մէջ քրիստոնէից. քանզի գրեաց փափն Յուռմայ[1], առ մեծ կաթուղիկոսն Յայոց տէր Կոստանդին, որ յայնմ ժամանակի նստէր ՚ի Կլայ–Հռովմէական, քանզի անդ էր աթոռ սրբոյն Պետրոսի՝ ՚ի ժամանակս Պետրոսի և Պաւղոսի՝ երկուց եղբարց, որք էին յաշակեր֊տեաց, արք դիտանականք և վեհժխնդիրք օրինացն Մո֊ւսէսի. Թէ որպէս խոստովանիք դուք զամենասուրբ Յոգին Աստուծոյ, ՚ի Յօրէ միայն բղխեալ և երևեալ, Թէ ՚ի Յօրէ և Որդւոյ. քանզի Յռոմայեցիք այսպէս խոստովանին ՚ի Յօրէ և Որդւոյ:
Պատասխան և առ Թագաւորն Յեթուում գրեցին և

1 Ինոմվկենտիոս Դ:

պատասխանի խնդրէին։ Եւ նոցա ժողովեալ զնմանատուն իւրեանց աշխարհին՝ ի քաղաքն Ասիա որ ի Ափեսիկիա, ի Հայոց, Յունաց և Ասորւոց, և այլազգեաց քրիստոնէից ողբ գոան անդ. Յոյնք՝ ի Հօրէ միայն ասացին, և Ասորւոց ոմանք այլ. իսկ Հայոցն ժողով գրեցին՝ ի կողմանս արևելից՝ ի մէջ Ա՛եծ Հայոց, և առ գիտնական վարդապետն Ա՛նական, քանզի՝ ի ժամանակին երևելի էր, և առ Յովսէփ[1], և առ այլս, թէ նոքա զինչ ասեն. և ապա պատասխանի արասցեն Հռոմայեցոցն։ Եւ նոքա քննեալ զաստուածաշունչ գիրս առաքելոց, մարգարէից և սրբոց վարդապետաց եկեղեցւոց, ողք մարգրեցին զեկեղեցիս Հեթանոսաց, ըստ պիտոյին վարեցեալ երկոքումք ձայնիւք, և ուղղակի զՀռովմայեցւոց խոստովանութիւնն. և լի են ամենայն աստուածաշունչ գիրք այսպիսի ձայնիւք։ Որպէս գրեաց վէմն հաւատոյ երանելի առաքեալն Պետրոս, որ վասն ճշմարիտ հաւատոյն երանեցաւ՝ ի Տեառնէ, թէ Յորում և յորպիսի ժամանակի գուշակեր՝ ի նոսա Հոգին Քրիստոսի. և Յովհաննէս աւետարանիչն ասէ. Որ զՀոգին Քրիստոսի ոչ ունի՝ նա չէ նորա։ Եւ մեծն Պօղոս. Առաքեաց Աստուած զՀոգի Որդւոյ իւրոյ՝ ի սիրտս մեր, որով աղաղակէ Ա՛բբա, Հայր։ Եւ այլ բազում այսպիսիս՝ ի գիրս առաքելոց։ Իսկ սուրբ և Հաւատոյ ուսուցիչն մեր Կիրիպոր, (որ) ուսոյց մեզ զՀաւատոյ խոստովանութիւն, այսպէս ասէ. Հայր յինքենէ, Որդի՝ ի Հօրէ, սուրբ Հոգին՝ ի նոցունց էութենէ։ Իսկ յաղթող սպառազէնն Քրիստոսի Ա՛թանաս՝ ընդդէմ Ա՛րիանոսացն այսպէս քարոզէր և ուսուցանէր. Ա՛նակիզքն Հայր ոչ յումեքէ, Որդի՝ ի Հօրէ, և Հոգին սուրբ՝ ի նոցունց էութենէ. զի երկրորդէ Սոկրատ պատմագիրն։ Եւ Կիրիպոր աստուածաբան՝ ի Ճառին՝ որոյ սկիզբն է[2] Նրեկ զլուսաւոր պայծառութեանցն զօր տօնեցաք, ասէ զսաղմոսն առեալ, Ի քէն է տէր աղբիւր կենաց և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս. այս է Հոգւոյն Որդի. և դարձեալ՝ Որ՝ ի Հօրէ ելանէ, որ ըստ որում անտի առաքի՝ ոչ է ստացուած, ըստ որում ոչ ծնեալ՝ նեալ գոանի առ մեզ, և ոչ յառաջերեալ վկայութիւնդ։

1 Վերոյիշեալն։

2 Ճառս որ՝ ի Մկրտութիւն Տեառն՝ ոչ բովանդակ Թարգմա-

ոչ որդի, և ըստ որում չոչ ծնեցեալ և՛ ի ծնեցեալ՛ ի մէջ Ուստուած է: Եւ Գրիգոր Նիւսացի, և մեծն Բասիլիոս, և Եբբա Նփրեմ, և Յովհան Ոսկեբերան, ՛ի բազում տեղիս յիւրեանց գիրսն. զոր թէ աշխատութեամբ ոք խնդրէ՝ յոլով գտանէ. և Աեբիանոս Նեստոր եպիսկոպոսն՝ ի Ճառին որոյ սկիզբն է՝ Ի մէջ քրիստոսասիրաց, զԱրիստոսէ խոստացեալ Ճառել՛ ի կատարած ասէ. Ընծային Ուստուծոյ, և ծնեցեալն՛ ի նմանէ՝ Որդւոյն միածնի, և տուրբ Հոգւոյն՝ եղելին՛ ի նոցունց էութենէ, երիցն՛ ի միում աստուածութեան, ամենայն փառք յաւիտեանս. ամէն: Եւ Ոսվէս Խորենացին ասէ՛ ի մեկնութեան քերականին. Տուրբ Հոգին առինչունակ է, զի որում Հոգի է. զի՛ ի դէմս Հօր և Որդւոյ ասի Հոգի: Եւ Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոսն ասէ[1]. Զանզի բղխէ՛ ի Հօրէ նոր կանէ անհատաբար, զաղարէ յաղբեր. ՛ի Որդւոյ ելանէ անմեկնելի խոհականագոյն գետ արփիաբաշխ, լուսապարգև, աստղական զծոմն ունելով, զհրեշտակաց և զմարդկան գիտութիւն ունելով. տիւնա, զի հաստատ Որդին նոյնպէս զՀայր. զի Թէպէտ սուղ որդի, զի սկիզբն նոյն փարթամ, զի պատճառ է Հոգւոյ ելութեան. Հոգին տուրբ հարուստ, զի պատճառ է մարգարէական տաղից: Եւ սքանչելին Եպիփան՛ ի գիրս մեկնութեան Պաղեստացի[2]: Եւ զլուխ բանիցս՝ ամենասրբուհի Աստուածածինն Մարիամ՝ ՛ի բանն հաստատ զոր հրամայեաց աւետարանչին Յովհաննու ուսուցանել Աքանչելագործին Գրիգորի, ասէ. Ի Աստուած Հայր Անճին կենդանւոյ, իմաստութեան անճնաւորի և զօրութեան, և կերպարան էութեան. կատարեալ կատարելոյ ծնօղ, Հայր Որդւոյ միածնի, տէր միայնոյ, Աստուած Աստուծոյ, կերպարան և պատկեր աստուածութեան. բանն Աստուած ներգործական յամենայնի, և եղելոցս ամենայնի բովանդակիչ, և զօրութիւն անսահմանելի, և ամենայն ստացականացս արարիչ: Որդի Ճշմարտի Հօր, անտեսանելի անտեսանելոյն, անապականին անապական, անմահ անմահի: Ի

1 Եւ սա ՛ի մեկնութեան քերականին:

2 Պակասէ վկայութիւնն:

Հոգի սուրբ առ ի Աստուծոյ զէութիւն ունելով. և ի ձեռն Որդւոյ երևեալ և յայտնեալ մարդկան, պատկեր Որդւոյ. կատարեալ կատարելոյ, կեանք կենդանեաց պատճառ. սրբութիւն և սրբութեան պարգևիչ. որով յայտնի Աստուած Հայր, որ ի վերայ ամենեցուն և յամենեսին, և Աստուծոյ որդին՝ որ ի ձեռն որոյ առնայնք: Երրորդութիւն կատարեալ՝ փառօք, միջընջենաւորութեամբ և անբաժանելի ազգակցութեամբ, և անօտարանալիք: Ոչ ապա ստացական ինչ, և ոչ ծառայ Երրորդութեան, և ոչ ի ներքսաճական, որպէս թէ յառաջագոյն ոչ գոլով և յետոյ ի ներքս մտեալ: Ոչ նուազ Որդին ի Հօրէ, և Հոգի՝ Հօրէ. անայլայլելի, անփոփոխելի, նոյն ինքն Երրորդութիւն միշտ:

Աչխատի խոստովանութիւնս ընդունելի և յեկեղեցիս Հայաստանեայց, և յոգիս Ալիւրակոսի, և համարձակ արժան է քարոզել զՀոգի ի Հօրէ ելեալ, և Որդւոյ երևեալ: Այս պատասխանեցաք ըղձից արևմտից, և մեք ի սոյն հաւատ հաստատեալ կամք ընտրօք Երրորդութեանն սրբոյ, որում փառք յաւիտեան. ամէն:

ԽԹ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏՈՑ ՈՒՂՂԱՓԱՌՈՑ

Հաւատամք ի Հայր և Որդի, և ի Հոգի սուրբ, երիս անձինս կատարեալ, և մի աստուածութիւն փառաւորեալ, սուրբ և զուգափառ Երրորդութիւն. անսկիզբն և անվախճան, աներբ, անուր, միշտ անկարօտ և բերկրեալ, ամենայնիւ կատարեալ, և ի բարւոջ իմացեալ, զոր բնաբար ունի, և աննիւազապէս (տայ) կարօտից, Երրորդութիւն կատարեալ, անաճելի[1] և անհնուազ: Ընդամբ բաժանեալ, և ի զի և անուամբ, և ի միութիւն կացեալ, և կայ փառաւորեալ և փառաւորի ի և ի բնութեան աստուածութեան, ի զօրութեան, ի կամն, ի իմաստութեան, ի գործն, ի մեծութիւն,

1 OO. անճառելի:

և մանաւանդ յանհասուԹեանն և յանասելի ողորմուԹեանն ։

Հայր անծին, Որդի ծնեալ ՚ի Հօրէ՝ անախտ և անմարմին, բնուԹիւնակից Հօր նախ քան զժամանակս ։ Հոգին սուրբ բղխումն ՚ի Հօրէ, և երևումն Որդւոյ, ոչ ըստ Որդւոյ ծննդեամբ, այլ յառաջ եկեալ աղբիւրաբար, ինքեան միայնոյ քննելի օրինակին, և արարածոյ անպիտելի. միշտ ընդ Հօր Որդի և Հոգի ։ Հոգին որպէս Հօր՝ նոյնպէս և Որդւոյ, ոչ փոխեալ Հայր յՈրդի կամ Որդի ՚ի Հոգի, կամ Հոգին յՈրդի և ՚ի Հայր ։

Հայր ունելով զանձն և զանուն հայրական, և Որդի ունելով զանձն և որդիական անուն, և Հոգի ունելով զանձն և զանուն հոգիական. անդրադարձուԹիւն ոչ ունելով, կամ փոխոխումն անուանցն և անձանցն. այլ Հայր միշտ Հայր, Որդի միշտ Որդի, և Հոգի միշտ Հոգի. յոր հաւատամ ։ Յայսմանէ և ՚ի սկզբոյ եկեալ Որդւոյն անձամբ չափ, աւետեաց հրեշտակապետին Գաբրիէլի ՚ի կոյս Մարիամ, որ սուրբ էր հոգւով և մարմնով, և ՚ի պատճառս փրկուԹեան մերոյ մարդացեալ ՚ի նմանէ՝ սահմանաւ բնուԹեանս մերոյ, հոգի, միտք, շունչ, մարմին որ ինչ և է կատարեալն մարդ մեղուցեալ բնուԹեանս Ադամայ, ուստի Մարիամն էր. զոր առեալ աստուածագործեաց, առանց շփոԹման և այլայլման, անքննին և անձառելի խառնմամբն, և եղև յերկուց կատարեալ բնուԹեանց՝ յաստուածայնոյն և ՚ի մարդկայնոյն՝ մի անձնաւորուԹիւն կատարեալ, անայլայլելի և անբաժանելի բնուԹեամբ. ոչ փոխելով մարդկային Թանձր և յօդական բնուԹիւնս՝ յանյօդ և պարզական աստուածուԹեանն բնուԹիւն, զիւրն ոչ կորուսանելով. և ոչ պարզ և անմարմնական բնուԹիւնն Աստուծոյ՝ խառնելով ընդ բնուԹեան մարմնոյ՝ վրիպեաց յիւրն յաւէտ պարզուԹենէն. Թէպէտ և ասի յաղագս անքակ միուԹեան՝ անմարմնոյն մարմնանալ, և բանին Թանձրանալ։ Մնաց միածինն մի որդի, մի անձն, մի Քրիստոս, և Հնմարտապէս՝ յերկուց միացեալ՝ մի բնուԹիւն, մի կամք, մի ախորժակք, մի գործ[1].

1 Կամք և գործք առանձինն ըստ երկաքանչիւր բնուԹեանց, այլ հաւանուԹեամբն մի ։

մի ծնունդ կուսութեամբ, մի մայր առանց հօր, որ և նախ քան զյաւիտեանս առանց մօր ծնեալ։ Այս խոստովանիմ զմայրն Աստուածածին մինչև յաւիտեան, նովին մարմնովն և որ զհետ ծննդեանն։ Զամենայն տնօրինականս խոստովանիմ գործ Աստուծոյ, զխոնարհագոյնս և զբարձրագոյնս, և զկիրսն անբամբասելի՝ որ վասն մեր կրեաց՝ ոչ բաժանեմ, այլ մի յատուկ ասեմ ի տէրն իմ. ոչ իմանամ զչիութիւնն[1]։ Այս նոյնպէս զկիրսդ խաչին խոստովանիմ Աստուծոյ խաչ և մահ. ոչ էական բնութեանն ասեմ մահ կամ ի մարմնոյն բաժանումն, այլ զիմ բնութիւնն միացեալ յաստուածութիւնն և աստուածացեալ Աստուած խոստովանիմ. որով մեռաւ անմահն, զբանական հոգին առանդելով ի ձեռս Հօր Աստուծոյ։ Այս աստուածութիւնն ոչ բաժանեալ ի հոգւոյն և ի մարմնոյն, միաւորեալ անբակտելի. և ըստ որում և զդժոխս աւերեր հոգւովն և զմահ սպանաներ, և մարմինն լուծաներ զապականութիւն որպէս զԱստուած և զԱստուծոյ մարմին. ընդ ամենայն գերեզմանս արձակելով Ճառագայթս, յարուցանելով[2] զբազումս, գիտելով զսահմանեալ ժամանակն ի լանջս երկրի, հզօրագոյն թուովն յառնէր, ոչ միայնաբար ըստ Յունանու ի ձկանէն, այլ լրմամբ հոգւոյն մահակուռ՝ որ Ադամայ ի դժոխս, և յոլովիւք մարմնովք հողացեալովք ի գերեզմանաց. ելանէր կուսութեամբ անլոյծ կնքօք ի գերեզմանէն՝ որպէս յարգանդէն Մարիամու. և վերացեալ մտանէր յերկինս կուսութեամբ անձեղքելիս, որպէս ի վերնատունն՝ դրամբք անբացիւք, զի յայտ լինի եթէ ի վեր է քան զբնութիւն մարդոյ։ Զի մարմնոյ բնութիւն՝ մահկանացու, ապականացու և ախտալի է, թէ յատկացի ըստ ինքեան. և ընդ մարմին ոչ կարէ մտանել անճառնօթապէս, այլ տէրունականն և տէրն լիով ունելով զՀնմարիտն մարդ՝ իւրովն սահմանովն, սակայն շողացեալ և փայլատակեալ աստուածութեամբն ներդործէր զվայելչականն Բանին, զոր շօշափեցին ձեռօք դասք առաքելոց, և տեսին երանելի աչօք զանտեսանելին տեսա-

1 Տպ. Ցաւելու. և նովին չի-մացոյն և պատճն չիութեան։

2 Օ. մեր պակասորդք, յաւելաք ըստ տպագրին։

կացեալ։ Պաղոց ի նովին մարմնով և փառօք Հօր՝ դա-
տել զկենդանիս և զմեռեալս, որոյ Թագաւորութեանն
ոչ գոյ վաղճան։

Հաւատամ ի նոյն Երրորդութենէն եղեալ յոչէից
զեղեալքս ամենայն. և զի՛ դամ պատկերեալ բարւոյն,
և յանցանօք լուծեալ ի մահ անձնիշխան կամօք, և ի
նոյն արարչէ վերստին նորոգել տնտեսութեամբ միոյն
միածնի, կամօք Հօր և Հոգւոյն։ Հաւատամ զհամե-
րէն յարութիւն բանականացս՝ որ լի՛նդամայ, ի նոյն
զօրութենէ ստեղծողին և նորոգողին։ Հաւատամ յալ-
դար իրաւունս՝ յաւուրն դատաստանին ըստ արժա-
նեաց, և ի հատուցումն յաւիտենական տանջանաց և
կենաց։

Այս է մերոյս հաւատոյ համառօտ խոստովանու-
թիւն, և ամենայն ուղղափառաց. որով մանաւանդ
ես զմեզ Տէր ի ընորհս ողորմութեան իւրոյ տովիմք
կեալ յաշխարհի անարատ կենցաղավարութեամբ և
բարի գործովք, և այսու դատաստանի գնալ առ
Քրիստոս յոյն ամենեցուն, և մեր վստահութիւն.
և արժանի լինել տեսանել համարձակութեամբ զերա-
նելի և զամենատուրըն զՀրորդութիւնն՝ յերից ան-
ձինս յատկացեալս և՛ ի մի աստուածութիւն և տէրու-
թիւն, և՛ ի Թագաւորութիւն փառաւորեալ. և ար-
ժանացուսցէ զմեզ և զամենայն ձեմարիտ հաւատա-
ցեալն անձառ բարեացն և անպատում ուրախութե՛ց,
զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և՛ ի սիրտ մար-
դոյ ոչ անկաւ, զոյն պատրաստեաց Աստուած սիրելեաց
իւրոց։ Աղ զայս դատանութիւնս յոլով մանն աշխար-
հիս ունի, և պահէ սրբապէս քաղաքավարութիւ՛ն՝ զոր
պարտ է յամենայն քահանայապետութեան տալ զայս
դատանութիւն մեծի քահանայապետին, և պահանջել
յայնցանէ՝ զորս ձեռնադրելն կամին։ Ձի ապա յանուա-
նէ նզովէ զգայլսն ապականիչ՝ զամենայն հերետիկոսա-
կանն՝ հարիւր չիսուն և ինն հերձուած, մինչև գայ-
սօր ժամանակի, և այլք որք լինին նման սոցա, և դա-
տանել զամենայն ուղղափառան զհովիւս եկեղեցւոյն,
որք ընդ Ձմարտութիւնն առաջնորդեցին հօտին Քրիս-
տոսի, և յարօտս կենսաբերս մնուցին. և ապա իջանէ
Հոգին յայնպիսի սեղանն սրբութեան, և հանդչէցի

յընծայեալն՝ յայն որ գիտէ Ճանաչել զաւարտն և զընթանին, որպէս զգիտնական և զիմաստուն հովիւս կացուցանել, որ կարասցէ՛ի կեանս կոչել զարժանիս կենացն, այսինքն առ Ա՛ստուած ածել։ Ո՛ի այս է պարկիսպ պահպանութեան խաչիւ և արեամբ գնեալ հաւատացելոց, ոչ միայն՛ի չարեացն՛ի բաց կալ, այլ և բարեացն զհետ երթալ. ՛ի Քրիստոս Յիսուս՛ի տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն։

Պրեայ և մեծ վարդապետն Ա՛նանիա, թէ որպէս մարթի է խոստովանել և կամ անել զսուրբ Հոգին՛ի Հօրէ և Ա՛որդւոյ։

Ծ

ԽՐԱՏ ԴԱՒԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

Հոգւոյնէ խօսել զՀոգւոյն՝ հոգևորացն է. իսկ եթէ ոք և որ՛ի ձեռն[1] հաստատութեան է յօժար առ՛ի քաղել, ամառան խզուզին հանդիսիլ սիրելի է, և թէ հասկի[2]. բայց թէ չընչին հոգի անօսր Ա՛ղիայումն՝ ընթացեալ բանն և փառաւորեսցէ մի աստուածութիւն յերիս անձինս միմեամբ երևեալ, որպէս լոյս՛ի լուսոյ։ Ո՛ի թէ արարածականս այս լոյս և հուր՝ ոչ փակի յիւրեանէն ընտանեացն և յայլոց, զիաՓրդ անեղ արարչականն՛ի միմեանց և յարարածս. թէ և մեք ոչ կարեմք գիտել. վասն զի երեսք[3] անձնական բաժինս տալ՝ ոչ զօրէ՛ի յօդ, ՛ի հուր, ՛ի ջուր և՛ի գինի, վասն նրբամասնութեանն։ Այլ զի այս հարկելիք թուին և անապուսեելիք, ՛որչափ ևս առաւել միտքն մի ժտեսցի յանեղ, յանարար, յանսահման, միասնական սուրբ Երրորդութիւնն՝ ոչ գոլ որով եղերիցի, կամ տեղի՝ ուր դնիցի, համիմացութեամբ Ճանաչել. այլ զոր գիրք աստուածաշունչ առթէ եկեղեցւոյ, զոր սկսանելի է, իմացումն իմացական՝ իմացողին՝ որպէս մնունդ ելով և կերակուր ուրեմն մտաց, հրեշտակական էութիւնք՝ և նոցա արարչականք, զի իմանալին իմացութեամբ իմա-

1 ՕՕ. ՛ի յոմն։
2 Ա՛յսպէս ՕՕ. որ խանդարեալ թուին՝ որպէս և զինիդ. թէ և հընձնակին կամաւ խրթնաբանեալ է։
3 Տպ. երէս։

ցոլապես իմանայ զիմացական իմացուածն։ Ա.րդ միտ դիր դու քեզ, ասէ նախամարգարէն Մովսէս, հայեա յանձն քո. և Փիլոնիոս խրատէ, թէ քոյով երկոր-դութեամբդ իմա ի մարմին քո, որ է հոգի, միտք և բան։ Նոյն օրինակ և Պօղոս գրէ. մեզ մի է Հայր, և մի տէր Յիսուս Քրիստոս, և մի սուրբ Հոգի։ Իսկ Յովհաննէս Մկրտիչ միութիւն խոստովանի բնու-թեանն, զՀայր և զՀոգի ասէն դնէ, այսինքն՝ Նան[1], և Որդւոյ ունել ասէ զՀայր և (Հօր) զՈրդի։

Ա.թանաս՝ Նրեք ենթակայ ասէ, կամ երեք դէմ։ Ա.ստուածաբանն Գրիգոր՝ Նրեք անձն կամ Նրեք ե-րես. կամ որ ի քեզ սիրելի է՝ զայն ասա։ Ինքն Ա.-տուած. Որ էնն ասէ. որ է ոչ սկսեալ և ոչ դադարի։ Գրիգոր Ա.ստուածաբանն և Նարսես և Գրիգոր Նիւսացին. Ընծին և ծնեալ, և ելումն. որում հետևի ամենայն ուղղափառ եկեղեցի։ Յովհան Ոսկեբերան, Ա.րմատ, բոյս, և բողբոջ։ Պօղոս՝ զՀայր հաւատն ա-սէ, և զՈրդին նկարագիրը, զՀայր լոյս, և զՈրդին ճա-ռագայթ։ Ա.թանաս, զՈրդին նկարագիրը ասէ հաւ-ատեանն Ա.ստուծոյ՝ Հօր[2], և զՀոգի Որդւոյ. ինքն տէր զՀայր Հոգի ասէ։ Նա և ուսուցիչն Գրիգոր՝ զՈրդին Հոգի ասէ. և ամենայն գիրք աստուածաշունչք զՀո-գի Հոգի ասեն։ Պօղոս, զՀայր աներևոյթ ասէ, և զՈրդի պատկեր աներևութին. յայտ է թէ Հոգին պատկեր է Հօր և Որդւոյ. զի մի է էիցն նկարագիրը և պատկեր. ըստ այնմ, թէ Ա.րար Ա.ստուած զմարդն ի պատկեր իւր, զի էիցն մի պատկեր է. մին սկզբնատիպ միոյ մարդոյն միոյ բնութեան, և երից անձանց միոյ աս-տուածութեան. և ամենայն հին և նոր կտակարանք վկայեն։ Նա զի Հայր անսկիզբն և անպատճառ է, ինքն իսկ ասէր ցՅ.ովսէս. Յիմ Նան[3] երդնում քեզ. և ցՄովսէս, Նա եմ իմ էն. որպէս ասել թէ ոչ յումեքէ։ Նա զի Որդի և Հոգի ի Հօրէ, Ավետ ասէ. Հոգի իմ և բան ի միջի քում. և ինքն տէրն ասէ. Հոգին ուր կամի հնչէ, այլ ոչ գիտես ուստի գայ կամ յո՞ երթայ, նոյնպէս և ամենայն ծնեալն ի Հոգւոյն։ Ա.յսո

1 Խառն և խրթին։ Ա. Օ. ունի ազգն վոհանակ ազինն։

2 Հայր։

3 Ինձ։

րոյ և սուրբն Նախիւան Ահարացին ասէ. Ինդէ Ինայր, և՝ինանէ Որդի և Ինդէ. զի Ինայր անսկզբնութեան է անուն. և երեք են անսկիզբն՝ի ժամանակէ. Ինդէ ասելն՝ անմարմնութեան է նշան. և երեքեան անմարմին. Որդի ասելն՝ գոյացութեան և բնութեան է նշան. և զի երեք գոյացութիւն և մի բնութիւն են, Որդի՝ի Ինօրէ ասի, Ինայր Ինորդոյ ոչ ասի, զի սա՝ի նմանէ է, և ոչ նա՝ի սմանէ. և Որդի և Ինդէ ասի՝ի Ինօրէ, ոմն ծննդեամբ, և ոմն ելոյսութեամբ: Որդի բղխումն ասի, և Ինդէ բղխումն: Որդի եղ ասի՝ի Ինօրէ. ասի և Ինդէ եղ՝ի Ինօրէ. Ինայր Հոգի ասի, բայց որդի չասի. Ինդէ՝ չ հայր ասի և ոչ որդի: Որդի՝ի Ինօրէ, և Ինդէ՝ի Ինօրէ և Ինորդոյ. Ինայր արմատ, Որդին բոյս, Ինդէն ի յարմատոյն և՝ի բուսէն բողբոջ: Ինդէն շունչ, Որդին բերան, Ինայր գոյ. Ինդեով բերանով նորա ամենայն զօրութիւնք նորա: Եւ թէ Ընդաքուռն քո զրախտ նռնենեաց. և թէ փչեաց յերեսս նոցա և ասէ. Ընդէք ընդէն սուրբ: Ինայր անձն, Որդին գոյացութիւն, Ինդէն բազուկ, և՝ի բազկէն մատն. Նա մատամբն Ընտուծոյ հանեմ զդևս:

Որդի՝ի Ինօրէ և Ինդէ՝ի նոցունց, ասէ սուրբն Նախիւան: Որդի՝ի Ինօրէ ելանէ, և Ինդէ՝ի Ինորդոյ և՝ի Ինօրէ եղ. Որդի՝ի Ինօրէ առնու. նմանապէս և Ինդէն Ինորդոյ առնու: Ընդ էնքն տէրն. Յիմէ անտի առնու և ուսուսցէ ձեզ. և Որդի՝ի Ինդէոյն առնու, ըստ այնմ, թէ Որ՝ի նմանէն ծնեալ է՝՝ի Ինդէոյն սրբոյ է: Երեք արեգակն. լոյս է ամենայնիւ, միօրինակ անձառ, անհաս և անձև, անօրակ, անքանակ, անսահման: Այդ մին որ զմեր քննութիւնս էառ՝ Նանն՝ մերովս երևի, և նովաւ Ճանաչի Ինայր և Ինդէ. Որդի ծնեալ ասի, որ Թարգմանի յումեքէ ունել. և եղ ասի, որ Թարգմանի չ զումեք ունել. զի ոչ ունի զանձն Ինօր, և ոչ զանձն Ինդէոյ, այլ զնոր որդիականն. Ինդէ եղ ասի՝ի Ինօրէ և Ինորդոյ, զի ոչ ունի զանձն Ինօր և զանձն Որդոյ, այլ զնոր հոգիական անձն: Այս երեք անուն հաւասար՝ նշան երից անձանցն, ոչ մի միոյ վերոյ, և ոչ մի միոյ նեղքոյ, այլ հաւասար միմեանց ամենայնիւ. ոչ

բնութեան նշան էրիցն [1], մի լոյծ ուժոք խմանալ պիտ, այլ նշան էրից անձանց և մի բնութեան. որ Հայր՝ զի ոչ յայլմէ հօրէ, և որ Որդի՝ զի՛ ի Հօրէ, և որ Հոգի՝ զի՛ ի Հօրէ և Որդւոյ:

Հայր անծին աստ, զի ոչ յումեքէ է. և Որդի ծնեալ, զի՛ ի Հօրէ. Հոգի ոչ աստ Որդի կամ ծնեալ զի մի երկու եղբարք Թուեցին, և ոչ երկուորի [2] ընդ Որդւոյ, զի մի զաստար կարծիցի, և ոչ Որդւոյ միայն, զի մի Յոան հաճարիցի: Այս ընդէր ծանրանաս ոլ իմաստուն և չհարիս հաւատացեալ, երկու պատճառ իմանալ: Նախեղ հարցանէր զեղբայր իւր զՆիկոդիմոս. Ո՞րպէս է սկիզբն սկզբանն. և նա ասէ. Սկզբնն պատճառ երկրորդ պատճառին: Ով սիրելի, ամ այլ ումեք կայ պատճառ Հայր և Որդի, եթէ ոչ Հոգւոյ իւրոյ: Նիկոդիմոս աստուածաբանն զՊղատոնի բանն առնու, որ գրեալ է, Արտէս իսաուրացն կեղեալ զեղեալ զիսանն և զեղեալ ասելն՝ խոտ: Այլ զաւակին և զերկրորդ պատճառ ասելն՝ հաւանի. զոր ընդէր ըմբռնաս խոստովանողդ զերկու պատճառն. զի ոչ եթէ անուանքս և կարգս զանազանէ զմի բնութիւնն. այլ և այլ նշանակ է անձանց երիցն՝ ի մի բնութիւն. զի սահման և կարգ խոստովանութեան հաւատոյ՝ անխառնակ և անշփոթ մնասցէ. մի աստուածութիւն, որ զամենայն ըստ կարգի և սահմանաւ յօրինեալ է, զի մի՛ ի միոս խոստովանողին խառնակութիւն և շփոթումն անկցի: Նախ ասեմ որ լսողդ ես. զիարդ քո միտքդ՝ ի քեզ կայ, և յայլսն միտք ծնանի: Նթէ զայս իմաս նաս ոչ՝ ընդէր քննես վասն Նստուծոյ, և ընդդիմանաս գրոյ. եթէ զլսողդ՝ որ՝ ի խելս քո ծագէ, և զհանձար՝ որ յերի կայ [3] բանիդ, և զըղձաւումն սրտիդ՝ ոչ կարես տեսանել, և զլսելեացն՝ ի ձայնդ, Նստուծոյ հակառակ և գրոյ՝ մի ջանար իմանալ ինչ: Նս դարձեալ ասեմ. բանդ քո (եթէ) ՝ի մտացդ է առանց հոգւոյդ, անհոգի է քո բանդ, և եթէ՝ ի հոգւոյդ է առանց մտաց, անմիտ է քո բանդ. ապա եթէ՝ ի հոգւոյդ և՝ ի մտացդ՝ հոգևոր և մտաւոր է քո բանդ, որպէս և է. ապա եթէ ընչաւոր

1 Տպ. Ոչ բնաւ նոցա երիցս-ըէան: 2 Ընդ. Տպ. — ՕՕ. Աստ. երկո- 3 ՕՕ. չերիկամի:

իմացիր է քո բանդ՝ վայրապար է։ Ո՛ Աստուծոյ բնութեան միութիւն և զանձին բաժանումն՝ մարմնական օրինակաւ մի առնանէր, զի մի զայթակղեսցես։

Հոգին՝ եթէ ՚ի Հօրէ միայն ասիցես և ելանէ, անբան է Հոգին, և եթէ յՈրդւոյ միայն ասիցես, օտար սկիզբն է. իսկ եթէ ՚ի Հօրէ և յՈրդւոյ՝ ճշմարիտ է, որպէս և է։ Եւ զոր օրինակ հայրութիւնն Աստուծոյ ոչ է մարմնական, և ոչ որդիութիւն, նոյնպէս և ոչ ելոյթիւն։ Բան է գաւառի՝ սոխրութիւն, այս անուն յայս բանէ ՚ի գոյս եկն ոմք, ՚ի յայս կողայս բաժանեցաւ ոմք, ոչ միտքն ՚ի տեղն ճնաց և ոչ յայլոց ՚ի հետ եբեր, և ոչ յայլոց կտրեաց, և ոչ յայլոց հատ. Թէպէտ ոմք ասա, Թէպէտ յատակ ասա, Թէպէտ պարզ ասա։ Պայսպէս Հոգի ՚ի Հօրէ և յՈրդւոյ. ոչ ինքն պակասէ ինչ, և ոչ ՚ի նոցանէ հատած։ Ի կատարել Աստուած Հայր, ի կատարել Աստուած Որդի և յՈրդւոյ Աստուած, ի կատարել Աստուած Հոգի սուրբ. մի ասաւածութիւն կատարեալ, երիս անձինս, հաւասար ամենայն ամենայնիւ։ Այս է խոստովանութիւն ուղղափառ հաւատոյ։ Սուրբն Դիոնեսիոս զելոտական աստանն ՚ի վերայ Երրորդութեան հաւասար դնէ, Հօր և Որդւոյ և Հոգւոյ, այսպէս ասելով. Աստուածական աստանն խոնարհեցոյց. և որ այս ոճիս է. և դարձեալ Խոնարհութիւն, զօրացութիւն, կենդանացութիւն, և որ այլ ըստ այսմ։

Դարձեալ ազաչեմ զքեզ, մի կարծեր զԱստուծոյ անուանն ըստ բնութեան, այլ ըստ խնամոցն որ առ մեզ. ապա թէ ոչ՝ լաւ ասէ Աստուած և կեանք. զինչ կամս ասել. այսպիսի լաւ և կեանք՝ որպէս և մեք առանեմք և կեամք. կամ զբո Հոգեյդ անուանն և զԵսուԹիւնն կարեա զիտել. այս խոստումն Հանդերձելոցն է, յորժամ յայտնի այն՝ զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ, և ՚ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց։ Աստ մի խնդրեր աւելն՝ զի մի յանդգնեալ անկանիցես։

ԾԱ.

ՎԱՍՆ ՎԱԽՃԱՆԻ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՎՃՆԱԿԱՆԻՆ

Ա ստուածահաճոյ և մեծ վարդապետն Պ անական հասեալ ՚ի բարւոք ծերութիւն, ալեւորեալ և լի աւուրբք, ըստ օրինակի նահապետին Ք.բրահամու՝ առ Տէր փոխեցաւ, զընթացան կատարեալ և զհաւատս պահեալ ուղղափառ խոստովանութեամբ՝ որ ՚ի տուրբ Երրորդութիւնն և ՚ի տնօրէնութիւնն Ք.րիստոսի. ՚ի տղայական տիոյն աստուածագործ ծառայութեամբ կացեալ. բազում քրտունս և աշխատութիւնս ցուցեալ ՚ի բան վարդապետական, և բազում որդիս ՚ի փառս ածեալ, և ազգի ազգի ձգնութիւնս կրեալ և սպանեալ զանդամս երկրաւորս, ըստ խրատու առաքելոյն, և ըզմարմինն ՚ի խաչ հանեալ կարեօք և ցանկութեամբ հանդերձ: Ո՛ւ ինման էր տուրբն Ս.տուծոյ՝ սրաթռիչ թռչնոյն ՌԷղուի, որ թռչելով ՚ի վերայ բազում և ազգի ազգի ծաղկանց, ժողովէ ՚ի նոցանէ զպիտանին և զօգտակարն՝ ՚ի պէտս ինքեանց և ՚ի կերակուր, և ՚ի բժշկութիւն թագաւորաց և ամենայն. նոյնպէս և սա յանձն իւր հաւաքեալ զամենայն սրբոց զվարս և զառաքինութիւնս, և նոքօք արկանէր զգործ խորհրդին՝ ՚ի պէտս անձին իւրոյ և յայլոց օգուտ: Պ.անդխտացեալ ունէր զարդարութիւնն Ա.բէլի, և զգեղեցկութիւնն Ս.եթայ, և զյոյն Ն.նոխայ, և զհաւատսն Ն.նոքայ, զկատարելութիւնն Ն.ոյի, զհաւատն և զգործն Ա.բրահամու և զնազանդութիւնն Ա.հակայ, զաստուածտեսութիւնն Ի.սրայէլի, զողջախոհութիւնն Յ.ովսեփու, և զհամբերութիւնն Յ.ոբայ, զեղութիւնն Մ.ովսէսի, զնախանձն Փ.ենէհէզի, զկուսութիւնն Յ.եսուայ, զանմեղութիւնն յիստակմտութեանն Ս.ամուէլի, և զխոնարհութիւն սրտին Դ.աւթի, և զիմաստութիւնն Սողոմոնի, զհամարձակութիւն Ն.աթայեայ, և զվրէժխընդրութիւնն Ի.ղիայի, և զախտակցութիւնն Ե.լիսէի. ըստ Դ.անիէլի և Ե.զեկիէլի ՚ի գերութիւն եղեալ ընդ ժողովրդեանն Ս.տուծոյ. ըստ Օ.օրաբադեելի և Յ.եսուայ՝ նորոգօղ լեալ տաճարի Ս.տուծոյ.

ըստ պատուիրակ քրեանս հաւաքեալ յազգաց
և լեզուաց. Յորմէհանուր նման յանապատի բնակեալ,
և Տեառն հրամանաւ զսպաշխարութիւն քարոզեալ,
՛ի հին և ՛ի նոր կտակարանս վայելեալ. պետրոսի հան-
գոյն զտէրն որդի Աստուծոյ դաւանեալ և գլուխ եկե-
ղեցւոյ լեալ: Ընդ որմէ Աւետման զհոգևորն որսա-
ցեալ և աստուածաբանեալ. ընդ պօղոսի յընդհանուր
սերմանեալ զկենաց բանն, և զրով հաստատեալ. ընդ
վարդապետս եկեղեցւոյ հանդիսացեալ և զպայքն վա-
նեալ, կիսոց կաթն ջամբեալ, և կատարելոցն զհաստա-
տուն կերակուրն:

Ընդ նա որ վայս ամենայն բարիս ստացեալ ունի
յանձին, ինքն առնէր և այլոց ուսուցանէր, առ տէր
փոխեցաւ, զբնութեան զպարտսն հատուցեալ: Նա եղև
վաղճան նորա այսպիսի օրինակաւ ՛ի վանն՝ զոր իւր
իսկ էր շինեալ, որ կոչի Խորանաշատ, և վանն յոլով ե-
կեղեցեացն որ ՛ի նմա՝ ընկալաւ զանունն, որ կայ հան-
դէպ Նրպէվանից բերդին և ՛ի Թիկանց Վարդանոյ.
առնէր նա շինուածս երևելիս. գաւիթ շինեալ ՛ի կո-
փածոյ վիմաց, ՛ի դուռն մեծ եկեղեցւոյն, զոր իւր իսկ
շինեալ էր. և զբան վարդապետութեան ուսուցանէր
այնոցիկ՝ որ ժողովեալ էին առ նա յամենայն գաւա-
ռաց. յաւուրս աղուհացիցն հիւանդացաւ նա հիւան-
դութիւն՝ որ և մեռաւ իսկ. և նախ քան զաւանդել
սուրբ հոգւոյն ՛ի ձեռս Աստուծոյ ըստ գրեցեալսն, կո-
չեցեալ զեղբարան՝ քաղցր և ախորժ բանիւ մխիթարէր
զնոսա, աղաչէր հաստատուն կալ ՛ի կարգս և ՛ի կրօնս
ուղղափառութեան և աստուածպաշտութեան: Եւ ա-
պա քաղցր ընչմամբ մաքուր հոգին արձակեցաւ ՛ի կա-
պանաց մարմնոյն, յարեգ ամոյ տասն, ըստ նոր եղա-
նակի ՃՀմարտութեան[1], և յութևատան մարտի ըստ
Յոռմայեցւոց, երկու օրով յառաջ քան զգարնանա-
մուտ, յաւուր շաբաթու. յոլով աւուր յիշատակ էր
Կիւրղի Աղուանից հայրապետին, որ ընթ երջուածն
կարգեաց[2], և զՎոչման դէրսն գրեաց. և վկայութիւն

1 Ասյինքն ըստ տօմարին Ճըշ-
մարտեալ ՛ի Սարկաւագայ:

2 Վասն պատարագի ընծեր-
ցոյ ածոյն ասէ: — Միւս գիրքն
են կոչեն ընծայութեան հրաւիրե-
լոցն ՛ի մկրտութիւն:

սրբոյն ( )րէնդի[1] և վեց եղբարց իւրոց, որք նահատակեցան ՚ի Ա՛աքսիմիանոսէ ամբարշտէ. նոյին վարուցն լեալ հետևող, վասն այնորիկ և յիշատակի նոցունց արժանացաւ: Եւ ժոդովելոյն անթիւ բազմութիւնք ՚ի Թաղուսն նորա, և ունծաւ սգով և տրտմութեամբ ողբային յոյժ, զի զրկեցան ՚ի լուսաւոր վարդապետուԹենէ երանելոյն և ՚ի հոգեշահ բանիցն: Եւ տաբեալ Թաղեցին զնա ՚ի գլուխ վանիցն, յարևելից կուսէ, մօտ՚ի փոքրագոյն եկեղեցին, ուր էին պերեզմանքն աղքատաց. զի ինքն այսպէս հրամայեաց: Ընդ եր և եպիսկոպոսն գաւառին տէր Ա՛արգիս բազում վարդապետիւք և երէցամբք. չոգաւ և կաԹողիկոսն Ա՛ղուանից տէր Ա՛երսէս, և եպիսկոպոսն տէր Յովհաննէս, յետ միոյ աւուր յիշատակին նորա, ողբացեալ և լացեալ յոյժ ՚ի վերայ պերեզմանին նորա, և մխիԹարեալ զեղբարս որ անդ՝ զարձան յիւրաքանչիւր տեղիս: Եւ կալաւ զառաջնորդուԹիւն վանիցն եղբօրորդի նորա Պօղոս քահանայ, և զվարդապետական ուսուցն՝ Գրիգոր վարդապետ՝ նորին աշակերտ և ազգական: Եւ այս եղև յետ հարիւր Թուին: Ա՛ոդ ազօԹիւք նոցա տայցէ Ա՛ստուած խաղաղուԹիւն աշխարհի և մեզ ամէն ՚ի յարուԹեան նորա և ՚ի պսակին:

ԾԲ

ՎԱՍՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԳԱՌՆԵՑԻՈՑՆ

Ա՛ր ումն առաքինի և զարմանալի վարուք, գործող պատուիրանաց Ա՛ստուծոյ և լծաբարձ ՚ի մանկուԹենէ, արժանացեալ քահանայական պատուոյ, կաստակրօն, Յովհաննէս անուն, ՚ի գիւղաքաղաքէն Գառնոյ, ուր զարմանալի սարաւոյնն է Տրդատայ[2], ՚ի տուրք ուխտէն Ա՛յրիվանից: Սա ՚ի մանկապոյն տիոցն արհամարհեաց զամենայն ինչս կենցաղոյս՝ լքեալ զգեզս և ընտուն, յանապատ տեղիս բնակիլ, սիրէր առանձին լե-

1 Ինձին աւուր, 18 մարտի, ծննին և տուրքս ըստ Յայսմաւուրցն:

2 Ի յետնոց Թագաւ Տրդատայ կոչեալ, և Հռիփսիմեայ Խոսրովիդուխտի ՚ի Խորենացւոյն. որոյ ցարդ երևին մնացուածք կործանեալք:

նել և անզգաստապէս խօսել ընդ Աստուծոյ. տուեալ զինքն ազգի ազգի չգնուԹեան, պահոց և աղօԹից, գետնատարած անկողնօք և անհանգիստ աշխատուԹեամբ, շրջելով տեղւոջէ ՚ի տեղի, և լուսաւորելով զպատահեալսն։ Տուաւ նմա և շնորհք բժշկուԹեանց, զի միայն ձեռն դնելով բժիշկը զբազում ախտաժէտս։ Իսկ դրէին ՚ի նմանէ և գիր՝ պահապան անձանց իւրեանց[1], և նա անյապաղ տայր ամենայն խնդրողաց. և զայս ոչ միայն հաւատացեալքն առնէին, այլ և բազումք յանհաւատից. և նա գրելով զանուն սրբոյ ԵրրորդուԹեան և խորհրդական բանս աղօԹից՝ տայր նոցա. և նոքա առեալ հաւատով կապէին յանձինս իւրեանց։

Ապա սորա բազումք բազում ինչ պատմէին. բայց առաքել՝ հարազատն մեր և սքանչելին Վարդան վարդապետն, որոյ բանքն արժանի էին ընդ միմեանս. զի մեք մարմնով զնա[2] ոչ տեսաք վասն հեռաւորուԹեանն։ Նա ՚ի միԹարուԹիւն մեզ պատմեաց ինչ ՚ի վարուց նորա մանաւոր, և ասաց[3], Թէ ինքն իսկ Յովհաննէս ասաց մեզ, Թէ Ոգւով եմ ՚ի սուրբ քաղաքն Երուսաղէմ՝ երկրպագել տնօրինական տեղեաց, և յամեցի անդ աւուրս, իբրեւ կալեալ ՚ի սուրբ Յակոբն. և ՚ի պիշերի միում կանխեալ նախ քան զՀարկանել ժամուն աղգարարի՝ որ յաղօԹան զարԹուցանէր զամենեսեան. և մինչդեռ աղօԹէի ՚ի սուրբ եկեղեցին՝ վարդապետն որ իշխան էր սուրբ Յակոբայ, կոչեաց զիս և ասէ. Կամ լուր զարմանալի իրս, զոր պատմէ քահանայս իմ մանկագոյն. և իբրեւ չոգայ առ նա, կոչեաց զերէցն, որ ետես զտեսիլն զարմանալի, և ասէ. Երդ սա զոր յառաջագոյն պատմեցեր ինձ՝ զի լուիցէ և սա։ Նա երէցն սկսաւ պատմել, Թէ Նախ քան զգալդ ձեր եկեղեցին՝ ես էի յաղօԹս ՚ի սուրբ վէրնատունն. և յանկարծակի նկարեալ պատկերն Գաբրիէլի հրեշտակապետի՝ որ կայ հանդէպ ամենասրբուհւոյ Աստուածածնին, բարբառեցաւ և ասէ. Ուրախ լեր բեր, կրեալ տէր ընդ քեզ, օրհնեալ ես դու ՚ի կանայս, և

1 ՄիամտուԹեամբ արդեօք նա գործէր և սա գրէ. որպէս և զայտագայ պատմուԹիւնքն։

2 Զան Յովհաննու ասէ։ Իսկ Վարդան՝ պատմիչն է։

3 Զայսոսիկ պատմէր Վարդան և Հեթմոյ Թագաւորի. պատմեն և Յայսմաւուրք։

օրհնեալ է պտուղ որովայնի քո: Ահաւ ամենայն սրբոց նկարեալ պատկերքն զնոյն բարբառել ցմեծ ժամն. և իմ զարմացեալ փառս ետու Աստուծոյ, և գնեալ ժամարակաւն արուեստիւ՝ գոհ զի երեսուն էր այն օր արեգ ամոյ և եօթն ապրիլն և եօթն և տասն նիսան ամոյ: Ահա այս տեսիլ և ցուցմունք հրաշիցն՝ Հայոց անստուտ տօնին, որ ասեմք զաւետիք սուրբ Հուսին յերեսուն արեգի և յեօթն ապրիլն, և ոչ որպէս հակառակին այլազգիքն, և մանաւանդ Յոյնք, ասելով՝ քսան և հինգ մարտի ամոյ՝ անխորհուրդ: Այս պատմեաց Աչմարտախոհ այրն Աստուծոյ՝ ի հաստատութիւն ուղղափառ հաւատոյս:

Դարձեալ միւս ևս սմին հանգոյն զոր պատմեաց սուրբ այրն այն Յովհաննէս. Ես էի ասէ՝ ի կողմանս Յորդանան գետոյն աղօթելով՝ ի տեղւոջ Մկրտութեան Տեառն, և սրբոյն Յովհաննու կարապետին. եկին առ իս արք երկուք, տաճիկ տոհմաւ, և խնդրէին զինիք սուրբ Մկրտութեան. և ես յապաղէի տալ յայնմ աւուր, և կամ թէ յայլոյ առցեն՝ զի տեսանէի զնոսա արս խուժադուժս, և համարէի կեղծաւորեալ. և որ աւագն էր՝ ի նոցանէ՝ պատմեաց ինձ, և ասէ. Մեք՝ ի Օ՞ անգիանայ[1] եմք՝ ի քաղաքէն Պարսից, եմք մուղրի[2] գենիւ. զինեցաք մեք մինարա մի մեծ և գեղեցիկ, և պատրաստեցաք որ ինչ պէտք էին նաւակատեաց, և եկի ես՝ ի ծայրն զմպէթին ըստ գենին Տաճկաց՝ տալ զ..... ձայնն. և ահա տեսի ես յարևելից կուսէ զերկինս քաղել, և զվայրն լի անթաւ լուսով, և թագաւոր մի ահեղ և զարմանալի՝ յաթոռ փառաց նստեալ. և շուրջ զնովաւ բազմութիւնք լուսեղինացն՝ որք օրհնէին զնա անձառելի ձայնիւ. և զայնն առնա յերկրպագութիւն ամենայն ազգք քրիստոնէից, և յարքանչիւր առաջնորդք ուսմանն, որք զարդարեալ էին երևելի փառօք. և յորժամ երկրպագէին նմա՝ ընդունէր զողջոյնն: Ի վերջ եկն այլ ազգ մի՝ որ կարի առաւել էին փառօք քան զառաջինան. և առաջնորդն նոցա կարի զարմանալի. և յորժամ եկին և երկիր պագին թագաւորին, նա յա-

1 Չինաստան. ի հարաւային 2 Տյոո, կարդացող կամ ուսուցիչ:
ասիմանաձայր Աստուածայրի:

ըեաւ յամեաւոյն ընդ առաջ նոցա, և համբուրեաց զնա և մեծարեաց քան զամենայն ազգն. և մինչ ես զարմացեալ էի հիացմամբ և ապշեալ, եկն առ իս՝ի վեր այս աւազ որդիս իմ, և ասէ. Ընդէր յամեցեր, ղի քեզ ծնան ամենայն ժողովուրդն. Հայեցաւ և սա առաւել ևս, և ետես զնոյն տեսիլ, և եկաց յիմարեալ: Ապա իբրև կարի յամեցաք, նեղեցաւ ամբոխն ընդ յամելն մեր. եկն եւ այս կրսեր որդիս իմ, և մեզադրէր մեզ վասն յամելոյն մեր. և քանզի անցեալ էր տեսիլն՝ի գալ սորա, և պատմեցաք սմա զպատճառս յամելոյն և զիրս տեսլեանն, և իսկոյն կամեցաք՝ի բարձանց անտի քարոզել զԲրիստոս Ձմարիտ Աստուած, և զմեզ քրիստոնեայս նորա: Սա արգել զմեզ և ասէ, որովհետև այդպէս է՝ իմաստութեամբ գործեսցուք. Թէ այժմ մեք քարոզեմք զԲրիստոս, իսկոյն սպանանեն զմեզ ամբոխն Տաճկաց, և դնեն բարուրս, Թէ վասն յանցանաց իրիք սպանաք և ոմ գիտէ զմիջոց. այլ երթիցուք տացուք նոցա զկերակուրս, զոր պատրաստեցաք, և ապա երթիցուք մեք՝ի տուրըք քաղաքն Այրուստաղէմ, և անդ լիցուք կատարեալ քրիստոնեայք՝՝ի ձեռն կընքոյ աւազանին, և մանաւանդ յայնց քրիստոնէից՝ զոր դուք ասէք՝ եթէ խնդութեամբ ընկալաւ զնոսա Թագաւորն: Եւ նշանակեցաւ մեզ՝՝ի տեսլեանն, եթէ ազգն այն՝ Հայոց էր, որք վիճակ հասին Յոհաննէսի և Նարդոզիմէոսի և Գրիգորի Լուսաւորչի: Եւ մերս ունկնդիր եղեալ բանից սորա՝ իջաք առ նոսա, ոչ ինչ պատմեալ ումեք, Թողաք զամենայն զկոյս մեր զջարժուն և զանշարժուն, և եկաք Այրուստաղէմ. ապաչէաք զԱստուած պատահիլ մեզ այն ազգին, որ փառօքն էին՝՝ի տեսլեանն. և հոյլ Աստուած մեզ զքեզ, և զնոյն տեսիլն տեսաք՝՝ի վերայ քո: Ընդ ապաչեմ, զքեզ տուր մեզ զկնիքն Քրիստոսի, և արա զմեզ կատարեալ ծառայս Աստուծոյ քո: Եւ իմ տեսեալ զյօժարութիւնս նոցա, և Թէ՝՝ի տեառնէ է կոչումն՝ մկրտեցի զնոսա՝՝ի տուրըն գետն Յորդանան, յանուն Հօր և Որդւոյ և Հո-
գւոյն սրբոյ, և հաղորդեցի զնոսա՝՝ի տուրըն պատուականն մարմնոյ և արեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. և ողջունեալ զմեզ էլին՝՝ի քաղաքէն՝ գնալ՝՝ի մեծն Հռոմ, ՝՝ի տեսութիւն գերեզմանի սուրբ առա-

քելոյն Պետրոսի և Պօղոսի, ՚ի փառս Քրիստոսի Աստուծոյ:

Այսր և զայս նոյն սքանչելին Յովհաննէս, եթէ զրք քառասուն Նոյ ազգաւ չոգան յանապատն Սինա, ՚ի լեառն ուր երևեցաւ Աստուած Մովսէսի (և ետ զտախտակն քարեղէն՝ յոր գրեալ էին տասն պատգամքն, երկիր պագանել Աստուծոյ) և տեսանել զսուրբ տեղին. և էր ՚ի ստորոտ լերինն վանք մի Նոռոմ ազգաւ խստակրօն վարուք, անդ օթեցան. և մինչ կամէին ելանել ՚ի լեառն, պատուիրեցին նոցա բնակիչք վանացն և ասեն. զգուշերն մի ագանիք անդ, քանզի ահագին արհաւիրք երևին, այլ և կորուստ բազմաց պատահեալ է: Իսկ նոքա ելին համարձակութեամբ, ոչ ինչ կերակուր բարձեալ ընդ իւրեանս, և յամեցին անդ աւուրս. և զարմացեալ էին բնակիչք վանացն թէ զինչ եղեն. զի ընդ այլ՝ անց ոչ կայր, և համարէին թէ կորեան յարհաւրաց անտի: Իսկ նոքա յետ կատարելոյ զպաշտօնն իւրեանց, ինքեան ՚ի լեռնէ անտի, փառաւորեալ և ընորհալի երեսօք. և էին քառասուն և երկու. և զարմացեալ բնակիչք վանացն ելին ընդ առաջ նոցա ջահիւք և լապտերօք, և մեծաւ պատուով տարեալ հանգուցին, և զարմանային՝ զի յորժամ ելին ՚ի լեառն քառասուն էին, և իջեալ ինքեան՝ քառասուն և երկու. զի գիտէին եթէ այլ ոք ոչ չոգաւ ՚ի վեր քայց ՚ի նոցունց. և իջեալ եղեն սեղան առ ՚ի կերակուր՝ յարեան արքն այն երկու փառաւորք՝ որք աւելի էին քան զքառասունս, պաշտել զնոսա ՚ի սեղանն, և ոչ տային թոյլ վանայ արանցն ծառայել, այլ ասէին, մեր սովորութիւն է զեղբարս մեր մեզ պաշտել: Եւ իբրև կերան որ ինչ պատշաճ էր, ողջունեալ զնոսա եղեն աներևոյթ. որք էին Մովսէս և Եղիա. և ահիւ մեծաւ ըմբռնեալ բնակիչք վանացն՝ պատուէին զնոսա իբրև զհրեշտակս. և յուղարկեցին մեծաւ պատուով: Այս պատմեր սրբասէր այրն Յովհաննէս ՚ի դէմ այլոց, վասն անձին խոնարհութեանն. զի մի գիտասցեն՝ թէ և ինքն ընդ նոսա էր:

Յետ այսորիկ շրջեալ նա ընդ բազում գաւառս և ընդ քաղաքս, եհաս ՚ի քաղաքն Կողմնիա. և բազումք ՚ի Ծուլքաց և ՚ի Տաճկաց գային առ նա, և մկրտէին

վան սքանչելի վարուց նորա և բժշկութեանցն զոր առ նէր։ Այս նախանձեցան ընդ նա Պարսիկքն, և իշխան քաղաքին Կողմնիայ ըմբռնեաց զնա և զերէց մի, և կուտեալ փայտ չոր՝ եդեալ զնոսա ՚ի միջի վառեաց հրով. և լայր երէցն որ ընդ նմա, և նա քաջալերէր զնա և ասէր. եթէ Ա՛ր երկնչիր, կարող է ապրեցուցանել զմեզ Աստուած ՚ի հրոյս, որպէս զերիս մանկունս։ Եւ մինչդեռ բորբոքէր հուր՝ մանուկ իշխանին անկաւ ընդ պարիսպն բերդին, և յարեաւ անվնաս. և ՚ի հարցանելն, թէ Որպէս կաս կենդանի, պատասխանի ետ թէ Այր այն զոր ընկեցիք ՚ի հուրն՝ նա եբարձ զիս ձեռօք իւրովք, և ոչ ետ ինձ անկանել յերկիր։ Եւ առժամայն առաքեաց իշխանն, և հրամայեաց հանել զնոսա ՚ի հրոյն. և թոյլ ետ գնալ ուր և կամեցի։ Եւ նորա ընդէաւ ընդ բազում գաւառս, գնաց ՚ի Հռոմկլայն առ մեծ կաթուղիկոսն Հայոց տէր Կոստանդին, և նա ուրախութեամբ ընկալաւ զնա մեծաւ պատուով, և ոչ ետ թոյլ երթալ այլ ուրեք. և անդ եկաց մինչև փոխեցաւ ՚ի Քրիստոս, և թաղեցաւ ՚ի նմին[1]. զընթացսն իւր կատարեալ, զհաւատսն պահեալ, եհաս անթառամ պսակին և անվաղճան կենացն։ Զօրք նորա մեզ ՚ի սատարութիւն և ՚ի թողութիւն մեղաց. և յիշատակ նորա ընդ սուրբս ամենայն ՚ի Քրիստոս Յիսուս, ՚ի տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն։

ԾԳ

ՎԱՍՆ ՍԱՐԴԱԽԻՆ ՈՐԴՒՈՅ ԲԱԹՈՒԻՆ

Մեծ զօրավարն Նաթու՝ որ ՚ի կողմանս հիւսիսոյ առեալ իւր բնակութիւն, առ ակն ծովուն Կասբից, և Ել[2] գետոյն մեծի՝ որ ոչ գտանի հանգոյն նմա ՚ի վերայ երկրի, քանզի ծովէրէն ընթանայ վասն հարթայատակութեան երկրին ՚ի մեծ և ՚ի լայնանիստ դաշտին Խիւջախայ. զետեղէր նա և բազում և անթուելի զօրքն[3] որ ընդ նմա. քանզի խորանօք բնակէին, և ՚ի

1 Հռոմկլայն։
2 Իթիլ կամ Վոլգա։
3 ՕՕ. զօրս։

ջուեն՝ զխորհրդան սայլիւք տանէին, բազում եղիւս և ձիս լծեալ ՚ի սայլսն։ Ոմա զօրացաւ յոյժ և մեծացաւ քան զամենեսին, և հնազանդեաց զտիեզերս, և ՚ի հարկի կացոյց զաշխարհս ամենայն. այլ և իւր ազգայինքն՝ զնա քան զամենեսին մեծ ունէին. և որ Թագաւորն էր ՚ի նոցունց՝ զոր զան կոչէին, հրամանաւ նորա նատէր յաթոռն։ Ի եղև մեռանել Ինոխ զանին, և ՚ի միում անկեալ ազգատոհմ նորին, Թէ ով ոք նստցի յաթոռն, և ամենեքեան զնա արժանայուցանէին նստել, և կամ զով և կամեսցի նա՝ այն լինի Թագաւոր. և կոչեցին զնա՚ի կողմանցն հիւսիսոյ գալ յաշխարհն իւրեանց, և Թագաւորել ՚ի վերայ ամենից. և ջոգաւ նա հաստատեալ զԹագաւորութիւնն, և եՀոզ գլուխ զօրացն զորդին իւր՝ որում անուն էր Արդախ. և ինքն երԹեալ ոչ նստաւ յաթոռ Թագաւորութեան, այլ զայլ ոմն կարգեաց յազգայնոցն, որում անուն էր Անգու. և ինքն դարձաւ առ զօրս իւր։ Ուստ յազգականացն ոմանք տհաճ եղեն ընդ գործն. զի ակն ունէին կամ ինքեան Թագաւորել և կամ Թագաւորեցուցանել զորդին Ինոխ զանին, որում անուն էր Ի ջձա զան. բայց յերեսս ոչ իշխեցին բերել զկրս անհաճոյութեան։ Ուստ յորժամ դարձաւ նա առ զօրս իւր՝ նոքա սկսան ցուցանել իրս ապստամբութեան առ Անգու զանն, և սկսան խռովել. և լուեալ Նաթու՝ հրամայեաց կոտորել զբազումս յազգականացն և ՚ի մեծամեծաց, ընդ որս և զմեծ ոմն գլխաւոր՝ որում անուն էր Լէլի–Նաթա[1]. որ հրաման առեալ էր ՚ի Ինոխ զանին զօրավար լինել զօրուն Նաթայ՝ որ յարևելս և յաշխարհս Չայոց, փոխանակ Նաչու–նուէնին. և մինչդեռ ՚ի Ճանապարհի էր յաշխարհին Պարսից՝ եհաս նմա համբաւ զոր մահու Ինոխ զանին, և անդէն զետղ առեալ մնայր, Թէ ով առնու զաթոռն Թագաւորութեան։ Ուստ ամենայն եղեն առ Նաթու զգլխաւորքն զօրուն որ յարևելս. զի ոչ կամէին զնորա իշխեն ՚ի վերայ ինքեանց, զի այր մեծամիտ էր. և ասեն Թէ և առ մեզ յանհնազանդին է Անգու զանին, և հրամայեաց առ ինքն ածել. զոր ընկալեալ տարան

1 Ելիպատի, կողմնակալ Պարսից։

կապանօք, և եսպան չարապէս։ Ապա սկսան երթալ առ նա թագաւորք և թագաւորազունք և իշխանք և վաճառականք, և ամենայն վշտատեաք որք զրկեալ էին ի հայրենեաց. և նա արդար դատաստանաւ տայր զիւրաքանչիւր գաւառսն և զհայրենիս և զիշխանութիւնս՝ ամենայն ումեք երթողացն առ նա, և գիրս նշանաւորս. և ոչ ոք իշխէր ընդդէմ դառնալ հրամանաց նորա։

Սորա էր որդի մի որում անուն էր Սարդախ, զոր վերագոյն յիշեցաք. որ սնաւ քրիստոնեայ դայեկօք, և ի չափ հասեալ հաւատաց ի Քրիստոս և մկրտեցաւ Ա֊ղուոց՝ որք սնուցին զնա[1]։ Սա բազում դիւրութիւն արար եկեղեցեաց և քրիստոնէից, և կամաւ հօր իւրոյ գրեաց գիր ազատութեան քահանայից և եկեղեցւոյ. և առաքեաց ամենայն կողմանց սպառնալիս և մահ, եթէ ոք հարկ առնու յեկեղեցւոյ կամ ի պաշտօնէից նորա, զինչ ազգ և իցեն, այլ և զՏաճկաց մըզկիթն և զնորին սպասաւորաց։ Ապտուստ ապա համարձակութիւն առեալ չոգան առ նա վարդապետք, եպիսկոպոսք և երիցունք. և նա սիրով ընդունէր զամենեսին և կատարէր զխնդրուածս նոցա, և ինքն երկիւղածութեամբ և աստուածապաշտութեամբ կայր հանապազ, եկեղեցի խորանեայ ընդ իւր շրջեցուցանելով և զաստուածային խորհուրդն անյապաղ կատարելով։ Ընդ որս չոգաւ առ նա և մեծ իշխանն Խաչենոյ և կողմանցն Ա֊ղուանից՝ Հասան, զոր Ղալըն կոչէին գգուանօք, այր աստուածապաշտ և երկիւղած և պարկեշտ, Հայ ազգաւ. և նա սիրով և մեծարանօք ընկալաւ զնա և զորս ընդ նմայն էին, Գրիգոր իշխանն՝ զոր սուլորութեամբ Տղայն կոչէին, և էր ծեր յոյնժամ. և զԳեսում իշխանն՝ պարկեշտ պատանի, և զԱրկոս վարդապետն, և զեպիսկոպոսն Գրիգոր. և տարեալ առ հայրն իւր մեծապատիւ[2], և ետ ի նա զհայրենիս իւր զՋարաբերդն[3] և զԱկանա և զԱրկաւ, զոր հանեալ էին յառաջագոյն ի նմանէ ազգն Թուրքաց և Ա֊ղուանց։

1 Այս կարծիք են և նոցին իսկ մահմետական պատմչաց։ Գտանի և գիր Ինոմկենտեայ պապի առ Սարդաք գրեալ յամի 1254։

2 Սարդաք առ Բաթու հայր իւր։

3 Այժմ Ձլբերդ, որ և Ճառաբերդ, ի Խաչէն, ուր և այլ յիշեալք։

Ա՛ռ և գիր ազատութեան կաթուղիկոսին Աղուանից՝ տէր Ներսէսի, և ամենայն գոյից նորա և ստացուածոց, զի ազատ և անհարկ լիցին, և համարձակ շրջեսցի՛ ի վիճակս իւրոյ իշխանութեանն, և ամենայն ուրեք, և մի՛ ոք դիմադարձ լիցի ասացելոցն՛ ի նմանէ։ Նա եկն Ջալալն ուրախութեամբ՛ ի տուն իւր. բայց զկնի աւուրց նեղեալ՛ ի հարկապահանջաց և յԱրղունէն, գնաց առ Մանգու ղանն։ Նա թագաւորեաց Մանկու ղանն յեօթն հարիւր թուին Հայոց։

ԾԴ

ՎԱՍՆ ՄԱՐԱԽԻՆ ՈՐ ԵԿԵՐ ՋԱՇԽԱՐՀՍ ԱՄԵՆԱՑՆ

Յեօթն հարիւր և մի թուին Հայոց եկն մարախ սաստիկ այնքան՝ մինչ զի՛ ի վերանալն ստուեր գործէր և նուաղեր լոյս արեգական. և եկեալ՛ ի կողմանցն Պարսից եկեր զաշխարհս Հայոց, ոչ միայն զբոյս դալարոյ՝ այլ և զխոզ երկրի, և զաղբս լափեր. և մնաներ՛ ի տունս ընդ երդս և ընդ դրունս, թէ պատահեր՛ ի բաց. և զահի հարաւ երկիր, և եղև սղութիւն հացի. և հասեալ՛ ի ձմերան եղանակ՝ արկ ձուս յերկիր, և մեռան և նեխեցաւ երկիր՛ ի հոտոյն. և՛ ի գալ գարնան յեօթնհարիւր և երկու թուին՝ բուսոյց երկիր զձագս մարախոյն յոյժ թանձրութեամբ, մինչ զի ծածկեցաւ հող և քարինք երկրի, և՛ ի ժամ երեկոյին կուտէին՛ ի վերայ միմեանց բլրաձև, և սկսան ուտել զդալարի և զխոտ և զխոզ, և խորհեցան մարդիկ թողուլ զբնակութիւնս իւրեանց և երթալ յօտարութիւն, ուր և գտցեն կերակուր. և զի յառաջագոյն կերեալ եր զշրջակայ գաւառսն՝ սկսեալ՛ ի Սպանիոյ[1], և Հնդից և՛ ի Պարսից և՛ ի Միջագետաց, վասն այնորիկ տարակուսեալք՝ ոչ գիտէին զինչ գործեսցեն։ Սկսան այնուհետև ապաւինիլ յամենակարող ձեռն և՛ ի բազուկն՝ որ յոչէնչ գոյացոյց զարարածս և ողորմութեամբ իւրով խնամէ զարարածս, որոյ՝ և անհնարինքն հնարաւորք

1 Ոչ կարծեմ զԱբբերիականն Սպանիա Եւրոպիոյ ասել, այլ զՊաշխարհ։

ին, և արտասուօք և ուխտիւք հայցէին ՚ի նմանէ բառնալ զպատուհան յաշխարհէ։ Նոքա ողորմածն Աստուած խնամ վիրացն եւ սպեղանիս արար, և որ ետարն նոյն և բժշկեաց. քանզի եկին բազմութիւնք մանր հաւուց պնասակաց, զոր վան բազմութեանն տարմ անուանեն սովորաբար, և կարգ կալեալ եզերեալ[1] առ հասարակ սպառեաց, և եկեր զամենայն բազմութիւն մարախոյ. այնքան զի և մի ոչ երևիւր. և անդ էր տեսանել զամենայն բերան ՚ի գոհութիւն Աստուծոյ և ամենայն միտք ՚ի զարմացման։ Նայց վան հաւուցս զրոյց սքանչելի է, ասեն թէ ՚ի կողմանս Պարսից աշխարհին՝ որ կոչի Վրման[2], է ջուր մինչ, զոր երթեալ առնուն յայն ջրէն ՚ի շիշս ապիկիս, և բերեն յանյետս[3] դառնալի, և զջուրն յերկիր ոչ դնեն. այլ կապեն ՚ի ձողս և ցցեն. և անդ է դադարք հաւուցն զհետ ջրոյն, որ տանին հաւքըն ըստ թուոյ խնդրոցին. և այսպէս գան հաւքն, և կորուսանեն զմարախս։ Եւ մեք հաւատամք զամենայն գործ ՚ի խնամոցն Աստուծոյ արարեալ, որ ըստ մեղայ աշխարհի թոյլ տայ գալ պատուհասին, և դարձեալ բժշկէ ողորմութեամբ իւրով՝ որպէս և կամի. որպէս և այս պատուհաս մարախիս՝ ետ զայս հաւքս դեղ և սպեղանի։

ԾԵ

ՎԱՍՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԻՆ ՈՐ ԵՂԵՒ ՀՐԱՄԱՆԱՒ ՄԱՆԳՈՒ ՂԱՆԻՆ

Առդ յեօթնհարիւր և երեք թուին Նայոց առաքեաց Մանգու ղանն և մեծ զօրավարն Նաթու՝ այր մի ասիկան, Աղուն անուն, որ ՚ի Պէյուգ ղանէն առեալ էր հրաման վերակացութեան հարկայն արքունի ՚ի հնազանդեալ աշխարհացն. և միւս ևս այր գլխաւոր ՚ի տանէ Նաթուին, որում անուն էր Ծուրա Աղա[4], հանդերձ այլօք բազմօք՝ որ ընդ նոսա, աշխարհապիր առնել յամենայն ազգս՝ որ ընդ ձեռամբ նոցա էին հնազանդ։

1 Տպ. կարգ կալեալ եզերոցն։

2 Կրման աշխարհ յեզերս Պարսկային ծովոյն։ Այսպիսի լինէ անուն և այժմ զմերոյ Հայաստան աշխարհիս զալբեր Ս. Յակովբայ որ ՚ի Մասիս։

3 ՕՕ. յանէպս։

4 Ա. Թուրալեայ։

նազանդեալ. և նոցա առեալ զայս հրամանն ելին ընդ աշխարհս ամենայն կատարել զգործն. և հասին և յաշխարհս Նայոց և Արացանց և Աղուանից, և որ շուրջ զնոքօք գաւառք. սկսեալք՝ի տասնամենից և՝ի վեր՝ գրով՝ի համար[1] արկանել զամենեսեան, բայց՝ի կանանց. և յամենեցունց պահանջել խստագոյն հարկս՝ առելի քան զկար մարդոյն. և սկսան չքաւորել, և նեղէին անհնարին կտտանօք և չարչարանօք և գեղոյիւք. և որ Թագչէր՝ ըմբռնեալ սպանանէին. և որ ոչ կարէր հատուցանել զհարկն՝ զմանկունս նոցա առնուին ընդ պարտուցն. քանզի պարսիկ տաճկահաւատ սպասաւորօք չրջէին։ Աւր և իշխանք տեարք գաւառաց՝ նոցուն գործակից լեալ՝ի նեղելն և՝ի պահանջելն, վասն իւրեանց շահելոյ. և այսու ոչ բաւականացան, այլ և զամենայն արուեստագետս եթէ՝ի քաղաքս եթէ՝ի գիւղս՝ զամենայն՝ի հարկի կացուցին. այլ և զծովակս և զլիճս ձկնորսաց, և զերկաթահանս և զդարբինս և զշպարս[2]. և զի պիտոյ է մանաւանդ ասել, զամենայն դուռն շահից հատին՝ի մարդկանէ, և ինքեանք միայն շահէին. և զամենայն աղահանս առին որ՝ի Կողբ[3], և յոր այլ կողմանս կողմանս։ Եւ՝ի վաճառականացն բազում ինչ ուսեալ և շահեալ, կուտեցին բազում գանձս ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուականաց. և այսպէս զամենեսեան սղացուցեալ[4], վայրէ և աշխարհով լցեալ զաշխարհս, Թողին չար ոստիկանս՝ի վերայ աշխարհացս, զնոյն պահանջել յամենայն ամի նովին համարով և գրով։ Նայեց մեծարեցաւ՝ի նոցանէ այր մի մեծատուն վաճառական, Ումիկ[5] անուն, զոր ինքեանք Աբել կոչէին, այր բարեգործ, զոր երբեմն յիշատակեցաք. որ ապրեցաւ յաւերն Կարնոյ քաղաքի՝ի Թաւթարէն, հանդերձ որդւովքն. և էր յայնժամ՝ի Տփղիս քաղաքին բնակութիւն կալեալ, և հայր առնուանեալ Թագաւորին Աղ ջաց Վաւրթի և մեծարեալ

1 ՕՕ. գրով համարս։ Տպ. ընդ գրով համարոյ։

2 Թուրին բովք պաղեղի, որ և ընդ կոչի առ մեզ, որպէս ցոպ՝ի Թուրքաց. այլք իմանան զդեղագործս կամ չալարիչս։

3 Հին և անուանի աղահանքն՝ի ճակատ գաւառի, մերձ՝ի Սուրմառի. որ և ցարդ մատակարարէ զպատուական նիւթն։

4 Ա. Գ. սղացոյցեալ։

5 Վ. 147։

'ի ջանէն զրով և յաւետեան աւազացն։ Նայց յետ յետ-
զետյականացն ոչ ինչ առին հարկս, զի չունէին հրամանն
'ի ջանէն. նոյնպէս և որդիքն Պարսկանին՝ Շ նորհա-
ւորն՝ և Պ՚կրտիչ՝ ընչաւէտք և մեծատունք։

ԾԶ

ՎԱՍՆ ԵՐԹԱԼՈՑ ԲԱՐԵՊԱՇՏ ԱՐՔԱՑԻՆ ՀԵԹՄՈՑ ԱՌ ԲԱԹՈՒ ՂԱՆՆ

Մեծահաւատ և քրիստոսասէր արքայն Նայոց Տէ-
թում՝ որ 'ի կողմանս Կիլիկեցւոց նստէր 'ի քաղաքն
Սիս, նա յառաջագոյն առաքեաց զեղբայր իւր զՍըմ-
բատ, որ զօրավարն էր նորին, առ ղանն Կոյուգ՝ ըն-
ծայիւք և պատարագօք, և դարձաւ 'ի նմանէ ընծայիւ
և հրովարտակով ընդունելութեան. իսկ յորժամ Թա-
գաւորեաց Պ՚անգու ղանն՝ առաքեաց մեծ Թագաւորա-
յն և զօրապետն Նաթու՝ որ 'ի կողմանս հիւսիսոյ
լետղ առեալ կայր անթիւ բազմութեամբ որ ընդ նմա՝
ստ ահին մեծ և անհուն գետոյն՝ զոր Եդիլ կոչեն, որ
հոսանէ 'ի ծովն Կասբից, առ Թագաւորն Տեթում
գալ տեսանել զնա և զՊ՚անգու ղանն։ Եւ նա երկու-
ցեալ 'ի նմանէ՝ գայ գաղտագողի այլակերպեալ զինքն՝
վան ահին Կումբաց, ոչք սահմանակից նորա էին.
զոր Յոռոմոց սուլդան անուանեն, որում անուն էր Կ-
զատին [2], զի ոխս մեծ երեալ ունէին ընդ նմա՝ վասն ձեռն
տալոյ նորա 'ի Նաթարն. և փութով անցեալ ընդ եր-
կիր նորա [3] յաւուրս երկոտասան եկն 'ի Կ յարս քա-
ղաք, և տեսեալ զՆաչու-նուէնն, որ զօրապետ էր Նա-
թար զօրուն՝ որ յարևելս, և առ այլ մեծամեծան, և
պատուեալ 'ի նոցունց, զտեղի առ յոտն Ք՚րագածու,
հանդէպ լերին Ք՚րայի, 'ի գիւղն որ կոչի Կ՚արդենիա.
'ի տանն իշխանին՝ զոր Կ՚ուրդ անուանէին, Նայ ազ-
գաւ, կրօնիւք քրիստոնեայ [4], և որդիք իւր Կ՚աչէ և
Նասան. և կին նորա Խորիշահ յազգէ Պ՚ամիկոնէից՝

1 Վ. 155։
2 Աղզէտտին Քէյ-Քաուս Բ, սուլտան Ղոնիոյ։
3 Յամին 1254։
4 Որ էր վերակացու կարգեալ այնց կողմանց 'ի մեծէն Ջաքարէէ սպասալարէ. տոհմ նորա ցվէց ազգ յիշի յարձանս վանորէից Ջո-ղոգեցոյ, նոյնպէս և մարզպանայ Մամիկոնէ։

դուստր Մարզպանայ, քոյր Ներսէհ-պէկին և Վրիգո-
րոյ. մինչև բերան նմա ինչք ի տանէ իւրմէ՝ ի պետս
ընծայից և պատարագաց, զոր առաքեաց Հայր նորա իշ-
խանաց իշխանն Կոստանդին, յայնժամ ծեր գոլով, և
որդիք նորա Լևոն և Թոռոս՝ զոր ելիցէ փոխանորդ
իւր. զի փոխեալ էր առ Վրիստոս բարեպաշտ Թագու-
հին նորա Օ ապել անուն, որ Թարգմանի Աղխասբեթ,
այս է Աստուծոյ եօթներեակ[1]. զի արդարև ըստ անուանն
և հանգիստ էր նա կամացն Աստուծոյ, բարեգործ, ո-
ղորմած և աղքատասէր, դուստր մեծ Թագաւորին
Լևոնի՝ առաջնի պսակաւորին: Նա իբրև գիտաց մեծ
կաթուղիկոսն Կոստանդին՝ եթէ գնաց նա խաղաղու-
թեամբ, և դադարեալ է ի մեծն Հայք, առաքեաց
զմեծ վարդապետն Յակոբ՝[2] զայր բանաւոր և իմաս-
տուն, զոր առաքեալ էին յառաջագոյն վասն սիրոյ և
միաբանութեան՝ առ Թագաւորն Յունաց Յովհաննէս[3]
որ ունէր զկողմանս Նիւս, և մեծացեալ էր յաւուրսն,
և առ պատրիարքն նոցուն, երթեալ իմաստախոհ բա-
նիւք աստուածայինն գրոց՝ ընդդիմացան հարցաքննու-
թեան ժողովոյն Յունաց, որ յաղագս մի բնութիւն
ասելոյ ի Վրիստոս բամբասէին զմեզ Նեստորեանս
լինել. և նա խոհեմ բանիւք եցոյց գրովք յերկուց միա-
ցեալ զՎրիստոս՝ Աստուած և մարդ կատարեալ երկո-
քումք, անձառ միաւորութեամբ, զաստուածութիւն
ոչ կորուսեալ և զմարդկութիւն ոչ շփոթեալ ի մի
բնութիւն փառաւորեալ, գործելով աստուածաբար և
մարդկապես: Նոյնպէս և որ վասն սուրբ-աստուա-
ծին էին բանք, զոր մեք ասեմք ի դէմս Որդւոյ, ըստ
Յովհաննու աւետարանչին վկայութեան, և որ այլ գայ-
թակղութիւնք կային առ նոսա, սակս դաւանութեան
մերոյ, զամենայն աստուածիմաստ բանիւք և գրոց վե-
կայութեամբ հաստատեալ՝ չինեաց զմիտս նոցա ի սէր
և ի միաբանութիւն ընդ ազգս մեր, և դարձաւ ի նո-
ցանէ պատուով: Նա զեպիսկոպոսն տէր Ստեփաննոս[4].

1 Յերբայականէն Թարգմանէ, յորմէ և առ մեզ եօթներորդ օրն և եօթնեակն, շաբաթ (սապաթ):
2 Գուցէ անուանեալն Սսեցի ի կաթողիկոսէն Հռետոր:
3 Նախայիշեալն Լասգարիս:
4 Ինա առաքեալ ընդ Յակոբայ

եկն և Մխիթար վարդապետն, որ լինէր ի Սկևռայն, գնացեալ անդ ի կոզմանց[1] արևելից, և Նարսեղ քահանայ որ դեսպան էր Նաթուէին՝ ընդ նմա իսկ եկեալ էր. և Յոհրոս քահանայ կուսակրօն, և Կարապետ որ զրան երէց էր ալքային, հեզ բարուք և գիտանական. այլ և իշխանք յոլովք: Որս ընդ իւր առեալ ալքային՝ գոգաւ ընդ աշխարհս Ջուանից, և ընդ գուռն Դարբանդայ՝ որ է պահակն Ներայ, առ Նաթուն և առ Սարթաչն, որդի (նորա), որ էր քրիստոնեայ հաւատով. և մեծարեալ ի նոցունց բազում պատուասիրութեամբ, ապա առաքեցին առ գան Մանգու՝ ընդ երկայնաձիգ Ճանապարհն, յայնկոյս ծովուն Կասբից. և ելեալք ի նմանէ ի վեց մարերի ամոյ, և յերեքտասան աման մայիսի անցեալ ընդ Ա.յեխ գետն[2] եկին յԱլրն[3], որ է մէջ Ճանապարհին՝ ընդ Նաթուն և ընդ Մանգու գանն. և անցեալ ընդ Ներթիճ[4] գետ՝ մտին յաշխարհն Նայմանին[5]. և եկեալ ի Խարախտայն[6] և անցեալ ի Թարխատան[7] ի չորս հոգի ամոյ, և յերեքտասան սեպտեմբերի՝ ի տօնի նաւակատեաց խաչի, տեսին զՄանգու գան զգան երևելի փառօք նստեալ, և մատուցեալ զընծայս՝ մեծարեցաւ անունն ի նմանէ ըստ արժանւոյն. և կացեալ յօրդուն[8] աւուրս չիսուն, և տուեալ նմա հրովարտակ նշանաւոր, զի մի ոք իշխեսցէ նեղել զնոսա, և զաշխարհն նորա. և ետ զիր ազատութեան եկեղեցեաց ընդ ամենայն տեղիս: Եւ ել ի նմանէ յաւուրն չիսներորդի ի քան և երեք սահմի և ի մի նոյեմբերի. և յերեսուն օրն հասին ի Գ ումաղուրն[9], և եկեալ ի Պէրպաղեխան և ի Պէշպաղեխան[10], և յաւազուտ երկիրն[11],

1 ՕՕ. Ի կոզմանս:

2 Եայիգ, Yaïk, Iaïk որ Թաիկի յունէ արևելից հիւսիսոյ ծովուն Կազբից, և արդ կոչի Ուրալ:

3 Անծանօթ և անստոյգ անուն:

4 Որ խառնի յՕպն և Թաիկին ի հիւսիսային Ովկիանոս:

5 Մեծ տոհմն Թաթարաց, ի սահմանս Ալթայի լերանց:

6 ՕՕ. Խորախտայն: Ան է Գարա-Խիդայ, աշխարհ ընդարձակ ընդ մէջ Թուրքաստանի, առնապատին Քօպեայ և Դխալեթայ. այժմ Փոքր Պուխարա:

7 Որ յելից և հիւսիսոյ Գարա-Խիդայի, ուր էր Գարագօրում գահ մեծի ղանին:

8 Ձմեռնաքն ի բանակին:

9 Թուի ի հարաւոյ լերանց Գարագօրումայ յանապատին Քօպեայ կամ Կոպեայ:

10 Պէրպաղեխան անծանօթ. իսկ Պէշպաղեխան՝ Պիշպալիք՝ քաղաք էր Ույղուր Թուրքաց և յառաջն կոչէր Իլը:

11 Վերայիշեալ մեծ անապատն է՝ Կոպի:

յորում կային մարդիկ վայրենիք, մերկք, մազ ունելով միայն ի գլուխն. և ստինք կանանց մեծ յոյժ և երկայն. և էին անբանք. յորում կան և ձիք վայրենիք, գեղին և սև գունով, և ջորիք սպիտակ և սեաւ գունով, և մեծ քան զձի և քան զէշ, և ուղտք վայրենիք՝ որք ունէին երկուս կուտակինս: Եւ անտի եկին յԱբելեին, և ապա մտին ի Ծովբաստան. ի Նամպալեին[1], և ի Խուձաստան, և յԱնկապալեին[2], և անտի յԱկոփոտուկն, և ի Դինկապալեին, և ի Ծուլատան. և անցեալ ընդ Աստ–գօլն՝ և ընդ Կաթին–ծոցն[3], եկին յԱլսալին[4], և յԱլանպալեին[5], և անցեալ ընդ գետն որ կոչի Նիլան–Աւ[5], և անցեալ ընդ բազուկ լերին Տօրոսի[5], և եկեալ ի Դալաս[6]: Եւ եկեալ առ Ձալասան՝ որ էր եղբայր Անգու ղանին, և առեալ էր իւր բաժին զկողմանս արևելից[7]. և ապա դարձեալք յաբևմտից ի Հիւսիս՝ եկին ի ԽուԹուխչի–ղան[8], և ի Պերքանէն[8], և ի Աուղուլ–ղանն, և յԱլբուսայ–ղանն, և ի Դայիքանէն[8], և ի Խուզլան՝ որ է Դաճոց, և ի Ինդրախոյրն[9], և ի Աղնաին՝ որ է Խարչուխ լեառն[10], յորմէ Աալչուխիքն[11] են, որոյ սկիզբն ի Տօրոս լեառնէ, և երթայ մինչև ի Խարչինն, և հատանի: Եւ անտի եկին առ Արթաին՝ որդի Դաթուին՝ որ երթայր առ Անգու ղանն, և անտի ի Ինղաին, և ի Աօրայն՝ որ է սաստիկ մեծ[12], և ի Խարաչուին, և յԱ-

1 Անճանօթ են դիւք քաղաքացս, այլ Ճանապարհն ընդ ասբևմուտս է Հարաւախաւն:

2 Ըստ այլոց Անկի–պալեին, որպէս թէ Եէնկի (նոր):

3 Սիւտա–կէօլ՝ թարգմանի կաթին ծով, և Թուխ լիճն մեծ պալքաշ, կամ մի ի մերձաւոր լճաց անապատին:

4 Ալ–մալիք կոչեցեալ ի Թուրքաց, և Թուխ լինել ընդ մէջ վերչեալ լճացդ և Խաչ լճի:

5 Երկոքին սա անուանքդ ջՕձ նշանակեն (Էլան), և ծանօթ է ցարդ Իլի քալաք և գետ ի հիւսիսոյ Թխանշան լերանց որ են կոչեցեալ բազուկդ Տօրոսի:

6 Գալաք, գետ և լճակ համանուն՝ ընդ մէջ Ջուխ գետոյ և մեծի գետոյն Սիհունի (Եաքսարտ):

7 Ըստ վերոյգրելոցդ և ըստ բաժնին Մանկուի ի գէպ էր ասել ասբնդպէց:

8 Անճանօթ տեղիք ի հիւսիսոյ կամ յայմէ մեծի գետոյն Սիհունի:

9 Այլք Խնդախոյր:

10 Թուխ Ալա–Թաու կոչեցեալ բազուկն Թխան–շան լերանց:

11 Սէլճուք Թուրքք:

12 Սիհուն կամ Սիր–Տէրեա և ըստ հնոց Եաքսարտ գետ մեծ, որ Թաւիւ յԱրալ ծովալիճ:

տեն, և՛ ի Սօրի, և՛ ի Հ)ԼԱրատն[1], և՛ ի Ը Ո ուռնաւեան, և՛ ի Գուլշանն։ Եւ անտի յերեսուն օր՛ ի Ամըրշանդ[2], և՛ ի Սարխուշն[3], և՛ ի Վրման[4] և՛ ի Նուխարա. և ապա անցին ընդ գետն մեծ Ջ Հուն[5]. և եկին՛ ի Ամըրմըն[6], և՛ ի Սարախս[7], և ապա՛ ի Տուս[8] որ կայ ընդդէմ Խորասանայ, որ կոչի Նօղաստան[9]. և մտեալ՛ ի Սաղանդարանն, անտի՛ ի Պատան[10], և ապա յաշխարհն Նըլսոյ[11] ՛ի սահմանս Սուրհեաին[12]. և եկեալ՛ ի Տամղան[13], և յԱԽ մեծ քաղաքն[14], և՛ ի Խզուինն[15], և անտի յԱՆՀ[16] և՛ ի Ը անգիան[17], և՛ ի Սհանա[18], յերկոտասան օրն՛ ի Ճանվըկ։ Եւ յետ քան և վեց աւուր անցեալ ընդ գետն Նրասխ, և եկեալ՛ ի Ախիան[19] առ Նաչու-նուէն, որ գլխաւոր էր Ճամբայ զօրուն, և նա յուղարկեաց զնա առ Խօձա-նուէն, զոր Թողեալ էր փոխանորդ իւր գլխաւոր զօրուն. և ինքն առեալ զգըլխաւոր զօրուն՝ գնաց ընդառաջ Խօլաւուէն՝ եղբօր Սանգու ղանին, որ գայր յարևելս։

Իսկ Թագաւորն քարեպաշտ Հեթում եկեալ՛ ի

1 Օձրալը ցարդ ծանօթ է յեղը Սիհունի, առ որով և այլք ոմանք։

2 Ի մայրաքաղաք մեծին Պուխարայ, ըստ այժմուս. ուր և յետոյ յիշեալն Բուխարա մեծ քաղաք։

3 Թերևս քաղաք համանուն Չառաֆշան գետոյ. առ որով և Տ-ս։

4 Գէրմինիէ զարդիս։

5 Ճիհուն կամ Գեհոն, որ և Ամու-տէրեա, և ըստ նախնեաց Ո.քսոս. և սա Թափի յԱրալ։

6 Երկու քաղաք են յայս անուն առ համանուն Մերուս կամ Մերվ կամ Մըրմն գետով, որ և Մուրղ-ապ. մին՛ ի հիւսիսոյ՝ Մէրվ Չահիճան, ընդ որ Թուի անցեալ Հեթմոյ, միւսն ընդ հարաւ Մէրվ Ա-ղուպ, նշանաւոր՛ ի հնումն, ուր պոր մեծի քաջութեան գործեալ է սրբոյ և մեծին Վարդանայ։

7 Ծանօթ է և այժմ Սէրուխս անուամբ, յարևմտից Մէրվկրուտայ առ Դէհէնա գետով։

8 Ա. Գ. Տուտ. Բ. Տունս. այն է Դուս քաջածանօթ քաղաք Խորասանայ։

9 Թերևս Ռուէդ՝ ըստ աշխարհագրութեան Խորենացւոյ։

10 Ո Պատայն այժմ Պօստամ աւան ընդ մէջ Ասէրապատի և Տամղանայ։

11 Տպ. Երոլոյ։

12 Մուղհեռքն աւազակք. տես Վ. 97։

13 Տամղան, ՛ի հոմանուն գաւառի որ ՛ի հարաւոյ Մազանդարանի։

14 Մերձ էր յայժմեան Թագաւորանիստն Դէհրան։

15 Յարևմտից հիւսիսոյ Դէհրանայ՝ քաղաք մեծ։

16 Աւան յարևմտից Գազուինայ։

17 Ի հիւսիսոյ Ահարայ։

18 Ընդ մէջ Զէնճանայ և Դավղիժու, ՛ի սահմանածայր Ասըրպատականի Մարաց։

19 Յերկրին Սիւնեաց, ՛ի հայս։

տուն իշխանին Բրդին ի գիւղն Արգենիս[1], ուր թա-
ղեալ էր զաղխ իւր և զկարասի, և ինայր գալստեան
Բարսղի քահանայի՝ զոր յուզարկեալ էր առ Բաթուն
վերստին, զի ցուցցէ նմա զգիրան և զհրաման Անգու-
ղանին, զի և նա ըստ նմին օրինակի գրեսցէ հրամանս։
Ապա եկին առ նա վարդապետք իւր, Յակոբ՝ զոր ե-
թող աստէն ի պետս գործոյ եկեղեցւոյ, և Մխի-
թար՝ զոր գարձոյց ի Բաթուէն, մինչև երթեալ էր
առ Անգուղան. այլ և եպիսկոպոսք և քահանայք և
իշխանք քրիստոնէից՝ որք գային առ նա՝ սիրով ընդու-
նէր զամենեսին. զի այր քաղցր էր և իմաստուն և գիտ-
նաւոր գրովք. և տայր պարգևս, և ուրախ արձակէր
զամենեսին. տայր պարգևս և հանդերձս քահանայա-
կանս ի զարդ եկեղեցեաց, զի յոյժ սիրող էր պատա-
րագի և եկեղեցւոյ. և ընդունէր զամենայն ազգայ քրիս-
տոնեայս, և աղաչէր սիրով կալ առ միմեանս, իբրև
զեղբարս և զանդամս Քրիստոսի. որպէս պատուիրեաց
Տէր, Թէ յայսմ ծանիցեն Թէ իմ աշակերտք էք՝ ե-
Թէ սիրէք զմիմեանս։

Բազում իրս զարմանալիս և անծանօԹս պատմէր
մեզ զբարբարոս ազգաց՝ զոր տեսեալ էր և լուեալ։ Ա-
սէր, Թէ կայ աշխարհ մի անդր քան զԱտայիքն[2].
որ կանայքն են ի ձև մարդոյ՝ բանականք, և արքն ի
կերպարանս շանց, և են անբանք և մեծք և մազեղք.
և ոչ ումեք Թողուն մտանել յաշխարհս իւրեանց՝ շուն-
քըն. և որսան որս շունք՝ և այնու կերակրին շունք և
կանայքն. և ի խառնակել շանց ընդ կանանցն՝ արուքն
շանց կերպն ծնանին և էգքն կանանց։

Կայ և կղզի մի աւազուտ՝ յորում բուսանի ծառօ-
րէն ոսկր ինչ պատուական, զոր ձկնատացն կուչեն. և ի
հատանելն՝ այլ բուսանի ի տեղին, ըստ նմանուԹեան
եղջերաց։ Կայ և աշխարհ բազում կռապաշտից, որ
պաշտեն կուռս կաւեղէն մեծ յոյժ, անուն Շակմու-
նիա[3], և ասեն Վաթսուած երիք հազար քառասուն ա-
մաց. և կայ ևս երեսուն և հինգ դուման ամ, որ է

1 Յերագածոյան գաւառի Ա-
րարատայ։

2 Կաթայի կամ ԽուԹայի կո-
չէին արևմտեան հիւսիսային կամ
հարաւոյ Չինք, ի գրեցս միջին
դարուց։

3 Վ. 159։

մին գուման տան հազար և քառասուն ամաց. և ապա հանեն զնա յաստուածութենէն: Ա.յլ միւս ևս ոմն՝ որում անուն էր Ագրին[1], արարեալ են և նմա պատկեր կաւեղէնս անհնարին մեծութեամբ[2] գեղեցիկ տաճարի. և աղն են ամենայն հանդերձ կանամբք և մանկտովք քուրմք, և անուանին Տոյինք, գերծածք հետ օք և մրուոք. ունին և փիլոն գեղին ըստ նմանութեան քրիստոնէից, բայց զանջօքն ունին և ոչ զխիկամբք. և են պարկեշտ՝ի կերակուրս և յամուսնութիւնս. առնուն կին՝ի քան ամին, և մինչև յերեսուն ամին շաքաղեն երկիցս անգամ մերձենան՝ի նոսա, և մինչ՝ի քառասուն՝ յամենեան երէք հետ. և յորժամ անցանէ հիսուն ամն՝ այլ ոչ մօտին՝ի նա:

Ասացում և այլ ինչ պատմեր Թագաւորն իմաստասէր՝ի խժական ազգացն, զոր Թողաք մեք, զի մի յաւելորդ համարեսցի: ՅուԹ ամին ապա եհաս յերկիրս Հայոց յետ ելանելոյ՝ի Ա՛անկու զանէն. և էր Թուին Հայոց եօԹն հարիւր և չորս:

ԾԷ

ՎԱՍՆ ԿՈՏՈՐԱԾԻՆ ՅԵՐԿՐԻՆ ՀՈՌՈՄՈՑ

Արդ՝ի սկսանել Թուին Հայոց եօԹն հարիւր և հինգ՝ մեռաւ Ադաթու զօրապետն Հիւսիսոյ, և որդին նորա Ա՛արդանն՝ի Ձանապարհին էր, զի երԹայր առ Ա՛անգու զանն. և ոչ դարձաւ՝ի տուն իւր ԹաղԷլ ըզհայրն իւր, այլ գնաց զառաջի եղեալ Ձանապարհս իւր. ընդ որ յոյժ ուրախացեալ Ա՛անգու զանն՝ եւ ընդ առաջ նորա, և մեծարեաց զնա՝ի պատիւ յոյժ մեծ. և ետ նմա զիշխանութիւն Հօրն իւրոյ լիշխել ամենայն զօրացն, այլ և ամենայն հնազանդելոց իշխանութեան նորա, և երկրորդ իւր կոչել, և տալ հրաման տիրաբար, և յուզարկեաց զնա՝ի տուն իւր: Ընդ նմա էր և բանեցպաշտ իշխանն Խաչենոյ Ջալալն, որ երԹեալ էր ցուցանել զաղէտս իւր՝ տեառն տիեզերաց, զոր կրեաց նա Ա՛ղուանն ասիկանէն. որ հանդիպ գերծաւ՝ի մա-

1 Վ. 189:

2 Տպ.՝ի գեղեցիկ պատճառի:

հուանէ ՚ի սահմանէ Տաճկաց. և եթ նմա գիր՝ խնամ-
նութեան իւրոյ տիրել սեփականաբար և ոչ երկնչել
յումեքէ. զի սիրէր զնա Արտաքան վասն քրիստո-
նէութեանն, զի և նա քրիստոնեայ էր։ Իբրև [1] եհաս
յիշխանութիւն իւր Արտաքան երևելի վաճառք, ազգա-
կանքն իւր տաճկահաւատ Նարտքայն և Նարքաշայն՝
եւտուն նմա մահադեղ և լուծին զնա ՚ի կենացս, և մեծ
տրտմութիւն եղև ամենայն քրիստոնէիցն, այլ և գըլ-
խովին իսկ Վանգու զանխն, և եղբօր իւրոյ Խօլաւուին,
որ տիրէր ամենայն կողմանցն արևելից։ Նայց մինչև
եղեալ էին այսոքիկ իրք, մեծն ՚ի զօրավարս՝ զանաճևն
Խալաւու՝ հրաման եթ ամենայն Աղթար զօրուն՝ որ
յարևելս, որոց գլխաւորն էր Նաչու-նուէն, ամենայն
ախիւք իւրեանց և ընչիւք՝ Թողուլ զերկիրն կալուածոյ
քնակութեան իւրեանց՝ զՎուղան և զաշխարհն Ղուա-
նից, Խայոց և Վրաց, և երթալ (յերկիրն) Խոռոմոց.
զի ինքն նստցի փոխանակնոցա ՚ի բարի երկիրն. զի յոյժ
բազմութեամբ եկեալ էր նա. մինչ զի ասեն թէ ամիս
մի հազիւ բովանդակեցաւ զօր նորա անցանել ընդ մեծ
գետն Ջ հուն։ Վասն և ոմանք յազգականաց նորա ՚ի
կողմանց Նաղթուի և Արտախին եկին անցին ընդ դուռն
Նարբանդայ յայնկոյս՝ բազում և անթիւ զօրօք, որք
մեծամեծք և գլխաւորք իշխանութեամբ. որոց անուանք
քըն էին՝ Նալախա, Տուտհար, Վ ըլը, զոր մեք իսկ
տեսաք, Թոռունք Ըրնկըզ զանխն [2], զոր և աստուածծոր-
դիս ասէին. որք հալածեցին զիւրացուցին զամենայն
անցս Ջանապարհին՝ ընդ որ անցանէին, զի սայլիւք իսկ
գային, և բազում տառապանս հասուցանէին ամենայն
աշխարհաց հարկապահանջութեամբ և յափշտակու-
թեամբ, ուտելով և ըմպելով անյագաբար, և՚ի դրունս
մահու հասուցին զամենայն ազգս։ Վասն և միւս ընդ
այլ բազումս նոր եղաւ Վ ըղունէն՝ մահ և խափչու-
ր [3]. եղաւ հրաման ՚ի Խալաւուէն պահանջման հար-
կի, զոր Թաղարն [4] ասեն. յամենայն գլխոյ որ մտեալ
՚ի հարկատուցն առնուլ։

1 ՕՕ. Է–։

2 Թոռունք և Թոռնորդիք ճիւ-
էեայ որդւոյ Ճինգկզխանի։

3 Տպ. Փախըրի։ — Թուի ա-
նանահարկ, որպէս և մահն. պատ-
միչք Թաթարաց տոնըր կոչեն ըզ-
հարկատորդ անասնոց, այսինքն զմի

4 ՕՕ. Նոխրդան։ Թաղարն հարկ՝
բազում ուրեք նշանակի յարձանս
Անդոյ և այլուր, առանձնակ և
զոյգ՝ որպէս Եղին–Նաղար, Կուէ–
Նաղար։

եր՝ի գիրն արքունի՝ պահանջէին հարիւր լիտր ցորեան, չիսան լիտր գինի, երկու լիտր բրինձ և ծնծաստ[1] եւ րեք տոպրակ, երկու չուան, մի սպիտակ[2], մինետ, մինալ, Թող զայլ կաշառս. և՝ի քան անասնոյն մի անասուն և քան սպիտակ. և որ ոչ գոյր՝ զուստերս և զդստերս առնուին ընդ պահանջմանն. և այսպէս նեղեցաւ և տապասպեցաւ երկիրն ամենայն: Ուստի Աթաթար զօրքն Թէպէտ զԺուարթեցան Թողուլ զկալուածոյ երկիրն լրեանց, չսկամայ Թողին չահէ նորա, զի չոյժ երկրէչէին՝՝ որպէս՝՝ի զանէն, և գնացին չաշխարհն Չուռմոյ: (Աւ սուլտանն Չուռմոյ) եւ ընդդէմ նոցա պատերազմաւ, և ոչ կարաց ընդդիմանալ, այլ փախուստական անկաւ նա Ա՛լայիա[3] կղզին. և նոքա՝՝ի սուր սուսերի մաշեցին զամենայն գաւառս իշխանութեան նորա, մինչև՝՝ի ծովն Ավկիանու և Պանտոսի, կոտորեցին զնոսա, և չափշտակեցին. կոտորեցին զԱրունոյ քաղաք և զՉնկիան և զԱևաստ, զԱեսարիա և զՉօնն, և որ շուրջ գնոքօք գաւառք. և զաղխս իւրեանց դարձուցին չետս, գնալ չիջևանս իւրեանց՝ հրամանաւ Չօլաւունն, և ինքեանք ասպատակ չրջեալ ընդ կողմանս կողմանս: Պնաց ընդ նոսա և Թագաւորն Չեթումայ, որ եկեալ էր՝՝ի Ա՛նդու զանէն և՝՝ի Նաթուէն և Ասրդախէն և՝՝ի Չօլաւուէն. և էր առ[4] Նաչու-նուինն, որ բազում զօրօք առաքեաց գնա չերկիր իւր՝՝ի Կիլիկիա, ՝՝ի քաղաքն Ասիս. և բազում ընծայիւք և զօրօք սպասաւորութիւն կատարէր Նաչու-նուինի[5] և զօրացն՝ որ ընդ նմա, մինչև զի Թուղթ գոհութեան և գովութեան գրեալ առ Չօլաւուն վասն նորա: Նա մեծն Չօլաւու՝ զի այր պատերազմող էր, ժողովեաց զամենայն բազմութիւն զօրացն և գնաց չերկիրն Ա՛ուզհետաց, Ա՛լամուդ[6], և կալաւ զնա. զի՝՝ի բազում ամաց պաշարեալ էր գնա զօրն արքունի. զի որդիք Ա՛լադընին սպանին զՀայրն իւրեանց, և ինքեանք եկին առ Չօլաւուն. և նա հրաման ետ քակել զամենայն բերդո-

1 Թուի հասկախառն կամ յար- սիոն ըստ հնոց, հրուանդան և ա-
դախառն գարի կամ այլ ընդեղէն: մուր խարակք չեզեր Պամփիւլիոյ:
2 Արծաթի դահեկան ժամա- 4 ՕՕ· Էռո:
նակին: 5 ՕՕ· Բաչունոյ:
3 Թուի Ալայա կամ կորակե- 6 Վ· 97· 149:

բայն ամուր՝ որ կային Ալամուդն։ Եւ ինքն պատուէր հրամանի ետ ամենայն զօրացն և ամենայն հնազան-դելոց ընդ ձեռամբ նոցա՝ գումարել ի միասին ի վե-րայ մեծ քաղաքին և իշխանութեանն՝ որ կոչի Պազ-տատ, այս է միջոց Պարսից և Յունաց, զի դեռ չև ևս էին առեալ զնա. և խալիփայն որ նստէր ի նմա՝ էր յազ-գէն Մահմետի. զի խալիփայ յետասնից[1] ասի, ո-րում հնազանդեալ էին ամենայն տաճկահաւատքն և սուլտանքն որ յազգէն Թուղրքաց և Քրդաց և Պար-սից և Ալիմացւոց, և այլոց ազգաց. և նա (էր) գլխա-ւոր հրամանատու իշխանութեան նոցա[2]. և նոքա դա-շամբք հնազանդէին և պատուէին զնա, որպէս զազգա-կից և զհամազգի օրէնսդրին իւրեանց, առաջին ..... ցուցչին։ Պնացին յայսոցալան[3] և այլ մեծամեծ գլխա-ւորք կողմանցն Բաթուէին՝ Պոլն և Խալաջայն և Տուտարն[4] և Պատաղանն. զի ամենեքեան պատուէին զՀօլաւուն որպէս զղեանն, հնազանդէին նմա և երկը-չէին ի նմանէ։

ԾԸ.

ՎԱՍՆ ԱԽԵՐԱԾՈՑՆ ԲԱՂԴԱՏԱՑ

Մեծն ի Թագաւորս երկրի և տիեզերակալ Ման-կու ղանն յեօթնհարիւր և եօթն Թուին Հայոց՝ զօր գումարեաց անթիւ և անհամար, և գնաց ի հեռաւոր աշխարհն ընդ կողմանս արևելից հարաւոյ, ի վերայ ազգին որ կոչի Կանգաս[5], զի ապստամբք էին ի նմա-նէ, և ոչ տային նմա հարկս՝ իբրև զայլ աշխարհս, զի էին արք պատերազմողք և ամրացեալք աշխարհաւ, և կռապաշտք, և ուտէին զծերս իւրեանց և զպառաւսն, զի ժողովէին ցեղքն ամենայն՝ որդիք և Թոռունք և Թոռնիցք, և զծերացեալ ծնօղս իւրեանց մորթէին ընդ բերանն, և հանեալ զմիսն և զոսկերսն եփէին և

1 Իբրև յաջորդ կամ տեղա-կալ։
2 ՕՕ. նորա։
3 Թուի՝ ի սղոյն ի պաշտօնեայ։
4 Վերոյիշեալքն (218)։
5 Կանգիաս ըստ Թաթարաց, որ է հարաւային Չինաստան, ուր և մեծ Թագաւորութիւն էր յայն-ժամ Սունկ կոչեցեալ։

ուտէին առանց հնացուածի, և զմորթն հանեալ տիկ՝ առնուին և մէջն ընուին գինի, և ընդ առնացի անդամըն ըմպէին ամենեքեան՝ որ յազգէն էին և ոչ օտարացեալք, իբր թէ ի նմանէն սերեալք. և նոցա սերիան է զայն ուտել և ըմպել, և զսկեռն պագանեն պատեալ ոսկով՝ նուաւ ըմպէին զբուխանդակ տարին։ Ոգաւ ի վերայ նոցա ի պատերազմի՝ զանն Ա՛անգու, և կոտորեաց և հնազանդեցոյց զբերեզապէս. և ի դառնալն ի տուն՝ կալաւ զնա ցաւ մահու և մեռաւ. և կալաւ զաթոռ նորա եղբայր իւր Ա՛րիք-բուղային[1]։ Ի՛սկ մեծն Հօլաւու եղբայր նորուն և գլխաւոր ի նմանէն կարգեալ ի վերայ զօրուն որ յարևելս, հրաման ետ ամենայն հնազանդելոց իւրոց առ հասարակ՝ գնալ ի վերայ մայրաքաղաքին Տաճկաց՝ Պաղտատայ, որ էր նախատ արքայութեան Տաճկաց, և զթագաւորն որ նըստեր ի նմա՝ ոչ կոչէին սուլտան կամ մելիք, որպէս սովոր են զայլսն անուանել, որ ի Թուրքաց կամ ի Պարսից և ի Քրդաց էին բռնացեալք, այլ Խալիփա անուանէին, այսինքն յետնոցն ի Մահմետ. ի վերայ նորա խաղաց մեծն Հօլաւու ամենայն բազմութեամբ, ամենայն ազգօք հնազանդելովք, յեղանակս աշնան և ձմերան՝ վանն սաստիկ տօթոյ երկրին։ Նա՛ նախ քան զերթալն իւր՝ հրաման ետ Բաչու-նուինին զօրացն՝ որ ընդ նմա էին յաշխարհն Հուռոմոց՝ գնալ և անցանել զմեծ գետն Տիգրիս, յորոյ վերայ շինեալ է Պաղտատ քաղաք, զի մի ոք փախիցէ ի քաղաքէն նաւովք՝ երթեալ մտանել ի Կատխբուն[2] կամ ի Պատրաբոն. և նոցա անյապաղ արարեալ զհրամայեալն՝ կապեցին կամուրջս նաւեայ՝ ի վերայ գետոյն մեծի, և ընկեցին ցանցս ամուրս հանդերձ երկաթի կեռօք[3] և շամփրօք ի մէջ գետոյն և յատակն, զի մի ոք լողալով զերծանիցի. և հեռի ի քաղաքէն՝ զի մի դիտացեն։ Ի՛սկ խալիփայն Մուստասըմ[4] որ նստէր ի նմա, հպարտացեալ և յանձնապաստան, առաքեաց զօր

1 ՕՕ. Աղբուղային. զոր նուաձեաց մինչ եղբայրն Ղուսիլայ էր։

2 Տիգրեն, կատսիփոն կոչեցեալ ի Յունաց, աթոռ Սասանեանց։

3 ՕՕ. կօփ։

4 Խալիֆայն կոչիւր Մօսդասին կամ Մօսդազէմ որդի Մօսդանասրայ։

բազում ՚ի վերայ այնոցիկ՝ որ պահէին կգետն, ՚ի ձեռն առն միոյ գլխաւորի, որում անուն էր Դաւադար[1], ոստիկան տան նորա. որ երթեալ յաղթեաց զառաջինն, և կոտորեաց ՚ի Ասաթարէն զօրս իբրև երեք հազար. և յերեկոյին հասեալ նստաւ ուտել և ըմպել անհոգութեամբ. և առաքեաց աւետաւորս առ խալիֆայն, թէ հարի զնոսա, սակաւ մնաց, և զնոսա սպառեմ ՚ի վաղիւն:

Իսկ զօրն խորամանկ և բազմահնար Ասաթարէն, զգիշերն աւուրնայն սպառազինեաւք և կազմեաւք՝ պատեցին շուրջանակի զբանակն Տաճկաց, ընդ որս էր և Ամիրէ իշխանն՝ որդի Շ ահնշահի. և ընդ լուսանալ առաւօտուն՝ սուր ՚ի գործ եդեալ առ հասարակ կոտորեցին զամենեսեան և գետամոյն արարին, և ոչ ոք մնաց ՚ի նոցանէ ապրեալ, բայց ՚ի սակաւուց: Իսկ նմին առաւօտու և մեծն Հօլաւու պատեաց զբաղաքն Պաղտատ շուրջանակի, տուեալ ամենայնի գիրկ մի ՚ի պարսպէն փլուցանելոյ, և պահել զգուշութեամբ, զի մի ոք փախիցէ. և զքաջն Պռօշ և զայլս առաքեաց դեպ պանս առ խալիֆայն՝ զալ նմա ՚ի հնազանդութիւն և հարկել զանձն: Եւ նա խստութեամբ ետ պատասխանի և անարգանօք, գրեալ զանձն ջնհանգիր[2], և տէր ծուլու և ցամաքի, պարծելով ՚ի դրօշն Մահմետի, զի աստ է ասէր. և թէ շարժեմ զնա՝ առ հասարակ կորընչիս դու և տիեզերք, և դու շուն մի ես Ասուրք, ասէ, ես զնաիդ տայ քեզ հարկս և հնազանդեցայց: Իսկ Հօլաւուն ոչ ըմբռստացաւ վասն անարգանացն և ոչ գրեաց ինչ մեծաբանութիւնն, այլ միայն զայս ասաց. Աստուած գիտէ զինչ առնէ: Եւ հրամանն ետ և փլուցին զպարիսպն առ հասարակ. և աստ գարձեալ չինել և պահել զգուշութեամբ, և այնպէս արարին. և լի էր քաղաքն զօրօք և ամբոխիւ, և զեօթն օր կացին ՚ի վերայ պարսպին, և ոչ ոք նեռտաճիգ եղև ՚ի նոսա, կամ սուր ՚ի գործ էարկ, ոչ ՚ի քաղաքէն և ոչ ՚ի Ասաթար զօրաց, և յետ եօթն աւուր սկսան քաղաքացիքն խրնդրել զխաղաղութիւն, և ելանէին առ նա սիրով և հնա-

1 Որ է փեշտեաւր دىتاوا այսինքն քարտուղար, զի զայս ասնուն կրէր յայնժամ մեծ հազարապետ տէրութեան խալիֆային:

2 Ջ ե ա ն ի ր . ճիհանկիր جهانكير այսինքն աշխարհակալ:

զանդուԹեամբ, և հրամայեաց Յօլաւուն այնպէս առնել. և ելանէին ընդ դրունս քաղաքին անվԹիւ բազմուԹեամբ ել և ելս առնելով զմիմեամբք, Թէ ո՞ յառաջ հասցէ առնա. և նա զեկեալն բաժանէր զօրացն և հրամայէր հեռացուցանել՝ի քաղաքէն, և կոտորել՝ի ծածուկ, զի մի գիտասցեն այլքն. և կոտորէին զամենեսեան: Եւ յետ չորրորդ աւուրն ել և խալիֆայն երկուորդուվք և ամենայն մեծամեծօք, և բազում ոակի և արծաԹ և ականս պատուականս և մեծագին հանդերձս բարձեալ ընդ իւր, ՚ի պէտս պատարագաց Յօլաւուին և մեծամեծացն. և նա զառաջինն մեծարեաց զնա, մեղադրելով ընդ յամելն և ոչ գալ առնա վաղվաղակի. ապա եհարց զնա. Օ՞րինչ ես դու՝ Ա՛ստուածՙ ես Թէ մարդ. և նա ասաց. Ա՛րդ և ծառայ Ա՛ստուծոյ: Ա՛յն Յօլաւուն. Ա՛պա Ա՛ստուած ասաց քեզ անարգել զիս, և շուն կոչել և ոչ տալ շանս Ա՛ստուծոյ կերակուր և ըմպելի: Ա՛րդ ՚ի քաղցնուլն՝ շունս Ա՛ստուծոյ կերիցէ զքեզ. և սպան զնա ձեռօք իւրովք [1]. այդ ասէ պատճառ քեզ՝ զի ես սպանի զքեզ, և ոչ եթող այլ ումեք սպանանել. և զմի որդի խալիֆային հրամայեաց որդւոյ իւրում սպանանել, և զմիւս որդին տալ գետոյն Տիգրիսի սաղաւաԹ [2], զի ոչ մեղաւ մեզ ասէ, այլ գործակից մեզ եղև ՚ի կոտորել զանզգամն. և ասաց. Ա՛յս այրս բազում արիւն ետ հեղուլ հպարտուԹեամբ, երԹիցէ տացէ պատասխանի Ա՛ստուծոյ, և մեք անպարտս լիցուք. կոտորեաց և զայլ մեծամեծան:

Եւ ապա հրամայեաց զօրացն՝ որ պահէին զպարիսպն՝ լինջանել կոտորել զբնակիչս քաղաքին ՚ի մեծաց մինչև ՚ի փոքուն. և նոցա զկարգ առեալ ըստ օրինակի ոճոյ արտոյ՝ կոտորեցին անվԹիւ և անհամար բազմուԹիւն արանց և կանանց և տղայոց. և զաւուրս քառասուն ոչ դադարեաց սուրն ՚ի գործոյ, և վաստակեցան ձեռք իւրեանց, և զայլս ՚ի վարձու ունէին, և կոտորէին անխնայ: Այլ կին Յօլաւին աւագ խաԹունն քրիստոնեայ էր, որ կոչէր Տօխուզ ԽաԹուն. սա ինդրեաց զքրիստոնեայն՝ որք էին ՚ի Պաղտատ, նեստորական աղանդոյն. և զամենեսեան ետ ի նոսա, և զամենայն ինչս իւր ետ նոցա, և ասաց. Ես ի ձեզ ապաստան խնդրեցի, և ոչ ի Մահմետ, և ոչ ի կուռս ձեր, և ոչ ի Յիսուս, զի ոչ ինչ կարացին օգնել ինձ. և ես ոչ ինչ կարացի օգնել նոցա, զի ոչ ինչ կարացին ինձ օգնել

դով և թէ յայլ ազգաց, և եթող զնոսա ընչիւք և ըստացուածովք. զի խնդրեաց յառնէն իւրմէ՝ ոչ սպանանել զնոսա: Եւ լցան ոսկւով և արծաթով և մեծագին հանդերձիւ. զի էր քաղաքն յոյժ փարթամ, որ ոչ գտանիւր նման նմա ի վերայ երկրի. և ինքն Հօլաւու կալաւ իւր բաժին զգանձն խալիֆին, և եբարձ ի նըմանէ երեքհազար և վեցհարիւր բեռինս ուղտուց. և ձիոյ և ջորւոյ և իշուց ոչ գոյր թիւ. և զայլ տունսն լի գանձիւք՝ կնքեաց մատանեաւ իւրով, և եթող պահապանս, զի ոչ կարաց բառնալ զամենայն, որ անչափ էր բազմութեամբ. զի հինգհարիւր և հնգետասան[1] ամ էր յորմէհետէ շինեցաւ քաղաքն ի Ղափրէ իսմայէլականէ, ի հարիւր ինննսուն և չորս թուին Հայոց, ի վերայ Տիգրիս գետոյն, ի վեր քան զԱտիաբոն, հեռի ի Բաբելոնէ, հինգ աւուր ձանապարհաւ. և զամենայն (ժամանակն զոր) կացեալ էր ի թագաւորութեան իւրև անյագ տզրուկ կըլեալ զամենայն տիեզերս, և այժմ ի բաց փսխեաց յեօթն հարիւր և եօթն թուականիս Հայոց, տալով զվրէժս արեանց զոր եհեղ, և չարեացն զոր գործեաց, յորժամ լցաւ չափ մեղայ իւրոց առաջի ամենագիտին Աստուծոյ, որ հատուցանէ արդար իրաւամբք անաչառ և ստուգութեամբ. և դադարեաց գոռ և ..... թագաւորութիւնն Տաճկաց, որ և տևեաց ամն վեց հարիւր քառասուն և եօթն[2]. և առաւ Բաղտատ յառաջնումն աւուր աղուհացից յերկուշաբաթի օրն, նաւասարդի քսան[3], ըստ շրջագայութեանս: Եւ զայս ամենայն պատմեաց մեզ Իշխանն Հասան՝ զոր Պռօչն անուանէին, որդին Վասակայ բարեպաշտի, որդւոյ Հաղբակայ, եղբայր Պապաքին և Մկրտեմայ, Հայր Մկրտեմայ և Պապաքին և Հասանայ և Վասակայ, որ ականատես և ականջալուր էր իրացս:

1 Եթէ ի ՃՂԴ (745) թուին շինեցաւ և յ'ՉԻ (1258) աւերեցաւ՝ 513 կամ 514 ամք լինէին և ոչ 515. բայց ի սկզբան թուականի շինութեանդ (745) և ոչ իսկ գահակալեալ էր Ջափրայ (Ճեաֆար): Տ. Վ. 150:

2 Ի հիճրէդի թուականէն (621) սկսեալ լինին 637 և ոչ 647 ամք: Բայց հեղինակդ հաշուէ յերևելոյն Մահմետի և տաան ամաւ յառաջ քան զփախուստան:

3 Որ է 4 փետրուարի 1258 ամին. Թէպէտ և մնան մի քաղաքին աւերեալ և բանագնացութիւնք լինէին, այլ աւուրքք ինչ յետոյ եղև առումն նորին և մուտն Թաթարաց:

ԾԹ

ՎԱՍՆ ԱԽԵՐԱՅԻՆ ՄԱՐՏԻՐՈՍԱՅ ՓԱՂԱՔԻՆ

Արդ՝ ի նոյն (ամի) աւերելոյն Նաղդատայ՝ մեծն Յօլաւու՝ ի գալ գարնան ժամանակին զօր գումարեաց և ետ՝ ի ձեռն որդւոյն կրտսերին, որոյ անուն էր Ջ իսա-մուէլ[1], և զմեծ վերակացու տանն իւրոյ զԻլխի-նուէնն[2] առաքեաց ընդ նմա, դնալ՝ ի կողմանս Նփրատ գետոյն՝ զբօսանաց աղագաւ, յառ յաւար և՝ ի հնա-զանդեցուցանել զկողմանն զայնոսիկ: Եւ մինչ գեռ անցանէին ընդ քաղաքն Մարտիրոսայ՝ որ կոչի Մա-ֆարղին, կոչեցին զնոսա՝ ի հնազանդութիւն, տալ զօրս և հարկս, և կալ անհոգութեամբ. և սուլտանն որ՝ ի նմա էր՝ յապզէն Եղեւանց՝ ոչ առ յանձն. այլ զօր ժո-ղովեալ եւ զկնի նոցա և սպան զոմանս՝ ի նոցանէ, և ե-մուտ ինքն՝ ի քաղաքն և ամրացաւ յերեսաց Թաթար զօրուն. և նոցա Թողեալ զօրս Թաթար՝ ի վերայ քա-ղաքին՝ ինքեանք չոգան մինչ՝ ի գետն Նփրատ՝ ի կող-մանս Մէջագետաց՝ և առին յաւար, և դարձան յաւե-լին՝ ի զօրսն՝ որ պահէին զքաղաքն Մարտիրոսայ. և եկեալ առ Յօլաւուն՝ պատմեցին զոր ինչ արարին, և զաստատակութիւն քաղաքին. և նա յղեաց զօր քա-զում՝ ի վերայ քաղաքին. և գԼխաւորս կացոյց՝ ի վե-րայ զօրացն՝ զՋաղատա զոմն, որ զօրավար էր յառաջ եկեալ Թաթար զօրուն, և քրիստոնէից՝ զԻշխանն Պռօշ, զոր Յասան կոչէին, արք քաջք և անուանիք. երթալ պաշարել զքաղաքն յամենայն կողմանց և ոչ տալ Թոյլ մտողն և ելողն: Եւ երթեալ նոցա հզօրե-ղապէս մարտնչէին, եղեալ բաբանս և փիլիկուանս. հատին և զջուրն որ մտանէր՝ ի քաղաքն. նոյնպէս և քաղաքացիքն կռուէին ընդ նոսա զօրեղապէս, և զբա-զում Թաթարս սպանին և զքրիստոնեայս որ ընդ նո-սա: Եւ այսպէս զամս երկու և աւելի կրեալ զպաշա-րումն, և սաստկացաւ սովն՝ ի քաղաքին. և կերան զշ-

1 Վ. 150:
2 Ի պատմութեան Թաթարաց Լիչն Մանգայ-Նոյին օդնական Իշ-մուէթայ:

սուրբ և զանսուրբ կերակուրս. և ապա սկսան զմարդիկ ուտել՝ առ ի չգոյէ կերակրոյն, զի զօրաւորքն զտկարքն ուտէին. և յորժամ սպառեցան աղքատքն՝ դարձան ի միմեանս. հարք զորդիս ուտէին, և կանայք զդստերս, և ոչ գԹագին ի ծնունդս որովայնի իւրեանց. և ուրացան սիրելիք զսիրելիս և բարեկամք զծանօԹս. և այնպէս պակասեաց կերակուրն՝ զի մին լիտր մարդոյ միսն վաճառէին եօԹանասուն դահեկան. և ամենևին սպառեցաւ մարդ և կերակուր։ Ոչ միայն սոցա, այլ և բազմաց այլոց գաւառաց եհաս վտանգ. զի աչխարհ՝ որ հնազանդեալ էին ՅաԹարին՝ նեղեցան ի հարկապահանջուԹեանց և ի բռնակալուԹեանց, որք տանէին զկերակուր և զըմպելի պաշարողաց քաղաքին, և յոլովք մեռանէին ի սաստիկ ցրտոյ ձեանն՝ որ ունէր զլերինս յեղանակս ձմեռնայինս։ Այլ և ամրագոյն երկիրն Յասնոյ՝ էկին ի հնազանդուԹիւն ծառայուԹեան ՅաԹարին, ապաւինեալք յիշխանն Յադուն, յորդի Հերպարըքին, ի Թոռն Յադունին, քրիստոնեայ հաւատով, և (էկն) մեծ պատուով առ Ներսէսն. զի այր անձնեայ և քաջամարտիկ էր, մինչ զի ընդ առաջին ախոյանիցն կարգեալ էր զնա Ներսէսն։ Ամա ետ զգաւառն Յասնոյ, զոր յետոյ ստեցին երդմանն, և կոտորեցին զբազումս ի նոցանէ։ Իսկ յորժամ Թափուր եղև քաղաքն ի մարդկանէ, վասն սաստիկ սովուն, առին զքաղաքն, և կոտորեցին զորս գտին ներգևեալս ի սաստիկ սովոյն. այլ և զսուլտանն և զեղբայրն աճխին կենդանի առ Ներսէսն, և նա հրամայեաց սպանանել զնոսա սրով. և իբրև չարժանիս կենաց և զարեանպարտս ամենայն բազմուԹեան՝ որք կոտորեցան ի պատճառս նորա. բայց զեկեղեցիս ոչ քակեցին, և ոչ զանԹիւ նշխարս սրբոց՝ զոր ժողովեաց սուրբն Ներսէս յամենայն աշխարհէ և եդ անդ. զի քրիստոնեայքն որ ի զօրուն՝ ծանուցին ՅաԹարին զպատիւ նոցա. այլ և ինքեանք պատմէին բազում տեսիլս զսրբոցն, ի վերայ պարսպին լոյս սաստիկ ծագեալ և արս լուսատեսիլս երևեալ։ Եւ առաւ քաղաքն յեօԹնհարիւր և ինն Թուին Հայոց, ի մեծ պահս քառասնորդացն աղուհացին։

Կ

ՎԱՍՆ ՈՐ ԻՆՁ ԳՈՐԾԵՑԱԻ Ի ԿՈՂՄԱՆՍ ՄԻՋԱԳԵՏԱՑ ԵՒ Ի ԽՈՐԻՆ ԱՄՈՐԻՈՑ

Դարձեալ մեծն Հօլաւու ժողովեաց զբազմութիւն զօրաց իւրոց և ջոգաւ Ա՛սորիս, ՚ի Հալապ և ՚ի Գոմիկ, սիռեալ ՚ի կողմանս՝ ՚ի Խատան, Ա՛ուդա, Ա՛միթ, և յայլ գաւառան ասպատակեալ. և ինքն նստաւ ՚ի վերայ Հալպայ, պատերազմել ընդ նմա: Եւ սուլտանն որ ՚ի նմա՝ էր Յուսուփ յազդէ Սալահատնին՝ որ աւերեաց զԵրուսաղէմ, և դիմեցաւ նմա, և ոչ եկն ՚ի հնազանդութիւն, այլ փակեաց զդրունս քաղաքին ընդդէմ նորա և կռուէր զօրութեամբ. և մեծն Հօլաւու պաշարեաց զքաղաքն յամենայն կողմանց. և յետ յոլով աւուրց կալաւ զնա բռնութեամբ, և սկսան կոտորել զքաղաքն. ապա սուլտանն և որք ընդ նմա մեծամեծք՝ որ ամրացեալք էին ՚ի բերդն, սկսան աղաչել զնա և գալ ՚ի հնազանդութիւն նմա: Եւ յանձն առ և հրամայեաց դադարել ՚ի կոտորելոյ զքաղաքն. և հնազանդեալ և հարկս եդեալ գնացին ՚ի Գոմիկ. և նոքա բազում պատարագօք և մեծամեծ ծախիւք ելին ընդ առաջ նորա, և նա սիրով ընկալաւ զնոսա, յիւր անուանն գրաւեալ կալաւ զՀանս և զՀանա, և այլ բազում քաղաքս: Ա՛ռաքեաց զօրս ՚ի վերայ աւուր քաղաքին Ա՛երինայ, որք հասին կարացին առնուլ զնա յետ բազում աւուրց. կոտորեցին և զբազում յետ զլուզակս փնտրեալ զանձինս ազգաց և ձանապարհորդաց, զորս Գաջարխ[1] անուանէին՝ Գորք ազգաւ, ամրացեալք ՚ի Թաւ մայրիս և ՚ի դժուարին վայրս ամրոցացն, անթիւ բազմութիւնք, ոչ ումեք հնազանդ, ժողովածու յամենայն կողմանց, արք սրիկայք և ապականիչք, և մանաւանդ քրիստոնէից. զբազումս կոտորեցին ՚ի նոցունց և զևս բազմագոյնս գերեցին. և Թողեալ ՚ի զօրացն վայր Խաճարայ էր ՚ի Մազանդարան, ուր և աւազակացն ամուր ապաստանարանք:

1 Թուին նախահարք այժմեան Խաճար տոհմի Թագաւորաց Պարսից, և առ ժամանակօք հեղինակիս ծանօթագոյն բնակութեան

իբրև քան հազար այս կողմնապահս, և ինքն դարձաւ ձմերել ի գաշտն Հելիանայ։

Իսկ սուլտանն Մուրադ ժողովեալ զօրս բազում՝ եկն ի վերայ կողմնապահացդ Ղաթար զօրուն. որոց գլխաւորն էր այր մի Վրիճբուղա անուն, հաւատով քրիստոնեայ, Կայիման ազգաւ, մեծաւ պատուով. որ եւ ի պատերազմ ընդդէմ սուլտանին, և քաջապէս մարտուցեալ կոտորեցաւ ամենայն զօրօքն որ ընդ իւր. զի յոյժ բազումք էին Եգիպտացիքն. և կռուեցան ի վերայ բոլական լերինն. կային ընդ Վրիճբուղային ի պատերազմի անդ յոլովք ի Հայոց և Վրաց, որք ընդ նմա կոտորեցան. և եղև այս յեօթն հարիւր և ինն Թուին Հայոց։

ԿԱ.

ՎԱՍՆ ՄԱՀՈՒԱՆ ԲԱՐԵՊԱՇՏ ԻՇԽԱՆԻՆ ՋՈՒԼԱԼԻՆ

Իսկ Թագաւորն Վրաց Դաւիթ՝ որդի Լաշային որ կայր ի հնազանդութեան Ղաթարին, նեղեցաւ և ձանձրացաւ ի բազում հարկապահանջութեանցն որ նեղէին զնա, և զամենայն իշխանս և զամենայն աշխարհս, անհնարին ծանրութիւնս, զոր ոչ կարէին բառնալ. եթող նա զքաղաքն իւր զՏփխիս, և զաթոռն և զամենայն զոր ինչ ունէր, և փախեաւ ի խորին Վիսաղք, և յամուրսն Սուանեթոյ. ընդ նմա և այլ մեծամեծք, իշխանք գաւառաց, նեղեալք և տառապեալք, ծախեալք և զրաւ եղեալք զքաղաքս և զգաւառս, և ոչ կարացեալք յապեցուցանել զանյագս՝ ըստ նմանութեան չար տզրկաց։ Եւ այնպէս տագնապաւ փախեաւ, զի զկին իւր զԹեոնցա Թագուհի և զնորածնունդ որդին իւր զԵեմեոտր՝ ոչ կարաց ընդ իւր տանել, քայց միայն զԱծորգէ զանդրանիկն։ Իսկ մեծ ատիկանն Ք.ղունն՝ զօր բազում գումարեալ և գնաց ի վերայ Թագաւորին Դաւթի, զի ըմբռնեսցէ զնա. և իբրև ոչ կարաց ժամանել նմա՝ զբազում գաւառս Վրաց կոտորեաց և գերեաց անխնայապէս. այլ և զգերեզմանատունս Թագաւորաց Վրաց՝ զԴեղեթ՝ աստիկապէս

կատրեաց և քանդեաց, և զկաթուղիկոսարանն վնջ-
ղը՝ [1] նոյնպէս կատրեաց անողորմաբար։ Ապց յան-
կարծակի եկին գունդ մի հեծելոց՝ ի Պ ըսց և ցուցին
մեծ քաջութիւնս, զի զբազում կատրեցին՝ ի զօրաց
Պ.ըղունին՝ իբրև հնար ընդ եղէգն ընթացեալ, և ին-
քեանք գնացին ողջանդամ. և էին արք իբրև չորեք
հարիւր. և երկուցեալ Պ.ըղունին՝ ոչ իշխեր այնպէս
համարձակ խուզել զվայրան [2]։

Պ.ապա դարձաւ առ Հօլաւուն, և նուիթեաց՝ ի սրտի
իւրում չարութիւն, և՝ ի կալանս արար զԹագուհին
Պ ըսց՝ զՊոնցայն, և զդուստր նորա՝ զԱշաքն, և զին-
կանն մեծ զՇ ահնշահ, և զ.Ջ ալալ-Հասան՝ զտէրն
Ասչէնց, և զայլ բազում՝ պատճառանօք պարտուց և
հարկի. յորոց բազում գանձս առեալ՝ հազիւ զերծան
՝ի մահուանէ։ Ապա զբարեպաշտ և զառաքինի իշխանն
Ջ.ալալ նեղէր անհնարին կտտանօք, բազում հարկս
պահանջելով՝ ի նմանէ առաւել քան զկարն. և եդեալ
փայտ՝ ի պարանոց նորա և երկաթս յոտն. և զայս
առնէր նմա վասն առաւել քրիստոնէութեանն, զի
Թշնամիք էին նմա ամենայն տաճկահաւատք, և յոր-
դորէին զՊ.ըղունն՝ ի սպանութիւն նորա, զի ասէին սա
առաւել Թշնամի է դենիս մերոյ և օրինաց. զի և Պ.ը-
ղունն ևս տաճկակրօնք էր. և առեալ տարաւ զնա՝ ի
Ասպաւնն։ Ապա նա զոհութեամբ տանէր ամենայնի,
զի յոյժ տեղեակ էր Պ.ատուածային գրոց, պաճոյճ և
աղօթական, և պարկեշտ՝ ի կերակուր և յըմպելիս. և
ցանկայր մարտիրոսական մահուան։ Ապա դուստր Ջ.ա-
լալին Հուդուքան՝ որ կին լեալ էր Ռուբա-Նուինին, որ-
դւոյ Ջարմաղուին, առաջին գլխաւորին Կաղաարին,
գնաց առ Կոչխուզ [3] խաթունն՝ կին Հօլաւուին, զի
Թախեսցէ զՀայր իւր՝ ի ձեռաց Պ.ըղունին. և գիտա-
յեալ անօրէնն ոստիկանին՝ առաքեաց վաղվաղակի գա-
հիճ՝ և՝ ի գիշերի ետ սպանանել զարդար և զսուրբ
այրն Պ.ատուծոյ. և երթեալ անօրէնն գահճայն՝ անդամ
անդամ յօշեցին զնա, ըստ նմանութեան սուրբ վը-
կային Յակովբայ. (նորին չարչարանացն հաղորդեալ)

1 Ի հիւսիսոյ Ախալցխիսէ քա-
ղաքի։

2 ՕՕ. վրայ։

3 Տոլուզ խաթուն կոչէ Վար-
դան. 160։

և նորին պահպանն արժանացեալ (լիցի) ի Քրիստոսէ Յաստուծոյ վերոյ։

Յայսպէս կատարեցաւ այրն անարատ և աստուածապաշտ, զընթացսն կատարեալ և զհաւատսն պահեալ յեօթն հարիւր և տասն ի թուին Հայոց. և առաքեաց որդի նորա Յ.թագէկ առս հաւատարիմս, և եհան զնշխարս հօրն իւրոյ, զի ընկեցեալ կայր ի ջրհոր մի ցամաք. զի Պարսիկն որ ի տան իւրում ունէր զնա ի կապանս՝ տեսեալ նշանս աստուածայինս ի վերայ նորա՝ խնամ արկեալ ընկէց զնշխարսն ի ջրհորն, զի յետ աւուրց թաղեսցէ զնա պատուով. նա եցոյց խնդրողացն զմարմինն և պատմեաց զսքանչելի երևումն. և նոցա ժողովեալ խնդութեամբ և բարձեալ տարան զնա ի տուն իւր, և ի վանքն Պանձատար թաղեցին զնա ի գերեզմանս հարց իւրոց. այլ և բերողքն նշխարացն տեսին զնոյն տեսիլ լուսոյն ի վերայ նշխարացն։ Եւ կալաւ զնշխանութիւն նորա Յ.թագէկն՝ որդի նորա Հրահանան Հօլաւուն և Յ.րղունին, այր սրբասնունդ և պարկեշտ և խոնարհամիտ և աղօթական, որպէս զմի ի սուրբ միայնակեցացն. զի ծնօղք նորա այնպէս սնուցին զնա։

Ապան Հօլաւուն զնշխանն Օ աքարէ՝ զորդին Շ ահնշահ՝ ընդունի, քարուրս եղեալ ի վերայ նորա։ Յայնմ ամի փոխեցաւ առ Քրիստոս մարդասէր և հեզ կաթուղիկոսն Յ.ղուանից տէր Եղիսէ, կալեալ զկաթուղիկոսութիւնն ամս քսան և եօթն, և յաջորդեաց զաթոռն տէր Սահակ Սեփհանոս մանուկ տիոզք։

ԿԲ

ՎԱՍՆ ՄԱՀՈՒԱՆ ԻՇԽԱՆԻՆ ՇԱՀՆՇԱՀԻ ԵՒ ՈՐԴՒՈՅ ՆՈՐԱՆ ՋԱՓԱՐԻՒ

Մեծ իշխանն Շ ահնշահ որդի Օ աքարէ, եւ զիշխանութիւնն յաւագ որդին իւր Օ աքարէ, զի որդիք բազում էին նորա, Օ աքարէ, Ա.ւագ Սարգիս, Ա.բաշիր և Խանէ, և ինքն ինամքն զտուն իւր. և Օ աքարէ ընդ Ճաթար զօրուն երթայր ի գործ պատերազմի, և արիութիւն և քաջութիւն ցուցեալ մեծարեալ լինէր ի մե-

ձէն Հօլաւուէն, և Ա՛րշուն ատիկանէն։ Ուէպեղև զի Ա՛րշունն զօրօք բազմօք էր՝ի կողմանս Վ՛րաց, ընդ նմա էր և Օ աքարէ, և գաղտ Ա՛րշունէն և յայլ զօրացն գնաց Օ՛ աքարէ՝ի տեսուԹիւն կնոջ իւրոյ՝ որ էր առ հօր իւրում Վարպոն իշխանին Ուխտեաց[1], որ ապրստամբ էր ընդ Թագաւորին Վ՛րաց ՈւաւԹի. և իմացեալ Ա՛րշունին ազդ առնէ Հօլաւուին, և նա առ ինքն հրամայեաց տանել կապանօք. և այլ բարուրս կուտեաց՝ի վերայ նորա և հրամայեաց սպանանել զնա և անդամ անդամ յօշել, և արկանել շանց. և յորժամ լուաւ զգոյժն հայր նորա Շ՛ ահնշահ, ՛ի գիւղն Ո՛ձուն, ՛ի նեղասրտուԹիւն անկեալ՝ի տրտմուԹենէն մեռաւ. և տարեալ Թաղեցին զնա՛ի Ո՛րոբայրն, զոր առ կիւնն նորա՛ի Հայոց։

ԿԳ.

ՎԱՍՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԵԾԻ ՈՐ ԵՂԵՒ ԸՆԴ ՄԻՄԵԱՆՍ ՀՕԼԱՒՈՒՆԻ ԵՒ ԲԵՐՔԱՅԻՆ

Ա՛ստուածահաճելի և մեծ զօրավարքն որ կային յաբևելս և՛ի հիւսիս, ազգականք էին զանին Վ՛անկուէ՛ որ մեռաւ յետ պատերազմին Ա՛ենգնանայ[2]. և երկու եղբարքն նորա հակառակէին ընդ Միմեանս վասն ԹագաւորուԹեանն, Ա՛րքբուղայ և Ո՛ւպիլայ. և յաղԹեաց Ո՛ւպիլայ կոտորելով և սպառելով զզօրսն Ա՛րքբուղային և փախստական հանելով զնա յաշխարհէն և ինքն Թագաւորելով. և Հօլաւուն եղբայր էր նոցունց և Վ՛անգուէ զանին, օգնէր նա Ո՛ւպիլային. և Ո՛երքայն՝ որ՛ի կողմանս հիւսիսոյ՝ օգնէր Ա՛րքբուղային. և միւս ևս ազգական նոցին՝ այլ զօրապլուխ՝ որդի Ղաղաղ զանին[3] անդրանիկ որդւոյն Ղանկզղանին, Ա՛ղուէ անուն, նա պատերազմէր ընդ Ո՛երքային, Թէ նոցուն խլատուէն կոտորեաց Վ՛անկուէ զանն զազգս նորա. և առաքեաց առ Հօլաւուն օգնել նմա յայսմ կողմանէ ընդ գուն Ո՛արբանդայ։ Իսկ մեծն Հօլաւու զմե-

1 Ա՛յժմ ՕլԹի գաւառ։
2 Տես յհ 220։
3 Տես յհ 220։

ծամեծս և զփառաւորապէն իշխանն հանդէն ինքեան՝ որ կայէն ընդ նմա ՚ի կողմանցն Ասթուէն և Ներքայ-ին, զի ուրն, զԱղախայն, զՏուտհարն, զՎեղանն՝ զորդի Պ՚ուրին, զի պատաղանն, և զայլս բազումս, հանդերձ զօրօք իւրեանց կոտորեաց յանխնայ անողորմաբար, զծեր և զտղայս, և սպառեաց զնոսա կոտորմամբ սրոյ, զի առ նմա կայէն, և խառն էին ընդ միմեանս իշխանութեամբ. և սակաւք ՚ի նոցանէ մազապուրծ վերծեալք՝ առանց կանանց և մանկանց և ընչից, գնային փախստական առ Ներքայն և առ այլ ազգականս. և լուեալ զայն Ներքային ժողովեաց զօրս անթիւս և անհամարս, առնուլ զվրէժս արեան ազգականացն ՚ի Հայոց։

Իսկ մեծն Հայոց նոյնպէս ժողովեաց զզօրս իւր բազմաձեռն, և արար երիս առաջս. զմինն ետ ՚ի ձեռս որդւոյն՝ Պապայ զանէն[1], գումարեաց ընդ նմա և զոստիկան Երկան, և առաքեաց ՚ի Վորսան օգնել Պ՚ուրին յայնմ կողմանէ. և զմի բաժինն գումարեաց ՚ի դուռն Պ՚ասանց, և զայլ զօրս ընդ իւր առեալ գնաց եւ մուտ ՚ի Ներքս քան զդուռն Պարբանդայ. զի այս երկու մուտք են՝ Ա՚ասանս և ՚ի Պարբանդ. և աւերելով զամեն բաժնի Ներքային՝ եհաս մինչ ՚ի գետն մեծ և անհուն՝ յասպնջական յոլովից գետոց՝ զոր կոչեն Տիգրիս, որ ծովէրէն ընթանայ, և մտանէ ՚ի ծովն Վասպեայ։ Եւ եւ ընդդէմ նորա Ներքայն հզօր ձեռամբ, և եղև խառնուրդ պատերազմին առ մեծ գետովն, և բազումք անկան յերկոցունց (կողմանց), և առաւել ՚ի կողմանէ Հայոցն. զի պաղեցան ՚ի սաստկութենէ ձեանն և ցրտին, և բազումք գետացան եղեն։ Եւ ապա զարձաւ Հայոցն և եկն եւ ՚ի դուրս քան զդուռն Պարբանդայ։ Եւ մի ոմն ՚ի զօրապետացն Հայոցն՝ այր քաջ և պատերազմող՝ զօրօք իւրովք՝ Միրաման անուն, որդի Ջարմաղուանին՝ առաջին զվնասուրին Վասպուրին, ընդդէմ կացեալ զօրացն Ներքային՝ յետս նահանջեաց. և ՚ի նա պատսպարեցան փախուցեալքն և ապրեցան մեղմով ընդդէմ կալով։ Եւ և նա ՚ի դուրս քան զՊարբանդ, և կացուցին պահակս ՚ի դուռն Պարբան-

դայ, և ինքեանք եկին ի դաշտն Մուղան ի ձմերոց։
Եւ այսպէս զամն հինգ պատերազմեալք ընդ միմեանս
սկսեալք յեօթն հարիւր և տասն Թուականէն մինչ
յեօթն հարիւր և հնգետասան Թիւն Հայոց, յաոե-
նայն ամի զօր ժողովելով, և ընդ միմեանս բախելով
յեղանակս ձմեռնային, զի յամառնայինն ոչ կարէին
վանն տօթոյն և գետայարոյց լինելոյն։

Յաւուրս յայսոսիկ սկսաւ մեծն Հօլաւու շինել քա-
ղաք բազմատար և բազմամարդ ի դաշտին Վառնոյ,
և եղ հարկս ի վերայ ամենայն հնազանդելոցն՝ բազ-
մութիւն փայտից բերել յամենայն կողմանց ի պէտս
շինուածոյ տանց և ապարանից քաղաքին, զոր շինէր ի
տեղի Հովլոցայն[1] իւրոց յաւուրս ամարանոյ, և տառա-
պէին մարդ և անասուն ի խիստ և ի դառն վերակա-
ցուացն՝ որ դառնապոյնք էին քան զՎարաւանին ի վե-
րայ որդւոցն Իսրայելի. քանզի լուծ հարիւր եզանց լը-
ծէին ի փայտ մի յամենայն կողմանց, և ոչ կարէին
շարժել՝ վասն մեծութեան և հաստութեան փայտին,
և հեռաւորութեան և դժուարութեան ձանապարհին,
ընդ գետս և ընդ լերինս. և յանխնայ հարկանելոյ՝ մե-
ռանէին մարդիկ և անասունք։ Այլ և տունս մեծա-
մեծս կռոցն շինեաց, անդ գումարեալ զամենայն ա-
րուեստաւորս քարանց և փայտից և նկարուց. զի ազգ
մի զոր Տոյինքն ասէին՝ դիւթք, և կախարդն՝ որ տայ
խօսել ձիոց և ուղտուց և Թաղեայ պատկերաց՝ դիւա-
կան արուեստիւ. և են ամենայն քուրմք գերծեալ գըլ-
խովք և մորուօք, և ունին փիլոն գեղին զկրծովք, և
պաշտեն զամենայն ինչ, և առաւել զԱկամնխա և զԱ-
ստղրին[2], նոքա խաբեցին զնա, և ասեն պահել զնա
անմահ. և ի բանն իւրեանց կայր և շարժէր և հեծ-
նոյր, տուեալ զինքն ամենևին կամաց նոցա, և խոնար-
հեալ երկրպագէր զկնաւորին նոցա յոլով անգամ յա-
ւուրն, և ուստեր ի նուիրական սեղանոյն ի տան կռոցն,
և առաւել մեծարէին[3] քան զամենեսին զնոսա. վասն
որոյ զտաճար կռոց նոցա առաւել մեծարգի յարդարէ։
Նակ աւազն կանանց նորա քրիստոնեայ էր, Տօխուզ

218։

1 ՕՕ. հովհաւոյն։
2 Զորոց առաց և յառաջն, յէջ
3 Տպ. ունէին։

խաթուն, թէպէտ բազում անգամ յանդիմանէր, ոչ կարաց զերծուցանել զնա ի դիւթից. այլ ինքն առատաձպաշտութեամբ կէոյեալ ձեռնտու և օգնական էր քրիստոնէից։

Ի սակ յեօթն հարիւր և ի չորեքտասան թուին նշան երեւեցաւ յերկնից. աստղ մի երևեալ յերկինս գոլով ի կողմանս հիւսիսոյ, յարևելս և ի հարաւ. և երկայն ձառագայթ լուսոյ սիւնաձև երևէին առաջի նորա. բայց աստղն նուազ երևէր և երագ ընթանայր, և երևէր իբրև ամիս մի և այլ ոչ ևս, իբրև զաստղն գիսաւոր՝ որ ընդ ժամանակս ժամանակս երևի՝ ընթանալով յարևմտից ի հիւսիս. այլ սա ընդերկայնաձիգ շառաւիղօք, և օր քան զօր աճէին շառաւեղքն մինչև կատարեաւ։ Ի սակն վաղճանեցաւ Հօլաւուն, և կինն իւր Տօխուզ խաթունն. և կալաւ զտեղի նորա որդի իւր Ալպաղան յեօթն հարիւր և ի չորեքտասան թուին. և ած կին զդուստր Հռոմոց Թագաւորին՝ որում անուն էր Ագեսինա[1] խաթուն, որ եկն երևելի փառօք. և պատրիարգն Անտիոքու և այլ եպիսկոպոսունք ընդ նմա. զոր եբեր տէրն Սարգիս Հզնկային եպիսկոպոսն, և Յեներ[2] վարդապետն. և մկրտեալ զԱլպաղա-ղանն՝ եդաւն նմա զաղջկին կին։ Ի նորա զօր գումարեալ բազում յոյժ՝ գնաց ընդդէմ՝ տալ պատերազմ[3] զօրայ Յերքային, որք եկին ընդ դուռն Ադրբանդայ, և հարին զբանակս իւրեանց առ ափն գետոյն[4]. և կային սաքա աստի և նոքա անտի, ամրացուցեալ զեզրն գետոյն ցանկովք խորագունիւք[5]։

1 Վ. 161։
2 Ոչ յիշեն այլուր վարդապետ։
3 Տպ. ընդդէմ կալ պատերազմաւ։
4 Տպ. կոր գետոյ։ Վարդան Ճլ- բար կոչէ զգետ։
5 OO. Ե խոր գոյիւ և կամ՝ խորագոյիւ։ Տպագիրն. Ե ֆոռիւ խորագոռնիւ։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՄԻՒՍ ԵՒՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍՓԱՆՉԵԼԻ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՄԽԻԹԱՐԱՅ[1]

Յետ լինելոյ գմբեթ այարկ երկնանման (եկեղեցւոյն) սխրալի տեսողաց, զոր անուանեն Ս. Կաթուաճճին, լինեաց մեծ վարդապետն Մխիթար զեկեղեցին՝ի ՈՒԽԵԹուին կամեցաւ գնալ յերկրպագութիւն մարմնաւիկ տնօրէնութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, և լուսաբուխ գերեզմանին: Եւ ունէր սա միաբանս բազումս. և մեռեալ՝ի տաճար սուրբ Կաթուաճճնին՝ և անկեալ՝ի վերայ երեսաց իւրոց, և աղօթիւք յանձնեաց զմիաբանան իւր՝ի Ս. Կաթուաճճինն, ասելով. Ո՛վ Տէրդ մայր, ՚ի քեզ յանձն առնեմ զսոսա. դու հոգա և պատրաստեա զպէտս հոգւոյ և մարմնոյ սոցա: Եւ ինքն յուղի անկեալ գնաց զփախչելն Ձմանապարհն իւր. և գնացեալ կատարեաց զուխտն իւր, և դարձաւ յետս:

Եւ եկեալ յերկիրն Վեղամայ՝ի յեզր ծովակին՝ մերձ՚ի Վան կղզին. և լուեալ միաբանաց վանիցն իւր որ՚ի Վետկայ՝ զգալուստ սուրբ վարդապետին, և գնացին ընդ առաջ նորա հանդերձ սուրբ ուխտիւն՚ի նոյն տեղին, մերձ՚ի կղզին Վեանայ. և համբուրեալ զնոսա՚ի համբոյր սրբութեան, յետ ողջունելոյ զնոսա և հարցանելոյ զկենցաղավարութենէ նոցա: Եւ նոքա արձ

1 Տես՚ի վերջ կոյս յաւելուածոյն մատենիս վասն այսր պատմութեան:

տասուալից հառաչմամբ ձայն բարձեալ ասեն. Այլ հոգևոր, զիարդ հարցանես զորպէսն մեր. և յետ գնալոյն քո անկաւ սուվ սաստիկ ՚ի վանս մեր, և մեռաւ երկրորդ մահն միաբանից: Եւ իբրև լուաւ տուրբ վարդապետն Աւխիթար զբօշն զայն, և ինքն ձայնակից եղեալ նոցա լացին մինչև ցմեծ ժամն: Եւ յետ լալոյն և կոծոյն հեռացեալ ՚ի նոցանէ իբրև զքարընկէց մի, և ծունկս ՚ի գետնի եդեալ և անկեալ ՚ի վերայ երեսաց իւրոց դէպ յարևելս, և աղօթեաց այսպէս. Ով տէր իմ Յիսուս Քրիստոս որդիդ Աստուածոյ արդար դատաւոր. խնդրեմ ՚ի հեշտալուր տեառնէդ իմմէ, զի այժմ լուիցես ձայնի պաղատանաց իմոց, և առցես զդատաստանս իմ և ծնողի քո Ս. Աստուածածնին, որ ծնաւ զԱստուածդ մարդացեալ: Օ՜ի եթէ տացէ ոք մարդ զինչ իւր ՚ի պահեստ և աւանդ այլ մարդոյ՝ աշխարհի օրինակաւ՝ պահեն զնա, և տան զայն որ տուեալն է զաւանդն և պահեստն. ապա եթէ աշխարհական ոք պահէ զաւանդն և տայ յստուօղն, պարտէր և մեզ[1] քո այնպէս առնել: Տէր իմ Յիսուս Քրիստոս, և ես յորժամ կամիմ գնալ յերկրպագութիւնն սուրբ գերեզմանի քո, զիաբանս իմ յանձնեցի ծնողին քո Ս. Աստուածածնին. և նա ոչ է տարեալ իւրնամ մայրական գթով, այլ և անտես է արարեալ. և մեռեալ է միաբանից քազում: Օ՜այս և այլ սոցին նմանս աղօթէր արտասուալից: Եւ սուրբ ուխտն անդէն կացեալ լային:

Եւ յետ աղօթից և արտասուելոյ վարդապետին և միաբանից, յառաջ կացեալ գլխաւոր արանցն՝ անկանէին յոտս վարդապետին Աւխիթարայ, և ասեն. Այր սուրբ, մի այսուհետև հոգալ վանս մեռելոցն, այլ խընդրեա ՚ի սուրբ և յարժանաւոր աղօթսդ քո յԱստուծոյ, զի տայցէ առատութիւն աշխարհի. զի դեռ և ես սաստիկ է սովն ՚ի վերայ երկրի ըստ մարգարէին Դաւթի, զոր ասէ. Կոչեաց զսով յերկիր, և զամենայն զօրութիւն հացի եբեկ: Եւ ապա պատասխանեալ վարդապետին ասաց մինչդեռ ՚ի յաղօթան էր. Որդեակք իմ, թէպէտ ժամանակ մի անտես արար զմեզ Ս. Աս-

տուածածինն, այլ ոչ անտես առնէ զմեզ Տէր, և յաւիտեան պահէ ոխս. այլ ունի գութ մայրական, և ոչ անտես առնէ զերկիւղածս իւր. զուք ևս պաղատեցէք առ մայրն ողորմութեան, զի նա աղօթեսցէ առ որդին իւր միածին. զի նա յոյժ լսէ ծնողին իւրոյ:

Եւ զայս ասացեալ վարդապետն եւ յաղօթէին. և առեալ զմիաբանսն և ուղղեցին զերեսս իւրեանց և հաստատեցին գնալ զառաջիկայ զձանապարհն իւր՝ զէպ՚ի լեառն որ հանդէպ երեսաց իւրեանց էր. և եկեալ հասին՚ի գլուխ լերինն՝[1] որ մէջն է երկուց աշխարհացն՝ Գեղամայ և Այանու, և կամէին անցանել յերկիրն Այանու առ վանս իւրեանց՚ի Նորս-Գետիկ: Եւ զայն որ՚ի վերոյ յիշեցաք զասացեալն՚ի տուրբ վարդապետէն՝ զոր ասաց, միաբան աղաչեցէք զտուրբ Յ:տուածածինն, զի նա մայր է ողորմութեան, և չիմարիտ ոչ անտես առնէ զաղաչանս վարդապետին և միաբանացն. և լուաւ Յ:տուած աղօթից նոցա բարեխօսութեամբ տուրբ Յ:տուածածնին այսպէս:

Եւ՚ի հասանել նոցա՚ի գլուխ լերինն, դարձեալ հեռացաւ՚ինոցանէ վարդապետն Յ՚Խիթար և կացեալ յաղօթս. և՚ի յաղօթելն նորա յանկարծակի հասանեն փայեակք[2] երկու, և տան ողջոյն վարդապետին և ասեն. Հրամայեա տէր հոգևոր, կոչէ զքեզ տոսկալն Թագաւորն մեր: Եւ ասէ վարդապետն. Որդեակք, յորմէ Թագաւորէ առաքեցայք կամ ուստի եկիք: Եւ ասեն փայեակքն՝ զոր աշխարհական բառիւ ղէրէէ[2] ասեն. վարդապետ, յետս հայեաց և տես զզարմանալին զոր տես Թագաւորին մերոյ, որ իջեալ կայ՚ի դաշտ անդր: Եւ յետս հայեցեալ վարդապետին՚ի յերեսս դաշտին՝ մերձ՚ի գեօղն Ն՚ապոտիկ, զոր աշխարհական բառիւ Ղի բուկլու[3] ասեն, (ետես)՚ի ներքոյ գիւղին մերձ՚ի ծովն կոյս, վրանս բազումս իբրև զաստեղս երկնից և զօրս անթիւս որպէս զաւազ առ ափն ծովու. և հիացեալ զարմանայր ընդ միտս իւր և ասէր. Ո՛վ որդեակք, այժմ յանցանել իմում անդէն ոչ զոք տեսի. ահա երևի տե-

1 Այժմ կոչի Էչէ+Ղեյպան:
2 Սուրհանդակք:
3 Յարդ այսպէս կոչի և չէն կայ՚ի բարձրաւանդակի հիւսիսային լեռնատարու ծովուն Գեղամայ, ՚ի 6575 ոտս բարձու յերեսաց Պենաոս ծովու:

սիզ որպէս երկնային և ոչ երկրաւոր։ Եւ ինքն յա-
րուցեալ յաղօթից՝ անցեալ գնայ զհետ եկելոցն, և
հասանէ ի մէջ ճանապարհին և վրանացն. Թէպէտ վրանք
բազումք էին պետիկատեաք, բայց վրանն այն որ Թա-
գաւորին՝ էր ամբեցաւորեալ երկնականաբար, և լոյս յո-
րանայր ի նմանէ. և ոչ կարէր ի նա հայել աչք հոգե-
ղէն։ Եւ վարդապետն իբրև եհաս զտեսիլն զարմանա-
լի և ապշեցաւ, որպէս Պօղոս յափշտակեալն յերրորդ
երկինս. և զոր աչքն ոչ եհաս և ունկն ոչ լուաւ և ի
սիրտ մարդոյ ոչ անկաւ, այնպէս եհաս վարդապետին
Ներսէս վանն պայծառ տեսութեանն. և յառաջ
մտեալ ի ներս վրանին, եհաս գոյնզգոյն երանգօք զար-
դարեալ և սիւնս քառասուն և չորս լուսատեսիլք և
պաղպաջուանք. և եհաս երկուս աթոռս ոսկեհեաս ա-
կանբ շափիւղայիւ զարդարեալ. եհաս Թագաւոր մի
նստեալ ի վերայ միւս աթոռոյն, և կինն մի նստեալ ի
վերայ միւս աթոռոյն, և կինն էր մայր Թագաւորին։
Եւ վարդապետն անկեալ ի վերայ երեսաց իւրոց և եր-
կիր եպագ Թագաւորին և մօրն, և եկաց ի վերայ ո-
տից իւրոց։ Եւ Թագաւորն սիրով ընկալաւ զերկրպա-
գութիւնն և զողջոյն վարդապետին և քաղցրութեամբ
հարցանէր զորպիսութենէ նորա։ Եւ յետ բազում
խօսից հարցանէր Թագաւորն զվարդապետն. Ո՞ւմանէ
ես գնա և զմայրս իմ։ Եւ վարդապետն լցեալ Հոգւով
սրբով և մարգարէական Հոգւով ձանաչեաց որ Թա-
գաւորն այն տէրն մեր Յիսուս Քրիստոս էր, և մայրն
իւր տիրամայրն Ս. Աստուածածինն։ Եւ անդէն վար-
դապետն Ներսէս գոչեաց լալագին աչօք և ասաց.
Տէր իմ Յիսուս Քրիստոս, ալ բազում ։ օր Աստու-
ծոյ, որդի կուսիդ Մարիամու, որ ծնաւ զԱստուածդ
մարդացեալ. դաւանիմ զքեզ որպէս Պետրոս որդի Աս-
տուծոյ և ծնեալ ի սուրբ Աստուածածնէդ, որ նստեալ
կայ ընդ աջմէ Ողորմյդ Մխայնիդ. եկիր յաշխարհս
վանն Աղամայ նախահօրն, խաչեցար և Թաղեցար, և
զմարմինդ Թողեր ի խաչին և հոգւովդ ինքեր ի դժոխս,
և աղատեցեր զԱդամ, և զծնունդ նորա, և հաներ ի
կեանս հոգւոյն[1]. և մարմնովդ միաւորեցար ընդ աս-

1 Որ կայն Քրիստոս յերկինս՝ անդր և զաւրութեան գիտեմք հանճար։

տուածոուԹեան ՝որ քում՝ զոր ունէիր յառաջ քան զլինելն աշխարհի. այլ և գալոյ ես միւսանգամ ՚ի գատել զկենդանիս և զմեռեալս, որ և յարուԹիւն ամենայն մարդկան. Հաւատամ և երկիր պագանեմ քեզ։ Եւ յետ բազում անգամ խօսելոյ վարդապետին Մխի-Թարայ ընդ երկնաւոր Թագաւորին և առնելոյ պատասխանի, և անդրէն դարձեալ ասաց Թագաւորն. Վարդապետ, այսօր զինչ գատ ունէիր զմօրէ իմէ զսուրբ կուսէս։ Եւ ասաց վարդապետն. Տէր իմ Յիսուս Քրիստոս, այս է գատն իմ զսուրբ Աստուածածնէդ, որ ՚ի գնալն իմ յերկրպագուԹիւն լուսաբաշխ գերեզմանի քո, յանձնեցի զմիաբանքս իմ առ սուրբ Աստուածածինդ և մայրդ ողորմուԹիւնէ, և ոչ է ողորմեալ միաբանս եղբարցն, և մեռեալ (են) ՚ի նոցանէ բազումք. և այս է գատն իմ առ հեշտալուր Տէրդ իմ և արդար դատաւորդ։

Եւ Թագաւորն ողորմած լուաւ զպաղատանս ծառային, և զկամս երկիւղածին կատարեաց, ըստ մարգարէին որ ասէ. Զկամս երկիւղածաց իւրոց առնէ Տէր, աղօԹից նոցա լսէ և կեցուցանէ զնոսա։ Եւ այնպէս լուաւ զպաղատանս սուրբ վարդապետին, և եւս լուԹիւն տուեալ այսպէս։ Եւ փայեակն կանգնեալ կայր առաջի Թագաւորին, և եւս փայեակին այն Թագաւորն փոքրիկ սկուտեղ երեք նշխարաւ, և փոքրիկ սկաւառակ մի լի բաժակաւ, և առաքեաց վարդապետին։ Եւ առեալ վարդապետն զնոսա ՚ի ձեռն իւր, և հրամայեաց Թագաւորն վարդապետին ըմպել զբաժակն. և ասաց Թագաւորն իւր սուրբ բերանովն. Ա՛ռ ՄխիԹար և ասեմ զպատճառ սկուտեղիդ և նշխարացդ և բաժակիդ և սկաւառակիդ. և ուր և հասանեն դոքա՝ ոչ լինի սով երկրին այն, և ոչ մրեամխ և ոչ ԹրԹուր և ոչ ժանկ, և ոչ մինինայ, և ոչ դալուկ, և ոչ ջրեակ, և ոչ մուկն, և ոչ կարկուտ, և ոչ մահ, և ոչ գերուԹիւն. և եղիցին նոքա առատուԹիւն և փարԹամուԹիւն երկրի և առողջուԹիւն ամենայն ցաւոց. և ուր և հասանեն դոքա, և ոչ միայն դոքա, այլ և նշխար ոսկերաց քոց։ Եւ աստ կրկին անգամ հրամայեաց Թագաւորն ըմպել զբաժակն. և երեսս յետս դարձուցեալ՝ զգուշուԹեամբ ըմբեաց. և այնու կոչեցաւ Պոշ անուն նորա։ Եւ

յետս դարձաւ եթէ տացէ զկաւատակն ՚ի փայեակն. յայնժամ ոչ զոք ետես. և եղև տեսիլն այն ամենայն անելևոյթ: Յայնժամ զահի հարեալ զարմացաւ, և հիացեալ փառս ետ Աստուծոյ՝ զպարգևս այսպիսի տալոյն: Եւ ապա առեալ զսրբութիւնան իւր ՚ի ձեռս իւր, և կազմեաց զկաւատակն ուրբք նշան ձեռօք իւրովք. և գնաց անտի ՚ի լեառն առ աշակերտան իւր. և դեռ ևս աղօթէին նոքա անդ ՚ի գլուխ լերինն, և աւետիս մատուցանէր նոցա, և պատմէր զաքանչելի տեսիլն և յուցանէր զսրբութիւնան. և նոցա եկեալ հասուրէին և գոհանային զԱստուածն, որ ոչ անտես արար զաղաչանս իւրեանց:

Եւ սակաւիկ մի յառաջ գնացեալ՝ ետես աքանչելի վարդապետն յաշակերտաց իւրոց զմին Պօղոս անուն վախճանեալ. և ասաց նոցա, Ուրեակք իմ, եկայք տեսցուք զնորա ննջեցեալ զմարմինն. և գնացեալ ետես զնա ննջեցեալ ՚ի վերայ պարանոցի մեռելոյն. և ինքեանց կացեալ յաղօթս արտասուելով առ Տէր. և լուաւ Աստուած աղօթից նոցա և յարեաւ մեռեալն աղօթիւք և զօրութեամբ սուրբ նշանին: Եւ եկեալ նոցա ցնծութեամբ և ուրախութեամբ օրհնելով զԱստուած ՚ի վանս իւրեանց ՚ի նորա Վեհիկ. և տարեալ զսուրբ նշանն վարդապետն Ալիթար եդ ՚ի շտեմարանն անտես յամենեցուն. և առեալ զմիաբանան իւր եմուտ ՚ի տաճար սուրբ Աստուածածնին, և յերեկոյեայ հանուն կատարեալ մինչև ցառաւօտն: Եւ լուեալ աշխարհայ զայնքան աքանչելիսն և ընթացեալ երիվարօք անդր հասանէին ՚ի տեսութիւն զօրութեանցն և յողջոյն սուրբ վարդապետին: Եւ ասաց վարդապետն, Ուրեակք, պատրաստեսջիք նշխարս վանն պատարագի. և ասեն. Այր հոգևոր, ուստի պատրաստեսցուք, ոչ գոյ նաշխի: Եւ ապա պատարագեաց զմի ՚ի նշխարացն զոր առեալ էր ՚ի Տեառնէ, և զմինն ՚ի նշխարաց կտակ արարեալ զի ընդ ինքեան Թաղեսցի. և զմիւսն հանդերձ սկուտեղաւքն եդ ՚ի կապարեայ մնտուկս և ամփոփեաց յեկեղեցին: Եւ ինքն սկսաւ մատուցանել զպատարագն. և յետ արձակման պատարագին ասաց. Ուրեակք, պատրաստեցէք Հաշ ժողովրդեանդ. և ասեն. Վարդապետ, յայսմ ժամու ոչ կարացաք գտանել ալիւր վանն ընդ

խարաց, և այժմ ուստի պատրաստեցուք այդքան ժո-
ղովրդեանդ կերակուր: Եւ ասաց. Ոդեակք, ոչ կա-
միմ արձակել զնոսա նօթիս, գուցէ նքթիցին ՚ի ճա-
նապարհին. Ոմն երկմտութեամբ և Ոմն թերի, այլ հա-
ւատով գնացէք ՚ի դուռն շտեմարանին և տեսէք զըս-
քանչելիս սուրբ նշանին. զոր ինքն Հոգւոյ ակամբ տե-
սանէր: Եւ գնացեալ ՚ի դուռն շտեմարանին, և տե-
սին զի լցեալ էր ալիւրով և ամենայն բարութեամբ.
և սուրբ նշանն բազմեալ ՚ի վերայ տանեացն. և հիա-
ցեալ փառս ետուն Աստուծոյ: Եւ առեալ զսուրբ նը-
շանն ՚ի ձեռս իւր օրհնեաց զժողովուրդն՝ սուրբ վար-
դապետն Պօղոս. և եօթն ամ սով եղև, ՚ի շտեմարա-
նաց նորա կերակրեցաւ երկիրն՝ մինչև եղև լիութիւն:

Եւ ես Ակրակոս Պատմագիր՝ զանն սպասաւոր և ա-
շակերտ սուրբ վարդապետին Ներսիսի, որ մակա-
նուամբ Պօղոս կոչիւր, ականջով իմով լսայ և աչօքս
տեսի զայսքան սքանչելիս. և ձեռօք իմով գրեցի զատ
՚ի պատմութեանց իմոց, և եդի ընդ սուրբ նշանին. և
յատուկ կայ գրեալ ընդ սկուտեղին՝ որ ամփոփեցաւ ՚ի
տաճարի սուրբ Աստուածածնին: Եւ Ակրիստոսի փառք
յաւիտեանս. ամէն:

ՅԱՆԿ ԳԼՈՒՑ

ՑԱՌԱՋԱԲԱՆ . . . . . Ա

Համառօտ պատմութիւնք ժամանակաց ՚ի սրբոյն Գրիգորէ մինչեւ ՚ի յետին աւուրս Թուացեալ 1

Ա. *Վասն Թագաւորութեան Լևոնի՝ որ ՚ի կոլմանս արևմըտից, թէ ուրպէս յառաջեաց և բռնացաւ յոյժ* . . 74

Բ. *Վասն իշխանացն որ յարևելս հայաստանեայց՝ Զաքարեայ և Իւանէի եղբօր նորին* 78

Գ. *Վասն Ժոլովայն զոր արար Զաքարիա վասն ինդրոյ ինչ երից* 81

Դ. *Վասն կաթուղիկոսին Աղուանից գալոյ առ մեծ իշխանն, նեղեալ ՚ի յայլազգեացն* 88

Ե. *Վասն վարդապետացն երևելեաց որք էին ՚ի կոլմանս Վասպուրականի, ուրպէս եղեն կամ ջինջ արարին* . 91

Զ. *Վասն մահուանն Զաքարէի զօրավարին* 92

Է. *Վասն Լևոնի արքայի և վաղճանի նորա* 93

Ը. *Համառօտ հիւսուածք պատմութեանց կոլմանցն Աղուանից մինչ ընդ նեղբոյս զրուցատրութեար* 96

Թ. *Վասն ելանելոյ թաթար ազգին զօրուն, և փախստական առնելոյ զթագաւորն Վրաց* 102

Ժ. *Վասն որ ՚ի սահմանս Գանձակայ անկուսին եղև զօրացն* . 104

ԺԱ. *Վասն վարդապետին Մխիթարայ՝ թէ ուստի էր, և կամ որպիսի՛ ոք էր* 106

ԺԲ. *Վասն շինուածոց վանացն Նորին Գետիկայ* 108

ԺԳ. *Թէ որք էին որք երևելք էին յաշակերտս նորա* . . . 112

ԺԴ. *Վասն վախճանի մեծ վարդապետին Մխիթարայ՝ որ Գոշն կոչի* 114

ԺԵ. *Վասն որք յետ նորա կալան զաուագնորդութիւն վանացն* . 115

ԺԶ. *Վասն սուրբ տանին Ջալալեանին և կոտորելոյն զզօրսն Վրաց, ՚ի վեց հարիւր եօթանասունն և չորս Թուին* . 117

ԺԷ. *Վասն կորուսեան սուրբ տանին Ջալալեանին և բառնալոյն նորա յերկրէ* 119

ԻԸ. Թէ ուրպէս եւ Թաթարն ապականեալ զաշխարհս ամենայն . 121
ԻԹ. Վասն աւերման մեծի և պատուական քաղաքին Գանձակայ՝ի պեղծ Թաթարաց 124
Ի. Վասն աւերման քաղաքաց և գաւառաց՝ի Թաթարէն . 125
ԻԱ. Վասն առման քաղաքին Ջամքորոյ 128
ԻԲ. Վասն գերութեան վարդապետին Վանականայ՝ և ոմանք ընդ նմա 129
ԻԳ. Վասն աւերման քաղաքին Լօռի, Թէ ուրպէս առին զնա . 135
ԻԴ. Վասն անկանելոյ՝ի ձեռս նոցա իշխանին Ասագի . . . 136
ԻԵ. Վասն քաղաքին Անւոյ՝ Թէ ուրպէս մատնեաց Տէր՝ի ձեռն նորա. 138
ԻԶ. Վասն աւերածի Կարուցն 140
ԻԷ. Վասն յուզարկելոյ զիշխանն Ասագ առ Ղանն յարևելս . 142
ԻԸ. Վասն կոտորածին որ՝ի կոլմանս Խաչենոյ, եւ վասն բռնապետ իշխանին Ջալալդօլոյ 144
ԻԹ. Վասն եկեղեցւոյն զոր շինեաց 146
Լ. Վասն ցուցման կերպարանացն Թաթարին բացայայտուԹիւն սակաւ 147
ԼԱ. Վասն Ռաբանին ասորւոյ 150
ԼԲ. Վասն աւերման Թէոդուպօլեացն 152
ԼԳ. Վասն պատերազմին որ եղև ընդ սուլդանն և ընդ Թաթարն 153
ԼԴ. Վասն Թագաւորին Հայոց Հեթմոյ, և զոր ինչ գործեաց անդ 156
ԼԵ. Վասն Կոստանդեայ իշխանին Լամբրօնոյ, և զոր ինչ գործեաց նա ընդ աշխարհս Կիլիկեցւոց 157
ԼԶ. Վասն Թագաւորութեանն ԴաւԹի 158
ԼԷ. Վասն կոչելոյն՝ի մեծ դուռն զկաթուղիկոսն Ալուանից զտէր Ներսէս 159
ԼԸ. Վասն ասպատակելոյ նոցա ընդ կոլմանս Վասպուրականի՝ն՝ի վերայ բազում գաւառաց 161
ԼԹ. Վասն կանոնական հրամանաց կաթուղիկոսին Հայոց . . 162
Խ. Թուղթ տեառն Կոստանդեայ շրջաբերական 163
ԽԱ. Սահմանք կանոնականք Տեառն Կոստանդեայ կաթուղիկոսի Հայոց 167
ԽԲ. Վասն հարկահանացն՝ որք եկին՝ի Ղանէն 175
ԽԳ. Վասն Թագաւորացն Վրաց երթալոյն առ Ղանն . . . 176
ԽԴ. Վասն երթալոյ առ Ղանն Սմպատայ զօրավարին Հայոց, և որդւոյ Ղևոնդեան սուլդանին 178
ԽԵ. Վասն կոտորածին զոր արար Թաթարն յաշխարհն Վրաց . 179
ԽԶ. Վասն ԴաւԹի Մոլորեցուցչի 181
ԽԷ. Վասն դիւին՝ որ՝ի կերպարանս կնոջ լեալ՝ խաւնաւէրը ընդ մարդիկ 185
ԽԸ. Վասն խնդրոյն որ եղև՝ի մէջ քրիստոնէից վասն աւուրց

Հոգւոյն Աստուծոյ, Թէ՝ի Հօրէ՛ միայն պարտ է ասել
Թէ՝ի Հօրէ և յՈրդւոյ 186
Խթ. Խոստովանութիւն հաւատոյ ուղղափառաց 189
Ծ. Խրատ դաւանութեան վանական վարդապետին . . . 193
ԾԱ. Վասն վախճանի սուրբ վարդապետին Վանականին . . 198
ԾԲ. Վասն Յովհաննու դասնեցւոյն 200
ԾԳ. Վասն Սարգսիկն որդւոյ Բաթուին 205
ԾԴ. Վասն մարտիկն որ եկեր զաշխարհս ամենայն 208
ԾԵ. Վասն աշխարհագրին որ եղև հրամանաւ Մանգու Ղանին 209
ԾԶ. Վասն երթալոյ բարեպաշտ արքային Հեթմոյ առ Բաթու Ղանն 211
ԾԷ. Վասն կոտորածին յերկրին Հռոմոց 217
ԾԸ. Վասն աւերածոյն Բաղդատայ 220
ԾԹ. Վասն աւերածին Մարտիրոսայ քաղաքին 225
Կ. Վասն որ ինչ գործեցաւ՝ի կողմանս Միջագետաց և՝ի Խորին Ասորւոց 227
ԿԱ. Վասն մահուան բարեպաշտ իշխանին Զալալին 228
ԿԲ. Վասն մահուան իշխանին Շահնշահի և որդւոյ նորա Զաքարէի 230
ԿԳ. Վասն պատերազմին մեծի որ եղև ընդ միմեանս Հօլաւուին և Բերքային 231
ՑԱՒԵԼՈՒԱԾ 237

ՅԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ *

Աբասաձոր գ. 109. 112.
Աբաս Թգ. բագր. 48. 49.
Աբաս Իշխան կորիկեան 72.
Աբաս որդի Գ. Կիւրիկէի 72.
Աբգար Թգ. 145.
Աբդիսոյ 34.
Աբդլա ամիրապետ 40.
Աբդլա » ծոլ 40. 43.
Աբդլա » միւս 44.
Աբդլմելիք ամիրապետ 36. 99.
Աբէլ 198.
Աբիսողոմ 5.
Աբրահամ առաջնորդ Գետիկայ 116.
Աբրահամ Խոստովանող 3. 16.
Աբրահամ կթ. 26. 29.
Աբրահամ նահապետ 35. 194. 198.
Ագաթանգեղոս 2.
Ագամ 2. 29. 190. 192. 240.
Ագդէ իմաստասէր 24. 109.
Ազատին } Քէյ–Քաուս Բ. 211.
Ազէտոսին }
Աթանագինէս 11.
Աթանաս Ս. 18. 172. 187. 194.
Աթանաս իմաստասէր 24.
Աթանաս պատրիարգ Ասորւոց 38.
Աթապէկ որդի Ջալալի 230.
Աթէ (Էթիլ) գետ 205.
Ալադին } Քէյքաւպատ 95–
Ալայէտտին } 219.
Ալա–թաուռ լ. 214*
Ալամանաց կայսր 75*
Ալամուդ 219. 220.
Ալայիա 179. 219.
Ալանաց դուռն 232.
Ալանք որ և Օսէթք 21. 159* 232.
Ալաւիկ (կամ Ալօկ) 66. 101.
Ալաքուհ կիմ Քէօսէ տաղ լ. 154*
Ալդայի լ. 213*
Ալեքս կայսր Ա. 47. 71*
Ալեքս Բ. 60-70.
Ալի 32. 33.
Ալիւս գետ 40.
Ալհարակ լ. 66. 102.
Ալղուռ Թաթար 231. 232.
Ալուալիխ 214.
Ալփասլան 47. 52. 59. 60.
Ալփիանոս եպ. 13.
Ախալցխէ ք. 229*
Ախուրեան գետ 50.
Ածլոր 229.
Ականա 207.
Ակներ վանք 77. 94.
Ահարոն (Հարուն) ամիրապետ 43.
Ահարոն կթ. Աղուանից 100.
Ահմատ ամիրապետ 44.
Ահր աւան 215.
Ալան (Արծրունի) 16*
Ալբուղա որդի Վահրամայ 79. 128. 142. 159.
Ալեքսանդրիա 21. 55. 109.

* Համառօտաքէդ նշանակեն, բ. բերդ. գ. գիւղ. լ. լեառն. Թգ. Թագաւոր. կթ. կաթուղիկոս. ս. սուրբ. ք. քալաք. վ. վարդապետ. * ծանօթութիւնք։

Ալեամեր 46· 57· 70·
Ալեվոլս 33·
Ալուսեր 7· 9· 17· 50· 48· 56· 90· 96· 97· 98· 99· 102· 117· 120· 123· 125· 144· 159· 161· 174· 200· 210· 218· 243·
Ալուսեց կմ· 88· 90· 96-102·՝
Ալուսեցեան հայր Վերին 56· 72· 73·
Ալուսեցեան որդի Վերին 73·
Ալուսեր 116·
Ալուսեց գետ 107·
Ամբրոս ք· 98·
Ամբրի Եպ· 61·
Ամուրի Լեռնեան 77*
Ամիճ ,ք· 121· 161· 227·
Ամերց Մանիկեան 148·
Ամեր Օձոր 90·
Ամերսեալիք 34· 47·
Ամի սպիտակ 34·
Ամեն գետ 213·
Անդրան 79·
Անդր–ձոր 174· 200·
Անեծք 133·
Անեծս Մակաց կմ· 48· 49· 50· 101·
Անեծս կմ· Ալուսեց 100·
Անեծս Շերակաց 38·
Անեծս Սահմանեց 64·
Անեծս Վերասաց 70· 76·
Անապատ վանք· 72·
Անասուս կմ· 38·
Անասուս կոյս 22·
Անասուս վք· 40·
Անբեր ք· 79·
Անգո–ձոր 174·
Անգեղս տապեալ 6·
Անգեղս խնամոք 24· 25· 109·
Անգեղ (Ս·) վանք 174·
Անգոնիկս զօրավար 74·
Անեցիք 84·
Անի 49· 50· 52· 87· 79· 84· 85· 138· 140· 174· 218*
Անկեալք, որ և Անկած 122·
Անկոպեղ ք· 214·
Անոյք
Անոխք
} 61· 63· 64· 71· 76· 234·
Անոխոյ Բերձ 94·
Անոյշ Կին· 68· 112·
Անոյշ կամ Ազնիւ 184*
Անոյ Բարդուսեան 8·
Անոյ Խնամեալ խել· 44· 47·
Անոյ մարդպան 36· 43·
Անոյ Գ·· Որդեան 49·
Անոխոյս 11·
Անոխի խել· 119·
Անոխի սուբեան 80·
Անոխիկ Անուանեալ 46·
Անոյշս–ձոր 232· 234·
Անշ–ձոր (Խոխ· Թաղիս) 46·
Անձ–Պարբ 34· 36·
Անձասահակ Մահճիս 43·
Անձանձի սոխիան 43· 44· 45· 46·
Անուն 97*
Անկեհ 214·
Անս Եպ· Անեսեց 97·
Անհս 208· 212·
Անհոյկք 60·
Անկ որ և Անկիկ 210·
Անձն–ակկ 148· 212·
Անդեսան 61·
Անդրք 15· 29· 33· 34· 44· 67· 76· 150· 187· 207· 220· 227·
Անուն ք· 214·
Անուհրդեան 215*
Անուանդանդեայ կմ· ՚ի Գեղիկ 112· 237·
Անուանդաստեր Աղբոյրիկոյ որդի 94·
Անուն· ա· Մեր Անուն
Անուհս 62·
Անուկոս պատմեսրդ 18·
Անդրպատմական աշխարհ 79· 123·
Անդրպատմական Պարսից 215*
Անդրեաս 25·
Անդրկիս 214* 215·
Անդրագ Լ· 214·
Անդրագան 42· 216·
Անդանեհս 39·
Անդոյկ Լ· 214·
Անդկեսեան վանք 94*
Անդս–խաղաղ 111·
Անհոյս 12· 32· 187·
Անհատիկս 7· 8· 9·
Անհատակ 17·
Անկ տուգս 221· 231·
Անծրանեայ խել· 16·
Անծրանք 46· 62·
Անկատեաս կոյսք 14· 18·
Անկատասեղս 43·
Անկատեան գ· 44*
Անձան 16·

— այլ 16·
Արդեն 175-231·
Արձիշ գ· 91·
Արմեան 87·
Արշակ Բ 11· 12· 13· 14·
Արշակուան 12· 13·
Արշակունիք 5· 19· 45· 185· 186·
Արշարունեաց գա· 48·
Արտաշատ 35·
Արտաշաս 10·
Արտաշէս կամ Արտաշիր Թագաւորի Վրաստանեայ 18· 19· 30* 45·
Արտաշիր արդի Ճահնշահ 230·
Արտայ գա· 174*
Արտաւազդ գա· 185·
Արտաւիկ գ· 92·
Արտեմեան հերձուածող 31·
Արցախ 182* 207·
Արփասլան ս· Ալփասլան·
Արփաուսա գ· 28·
Արքակական վանք 82· 93·
Արծրունեաց քահանայ 66·
Արքելայոս եղեսեան 8·
Աստ արդի Խառնէ մեծ 93-180·
Աստ-Սարդես արդի Ճահնշահ 230·
Աստղիկ 227*
Ահան եղբայր Աշտիշոյ 80*
Ախուռեան 159·
Ախուրեան 228·
Ախլեն 46·
Ախսխուիրա 36·
Բագրեւանդ կամ 21·
Բագրեւանդ Սիւնեաց 44·
Բագրատունիք 44· 78· 224·
Բագարան գ· 29·
Բագարան եղեսեան Տարօնոյ 43·
Բադնոյր վանք 80·
Բադաւան 34· 39· 93·
Բադրատունիք 5· 45· 55· 56· 57· 72·
Բադրեւանդ 22· 36·
Բամբ գաւառ 159· 177· 205· 207· 209· 211· 213· 214· 216· 217· 218· 220· 232·
Բաղխա թամբար 218· 220· 232·
Բահատուր եղեսեան թամբար 104·
Բակաց գա· 49·
Բակրեւան գ· 220· 224· 225·
Բաղա-խուրձա վիճակաւոր 152·
Բաղա-նահապետ 154· 156· 177· 178· 206· 211· 215· 218· 219· 221·
Բահանաց տաճկաստան 44·
Բահլաւունի 79· 84· 90· 112· 174·
Բարձրա 19·
Բօրա-նահապետ 160·
Գաբրիել Հրեշտակ 190· 201·
Գաբրիել վկ· 38·
Գադ ը· 79· 129· 134·
Գագիկ Ա· Թագաւոր Արծրունեաց 62·
Գագիկ Թագաւոր Բագրեւանդ Ա· 80·
Գագիկ Բ· 82· 83· 87* 38· 89*
Գանձակ 112·
Գանձասար տեղի 114·
Գառնեցի գ· 46·
Գեղարդ (թամբար) 218·
Գեղարդաւանք 6· 96· 163· 167· 203·
Գեղեշատուհ (տարի) 38·
Գեղի-Հրեշտակ (Ագաթանգ·) 2·
Գերմանիկէ 58·
Գէորգ (Ս·) 13· 18· 188· 194· 196·
Գէորգ եպ· Խաչատրոյ վարդապետի 116·
Գէորգ եպ· (արքեպիսկոպոս) 131·
Գէորգ եպ· Տարօնոյ 86·
Գէորգ Ա· կթ· 56· 57· 61· 62· 63·
Գէորգ գհ· գեղոյն 213· 216·
Գեղբաշա (թամբար) 218·
Գուբելեան գոյր Աղուանից կղեւան 72·
Գեղամեան 17·
Գեղարդն կթ· Աղուան· 88· 89· 102·
Գեղամեան գ· 103·
Գեղամիկ 103·
Գենեսարեան (Ս·) 63·
Գենէթ վկ· 234·
Գեռանիկ 111·
Գերգեսիոյ գ· 100·
Գերեզոյ զօրավ· թամբար 231· 232· 234·
Գիշունեաց ծով 46·
Գիշունիք 33· 36· 80· 119· 161·
Գլխարուեաց տեղացի 60·
Գնեզանդ պատմիչ 3·
Գնեզա գ· 43·
Գնեւաւան (Սիւնեաց) 36·
Գոգա-նահապետ 160· 229·
Գոգ գէղեայ Պարսից 30·
Գոհարա 215·
Գուգա հարկահան թամբար 175· 176·
Գուգա տաճկաստան 44· 46· 175·
Գուդնեց գա· 39·
Գուգռան ժողովրդեան 30·
Գնեի գ· 54· 79· 84· 90· 112· 174·
Գպեւրա 19·
Գօրա-նահապետ 160·
Գաբրիել Հրեշտակ 190· 201·
Գաբրիել վկ· 38·
Գադ ը· 79· 129· 134·
Գագիկ Ա· Թագ· Արծրունեաց 62·
Գագիկ Թագ· Բագրատ· Ա· 80·
Գագիկ Բ· 82· 83· 87* 38· 89*

Գագիկ Թգ. Վանանդայ 55. 57. 58. 59.
Գագիկ Ա. կԹ. Աղուանից 100.
Գագիկ Բ. (Գրիգորէս) 102.
Գազուին 215*
ԳալքիւԹ (Գայլ գետ) 154*
Գամիրք 24. 109.
Գայիանէ 8.
Գայլ (Պետրոս) եպս. 26.
Գանձակ ք. 66. 88. 89. 90. 101. 115. 117. 118. 124. 125.
Գանձասար վ. 146. 176* 181. 230.
Գառնեցիք 185.
Գառնի գ. 45. 46. 118. 185. 200.
Գառնիկ ՃԳ. 1. 8. 21.
Գարագօրուամ ք. 121* 213*
Գարա-ԽիԹայ աշխարհ 122* 213*
Գարաման 179*
Գարդամ, Գարդման } 73. 79. 99. 129. 199.
ԳեղաԹ 228.
Գեհան 215*
Գեղամայ աշխարհ 239.
Գեղամայ ծով 36. 129. 181. 247. 239*
Գեղաքունեաց ծով 79. 137. 182.
Գետաբակ ը. 31.
Գետահիցք վ. 73.
Գետիկ վ. 79. 81. 85. 107. 108. 109. 111. 114. 116. 135. 174. 237. 239. 242.
Գերմանիա 75.
Գերմանոս պատր. 17.
Գէորգ (Ս.) եկեղ. 116.
Գէորգ եպս. Հաղբատայ 56.
Գէորգ կամ Գորգի Գ. ԹԳ. Վրաց 64. 66. 79. 81. 93. 109. 124.
Գէորգ Լաշա 93. 158. 177. 178.
Գէորգ Թոռն Լաշայի 228.
Գէորգ կԹ. Խուլ-որբուկ 42.
Գէորգ Բ. Գառնեցի 45. 46. 101.
Գէորգ վԳ. Լօռեցի 54. 55. 56. 57. 62.
Գիգան ասորի 109. 24*
Գիւտ խան 175. 177. 206. 209.
Գիա 97.
Գիւա կԹ. 20.
Գնէլ արշակունի 12.
ԳողգոԹա 7.
ԳողԹն 37. 185.
Գոնցա Թագուհի Վրաց 228. 229.
Գոնցա կին Աբագի 181.
Գոշայ վ. 79* ա. Գետիկ
Գորգ վԳ. Կարենացի 91.
Գորգոզ իշխան ԹաԹար 160.
Գորտասակ (գիւղ) 29.
Գուրջի Բագրատունի 88.
Գրաւհանոս կայսր 13.
Գրիգոր Աստուածաբան 13. 64. 67. 187. 194. 196.
Գրիգորեանք (Նիւս. Աստուածաբան) 18.
Գրիգոր Դունեցի 84.
Գրիգոր եղբայր ՎախԹանգայ տեառն ՀամԹերքոյ 111.
Գրիգոր եպս. (քեռորդի Վկայասիրի) 55. 56*
Գրիգոր եպս. Բջնոյ 174.
Գրիգոր եպս. Խաչենոյ 207.
Գրիգոր իշխան Խաչենոյ 105. 153.
Գրիգոր իշխան մամիկ. եղբայր Ալան-ալկիի 148.
Գրիգոր որդի Ալան-ալկիի 212.
Գրիգոր Լուսաւ. 1-11. 19. 30. 31. 39. 96. 97. 110. 163. 167. 169. 172. 187. 194. 203.
» ԱԹոռ 25. 29. 46. 70. 95. 98. 186.
» Դաշինք 67.
» Նշխար 21.
» Վանք 42*
» Վիրապ 34.
Գրիգոր կաթողիկոս 116.
Գրիգոր կԹ. Բ. Վկայաբեր 55. 56. 57.
Գրիգոր կԹ. Գ. Պահլաւ 55. 61. 63. 67. 101. 186.
Գրիգոր կԹ. Դ. Տղայ 69. 100.
Գրիգոր կԹ. Ե. Գահավէժ 69. 116. 157.
Գրիգոր կԹ. Զ. Ապիրատ 70.
Գրիգոր մագիստրոս 54.
Գրիգոր մամիկ. պատրիկ 55.
Գրիգոր (Մանաճիհր) 24.
Գրիգոր Նիւսացի 13. 188. 194. 196.
Գրիգոր Պատ 63.
Գրիգոր Սքանչ. 88.
Գրիգոր վԳ. (առ Մօրիաւ) 28.
Գրիգոր վԳ. Գանձակեցի 101.
Գրիգոր վԳ. Երզնկացի 200.
Գրիգոր վԳ. Թոքաքերի որդի 66. 101.

Գրիգոր վդ. Մոնմոնիկ 84. 85.
Գրիգոր Տղայ Խաչենեցի 137. 153. 155.
Գրիգոր Տղայ որդի Իւանէի 116. 137. 207.
Գրիգոր Տուտէորդի 51. 84. 85.
Գրիգորիս եղբայր Վախթանկայ Հաթերքոյ 111.
Գրիգորիս եպս. Դադի վանից 184. 186.
Գրիգորիս եպս. Հաղբատայ 56.
Գրիգորիս կթ. Աղուանից 10. 98.
Գրիգորիս վդ. Խաչենոյ 146.
Դադի վ. 111. 184.
Դալաս ք. 214.
Դամասկոս 74. 80. 96* 161*
Դանգրէա 61*
Դանիէլ եպս. ասորի 10. 11. 15.
Դանիէլ մարգարէ 17. 133. 198.
Դաւնոյ դաշտ 233.
Դանաւորից գ. 39.
Դավրէժ 215*
Դարբանդ 36. 102. 104. 159* 218. 231. 232. 234.
Դաւդար (գրիչ) 222.
Դաւիթ Ալաւկայ որդի 66. 101.
Դաւիթ Անհոլին թգ. 56.
Դաւիթ Անյաղթ 16. 17. 20.
Դաւիթ Բագրատունի կոլիկեան 'ի Մածնաբերդ 72.
Դաւիթ Դուենեցի 35.
Դաւիթ Ա. թգ. վրաց 64.
Դաւիթ թգ. Բ. Դեմետրեան 64. 66.
Դաւիթ թգ. Գ. Վահրամուղ որդի Լաշայի 159. 178. 228. 231.
Դաւիթ թգ. Դ. որդի Ռուզուդանայ 144. 150. 159. 177. 178. 179. 180. 210.
Դաւիթ Իշխան Նոր-Բերդոյ 72. 73.
Դաւիթ կթ. Ա. (ՅԱրամունեաց) 39. 41.
Դաւիթ կթ. Բ. ('ի Մազազայ) 43.
Դաւիթ » Գ. (ՅԱրքակաղնոյ) 70. 82. 83. 93.
Դաւիթ կթ. Աղուանից Ա. 98.
» » » Բ. 100.
» » » Գ. 100.
Դաւիթ կթ. Աղուանից Դ. 100.
» » » Ե. 100.
» » » Զ. 101.
Դաւիթ Հասանկեցի 40.
Դաւիթ որդի 2. 39. 63. 68. 198. 238.
Դաւիթ Մոլորեցուցիչ 181. 182.
Դաւիթ Սահառունի 30. 32.
Դաւիթ Սիւնեաց եպս. 41.
Դաւիթ վդ. Քոբայրեցի 84.
Դաւիթ Քրթին որդի 111.
Դէդ բ. 176.
Դելմուկք 46*
Դեմետրէ Թգ. վրաց 64. 66. 102. 228.
Դեսում Իշխան 207.
Դեսպինա խաթուն 234.
Դերենիկ արծրունի 46.
Դերենիկ բագրատունի 36.
Դէճենա գ. 215*
Դէսկորոս սանահնեցի 51. 64.
Դէհրան 215*
Դըդուշ որդի Ալփասլանայ 60.
Դիզակ 215.
Դիլմա կամ Դիլմաց աշխարհ 46. 123.
Դինկապալեխ ք. 214.
Դիոնէսիոս Արիսպ. 68. 197.
Դիուժէն կայսր 59.
Դիպէթ 122* 213*
Դմէկ 227.
Դուին 10. 34. 35. 39. 41. 42. 46. 61. 79. 84. 98. 100.
Դուկիծն կայսր Յունաց 59.
Դուս ք. 215*
Դուփ Խաչենեցի 153. 155.
Դպրէվանք 48.
Դրազարկ վ. 63.
Եաքսարտ գետ. 214*
Եբիոս (գիրք) 29.
Եգիպտացիք 33.
Եգիպտոս 32. 55. 61. 71. 80. 96. 119.
Եդեսանք 72. 225.
Եզեկիէլ 17. 133. 198.
Եզնակ 16. 17.
Եզնիկա 154* 155. 179. 219. 234.
Եզր կթ. 31. 34. 39.
Եզրաս Անգեղացի 22.
Եիլան-սու 214.
Ելթինա 156. 159. 160.
Ելիսացիք 220.

Եղբա 109. (Իլոգա)
Եկոփորուկ 214.
Եղապատրօշ գ. 42.
Եղիա կթ. 56. 37. 99.
Եղիա Հաւուցթաւեցի 84.
Եղիա մարգարէ 193. 198. 204.
Եղիա վդ. Խաչենոյ 146. 147.
Եղիաբ 111.
Եղիազար եպս. Ալուանից 99.
Եղիէ առաքեալ 97.
Եղիէ պատմիչ 3. 16. 17.
Եղիսաբէթ (Ջապել) 212.
Եղիսէ եպս. 53.
Եղիսէ կթ. 48.
Եմեսիա 188.
Ենովս 198.
Ենովք 199.
Եպիփան կիպրացի 188. 195.
Երէմէ 42.
Եսայի կթ. 42.
Եսայի մարգ. 198.
Եսվաղեն 97.
Երազգաւոր 43.
Երասխ գետ 215.
Երգեվանք 73. 79. 129. 184. 199.
Երեմիա եպս. Ալուանից 98.
Երեմիա մարգ. 115. 133. 198.
Երթիճ գետ 213.
Երլոսոյ 215.
Երուսաղէմ 6. 17. 22. 29. 30. 43. 61. 67. 71. 80. 97. 109. 110. 124. 145. 199. 201. 203. 227. 237.
Եւա 115.
Եւսեբիոս 2.
Եւտիքեան 212.
Եփեսոս 179.
Եփրատ 96. 225.
Եփրեմ (Ս.) 64. 188.
Եփրեմ վդ. 40.
Զանգիան 202. 215.
Զապէլ 94. 157. 212.
Զառաֆչան գետ 215*
Զարմանդուխտ 30.
Զաւէն կթ. 13. 14.
Զաքարէ Սպասալար 51. 56. 72. 78. 79. 80. 87. 90. 92. 93. 108. 110. 111. 112. 115. 116. 126. 142. 145. 211*
Զաքարէ Հղբայր Սարգսի 79.
Զաքարէ որդի Շահնշահի 159. 162. 181. 222. 230. 231.
Զաքարիա եպս. Ալուանից 98. 99.
Զաքարիա (այլ) 99.
Զաքարիա կթ. 43. 45.
Զաքարիա հայր Յովհ. Մկրտ. 98.
Զաքարիա որդի Վահրամայ 72. 78.
Զէնոն կայսր 8. 21. 22.
Զմզմա 65.
Զոյի 59.
Զուռնուխ 215.
Զօրաբաբէլ 198.
Էաս աղեքսանդրացի 24. 109.
Էթիլ 211. 232.
Էլէի-Գաթա 206.
Էմմանուէլ 70. 191.
Ըռաստակէս լաստիվերցի 4.
Թաբորական լ. 228.
Թադէոս առաք. և վանք. 96. 97. 163. 167. 174. 185. 203.
Թաթարք 4. 56. 95. 102-232.
Թաթարստան 213.
Թաթուլ եղբ. Վարոսի 21.
Թալիէ 100.
Թալին 40.
Թաղեաթին 73.
Թամար Թագուհի 56. 79. 81. 93. 107. 109. 110. 126.
Թամթա 80* 81. 119. 161.
Թանատեաց վ. 41.
Թավրէժ 151. 160. 215.
Թեղենիք 84.
Թեւդաս 181.
Թէոդոս մեծն 3. 13. 14. 68.
Թէոդոս փոքրն 18. 20.
Թէոդոս սպասաւոր Կոստանդին կթ. 174.
Թէոդորա կին Յուստինոսի 22.
Թէոդորոս աշ. Մ. Խորէն 16.
Թէոդորոս կթ. 48.
Թէոդորոս Ուշաւնի 32. 35.
Թէոդորոս (Ս.) 21.
Թէոդուպօլիս 18. 152.
Թիլ գ. 45.
Թոսոր կայսրուհի 59.
Թորա (Թէորիանոս) 67.
Թորդան 8. 21.
Թորոս աշ. Մխ. Գոչի 113.
Թորոս եպս. Ալուանից 100.
Թորոս Լչկանաց Լչկան 62. 74.
Թորոս որդի Կոստանդնի Ա. 212.
Թորոս քահ. 213.

Թումայա աշ. Թաթլը 21.
Թունի–Թանջահ 119.
Թուրա Ալա. 209.
Թուրքաստան 214.
Թուրք 47. 74. 104* 117. 174. 175. 204. 207. 211. 220. 221. 222. 227.
Թոքաքեր 66. 101.
Թրակիա 60. 70.
Թոխուզ Խաթուն 223. 229. 233. 234.
Իբերիական Սպանիա 208*
Իգնատիոս մեհնիչ Ղուկայ 63.
Իգնատիոս վդ. 84.
Իզիս սմիրապեա Ա. 36.
Իզիս » Բ. 37.
Իզիս » Գ. 40.
Իթիլ տ. Վոլգա
Իլանպեխ 214.
Իլի ք. 214*
Իլիգի–Նուին 225.
Իլչի–Գադաի տ. Էլչի–Գաթա.
Իլոպս (Ելոքս) խմաստասէր 25.
Իկոնիոն ք. 60* 80*
Իկօն ք. 179.
Իճատ կամ Իյատ Իպն–ղանէմ 33*
Իննովկենտիոս պապ Դ. 186* 207*
Իշմուէթ (որդի Հօլաւուի) 225.
Իպնդօկ Հարկահան 42.
Իսահակ վդ. Մռուտ 45.
Իսմայէլ (ազգ) 34. 36. 38. 42. 43. 46. 52. 75. 81.
Իսմայէլ (որդի Աբրահամու) 35. 37. 88.
Իսկ լիճ 214*
Իսրայէլ կթ. 35.
Իսրայէլ (Յակոբ նահ.) 198.
Իսրայէլ (Հրեայք) 2. 233.
Իսրայր–Նուին 150.
Իտուղատա 136.
Իրոն տօմարագէտ 25. 109. 110.
Իսանէ Ալթաբէկ 56. 72. 79. 80. 81. 90. 92. 103-8. 112-9. 126. 158. 178. 180,
Իսանէ եղբայր Ղալուէի 117.
Իսանէ Թոռն Զաքարէի 230.
Լամբրօն բ. 63. 157.
Լաչա Թգ. Վրաց 103. 104. 126. 158. 228.
Լևոն կայսր Ա. 21.
Լևոն որ և Լևոնդ կայսր 36:
Լևոն Գ. (Իսաւրացի) 37. 40.
Լևոն Դ. 42.
Լևոն Ե. (Հայկազն) 43. 45.
Լևոն Ռուբինեան Ա. 62. 74.
Լևոն Բ. Թգ. 59. 62. 69. 74. 78. 82. 83. 93-96. 157. 212.
Լևոն Գ. 156.
Լէշխարիս, Լասգարիս կայսր 179. 212.
Լիբանանու մայրք 119.
Լորուա գ. 129.
Լօռէ ք. 39. 48. 53. 54* 60. 72. 83. 135.
Խագայ 147.
Խազիրք 30. 35. 36. 104* 122.
Խաչար տոհմ 227*
Խամճի վանք 90. 102. 151. 160. 161.
Խաչատուր վդ. Գետակայ 116.
Խաչատուր վդ. Տարօնեցի 108.
Խաչենեցիք 105. 155.
Խաչէն գ. 85. 89. 105* 107. 137. 142. 144. 175* 181. 182. 207. 217. 229.
Խաչիկ կթ. Ա. 50.
» » Բ. 54.
Խաչիկ վդ. 40.
Խառան 35. 227.
Խարախըտայ, Գարա–Խիդա 213.
Խարչին 214.
Խարչուխ լ. 214.
Խզըլ բռնաւոր 60. 61.
Խզուին ք. 215. տ. Գազուին
Խիւջախք (Ղփչաղք) 205.
Խլաթ, Խլխաթ ք. 80. 119. 161.
Խնդրախոյր, Խնդախոյր 214.
Խնծկօնս գ. 51*
Խոյախան բ. 176.
Խոյդան 111.
Խոշան գաշտաւայր 103.
Խոշաք տիկին 229.
Խոռխան կամ Խոռեամ պարսիկ 29. 30.
Խոսրով եպիսկոպոս 48.
Խոսրով Թգ. Բ. 9. 10.
Խոսրով Թգ. Գ. 14. 18.
Խոսրով պատմիչ. 3. 16.
Խոսրով մեծն Թգ. Պարսից 23.
Խոսրով Բ. Թգ. Պարսից 29. 30. 98.
Խոսրով Գ. » 30.
Խոսրովիդխատոյ Հովանոց 200*
Խորազմեան 161.

Խորանաշատ վանք 184· 199·
Խորասան աշխարհ 46· 61· 90· 116· 117· 123· 215· 232·
Խորենացի 200* 215*
Խորէն խոստովանող 3·
Խորիչահ կին Գուրդ իշխանի 211·
Խորին Ասորիք 227·
Խուզախ աշխարհ 214*
Խութ, Խոյթ, Խօթ լ· 44·
Խութայի, (Ձինք) 216*
Խութափա ք· 214·
Խութուխչի–ղան 214·
Խուլ–որբուկ, Խոյլորբուկ 42·
Խուչախք 104· (Խիւչախ)
Խցկունք վանք 51·
Խօխանա–քերդ 146· 176*
Խօձա–նուին 215·
Խօշաք մայր Ասագին 180· 229·
Ծաղկոցաձոր 50·
Ծառաքար վ· 51·
Ծար Ջերմուի 182·
Ծիրանաքար բ· 176·
Ծովք կղզի· 62·
Ծովք 9·
Կազեան գռ· 41·
Կաթայի կամ Խութայի 216*
Կաթին ծով 214·
Կալօժան 70·
Կածարէթ 79· 129·
Կակաղ գ· 43·
Կաղանկատուացի 4· 98*
Կայան աշխարհ տ· Կայենոյ Ծ
Կայանոյ ձոր 174·
Կայեան քերդ 108· 136· 174·
Կայենոյ աշխարհ 85· 107· 108·
Կայէն գաւ· 79· 109*
Կապուտքար 48·
Կապադովկացիք 61·
Կապադովկիա 28·
Կասբից ծով 205· 211· 213· 232·
Կամ ոստիկան 36·
Կատխաւն 221· 224·
Կատրամիտէ Թագուհի 50·
Կարապետ հաւ Գագկայ կթ· 101·
Կարապետ (Ս·) վ· 24·
Կարապետ ք՛ս· դրան երէց Հէթմոյ Ա· 213·
Կարին գաւ· 18· 152·
Կարկառ 207·
Կարմիր վ· Քեանոյ 56*
Կարմնջաձոր 48·
Կարնոյ ք· 18· 31· 40· 79· 107· 110· 152* 153· 161· 173· 210· 219·
Կարս ք· 53· 57· 79· 84· 140· 174·
Կաւաղենոս կայսր (Կոպրոնիմ·) 40·
Կաւատ Ա· 22·
Կաւատ Բ· 30·
Կեսարիա կապադովկացւոց 12· 53· 57· 120· 155· 219·
Կէջառուք 84· 85· 86· 174·
Կերինթոս 32·
Կիլիկիա և Կիլիկեցւոց աշխարհ 9· 47· 50· 58· 62· 68· 82· 107* 120· 151· 157· 162· 168· 178· 187· 211· 219·
Կիլիկեցիք 156·
Կիպրոս կղզի 77· 95·
Կիրակոս (Պատմիչ) 133· 189· 243·
Կիրակոսակ (գիրք) 29·
Կիր–ժան 48· 50·
Կիւրեղ աղեքսանդրացի 64·
Կիւրեղ երուսաղէմացի 31· 39· 199·
Կիւրիկէ Բագր· կամ Աղուան Թգ· Ա–Բ· 53· 56· 72·
Կիւրիկէ » Գ· 72·
Կիւրիկէ » Դ· 129·
Կիւրիոն կթ· Վրաց 4· 25· 26·
Կլայ–Հռովմէական· տ· Հռովմ կլայ:
Կոգովիտ 29·
Կոթ աւան 181·
Կոլբ 31· 210·
Կոլոնիա 204· 205·
Կոմանա 14·
Կոմիտաս կթ· 30· 31·
Կոնտուբրի 61·
Կոպի անապատ 213*
Կոստանդին կաթ· Ա· 95· 151· 162· 163· 167· 174· 186· 205· 212·
Կոստանդիանոս Մեծն 2· 10· 67·
Կոստանդին կայսր Բ· 9· 10·
Կոստանդին » Գ· 36·
Կոստանդին » Է· 42·
Կոստանդին » Զ· 48·
Կոստանդին » Ը· 59·
Կոստանդին Հերակլ կայսր 32· 33·
Կոստանդին պայլ 94· 95· 151· 157· 158· 171· 212·
Կոստանդին Ռուբինեան Ա· 74·
Կոստանդնուպօլիս 8· 13· 14· 17· 21· 24· 27· 30· 41* 45· 55· 61· 67·

Կովկաս լ. 104.
Կոտայք գ. 39. 43. 117.
Կորակեսիոն 219*
Կորինն 3. 16. 17.
Կուզ սուլթան Իկոն. 80.
Կուզ Տիմոթէոս 21*
Կուր գետ 103*
Կրման աշխարհ 209*
Կօն 158. 219. ս. Իկոնիոն:
Հաբէլ երէց 15.
Հադար 32.
Հադարացիք 46.
Հաթերք 107. 111.
Հալաւուս. ս. Հօլաւուս.
Հալէպ 74. 227.
Հաղարծին վ. 108. 116. 174.
Հաղբակ Խաչենեցի 105.
Հաղբատ գ. և վ. 56. 60. 64. 65. 83. 84. 85. 111. 113. 116. 174.
Համա 227.
Համամօլայ էշ. 161.
Համազասպ Եպս. Հաղբատայ 57. 65. 174. 184.
Համազասպ մարզպան 35.
Հայաստան և Հայք 6. 11. 12. 15. 17. 19. 22. 29. 31. 44. 48. 61. 102. 117. 125. 152. 153. 159. 167. 173. 175. 189. 208. 209* 212. 215* 218.
Հայկ 90* 97.
Հայկազն Արման 57.
Հայք 2. ս. Հայաստան:
Հանբերդ 174.
Հանդաբերդ բ. 182.
Հասան որ և Ջալալ 142. 145. 175. 207. 208. 229.
Հասան Միւս Խաչենեցի 155.
Հասան-ալէն-Զէիտ 46*
Հասան. ս. Պռօշ:
Հասան որդի Պռօշի 224.
Հասան Քրդի որդի 211.
Հարք գԼ. 13.
Հաւսխաղաց 145.
Հաւարծին. ս. Հաղարծին:
Հաւուց-թառ 84. 174.
Հեթում արքայ Ա. 95. 96, 156. 163. 168. 171. 178. 186. 201* 211. 215.
Հեթում տէր Լամբրոնի 63. 137.
Հելինէ կին Աբգարու 145.
Հերակլ կայսր 3. 30. 31. 32. 36. 39.
Հերտ գԼ. 90.
Հերեթ աշխարհ 90*
Հերոս եղբայր Հայկայ 90*
Հեվթաղք 21.
Հէմիանայ գաշտ 228.
Հէշմ 37.
Հիերիքոս վկայ 85.
Հմայեակ մամիկոնեան 21.
Հոլոբուդ 42* ս. Գէորգ կաթ. Խուլոբուդ
Հոնք 98. 104. 122.
Հոռոմոսի վ. 48. 174.
Հոռոմոց աշխարհ 219.
Հոռոմոց (Իկոնիոնի) սուլտանք 70. 119. 140. 152. 157. 158. 159. 211. 219.
Հոռոմք (Լատինք) 139. 204.
Հոռոմք (Յոյնք) 33. 40. 41. 57. 58. 68. 69* 234.
Հոքթա-խան 122.
Հոխիսիմեայ վիճակի 30.
Հոխիսիմեանք 8. 16.
Հռոմ 2. 6. 41. 42. 54. 75. 97. 186. 203.
Հռոմայեցիք (Լատինք) 75. 187.
» (Յոյնք) 10. 60. 70.
Հռոմայեցւոց ք. 75.
Հռոմկլայ 61. 62. 63* 70. 93. 96. 151. 174. 186. 205.
Հռոփանոս Սամոսատցի 16.
Հրեայք 25. 33.
Հրէաստան 24.
Հօլաւուս լան 214-234.
Ձաղ գ. 43.
Ձորոփետոյ վ. 211*
Ղազար Փարպեցի 3. 16. 17. 21.
Ղաճարիք ազգ 227.
Ղատաղան-Նուէին 129. 220. 232.
Ղատայիք 216.
Ղատիա 122.
Ղատիացիք 122.
Ղարա Բահատուր 141.
Ղարաղլուամ աշխարհ 121. տես Գարագօրում.
Ղարս ք. 211. ս. Կարս.
Ղևոնդ երէց 3. 16. 20.
Ղևոնդ կաթ. 22.
Ղևոնդեանք 64.
Ղիաթաամին սուլտան Ռ. 153. 161. 177. 179.
Ղութուն-Նուէին 148. 150. 160.

Ղուլ կամ Ղուլի զօրավ. Թաթար 218. 220. 232.
Ղուկայ մեկնութիւն 63.
Ղումղուր 213.
Ղուպիլայի 221* 231.
Ղօզլիճէ 50*
Ղօճա ղան 206.
Ճակատք գէ. 140* 210*
Ճառաբերդ 207*
Ճեաֆար 224*
Ճիհուն գտ. 215*
Ճիհր-Բուզէն 30.
Ճիհր-Վղոփէ 30.
Ճիհր-Վչնասպ Սուհէն 30.
Ճինկիզխան 218*
Ճիւճէ 218*
Ճապոտիկ գ. 239.
Ճորայ պահակ 213.
Ճամպալեխ ք. 214.
Մադիամ 33.
Մադիանացիք 33.
Մադրին (կուռք) 217. 233.
Մազազ 43.
Մազանդարան 215. 227*
Մազդեզն 20.
Մախոժ 24.
Մածնաբերդ 56. 72. 73. 129
Մակարայ վանք 111.
Մակեդոն 12. 13.
Մահադի 43.
Մահամատ ամիրապ. 43.
Մահկանաբերդ 107.
Մահմէտ 3. 32. 33. 34. 220. 221. 222.
Մահմէտ Ապուսահակ 43.
Մահմէտ Ոստիկան 35.
Մահմէտ միւս 36.
Մահմուտ ամիրապետ 43.
Մահմուտ Սալջուկ 47.
Մամբրէ 16. 17. 22.
Մամեստիա 68. 69*
Մամիկոն Մամիկոնեան 13.
Մամիկոնեանք 211.
Մամքան 147.
Մայուն (Պեմունդ) 61.
Մայրավանեցի, Մայրագոմեցի } 31.
Մանազկերտ 13. 38. 59.
Մանաճիհր 24.
Մանդնոս եպ. 24.
Մանդնոս մարզպան 21.
Մանգու ղան. 206. 208. 209. 211. 213. 214. 215. 216. 217. 218. 219. 220. 221. 231.
Մանեայ այրք 21.
Մանէ 29.
Մանիլ (Մանուէլ) կայսր 68. 70.
Մանկոն կայսր տ. Մարկիանոս.
Մանուէլ Մամիկոնեան 13.
Մաշտոց կթ. 45. 49.
Մասեաց-ոտն 71.
Մատթէոս կթ. Ակ. Ա. 98.
Մատթէոս Բ. 100.
Մատթէոս Ուրհայի 4. 52*
Մատթէոսի մեկնութիւն 68.
Մարանդ ք. 92.
Մարաշ 47.
Մարզպան մամիկոնեան 211* 212.
Մարի (Ս.) 140.
Մարիամ սուրբ Կոյս 191. 238. 240.
Մարկիանոս կայսր 20. 21. 37.
Մարկոս կթ. Ակ. Ա. 101.
Մարկոս Բ. 101.
Մարկոս աշակերտ Վանականի 130.
Մարկոս վդ. 207.
Մարկոսի աթոռ 55.
Մարկոս մետրապոլիտ կեսարու 57. 58.
Մարմաշէն 50*
Մարմարաշէն վանք 50.
Մարտիրոս առաջնորդ Գեռկայ 114. 115. 116.
Մարտիրոսաց քաղաք 225.
Մարութա 226.
Մաւիէ 33. 36.
Մաքենոցաց վանք 42. 100.
Մաքսիմիանոս 98. 200.
Մեժէժ (Մժէժ) 25.
Մելտինէ 113.
Մելտինի 76.
Մեծ Հայք 187.
Մելան իշխան Թաթար 232.
Մեռելայարոյց վդ. (Աճատուր) 93*
Մեսրովպ վդ. 15. 16. 17. 18. 19. 97. 98. 134.
Մերհաւան Թգ. Ակ. 97.
Մերու գտ 215*
Մերտին 71. 227.
Մէլիք Աշրաֆ 72. 80. 96. 161.
Մէլիքշահ Ա. 47.
Մէլիքշահ Բ. 60.
Մէլիք Քէլմ. 72. 80. 96.

Մէհմէտ 44.
Մէհինէ 33*
Մերվադ. 215*
Մէրվ-Շահիճան ք. 115*
Մէրվ-Րուտ ք. 115*
Մըրմն գ. 215*
Մժէժ գնունի 23.
Միանա ք. 215*
Միափոր գլ. 102. 151. 160.
Միափոր ք. 90.
Միհրդատ Պարսիկ 33.
Մինաս եպ. 83. 85.
Մինջագեաք 46* 71. 96. 208. 227.
Մինջնաշէն 109.
Մխայէլ կայսր Ա. 43.
Մխայէլ » Դ. 59.
Մխայէլ կթ. Ալ. 100.
Մլհեաք կամ Մուլհեաք 118. 143. 150. 215* 219.
Մխիթար առաջնորդ Գետիկայ 116.
Մխիթար Գոշ 79. 81. 86. 106. 107. 114. 237. 238. 239. 240. 241. 243.
Մխիթար Հիւան 115.
Մխիթար վդ. 213.
Մծբին 161.
Մկդեմ որդի Վասակայ 105. 224.
Մկրտիչ եպ. Հանբեըդոյ 174.
Մոզն գլ. 41.
Մոլար-Նուբին 128. 130. 134.
Մոնդայի-Նոյին 225*
Մոնոմախ 59.
Մովալ. 160*
Մովսէս Բագրեւանդայ եպ. 22.
Մովսէս Խորենացի 3. 16. 21. 188.
Մովսէս Կալիանդուացի 3. 98*
Մովսէս Մարգարէ 2. 32. 55. 194. 188. 204.
Մովսէս կթ. 24. 25. 26.
Մովսէս կթ. Ալ. Ա. 98.
Մովսէս Բ. 100.
Մովսէս վդ. 40.
Մովսէս Ցուրտաւայ եպ. 26.
Մուլհէտք ս. Մլհէտք.
Մուալ Թաթար 122. 149*
Մուլան գաշտ. 121. 123. 128. 141. 153. 160. 218. 233.
Մուէլ 13. 33. 40.
Մուէ կթ. 21. 22.
Մուսդասար 221.
Մուսէ ամիրապ 43.
Մուֆարկին (Նփրկէրտ) 225.
Մարայ սուլտանք 228.
Մրէն 30.
Մրվան 36. 37. 40.
Մօպաղէմ, Մօպասին } Խալիֆայ 221*
Մօպանսէրայ 221*
Մօրիկ 27. 28. 29.
Յազ 33.
Յազկերտ Բ. 20. 31. 33. 97.
Յակոբայ վանք 7. 201.
Յակոբ (Ս.) Մծբնայ 68. 209*
Յակոբ եպ. Կարուց 174.
Յակոբ եպ. Սիւնեաց 48.
Յակոբ վդ. Հռետոր 212. 216.
Յակոբոս երէց 82.
Յակոբոս վկայ. 229.
Յակոբոս Տեառնեղբայր 31. 97.
Յարութեան եկեղ. 7.
Յաւչաքան Թգ. Աղուան 97.
Յեսու 198.
Յեսուանց վանք 76.
Յիսէ 46.
Յոբ 17. 198.
Յոբհաննոս կայսր 12*
Յոյնք 12. 14. 20. 21. 22. 24* 26. 28. 29. 38. 41* 52. 54. 67. 69. 109. 110. 111. 117. 187. 212.
Յովաբ կթ. 42.
Յովասափ առաջ. Գետիկայ 116.
Յովէլ զօրավար 33.
Յովհաննոս կայսր 12*
Յովհաննէս Ամմանեցի 116.
Յովհաննէս Աւետարանիչ 44. 63. 187. 188. 212.
Յովհաննէս Գաւնեցի 200. 201. 202. 204.
Յովհաննէս Եկեղեցացի 16.
Յովհաննէս եպ. Կարուց 84. 85.
Յովհաննէս եպ. Հաղբատայ Ա. 56.
Յովհաննէս » Բ. 56. 111.
Յովհաննէս » Գ. 56.
Յովհաննէս Լասգարիս 212.
Յովհաննէս կթ. Հայոց Ա. 16. 20. 21.
» » Բ. 23. 24.
» » Գ. 29. 30.
» » Դ. 37.
» » Ե. 43.
» » Զ. 3. 46. 48.
» » Է. 70. 73. 76. 82. 85. 93.

Յովհաննէս կթ. Ակ. Ա. 98.
» » Բ. 99.
» » Գ. 100.
» » Դ. 101.
» » Ե. 90. 102.
Յովհաննէս Մայրագոմեցի 31. 32.
Յովհաննէս Մկրտիչ 23. 134. 199. 202.
Յովհաննէս պատրիարգ Յունաց 27.
Յովհաննէս Ոսկեբերան 14. 18. 188. 194.
Յովհաննէս Սանահնին հայր 84.
Յովհաննէս ս. Սարկաւագ.
Յովհաննէս Սմբատ Թգ. 50. 51. 52.
Յովհաննէս Տաւուշեցի 106.
Յովհաննէս Տուեցի 174. 200.
Յովհաննէս Տօմարագէտ 25.
Յովհաննու վանք 174.
Յովսէփ կթ. Հյց. Ա. 16. 20.
Յովսէփ » Բ. 43.
Յովսէփ կթ. Ակ. Ա. 100.
Յովսէփ » Բ. 101.
Յովսէփ մարտիրոս 42.
Յովսէփ վ. առաջն. Թադէի վան. 174. 185. 187.
Յովսէփեանք 3.
Յորդանան 71. 203.
Յուդայ կախարդ 169. 181.
Յուլիանեանք 38.
Յուլիանոս ուրացող 10. 21.
Յունան մարգ. 191.
Յունան կթ. Ակ. 100.
Յուչաքան Թգ. Աղուան 97.
Յուսիկ կթ. 10. 11.
Յուսկան որդի 91.
Յուսուփ եղբայր Ախլինի 45. 46.
Յուսուփ Սալահատինեան 227.
Յուստինիանոս Ա. 22. 23. 25. 109. 110.
Յուստինիանոս Բ. 26.
Յուստինոս (Յուստինիանոս) Ա. 22.
Յաւստինոս Բ. 26.
Յօժար–որդիք 184.
Նախջուան 36. 43. 93. 118. 151.
Նայիման 213. 228.
Նանա քոյր Սարգսի Իշխանի 72.
Նանան սարկաւագ 44.
Նանգաս աշխարհ 220.
Նանքիաս 220*
Նարկեաոս 45.
Նեռն 121.
Նեստոր 29.
Նեստոլաց աղգ. 121. 158.
Ներսէհ կամսարական 36.
Ներսէս Լամբրօնացի 63. 76.
Ներսէս կթ. Ա. 4. 11. 12. 13. 121.
» Բ. 22. 23.
» Գ. (Շինող) 34. 35. 50.
» Դ. (Շնորհալի) 61. 63. 67. 69. 101* 186.
Ներսէս (Բակուր) կթ. Ակ. Ա. 99. 100.
» » Բ. 56.
» » Գ. 102. 146. 174. 208. 230.
Ներսէս Նարեկացի 68.
» Շիրակացի 35.
» վ. առաջ. կեչառուսց 86.
Նիկիա ք. 179*
Նիկիոյ Ժող. 7. 25.
Նիկիփոր կայսր Ա. 42.
Նիկիփոր Բ. 48.
Նիկոմիդիա 98.
Նոյ 41.
Նորբերդ 72. 129.
Շաթ Խազը 98.
Շաթար ք. 99.
Շալուէ Իշխան Վրաց 117.
Շալուէ որդի Սարգսի 79.
Շակմոնիա 216. 253.
Շահակ կթ. 13. 14.
Շահի–Արմէն 80.
Շահնշահ որդի Զաքարէի 56. 93. 126. 135. 136. 139. 140. 142. 144. 162. 181. 222. 229. 230. 231.
Շամ ք. 161*
Շամ խալիֆայ 37.
Շամ–Հէջմ 37.
Շամախի 99.
Շամբին աշխարհ 161.
Շամիրամ 126.
Շամշելտէ 136.
Շամքոր ք. 73. 79. 99. 102. 128. 129.
Շապուրան ք. 99.
Շապուհ Թգ. Պարսից Բ. 9. 10. 11. 12. 13. 14.

Ընտրեալ հայք 8.
Ընտիր գեօտ 214*
Ընտրու–ղան 133.
Պալքալ լիճ 121*
Պաղակճիակ 50.
Պաղեստին 29. 33. 71.
Պալատա 40. 44. 220-223.
Պալտայն Ա. 64.
Պամփիւլիա 219*
Պանտ կԹ. Ագ. 98.
Պանտալևոն բժիշկ (Ս.) 98.
Պապ Թգ. 11. 13.
Պապաք որդի Վասակայ 105. 224.
Պապաք որդի Պռոշի 224.
Պասրա 221.
Պարթևք 33.
Պարսիկք 3. 15. 18. 19. 20. 21. 25. 33. 61. 81. 88. 92. 97. 105. 117. 118. 124. 128. 175. 176. 205. 220. 221. 230.
Պարսկայլին ծով 209*
Պարսկաստան 30. 72. 123. 202. 206. 208. 220.
Պարսումայ (Ս.) վանք 76.
Պարտաւ 98. 99. 100. 105.
Պեմունդ 61*
Պետրոս առաքեալ 6. 54. 68. 71. 75. 187. 199.
Պետրոս Գետադարձ 50-53. 61. 70.
Պետրոս կԹ. Ագ. 101.
Պէշպալեխ ք. 213.
Պէրպալեխ ք. 213.
Պերոզ Թգ. Պարսից 20. 21.
ՊերքանԹ ք. 214.
Պլատոն 196.
Պղնձահանք 116. 126. 180.
Պոնտոս 219.
Պորփիւր 17.
Պուխարա 215*
Պռոշ 222. 224. 225.
Պատան 215.
Պտղոմէոս 199.
Պրոտոստռատոր 69*
Պօղոս առաքեալ 6. 54. 68. 75. 187. 194. 199.
Պօղոսի մեկնութիւն 64.
Պօղոսի տեսիլ (գիրք) 29.
Պօղոս քահանայ 132. 200.
Ջաբուլ խաքան 98.
Ջալալ (գօլա) 145. 155. 156.
Ռամիզդ Թգ. Պարսից 29.
Ռախտանէս պատմիչ 4. 22.
Ռախտիք 231.
Ռաճուն գ. 39.
Ռմիկ 210.
Սղդուր ք. 213*
Ռուհա 161. 227.
Ռունայր Թգ. Ալուանից 97.
Ռստամ–նուին 160.
Ռտէացւոց գաշտ 103*
Ռրայ 213*
Ռրեվանէչ 112.
Ռրոմայ–ղան 214.
Քսոս 215*
Զալատա 122. 135. 143. 180. 225. 231.
Զանկզեան 122. 148. 218. 231. (ճին–կիզեան).
Զարաբերդ 207.
Զարիք բերդ 88. 90. 129.
Զարմաղան–նուին կամ Զարմաղու և Զարմուղան 123. 137. 138. 143. 150. 152. 156. 160. 229.
Զարմա–նուին. տ. Զարմաղան–նուին:
Զէպէ 104*
Զիբուկղու գ. 239.
Զինաստան 122* 220*
Զինք 216*
Զմանկատուկ 154.
Զոլայ աշխարհ 101.
Էսպէ 104*
Էվրակատոց 226.
Էնբար գո. 234*
Էրակ գռ. 48. 50* 85.
Էրակաւան 43.
Էրուան ք. 99.
Էմուէլ 19.
Էնորհաւոր 211.
Էրզրում 112.
Էուփհալիչայ կԹ. Ագ. 98.
Ոզնա 65.
Ողբիանոս 12.
Ոնորիոս կայսր 14.
Ովայից գղ. 43.
Ովհաննու 70. 219. 213*
Ովսէ 194.
Որ 213.

*

Ջալալադին 90· 117· 119· 120· 123· 129· 161·
Ջալալ–Հասան տ· Հասան–Ջալալ·
Ջամասպ 22·
Ջափր 43· 44· 175· 224·
Ջհուն 215· 218·
Ջոլբուղա 145·
Ութան Ասրի 150· 151· 159· 160·
ՈՒՀ 123· 215·
Ուռմանոս կայսր Ա· 47·
Ուռմանոս Բ· 47· 59·
Ուռբէն Ա· 58* 62· 74·
Ուռբէն Բ· 62·
Ուռբինեանք 47·
Ուզուզան 126· 136· 144· 158· 159· 161· 177· 229·
Ուզք 159·
Ուզասան 215·
Աբատա Բահաւորր 10·
Ագասան աշխարհ 29·
Աղել–աղայ 160·
Ադուն Շէրպարըքի որդի 226·
Ադուն Քրդի որդի 107· 111·
Աղահատին 71· 80· 109· 116· 227·
Աղահատանեանք 71·
Աղբուխնք (Սկլէիւկք) 214·
Աղբուկ 47·
Ահակ (Նահապետ) 198·
Ահակ կթ· Ա· (Պարթև) 3· 14· 15· 16· 17· 18· 19· 30· 64· 185·
Ահակ » Բ· 22·
Ահակ » Գ· 35· 36·
Ահակ Բագրատունի 16·
Ահակ եպ· Կարնոյ 101·
Ահակ եպ· Ուչտունեաց 16· 20·
Ահակ և Յովսէփ վկայք 42·
Ահակ արքեպ· Պարսից 98·
Ահակ կթ· Աղուանից 100·
Ահատունի տ· Դաւիթ·
Ահմանախաչ 100·
Ալմասայ վանք 174·
Ամատա ք· 44·
Ամուէլ (մարգարէ) 198·
Ամուէլ կթ· 21· 22·
Ամուէլ Անէցի 4· 47·
Ամուէլ վկայ 40·
Ամուէլ կթ· Աղուանից 100·
Անահիտն վանք 48· 30· 56· 60· 84· 93· 174·
Անատրուկ արշակունի 9·
Անանիեանք 221·
Աստուն երկիր 226·
Աստունք 44· 226·
Աստղ 97·
Արտաւան 211·
Արտախա (Աէրուխա) 215·
Արգիս կթ· Ա· 50·
Արգիս եպ· Անւոյ 84· 174·
Արգիս եպ· Գարդմանայ 209·
Արգիս Երզնկացի 234·
Արգիս եպ· Կարնոյ 162· 173·
Արգիս եպ· Հալբատայ 56·
Արգիս վիայնակեաց 84·
Արգիս վք· 64·
Արգիս (Ս·) 134·
Արգիս (Ս·) եկեղեցի 51·
Արգիս (Ս·) Խաչ 134·
Արգիս (Ս·) վկայարան 34·
Արգիս աղանդաւոր 51·
Արգիս Բխնրա 32·
Արգիս Վէտա 50·
Արգիս նախահայր Զաքարեանց 72· 78·
Արգիս Իւանեան տ· Աւագ:
Արգիս Աւագ տ· Աւագ Արգիս:
Արգիս մամիկոնեան 148·
Արգիս Ճալուէի հայր 79·
Արգիս Ճահնշահի որդի 79 230·
Արգիս լչխ· Ովսաեաց 231·
Արգիս լչխան 108·
Արդախ, Արթախ, Արդաք· 205· 206· 207· 213· 214· 217· 218· 219·
Արխիւոլ 215·
Արկաւագ վք· 47· 64· 66· 107· 199*
Աեաւ Լեառն 107·
Աեբատախ 53· 54· 62· 70· 76· 135· 219·
Աելիանոս 188·
Աելիոս պատմիչ 3*
Աէթ (Նահապետ) 198·
Աելևկիա 62· 95·
Աղբեատրոս 2· 6· 7· 67·
Աեւան 36· 45· 49, 84· 237·
Աեւատ տ· Աեբատախ·
Աիմ լեառն 40·
Աիմէոն կթ· Աղուանից Ա· 99·
Աիմէոն » Բ· 100·
Աիմէոն Ասրի 150·

Սիմէոն Սիւնահեաց 21.
Սիմեոն կախարդ 169.
Սին անապատ 32.
Սինա անապատ 204.
Սիոն կԹ. 39.
Սիոն (վերին) 167.
Սիսիլ 77*
Սիա 62. 84. 94. 187. 211. 219.
Սիսիան գԼ. 215.
Սիրական 232.
Սիր Աստան 94.
Սիւնիք 41. 48. 49. 79.
Սկեւռայ վանք 53. 213.
ՍկիւԹացիք 47. 82. 61. 62.
Սղնախ 210. 214.
Սմբատ Բագրատունի 29. 43.
Սմբատ բիւրատեան փոքր 36.
Սմբատ ԹԳ. Բագրատ. Ա. 45. 46. 47.
Սմբատ Բ. 50.
Սմբատ Գ. տ. Յովհաննէս. 44.
Սմբատ սպարապետ 44.
Սմբատ եղբայր Հեթմոյ Ա. 77* 95. 151. 178. 211.
Սմբատ հայր Աբասայ 48.
Սմբատ Մագիստրոս 50.
Սմբլանդ 215.
Սնղախ 214.
Սոկրատէս պատմագիր 2.
Սողոմոն իմաստուն 15. 63. 198.
Սողոմոն կԹ. 42.
Սողոմոն կԹ. Աղուանից Ա. 100.
Սողոմոն » Բ. 100.
Սողոմոն հայր Մաքենոցաց 100.
ՍոնէԹ տ. ՍուանէԹ.
ՍոսԹէննէս 130.
ՍուանէԹ 159. 177. 178. 228.
Սուէմոն ամիրապետ 36. 37.
Սուլուէ-ման ք. 214.
Սուհէն (ճիոր-Վչնասպ) 30.
Սունիք 220*
Սուպուդան 104*
Սուտ-գօլ (Սիւա կէօլ) 214.
Սուրբ-Մարի (Սուրմարի) 140.
Սուրէն տ. ճիոր-Վչնասպ.
Սուրհան 38.
Սուրմակ 19.
Սուրմարի 210*
Սոփար 46.
Սպահան ք. 89. 123.
Սպրամ 99.

Տաճիկ Էղբայր Թորոսի 62.
Տաճատ Ա. կԹ. 42.
» Բ. » 48.
» Գ. » 49.
Տաճատ Աղ. կԹ. Ա. 88. 89. 90
» » Բ. 107.
» » Գ. 101. 107.
» » Դ. 230.
Տաճատ Առոլիկ 4.
Տաճատ մեծն Սիւնեցի 17. 40. 41. 188.
Տաճատ եպ. Սիւնեաց 16.
Տաճատ եպ. Նուիրակ 212.
Տաճատ դրան էրէց 40.
Տաճատեան Զամզումայ 63.
Տաճատ կոն իշխան 44.
Տաճատ որդի Յուսկան 91.
Տալան 93.
Տարար (Սիւնեաց պետ) 214.
Տրի 215.
Վահանդ Համեէրքայ տէր 107. 111.
Վահանդ Տննկիկ 145.
Վահան Գողթնացի 57.
Վահան (Վահանիկ) կԹ. 49.
Վահան Մամիկոնեան 21* 23.
Վահրամ հայր Աղբուղայի 50. 72. 73. 142. 153. 155. 158. 159.
Վահրամ որդի Զաքարէայի 78. 79. 126.
Վահրամ (Գրիգոր վկայասէր) 54.
Վահրամ Թոուն Վահրամայ տեառն Ջաքարէայ 79. 128. 129. 131.
Վաղարշ եղբայր Պերոզի 21. 22.
Վաղարշակ 14. 97.
Վաղէս 12.
Վայոց ձոր 42. 79.
Վան 91*
Վանական եպ. Բջնոյ 174.
Վանական վարդապետ 4. 113. 129. 146. 174. 187. 193. 198.
Վաշխէ գ. 116.
Վաչագան 97. 98.
Վաչէ ԹԳ. Աղուան Ա. 97.
Վաչէ Բ. 97.
Վաչէ որդի Քրդի 211.
Վասակ Բագրատունի 72.
Վասակ Խաչէնեցի 105.
Վասակ միւս 111.
Վասակ հայր Պռոշայ 224.
Վասակ Պահլաւունի 54.

Վասակ Սիւնի 20.
Վասիլ կայսր Ա. 8. 47. 50.
Վասիլ Բ. 45.
Վասպուրական 36. 49. 161.
Վասպուրակէս (Ասպուրակէս) 14.
Վանեան դաշտ (Վանիանեան կամ Վանոյ դաշտ) 10. 98.
Վարաժդատ 13.
Վարդ եղբայր Վահանայ 25.
Վարդան վդ. (պատմիչ) 84. 165. 166. 173. 174. 201.
Վարդան Մամիկ. Մեծն. 3. 18. 19. 20.
Վարդանանք 17. 82. 97.
Վարդանակերտ 36.
Վարդենիս գ. 211. 216.
Վարոս Ձիձնաւոր 21.
Վէհմիհրշապուհ 19.
Վեստ Սարգիս ս. Սարգիս Վեստ.
Վիրոյ կղթ. 30. 98.
Վիրք 4. 7. 25. 26. 49. 66. 72. 81. 87. 89. 93. 97. 98. 145. 144. 174-179. 207. 210. 218. 228. 229. 251.
Վլիմ 36. 37.
Վղոն 30*
Վճնասպ 30*
Վոլկա 205*
Վռամ Բ. 19. 20.
Վռամշապուհ 14. 15. 17. 18*
Վրախձա (Վահրիճ) 15.
Վրաստան 17. 80. 126. 143. 180.
Վրթանէս եպ. Իջնոյ 84. 90.
Վրթանէս կղթ. 9. 10. 98.
Վրթանէս վդ. 28.
Վրթանէս քերթող 26.
Վրկան աշխարհ 29.
Տաճիկք 34. 35. 40. 62. 79.
Տաճկաստան 61.
Տամղան, Տամղան 215.
Տանձուտ գլ. 109.
Տանձուտայ–ձոր 108.
Տանդրի 63.
Տաշիր 79.
Տարսոն 9. 62. 76.
Տարօն 11. 27. 33. 43. 45. 80.
Տաւուշ բ. 72. 73. 79. 129.
Տզրկածով 112.
Տէրունական բ. 73. 79.
Տիագիկ մանկուլեան տեառն (գիրք) 29.
Տիբեր կայսր 27. 29.
Տիգրիս գետ 44. 221. 225.
Տիզբոն ք. 221*
Տիմոթէոս երէց 21.
Տիրան Թգ. Բ. 10. 11.
Տիրացու եպ. 91.
Տիւրիկէ ք. 155.
Տղայ ա. Գրիգոր Տղայ.
Տոյնք (քուրմք) 217. 233.
Տուեցի 73.
Տուխարն–Նուխին 150.
Տուհար Թաւթար 218. 220.
Տուղաստան Թաւթար 137.
Տուղլու–պէկ 47.
Տուս, Տուա 215.
Տուտհար Խլխան 218. 232.
Տուքքիկ 84.
Տրապիզոն ք. 55.
Տրապօլիս ք. 71.
Տրդատ Թգ. 2-10. 46. 64. 67. 82. 97. 98.
Տրդատայ Թաղա կամ սարաւոյթ 46. 200.
Տրդատ կղթ. Ա. (յՕձմոյ) 59.
Տրդատ » Բ. (ի Դամանաւորից) 59.
Տփխիս ք. 102. 103* 118. 136. 178. 210. 228.
Տօխուզ–խաթուն 223. 233. Տ. և Թօխուզ
Տօնղուզ–աղա 144.
Տօնղրիլ (Դանգրեաթ) 61.
Տօրոս լ. 214.
Ցուրտաւ կամ Ցրտաւ 26.
Փալհաւան 75.
Փախչուրի (Հարիկ) 218*
Փառանձեմ 12.
Փառխոռայ վանք 101.
Փառներսեհ 11.
Փարաւոն 233.
Փարպեցի ս. Ղազար:
Փաւստոս Բիւզանդ 3. 12.
Փենէհէզ (քահանայապետ) 198.
Փենէհէզ կամ Փենէս հրեայ իմաստասէր 24. 109.
Փիլարտոս 47.
Փիլիպպոս այր Ջապէլի 94.
Փիլիտոս (Փիլոթէոս) 82.
Փիլոնիկոս 194.
Փոկաս կայսր 29.
Փոտ 45.
Փուլատ 214.

Քաղնւն գբ· 40·
Քաղկեդոն 20· 21· 25· 28· 31· 39· 48· 49· 50· 81· 99·
Քամոց 214·
Քայքանէթ 214·
Քարաշնեթաւ վանք 64·
Քարհերձ 79·
Քաւիջաք-ք 122*
Քէմլ 119 տ· Մէվլնք Քէմլ·
Քնեթբուղա 228·
Քոբայր 84· 231·
Քուրդ Իշխան 107· 108· 111· 211· 216·
Քուրդիկ Իշխան 41·
Քուրդք 71· 78· 220· 221·
Քրնատափոր կեթ· 22· 31·
Քրման աշխարհ 209· 215·
Քօպի 213*
Օթման 33· 34· 36·
Օթմանս գբ· 39·
Օթրար ք· 215·
Օլթի 231*
Օձնեցի տ· Յովհան Օձնեցի·
Օձուն գղ· 231·
Օշական 27·
Օշավա գբ· 112·
Օշին որդի Հեթմոյ լամբրօնացւոյ 157·
Օմառ 37·
Օմար 36· 37·
Օպի 214*
Օսէթք 159·
Օրէնդ 200·
Օրղան 118·
Ֆրանկք 55· 61· 62· 67· 75· 76· 95· 120· 173·